ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՎԱՐՔԸ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՑԱՆՑ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՇՈՒՇԻԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

(ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔ, 2020 Թ. ՀՈՒԼԻՍԻ 15-16)

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2021

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРЦАХ

ГЕНОЦИДАЛЬНОЕ ПОВЕДЕНИЕ АЗЕРБАЙДЖАНА: ИСТОРИЯ И СОВРЕМЕННОСТЬ (ОТ ПОЛИТИКО-ПРАВОВОЙ ОЦЕНКИ К МЕЖДУНАРОДНОМУ СУДУ)

МЕЖДУНАРОДНАЯ НАУЧНО-ПРАКТИЧЕСКАЯ ОНЛАЙН КОНФЕРЕНЦИЯ,ПОСВЯЩЁННАЯ 100-ЛЕТИЮ ГЕНОЦИДА АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ

(15-16 ИЮЛЯ 2020Г., Г. ШУШИ, РЕСПУБЛИКА АРЦАХ)

ИЗДАТЕЛЬСТВО ЭДИТ ПРИНТ
ЕРЕВАН 2021

MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT OF THE REPUBLIC OF ARTSAKH

GENOCIDAL BEHAVIOR OF AZERBAIJAN: HISTORY AND MODERNITY
(FROM THE POLITICAL AND LEGAL ASSESSMENT OF CRIMES TO THE INTERNATIONAL COURT)

INTERNATIONAL SCIENTIFIC AND PRACTICAL ONLINE CONFERENCE ON THE 100TH ANNIVERSARY OF THE MASSACRES OF ARMENIANS IN THE CITY OF SHUSHI

(JULY 15-16, CITY OF SHUSHI, REPUBLIC OF ARTSAKH)

PUBLISHING EDIT PRINT
YEREVAN 2021

ՀՏԴ 94(479.25)
ՀՏԴ 94(479.25)(082)
ԳՄԴ 63.3(5Հ)g43
Ա 211

Գիրքը հրատարակվել է
Հայ Եկեղեցու Գերմանիայի Թեմի ֆինանսավորմամբ

Ա 211 Ադրբեջանի ցեղասպանական վարքը. պատմություն և արդիականություն (իրավաքաղաքական գնահատականից մինչև միջազգային դատարան): Միջազգային առցանց գիտաժողով՝ նվիրված Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցին (Շուշի, 2020 թ. հուլիսի 15-16), զեկուցումների ժողովածու, կազ. և խմբ.՝ Մ. Ա. Հարությունյան, Երևան, «Էդիտ պրինտ» հրատ., 2021, 552 + 32 էջ ներդիր:

Գիտաժողովի զեկուցումների ժողովածուն պարունակում է թեմային առնչվող և դրա ամենատարբեր տեսանկյունները պարզաբանող ու արդիականություն ունեցող երեք տասնյակ աշխատություն՝ անհրաժեշտ եզրահանգումներով, աղբյուրագիտական ու փաստական հարուստ հիմքով ու թեմատիկ լայն ընդգրկումով: Երեք լեզուներով տրված են զեկուցումների ամփոփումները, կազմկոմիտեի (գիտախմբագրական հանձնաժողովի) կազմը, գիտաժողովի ծրագիրը և ընդունած բանաձևը: Հայաստանի ազգային արխիվի տրամադրած նյութերի ներդիրն ամբողջացնում է լուսաբանված թեմաների վերաբերյալ պատկերացումները:

Նախատեսված է մասնագետների, Արցախի Հանրապետության պատմությամբ հետաքրքրվողների և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 94(479.25)(082)
ԳՄԴ 63.3(5Հ)g43

ISBN 978-9939-75-636-3

© «Էդիթ պրինտ» հրատարակչություն, 2021
© «Կաճառ» գիտական կենտրոն, 2021

ԱՌԱՋԱԲԱՆ

Այսրկովկասի մարգարիտը համարվող Շուշի քաղաքը 1920 թ. մարտ–ապրիլ ամիսներին դարձավ Թուրքիայի և Ադրբեջանի կազմակերպած ու նրանց զինված ուժերի իրականացրած ցեղասպանության հերթական թիրախը: Մի քանի օրում հրո ճարակ դարձան շուրջ երկու դարերի ընթացքում շուշեցի հայերի ստեղծած համամարդկային արժեքները՝ հայ ժողովրդի մշակութային ժառանգության բացառիկ գոհարներ, ճարտարապետական կոթողներ, շուրջ 7.000 տարաբնույթ շինություններ, որոնց նյութական արժեքը ցայսօր դեռ գնահատված չէ: Ցեղասպանությանը զոհ գնացին շուրջ 8 հազար հայ խաղաղ բնակիչներ, մոտ 12 հազար մարդ դարձավ փախստական, անօթևան՝ չունենալով ապրուստի միջոցներ:

Ադրբեջանն անպատիժ շարունակել ու այսօր էլ շարունակում է իր ցեղասպանական քաղաքականությունը: Խորհրդային իշխանության գրեթե յոթ տասնամյակների սպիտակ եղեռնը և արմենոցիդը պատմական Հայաստանի երբեմնի երկրամասերում՝ Նախիջևանում, Արցախում և ԱդրԽՍՀ–ին բռնակցված այլ մարզերում ու քաղաքներում, 1988–1994 թթ., 2016 թ. և 2020 թ. Ադրբեջանի նախաձեռնած ագրեսիվ, ահաբեկչական ու զավթողական պատերազմներն ասվածի ապացույցն են:

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Պատմության ինստիտուտի և «Մշակույթ և ապագա» հիմնադրամի (ՌԴ) համատեղ նախաձեռնությամբ հուլիսի 15–16–ը տեղի ունեցավ միջազգային առցանց գիտագործնական կոնֆերանս՝ «Ադրբեջանի ցեղասպանական վարքը. պատմություն և արդիականություն (իրավաքաղաքական գնահատականից մինչև միջազգային դատարան)» խորագրով՝ նվիրված Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100–րդ տարելիցին:

Ներկայացված զեկուցումները նպատակաուղղված էին հայոց մշակութային ու լուսավորչական կենտրոններից մեկում՝ Շուշիում, 1920 թ. թուրքերի իրականացրած հայերի ցեղասպանության դրդապատճառների, բուն ընթացքի և հետևանքների վերհանմանը: Պահանջված են Ադրբեջանի կազմակերպած ոճրագործության մասին բարձրաձայնելը, հիմնահարցի վրա միջազգային հանրության ուշադրությունն սևեռելը և սահմանված ընթացակարգով համապատասխան միջազգային ատյաններ դիմելու, Ադրբեջանին իրավական ու քաղաքական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունն իրավասու մարմիններին ներկայացնելը:

Գիտաժողովին մասնակցության հայտ էին ներկայացրել հիմնախնդրով զբաղվող մասնագետներ Ռուսաստանի Դաշնությունից, Ֆրանսիայից, Անգլիայից, Հայաստանի Հանրապետությունից և Արցախից:

Գիտաժողովի շրջանակներում առաջնահերթ քննարկման համար նախատեսվել են հետևյալ ուղղությունների թեմաները. 1) Շուշիի ողբերգական դեպքերի վերահիմաստավորման պատմական ու քաղաքագիտական տեսանկյունները, 2) Շուշիի ողբերգության ժողովրդագրական ու ազգագրական հետևանքները, 3) Ճարտարապետական կոթողների և արվեստի գործերի ոչնչացումը Շուշիում, 4) Շուշիի ողբերգության թեման գրականության ու բանահյուսության մեջ, 5) Շուշիում ադրբեջանցի վանդալներից անվերադարձ տուժած հոգևոր–մշակութային արժեքները, 6) Շուշիի կործանման վերաբերյալ փաստերի աղբյուրագիտական ու փաստագրական հիմքերը, 7) Շուշիի անկման ռազմագիտական տեսանկյունները:

Թեև զեկուցումները տպագրության են ընդունվել գիտաժողովում փորձարկելուց և գիտախմբագրական հանձնաժողովի հավանությանն արժանանալուց ու գրախոսվելուց հետո, **ներկայացրած նյութի բովանդակության ու փաստերի արժանա–**

հավատության համար պատասխանատու են հեղինակները:

Գիտաժողովը նախատեսված էր 2020 թ. մարտի 22–25–ը, սակայն համավարակով պայմանավորված սահմանափակումների պատճառով այն հետաձգվեց: Այդ ընթացքում գիտաժողովին մասնակցելու կամ իրենց հետազոտությունների արդյունքները տպագրելու ցանկություն հայտնեցին մեր գործընկերները, որոնց սիրով ընդառաջեցինք՝ թեման ավելի համակողմանի լուսաբանելու հնարավորությունն առավելագույնս օգտագործելու նպատակով:

Կոպտորեն խախտելով միջազգային իրավունքի «Ուժ և ուժի սպառնալիք չգործադրելու» սկզբունքը, հերթական անգամ տորպեդահարելով խաղաղ կարգավորման գործընթացը և ոտնահարելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդական ջանքերը՝ Ադրբեջանը 2020 թ. սեպտեմբերի 27–ին վերսկսեց ագրեսիվ, զավթողական ու ահաբեկչական պատերազմը Արցախի Հանրապետության դեմ: 1994 թ. մայիսյան զինադադարից հետո, օգտվելով միջազգային հանրության երկակի ստանդարտներից ու Ադրբեջանի Հանրապետության ռազմական հանցագործությունների վրա աչք փակելու արատավոր պրակտիկայից, ադրբեջանական կողմը մինչև ատամները սպառազինվեց և Թուրքիայի անթաքույց աջակցությամբ, միջազգային ահաբեկիչների ներգրավմամբ ագրեսիվ, ահաբեկչական պատերազմ սկսեց Արցախի Հանրապետության դեմ՝ այն ոչնչացնելու և հայ բնակչությանը ցեղասպանության ենթարկելու ակնհայտ նպատակներով: Այդ մասին են վկայում ահաբեկչական ու զավթողական պատերազմի 44–օրերի ընթացքում Ադրբեջանի ԶՈՒ ռազմական հանցագործությունները, սադիզմը, վանդալիզմը, մի խոսքով՝ այն նույն մեթոդները, որոնք գործադրվել են պատմական Հայաստանի արևմտյան ու արևելյան ընդարձակ շրջաններում և Այսրկովկասի ու Օսմանյան Թուրքիայի մյուս հայաբնակ վարչատարածքային միավորներում: 2020 թ. աշնանը և զինադադարի վերաբերյալ եռակողմ հայտարարությունից հետո տեղ գտած զարգացումները, հատկապես մեր պետականությանը և հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը նետված մարտահրավերները հիշեցնում են 100 տարի առաջ մեր հայրենիքում և նրա շուրջ ծավալված ռազմաքաղաքական ու գաղտնի–դիվանագիտական իրադարձությունները, որոնք աղետալի հետևանքներ ունեցան Հայաստանի ու հայ ժողովրդի համար: Պատճառների փնտրտուքը և անցյալի դասերի վերհանումը տասնամյակներ շարունակ զբաղեցրել են հայագիտության մշակների միտքը: 2020 թ. հուլիսի 15–16–ի առցանց գիտաժողովում ներկայացված զեկուցումներում բավական արժեքավոր բացահայտումներ կան մեր նախնիների ձախողումների վերաբերյալ, որոնց վերահիմաստավորումը կարևոր ուղերձներ է պարունակում գալիք սերունդներին: 44–օրյա պատերազմի և զինադադարին հաջորդած դառնաղի իրողություններից հնարավոր էր խուսափել, եթե ժամանակին մեր պետական ու ռազմական գործիչներն ականջալուր լինեին այդ ուղերձներին: Դրանք պահպանում են իրենց արդիականությունը, դեռ ավելին՝ դարձել են պահանջված ստեղծված ճգնաժամից դուրս գալու և կորցրածը հետ բերելու ուղիների որոնումներում: Այս տեսակետից նաև գիտաժողովի զեկուցումների ժողովածուի հրատարակումն ունի ոչ միայն գիտաճանաչողական, այլ նաև գործնական-կիրառական նշանակություն:

Մեր Հարությունյան

Գիտաժողովի կազմակերպիչներ

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարություն
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք, Պատմության ինստիտուտ
«Մշակույթ և ապագա» հիմնադրամ (Ռուսաստան)

Գիտաժողովի գործընկերներ

Արցախի գիտական կենտրոն (Արցախի Հանրապետություն)
«Խաչմերուկ» սոցիոլոգիական և քաղաքագիտական նախաձեռնությունների հասարակական կազմակերպություն (Երևան)
Հայաստանի ազգային արխիվ
ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ
«Կաճառ» գիտական կենտրոն (Արցախի Հանրապետություն)
«Օրբելի» վերլուծական հետազոտությունների կենտրոն (Երևան)
«Հայաստանի հետ բարեկամության և համագործակցության ընկերակցություն» (ՌԴ)
Շուշիի տեխնոլոգիական համալսարան (Արցախի Հանրապետություն)

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

Լուսինե Ղարախանյան, *Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարար*

Յուրի Սուվարյան, *ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար*

Աշոտ Մելքոնյան, *ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն*

Արամ Սիմոնյան, *ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն*

Մելանյա Բալայան, *Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարի խորհրդական*

Արմեն Մարուքյան, *ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայոց հարցի և Հայոց ցեղասպանության բաժնի վարիչ*

Ստեփան Դադայան, *Արցախի գիտական կենտրոնի գիտաշխատող*

Վահան Բաբախանյան, *Սոցիոլոգիական և քաղաքագիտական նախաձեռնությունների «Խաչմերուկ» հասարակական կազմակերպության (Երևան) նախագահ, ռուս-հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի անդամ (Սանկտ Պետերբուրգ, ՌԴ)*

Վալերի Ավանեսյան, *Արցախի պետական համալսարանի պրոռեկտոր*

Միեր Հարությունյան, *«Կաճառ» գիտական կենտրոնի ղեկավար, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի Հումանիտար ամբիոնի վարիչ, Կազմկոմիտեի պատասխանատու քարտուղար*

Соорганизаторы конференции:

Министерство образования, науки и культуры Республики Арцах
Отделение арменоведения и общественных наук,
Институт истории Национальной Академии наук Республики Армения
Фонд "Культура и будущее" (Россия)

Партнеры конференции:

Научный центр Арцаха (Республика Арцах)
Общественная организация социологических и политологических инициатив "Хачмерук" (Ереван)
Национальный Архив Республики Армения
Институт арменоведческих исследований Ереванского государственного университета
Научный центр "Качар" (Республика Арцах)
Центр аналитических исследований "Орбели" (Ереван)
Российское общество дружбы и сотрудничества с Арменией (Россия)
Технологический университет Шуши (Республика Арцах)

ОРГКОМИТЕТ

Лусине Караханян, *министр образования, науки и культуры Республики Арцах*

Юрий Суварян, *академик-секретарь Отделения арменоведения и общественных наук НАН РА*

Ашот Мелконян, *директор Института истории НАН РА*

Арам Симонян, *член-корреспондент НАН РА, директор Института арменоведческих исследований ЕГУ*

Мелания Балаян, *советник министра образования, науки и культуры Республики Арцах*

Армен Марукян, *заведующий отделом Истории Армянского вопроса и Геноцида армян Института истории НАН РА*

Степан Дадаян, *научный сотрудник Научного центра Арцаха*

Ваган Бабаханян, *председатель общественной организации социологических и политологических инициатив "Хачмерук" (Ереван), член Координационного Совета российско-армянских организаций (Санкт-Петербург)*

Валерий Аванесян, *проректор Арцахского государственного университета*

Мгер Арутюнян, *руководитель Научного центра "Качар", Заведующий Гумманитарной кафедры Шушинского технологического университета, ответственный секретарь Оргкомитета*

Conference organizers

Ministry of Education, Science and Culture of the Republic of Artsakh
Division of Armenology and Social Sciences,
Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia
Foundation "Culture and Future" (Russia)

Conference partners

Scientific center of Artsakh
Public organization of sociological and political science initiatives "Crossroad" ("Khachmeruk")
National Archive of the Republic of Armenia
Scientific center "Kachar" (Republic of Artsakh)
Institute of Armenian Studies of Yerevan State University
"Orbeli" Analytical Research Center (Armenia)
"Association of Friendship and Cooperation with Armenia" (Russia)
Shushi University of Technology (Republic of Artsakh)

ORGANIZING COMMITTEE

Lusine Gharakhanyan - *minister of Education, Science and Culture of the Republic of Artsakh*

Yuri Suvaryan - *academic secretary of the Department of armenology and social sciences of NAS RA*

Ashot Melkonyan - *director of the Institute of history of NAS RA*

Aram Simonyan - *corresponding member of NAS RA, director of the Institute for Armenian Studies of Yerevan State University*

Melania Balayan - *advisor to the minister of Education, Science and Culture of the Republic of Artsakh*

Armen Marukyan - *head of the Department of history of the Armenian Question and the Armenian Genocide, Institute of history of NAS RA*

Stepan Dadayan - *Researcher at Scientific center of Artsakh*

Vagan Babakhanyan - *chairman of the public organization of sociological and political science initiatives "Khachmeruk" (Yerevan), member of the Coordinating Council of Russian-Armenian Organizations (Saint Petersburg)*

Valery Avanesyan - *vice-rector of the Artsakh State University*

Mher Harutyunyan - *head of the Scientific Center "Kachar", head of the chair of Humanities in Shushi University of Technology, Executive secretary of the Organizing Committee*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ
ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Republique d'Arménie
CHARGÉ D'AFFAIRES
En Azerbeïdjan

Բաքու „29" մարտի 1920
№ 393.

139

Հարգելի Պարոն Նազարբեկեան

Անցեալ 29-ը նորոգ դրուեցաւ Գեգեչկորի հետ, որը խնդրեց, որ մենք մեր դիտողութիւնները գրենք, որ նա կարենայ դրանց մասին զեկուցանել, ապացուցեցինք, որ ադրբեջանցիներն ինքն են հրահրել հայերի ջարդերը, որ ադրբեջանցիներն ինքն են ոչնչացրել Գանձակի հայերի մեծ մասը, որ Ադրբեջանի կառավարութիւնը ոչ միայն չի հետաքրքրուել հայերի ոչնչացմամբ, այլ ընդհակառակը, ուրախ է եղել դրանով, որ Գանձակի գաւառի հայերի մեծ մասը ոչնչացուեցաւ: Բացի այդ, մենք ապացուցինք, որ Ադրբեջանի կառավարութիւնը դիտմամբ դադարեցրեց գործերը մարտի 16-ին, երբ ուզում էր ամբաստանել հայերին ոչնչացրածներին, թալանողներին և հրկիզողներին: Գեգեչկորը հաստատեց մեր բոլոր դիտողութիւնները: Նա խոստացաւ մեզ հետ գրել Ադրբեջանի կառավարութեանը:

Գեգեչկորը. – Ես ուզում եմ ձեզանից մի բան խնդրել. մենք ունենք այնպիսի տեղեկութիւններ, որ դուք դեռևս Հայաստանի կառավարութեան կողմից հանձնարարուած չեք, բայց որ դուք արդեն ստանձնել եք, ինչպես ասում է կառավարութիւնը, Ադրբեջանի հայերի ներկայացուցիչի պարտականութիւնները: Մենք գիտենք, որ Ադրբեջանում դուք մեծ ազդեցութիւն ունեք, ազդեցութիւն, որ ստացաք դուք ոչ թե ինչպես դիպլոմատ, այլ ինչպես հայերի ներկայացուցիչ: Մենք պահանջում ենք, որ Ադրբեջանի կառավարութիւնը դադարեցնի հայերի ջարդերը, բայց որ այդ դադարեցնելու համար մենք Ձեզանից պահանջում ենք ամենաեռանդուն աջակցութիւն:

Գեգեչկորի հետ զրուցելուց հետո մենք գնացինք Հայաստանի կառավարութեան դիւանագիտական ներկայացուցչութիւն, որտեղ ինձ ներկայացրեցին Ադրբեջանի հայերի ներկայացուցիչ:

Հարգանքով՝ Ս. Հարությունյան

Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցիչ Ադրբեջանում

Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ակադեմիայի Գրադարան
Մուտքագրուած է 3-IV 1920 թ.
№ 2009

Ս. Հ. Արզումանի, Աշխարհագրութիւն

Ադրբեջանում հայերի ջարդերի հարցի քննարկումներ

Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցիչ Ադրբեջանում

Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցիչ Ադրբեջանում

Հ. Հ. Արզումանի, Աշխարհագրութիւն

Հ. Ն. Ղազարեան

Ադրբեջանում հայ դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանի գրությունը հայ արտաքին գործերի մինիստրությանը՝ Գեգեչկորիի հետ ունեցած հանդիպման, Արցախում Ադրբեջանի կազմակերպած հայերի կոտորածների հանգամանքների քննարկման մասին, 29 մարտի 1920 թ.(ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 417, թ. 139):

Записка дипломатического представителя РА в Азербайджане М. Арутюняна министерству иностранных дел РА о состоявшейся встрече с Гегечкори, обсуждении организованной Азербайджаном резни армян в Арцахе, 29 марта 1920 г. (НАА, ф. 200, п. 1, д. 417, л. 139).

RA Diplomatic Representative in Azerbaijan M. Harutyunyan's letter to the RA Ministry of Foreign Affairs about the meeting with Gegechkori, the discussion of the circumstances of the Armenians' massacres organized by Azerbaijan in Artsakh, March 29, 1920 (NAA, f. 200, l. 1, w. 417, p. 139).

ԱՀ ԿԳՄ ՆԱԽԱՐԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՄԵԼԱՆՅԱ ԲԱԼԱՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ

Գերաշնորհ Սրբազան հայր

Գիտագործնական համաժողովի հարգելի մասնակիցներ, տիկնայք և պարոնայք

Թույլ տվեք ջերմորեն ողջունել ձեզ՝ «Ադրբեջանի ցեղասպանական վարքը. Պատմություն և արդիականություն (իրավաքաղաքական գնահատականից մինչև միջազգային դատարան)» Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջազգային գիտագործնական առցանց համաժողովի բացման կապակցությամբ:

Սույն գիտագործնական համաժողովը պետք է կայանար Շուշիում մարտի 23-25-ը, սակայն հայտնի պատճառներով հետաձգվել է: Ի վերջո, ստիպված ենք հեռավար հարթակում անցկացնել կարևոր այս միջոցառումը, որը կոչված է ուղիղ մեկ դար հետո վերհանելու XIX դարի և XX դարասկզբին հայկական մշակութային ու լուսավորչական կյանքի և ազատամիտ ոգու առաջատար ջահակիրներից մեկում՝ Շուշիում 1920թ. մարտի 23-ին թուրքերի կողմից իրականացված հայերի ցեղասպանության դրդապատճառները, բուն ընթացքը և հետևանքները:

1920թ. ոչնչացվեց Շուշիի հայության մեծ մասը, իսկ դրան հաջորդած խորհրդային ժամանակներում հայոց բերդաքաղաքը բազում անակնկալների ու հակասությունների հանգուցակետ դարձավ: Ջնջել հայկական հետքը, սպանել հայոց բերդաքաղաքի ֆենոմենը, այնուամենայնիվ չհաջողվեց:

Լիահույս եմ՝ ներկայացված գիտական աշխատանքների քննարկումների արդյունքը և ընդունված եզրակացության կարևոր ուղերձը կդառնա «Ազգային միասնությամբ դեպի նոր վերածնունդ ու հզոր ազգային պետականություն» գաղափարը, որը մեր ազգային կորուստների հատուցման, ինչպես նաև մխիթարանքի կարևորագույն երաշխիքն ու գործոնն է: Այո՛, ներկայում հսկայական գործ ունենք կատարելու՝ կանխատեսելի ապագայի համար: Այն ուսումնասիրությունները, որ կատարվել և կատարվում են, դրանց արդյունքում ստացված գաղափարները, որոնց մի մասն էլ այս օրերին կներկայացվեն ինչպես հանրության դատին, այնպես և միջազգային համապատասխան կառույցներին, պետք է գործնական կիրառություն ստանան:

Երախտագիտությամբ ուզում եմ ներկայացնել գիտագործնական համաժողովի կազմակերպիչներին՝ ՀՀ Ազգային Ակադեմիայի հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը և պատմության ինստիտուտը, Ռուսաստանի Դաշնության «Մշակույթ և ապագա» հիմնադրամը և Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարությունը:

Մեր աշխատանքների ծրագիրը հրապարակված է, բայց և այնպես հակիրճ ներկայացնեմ ընթացակարգը:

Հաջորդելու են լիագումար նիստը, այնուհետև մասնախմբային աշխատանքները, որոնց բոլորս մասնակցելու հնարավորություն ունենք: Զեկուցումների համար նախատեսված է առավելագույնը 10 րոպե: Նախապես մեր խնդրանքն է ընդունված ժամանակաչափի պահպանումը:

Գիտագործնական կոնֆերանսի վերջնափուլում ակնկալում ենք մասնախմբերի ղեկավարների կողմից ամփոփիչ քննարկում աշխատանքների արդյունքների վերաբերյալ:

Թույլ տվեք ևս մեկ անգամ երախտագիտության խոսք ասել գիտագործնական համաժողովի նախաձեռնողներին, աջակցողներին, մասնակիցներին և մաղթել բեղմնավոր ու արդյունավետ աշխատանք:

Համոզված եմ, որ գիտաժողովի ընթացքում կայանալիք քննարկումները կլինեն հետաքրքիր ու օգտակար, իսկ գիտաժողովի մթնոլորտը՝ նպաստավոր նոր գաղափարների առաջադրման համար:

Համաժողովի հարգելի մասնակիցներ

Ադրբեջանի կողմից հաճախակի կրկնվող սադրիչ գործողությունները, նրա ղեկավարության կողմից հակահայկական և ռազմատենչ հռետորաբանությունը այս պահին էլ վկայում են, որ Ադրբեջանի նպատակներն ու գործելաոճը չեն փոխվել:

Մեր վստահությունն ու զորակցությունն ենք հայտնում պաշտպանության դիրքերում ամուր կանգնած մեր զինվորներին ու հրամանատարությանը: Համոզված ենք, որ Հայոց բանակը միշտ անպարտ կանգնած կլինի մեր հայրենիքի սահմաններին:

Համաժողովի աշխատանքները սկսելուց առաջ ուզում եմ խնդրել 1 րոպե լռությամբ մեր խոնարհումը և հարգանքի տուրքը մատուցել հայրենիքի պաշտպանության համար Տավուշի մարզում նահատակված մեր զինվորականներին, նաև վերջերս երկրային կյանքին հրաժեշտ տված մեր պատվարժան գործընկերներ պ.գ.դ. պրոֆեսորներ Համլետ Գևորգյանին և Համլետ Հարությունյանին, որոնք ևս պետք է մասնակցեին համաժողովին:

Շնորհակալություն:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Գիտաժողովի հարգելի մասնակիցներ

Սիրելի հայրենակիցներ

Ուզում եմ ողջունել բոլորիդ և Շուշիի հայ բնակչության ցեղասպանության հարյուրերորդ տարելիցին նվիրված միջազգային առցանց գիտաժողովի կազմակերպման կապակցությամբ հայտնել իմ գոհունակությունը: Նման թեմաներով հետազոտությունների և գիտաժողովների անցկացումը չափազանց կարևոր է առաջին հերթին մեր ժողովրդի բազմադարյան պատմության ընթացքում տեղի ունեցած շրջադարձային իրադարձություններն ավելի խոր ու համապարփակ վերաիմաստավորելու, դրանց պատճառներն ու հետևանքները վեր հանելու և բազմակողմանիորեն վերլուծելու և, իհարկե, այդ ամենից դասեր քաղելու առումով: Իսկ գլխավոր դասն անկասկած մեկն է. հավատալ ու ապավինել սեփական ուժերին, լինել հզոր ու միասնական, աչքի լույսի պես պահել ու պահպանել մեր պապերի հողը և գալիք սերունդների համար կառուցել հուսալի ապագա:

Շուշին հայ ժողովրդի ճակատագրի կրողն է ու մարմնացումը՝ իր վայրիվերումներով, իր կորուստներով ու հաղթանակներով, իր հոգևոր ու մշակութային, գիտակրթական, տնտեսական հարուստ ժառանգությամբ: 1920 թ. Շուշիի հայ բնակչության զանգվածային կոտորածները հայոց ցեղասպանության շարունակությունն էին, որոնց տասնամյակներ անց հաջորդեցին ադրբեջանահայության կոտորածներն ու բռնագաղթը: Այդ ցեղասպանական գործողությունները շարունակվեցին, քանի որ չստացան միջազգային հանրության համապատասխան իրավական ու քաղաքական գնահատականները: Աշխարհի առաջադեմ մարդկությունը պետք է անի ամեն ինչ ցեղասպանությունները անվերապահորեն դատապարտելու և կանխելու ուղղությամբ:

Հայ ժողովրդի հանդեպ Ադրբեջանի ռազմատենչ ու ֆաշիստական քաղաքականությունը չի փոխվել նաև այսօր: Մենք պարբերաբար ականատես ենք պաշտոնական Բաքվի հայատյաց ու սադրիչ գործողություններին ողջ հայության դեմ Արցախում, Հայաստանում և արտերկրում: Սակայն մենք այլևս երբեք թույլ չենք տա, որ կրկնվեն 100 տարի առաջ տեղի ունեցած ոճրագործությունները: Դրա երաշխիքը հայոց զինված ուժերն են, մեր հաղթական բանակը, սահմանին կանգնած հայ զինվորը: Դրա ապացույցը օր օրի զարգացող ու բարգավաճող

հինավուրց բերդաքաղաքն է: Միավորելով համայն հայության տարբեր հատվածների, տարբեր սերունդների ջանքերը՝ 1992 թ. ազատագրեցինք Շուշին՝ դարձնելով այն բոլոր հայերի համար ոգեշնչման աղբյուր և միասնության ու խիզախության խորհրդանիշ: Ես լավ գիտեմ այդ պատմական ու փառավոր հաղթանակի գինը, այն պահելու ու ամրագրելու հրամայականը: Շուշիի երբեմնի փառքի վերականգնումը մեզ համար պատվի ու պատասխանատվության խնդիր է՝ խոստում ու երդում հանուն մեր բոլոր նահատակների անմար հիշատակի: Այդ երդումն անխախտ է և ուղենիշ մեր պետականության ամրապնդման, մեր հայրենիքի շենացման ու հզորացման ճանապարհին:

Հարգելի բարեկամներ, մեկ անգամ ևս ողջունում եմ գիտաժողովի բոլոր մասնակիցներին և մաղթում հաջող ու արդյունավետ աշխատանք:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ, ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Միջազգային գիտաժողովի հարգելի մասնակիցներ

Այս օրերին աշխարհասփյուռ հայությունը հարգում է 100 տարի առաջ Շուշիում հայ բնակչության կոտորածի զոհերի հիշատակը: Հիշատակի օր է ոչ միայն մեր անմեղ նահատակներին օրհնելու և սրբացնելու, այլ նաև ոգեկոչման և հետագա պայքարի կոչելու համար: 1918 թ. մայիսի վերջերին Այսրկովկասի 3 հանրապետությունների հռչակումից հետո քաղաքական քարտեզում տեղ փնտրող արհեստածին Ադրբեջան պետության մուսավաթական կառավարությունը, երիտթուրքերի և նրանց հաջորդած քեմալականների հովանու ներքո, նպատակադրեց արևելահայության ցեղասպանության ճանապարհով իրականացնել համաթուրքականության ծրագրով նախատեսված օղուզական պետության՝ Սև ծովից մինչև Կասպից ծով ընկած տարածքում այսպես կոչված «Մեծ Ադրբեջան» պետության ստեղծումը, որը պետք է կամրջեր թուրքական պետությունը Կովկասի և Միջին Ասիայի թրքախոս ժողովուրդների հետ, ինչը տեղավորվում էր Մեծ Թուրան ստեղծելու հեռագնա նկրտումների մեջ: Առաջնորդվելով ծավալապաշտական քաղաքականությամբ՝ Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը հավակնում էր բռնազավթել նաև պատմական Հայաստանի մի շարք տարածքներ, այդ թվում նաև հայոց հինավուրց Արցախ աշխարհը: Եվ որքան ուժեղանում էին Ադրբեջանի իշխանությունների ճնշումներն ու բռնությունները, այնքան ավելի անկոտրում էին դառնում Արցախի հայության անկախ ու ազատ ապրելու և իր պատմությունն ինքնուրույն կերտելու կորովն ու կամքը: Ուստի Ադրբեջանն ի դեմս Զանգեզուր-Ղարաբաղի գեներալ-նահանգապետ հայատյաց Խոսրով բեկ Սուլթանովի՝ փորձեց նախահարձակ լինել և երիտթուրքերի ոճրագործ օրինակով ցեղասպանության ճանապարհով ընկճել Լեռնային Ղարաբաղի հայության դիմադրությունը: 1919 թ. հունիսի 4-ին, 5-ին Շուշիի մերձակա Հայբալիշեն գյուղի հայության բնաջնջումից հետո անպատիժ մնացած թուրք-մուսավաթականները 1920 թ. մարտի 22-26-ը կազմակերպեցին նաև Շուշիի հայության զանգվածային ջարդը, որին զոհ գնաց ավելի քան 10 հազար հայ, ոչնչացվեց մշակույթին հսկայական ժառանգություն: Հայ բնակչությունը ցեղասպանության ենթարկվեց իր բնօրրանում, այնպես ինչպես երիտթուրքերն իրագործեցին արևմտահայերի բնաջնջումը 1915-1916 թթ. Արևմտյան Հայաստանում: Ուստի թուրք-մուսավաթականների կիրառած

քաղաքականությունը պետք է որակել որպես արևմտահայերի ցեղասպանության շարունակություն և բաղկացուցիչ մաս: Քանզի հայոց ցեղասպանությունն իր աշխարհագրական ընդգրկմամբ՝ Կիլիկիայից մինչև Բաքու, համաթուրքականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք էր: Սակայն ի դերև ելան իր պատմական բնօրրանից ցեղասպան քաղաքականության միջոցով արցախահայերին արմատախիլ անելու՝ Ադրբեջանի ղեկավարության բոլոր ջանքերը: Արցախայությունը զենքով դիմագրավեց իր անվտանգության վրա ծանրացած սպառնալիքին: Այս և հետագա տարիների ազգային-ազատագրական հուժկու պայքարում 1991թ. սեպտեմբերի 2-ին ծնվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Լիահույս եմ, որ «Ադրբեջանի ցեղասպանական վարքը. պատմություն և արդիականություն» խորագիրը կրող գիտաժողովին ներկայացվող զեկուցումները գիտաքաղաքական առումով իրենց նպաստը կբերեն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և հատուցման գործընթացին:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ ԼՈՒՍԻՆԵ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Արցախի Հանրապետության մեծարգո՛ Նախագահ

Բարձրաշնո՛րհ Սրբազան

Ազգային ժողովի հարգարժա՛ն նախագահ, գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ

Պատմության պարուրաձև զարգացման օրինաչափությամբ անպատասխան մնացած հարցադրումները կրկին առաջադրվում են: Ցեղասպանությունների անպատժելիությունը, իրավաքաղաքական գնահատականն ուրանալը ճանապարհ են հարթում մարդկության դեմ նոր ոճրագործությունների իրագործման համար: Այսօրվա գիտագործնական համաժողովի զեկուցումները նպատակաուղղված են վեր հանելու հայոց մշակութային և լուսավորչական կենտրոններից մեկում՝ Շուշիում, 1920 թվականին թուրքերի կողմից իրականացված հայերի ցեղասպանության քաղաքական դրդապատճառները, բուն ընթացքն ու հետևանքները, վերագնահատելու պատմական այդ իրողության էությունը:

1920 թվականի Շուշիի կոտորածը անպատիժ մնացած Թուրքիայի ցեղասպան վարքագծի շարունակությունն է, ծանոթ և երբևէ փոփոխություն չկրող ձեռագիր, ցեղասպան վարքագիծ՝ իր անատոմիական կառույցով, դրանից բխող բնազդային մղումներով ու նկրտումներով, որը, ըստ էության, չի փոխվել և չի փոխվելու: Պարզապես պատմության դասերն ուսանելի են և հղումներ են տալիս այն մասին, որ հարևան Ադրբեջանի բարոյական ու գաղափարական գերակայությունների մակարդակը սկսվում և ավարտվում է ջարդարարական և զավթողական նկրտումներով:

1920 թվականի Շուշիի կոտորածի թեմայով բազմակողմանիորեն, համապարփակ պետք է գեներացվի ադրբեջանցիների ցեղասպան վարքագծի թեման: Միջազգային հանրության ուշադրությունը բոլոր հնարավոր ու անհնարին միջոցներով պետք է սևեռվի այս հիմնահարցի վրա, իրավասու մարմինները պետք է դիմեն համապատասխան միջազգային ատյաններ՝ Ադրբեջանին իրավական ու քաղաքական պատասխանատվության ենթարկելու պահանջատիրու-

թյամբ: Ազգային ճանապարհի պատմաքննական հայացքը թելադրում է՝ թշնամու հետ հարաբերվել միմիայն ուժի լեզվով, և սա պետք է լինի մեր ազգային դիվանագիտության միջուկը: Աշխարհաքաղաքական ներկա իրավիճակում, դժբախտաբար, բարեկրթությունը, քաղաքակրթությունը, իրավապաշտության և օրինապահության թույլատրելի սահմանում լինելը այլևս վճռորոշ չեն:

Հարգարժան գիտաժողովականներ

Այսօր հարյուրամյա հեռավորությունից մենք խնկարկում ենք Շուշիի անմեղ զոհերի հիշատակը մեր գիտական խոսքով, մեր պետականաշինությամբ, մեր հայրենիքի անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը անխոցելի պահելու ուխտյալ վճռականությամբ, մեր համազգային նպատակների կենսահաստատմամբ: Մենք հավաքական իմաստնությամբ զորացած ժողովուրդ ենք, մեր կամքն անզիջում է, և անցյալում պետք է մնա միմիայն արտաքին ուժերին հավատալու կամ ապավինելու անհեռատես քաղաքականությունը:

Ողջունում և շնորհակալություն եմ հայտնում գիտաժողովի բոլոր մասնակիցներիդ: Հաջողություն եմ մաղթում ձեր աշխատանքներին:

ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Ողջունում եմ գիտաժողովի բոլոր մասնակիցներին: Արձանագրենք, որ վաղուց սպասված միջազգային գիտաժողովը վերջապես կայանում է՝ դատելով ծրագրից և զեկուցումների պատկառազդու հեղինակների և թեմատիկ ընդգրկման լայն շրջանակից: Կարելի է հուսալ, որ մեր գիտաժողովի հիմնական նպատակը, որը, իմ կարծիքով, 100 տարի առաջ տեղի ունեցածը գնահատելն է, դրա պատճառները, ցեղասպանության հանցագործության հետևանքները և պանթուրքիզմի հեռագնա նպատակները պարզաբանելը, կկարողանանք իրագործել: Այսօր, ավելի քան հրատապ է համապատասխան գնահատականներ տալու հենքի վրա դիմել միջազգային հանրությանը, որպեսզի ձեռնարկվեն մարդասպանների նկատմամբ համապատասխան իրավական միջոցառումներ, և նաև ապահովվի հատուցում 1915 թ. և հետագա ցեղասպանությունների կորուստների համար:

100 տարի առաջ՝ մարտի 23-ին տեղի է ունեցել մի ահավոր սպանդ. Շուշիում հրդեհվել են հայ բնակչության 7000 տներ: Երբեմնի ծաղկուն 7000 տուն՝ ականատեսների ու պատմաբաների տեղեկություններով: Շուրջ 35 հազար հայ՝ բնակչության մի զգալի մասը՝ ոչնչացվել է: Երևի մեր աղետյալ ժողովրդի բախտը մի փոքր բերել է նրանով, որ այդ օրը Քարինտակի ձորում մառախուղ էր, որի քողի տակ ոմանք կարողացել են փրկվել: Ի դեպ, հայրս նույնպես 1912 թ. ծնվել է Շուշիում, 8 տարեկան էր, երբ ականատես է եղել այդ ջարդերին: Մշուշի տակ քողարկվելու հնարավորությունից օգտվելով՝ տատս մի կերպ փրկել է իր երեխաներին՝ փախչելով դեպի Քարինտակ: Շատերը, որոնց հետագայում ես հանդիպել եմ, օրինակ՝ պրոֆեսոր Առաքելյանը, որ այն ժամանակ թեմական դպրոցի դասատու էր, հետո դարձավ մանկավարժական համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, անձամբ է պատմել, թե ինչ սոսկալի վիճակում էր Շուշին այդ օրերին, և թե ինչպես է ժողովրդի մի մասը կարողացել մազապուրծ փախչել: Ի դեպ, եթե կարդաք շուշեցի Վաղարշ Վաղարշյանի հուշերը, որոնք վերնագրված են՝ «Ընկերներս, բարեկամներս և ես», արժեքավոր տեղեկություններ կիմանաք ընդհանրապես Շուշիի կյանքի և, մասնավորապես, այն մասին, թե ինչպես են նրա հորը՝ հացթուխ Բոգդանին, սպանել ու գցել իրենց

բակի ջրհորը: Սարսափելի դաժանություն, բայց դա թուրքի ձեռագիրն էր, որը մեզ հայտնի էր վաղուց: Ո՞րն էր թուրքերի ոճրագործությունների պատճառը: Դրա պատճառը, ըստ իս, ուղղակի այն էր, որ հայ ազգին պատկանող բնատարածքը թուրքերը փորձում էին զավթել: Թուրքական զավթողական քաղաքականության շարունակություն էր նաև Շուշիի կործանման հիմնական պատճառը: Սպասվում էր մեկ ամիս հետո՝ ապրիլի 28-ին, Ադրբեջանում բոլշևիկյան կարգերի հաստատումը: Նոր իշխանությունների պայմաններում գուցե կդժվարանար այդ ոճրագործությունը կատարելը: Պատմական Արցախը չէր մտնում Ադրբեջանի արհեստականորեն ստեղծված հանրապետության կազմի մեջ, որի ռեակցիոն կառավարությունը գտնում էր, որ եթե այդպես շարունակվի, ապա պատմական Արցախի՝ որպես ռազմավարական տարածքի նկատմամբ իրենց անհիմն հավակնությունները ի դերև կելնեին, ուստի նպատակադրվել էին հայ բնակչության այդ հատվածը ոչնչացնել, ինչպես 1915 թ. Թուրքիայում, որպեսզի տարածքը կարողանային զավթել: Եվ հանցագործի սառնասրտությամբ նրանք ավերեցին Շուշին՝ դարձնելով այն ուրվականների քաղաք: Տակավին անցած դարի 60-ականների վերջերին ես անձամբ տեսել եմ Շուշիի սրտակեղեք ավերակները: Թուրք ջարդարարները և ադրբեջանցիների հանցագործ նախնիներն անողոքաբար ավերեցին, թալանեցին երբեմնի ծաղկուն քաղաքը, կոտորեցին հայ ազգաբնակչությանը, բայց իրենց գերնպատակին չհասան, որովհետև արցախցիներն ամուր են և մինչև այսօր պայքարում են իրենց երկրի անկախության, մայր Հայաստանին միանալու համար: Ի դեպ, արցախցիների այդ պահանջը շատ բնական է, որովհետև դեռ սկսած V դարից, երբ Արշակունյաց թագավորությունը վերացավ, ստեղծվեց հայկական մի պետություն, բոլորդ գիտեք, Արցախի և Ուտիքի պետությունը՝ Վաչագան Բարեպաշտի թագավորությամբ, դրան հաջորդեց Խաչենի իշխանությունը, հետո հաջորդեցին Խամսայի մելիքությունները, այսինքն մինչև 1813 թ. կիսանկախ կերպով Արցախի բնակչությունը ապրում էր, գոյատևում, արարում, ոչ մի դեպքում չէր կարող հանդուրժել հետամնաց, թափառական ցեղերի արհեստականորեն ստեղծված պետության կազմի մեջ մտնելը: Հենց այդ պետության ղեկավարները 1920 թ. մարտին ձեռնարկեցին քստմնելի քայլը՝ ցեղասպանության ոճրագործությունը: Դա դարձավ արցախյան հիմնախնդրի սկիզբը, և Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ մենք նաև պիտի արձանագրենք, որ միևնույն ժամանակ դա Արցախյան շարժման ավելի քան մեկ դարն է, որովհետև 1918 թ. սկսված պայքարի գագաթնակետը 1920 թ. մարտյան եղեռնագործությունն էր. թաթարները և թուրքերը միասին կարծում էին, թե խնդիրը կլուծեն այդ եղանակով: Բայց խնդիրը չկարողացան և չէին էլ կարող լուծել, որովհետև, թեև Շուշին դատարկվեց, հայ բնակչության մի մասը փախավ հարևան գյուղերը, մյուս մասը՝ Հյուսիսային Կովկաս, բայց Արցախի մնացած շրջանների գյուղական բնակչությունը քիչ չէր, որը շարունակեց պայքարը, որի արդյունքում հասանք հիմնախնդրի միջանկյալ լուծման. 1923 թ. պատմական Արցախի միայն մի մասի վրա ստեղծվեց ինքնավար մարզ: Ինքնավար մարզի հայ ազգաբնակչության հանդեպ արդեն Ադրբեջանական ԽՍՀ իշխանությունների ահաբեկչական, խտրական ու բռնատեղահանման քաղաքականությունը տարբեր դրսևորումներով

ու հնարներով գործադրվեց խորհրդային իշխանության տարիներին:

Մայր Հայաստանին վերամիավորվելու շարժումը, որը միշտ էլ ընդհատակում շարունակվում էր, նորից արտահայտվեց 1988-ին, արդեն բացահայտ, իսկ 1990-ականների սկզբին ազատագրական պայքարով հայ ազգաբնակչությունն իր հայրենակիցների աջակցությամբ կարողացավ նվաճել Արցախի անկախությունը: Բայց այդ պայքարի սկիզբը կարելի է համարել 1918-1920 թթ., այսինքն՝ Արցախյան շարժումը ոչ թե սկսվել է, ինչպես կարծում են ոմանք, միայն 1988-ին, այլ 102 տարի առաջ: Եվ Շուշիի խնդրո առարկա ոճրագործությունը պետք է դիտարկել այդ համատեքստում:

Կարծում եմ, որ առցանց գիտաժողովին ներկայացված զեկուցումներն առանցքագաղափարային այդ հունով էլ գնալու են: Գիտաժողովի կազմկոմիտեն մշակել է բանաձևի շատ սուր ու հիմնավորված տեքստ, որի նախագիծը ձեզ կներկայացվի և բոլոր մասնակիցների հավանությանն արժանանալուց պետք է դառնա այս գիտաժողովի ընդունած հանրագումարային փաստաթուղթը: Ի դեպ, մի անգամ էլ ընդգծեմ, որ այս ողբերգական իրադարձությանը երբեք այսպիսի լուրջ գիտաժողովի մակարդակով անդրադարձ չի կատարվել, և կարծում եմ, որ այս առցանց գիտաժողովի արդյունավետ աշխատանքով կստեղծվի նման եղանակով անցյալի դասերը վերաիմաստավորելու ավանդույթ:

Հաջորդ խնդիրը պիտի լինի այն, որ գնանք ոճրագործությունների հետքերով, միջազգային հանրությունից պահանջենք ցեղասպանության այդ ակտի դատապարտում և հատուցում: Հայաստանում՝ Երևանում գործող մասնագիտացված թանգարան-ինստիտուտում ստեղծենք մի առանձին սրահ՝ նվիրված Շուշիի ցեղասպանությանը, որին մեծ թվով մարդիկ են զոհ գնացել:

Արդիական է մնում Արցախյան շարժումը շարունակելը և իր տրամաբանական ավարտին հասցնելը, քանի որ անկախության համար պայքարը, ըստ էության, դեռ չի ավարտվել, քանի որ Ադրբեջանն անընդհատ փորձում է հարցը սրել, ձգտում է նորից վերանվաճել պատմական Արցախը, ոչնչացնել այնտեղ արդեն շուրջ երեք տասամյակ արարվող հայկական պետականությունը:

Մենք պետք է մեր զեկուցումները, մեր հարցադրումները կառուցենք այդ ոգով և մեր ծանրակշիռ խոսքը հասցնենք միջազգային հանրության գիտակցությանը, որ սա նոր խնդիր չէ, սա ուղղակի ազգային-ազատագրական պայքար է, ինքնորոշման իրացման համար պայքար է, հետևաբար այս խնդիրը մենք պիտի միշտ պահենք հրատապ վիճակում, անընդհատ անդրադառնանք դրա իրավաքաղաքական ու պատմական փաստարկներին և դրանք հանրահռչակելու, միջազգային գիտական համակարգում ինտեգրելու նպատակով կազմակերպենք նման գիտաժողովներ:

Շուշին, իհարկե, XIX դարում Հարավային Կովկասում՝ պատմական Հայաստանի տարածքում, խոշոր մշակութային կենտրոն էր, երկրորդը Թբիլիսիից հետո. թեև փխուր փաստ է, բայց այդպես է, միակը մինչև 1920 թվականը: Այնտեղ է գործել հռչակավոր Խանդամիրյան թատրոնը, իսկ մինչ այդ թատերական խմբերի ձևով այդտեղ են բեմել XIX դարի խոշորագույն հայ արտիստները, որոնց անունները գիտեք, ես չեմ ուզում թվարկել: Այնտեղ է գործել ռեալական ուսումնարանը,

որը փվել է աշխարհին հռչակավոր գիտնականներ, որոնք սովորելով եվրոպական երկրներում, Ռուսաստանում, դարձել են խոշոր գործիչներ: Մի խոսքով՝ Շուշիի ներդրումը հայ մշակութային, գիտական կյանքում վիթխարի է, և չի կարելի երբևիցե հանդուրժել, որ Շուշիին նորից վիճակվի մի ճակատագիր, որը շատ տխուր է, անընդունելի. այն, Արցախի հետ միասին, երբեք չպիտի լինի Ադրբեջանի կազմում:

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ, ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Այսօրվա հանդիպման առիթը 100 տարի առաջ Շուշիի հայ բնակչությանը պատուհասած ողբերգությունն է: Մենք պարտավոր ենք մեզ պարտադրված քարոզչական պատերազմում հակահարված հասցնել մեր հարևաններին, առավել ևս հենց հիմա՝ այս պահին, երբ հերթական անգամ սահմանին իրավիճակը սրված է: Մեզ մեղադրում են մի բանի մեջ, որով, ըստ էության, զբաղվել է Ադրբեջան կոչված պետությունը շուրջ 100 տարի: Ինչու՞ չէ, դրանից առաջ՝ 1905-1906 թթ. թաթարա-հայկական ընդհարումների ժամանակ թաթարներն իրենց իսկական դեմքը ցույց տվեցին: Նրանք հարձակումներ գործեցին հայաբնակ թաղամասերի վրա և խաղաղ բնակիչների նկատմամբ ցեղասպանության հանցագործություններ կատարեցին: Դրանք սկսվեցին 1905 թ. փետրվարի 6-ին Բաքվի կոտորածներով, որոնք շուտով տարածվեցին Այսրկովկասի այլ շրջաններում. Երևանի նահանգ, Զանգեզուրի գավառ, Արցախ և այլ շրջաններ: Այդ ցեղասպանական հանցագործությունները Ադրբեջան կոչված պետության ստեղծման նախաշեմին կրկնվեցին 1918թ. մարտ, ապրիլ, մայիս ամիսներին Արեշի, Նուխիի այլ շրջաններում, իսկ 1918 թ. սեպտեմբերին արդեն թուրքական բանակը ներխուժեց Բաքու և կազմակերպեց Բաքվի սոսկալի կոտորածը:

Այդ սոսկալի ցեղասպան քաղաքականությունը շարունակվեց արդեն Ադրբեջան պետության կողմից Խոսրով-բեկ Սուլթանովին գեներալ-նահանգապետ նշանակելուց հետո՝ 1920 թ. մարտին, հատկապես Շուշիում, որին զոհ գնացին բազմահազար հայեր: Այդ քաղաքականությունը շարունակվեց նաև խորհրդային իշխանության տարիներին՝ շատ անթեղված ձևով հայ բնակչությանը իր բնօրրանից դուրս մղելու նպատակով, երբ պարզվեց, որ 95 տոկոս հայ բնակչություն ունեցող Լեռնային Արցախի էթնիկական պատկերը՝ դեմոգրաֆիան, ասպիճանաբար փոխվեց. Արցախյան շարժման նոր փուլի նախաշեմին՝ 1988 թ., այն արդեն դարձել էր 74-75 տոկոս:

Այնուհետև այդ քաղաքականությունը շարունակվեց նաև Խորհրդային Ադրբեջանի գոյության վերջին տարիներին, երբ, ինչպես հայտնի է, կազմակերպվեցին ու անպատիժ կերպով իրականացվեցին Սումգայիթի, Կիրովաբադի (1988 թ.),

Բաքվի (1990 թ.) հայ բնակչության կոտորածներ, որոնք նմանվում էին 100 տարի առաջ նույն Բաքվում տեղի ունեցած ոճրագործություններին:

Այս քաղաքականությունը շարունակվում է անպատիժ կերպով. 2016 թ. ապրիլին ադրբեջանական ներխուժման հետևանքով տեսանք, թե ինչ տեղի ունեցավ: Այս ամենն ամփոփելով՝ կարող ենք ասել, որ երբեք վերադարձ չի կարող լինել դեպի անցյալ: Ադրբեջանի այն սպասումներն ու ակնկալիքները, թե ինչ-որ կարգավիճակով Արցախը նորից կհայտնվի Ադրբեջանի տիրապետության տակ, երբեք չեն իրականանա, որովհետև մենք՝ գիտության ոլորտի աշխատակիցներս ու գիտաշխատողներս, շատ լավ գիտենք, որ դա միանշանակ ենթադրում է ցեղասպանություն, և հաղթահարված տարիների պատմական փորձը հուշում է, որ ամեն մի վերադարձ դեպի անցյալ ենթադրում է արցախահայության ցեղասպանություն, որը երբեք հայ ժողովուրդը թույլ չի տա:

Այսօրվա մեր գիտաժողովի նպատակներից մեկն էլ այն է, որ համաշխարհային հանրությանը ցույց տանք իրականությունը և վերջում մեր ընդունած բանաձևի մեջ, որի նախագիծն արդեն տարածված է, հատկանշվում է, որ ցեղասպան երկրի հետ հայ ժողովուրդն անելիք չունի, իսկ մենք մեր իրավունքները վաղուց հաստատել ենք մեր հաղթական զենքի զորությամբ:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՊԱՐԳԵՎ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Բարի ողջույն կրկին անգամ բոլորիդ

Նախ իմ երախտագիտությունը միջազգային առցանց գիտաժողովի նախաձեռնողներին, աջակիցներն և բոլոր մասնակիցներին: Առաջին հերթին բարի երթ եմ մաղթում այս մեր կարևոր, խիստ պահանջված գիտաժողովին: Եվ հայցում Աստծո օրհնությունը, Աստծո հատուկ օրհնությունը: Եվ աղոթում եմ 100 տարի առաջ կատարված ցեղասպանության անմեղ զոհերի համար: 1918 թ. երիտթուրքերը իրենց կուսակցության մասնաճյուղը ստեղծեցին Բաքվում, Ադրբեջանում մուսավաթ (մուսա-մովսեական) կուսակցությունը, որը նույն ձեռագրով շարունակեց ցեղասպանությունը: Մինչև այսօր էլ Տավուշում ոմբակոծվում են մեր խաղաղ բնակավայրերը, ոճրագործի այդ ձեռագիրը չի փոխվում: Դրա պատասխանը մեկն է՝ ունենալ անկախ պետականություն և կազմակերպված բանակ: Սա է մեր պաշտպանության ձևը և եղանակը: Եվ ես հույս ունեմ, որ ձեր զեկույցների շնորհիվ մենք կկարողանանք միջազգային ամենաբարձր ատյաններ բարձրացնել այս հարցը, ներկայացնենք և վերջ տանք ցեղասպան այս քաղաքականությանը: Մարդկության դեմ գործված մեղքը վաղեմության ժամանակ չունի. 100 տարի, թե 200 տարի: Բայց կա ավելի կարևոր հանգամանք՝ հետևողական պիտի լինենք, անընդհատ պիտի բախենք բոլոր դռները: Ավետարանում՝ «Անիրավ դատավորի առակում» մի ուսուցողական դրվագ կա. այրի կինն այնքան է գալիս կաշառակեր դատավորի մոտ, որ վերջինս ասում է. «լավ, ով կին, արի՛, ես քո հարցը կքննեմ»: Մենք չպիտի հոգնենք, անընդհատ պիտի բախենք բոլոր դռները մինչև մեր հարցը քննեն և դատապարտեն: Եվ սա կլինի մեր մարդկային ներդրումը աշխարհում ցեղասպանության հանցագործությունները հետագայում կանխարգելելու գործում: Մեր այս պայքարը միայն մեզ համար չէ, այլ նաև քաղաքակրթության համար է: Աշխարհի բոլոր ազգերի համար է, որ իրենց զերծ պահենք մարդկային, պատմական և մշակութային ցեղասպանությունից:

Բոլորիդ հաջողություն եմ մաղթում, թող Աստված օրհնելով օրհնի. մենք կարողանանք մեր սուրբ նահատակների հիշատակով կասեցնել այդ ցեղասպան ձեռագիրը:

Այսօր Էրդողանն ու Ադրբեջանի իշխանությունը, սկսած Լիբիայից մինչև Չինաստան, փորձում են Հայաստանի, Վրաստանի, Արցախի վրայով անցկացնել պանթուրանիզմի իրենց այդ կամուրջը: Դա նրանց չի հաջողվի, իսկ մեզ բոլորիս հաջողություն և Աստծո օգնություն: Ամեն:

ԳԼՈՒԽ Ա

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ՝ ՇՈՒՇԻԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ







Բաքվի թեմական առաջնորդ Բագրատ եպիսկոպոսի գրությունը Գևորգ Ե կաթողիկոսին՝ Ադրբեջանում և Արցախում թուրքերի կազմակերպած վայրագությունների, 1920 թ. մարտի 23-ի Շուշի քաղաքի հայերի կոտորածի, հայության գոյատևմանան բարենպաստ պայմանների մասին, 14 օգոստոսի 1920 թ.(ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2053, թ. 1):

Записка предводителя Бакинской епархии епископа Баграта Католикосу всех армян Геворгу V о бесчинствах, организованных турками в Азербайджане и Арцахе, резне армян города Шуши 23 марта 1920 года, о благоприятных условиях существования армянства, 14 августа 1920 г. (НАА, ф. 57, п. 2, д. 2053, л. 1).

The letter of the diocesan leader of Baku, Bishop Bagrat, to Catholicos Gevorg V about the atrocities organized by the Turks in Azerbaijan and Artsakh, the massacre of Armenians in the city of Shushi on March 23, 1920, and the unfavorable conditions for the survival of the Armenians, August 14, 1920 (NAA, f. 57, l. 2, w. 2053, p. 1).

ВАЛЕРИЙ МИХАЙЛОВИЧ АВАНЕСЯН
проректор по науке и международному сотрудничеству, д.и.н., профессор Арцахского государственного университета
эл. адрес: vm.avanesyan@yahoo.com
Статья представлена 10.04.2021, рецензирована 10.04.2021. принята к публикации 20.04.2021

МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ В 1918–1920 ГГ. И ТРАГЕДИЯ АРМЯН В ГОРОДЕ ШУШИ: УРОКИ И ПОСЛЕДСТВИЯ

Историческая правда зависит от того,
что общество предпочитает помнить
и что оно предпочитает забыть
Наполеон Бонапарт

Предисловие

Когда проходила в режиме on-line международная научная конференция, посвященная 100-летию шушинской трагедии в городе, который являлся колыбелью армянской истории, религии, театра, языка и литературы, мы не знали тогда, что разразится 44-х дневная война, и город Шуши станет азербайджано-турецким и историки вновь будут задаваться извечным вопросом «почему это произошло» и нужно провести много конференций в будущем, чтобы мучительно искать ответы. Нам кажется, что такое предисловие является необходимым к представленной статье, ведь Азербайджан и Турция развязали войну в «благоприятной» для них международной обстановке и неблагоприятной для армянской стороны.

11 ноября 1918 г. ранним утром пять минут шестого было подписано перемирие в Компьенском лесу между Францией от имени Антанты с одной стороны и Германией[1] – с другой, которая остановила отсчет времени самой жестокой, кровопролитной войны в истории человечества до той поры. Перемирие предпола-

[1] За месяц до этого Германия приняла за основу перемирия 14 пунктов 28 президента США Вудро Вильсона от Демократической партии.

гало созыв некой конференции, где необходимо было оформить юридически окончание Первой мировой войны и создать новую систему[1] в международных отношениях. Местом конференции в конечном итоге был выбран Париж. В мировой историографии тема послевоенного устройства мира и формирование версальско-вашингтонской системы является классической и достаточно изучена исследователями. Поэтому автор не ставил цель вступать в историографические дискуссии по выдвинутым проблемам, а предполагал на основе дипломатических документов и, используя подписанные перемирия и договора проанализировать и собрать воедино позиции основных акторов, региональных и мировых, которые прямо или косвенно имели отношение к армянской проблеме, то есть мы попытались создать международный фон накануне трагических событий в марте 1920 г. в г. Шуши. При исследовании темы были использованы методы комплексного и сравнительного анализа и объективного историзма. Исходя из того, что в небольшой статье невозможно рассмотреть международные отношения в полном объеме, тем более в таких ограниченных по времени рамках, мы решили остановиться на армянском, греческом, турецком, русском вопросах и в этом контексте изучить позиции США, Франции, Великобритании и Италии.

Международные отношения в 1918-1920 гг. прошли под знаком завершения Первой мировой войны, распада империй, созыва Парижской мирной конференции, образования независимых государств и, в частности, в Закавказье возникновения территориальных споров. Причем, чаще всего региональные проблемы становились предметом обсуждения на международном уровне.

В 1917 году произошли события, которые стали судьбоносными не только для всей системы международных отношений, но и в истории армянского народа. Это выход России из мировой войны, а в последующем заключение сепаратного мира с германским блоком, членом которого была Османская Турция. Ведь с началом войны Россия стала главным участником на всех театрах военных действий и соглашения для участников Антанты никак не предусматривала заключение сепаратного мира, поэтому Франция и Англия назвали этот акт “предательством интересов союзников”, потому что еще 5 сентября 1914 г. в Лондоне была подписана англо-франко-русская “Декларация о не заключении сепаратного мира”, которая свидетельствовала о намерении союзников вести войну до победы. В том же году США вошли в мировую войну, хотя с ее началом в 1914 году объявили о своем нейтралитете. Даже предвыборная кампания в 1916 г. демократа Вудро Вильсона проходила под знаком “США вне войны”.

Принятие Парижской мирной конференцией Устава Лиги Наций сыграло важную роль в подведении итогов мировой войны, послевоенного устройства и формировании новой системы международных отношений. Дело в том, что Устав был включен в мирные договора с побежденными странами. Страны – победители

[1] до Версальско-Вашингтонской системы в международных отношениях действовали Вестфальская система, созданная по итогам Тридцатилетней войны (1618-48гг.) и Венская как результат наполеоновских войн (1814-15-1914гг.)

по-разному воспринимали идею о подобной международной организации. Если для В.Вильсона учреждение Лиги Наций стало "квинтэссенцией американской внешнеполитической концепции"[1], то Д. Ллойд Джордж и Ж. Клемансо не рассматривали ее как главный инструмент мира, полагаясь на традиционные дипломатические средства, и включили рассмотрение данного вопроса в конце повестки конференции. Вильсон, пригрозив покинуть конференцию, добился его обсуждения и принятия решения в первоочередном порядке. Вообще идея создания Лиги Наций принадлежит лорду Грею[2], министру иностранных дел Великобритании, который обратился к Вильсону в сентябре 1915 г. с тем, чтобы вовлечь США в войну. Общеизвестно, что США с началом первой мировой войны объявили о своем нейтралитете. Грей прекрасно понимал, что философия, заложенная в его обращении, соответствовала убеждениям президента США. В результате в мае 1916 Вильсон выступил с планом создания всемирного сообщества народов, по которому формируется такой международный порядок, основанный на демократии, коллективной безопасности и самоопределении. Важно подчеркнуть: Грей выдвинул также тезис о том, что все члены предложенной им всемирной организации должны взять на себя обязательство противостоять любой агрессии и наказывать нации, отвергающие мирное урегулирование споров.

8 января 1918 г. Вильсон выступил на совместном заседании палат конгресса с изложением американских целей войны, представив их в виде "Четырнадцати пунктов". В рамках мирной конференции были образованы несколько комиссий, в том числе комиссия по выработке Устава Лиги Наций[3], которую возглавил лично В. Вильсон. Представили для обсуждения несколько проектов - американский, английский и французский. Париж требовал включения в Устав пункта о создании международных вооруженных сил, которые способны поддерживать безопасность в Европе. Против французов выступили Вильсон и Ллойд Джордж, предварительно объединив свои проекты. Дело в том, что Вильсон торопил комиссию завершить свою работу к 13 февраля, чтобы после рассмотрения проекта Устава Лиги Наций на пленарном заседании мирной конференции успеть представить его в сенатскую комиссию по иностранным делам конгресса США.

Встреча президента с членами сенатской комиссии по иностранным делам состоялась в Белом доме 26 февраля, на ней президенту стало ясно, что влиятельная оппозиция в лице республиканцев в высшем законодательном органе страны будет ожесточенно сопротивляться его планам в отношении Лиги Наций. Еще до прибытия Вильсона, оппозиция, возглавляемая сенатором республиканцем Лоджем призывала отклонить идею создания Лиги Наций, утверждая, что эта организация заставит США отказаться в пользу других стран от права вести торговлю оружием и амуницией и, кроме того, противоречит доктринам Вашингтона

---

[1] Киссинджер, Генри. Дипломатия. Москва, 1997. с.198.

[2] Основы будущего объединения народов, т.е. Лиги Наций, выразил еще Иммануил Кант в своем трактате "К вечному миру" в 1795 году, где предлагал осуществлять контроль над возникающими конфликтными ситуациями и прилагать усилия к сохранению и укреплению мира между государствами.

[3] иначе она называлась комиссией отеля "Крийон", где проходили заседания

В статье рассматривается подведение итогов Первой мировой войны и формирование новой системы международных отношений. Важными аспектами этой системы являются обсуждения на различных конференциях в 1918-1920-х годах армянского, греческого, турецкого, русского вопросов. Позиции ведущих держав Запада также нашли свое отражение в исследовании. Автор не обошел вниманием дискуссии по Уставу Лиги Наций.

Ключевые слова: *армянский, греческий, турецкий, русский вопросы, позиции США, Великобритании, Франции, Италии, Парижская мирная конференция.*

Ամփոփում

Միջազգային հարաբերությունները 1918–1920 թթ. և հայերի ողբերգությունը Շուշի քաղաքում. դասերը և հետևանքները

Վալերի Ավանեսյան

Հոդվածում քննարկվում են Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքների ամփոփումը և միջազգային հարաբերությունների նոր համակարգի ձևավորումը: Այս համակարգի կարևոր ասպեկտներն են 1918-1920-ական թթ. տարբեր խորհրդաժողովներում հայկական, հունական, թուրքական, ռուսական հարցերի քննարկումները: Հետազոտության մեջ իրենց արտացոլումն են գտել Արևմուտքի առաջատար տերությունների դիրքորոշումները: Հեղինակը չի շրջանցել նաև Ազգերի լիգայի կանոնադրության շուրջ քննարկումները:

Հիմնաբառեր. *հայկական, հունական, թուրքական, ռուսական հարցեր, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի դիրքորոշումներ, Փարիզի խաղաղ կոնֆերանս:*

Abstract

International Relations in 1918–1920 and the Tragedy of Armenians in the City of Shushi: Lessons and Consequences

Valery Avanesyan

The article deals with the summary of results of the First World War and the formation of a new system of international relations. The important aspects of this system are the discussions of Armenian, Greek, Turkish, and Russian issues at various conferences in the 1918-1920s. The positions of the leading Western powers are also reflected in the study. The author did not ignore the discussion on the Charter of the League of Nations.

Keywords: *Armenian, Greek, Turkish, Russian issues, positions of the USA, Great Britain, France, Italy, Paris peace conference.*

ВИКТОР АНАТОЛЬЕВИЧ НАДЕИН-РАЕВСКИЙ,
кандидат философских наук, директор Института политических и социальных исследований Черноморско-Каспийского региона им. В.Б. Арцруни, старший научный сотрудник ИМЭМО РАН (Россия)
Статья представлена 10.04.2021, рецензирована 10.04.2021, принята к публикации 20.04.2021

ГЕНОЦИД АРМЯН В ШУШИ И СОВРЕМЕННАЯ ГЕОПОЛИТИКА

Факты и подробности геноцида в арцахском городе Шуши армянские историки хорошо изучили и, опираясь на исследования армянских историков, следует остановиться на геополитическом аспекте геноцида армян в Шуши. Шуши, точнее именно ее армянские кварталы трижды подвергались погромам, в том числе и в конце XX века.

Напомним, что первое преступление со стороны кавказских татар, как их называли в то время, было совершено в 1905 году, когда местные мусульмане устроили погромы в армянских кварталах города. Таким образом события марта 20-го года, столетие которых мы сейчас вспоминаем, были далеко не первым преступлением против мирного армянского населения города. И каждый раз это была резня, совершаемая с колоссальной жестокостью и животным зверством. Отметим, что оценка этого преступления иногда сводится к случайному характеру этих событий. Однако это совершенно неверная оценка.

В истории всех геноцидов, организованных и проведенных против армян не было «случайных» действий. То же самое касается и Османской империи, когда еще при Абдул-Хамиде II, в конце XIX века было организовано массовое истребление армян[1]. Затем пришел 1915 год – основной этап большого геноцида. Но ведь эти события были продолжением османской политики, но уже при младотурках из партии «Единение и прогресс».

В чем же была подоплека этих преступлений, какая идеология лежала в их

[1] Общее число убитых армян в 1895-1896 гг. оценивается минимум в 300 тысяч человек. См.: Степанян С. С. (ред.) 1991, 9.

основе? Прежде всего в том, что самосознание тогдашнего населения империи у многих его представителей не изменилось и по сей день. Имеется в виду именно формирование самосознания турецкого народа. Об этом писали и турецкие ученые. Так, один из наиболее интересных и глубоких мыслителей Танер Акчам, связывал геноцид с этим самосознанием, становлением турецкого национального «Я»[1]. Когда народ не просто не готов признать права представителей других национальностей, народов, миллетов, как они в Турции называют. В массовом сознании турок немусульмане – христиане, езиды – как бы недочеловеки. Термин, который позже взяли на вооружение нацисты, но на практике именно таким подходом руководствовались османские турки, а потом, в значительной степени и турки республиканского периода. Таким образом, особой разницы в массовом сознании по отношению к национальным меньшинствам как Османской империи, так и республиканской Турции не было.

Однако и в османский период был один грандиозный проект, который появился в середине XIX века, а позже оказал определяющее влияние на изменение национального самосознания этнических турок – пантуранизм, как идея объединения народов уральской и алтайской языковой семьи, а несколько позже – пантюркизм – идея создания империи тюркских народов.

В восприятии турок развал империи воспринимался болезненно. Неспокойные христианские регионы воспринимались как «чужие» Когда империя потеряла Балканы – регион, населенный славянскими народами все было понятно: это христиане, чего еще можно было от них ожидать?

Затем «предателями османской родины» стали арабы, несмотря на идею панисламизма, которую при Абдул-Хамиде II усердно пропагандировали в Османской империи. Казалось бы, эта доктрина давала возможность скрепить на этой основе всю империю. Но в политической практике эта идея не была воспринята мусульманским населением империи. Арабы-мусульмане были тоже недовольны османским владычеством и высокомерием, с которым к ним относились в Османской империи. В арабоязычных регионах все чаще поднимали восстания против стамбульских властей.

Что же оставалось турецким националистам появившимся в этот критический период Османской империи? Появилась идея опереться на этнических турок, которых обычно считали какой-то низшей частью общества – пастухами, крестьянами. Слово турок было воплощением именно этого понимания для «элиты османов». Какие-то кочевники Малой Азии... А тут мы –османы, интеллектуалы, образованная и «продвинутая элита». Но вот сознание поменялось – элита нацелилась на выживание. Наконец-то начали писать на турецком языке. На турецком, а не османском, стали писать стихи, литературные произведения[2]. И вот тогда начал появляться не османский, а турецкий национальный дух. Но он был гипертрофированным изначально. Турками они считали всех тюрок от Адриатики до

[1] Танер Акчам 1995.
[2] Гордлевский В. А. 1912, 104.

Тихого океана, всех, кто говорил на тюркских языках. И вот так была заложена мина замедленного действия под самосознание самого народа.

И поэтому после того, как произошла революция в 1908 году, произошли события, которые подробно описал профессор Раймон Кеворкян в своей книге «Геноцид армян. Полная история»[1]. Когда армянские фидаи спустились с гор во время младотурецкой революции, их с оркестрами встречали в касабах, в маленьких турецких городках. Даже армянские фидаи поверили в то, что империя изменится и все народы вне зависимости от национальности и религии получат равные права. Однако эти надежды не оправдались. Партия «Единение и Прогресс» («Иттихад ве Терраки») постепенно узурпировала власть и начала кампанию по выдавливанию всех национальных и религиозных меньшинств из властных структур империи. Между тем в середине 19 века армяне составляли значительную часть населения Османской империи.

Таким образом, Младотурецкая революция не оправдала надежды христианского населения империи на уравнения христиан в правах с мусульманами.

В 1914 году началась Первая мировая война, и турки в нее вступили на стороне германского блока. Почему? Да потому что Германия поддержала турецкое устремление на Восток, в тюркские регионы, туда, где, по их мнению, проживают турки – узбекские, казахские, киргизские, как их называют в Турции. Впрочем, в тот период существовал только Туркестан.

На турецкие планы был отклик и из Российской империи. Целая плеяда турецких националистов выросла на земле Российской империи. По нашим подсчетам выходцами из Российской империи являются 24 ведущих пантюркиста, судя по «Энциклопедии жизни», выпущенной в Турции. Это были татары, башкиры будущие азербайджанцы, потому что тогда не было этого названия, оно появилось только в 1918 году. Например, великий турецкий националист Зеки Велиди Тоган – башкир по национальности, а членом Великого национального собрания Турции после образования республики был Аяз Исхаки (Гаяз Исхаков) – почитаемый в Татарии известный национальный поэт, пантюркист по убеждениям.

Эти люди вообще-то с презрением относились к интересам своих народов. Они считали свои языки просто диалектами, а великий османский язык должен был стать основой среднего и высшего образования. Эта пропаганда с призывами «освободить турок» от власти российского императора нашла живой отклик в рядах пришедших к власти турецких националистов[2]. Вот с этим багажом Турция вступила в Первую мировую войну. И Германская империя поддержала турецкие претензии, обещав османским союзникам поддержку экспансии на Восток.

Сама теория, пантюркистская доктрина создания некоей империи «Великий Туран» строилась на завоевании огромной территории, практически до Тихого океана. А причем тут, казалось бы, азербайджанцы? Да при том, что еще с XIX века во всех мечетях Российской империи шла массированная пропаганда среди

---

[1] Кеворкян Р. 2015.

[2] Подробнее этот процесс описан нами в: Надеин-Раевский В. А. 2017, С. 19-20.

мусульман с призывами перебраться под длань халифа всех мусульман – султана Османской империи. Эта пропаганда шла в том числе и среди бакинских и шушинских татар, как их тогда называли. Это всё подогревало антирусские настроения, и безусловно, антиармянские. Ситуация в Елизаветпольской губернии всегда была крайне неспокойной и опасной. В 1905 году проходили массовые армянские погромы, а потом и в 1920 году турки послали туда свою военщину. когда армяне оказались беззащитны. Их попытки самообороны против поддержанных турками бандитов не смогли уберечь от массовых погромов и в Шуши были убиты десятки тысяч армян. С точки зрения турок это было продолжением истребления армянского клина, который разрезал «единый тюркский мир» и был препятствием на пути осуществления идеи создания «Великого Турана».

Казалось бы, это трагедия армянского народа вековой давности, но играет ли она свою роль в современной геополитике и какую? Представляется, что эта роль по-прежнему крайне важна.

Разве в наши дни пантюркизм утратил свою актуальность и ушел в далекое прошлое? Нет, эта доктрина или «национальный идеал» турок вновь обрел свою актуальность. Более того, после распада СССР турки почувствовали себя хозяевами на постсоветском пространстве. Были открыты десятки университетов, лицеев, было выделено 26 тысяч стипендий для обучения турецких или «тюркских» студентов в турецких вузах. И к настоящему времени этот стипендиальный фонд был полностью использован. В Турции проходили обучение разного рода технические специалисты, менеджеры, государственные служащие.

Какие же идеи вкладывали в голову этим школьникам и студентам? Идею любви к Турции, нелюбви к Европе, да и к русским. Вот это было самое главное. Своеобразно преподавалась и история. В основном это была история Османской империи и Турецкой республики, а знание российской истории в российских «турецких лицеях» изучалось крайне поверхностно. Россия спохватилась довольно поздно, в России эти лицеи были закрыты только в 2006 году, правда многие из них переформатировались в частные школы, чтобы так или иначе сохраниться. Но дело уже было сделано. В тюркских республиках на постсоветском пространстве выросла новая протурецкая элита. Элита антироссийская, антиармянская. Обратите внимание, как решаются вопросы, связанные с Арменией, какой бывает позиция тюркоязычных республик. Как правило, мягко выражаясь, эта позиция весьма недружелюбна по отношению к Армении.

Таким образом, понимание геополитической ситуации, взгляда на мир в целом, носит откровенно протурецкий характер, что крайне позитивно турецкой экспансии. В настоящее время в Турции в понимании своего места в мире доминируют три идейные доктрины. Это так называемый неоосманизм, к которому причастен бывший глава МИД, а позже и премьер-министр Турецкой Республики Ахмет Давутоглу[1]. Его взял на вооружение и Эрдоган[2]. Кроме того, идеология базирует-

[1] Davutoğlu A. 2012.
[2] Аватков В. А. 2014, Неоосманизм. Базовая идеологема и геостратегия Турции // Сободная мысль. № 3. – С. 71-78.

ся на идеях «умеренного исламизма». Но грань между умеренным исламизмом и радикальным (террористическим) очень тонкая. При этом в идейном багаже турецкой верхушки сохранился и пантюркизм – доктрина, от которой турки не отказывались.

Что изменилось на Кавказе с точки зрения геополитики? В свое время Армения рассекала как бы единый «тюркский мир» на две части, отделяя турок от остальных тюркских народов и, как бы мешая создать некое «единое тюркское пространство». Сейчас есть два армянских государства: собственно Республика Армения и мужественный Нагорный Карабах (Республика Арцах). То есть по-прежнему геополитически «армянский клин», но теперь уже два армянских государства по-прежнему разделяют «тюркский мир». Именно так относятся турки к этой реальности.

У нас, к сожалению, не все до конца осознают эту особенность построения этого геополитического пространства. Произошли изменения в самой Турции, вошли в конфликт Гюлен и Эрдоган. Роль Фетхуллаха Гюлена в проведении политики «мягкой силы» Турции была крайне высока. Он проводил в жизнь идею построения новой системы образования, воспитания «нового турка» через турецкие лицеи и университеты. В рамках системы образования подконтрольной системе Движения «Хизмет» удалось воспитать «нового турка» не только в самой Турции, но и на постсоветском пространстве. Конечно, Гюлен и Эрдоган поссорились, но от этого экспансия не прекратилась[1].

Отмечу и то, что турки по-прежнему отрицают, как и прежде, сам факт геноцида армян. Но отметим появление новых документов, освещающих это преступление. В прошлом 2019 году при поддержке Константина Затулина, Института стран СНГ удалось выпустить крайне интересную книгу на русском языке под названием «Приказы убивать» турецкого автора Танера Акчама[2], который сумел убедительно доказать, что те телеграммы, которые в процессе организации властями геноцида армян в Османской империи и которые не были введены в научный оборот, поскольку турки доказывали, что этих телеграмм не было, что они были придуманы самими армянами, являются подлинными. Танер Акчам доказал, что шифры которыми пользовался Талаат-паша, а тогда, в условиях мировой войны все телеграммы шифровывались, полностью соответствуют шифрам телеграмм, направленных Талаатом по другим вопросам внутренней политики в самые разные регионы империи.

Танер Акчам привел часть этих телеграмм, в том числе указания Талаата чиновникам – что делать в Алеппо с армянскими сиротами, а там было более полутора тысяч армянских детей-сирот только в одном из приютов. По мнению Талаат-паши, тех, кому было меньше четырех лет нужно распределить по турецким приютам, потому что их можно отуречить и они не будут помнить своих родителей. При этом всех, кто старше – этапировать в Дейр-Эз-Зор, что было равнозначно

[1] Надеин-Раевский В. А. 2018.
[2] Танер Акчам 2019.

смертному приговору[1]. Именно эти приказы и были исполнены. Показательны и возмущенные телеграммы Талаата местным властям с весьма характеным содержанием: почему все дороги завалены трупами? Почему не убираете? Немедленно привести все в порядок. Талаата возмущало, что там постоянно путешествуют представители иностранных консульств и видят всю эту картину[2].

Много страшных документов приведено в этой книге. Таким образом, доказательная база по геноциду армян в Османской империи существенно дополнена свидетельствами того, что именно османское государство организовало это преступление и следило за его последовательным исполнением.

Более того, есть и другие абсолютно неопровержимые доказательства этой государственной политики уничтожения. В период Османской империи была создана 31 правительственная комиссия по «тюркизации брошенной армянской и греческой собственности»[3]. При этом во время геноцида 2015 года пострадали не только армяне, но и греки, и айсоры и езиды. Но эти комиссии не смогли справиться с грабежом собственности уничтоженных и депортированных жертв геноцида и эта работа была продолжена в республиканский период. В период правления Мустафы Кемаля, то есть в республиканский период было создано 29 комиссий «по тюркизации брошенной собственности», которые продолжили ту же работу османского периода[4]. Обратил бы внимание и на название комиссий – «брошенной» или «оставленной» собственности: вроде бы владельцы все бросили или оставили и куда-то ушли… Сколько бы ни говорили разные доброхоты, что это дела давно минувшие и незачем все это вспоминать, но уже совершенные преступления против человечности, сам факт которых упрямо отрицается потомками преступников требует называть вещи своими именами, а преступления квалифицировать именно как преступления.

Геноцид в Шуши – это продолжение политики османов уже рухнувшей империи и, соответственно, их приспешников, из местных «кавказских татар». Но методы действий и человеконенавистничество стали непременной частью формирующегося самосознания и этих преступников, ставших исполнителями чужих, турецких устремлений, которые воспринимались как часть собственного самосознания, собственных устремлений.

На современном геополитическом пространстве мы видим прежние устремления претендентов на региональную гегемонию и ориентацию на достижение своих целей с использованием прежних геноцидальных методов.

---

[1] Танер Акчам 2019, 183-193.
[2] Танер Акчам 2019, 212-214.
[3] Onaran 2013-11(1).
[4] Onaran 2013-11(2).

ЛИТЕРАТУРА

1. Гордлевский В. А. 1912, Очерки по новой османской литературе. // Труды по востоковедению, издаваемые Лазаревским ин-том восточ. языков. Вып. XXXIX/ Москва: Типогр. Крестнаго колендаря. С. 104.
2. Кеворкян Р. 2015, «Геноцид армян. Полная история» Центр арменоведческих исследований «Анив», «Яузакаталог», Москва. Издание осуществлено попечением заслуженного строителя РФ Вардкеза Арцруни.
3. Надеин-Раевский В. А. 2017, «Пантюркизм: идеология, история, политика. Экспансионистская доктрина: от Османской империи до наших дней и судьбы Турции, России и Армении». Москва: Издательство «Русская панорама». С. 19-20.
4. Надеин-Раевский В. А. 2018, «Пантюркизм: от Османской империи до наших дней и судьбы Турции, Армении и России» (Москва, ИМЭМО РАН им. Е.М. Примакова Институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона, Армавирский государственный педагогический университет, Научно-педагогическая Кавказоведческая Школа В. Б. Виноградова).
5. Степанян С. С. 1991(ред.), Германские источники о геноциде армян.: Период первой мировой войны: Сб. док и мат. в 2-х томах. / Сост.: С.С. Степанян, Н.К. Бандасарян. – Т. 1. –Ереван: Айястан.
6. Танер Акчам 1995. Турецкое национальное «Я» и армянский вопрос. Москва: АО «Арио-Никс».
7. Танер Акчам 2019, Приказы убивать. Перевод с английского. Под редакцией Надеина-Раевского В. А. Библиотека Лазаревского клуба. Институт стран СНГ (Институт диаспоры и интеграции). Москва.
8. Davutoğlu A. 2012, Stratejik Derinlik. Türkiye'nin Uluslararasi Konumu. – İstanbul: Ср.: Аватков В. А. 2014, Неоосманизм. Базовая идеологема и геостратегия Турции // Свободная мысль. № 3. – С. 71-78.
9. Onaran, Nevzat. 2013-11(1) Osmanli'da Ermeni ve Rum Mallarinin Türkleştirilmesi (1914-1919) Evrensel Basim Yayin.
10. Onaran, Nevzat. 2013-11(2) Cumhuriyet'te Ermeni ve Rum Mallarinin Türkleştirilmesi. (1920-1930). Inceleme arastirma. Evremsel Basim Yayin.

Резюме

Геноцид армян в Шуши и современная геополитика

Виктор Надеин–Раевский

Первое преступление со стороны кавказских татар против армянского населения было совершено в 1905 году – это были погромы в армянских кварталах города. Геноцид марта 20-го года был продолжением политики уже рухнувшей Османской империи и был нацелен на реализацию пантюркистской идеи создания империи «Великий Туран». Это была

спланированная и осуществлявшаяся под контролем османского государства политика. Геноцид в Шуши был продолжением геноцида армян в Османской империи, начатым в 1915 г. и перенесенным на территорию распавшейся Российской империи. Основной целью пантюркистских военных и политических кругов Турции оставалась реализация «национального идеала» турок – создания Туранского государства. С точки зрения пантюркистских лидеров единству «турецкого мира» мешал «армянский клин», и его ликвидация представлялась важным этапом создания единого тюркского пространства.

В современном геополитическом измерении сохранилась ситуация, при которой созданию единого «тюркского мира» мешают уже два армянских государства – Армения и Арцах. Именно поэтому необходимо помнить о геноциде в Шуши.

Ключевые слова: *Геноцид, Шуши, «Единение и Прогресс», пантюркизм, «Великий Туран», Танер Акчам, Гюлен, Эрдоган, Талаат, «брошенная собственность».*

Ամփոփում

Հայոց ցեղասպանությունը Շուշիում և ժամանակակից աշխարհաքաղաքականությունը

Վիկտոր Նադեին-Ռևևսկի

Հայ բնակչության դեմ կովկասյան թաթարների առաջին հանցագործությունը կատարվել է 1905 թվականին. դրանք ջարդեր էին քաղաքի հայկական թաղամասերում: Մարտի 20-ի ցեղասպանությունն արդեն քանդված Օսմանյան կայսրության քաղաքականության շարունակությունն էր և նպատակ ուներ իրականացնել «Մեծ Թուրանի» կայսրությունը ստեղծելու համաթուրքական գաղափարը: Դա օսմանյան պետության վերահսկողության ներքո պլանավորված և իրականացվող քաղաքականություն էր: Շուշիի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության շարունակությունն էր, որը սկսվեց 1915-ին և տեղափոխվեց քայքայված Ռուսական կայսրության տարածք: Թուրքիայի պանթուրքական ռազմական և քաղաքական շրջանակների հիմնական նպատակը մնում էր թուրքերի «ազգային իդեալի» ՝ Թուրանական պետության ստեղծումը: Պանթուրքական առաջնորդների տեսանկյունից «հայկական սեպը» խանգարում էր «թուրքական աշխարհի» միասնությանը, և դրա վերացումը, կարծես, կարևոր փուլ էր միասնական թյուրքական տարածքի ստեղծման գործում:

Ժամանակակից աշխարհաքաղաքական հարթությունում մնացել է նույն այն իրավիճակը, երբ արդեն երկու հայկական պետությունները՝ Հայաստանը և Արցախը, խոչընդոտ են համարվում միասնական «թյուրքական աշխարհի» ստեղծման համար: Այդ պատճառով անհրաժեշտ է հիշել Շուշիում տեղի ունեցած ցեղասպանության մասին:

Հիմնաբառեր. *Ցեղասպանություն, Շուշի, «Միասնություն և առաջընթաց», պանթուրքիզմ, «Մեծ Թուրան», Թաներ Աքչամ, Գյուլեն, Էրդողան, Թալեաթ, «լքված սեփականություն»:*

Abstract

Armenian Genocide in Shushi and Modern Geopolitics

Victor Nadein-Raevskiy

The first crime against the Armenian population was organized by Caucasian Tatars in 1905 who committed massacres in the Armenian parts of the city. The genocide of March 20 was a continuation of the policy of the already collapsed Ottoman Empire and was aimed at realizing the Pan-Turkish idea of creating the "Great Turan" empire. It was a policy planned and implemented under the control of the Ottoman state. The genocide in Shushi was a continuation of the Armenian genocide in the Ottoman Empire, which began in 1915 and was exported to the territory of the destroyed Russian Empire.

The main goal of the pan-Turkish military and political circles of Turkey was to realize the "national ideal" of the Turks - the creation of Turanian state. From the point of view of Pan-Turkish leaders the "Armenian wedge" hindered the unity of the "Turkish world" and the latter's elimination seemed to be an important stage in the creation of a united Turkish territory.

In the current geopolitical dimension, the situation remains the same, when the two Armenian states, Armenia and Artsakh, are already hindering the creation of a united "Turkic world". That is why it is necessary to remember the genocide in Shushi.

Keywords: *Genocide, Shushi, "Unity and Progress", Pan-Turkism, "Great Turan", Taner Akcam, Gulen, Erdoğan, Talaat, "abandoned property".*

ԱՐԱՄ ՀՐԱՉԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Հայագիտական հետազոտությունների
ինստիտուտի տնօրեն
Հոդվածը ներկայացվել է 10.08.2020,
գրախոսվել է 12.08.2020,
ընդունվել է տպագրության 20.04.2021

ՇՈՒՇԻԻ ԱՎԵՐՈՒՄԸ, ՆՐԱ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՋԱՐԴԸ. ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՍԵՐԸ

2020 թ. մարտի վերջին լրացավ հայկական Շուշիի ավերման, նրա հայ ազգաբնակչության ջարդի 100 տարին:

Հայ ժողովրդի համար XX դարի առաջին երկու տասնամյակները հիրավի դարձան աներևակայելի ողբերգության տարիներ, երբ մենք իրապես կանգնեցինք իսպառ ոչնչացման եզրին: Անվերջանալի ու սոսկալի իրադարձությունների շարանի մի օղակ էր «Կովկասի Փարիզ» անվանված, հայոց տնտեսության ու մշակույթի երևելի կենտրոն Շուշի քաղաքի հայաթափումը:

Շուշին բնակատեղի է եղել անհիշելի ժամանակներից, սակայն որպես մշտական և բազմամարդ գյուղաքաղաք հայտնի է 1752 թվականից, իսկ քաղաքի կարգավիճակ ստացել է Ռուսական կայսրության իշխանությունների կողմից՝ 1840 թվականին: Մինչ այդ Շուշին հայտնի էր որպես պաշտպանական հզոր կառույց՝ շնորհիվ իր քարաշեն բերդի, որը հայկական սղնախների հին պատնեշների վրա կառուցել է Ղարաբաղի Փանահ խանը:

XVIII դարի վերջից Շուշին դարձավ մեր ժողովրդի գոյության անքակտելի մասը: Քաղաքի հայ ազգաբնակչությունն էր, որ համառ ու հերոսական դիմադրություն ցույց տվեց պարսից Աղա Մուհամեդ խանի 1795 և 1797 թթ. արշավանքներին: 1804-1813 թթ. ռուս-պարսկական առաջին պատերազմի ժամանակ՝ 1805 թ., Շուշին գրավվեց ռուսական զորքի կողմից: Դրան մեծապես աջակից եղան քաղաքի հայ բնակիչները: 1813 թ. հոկտեմբերի 12-ին կնքված Գյուլիստանի հաշտության պայմանագրով ամբողջ Արցախը Շուշիի հետ միասին անցավ

Ռուսական կայսրության տիրապետությանը: Սկսվեց քաղաքի վերընթաց շրջանը, և այն աստիճանաբար դարձավ Կովկասի արհեստավորաառևտրական և մշակութային երևելի կենտրոն: Շուշին դեպի իրեն ձգեց ոչ միայն Արցախի, Զանգեզուրի, Սևանի ավազանի, Նախիջևանի, այլև նույնիսկ հյուսիսային Իրանի բազմաթիվ հայ բնակիչների: Քաղաքը հիմնականում բաղկացած էր հայկական և թուրք-թաթարական թաղերից: Հայկական թաղամասերը, որոնք ավելի մաքուր ու բարեկարգ էին, սկզբնական շրջանում ձևավորվել էին նաև ըստ բնակիչների գաղթած վայրերի և կոչվում էին դրանց անուններով՝ Ագուլեցոց, Ղազանչեցոց, Մեղրեցոց, Թավրիզեցոց թաղեր և այլն: Հետագայում՝ XX դարասկզբին, դրանք ընդլայնվեցին և ստացան հետևյալ անվանումները՝ Գյավուր-Ղալայի, Կազարմայի, Քամու աղացի, Ղամլուղի, Հին հանգստարանի, Բաղունց ձորերի:

Հայկական և թուրքական թաղերի սահմանում գտնվում էր հայերի շուկան՝ Մեծ մեյդանը կամ Թոփխանան: Այստեղից մինչև Հին հանգստարանի թաղը, Աղաբեկանց ձորը և Ցածի մեյդանը ձգվում էին Թատրոնի, Ագուլեցոց եկեղեցու ու Փոստի փողոցները, որոնք հասնում էին մինչև թուրքական թաղեր: Սրանք Շուշիի ամենագեղեցիկ և ամենահարուստ փողոցներն էին[1]:

1821 թ. տվյալներով Շուշիում 500 տուն հայ բնակիչ էր ապրում[2]: Ստորև ներկայացնում ենք Շուշի քաղաքի բնակչությունն ըստ տարեթվերի:

Աղյուսակ 1

Շուշի քաղաքի բնակչությունը[3]

Տարեթիվ	Բնակչության ընդհանուր թվաքանակ	Հայեր	Թուրք-թաթարներ	Այլազգիներ
1875	19945	-	-	-
1880	19945	-	-	-
1884	24552	-	-	-
1897	25881	14420	10778	683
1904	34847	-	-	-
1906	25656	-	-	-
1910	38879	20664	17617	598
1917	42687	-	-	-

դարավերջին Շուշին բնակչության թվաքանակով Այսրկովկասի չորրորդ քաղաքն էր՝ Բաքվից, Թիֆլիսից և Գանձակից հետո:

Ստորև ներկայացնում ենք այդ քաղաքի տարածքն ու բարեկարգ կարգավիճակը բնորոշող որոշ տվյալներ, որոնք ավելի քան խոսուն են, և ի թիվս Ռուսական կայսրության շատ այլ քաղաքների՝ Շուշին առանձնացնում են որպես ժամանակի ներկայանալի բնակավայրերից մեկը (տես աղյուսակ 2): Քաղաքի ջրամատա-

[1] Տես **Ա-ԴՕ**, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906 թթ.), Երևան, 1907, էջ 149, **Սիմոնյան Հ.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Երևան, 2003, էջ 368-369:

[2] Տես http://hy.wikipedia.org/wiki/ Շուշի, էջ 10:

[3] Русский календарь на 1875 год, Москва, 1875, с. 103; тоже на 1880 год, Москва, 1880, с. 198; тоже на 1884 год, Москва, 1884, с. 153; тоже на 1906 год, Санкт-Петербург, 1906, с. 124; тоже на 1917 год, Петербург, 1916, с. 111; Первая всеобщая перепись Российской империи 1897 года, том Елисаветпольская губерния в 1904 году, Санкт-Петербург, 1906, орд VII, табл. I, с. 220-221; тоже в 1910 году, Санкт-Петербург, 1914, отд. VII, табл. I, с. 891, 914, 915.

կարարումը կատարվում էր և՛ ջրմուղի, և՛ ջրհորների միջոցով, գործում էր կոյուղի, որը քչերից մեկն էր երկրամասում[1]:

Աղյուսակ 2

Շուշի քաղաքը[2]

	1904 թ.	1910 թ.
Բնակելի տարածքը (քառակուսի վերստ) *	3.6	4.0
Բնակելի շինություններ քարից	2742	-
Բնակելի շինություններ այլ նյութերից	241	-
Ընդամենը	2983	4216
Բնակելի տներ թիթեղյա տանիքով**	1191	3406
Բնակելի տներ փայտյա կամ խառը (փայտից և թիթեղից) տանիքով	1289	810
Բնակելի տներ կղմինդրե տանիքով	139	-
Բնակելի տներ հողե տանիքով	364	-
Սալահատակ փողոցներ (վերստ)	100	170
Սալահատակ մայթ (վերստ)	25	-
Հրապարակների թիվը	25	9
Փողոցային կերոսինե լամպերի թիվը	310	-

Ռուսական տիրապետության հաստատումից հետո Շուշին տնտեսական լուրջ վերելք ապրեց: Քաղաքում արագորեն զարգացան արհեստներն ու առևտուրը, հատկապես մետաքսաթելի, գործվածքների, արծաթյա, ոսկյա, փայտե իրերի արտադրությունը, գորգագործությունը և այլն: Երկուստեք առևտրական աշխույժ հարաբերություններ հաստատվեցին Կենտրոնական Ռուսաստանի, Սիբիրի, լեհական նահագների, Միջին Ասիայի, Իրանի, Թուրքիայի, անգամ Չինաստանի և եվրոպական երկրների հետ: Ռուսական և եվրոպական կենցաղն արագորեն մուտք էր գործում Շուշիի հայկական թաղամասեր: Քաղաքի նշանավոր շուկայում կարելի էր գնել այնպիսի ապրանքներ, որոնք գործածվում էին Եվրոպայի և Ռուսաստանի ունևոր մարդկանց տներում:

1904 թ. տվյալներով քաղաքում գործում էին 870 արհեստանոց, 3000 արհեստավոր, 2000 առևտրական: 1910 թ. տվյալներով այստեղ կային նաև երկու արդյունաբերական փոքր ձեռնարկություններ՝ 18 բանվորով: Քաղաքն ուներ կրեդիտային մեկ ընկերություն և մի քանի ապահովագրական ընկերությունների ներկայացուցիչներ[3]: Քաղաքի բյուջեն հիմնականում հավասարակշռված էր և մուտքերի ու ծախսերի մասով կազմում էր 1904 թ. 91.5 հազար ռուբլի, իսկ 1910 թ. թե՛ մեկ և թե՛ մյուս մասով կտրուկ անկում էր ապրել և կազմում էր ընդամենը 49.7 հազար և 48.2 հազար ռուբլի[4]: Բյուջեի անկման պատճառը բացատրվում էր

[1] Տես Города России в 1904 году, Санкт-Петербург, 1906, отд. VII, табл. III, с. 232, 298:
[2] Տես Города России в 1904 году, Санкт-Петербург, 1906, VII отд., табл. II, III, с. 226, 227, 232; Города России в 1910 году, Санкт-Петербург, 1914, VII отд., табл. II, с. 298, 299:
* Աղբյուրում նշված է 396 դեսյատին, որը կազմում է 3,9 քառակուսի վերստ:
** Այս չափանիշով Շուշին Կովկասում երևելի տեղ էր գրավում:
[3] Տես Города России в 1904 году, Санкт-Петербург, 1906, VII отд., табл. XVI, с. 278, таб. XVIII, с. 284; тоже в 1910 году, Санкт-Петербург, 1914, отд. VII, табл. XVII, с. 977, табл. XIX, с. 989:
[4] Տես Города России в 1904 году, отд. VII, табл. XVIII, с. 291; тоже в 1910 году, отд. VII, табл. XIII, с. 1000:

ռուսական առաջին հեղափոխության և հայ-թաթարական ընդհարումների թողած տնտեսական ավերումով, քաղաքի ունևոր-հարկատու հայ բնակչության մի որոշակի մասի՝ Շուշիից հեռանալով կամ սնանկացմամբ: Շուշիի առևտրաարհեստագործական աշխույժ հարաբերությունների արտահայտությունն էին նաև երեք հյուրանոցները, 18 (1910 թ. տվյալներով՝ 34) իջևանատներն ու հասարակական սննդի 94 օբյեկտները[1]:

Քաղաքում գործում էին մեկ ուղղափառ, չորս հայ-լուսավորչական եկեղեցիներ, մեկ հայկական վանք, երկու մզկիթ, մուսուլմանական մի քանի աղոթատներ[2]: Շուշին ուներ մեկ հիվանդանոց, իսկ բնակչության բուժօգնության պատկերը հետևյալն էր.

Աղյուսակ 3[3]

Բուժօգնության կազմակերպման պատկերը

	1904 թ.	1910 թ.
Հիվանդանոցի մահճակալների թիվը	28	34
Բժիշկներ	8	9
Ատամնաբույժներ	0	3
Մանկաբարձուհիներ	4	3
Բուժակներ	0	4
Այլ բուժանձնակազմ	0	3
Դեղատներ	3	4
Դեղատնային խանութներ	3	2
Հիվանդանոցային մեկ մահճակալի հարաբերակցությունը քաղաքի բնակիչների թվին	1245	1144

XIX դարի 20-ական թվականներից Շուշիի կյանքում տեղի ունեցան մշակութային լուրջ տեղաշարժեր: 1825 թ. Բազելի Ավետարանական ընկերության բողոքական քարոզիչների եռանդուն ջանքերով քաղաքում բացվեց առաջին դպրոցը՝ կից տպարանով, որտեղ տպագրվեց հիմնականում կրոնաբարոյական բովանդակությամբ մեծ թվով գրականություն: Ու թեև դպրոցը և տպարանը 1837 թ. փակվեցին, սակայն «առաջին ծիծեռնակն» իր դերը խաղաց՝ զարկ տալով Շուշիի կրթական գործի զարգացմանը: Բողոքական քարոզիչների գործը շարունակեցին 1831 թ. և 1838 թ. հիմնված ռուսական գավառական, ապա հայկական թեմական ուսումնարանները, որոնք մեծ լումա ունեցան երիտասարդ սերնդի կրթության և դաստիարակության գործում: Ռուսական դպրոցը XIX դարի 70-ական թվականներն վերափոխվեց քաղաքային պետական դպրոցի, իսկ հայկական թեմականը դարձավ ապագա հայ առաջադեմ մտավորականության սկզբնական դարբնոց՝ երկամյա դպրոցից վերածվելով քառամյա հաստատության: Նրա սաներից շատերը հետագայում իրենց ուսումը շարունակեցին ռուսական ու եվրոպական առաջավոր քաղաքների ուսումնական հաստատություններում՝ հա-

[1] Տես Города России в 1904 году, отд. VII, табл. VII, с. 248; тоже в 1910 году, отд. VII, табл. VII, с. 931:
[2] Տես Города России в 1904 году, отд. VII, табл. XI, с. 263; тоже в 1910 году, табл. XII, с. 956:
[3] Տես Города России в 1904 году, отд. VII, табл. V, с. 242, 243; тоже в 1910 году, отд. VII, табл. V, с. 922, 923:

մալրելով հայ ժողովրդի սերուցքը հանդիսացող գործիչների շարքերը:

1864 թվականից հիմնվեց Մարիամյան օրիորդաց վարժարանը, որը, ինչպես և թեմականը, գործեց մինչև Շուշի հայկական քաղաքի ավերումը 1920 թվականին: Մարիամյան դպրոցը ծխական էր: Սակայն հետագայում՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, արդեն Շուշիում կային երկու օրիորդաց միջնակարգ դպրոցներ՝ Մարիամ-Ղուկասյան և Հռիփսիմյան հաստատությունները:

Քաղաքի կրթական գործը նոր որակ ստացավ 1881 թ. ռեալական դպրոցի հիմնադրումով: Եթե մինչ այդ Շուշիի պետական դպրոցները կրթություն էին մատուցում նախագիմնազիայի և գիմնազիայի հումանիտար ծրագրերով, ապա ռեալականը բնագիտատեխնիկական յոթամյա կրթություն էր ապահովում: XIX դարի վերջերից Շուշիում նախագիմնազիայի ծրագրով սկսեց գործել ռուսական օրիորդաց Մարինսկու դպրոցը: Տարբեր տարիների Շուշիում գործել են տարրական-ծխական, այդ թվում՝ կարուձևի երկու մասնավոր դպրոցներ: XIX դարի 90-ական թվականների կեսերին կային երկու պետական, երկամյա և ավելի կրթական ծրագրեր ունեցող վեց մասնավոր դպրոցներ՝ 13 ուսուցիչներով և 785 աշակերտներով (487 տղա ու 298 օրիորդ)[1]:

Բացի այդ՝ գոյություն ունեին գրագիտություն սովորեցնող 14 հաստատություններ՝ 524 աշակերտներով, որոնք մեծիմասամբ թուրք-թաթարներ էին[2]:

Հատկանշական է, որ Շուշիի կրթական հաստատություններից միայն մի քանիսը կարողացան ապահովել շարունակական գործունեություն: Մյուսները կարճ կյանք ունեցան և արագ փակվեցին: Այնուամենայնիվ XX դարասկզբին Շուշիում կրթական գործունեություն իրականացնում էին հետևյալ պետական հաստատությունները:

Աղյուսակ 4[3]

Կրթական հաստատություն	թվական 1904				թվական 1910			
	ուսուցիչ	աշակ.	այդ թվում		ուսուցիչ	աշակ.	այդ թվում	
			տղա	աղջիկ			տղա	աղջիկ
Արական միջնակարգ ուսումնարան (I)	19	478	-	-	50	658	407	251
Արական միջնակարգ ուսումնարան (II)	-	-	-	-				
Իգական միջնակարգ ուսումնարան	-	-	-	-				
Տարրական ուսումնարան*	46**	1175**	872**	303**	27	972	699	273

[1] Տես Начальное народное образование в России, т. I, под ред. Г. Фальборка и В. Чарноульского, Санкт-Петербург, 1900, табл. II, с. 29, табл. VIII, с. 74, 252:

[2] Տես նույն տեղում, табл. LVI, с. 372:

[3] Տես Города России в 1904 году, отд. VII, табл. XV, с. 274, 275; тоже в 1910 году, отд. VII, табл. XVI, с. 972, 973:

* 1904 թվականին՝ ինը հաստատություն, 1910 թվականին՝ ութ:

** Ոչ լրիվ տվյալներ են:

Դպրոց-ուսումնարանների մի մասն ուներ գրադարաններ, բացի այդ Շուշիում գործում էին հանրային գրադարան-ընթերցարաններ, որոնք բաց էին բոլոր ցանկացողների համար[1]:

Շուշիում տարբեր ժամանակ գործել են դատարաններ, թատրոն, լույս են տեսել մեկուկես տասնյակ* պարբերականներ՝ «Հայկական աշխարհ» թերթը (1874), «Գործ» ամսագիրը (1882-1884), «Կոկոն» թերթը (1895-1896), «Ազգագրական հանդեսի» Ա գիրքը (1896), «Կռունկ» թերթը (1898-1900), «Ղարաբաղ» եռօրյա թերթը (1911-1912), «Աշակերտ» թերթը (1913), «Պայքար» թերթը (1914-1917), «Փայլակ» շաբաթաթերթը (1915-1917), «Ծիածան» ամսագիրը (1916), «Եռանդ» թերթը (1917), «Նեցուկ» թերթը (1917), «Ապառաժ» երկշաբաթաթերթը (1917-1919), «Աշխատանք» թերթը (1917), «Ասպարեզ» թերթը (1917), «Արցախ» շաբաթաթերթը (1919), «Ղարաբաղի սուրհանդակ» թերթը (1919), «Նոր կյանք» թերթը (1919)[2]: Դրանք մեծ ազդեցություն ունեցան քաղաքի հասարակական կյանքի վրա՝ հայ մտավորականությանը սերմանելով առաջադեմ գաղափարներ, խթանեցին ազգային-ազատագրական շարժման արմատավորումը երիտասարդության շրջանում:

Վերահաս 1905-1907 թթ. ռուսական առաջին հեղափոխությունը, ցարիզմի հայահալած, բիրտ ու նենգ քաղաքականությունը, նրա հրահրած հայ-թաթարական ընդհարումները ծանր հարված հասցրին Շուշի քաղաքի տնտեսական ու մշակութային կյանքին՝ անդառնալի կորուստներ պատճառելով հայ բնակչությանը: Առաջադիմության ուղին կամաց-կամաց բռնած շուշեցի հայը կանգնեց ունեցվածքն ու կյանքը կորցնելուն դեմ հանդիման:

Ցարական ինքնակալությանը ընդհանուր առմամբ հաջողվեց Այսրկովկասի որոշ վայրերում (Բաքվի, Երևանի, Ելիզավետպոլի նահանգներ, Կարսի մարզ) բնակչության լայն զանգվածներին մեկուսացնել ռուսական առաջին հեղափոխության պայքարի հորձանուտից: Դրան էր ուղղված, մասնավորապես, թուրք-հայկական ընդհարումներ կազմակերպելու դիվային ծրագիրը, որ հղացավ և իրականացրեց Ռուսաստանի իշխանական վերնախավը: Այդ ընդհարումների ջատագովը նախևառաջ Կովկասի փոխարքա, հայտնի հայատյաց իշխան Գ. Գոլիցինն էր: Իշխանությունների վերաբերմունքը հայերի նկատմամբ ոգևորիչ եղավ թուրքերի համար: Նրանց մեջ այն կարծիքը ստեղծվեց, թե կարելի է անպատիժ կերպով թալանել հայերին և ենթարկել ջարդերի:

Ցարիզմը Կովկասում ամենահեղափոխական տարր համարում էր հայությանը, իսկ կայունության երաշխիք՝ թուրքերին: Ահա թե ինչու հենց վերջիններիս միջոցով էին ցանկանում երկրամասը զերծ պահել համառուսաստանյան հեղափոխական շարժումներից: Դրա համար, Գոլիցինի կարծիքով, պետք էր զինել թուրքերին ընդդեմ հայերի:

---

[1] Տես Города России в 1904 году, отд. VII, табл. XII, с. 265, тоже в 1910 году, отд. VII, табл. XIII, с. 961:

* Սա վրիպակ պետք է համարել, որովհետև բերված իսկ ցանկում 18 պարբերականի անուն է: Մեր ուսումնասիրությունների արդյունքում երևան ենք հանել շուրջ երեք տասնյակ պարբերականներ, որոնք տարբեր ժամանակամիջոցներում լույս են տեսել Շուշիում (տես **Հարությունյան Մ**., Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874-2009 թթ.), Պատմաքննական ներածությամբ, ծանոթագրություններով, մեկնաբանություններով, Ստ., «Դիզակ պլյուս», 2010, էջ 42-52) (**Խմբ.**):

[2] Տես Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967), Երևան, 1970, էջ 342, Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, Երևան, 1986, էջ 411-449:

Նիկոլայ II-ը և նրա շրջապատը ամբողջությամբ պաշտպանում էին հայակեր կառավարչապետի մտադրությունը: Դիվային ծրագրում ներառվել էին երկրամասի ռուսական իշխանությունները, բանակը, ոստիկանությունն ու ժանդարմերիան, մուսուլման հոգևորականությունը, թուրք խաներն ու բեկերը, թուրք-քրդական խուժանը և, իհարկե, պանիսլամիզմի և թուրքականության ախտով վարակված այսպես կոչված «մտավորականությունը»:

Հայատյաց ու բարբարոս քաղաքականության զսպանակը արագությամբ սկսեց բացվել: Բաքվի 1905 թ. ջարդերին հետևեցին թուրք-հայկական ընդհարումները Բաքվի, Գանձակի, Երևանի նահանգների քաղաքներում և գյուղերում: Բացառություն չէր նաև Շուշին: Քաղաքի ոստիկանապետ Սախարովը ամեն ինչ անում էր թշնամացնելու Շուշիի հայերին և թուրքերին:

Նրա հակահայ գործունեությունը այնքան բացահայտ ու լկտի դարձավ, որ հայտնի հեղափոխական, ազնիվ ու նվիրված հայրենասեր, գորիսեցի Յապոնացի Սաքոն Զանգեզուրից անցավ Շուշի և գնդակահարեց հանցագործ ոստիկանապետին ու նրա պրիստավ Շումակևիչին[1]: 1905 թ. գարնանն ու ամռանը թուրք-հայկական աղետալի ընդհարումներ տեղի ունեցան Զանգեզուրում, որոնց կրակը անցավ Շուշի: Սկզբում ընդհարումները սահմանափակ էին և երկուստեք ջանքերով արագորեն մարվում էին: Բայց քաղաքի ռուսական իշխանությունները, զինելով թուրք բնակիչներին, դրդեցին նրանց սադրիչ գործողությունների: Շուշիում ու նրա շրջապատի թուրքական գյուղերում թուրք և քուրդ բեկերի ու ավազակապետների ղեկավարությամբ կազմավորվեցին զինված ջոկատներ, որոնք խնդիր ունեին Գանձակի ու Շուշիի գավառներում հայ բնակչության ջարդ իրականացնել:

Կատաղի մարտեր ընթացան Խաչենում, Առաջաձոր գյուղի մատույցներում, Շուշի-Եվլախ ճանապարհին թալանվեցին ու հոշոտվեցին բազմաթիվ հայեր, և այդ բոլորը՝ իշխանությունների աչքի, առջև հաճախ նրանց թելադրանքով:

Իհարկե, արցախահայությունը հանգիստ նստած չէր սպասում, այլ ՀՅԴ տեղական կոմիտեի և Գանձակի նահանգում հայկական ուժերի ընդհանուր հրամանատար Խանասորի Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) գլխավորությամբ ակտիվորեն զինվում էր՝ պատրաստվելով օրհասական կռվի:

Սակայն ցավով պետք է նշել, որ, ի տարբերություն թուրքերի, հայ մեծահարուստները, նամանավանդ Բաքվում և այլ քաղաքներում ապրող ունևոր շուշեցիները զարմանալի անտարբերություն ցուցաբերեցին հայրենի եզերքի ճակատագրի նկատմամբ՝ դժկամությամբ և ոչ բավարար նյութական օգնություն հատկացնելով զենք-զինամթերք հայթայթելու կարևորագույն գործին:

Ինքնապաշտպանության հրամանատարությունը Շուշիի հայկական թաղամասերում ստեղծեց մարտական գործողությունները ղեկավարող օղակներ՝ բանիմաց և զինվորական գործին գիտակ անդամներով: Մի շարք վայրերում կազմակերպվեցին ամրացված պաշտպանական դիրքեր:

Օգոստոսի 7-ի, լույս 8-ի գիշերը անհայտ անձանց կողմից սպանվեց մի թուրք լապտերավաճառ: Դա թուրքերի շրջանում հակահայ հիստերիա առաջացրեց:

---

[1] Տես «Դրոշակ», 1927, թիվ 10 (163), հոկտեմբեր, էջ 319, «Հայրենիք», 1925, թիվ 1 (37), նոյեմբեր, էջ 34, **Սիմոնյան Հ.**, նշվ. աշխ., էջ 253:

Սկսվեց երկուստեք մեղադրանքների, ալան-թալանի ու բռնությունների շարան, որը օգոստոսի 16-ին հեշտությամբ վերածվեց կատաղի զինված բախման: Իշխանությունները, այդ թվում՝ զորքը, դիտորդի դերում էին, մինչդեռ աստիճանաբար ավելանում էր երկուստեք զոհերի թիվը: Օգոստոսի 17-ին նոր թափով վերսկսվեց երկուստեք հրաձգությունը: Թուրքերը մեծ թվով կորուստներ ունեցան, մահով ընկան նաև մի շարք անվեհեր հայ մարտիկներ, այդ թվում՝ հայտնի հեղափոխական, շուշեցի Մարգար Ժամհարյանը (Մռավ)[1]:

Օգոստոսի 18-ի վաղ առավոտյան կռիվը նորից թեժացավ: Թուրքերին Աղդամից օգնության էին եկել նոր ուժեր, որոնց հաջողվեց նեղել հայ պաշտպաններին: Սակայն դա երկար չտևեց: Մեր մարտիկները հակագրոհով խուճապի մատնեցին խուժանին: Թուրքերը, տալով բազմաթիվ զոհեր, աճապարանքով նահանջեցին, սակայն հասցրին հրո ճարակ դարձնել հայկական թաղամասերը: Մոխրի վերածվեցին 400-ից ավելի տուն, խանութներ, արհեստանոցներ, պահեստներ, հայկական թատրոնի շենքը, հիվանդանոցը, Մարիամյան դպրոցը և այլն[2]:

Օգոստոսի 20-ի կեսօրին կռիվը դադարեց: Հայերից սպանվել էր 40, վիրավորվել 68 մարդ, թուրքերի կորուստները շատ ավելին էին: Միայն սպանվածները շուրջ 500-ն էին, իսկ վիրավորները շատ մեծաթիվ էին[3]: Հայ մարտիկները զենքի ուժով և նախահարձակ գործողություններով կարողացան զսպել նաև Աղդամի շրջանի թուրք հրոսակներին[4]:

Հաղթանակը շոշափելի էր, սակայն Շուշին ավերվել էր, տնտեսապես քայքայվել, ողջ մնացած հայերից շատերը լքել էին քաղաքը, խորացել էին հայերի և թուրքերի միջև թշնամանքն ու անվստահությունը: Շուտով թե՛ քաղաքում և թե՛ գավառի հայկական գյուղերում վրա հասավ սովը: Հայ բնակչության համար ողբերգություն դարձավ նաև այն, որ ռուսական պատժիչ զորքը իր ամբողջ ատելությունը թափեց անմեղ հայ գյուղացու գլխին՝ նրան ենթարկելով ավերի ու կողոպուտի, շատերին ձերբակալելով ու տեղահանելով հայրենի օջախներից: Եղան բազմաթիվ զոհեր:

Օգտվելով ռուսական կազակական և ոստիկանական ջոկատների անթաքույց աջակցությունից՝ թուրքական խուժանը փակեց Շուշի տանող ճանապարհները, գերեվարեց և սպանեց բազմաթիվ հայերի: Հայատյաց լկտի քաղաքականությամբ հատկապես աչքի ընկավ Գանձակի նահանգի պատժիչ ջոկատների ընդհանուր հրամանատար, երդվյալ հայակեր, գեներալ Գոլոշչապովը:

Սակայն արցախահայությունը չընկրկեց. «…նոր աղետները, տմարդի հարևանի հարձակումները,– հայ ժողովրդի սոցիալական տարբեր խավերին, նրա տարբեր հատվածներին մղեցին համերաշխ գործակցության, ամրապնդվեց ազգային գիտակցությունը, ուժեղացավ միմյանց սատար կանգնելու ձգտումը»[5]:

Թուրք-հայկական ընդհարումների վերջին փուլը սկսվեց 1905 թ. կեսերից և

---

[1] Այս մասին տես **Սիմոնյան Հ.**, նշվ. աշխ., էջ 367-371:
[2] Տես **Լեո**, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 159, **Սիմոնյան Հ.**, նշվ. աշխ., էջ 372-373:
[3] Տես **Սիմոնյան Հ.**, նշվ. աշխ., էջ 373:
[4] Տես նույն տեղում, ինչպես նաև «Դրոշակ», 1905, թիվ 13 (166), դեկտեմբեր, էջ 203-204:
[5] **Սիմոնյան Հ.**, նշվ. աշխ., էջ 713:

դարձյալ ընդգրկեց նաև Շուշին: Շուշեցիները, սակայն, այս անգամ ևս հանկարծակիի չեկան: Թուրքերը, որ 1905 թ. օգոստոսին շոշափելի կորուստներ էին կրել, ամենևին խելքի չեկան և նորից նպատակադրվեցին հայաթափ անել քաղաքը: Զինվելու հետ մեկտեղ՝ նրանք դարձյալ դիմեցին քանիցս փորձված մեթոդի՝ ամենուր աղաղակելով, թե հայերը պատրաստվում են իրենցից մաքրել Շուշին: Միաժամանակ նրանք օգտագործեցին հայ ազգաբնակչության համար մշտական պատուհաս դարձած թուրք և քուրդ անասնապահ խուժանի քոչը, որի ուղիներից մեկն անցնում էր Շուշիի մատույցներով: Օգտվելով քոչի ընձեռած հնարավորությունից՝ թուրք զինված բաշիբոզուկները Շուշին մեկուսացրին շրջակա հայկական գյուղերից և պատրաստվեցին ոչնչացնել նրա հայ բնակչությանը[1]: Թուրքերին ոգևորում էր նաև այն հանգամանքը, որ ռուսական իշխանությունները, ինչպես միշտ, դարձյալ նրանց թիկունքում էին և ակտիվ պատժիչ գործողություններ կիրառելով՝ փորձում էին հայտնաբերել ու ձերբակալել ընդհատակում գործող դիմադրական շարժման հայ կազմակերպիչներին, առաջին հերթին ՀՅԴ ներկայացուցիչներին, որոնք ղեկավարում էին Շուշիի հայ բնակչության ինքնապաշտպանության գործը:

Նախքան Շուշիի վրա գրոհելը թուրքերը հարձակումներ գործեցին քաղաքից կտրված հայկական բնակավայրերի վրա՝ ալան-թալանի ենթարկելով դրանք: Մազապուրծ բնակչությունը լցվեց Շուշի՝ ավելի տագնապալի դարձնելով վիճակը[2]: Կարծելով, թե հայ բնակչությունը անզեն ու վեհերոտ է և խուսափում է պաշտպանական միջոցառումներ ձեռնարկելուց, 1906 թ. հուլիսի 12-ին Շուշին շրջապատող խուժանը ներսում գտնվող ցեղակիցների հետ միասին (1000-ից ավելի զինված բարբարոս ղոչիներ) դիմեց հարձակման: Սկզբում քաղաքի ռուս զինվորականությունը պաշտպան կանգնեց հայ բնակչությանը, սակայն մեր ռազմիկների կազմակերպած հակահարվածի հաջողությունը տեսնելով՝ փոխեց մտադրությունը և անցավ թուրքերի կողմը: Բայց արդեն ուշ էր: Վերջիվերջո հայ քաջամարտիկները մտան թուրքական թաղամասերը և կրակի մատնեցին դրանք՝ կիրառելով թշնամու որդեգրած միևնույն մարտավարությունը: Ի վերջո հուլիսի 22-ին հրաձգությունը դադարեց, հայերի հաղթանակը կատարյալ էր: Միայն սպանված թուրքերի թիվը 190-ից ավելի էր: Հաղթանակը կոփվեց հայ մարտիկների անձնազոհության, հմտության և կազմակերպվածության շնորհիվ: Շուշին հերոսաբար դիմադրեց և կարողացավ փրկել հայ բնակչությանը զանգվածային թալանից ու կոտորածից[3]:

Սակայն ավերն ու զոհերը ծանր նստեցին հայության վրա: Շուշիի, Արցախի և ամբողջ հայության համար այս ընդհարումները քաղաքական և սոցիալ-տնտեսական լուրջ հետևանքներ ունեցան: Հայաթափ եղան բազմաթիվ բնակավայրեր, զոհվեցին բազմաթիվ անմեղ մարդիկ: Անկում ապրեց տնտեսությունը, սաստկացավ սովը հատկապես գյուղական շրջաններում: Առավել ողբերգական դարձավ լեռնային շրջանների հայ բնակչության դրությունը: Ընդհարումները հնարավորություն չտվեցին գյուղական ցանքս կատարելու, չկային սերմնացու, նյութական

---

[1] Տես **Սիմոնյան Հ.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք II, Երևան, 2003, էջ 16:
[2] Տես նույն տեղում, էջ 19:
[3] Տես **Սիմոնյան Հ.**, նշվ. աշխ., գիրք II, էջ 20-25, «Դրոշակ», 1906, թիվ 81 (174), օգոստոս, էջ 115:

այլ միջոցներ: Տեղի ունեցավ անասունների զանգվածային անկում: Քաղաքներում մեծ չափերի հասավ գործազրկությունը, ետընթաց ապրեցին առևտուրն ու արհեստները: Դա հատկապես նկատելի դարձավ հայաշատ քաղաքներում՝ Բաքվում, Գանձակում և իհարկե, Շուշիում: Շատ հայ արհեստավորներ և առևտրականներ թողեցին քաղաքը և գաղթեցին Կովկասի ու Կենտրոնական Ռուսաստանի տարբեր վայրեր, ապա՝ Թավրիզ և Իրանի այլ քաղաքներ: Դադարեց մշակութային ու կրթական օջախների գործունեությունը, դանդաղեց երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության գործը: Ռուս հասարակական-քաղաքական շրջանակներում հայությունը սկսեց դիտվել որպես ռուսական միջավայրին խորթ, անհանգիստ ու վտանգավոր տարր, գնալով խորացավ անարդար ու անհիմն կասկածանքը հայ ժողովրդի նկատմամբ: Ուժեղացավ բռնությունների և հալածանքի ալիքը հայ մտավորականության նկատմամբ: Գործին քիչ օգնեց նաև Կովկասի նոր կառավարչապետ կոմս Վորոնցով-Դաշկովի վարած ավելի մեղմ ու չափավոր քաղաքականությունը: Սակայն ընդհարումների շնորհիվ արթնացավ հայի ազգային գիտակցությունը: Նա սկսեց հասկանալ իր ազգային արժանապատվությունը զենքով պահպանելու արժեքը: Համերաշխության, միասնության գաղափարը սկսեց դիտվել որպես անհրաժեշտություն: Եկեղեցական գույքի բռնագրավումը և այնուհետև թուրք-հայկական ընդհարումները ուժեղացրին ազգային գիտակցությունը: Ամրապնդվեց արևմտահայ-արևելահայ համագործակցությունը[1]:

Մի փոքր անդրադառնանք թուրք-հայկական ընդհարումների պատճառներին: Դրանց սկզբից ռուսական և եվրոպական մամուլն ու հասարակական քաղաքական գործիչները նշում էին հայերի և թուրքերի սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները, հանիրավի շեշտում, որ ընդհարումների բուն պատճառը մի կողմից երկրամասի հայ տարրի բարեկեցիկ կյանքով ապրելն ու ունևոր լինելն էր, մյուս կողմից՝ թուրքի աղքատ, հարստահարված լինելը: Այս տեսակետը այնքան էր արմատացել, որ դրան տուրք էին տալիս նաև շատ առաջադեմ գործիչներ և մամուլի օրգաններ, որոնց մեջ քիչ չէին սոցիալ-դեմոկրատական աշխարհայացք ունեցողները:

Սա միանգամայն անարդար մոտեցում էր հետևյալ պատճառով: Նախ Կովկասի ամենահարուստ տարրը հենց թուրք խաները, բեկերն ու աղալարներն էին, որոնք իրենց ձեռքում կենտրոնացրել էին հողային հսկայական տարածքներ, տասնամյակներով ավազակությամբ ու ավարչությամբ զբաղվելով, հատկապես հայ բնակչությանը ալան-թալանի ենթարկելով՝ կուտակել էին հսկայական հարստություն: Այլ բան է, որ այդ անլուր միջոցները «մեռած» էին, վերածված գանձի և տնտեսական հարաբերությունների մեջ դեր չէին խաղում: Նրանցից բացի՝ և՛ Շուշիում, և՛ այլ քաղաքներում ու հատկապես Բաքվում կապիտալիստական տնտեսահարաբերություններում ներգրավված էին ոչ քիչ թվով թուրք գործարարներ, որոնք հաջողությամբ ներդրումներ էին անում, այսպես ասած «պտտեցնում» իրենց գումարները: Ոչ քիչ հարստություն էին կուտակել շատ թուրք քոչվոր անասնապահներ:

---

[1] Տես **Սիմոնյան Հ.**, նշվ. աշխ., գիրք II, էջ 63-65:

Հայերի ունևոր և մրցակցության մեջ ավելի հաջողակ լինելը չէր բուն պատճառը, այլ դրա հետևանքով առաջացած թունոտ այն նախանձը որ պատել էր թուրքին, ներսից կերել նրան և նախաձեռնող, աշխատող ու ստեղծագործ, դատող հային դարձրել աչքի փուշ: Նույն ատելությունը հաճախ համակել էր նաև թուրք բանվորությանը, որի գերակշռող մասը սևագործ էր՝ ի տարբերություն որակյալ հայ բանվորության: Կույր, գազանային ատելության օբյեկտ էր դարձել հայ մտավորականությունը՝ ուսուցիչը, ինժեները, բժիշկը, փաստաբանը, գյուղատնտեսը:

Սրան պետք է ավելացնել նաև թուրքի բարբարոս, ոճրագործ ցեղային հոգեբանությունը, քոչվորի հանցավոր բնազդը, որոնք նրա պատմական զարգացման առանձնահատկությունն էին: Թալանն ու ավազակությունը, «գյավուրին» խոշտանգելն ու սպանելը տգետ և խավարամտության մեջ խարխափող թուրքի համար տղամարդկության յուրատեսակ նշան էին, հպարտության առարկա: Թուրքական այսպես կոչված «պոետիկ պատումները» լի էին նմանօրինակ «հերոսությունների» նկարագրություններով: Թուրք-հայկական ընդհարումների պատճառներից են երկու ժողովուրդների քաղաքակրթական հայացքների (քաղաքական, գաղափարական, մշակութային ու կրոնական) առանձնահատկություններն ու տարբերությունները: Թուրքական վերնախավը ձգտում էր գերիշխանության Կովկասում: Այդ նկրտումները աջակցություն էին ստանում Թուրքիայից, ինչ-որ չափով նաև Իրանից ու ռուսական ինքնակալությունից: Առաջին երկու երկրների ցանկություններն ավելի հեռուն էին տարածվում: Նրանք չէին կորցնում կովկասյան թուրքերի միջոցով երկրամասը նորից ձեռք գցելու հույսը: Գործի էր դրվել դրա իրագործման զենքը՝ կրոնական անհադուրժողականությունը և այդ հիմքի վրա տարածված պանիսլամիզմի գաղափարախոսությունը, որը լայն արձագանք էր գտել թուրք մոլլաների, հողատերերի, նավթարդյունաբերողների և այսպես կոչված «թուրք մտավորականության» շրջանում: Թուրք-հայկական ընդհարումների գլխավոր պատճառներից էր ցարական ինքնակալության քաղաքականությունը: Կովկասը հնազանդ պահելու, ռուսական առաջին հեղափոխության ազդեցությունը երկրամասում չեզոքացնելու, ազատատենչ հայի երազանքը սպանելու նպատակով ցարիզմը կանգնեց թուրք հետադիմական ու խավարամիտ էթնոսի կողքին՝ կազմակերպելով և ուղղորդելով նրան դեպի հայերի սպանդի իրականացումը: Ինքնակալությունը այդ քայլով փորձեց հայ ազգային-ազատագրական շարժումը արմատից ոչնչացնել, սրել միջհամախմբային հակասությունները: Գործի դնելով ռուս ազգայնական մտավորականության՝ Սուվորինի, Վիտտեի, հետագայում Ստոլիպինի և նրանց գաղափարական զինակիցների ներուժը՝ ցարական իշխանությունները հայ ազգային կուսակցությունները հորջորջեցին ազգայնամոլ ու անջատողական, իսկ հայ ժողովրդին՝ անվստահելի էթնիկ տարր: Բարեբախտաբար ռուս մտավորականության շրջանում գտնվեցին շատերը (Ալ. Ամֆիտեատրով, Յու. Վեսելովսկի, Մ. Կովալևսկի և ուրիշներ), որոնք եվրոպացի առաջադեմ բազմաթիվ գործիչների հետ իրենց ձայնը բարձրացրին՝ ի պաշտպանություն հայ ժողովրդի և նրա ոտնահարված իրավունքների:

Առաջին համաշխարհային պատերազմը նոր, մինչ այդ չտեսնված ողբերգություն բերեց հայ ժողովրդին: Հայոց պատմության ամենասև էջին՝ Մեծ եղեռնին

հետևեց տագնապներով ու օրհասական կռիվներով լեցուն մի ժամանակաշրջան: Ռուսական ինքնակալության տապալումը նրա լծի տակ գտնվող ժողովուրդների մեջ ազատության ու դեմոկրատական զարգացման հույսեր ներշնչեց: Սակայն, ավա՜ղ, հայ ժողովուրդը նորից կանգնեց ֆիզիկական ոչնչացման եզրին: Ցարիզմի վերացումից հետո Կովկասը շատ շուտով կրկին վերածվեց ազգամիջյան կռիվների թատերաբեմի: Նորաստեղծ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների միջև ծագեցին տարածքային վեճեր, որոնք մեծապես թուլացրին այդ երկրները, հող նախապատրաստեցին նրանց անկախության վերացման և խորհրդայնացման համար:

Իր կազմավորման հենց առաջին օրվանից Ադրբեջանի հանրապետությունը հայկական անկախ պետության նկատմամբ սկսեց վարել ագրեսիվ, նվաճողական քաղաքականություն: Մշտապես ունենալով Թուրքիայի աջակցությունը, անթաքույց հովանավորվելով Այսրկովկասի անգլիական կառավարչության և բրիտանական զորքերի կողմից՝ Ադրբեջանը պահանջեց իր տարածքներ ճանաչել Նախիջևանը, Արցախն ու Զանգեզուրը: Սկսվեց հիշյալ հայկական այդ հողերի հայ բնակիչների ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը ադրբեջանական զավթիչների նկրտումների դեմ:

Նորաստեղծ Հայաստանի հանրապետությունը, շրջապատված լինելով թշնամիներով, ըստ էության անկարող էր իրական և արդյունավետ օգնություն ցույց տալ վտանգված երկրամասներին: 1918 և 1919 թվականներին հայերը պաշտպանական հերոսամարտեր մղեցին մասնավորապես Զանգեզուրում և Արցախում՝ դիմակայելով ադրբեջանական ահագնացող վտանգին: Զորավար Անդրանիկի՝ Զանգեզուրից հեռանալն ավելի ծանրացրեց հայկական զույգ երկրամասերի դրությունը: 1919 թ. օգոստոսի 12-ին Շոշ գյուղում գումարվեց արցախահայերի 7-րդ համագումարը, որը հենց սկզբից մերժեց Ադրբեջանի կառավարության և անգլիացիների կողմից Արցախի ու Զանգեզուրի գեներալ-նահանգապետ նշանակված, հայ ժողովրդի ոխերիմ թշնամի Խոսրով-բեկ Սուլթանովի վերջնագիրը, որով պահանջվում էր 48 ժամվա ընթացքում ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը, հակառակ դեպքում երկրամասը կհպատակեցվի զենքի ուժով: Խուսափելով ազգամիջյան ընդհարումներից, հաշվի առնելով Նախիջևանի կորուստը և ծայրահեղ ծանր վիճակը՝ համագումարը վերջիվերջո օգոստոսի 22-ին որոշեց ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը: Համաձայնագիրը հայերն ընդունեցին մի պայմանով, որ Ադրբեջանն այդուհետ չէր միջամտելու Լեռնային Ղարաբաղի ներքին գործերին[1]: Ատելի Սուլթանովը տոնում էր իր հաղթանակը, սակայն բոլորովին ձեռք չէր քաշել Արցախն ու Զանգեզուրը հայաթափ անելու մտադրությունից: Ավելին, իր նպատակը իրագործելու համար նա ի սպաս դրեց իր տրամադրության տակ եղած բոլոր ուժերն ու հնարավորությունները:

Ճիշտ է, 1919 թ. նոյեմբերին Գորիսի մատույցներում թուրքական բանակն ու զինված խուժանը խայտառակ պարտություն կրեցին, սակայն Սուլթանովը մնաց անդրդվելի և ետ չկանգնեց Արցախն ու Զանգեզուրը զենքի ուժով հնազանդեցնելու իր ծրագրերից: Օգոստոսի 22-ի համաձայնագիրը դիտելով լոկ ժամանակ

[1] Տես «Слово», 28 августа 1919, **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 322-323:

շահելու միջոց՝ նշանավոր հայակերը փորձում էր մի կողմից ջլատել հայկական ուժերը, տնտեսական շրջափակման ենթարկել Արցախի բնակավայրերը՝ սովի ու թշվառության մատնելով դրանց բնակիչներին, մյուս կողմից զինում ու վարժեցնում էր իր ձեռքի տակ եղած թուրք և քուրդ բաշիբոզուկներին՝ պատրաստվելով վճռական գոտեմարտի:

1919 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, այնուհետև 1920 թ. սկզբին Ադրբեջանի զինված ուժերն ու թուրքական խուժանը լուրջ պարտություն կրեցին Զանգեզուրում՝ Գարեգին Նժդեհի ղեկավարած ուժերի կողմից: Այս հանգամանքը ոգևորիչ եղավ արցախահայության համար: Սակայն ջախջախիչ պարտությունից գազազած թուրքերը տենդագին պատրաստվեցին զենքով վերջնականապես լուծում տալու խնդրին: Գարնան սկզբին թշնամին Ղարաբաղում և նրա շուրջ կուտակեց 10 հազարից ավելի կանոնավոր զորք, ինչպես նաև քրդական ղոչիներից կազմված հեծելազոր: Այդ զորամասերի ընդհանուր հրամանատար էր նշանակվել օսման թուրք Նուրի փաշան, օգնական՝ զորավար Նևրուզովը: Նրանց տրամադրության տակ էին բազմաթիվ թուրք սպաներ[1]: Պետք է հատուկ նշել, որ Ադրբեջանը, շնորհիվ զինվորական նախարար Սամեդբեկ Մեհմանդարովի եռանդուն և բանիմաց ջանքերի, կարողացել էր կարճ ժամանակամիջոցում ստեղծել լավ զինված ու մարտունակ բանակ, որը պատրաստվում էր իրականացնելու Արցախի վերջնական հպատակեցումը: Արցախահայությունը ելավ օրհասական պայքարի: Հայկական փոքրաթիվ ուժերը պատրաստվեցին նախահարձակ ապստամբության: Սարուշեն գյուղում կենտրոնացավ ինքնապաշտպանական ջոկատների շտաբը: Նախապատրաստական աշխատանքները ղեկավարում էին Արսեն Միքայելյանը, գնդապետ Զախար Մեսյանը, Դալի Ղազարը (Միքայել Բադալքյոխյան), Արսեն Հովհաննիսյանը, Ասատուր Ավետիսյանը, Հովակ Ստեփանյանը, կապիտան Մարտիրոսյանցը[2]:

Նշված ղեկավար գործիչները Երևանի կառավարությունից ու հատկապես Դրոյից ստացել էին խիստ հրահանգ՝ գործել զգույշ և ծածուկ, գաղտնի պահել ապստամբելու իրենց մտադրությունը թուրքերից: Սակայն հայ զինվորական ղեկավարությունը տեղերում սկսեց գործել բացեիբաց, միանգամայն լեգալ և ցուցադրական: Ադրբեջանական կողմին իսկույն պարզ դարձավ, որ հայերը պատրաստվում են զինված ելույթների:

1920 թ. փետրվարի 19-ին Սուլթանովը վերջնագրով դիմեց արցախահայությանը: Այն քննարկելու համար փետրվարի 22-ին Շոշ գյուղում գումարվեց Ղարաբաղի 8-րդ համագումարը, որը կտրուկ մերժեց Սուլթանովի վերջնագիրը և քվեարկեց Հայաստանի Հանրապետությանը միանալու օգտին: Դրան հակառակ՝ Շոշում հավաքվեց 45-50 պատգամավորներից կազմված մեկ այլ «համագումար», որն ընդունեց վերջնագիրը՝ ճանաչելով Ղարաբաղն իբրև Ադրբեջանի մաս[3]: Այնուամենայնիվ Սուլթանովը խիստ դժգոհ մնաց արցախցիների որոշումներից՝ կրկնապատկելով իր եռանդը:

[1] Տես «Ժողովուրդ», 26 մարտի 1920:
[2] Տես Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 114, ց. 2, գ. 3, թթ. 21-24, **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1917-1921 թթ., Երևան, 2017, էջ 429:
[3] Տես **Վրացեան Ս.**, նշվ. աշխ., էջ 372, **Գևորգյան Հ.**, Դրո, Երևան, 2014, էջ 562-563:

Թուրքերը նախ ամրացրին Շուշին և Խանքենդ ավանը, ապա գրավեցին Ասկերանի անցուղին և դրանով իսկ ապահովեցին Ադրբեջանի կապը Շուշիի հետ: Ադրբեջանական նախահարձակների հաջորդ քայլը եղավ այն, որ զորքերը կենտրոնացրին ոչ միայն Ջևանշիրի սահմաններում, Ասկերանում, Խանքենդում, Շուշիում, այլև Կարյագինոյում, Ջաբրայիլում, Աղդամում և այլ վայրերում[1]:

1920 թ. մարտի 20-ին Սուլթանովը նոր վերջնագիր ներկայացրեց արցախահայությանը՝ ընդունել Ադրբեջանի վերջնական և համընդհանուր գերիշխանությունը, բայց դարձյալ մերժում ստացավ: Մարտի 21-ին դրությունը կտրուկ լարվեց. Թարթառ ավանում կողոպտվեցին հայերի խանութները, իսկ Մարաղա, Չայլու և Թալիշ գյուղերի սահմաններում թուրքերը սկսեցին քշել ու տանել հայերի նախիրը, ոտնատակ տալ արտերը: Ասկերանի շուրջը և Խանքենդում ադրբեջանական զորքերը նոր բախումների առիթ տվեցին, իսկ Շուշիում Սուլթանովը պահանջեց հայերի զինաթափում: Քաղաքի հայկական մասի սահմաններում թուրքական նորանոր զորքերը դիրքեր գրավեցին, չնայած հայկական մասում վաղուց առկա էին թուրք զորամասեր: Բոլոր քայլերը վկայում էին, որ Ղարաբաղի հարաբերական խաղաղությունն ապրում է իր վերջին ժամերը:

Մարտի 22-ին մուսուլմանների կրոնական տոնն էր՝ բայրամը, որն արագացրեց դեպքերը: Մարտի 22-ի լույս 23-ի գիշերը հայերը՝ Դալի Ղազարի (Միքայել Բադալքյոխյան) գլխավորությամբ, հարձակվեցին Ասկերանի վրա, ջարդեցին թուրքերից և դաղստանցիներից բաղկացած ստորաբաժանումը: 50 ասկյարներից փախուստի դիմելով ազատվեցին 15-ը[2]: Գրավելով Արցախի գլխավոր միջանցքը՝ հայ մարտիկները Շուշին այդպես կտրեցին Ադրբեջանից: Դա սպասվող դեպքերի կանխման փորձ էր: Հայկական ուժերը հարձակվեցին նաև Խանքենդի վրա, որտեղ ևս գտնվում էին թուրքական զորքերը, պաշարեցին այն և կտրեցին Շուշիի հետ նրա կապը ևս: Հարձակում եղավ նաև Թարթառ ավանի վրա[3]:

Նշված դեպքերն իրենց արձագանքն ունեցան Շուշիում, որտեղ միամիտ հայերը հույսը դրել էին Սուլթանովի՝ քաղաքի հայերին պաշտպանելու ազնիվ խոսքի վրա:

Մարտի 23-ի լուսաբացին քաղաք մտան 35 զինված հայ մարտիկներ և հանդուգն հարձակում գործեցին 600-ից ավելի զինվոր ունեցող թուրքական զորանոցի վրա: Հարձակումը հանդիպեց ուժգին դիմադրության, և դա ազդանշան եղավ, որ թուրքական զորքերը տարբեր ծայրերից միահամուռ հարձակվեն քաղաքի հայկական մասի վրա: Սկսվեց իրարանցում: Հայկական մասում հրդեհ ծագեց, որը շուտով տարածվեց ամենուր: Հայությունը խուճապի մատնվեց, թուլացավ նրա առանց այն էլ անբավարար ինքնապաշտպանությունը, ժողովուրդը ահաբեկված բռնեց փախուստի ճանապարհը:

Շատերը մնացին բոցերի մեջ, իսկ մուսավաթական զինվորները և մուսուլմանական մոլեռանդ ամբոխը անցան ծրագրված ջարդարար գործողությունների ու թալանի: Այդ օրը սպանվեց մի քանի հազար մարդ՝ կանայք, ծերեր և երեխաներ: Բարբարոս զորքի ու խուժանի ձեռքով սրախողխող ընկան հասարակական, քա-

[1] Տես «Слово», 27 марта 1920, **Վրացեան Ս.**, նշվ. աշխ., էջ 372, **Սիմոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 429:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 606, թ. 27, ֆ. 206, g. 1, գ. 84, թ. 34, **Սիմոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 430:
[3] Տես ՀԱԱ, ֆ. 206, g. 1, գ. 84, թ. 34, «Յառաջ», 7 ապրիլի 1920, թիվ 73, Հայաստանի պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 480, **Սիմոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 430:

ղաքական, կրոնական, մշակութային բազմաթիվ գործիչներ:

Երկու օրվա ընթացքում Շուշիի հայկական մասը՝ շուրջ 2000 տուն, բազմաթիվ խանութներ և արհեստանոցներ, հրդեհի ճարակ դարձան: Քաղաքում կանգուն մնացին միայն 25 շինություն, այդ թվում՝ թեմական դպրոցը, Բեգլարյանի շքեղ տունը և մի քանի այլ արժեքավոր շենքեր:

Հետագա մի քանի օրերին մուսավաթականներն ու խուժանը շարունակեցին անսանձ կամայականությունները, բռնություններն ու անպատիժ սպանությունները, Արցախի ազգային խորհուրդը դադարեց գործել: Շուշիում Բեգլարյանի և մյուս չայրված տներում ապաստանած ավելի քան 5000 հոգի՝ կին ու երեխա, գերվեցին և նետվեցին բանտերը: Այս վիճակում Շուշին մնաց երկու շաբաթ: Ոճրագործ Սուլթանովը, գտնվելով մեկուսացած ու պաշարված դրության մեջ, զգուշանում էր կոտորել հայ գերիներին:

Պաշարված, բայց կանգուն էր մնացել նաև Խանքենդը՝ այդտեղ գտնվող թուրք զորքերով, որոնք հրետանու շնորհիվ կարողացան պահել իրենց դիրքը: Հայերը վաղուց քաշվել էին այդտեղից[1]:

Զանգեզուրից մեծ դժվարությամբ զինյալներ և ռազմամթերք հասցվեց հայկական ուժերին: Բայց հրամանատարությունը և նամանավանդ զանգեզուրյան մարտիկների ղեկավար, գնդապետ Ա. Թարվերդյանը անվճռական ու ապաշնորհ գտնվեցին, որի հետևանքով ավերներն ու կոտորածը շարունակվեցին: Ճիշտ է, Դիզակում հայ ինքնապաշտպանական ուժերը հաջողության հասան, բայց թուրքերը կարողացան մեծ թափով առաջ շարժվել:

Ամենուրեք շարունակվում էին համառ կռիվները, դրանք մեծ թափ էին ստացել հատկապես Ջևանշիրում և Գանձակի գավառում: Մարտի 24-ին ադրբեջանական զորքերը թուրք խուժանի աջակցությամբ Ջևանշիրի շրջանում (Ինջա գետից սկսած) դիմեցին հարձակման: Հայերը, որ առաջացել էին մինչև Թարթառ ավանը, քաշվեցին Մարաղա, Չայլու և Թալիշ գյուղերը, որոնց շուրջ տեղի ունեցավ համառ կռիվ: Հայերը, խնայելով փամփուշտները, հետզհետե թողեցին Մարաղան, երկու Չայլուները, Մարգուշավանն ու կենտրոնացան Թալիշում:

Ադրբեջանական մեկ այլ զորամաս՝ թնդանոթներով զինված, խուժանի ուղեկցությամբ մարտի 25-ին հարձակվեց Գանձակի գավառի Կարաչինար և Էրքեջ գյուղերի վրա: Այս շրջանի զինված հայերը՝ Տեր-Անանյանի ղեկավարությամբ, դուրս եկան թշնամուն դիմադրելու: Երկու օրվա համառ կռվից հետո զինամթերքի բացակայության պատճառով հայկական զինված ուժերը ստիպված թողեցին Կարաչինարը, Խարխափուտը, Պարիսը, Էրքեջը, Մանաշիդը և Ներքին Շենը: Մտնելով այդ գյուղերը՝ թուրքերը անլուր չարագործություններ կատարեցին բնակչության նկատմամբ: Ապրիլի 2-ին ընկավ Թալիշը, ավերումի ու ջարդի ենթարկվեցին Գանձակի գավառի գյուղերը՝ Չարդախլուն, Բանանցը, Գետաշենը, Սուլուկը[2]:

Երկարատև պաշարումից հետո՝ ապրիլի 3-ին, ընկավ Ասկերանի բերդը՝ եզ-

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 69, 163-164, գ. 423, թ. 9, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թ. 145, «Հառաջ», 12 մայիսի, 1920, **Վրացեան Ս.**, նշվ. աշխ., էջ 372-373, Нагорный Карабах в 1918-1923 гг., Ереван, 1992, с. 416, **Գևորգյան Հ.**, նշվ. աշխ., էջ 569, **Սիմոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 430-431:

[2] Տես **Սիմոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 434-435:

ռափակելով ինքնապաշտպանական կռիվների անհաջողությունը: Ադրբեջանը ցնծության մեջ էր, ամենուր կոչեր էին լսվում. «Ղարաբաղը լիովին մաքրենք գյավուր հայերից»: Բայց թուրք բարբարոսների անհուն ուրախությունը Շուշիի հայաթափումն ու ավերումն էր:

Ապրիլի 6-ին Ադրբեջանի զորքերը արշավով մտան Շուշի: Միաժամանակ պաշարումից ազատվեցին Խանքենդի զորամասը, Շուշիի զորքը և ինքը՝ Սուլթանովը[1]: Դրանից հետո նրա և Հաբիբ բեյ Սելիմովի թողտվությամբ սկսվեց Շուշիում կենդանի մնացած անզեն ու անպաշտպան հազարավոր հայերի նկատմամբ բռնությունների, բռնաբարությունների, տանջանքների ու սպանությունների մի եղկելի շարան, որպիսին դժվար է պատկերացնել: Շուշիի առաջնորդ Վահան եպիսկոպոսին և թեմական դպրոցի տեսուչ, նշանավոր բոլշևիկ Ալեքսանդր Ծատուրյանին (Ռուբենի) գլխատեցին և նրանց գլուխները, ի ցույց բոլորի, բարձրացրին ձողերի վրա:

1920 թ. մարտի 23-ից մինչև ապրիլի 6-ը թուրքերը և քրդերը Շուշիում սպանեցին կամ բռնատեղահանեցին գրեթե ամբողջ հայությանը: Քաղաքի 35 հազար բնակիչ ունեցող հայկական թաղամասը ոչնչացվեց, ավերված Շուշիի տերը դարձավ 23 հազար բնակիչ ունեցող թուրքական մասը[2]: Քաղաքի ճակատագիրը մեկընդմիշտ որոշված էր: Երբեմնի ծաղկուն ու շենշող բնակավայրը վերածվել էր մոխրակույտի: Ղարաբաղի վարչական ու մշակութային կենտրոնի հրդեհումը և ավերումը անդառնալի կորուստ էին տարածաշրջանի ամբողջ հայության և ընդհանրապես հայ մշակույթի համար:

Որո՞նք էին Շուշիի անկման և արցախահայության 1920 թ. սկզբի պարտության պատճառները: Մուսավաթական հրոսակախմբերին հաջողվեց հսկայական ավերներ կատարել Արցախում այն պատճառով, որ հայերն ապստամբել էին իրենց համար աննպաստ պայմաններում առանց լուրջ ու բազմակողմանի նախապատրաստության՝ չունենալով ամուր կարգապահությամբ կանոնավոր զորք, անհրաժեշտ քանակի ռազմամթերք ու զենք: Մարտ-ապրիլյան դեպքերը եկան հաստատելու դեռևս 1920 թ. փետրվարի 2-ին Դիզակի Հարար գյուղում հրավիրված Արցախի ազգային խորհրդի մի քանի անդամների և զինված ջոկատների հրամանատարների խորհրդակցությունում արձանագրված այն կանխատեսումը, թե «Ղարաբաղում եղած սակավաթիվ ռազմամթերքով կռվի դեպքում երեք օր միայն կարող ենք դիմանալ»[3]:

Այնինչ ռուս, թուրք գեներալների ու սպաների միջոցով Ադրբեջանը կարողացել էր հատկապես 1919 թ. դեկտեմբեր-1920 թ. մարտ ամիսներին զգալի առա-

---

[1] Տես **Վրացեան Ս.**, նշվ. աշխ., էջ 373, **Գևորգյան Հ.**, նշվ. աշխ., էջ 571, 577, 578, **Սիմոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 436:

[2] Տես ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 417, թթ. 139-140, գ. 563, թ. 67, ֆ. 278, g. 1, գ. 30, թթ. 1-2, ՀԱԱ, ֆ. 113, g. 3, գ. 27, թ. 55, «Слово», 16 апреля 1920, **Սիմոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 438:

[3] Տես ՀԱԱ, ֆ. 1457, g. 1, գ. 606, թ. 30: Համլետ Գևորգյանը, իր արժեքավոր մենագրության մեջ վկայակոչելով Եղիշե Իշխանյանին, Հովակ Ստեփանյանին և դեպքերի ականատես ու մասնակից այլ գործիչների, իրավացիորեն նշում էր, որ Արցախի ողբերգությունն ու նամանավանդ Շուշիի կործանումը հետևանք էին արցախյան մարտական ջոկատների ղեկավարներ Դալի Ղազարի, Արսեն Միքայելյանի, Զախար Մեսյանի, ռոտմիստր Տեր-Մարտիրոսյանի և նրանց մի շարք գործընկերների հապճեպ կազմակերպած, վատ փոխհամաձայնեցված, չկշռադատված, տաքարյուն ու անմիտ գործողությունների (տես **Գևորգյան Հ.**, նշվ. աշխ., էջ 565-569):

ջընթաց ունենալ բանակաշինության ուղղությամբ, և այդ գործում անուրանալի էր ռազմական նախարար, գեներալ-մայոր Սամեդբեկ Մեհմանդարովի դերը:

Մուսավաթական «Բակինեց» թերթը, անդրադառնալով բանակի կազմակերպման ուղղությամբ ձեռք բերված հաջողություններին, գրում էր. «Ադրբեջանը պարտավոր է կենդանության ժամանակ անձեռակերտ հուշարձան կանգնեցնել իր առաջին և անփոփոխ ռազմական նախարար գեներալ Մեհմանդարովի համար: Միայն զինվորական գործի այդպիսի գիտակը կարող է կարճ ժամանակում ոչնչից ստեղծել բանակ, որը պատիվ կբերեր եվրոպական ցանկացած փոքր պետության: ... Իհարկե, ոչ ոքի չի զարմացնում Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների զորքերի օրինակելի վիճակը, որքանով որ վրացիներն ու հայերը ծառայության են անցել ռուսական բանակներում և զինվորական ոգին նրանց մոտ բարձր է: Եվ գեն[երալ] Մեհմանդարովի մեծ աշխատանքը հենց նրանով էլ բարձր է, որ, ի պատիվ մեր կառավարության, պետք է ասել, որ սա միշտ և ամեն ինչում աջակցել է իր ռազմական նախարարին բանակի կառուցման համար՝ նրան տրամադրելով դիկտատորական իրավունքներ և անսահմանափակ վարկեր»[1]:

Եվ դա այն դեպքում, երբ Արցախի ու Զանգեզուրի հայ պաշտպանների համար զենք ու զինամթերք ձեռք բերելը կապված էր անասելի դժվարությունների հետ: Մարտիկներն իրենց ստացած փամփուշտներն օգտագործում էին խիստ խնայողաբար: Հայաստանը չէր կարողանում բավարար քանակությամբ զինամթերք առաքել Զանգեզուր, իսկ Արցախն ընդհանրապես Երևանից ոչինչ չէր ստանում: Արցախցիների միակ հույսը շարունակում էր մնալ Զանգեզուրը, որն իր սուղ հնարավորություններից, այնուամենայնիվ, բաժին էր հանում նրանց:

Արցախահայերի պաշտպանական խմբերը ապստամբությանը պատրաստվում էին անկազմակերպ, հախուռն, ոչ ծածուկ, այլ ցուցադրական ձևով, որը չէր կարող վրիպել հակառակորդի ուշադրությունից: Պարտության մեջ իրենց լուրջ մեղքի բաժինն ուներ հայկական ուժերի ղեկավարությունը, որն ակնհայտորեն թերագնահատեց թշնամու ուժերը, լրջորեն չմշակեց ապստամբության ռազմական պլանը, զինվորական պրոֆեսիոնալիզմը փոխարինեց խիզախ, բայց տաքարյուն և անհաշվենկատ գործելակերպով:

Հերթական անգամ իր դերը խաղաց մեր անմիաբան, ոչ միասնական լինելը, հակառակ թշնամու, որը կարողացավ համախմբել իր բոլոր ներքին ուժերը՝ արդյունավետ կերպով իրականացնել հակահայ քարոզչություն, Ադրբեջանի հասարակության լայն խավերին միավորել մի ընդհանուր գաղափարի՝ հայ ժողովրդի և մասնավորապես արցախահայության նկատմամբ ատելության ներքո:

Շուշիի անկումը, նրա հայ բնակչության կոտորածը թողել են ուսանելի պատմական դասեր:

Հայ ազգի գոյությունը և անխաթար զարգացումը ապահովող ամենակարևոր գործոնը մեր եռամիասնությունն է՝ Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն և Սփյուռք: Մեր միաձույլ հասարակությունն է միայն, որ տեր կկանգնի ժողովրդի կյանքին ու պատվին, հայ էթնոսի ամբողջ ներուժը կծառայեցնի այդ կարևորագույն գործին:

[1] «Бакинец», 29 марта 1920.

Մենք դատապարտված ենք ստեղծելու քաղաքականապես, տնտեսապես ու բարոյահոգեբանական տեսակետից միաձույլ և ուժեղ հասարակություն, որը վստահորեն կընթանա դեմոկրատական առաջընթացի, չորրորդ տեխնոլոգիական հեղափոխության, հայ ազգային գաղափարի վրա խարսխված Հայոց պետականության նպատակների ու իղձերի իրականացման ճանապարհով:

Մեր էթնոսի և պետականությունների գոյատևման երաշխավորողը եղել է, կա ու լինելու է Հայոց հզոր բանակը, որը պետք է գտնվի մեր մշտարթուն հոգածության ներքո:

Յուրաքանչյուր հայ մարդու սրբազան պարտքը պետք է դառնա ծննդյան օրվանից սկսած՝ նորելուկ սերնդի կրթության ու դաստիարակության ազնիվ գործը: Մեր երիտասարդությանը մշտապես պետք է ներարկել բարոյական բարձր ոգի, հայրենասիրություն, անհուն նվիրվածություն սեփական ժողովրդին, հայրենի եզերքը պաշտպանելու անկոտրում կամք ու վճռականություն: Յուրաքանչյուրի մեջ անհրաժեշտ է արթնացնել ոգու անհատական բարձր հատկանիշներ, սերմանել ագրեսորի, կեղեքիչի, բարբարոսի դեմ անկոտրում պայքարելու, նրան անպայման պատժելու անսանձ ցանկություն:

Հայ մտավորականությունը մի կողմ պետք է թողնի սեփական, երբեմն-երբեմն ի հայտ եկող երկչոտությունը, պոտենցիալ վտանգների նկատմամբ բարեհոգի վերաբերմունքը, նեղ, եսասիրական բնազդները և լրջորեն ծրագրի ու իրականացնի սեփական պետականությունների և ժողովրդի օրավուր բարդացող խնդիրների և իրական մարտահրավերների արդյունավետ ու թիրախավորված լուծումը: Մտավորականությունը պետք է գիտակցի, որ մեր նկատմամբ հստակ նպատակադրված քարոզչությունը մեծագույն վտանգ է մեր ազգային անվտանգությանը, և դրա անտեսումը կամ լուրջ չընդունելը ծանր հետևանքներ կարող է ունենալ:

Միջազգային ասպարեզում հետամուտ պետք է լինենք հայի դրական կերպարի անդուլ քարոզին՝ մեր երկու պետականության նկատմամբ դրական կարծիք հաստատելու կարևորագույն նպատակին: Անհրաժեշտ է օգտագործել լոբբիստական յուրաքանչյուր հնարավորություն, հայասեր մթնոլորտ ստեղծելու, մեր անկախության, ազատ զարգացման, արցախահայության խնդիրը հայ ժողովրդի իղձերին համապատասխան լուծելու համար: Այս դժվարին խնդիրները հաջողություն կունենան միայն գրագետ արտաքին քաղաքականություն վարելու ճանապարհով՝ հատկապես գերտերությունների, դեմոկրատական բոլոր ուժերի հետ հարաբերվելիս:

Մեր պետականություններն ու հասարակությունը դժվարին խնդիր ունեն լուծելու: Դա թուրքալեզու երկու հարևանների հետ խաղաղ գոյակցելն է: Հստակ է, որ մեր քաղաքակրթական ճանապարհները տարբեր են, և թուրքի գիշատիչ, կրոնական անհանդուրժողականության ու պանթուրքիստական բնազդները ոչ մի տեղ չեն կորել: Ելնելով թուրք ժողովրդի ցեղային հատկանիշներից՝ Թուրքիան միշտ լինելու է Ադրբեջանի կողքին՝ ընդդեմ Հայաստանի: Մենք՝ հայերս, հստակ պետք է գիտակցենք, որ այս երկու ազգակից ժողովուրդների հետ հարաբերություններում շատ հաճախ քաղաքակրթության մշակված բարոյական նորմերը արժեք չեն ունենում:

Դեռևս Առաջին հանրապետության հռչակման առաջին պահերից և արցախյան ճգնաժամի օրերին Հայաստանի ղեկավարությունը, ցավոք, հետևողականորեն առաջնորդվում էր միջազգային իրավունքի և համընդհանուր բարոյականության սկզբունքներով, մի բան, որ արդարացված չէր, երբ հայությունն իր դիմաց ուներ բարոյականությունից գաղափար չունեցող Տաճկաստան և Ադրբեջան, որոնք հարմար պահի, առանց բոպե անգամ վարանելու ոտնատակ էին տալիս այդ սկզբունքները: Թե՛ Հայաստանի Հանրապետությունում և թե՛ Զանգեզուրում ու Արցախում, իհարկե, կային գործիչներ, որոնք մշտապես նախազգուշացնում էին նման գործելակերպից բխող վտանգների մասին և առաջարկում գործել այնպես, ինչպես գործում է թշնամին՝ անողոք ու դաժան: Բայց նրանք կառավարական շրջաններում եղանակ չէին ստեղծում: Նման գործելակերպը ծանր նստեց հայության վրա: Օրինակ՝ 1918 թ. վերջերին Գորիսից դեպի Շուշի արշավանքը դադարեցնելու և անգլիացիների ճնշման տակ Զաբուղի ձորից վերադառնալու մասին Անդրանիկի որոշումը դրա ակնառու ապացույցներից մեկն էր: Գարեգին Նժդեհն էր, որ, Զանգեզուր գալով, վճռականապես փոխեց թշնամու դեմ կռվելու մարտավարությունը և այստեղ հրապարակ բերեց «ակն ընդ ական» սկզբունքը:

Միանշանակ պետք է գիտակցենք, որ ադրբեջանական պետության հետ հարաբերվելիս քաղաքական, սոցիալ-տնտեսական բոլոր վիճակներում այս պետությունը Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի նկատմամբ հանդես է գալու տարածքային-նվաճողական հավակնություններով, փորձելու է հագեցնել մեր ունեցվածքին ու մշակութային արժեքներին տեր դառնալու անկոտրում ծարավը:

Ամուր, բարեկամական հարաբերություններ պետք է զարգացնենք հարևան Իրանի հետ: Ամեն ինչ պետք է անենք՝ ապահովելու նրա չեզոք, իսկ լավագույն դեպքում մեզ համար բարենպաստ դիրքորոշումը Արցախի հարցում:

Հայաստանի արդի և ապագա շահերը սերտորեն միահյուսված են Ռուսաստանի շահերին: Հայ ժողովրդի համար ապացուցման կարիք չունի այն ճշմարտությունը, որ դեմոկրատական Ռուսաստանն է մեր միակ ու անփոխարինելի ռազմավարական դաշնակիցը: Բոլոր տեսակի մեծ ու փոքր հակառուսական տրամադրությունները պետք է վճռականորեն և վերջնականապես արմատախիլ արվեն հայ հասարակության միջից:

Ամփոփում

Շուշիի ավերումը, նրա հայ բնակչության ջարդը. պատճառները, հետևանքներն ու պատմական դասերը

Արամ Սիմոնյան

XVIII դարի վերջից Շուշի քաղաքը դարձել է հայ ժողովրդի կյանքի անբաժանելի մասը: Ռուսական կայսրությանը միանալուց հետո Շուշին սկսեց ակտիվորեն զարգանալ և XX դարի սկզբին վերածվեց Կովկասյան տարածաշրջանի խոշոր կենտրոններից մեկի: Առաջին ռուսական հեղափոխության ժամանակ Շուշին վերածվեց ադրբեջանա-հայկական բախումների ասպարեզի: Քաղաքի հայ բնակչությունը ոտքի ելավ պայքարելու իր գոյության նկատմամբ ծայրահեղ ազգայնական և հակահայ ադրբեջանցի հրոսակների ոտնձգությունների դեմ, որոնց հստակորեն աջակցում էին ցարական սատրապները: Չնայած ուժերի անհավասարությանը՝ քաղաքի հայերը կարողացան պաշտպանել իրենց գոյության իրավունքը: Բայց, այնուամենայնիվ, այս արյունալի բախումները և ցարիզմի հակահայկական քաղաքականությունը զգալի բացասական քաղաքական և սոցիալ-տնտեսական հետևանքներ ունեցան Կովկասի հայ բնակչության համար: Դժվար կացությունում է հայտնվել նաև Արցախը, այդ թվում՝ Շուշի քաղաքը: Առաջին համաշխարհային պատերազմը, Ռուսական կայսրության փլուզումը և Անդրկովկասում անկախ պետությունների ստեղծումը ծայրահեղորեն սրել են ազգամիջյան հարաբերությունները կովկասյան տարածաշրջանում: Իր կազմավորման առաջին օրերից Ադրբեջանի Հանրապետությունը սկսեց վարել կատաղի հակահայկական քաղաքականություն, որն առաջին հերթին սպառնալիք էր ներկայացնում Արցախի և Զանգեզուրի հայ բնակչության գոյության համար: Այս բարբարոսական, անմարդկային քաղաքականության գագաթնակետը Շուշիի ոչնչացումն էր: 1920 թ. մարտի 23-ից ապրիլի 6-ը ադրբեջանական թուրքերի և Ադրբեջանի Հանրապետության քրդերի զինված կազմավորումները կոտորեցին Շուշիի գրեթե ամբողջ հայ բնակչությանը: Արցախի վարչական ու մշակութային կենտրոնի անկումն անփոխարինելի կորուստ դարձավ ողջ հայ էթնոսի համար: Շուշիի անկումը և նրա բնակչության ցեղասպանությունը արյունոտ հետք թողեցին մեր հիշողության մեջ և տվեցին պատմության լուրջ դասեր. հայ ազգի գոյության և զարգացման գրավականը Հայաստանի Հանրապետության, Արցախի և Սփյուռքի (Հայկական Սփյուռք) անխորտակելի միասնությունն է, մենք «դատապարտված ենք» ստեղծելու ուժեղ հասարակություն ՝ միավորված քաղաքական, սոցիալ-տնտեսական, բարոյական և հոգեբանական առումներով, մեր էթնոսի և երկու հայկական պետությունների գոյության երաշխավորը հայկական բանակն է և կլինի: Միշտ պետք է հիշել, որ բոլոր քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակներում Ադրբեջանը հանդես կգա տարածքային պահանջներով ընդդեմ Հայաստանի և հայ ժողովրդի, հայ ժողովուրդը պետք է ամուր, բարիդրացիական հարաբերություններ զարգացնի Իրանի Իսլամական Հանրապետության հետ և անընդհատ գիտակցի, որ մեր միակ մշտական դաշնակիցը եղել ու կլինի Ռուսաստանի Դաշնությունը:

Հիմնաբառեր. *Հայկական Շուշիի ավերում, հայահալած քաղաքականություն, ցարիզմի քաղաքականություն, թուրք-հայկական ընդհարումներ, արցախահայերի պաշտպանական խմբեր, ընդհարումների պատճառներ, պատմական դասեր*

Резюме

Разрушение Шуши, погром армянского населения: причины, последствия и уроки истории

Арам Симонян

С конца XVIII века город Шуши стал неотъемлемой частью жизни армянского народа. После вхождения в состав Российской империи Шуши стал активно развиваться и в начале XX века превратился в один из крупных центров Кавказского края. В годы Первой русской революции Шуши превратился в арену азербайджано-армянских столкновений. Армянское население города поднялось на борьбу против посягательств на его существование со стороны крайне националистически и антиармянски настроенных азербайджанских громил, явно поддерживаемых царскими сатрапами. Несмотря на неравенство сил, армяне города смогли отстоять свое право на существование. Но, тем не менее, эти кровавые столкновения и антиармянская политика царизма имели значительные отрицательные политические и социально-экономические последствия для армянского населения Кавказа. Тяжелым оказалось и положение Арцаха, в том числе и Шуши. Первая мировая война, крушение Российской империи и создание независимых государств в Закавказье до крайности обострили межнациональные отношения в Кавказском крае. Азербайджанская республика с первых дней своего образования начала проводить ярую антиармянскую политику, которая в первую очередь представляла угрозу для существования армянского населения Арцаха и Зангезура. Кульминацией этой варварской, бесчеловечной политики стало уничтожение Шуши. С 23-го марта по 6-е апреля 1920 г. вооруженные формирования турок-азери и курдов Азербайджанской республики вырезали почти все армянское население Шуши. Тридцатипятитысячное армянское население города перестало существовать. Некогда цветущий и лучезарный город и знаменитый очаг армянской культуры превратился в руины. Разгром административного и культурного центра Арцаха стал невосполнимой утратой для всего армянского этноса. Падение Шуши и геноцид его населения оставили кровавый след в нашей памяти и преподали серьезные уроки истории: гарантия существования и развития армянской нации – это нерушимое единство Республики Армения, Арцаха и Спюрка (армянской диаспоры); мы «обречены» на создание сильного общества, сплоченного в политическом, социально-экономическом и нравственно-психологическом отношении; гарантом существования нашего этноса и двух армянских государств является и будет являться Армянская армия; необходимо всегда помнить, что Азербайджан во всех политических, социально-экономических ситуациях в отношении Армении и армянского народа будет выступать с территориальными претензиями; армянский народ должен развивать крепкие, добрососедские отношения с Исламской Республикой Иран и постоянно осознавать, что единственным нашим неизменным союзником является и будет являться Российская Федерация.

Ключевые слова: *разрушение армянского Шуши, политика преследования армян, политика царизма, турецко-армянские столкновения, отряды защиты арцахских армян, причины конфликтов, исторические уроки.*

Abstract

The destruction of Shushi, the massacre of its Armenian population: reasons, consequences and lessons from history

Aram Simonyan

Since the end of the 18th century the city of Shushi has become an integral part of the life of the Armenian people. After joining the Russian Empire, Shushi began to actively develop and at the beginning of the XX century became one of the major centers of the Caucasus region. During the First Russian Revolution, Shushi turned into an arena of Azerbaijani-Armenian clashes. For the sake of its existence the Armenian population of the city rose up to fight against the encroachments of extreme nationalist and anti-Armenian Azerbaijani bandits, who were openly supported by the satraps of the tsar. Despite the inequality of forces, the Armenians living in the city were able to defend their right to exist. Nevertheless, these bloody clashes and the anti-Armenian policy of tsarism had significant negative political and socio-economic consequences for the Armenian population of the Caucasus. Artsakh, including the city of Shushi, was also in a difficult situation. The First World War, the collapse of the Russian Empire and the creation of independent states in Transcaucasia extremely aggravated interethnic relations in the Caucasus region. From the first days of its formation, the Republic of Azerbaijan began to pursue a fierce anti-Armenian policy, which, first of all, posed a threat to the existence of the Armenian population of Artsakh and Zangezur. The culmination of this barbaric, inhuman policy was the destruction of Shushi. From March 23 to April 6, 1920, the armed formations of the Azeri Turks and the Kurds living in the Azerbaijan Republic massacred almost the entire Armenian population of Shushi. The fall of the administrative and cultural center of Artsakh became an irrevocable loss for the entire Armenian ethnos. The fall of Shushi and the genocide of its population left a bloody trace in our memory and taught serious history lessons: the guarantee of the existence and development of the Armenian nation is the indestructible unity of the Republic of Armenia, the Artsakh and Spyurk (Armenian Diaspora); we are "doomed" to create a politically, socioeconomically, morally and psychologically cohesive and strong society; the guarantee of the existence of our ethnos and the two Armenian states is and will be the Armenian Army; it must always be remembered that in all political, socio-economic situations, Azerbaijan will make territorial claims against Armenia and the Armenian people; the Armenian people should develop strong, good-neighborly relations with the Islamic Republic of Iran and constantly be aware that the Russian Federation is and will be the only reliable ally forever.

Keywords: *the destruction of the Armenian Shushi, the policy of persecution of the Armenians, the policy of tsarism, the Turkish-Armenian clashes, defense groups of the Artsakh Armenians, the causes of conflicts, historical lessons for history*

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պատմաբան, Շուշի քաղաքի պատմության թանգարանի վարիչ, «Կաճառ» գիտական կենտրոն» ՀԿ վարչության անդամ,
history.of.shushi@gmail.com,
ashot.harutiunyan@yahoo.com,
Հոդվածը ներկայացվել է 10.04.2021, գրախոսվել է 10.04.2021, ընդունվել է տպագրության 20.04.2021

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՁԱԽՈՂՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱՐՍԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՄԲ

1. ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ ՄԻՆՉԵՎ ԻՊՄ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Ըստ Ա. Միքայելյանի՝ պատմական Հայաստանի արևելյան մասում հայերի և եկվոր-զավթիչների՝ թյուրք-թաթարների հարաբերությունների լարման սկիզբը 1905-1906 թթ. հայ և թաթար-թյուրքական ընդհարումներն էին[1]:

Տողերիս հեղինակի խորին համոզմամբ՝ XIX դարում Այսրկովկասում հայ և թյուրք-թաթարական շահերի հակամարտության սկիզբ պետք է ընդունել 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը, որում ռուսական զենքի փայլուն հաղթանակներն արդյունք էին նաև հայ կամավորականների մատուցած անգնահատելի աջակցության[2]: Այդ աջակցությունը բորբոքեց տեղի մահմեդականների թշնամանքը, որն ավելի սրվեց գեն. Կրասովսկու Ժամանակավոր վարչության կողմից Հայաստանի արևելյան շրջաններից Պարսկաստան բռնի տեղահանվածների վերադարձը կազմակերպելուն զուգընթաց: Հայրենադարձությունը և ռուսական ցարի 1828 թ. մարտի 21-ի հրամանագրով Հայկական մարզի ստեղծումը՝ կայսրությանը միացված Երևանի և Նախիջևանի նահանգների ընդգրկ-

[1] Հայրենիք 1923, մայիս, № 7, 156, հմմտ.՝ Բեհբուդեան 2001, 778:
[2] Հովհաննիսյան 2018, 204-205:

մամբ[1]*, հայ վերնախավի մեջ Ռուսաստանի աջակցությամբ անկախ պետականությունը վերականգնելու սին հույսեր արթնացրին: «Անկախական շարժումը» մարելու համար «բաժանիր, որ տիրես» նշանաբանով ղեկավարվող ցարը 1840 թ. ապրիլի 10-ի օրինագծով վերացրեց Հայկական մարզը և գաղութացված Հայաստանի արևելյան տարածքները տարրալուծեց այդ նահանգների մեջ. Զանգեզուրն ու Արցախը որպես Ղարաբաղի գավառ մտցրեց Կասպիական մարզի մեջ, իսկ Երևանն ու Նախիջևանը Վրաց-իմերեթական նահանգի մեջ: 1844 թ. հիմնվեց Կովկասի փոխարքայությունը, իսկ 1846 թ. տարածաշրջանը ենթարկվեց նոր վարչական բաժանման. ստեղծվեցին Թբիլիսիի (1846-1918), Քութայիսիի (1846-1918), Շամախիի (1846-1859) և Դերբենդի (1846-1860) նահանգները: Միայն 1849 թ. ռուս-թուրքական հարաբերությունների լարման ազդեցության տակ Թբիլիսիի նահանգից առանձնացվեց Երևանի նահանգը՝ Մեղրիի և Տաշիրի ընդգրկմամբ: 1859-1860 թթ. ստեղծվեցին Բաքվի նահանգը (1859-1918) և Դաղստանի մարզը (1860-1918), իսկ 1868 թ.՝ Ելիզավետպոլի նահանգը, որի մեջ էին մտցվել Ղազախի և Ելիզավետպոլի գավառները՝ Թբիլիսիի, Շուշին և Զանգեզուրը՝ Բաքվի նահանգներից:*

Երկրորդ լարումը կապված էր Բալկանյան պատերազմի հետ, երբ Ռուսաստանն իր սահմանների մեջ ընդգրկված Հայաստանի հայությանը դեպի իրեն գրավելու համար շահարկեց Թուրքահայաստանի (Թուրքիայի կողմից բռնազավթված տարածքների) բարենորոգումների խնդիրը: Այսրկովկասի թյուրք-թաթարական վերնախավը ռուս կառավարության «հայասիրական ընթացքին» պատասխանեց հայատյացության ծավալուն քարոզչությամբ, քանի որ Թուրքիայի հետ կապված էին ազգային, կրոնական և համաթուրանական քաղաքական կապերով:

Ըստ Միքայելյանի՝ հայ և թյուրք-թաթարական շահերի հակամարտությունը սրվեց մանավանդ Այսրկովկասում Զեմստվո կազմելու համար *(1864 թ. զեմստվոյական ռեֆորմի և 1890 թ. զեմստվոյական նոր կանոնադրության համաձայն կազմվել էին տեղական ինքնավարության մարմիններ. - Ա.Հ.)* եղած խորհրդակցությունների ժամանակ, երբ անհրաժեշտ եղավ գավառների և շրջանների աշխարհագրական-ցեղագրական սահմանները գծել, և երբ հայությունն իր ներկայացուցիչների միջոցով կամենում էր ապահովել հայկական շրջանները՝ իբրև զեմստվոյական միություն, իսկ թաթարներն ու վրացիները միացյալ ճակատով փորձում էին պահել արդեն գոյություն ունեցող վարչական բաժանումները, որոնց մեջ իրենք թվական մեծամասնություն էին կազմում:

Հայատյացությունն առավել ծավալվեց առաջին աշխարհամարտի նախօրյակին, երբ կովկասահայությունը *նորից* նետվեց ռուսական քաղաքականության գիրկը՝ իր կամավորական խմբերով[2]:

Ցարի գահընկեցությունից հետո ստեղծված Ժամանակավոր կառավարությունը *պատերազմը մինչև հաղթական ավարտ շարունակելու համար առերես* հայտարարեց ազգությունների լայն ինքնորոշման սկզբունքի մասին: *Հայ քաղաքական վերնախավը հերթական անգամ խաբվեց այդ դիվանագիտական ձեռնար-*

---

[1] Ուլուբաբյան 1994, 180:
[2] Հայրենիք 1923, մայիս, № 7, 157:

կով, բայց չկարողացավ «հայ դատի ջերմ բարեկամ Կերենսկու»[1] *միջոցով աշխարհամարտի տարբեր ճակատներում կռվող 300 հազար հայ ռազմիկներից*[2] *(որոնցից 120 հազարը զորակոչվել էր Ռուսաստանի գաղութացրած Հայաստանից) գոնե կեսին բերել հայ-թուրքական ռազմաճակատ: Հայտնի է, որ հայկական վեց հրաձգային գումարտակներում 1917 թ. հունվարի 1-ի դրությամբ ծառայում էր 5179 մարդ, որից 174-ը՝ սպա, իսկ 1917 թ. նոյեմբերին կազմավորված հայկական Առանձին բանակային կորպուսում՝ 20 հազար մարդ՝ գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկովի հրամանատարությամբ*[3]*: 1918 թ. մարտի դրությամբ արևմտահայ կանոնավոր և անկանոն ուժերը միասին ունեին 25 հազար անձնակազմ*[4]*: Առաջին աշխարհամարտի տարիներին Ֆրանսիայի, Անգլիայի և ԱՄՆ-ի բանակներ զորակոչված հայ մարտիկների թիվն անցնում էր 50 հազարից*[5]*: Վերոհիշյալ թվերը վկայում են, որ եթե հայ քաղաքական վերնախավը կովկասյան դաշնություն ստեղծելու ցնորամտության փոխարեն հետամուտ լիներ ազգային պետականության ստեղծմանը,ապա Թուրքիայի դեմ կարելի էր մոբիլիզացնել հարյուր հազարից ոչ պակաս զորախումբ:*

Բոլշևիկյան հեղափոխությամբ թուրքական ճակատը լքած ռուսական զորքերի՝ իրենց ռազմամթերքի և պահեստների մեծ մասը Վրաստանին ու Ադրբեջանին թողնելու տվյալը ապատեղեկատվություն է, քանի որ *իրականում վրացիներն ու թյուրք-թաթարները զինաթափել են նահանջող ռուսական զորամասերին, ինչը զլացան անել հայերը*: Հայաստանին մնացին ճակատի վրա թուրքական արշավող զորամասեր, թիկունքում՝ ատելությամբ լցված Ադրբեջանի[6] *թյուրք-թաթարներ,* իսկ *ներսում՝ սովյալ* գաղթականություն:

Այդ ժամանակամիջոցում Այսրկովկասում գոյություն ունեցող երեք *գերիշխող* ազգությունների միացյալ Սեյմը իրական ուժ չուներ իր տրամադրության տակ *(՞)* և ոչ էլ բաղձանք ՝ դիմադրելու *հայության* արտաքին թշնամուն՝ *Թուրքիային*: *Դեռ ավելին,* Սեյմն անուղղակի կերպով օժանդակում էր վերջինիս առաջխաղացմանը, որի արդյունքում «դաշնակից Հայաստանից» *զավթվեցին* Երզնկան, Էրզրումը: Թուրքերը հասան ռուս-թուրքական *1914 թ.* սահմանին, զավթեցին Սարիղամիշը և մոտեցան Ղարսի ամրոցին: *Հայ քաղաքական վերնախավի անիրատեսական* «մեկ և ուժեղ ճակատ» կազմելու մտադրությունը հօդս ցնդեց: Սեյմի կառավարությունը Ղարսը թուրք զավթիչներին հանձնելու հրաման արձակեց[7]:

Թուրքիայի գաղտնի գործակալները Հայաստանի արևելյան զանազան վայրերում՝ Նուխի, Գանձակ, Ղազախ, Շամախի ևն, բազմաթիվ *հայ-թաթարական և հայ-թյուրքական ընդհարումներ* հրահրեցին[8]: *Հայ քաղաքական ղեկավարությունը չէր կարողանում ստեղծված իրավիճակից փրկության ելք գտնել: Թյուրք-թաթարների աջակցությամբ* թուրքական զավթիչները գրավեցին *Բաքուն և բնիկ*

---

[1] Բեհբուդեան 2001, 779:
[2] Арутюнян 1971, 296.
[3] https://hy.wikipedia.org (բեռնման օրը 18. 08. 2020):
[4] Հայ զինվոր 2014, հունիս, № 23:
[5] Հայ ժողովրդի պատմություն 1981, Հ. 6, 547:
[6] Բեհբուդեան 2001, 779:
[7] Հայրենիք 1923, մայիս, № 7, 158:
[8] Բեհբուդեան 2001, 780

20000 հայերի[1] *ենթարկեցին ցեղասպանության*: *Եթե Բաքվի Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Սփ. Շահումյանին նամակներ հղելու փոխարեն Արցախի Կոմիսարների խորհրդի նախագահ Հայրապետ Մուսայելյանը*[2] *17*[3]*-20*[4,5]*-հազարանոց բանակին հրամայեր հարվածել արշավող թուրքական բանակի թիկունքին, ապա այսօր մենք, հավանաբար, կունենայինք բոլորովին այլ ռազմաքաղաքական իրողություն, սակայն աստեղային ժամը բաց էր թողնված անդառնալիորեն:* Թուրք *զավթիչների* օժանդակությամբ նորաստեղծ Ադրբեջանը զորքեր մտցրեց Շամախի, Նուխի և Գանձակ[6] *և այդ պատմական հայկական տարածքները, փաստորեն, բռնազավթեց*:

1918 թ. սեպտեմբերի 22-ին թուրք զավթիչների 4 հազարանոց զորքը՝ Նուրի փաշայի գլխավորությամբ, ներխուժեց նաև Արցախ: Արցախի Ժողովրդական խորհուրդը, զավթիչների դեմ ժողովրդական շարժում ծավալելու փոխարեն,սեպտեմբերի 25-ին թշնամու առջև բացեց մայրաքաղաք Շուշիի դռները (Ասկերան-Շուշի խճուղու շրջակայքում թուրքերին հաջողվեց անարյուն գրավել 8 հայկական գյուղեր): Ի հեճուկս մորթապաշտ իշխանավորների՝ հայ գյուղացիությունը Մամնայի ճակատամարտում ջարդեց թուրք զավթիչներին: Միջագետքի ուղղությամբ կրած պարտության արդյունքում թուրքական բանակների մի մասը ժամանակավորապես հեռացավ տարածաշրջանից, իսկ մյուս մասը՝ Նուրի փաշայի գլխավորությամբ, լրացրեց մուսավաթական բանակի շարքերը: Իր ուժին ապավինած հայ մշակները վերականգնեցին Արցախի անկախությունը, սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, իշխանության եկածները հերոսական ժողովրդի անառակ զավակները դուրս եկան:

Անկախության հռչակագրից հետո ՀՀ կառավարության ամենակնճռոտ հարցը ***պատմական հողերի ազատագրման խնդիրն էր***, *որի իրականացման համար այն ժամանակներում չկային և առ այսօր մշակված չեն հեռակա և մոտակա ծրագրեր*: *Դիվանագիտության ասպարեզում պատմական հողերի վերամիավորման Հայաստանի արդարացի պահանջին Վրաստանն ու Ադրբեջանը հակադրեցին* ***վիճելի տարածքներ*** *չարաբաստիկ տերմինը: Արդի փուլում նրանց կողմից գործածության մեջ են դրված սահմանների անձեռնմխելիության, իսկ մեր կողմից՝ «անվտանգության գոտի» տերմինները:*

Վրաստանը հավակնություններ ներկայացրեց Հայաստանի Լոռու և Ախալքալաքի, իսկ Ադրբեջանը՝ Արցախի և Զանգեզուրի նկատմամբ: *Բնականաբար,* Հայաստանի կառավարությունը չէր կարող թույլ տալ 400000-ից ավելի հայ ազգաբնակչություն ունեցող *հայոց* մարզերի զավթումը: Անհրաժեշտ էր խափանել Ադրբեջանի և Թուրքիայի՝ Արցախ-Զանգեզուր-Նախիջևանի վրայով միանալու *թուրանական* ծրագիրը[7]: *Տողերիս հեղինակի խորին համոզմամբ՝ զավթիչներից*

---

[1] Հայրենիք 1923, մայիս, № 7, 158:
[2] Թումյան 2008, 50-51:
[3] Мелик-Шахназаров 1995, 9:
[4] Թումյան 2008, 93:
[5] Իշխանյան 1999, 209:
[6] Բեհբուդեան 2001, 780
[7] Հայրենիք 1923, մայիս, № 7, 159:

փարածքներ ազատագրելու և հայրենի հողերի համահավաք հնարավոր է իրագործել միայն ուժի դիրքերից՝ երկաթով և արյամբ[1]: Դա չարվեց, և մեր նախնիները որպես չլուծված ժառանգություն մեզ թողեցին նոր ընդհարումներ, կոտորածներ ու հալածանքներ: Անթույլատրելի է գորդյան հանգույցը որպես բեռ գցել հաջորդ սերունդների ուսին:

Արցախին ու Զանգեզուրին տեր դառնալու և Հայաստանի Հանրապետությանը զիջումների մղելու համար Ադրբեջանը գործակալներ ուղարկեց Նախիջևանի, Զանգիբասարի և Ղարսի շրջանները՝ *հակապետական խռովության* դրդելով դրանցում բնակեցված *թյուրք*, թաթար և *քուրդ* տարրերին: Միաժամանակ նեղում էր իր սահմանների մեջ ապրող հայերին՝ պարբերական կոտորածներով, թալանով և հայկական *բնակավայրերի ավերումով* Հայաստանի քաղաքականության վրա ազդելու համար: Բաքվի նավթի արտահանությունը դեպի Հայաստան դադարեցմամբ, երկաթուղիների շարժական կարողությունը նվազեցնելով և Վրաստանի հետ համախորհուրդ՝ շուկայի մեջ հայկական դրամներն անարժեք դարձնելով **տնտեսական ճնշմամբ**՝ Ադրբեջանը փորձում էր պարտադրել Հայաստանի կառավարությանը զիջումներ անել: Իր բարեկամությամբ Թուրքիայի հետ՝ մահացու սպառնալիք էր դարձել[2] *և այսօր էլ այդպիսին է Հայաստանի համար: Վտանգի դեմն առնելու համար* ***«որպեսզի Հայաստանն ապրի, Ադրբեջանը պետք է կործանվի»*** *նշանաբանը որքան հրապարակ, նույնքան էլ անիրագործելի մնաց սուբյեկտիվ ու օբյեկտիվ պատճառներով:*

Դաշնակից պետությունների հաղթանակից հետո Հայաստանի կառավարությունը բնականորեն կամեցավ օգտվել այդ հանգամանքից և վերջ տալ հարևանների ոտնձգություններին՝ *«հողային վիճելի խնդիրներին»*: Այդ առումով Հայաստանն իր տրամադրության տակ **«ուներ Բաքվի, Գանձակի և Թբիլիսիի հայության բարոյական և թվական ուժը, իսկ Լոռիի, Արցախի և Զանգեզուրի մեջ ուներ կազմակերպված համակիրների հոսանքը, որի վրա էլ կռթնած՝ առաջ կտաներ սահմանային վեճերի վերաբերյալ իր քաղաքականությունը»**[3]: ՀՀ-ում թաթարական գաղութների առկայությունը հնարավոր էր դարձնում Ադրբեջանի *հայատյաց* քայլերին պատասխանել *համարժեք* խստություններով:

Ըստ դեպքերի ականատեսի՝ կիսապատերազմական հարաբերություններն արդյունք էին գլխավորապես երկու խոշոր և հակընդդեմ ձգտումների՝ *պանթուրքական միության և ազգային անկախության գաղափարներին:*

Պանթուրքական տենչանք: Թուրքիայի ազդեցությունը շատ խոշոր էր Ադրբեջանի վրա, իսկ այնտեղ ապրող *թյուրք*-թաթարները վաղուց էին երազում թուրքական տիրապետության տակ անցնելու մասին: *Թյուրք*-թաթարական բոլոր կենտրոններում կազմակերպվել էին համա*թուրքա*կան գաղափարներ քարոզող զինվորաքաղաքացիական կորիզներ[4]:

Անտանտի պետությունների հաղթանակից հետո Թուրքիան զորքերը առերևույթ հանեց Այսրկովկասից, բայց Ադրբեջանին թողեց թնդանոթներ, հրացան-

[1] https://ru.wikipedia.org (բեռնման օրը 14. 08. 2020):
[2] Բեհբուդեան 2001, 780:
[3] Հայրենիք 1923, մայիս, № 7, 159:
[4] Բեհբուդեան 2001, 781:

ներ, ռազմամթերք, սպաներ և «կամավորականներ»: Թուրք հրահանգիչները Զանգիբասարում, Վեդիբասարում, Նախիջևանում և Ղարսում կազմակերպեցին «Ազգային խորհուրդներ», *թողեցին թուրք զորամասեր* և տրամադրեցին խոշոր դրամագլուխ: Նպատակն էր Ադրբեջան-*Արցախ*-Զանգեզուր-Նախիջևան-Թուրքիա տարածքային կապ ստեղծել և *թուրան*ական տիրապետությամբ օղակել Հայաստանի հանրապետությունը[1]: Նեղ սահմաններով ՀՀ-ն *դիմադրական ուժ և ուժեղ տնտեսություն չէր կարող ունենալ և ապագայում* չէր կարող լուրջ սպառնալիք դառնալ Թուրքիայի համար:

Ազգային անկախություն: ՀՀ կառավարությունը ազգային անկախության պահպանման *և պատմական տարածքների հավաքագրման գաղափարով՝ ձգտում էր* վերակազմել և ուժեղացնել բանակը, վերջացնել *հարևան հանրապետությունների հետ ծագած* սահմանային խնդիրները, ստեղծել պետական արդյունավետ գործող մեքենա և ուժեղ տնտեսություն:

Ախալքալաքի, Լոռու, Արցախի և Զանգեզուրի մարզերում ապրող 400000-ից ավելի հայ բնակչությունը Առաջին աշխարհամարտի ընթացքում մնացել էր համեմատաբար անվնաս թե՛ տնտեսապես և թե՛ ֆիզիկապես: Ադրբեջանում և Վրաստանում բնակվում էին ևս «կես միլիոն ընդունակ, առողջ և ձեռներեց հայեր, որոնց կարիքն այնքան զգալի էր Հայաստանի վերաշինության գործի» և *հայոց* նորակազմ բանակի ամրացման համար[2]: Ղարսի, Ալեքսանդրապոլի, Երևանի տնտեսապես ավերված գավառներով, մի քանի հարյուր հազար գաղթականներով *(300-350 հազարից մինչև 650 հազար. պետք էր խթանել Ռուսաստան անցած 600 հազար հայերի վերադարձը)*[3] և Բայազետի սակավահող շրջանով նորաստեղծ հայոց կառավարությունը չէր կարող իր գոյությունը երկարատև դարձնել: *Դրան պետք է գումարել նաև* 1919 թ. հոկտեմբերի 29-ին թուրք-ադրբեջանական զինակցության դաշինքը, որն իր սուր ծայրով ուղղված էր Հայաստանի հանրապետության դեմ[4]:

1918 թ. դեպի Բաքու արշավող թուրքական բանակը լուրջ սպառնալիք էր համարում Արցախը և Զանգեզուր մտած *գեներալ-մայոր* Անդրանիկի զորամասը: Թուրք զավթիչները հասել էին Ասկերան և վերջնագիր ներկայացրել Շուշի քաղաքի և շրջանի հայությանը՝ անձնատուր լինելու պահանջով[5]: *Գորիս-Շուշի խճուղին թուրք-մուսավաթական զորքերից մաքրելու և երթևեկությունն անվտանգ դարձնելու Արցախի ժամանակավոր կառավարության նախաձեռնած անհաջող զորաշարժից հուսալքված* Շուշին ընդառաջ գնաց վերջնագրին և Նուրի փաշային հավատարմություն հայտնեց՝ խոստանալով ազդել նաև Զանգեզուրի հայության վրա[6]:

---

[1] Հայրենիք 1923, մայիս, № 7, 159:
[2] Բեհբուդեան 2001, 782:
[3] Դանիելյան 2002, 112-117:
[4] Հայրենիք 1923, մայիս, № 7, 160:
[5] Բեհբուդեան 2001, 783:
[6] Հայրենիք 1923, մայիս, № 7, 163:

1918 թ. սեպտեմբերի 26-ին[1] (24[2], 25-ը[3,4,5], 27[6,7], *հոկտեմբերի 8-ին) թուրք զավթիչների հազար*[8,9] (2 հազար[10], 3 հազար[11], «6000-անոց Գալլիպոլյան դիվիզիան, 9 դաշտային թնդանոթներով, 66 գնդացիրներով և 3 զրահապատ ինքնաշարժերով»[12]) զինվորից բաղկացած մի զորամաս մտավ Շուշի, որից 200-300-ը տեղափոխվեցին Խանքենդի[13]: Սակայն ազատատենչ հայ *գյուղացիները* չճանաչեցին թուրք *զավթիչների* իշխանությունը[14]: *Վարանդայի Մամնա գյուղի մոտ հայկական ԻՊՈՒ-երը շրջապատեցին շուրջ 400 թուրք զավթիչների և ջարդեցին նրանց, գրավե*ցին երկու թնդանոթ և մի քանի գնդացիրներ: Հաղթական ճակատամարտի լուրը ոգևորեց Արցախի ողջ հայությանը:

Հոկտեմբերի 26-ին Արցախի զինվորականները զոր. Անդրանիկին հայտնեցին, թե պատրաստ են 15000 կռվողներ տրամադրելու, եթե *գեներալ-մայորը* մտնի Արցախ: *Զանգեզուրի հայության համագումարի որոշումով* 1918թ. նոյեմբերի 29-ին գեներալ-մայոր Անդրանիկը Հարվածող զորամասով և արցախցիների գնդով շարժվեց դեպի Զաբուղ: Նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 1-ը տևած համառ կռիվների արդյունքում Մարքիզ լեռան բարձունքները գրավվեցին, և բացվեց Գորիս-Բերդաձոր խճուղին: *Մնում էր Շուշիից քշել ադրբեջանական զավթիչներին և Արցախը միավորել Զանգեզուրի հետ:* Սակայն անգլիացիների հանդեպ Արցախի քաղաքական վերնախավի հավատքը[15], *Շուշիի վերնախավի կողմից գեներալ-մայոր Անդրանիկին գրված աննրբանկատ նամակը* և գեն. Թոմսոնի պահանջագիրը՝ դադարեցնել հետագա առաջխաղացումը, շեղեցին հայությանը շիտակ ճանապարհից[16]:

Դարերով թրծված թուրքական դիվանագիտությունը կարողացավ ի չիք դարձնել հայության ռազմական հաղթանակները:

Զոր. Անդրանիկը հետ քաշվեց Գորիս՝ փոխանակ ճամբար խփելու Մարքիզ լեռան տարածքում և կայազորներ տեղադրելու արդեն ազատված բնակավայրերում: Այս ռազմավարական սխալն օգտագործեց թշնամին: *Թյուրք-թաթար-քրդական գրոհայիններ* մտցվեցին հայոց զորքերի լքած բնակավայրերն ու կարևոր ռազմավարական դիրքերը: *Արցախ*ը կտրվեց ՀՀ-ի հետ հաղորդակցության կապից[17]:

Այսպիսով՝ *չնայած հայ զինվորության թափած արյան լճերին և ռազմական*

[1] Իշխանյան 1999, 239:
[2] Աբրահամյան 1991, 10:
[3] Բեհբուդեան 2001, 784:
[4] Բալայան 2002, 298:
[5] Բալայան 2012, 89:
[6] Ուլուբաբյան 1994(1), 32:
[7] Կիսիբեկյան 2011, 337:
[8] Ուլուբաբյան 1994(2), 207
[9] Ուլուբաբյան 1994(1), 32:
[10] Աբրահամյան 1991, 10:
[11] Թումյան 2008, 165:
[12] Իշխանյան, 1999, 239:
[13] Թումյան 2008, 169:
[14] Мелкумян 2000, 66:
[15] Հայրենիք 1923, մայիս, № 7, 163:
[16] Բեհբուդեան 2001, 784:
[17] Հայրենիք 1923, մայիս, № 7, 163:

ակնառու հաջողություններին՝ Արցախի հարցը հայ մանկամիտ դիվանագիտության մեղքով մնաց առկախ և՝ «վիճելի տարածքներ» Հայաստանի և Ադրբեջանի միջև: Այսօր էլ հայկական դիվանագիտությունը չի կարողանում «վիճելի տարածքների» գորդյան հանգույցից գլուխ հանել: Հայ զինվորության թափած արյունն ու աննկարագրելի հաղթանակները զանց առնելով՝ երկչոտ փորձեր են կատարվում գոնե «սպատուս քվո» տերմինով դուրս մղելու չարաբաստիկ «վիճելի տարածքներ» հասկացությունը:

Հայ քաղաքական վերնախավը աշխատավոր զանգվածին անիրատեսական հույս էր ներշնչում, թե 1918 թ. հետո խոսքը ոչ թե զենքին, այլ ճարպիկ դիվանագիտությանն է պատկանում, և անհրաժեշտ է, որ «մեր վիճելի խնդիրները ռազմաճակատէն տանինք դէպի խորհրդաժողուներու կանաչ սեղանները»[1]:

Իրականությունն էլ այն էր, որ անգլիական գաղութարարները չէին կամենում վերջ տալ երեք հանրապետությունների և չճանաչված Արցախի պետության միջև եղած «վիճելի հողամասերի խնդրին»:

Ադրբեջանը պետական ահաբեկչության ենթարկեց Շամախու, Նուխիի և Գանձակի շրջանների հայությանը և կտրեց Բաքու-Թբիլիսի երկաթուղով կապը Հայաստանի հետ: Գրոհայինների միջոցով Եվլախ-Շուշի խճուղին դարձրեց *«մղձավանջային գոտի»*. հայերն այլևս չէին կարող ազատ երթևեկել և տնտեսապես զարգացնել *Արցախը*: Կազմակերպվեց **տնտեսական բոյկոտ**՝ թյուրք-թաթարներին արգելվեց նավթ, հագուստեղեն, շաքար ևն ծախելը *Արցախի* հայության վրա[2]: *Թուրքական դիվանագիտության աջակցությամբ շրջանառության* մեջ դրվեց *Արցախը* Ադրբեջանի տնտեսական անբաժանելի մաս լինելու գաղափարը, որն էլ որպես խայծ կուլ տվեցին այնտեղ հավաքագրված որոշ հայ բոլշևիկներ:

Արդյունքում հայության խախուտ միասնական ճակատն *Արցախում* պառակտվեց երկու՝ *ադրբեջանական գաղութարարների կամակատարների և գաղութային ռեժիմի դեմ պայքարող հայրենասերների հոսանքների*: Թոմսոնի հրահանգով *Արցախից* աքսորվեցին վերջին հոսանքի ղեկավարները:

Այս պայմաններում էլ *Արցախի* հայության 7-րդ համագումարը կայացրեց Ադրբեջանի կառավարության հետ ***խայտառակ, անձնատվական և սեպարատ*** համաձայնություն. «Նկատի ունենալով, որ Լեռնային Ղարաբաղի վիճակը պիտի որոշվի հաշտության վեհաժողովի կողմից, որ **ամեն ընդհարում կործանարար ազդեցություն կունենա Ղարաբաղի ազգաբնակչության համար**[3] *(ժողովրդական շարժումը գլխավորելու անընդունակությունն արդարացնելու անհիմն փորձ է. - Ա. Հ.)*, որ *Արցախի* հարցը որևէ տեսակ վճռվելով՝ հայերը և թուրքերը պետք է ապրեն միասին, *Արցախի* հայերի 7-րդ համագումարը, 1919 թ. օգոստոսի 15-ին իր առավոտյան նիստում որոշեց կանգ առնել Ադրբեջանի հանրապետության կառավարության հետ ունեցած հետևյալ ժամանակավոր համաձայնության վրա:

ա) Երկու կողմերն ընդունում են ներկա ժամանակավոր համաձայնությունը *(ակնհայտ է, որ ադրբեջանական գաղութարարները դեռևս վստահ չէին իրենց*

---

[1] Բեհբուդեան 2001, 785:
[2] Հայրենիք 1923, մայիս, № 7, 164:
[3] Բեհբուդեան 2001, 785:

ուժերի վրա.-Ա. Հ.) մինչև այդ հարցի՝ հաշտության համաժողովի կողմից վճռվելը, որ պարտադիր է երկու կողմերի համար:

բ) **<u>Ղարաբաղի</u> <u>լեռնային</u> <u>մասի</u>**՝ Շուշիի, Ջիվանշիրի և Ջիբրայելի (Դիզակ, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ) գավառները իրենց հայ ազգաբնակչությամբ ժամանակավորապես պիտի մնան Ադրբեջանի հանրապետության սահմանների մեջ:

գ) Շուշիի, Ջիվանշիրի և Ջիբրայելի նահանգները կանջատվեն *Արցախի* գեներալ-նահանգապետությունից՝ որպես վարչական առանձին միավոր,և **հայոց լեռնական կազմակերպության վարչությունը կկազմվի հայերից՝ այն պայմանով, որ նկատի առնվեն փոքրամասնության իրավունքները**: *(Կոպիտ և աններելի դիվանագիտական սխալ էր ադրբեջանական գաղութարարների ներմուծած տարրերին «ազգային փոքրամասնություն» որակելը. - Ա.Հ.):*

դ) *Արցախի* լեռնային մասի (Դիզակ, Խաչեն, Վարանդա և Ջրաբերդ) վարչական պաշտոնատար անձերը կնշանակվեն Հայոց խորհրդի անդամների առաջարկությամբ *(հիմք է ստեղծվում կամակատար, ազգուրաց պաշտոնյաների միջոցով ժողովրդական շարժումը խեղդելու հազկերտյան փորձված քաղաքականության համար. - Ա.Հ.):*

ե) *Արցախի* գեներալ-նահանգապետության մեջ կհիմնվի վեց հոգուց բաղկացած խորհուրդ՝ երեք հայ և երեք թուրք: *(Սա Արցախի հայության շահերը պաշտպանելու կոչված ներկայացուցիչների համագումարի անձնատվություն էր: Ոտնահարվում էր բնիկ ազգային մեծամասնության իրավունքը, քանի որ հաղթողի կեցվածք ընդունած եկվոր «ազգային փոքրամասնությունը» համահավասար ներկայացուցիչներ ունենալու իրավունք էր ստանում. - Ա.Հ.):*

զ) Խորհրդի հայ անդամները կընտրվեն **<u>Լեռնային</u> <u>Արցախի</u>** հայ ազգաբնակչության համաժողովի կողմից: Համաժողովները վերընտրության իրավունք ունեն:

է) Միջազգային բնույթ կրող բոլոր սկզբնական հարցերը չեն կարող կիրառվել առանց Խորհրդի քննության:

ը) Խորհուրդը շինարարական և գեն.-նահ.-եան կառավարության հարցերի մեջ նախաձեռնության իրավունք ունի:

թ) **Խորհուրդն իրավունք ունի վերահսկելու գեն.-նահանգապետության վարչությունը, առանց խառնվելու վարչության գործունեության մեջ**:*(Սա հաղթողի քամահրական վերաբերմունքի դրսևորում էր պարտվողի նկատմամբ: Ի՞նչ լծակներով Խորհուրդը պիտի վերահսկեր գեն.-նահանգապետության վարչությունը. - Ա.Հ.):*

ժ) Կհիմնվի գեն.-նահանգապետի քաղաքացիական օգնականի պաշտոն, և այդ պաշտոնում կնշանակվի մի հայ:

ժա) Գեն.-նահանգապետի քաղաքացիական օգնականի համար համագումարը Ադրբեջանի կառավարությանը կառաջարկի երկու թեկնածու, որոնցից մեկը պիտի հաստատվի պաշտոնի մեջ: *(Պաշտոնակռիվը մոռացության է մատնում գերակա ազգային շահերը: Մեր թշնամիները լավ են յուրացրել Դարեհ 1-ինի պատգամը հայերին պառակտելու վերաբերյալ. - Ա.Հ.):*

ժբ) ***Արցախի* հայերն ունեն կուլտուրական ինքնորոշման իրավունք**:

ժգ) Կուլտուրական ինքնորոշումը կիրականացվի *Արցախի* Ազգային Խորհր-

դի կողմից, որը կընտրվի հայերի պարբերական համաժողովների կողմից:

ժդ) Ադրբեջանի հանրապետության կառավարությունը կվերահսկի հայոց Ազգային Խորհրդի գործունեությունը՝ լիազորված հայերի միջոցով:

ժե) Զինվորական մասերը կբնակվեն Խանքենդիի և Շուշիի մեջ, խաղաղ ժամանակվա կազմով: *(Սուլթանովին Շուշիում և Խանքենդում զորամաս պահելու իրավունք տալը ռազմավարական անհեռատես և պարտվողական քայլ էր: Դրանով նա վերջնականապես դարձավ դրության տերն ու գործընթացների թելադրողը: Գոնե, որպես այլընտրանք, կարելի էր պահանջել, որ զորամասերը բաղկացած լինեին հավասար քանակությամբ հայ և թաթար զինվորներից ու սպաներից. - Ա.Հ.):*

ժզ) Զորամասերի ամեն մի տեղափոխությունը դեպի *Արցախի* լեռնային մասը՝ Շուշիի, Ջիբրայելի և Ջիվանշիրի գավառները, ուր կբնակվեն հայեր, կարող է տեղի ունենալ Խորհրդի անդամների երկու երրորդի համաձայնությամբ:

ժէ) Քաղաքական համոզման համար ոչ ոք չի կարող հետապնդվել, ոչ դատական և ոչ էլ վարչական կարգով:

ժը) Բոլոր հայերը, որոնք քաղաքական պատճառներով ստիպված են եղել հեռանալ *Արցախից*, կարող են նորից իրենց տեղերը վերադառնալ»[1]:

Այս համաձայնությունը, որը կազմվեց Հայաստանի կառավարությունից անջատ, եղավ Ադրբեջանի դիվանագիտական խոշոր հաղթանակը: Նախ՝ այն ի չիք դարձրեց Հայաստանի հանրապետության հետ վերամիավորվելու մասին նախորդ համագումարների որոշումները, ինչը խոսում էր 7-րդ համագումարի պատգամավորների վիպական, անջատողական և անձնատվական տրամադրությունների գերիշխման մասին:

Ազգադավ այդ համաձայնության մեջ շեշտված «բ», «ժա» և «ժդ» կետերը իրավաբանական հիմք ստեղծեցին Ադրբեջանի կողմից, Հայաստանի Հանրապետությանը շրջանցելով, *Արցախի* ներքին կյանքին միջամտելու և արցախահայ վերնախավի *պաշտոններ ստացած ներկայացուցիչների* միջոցով հայ ազգաբնակչության մեջ ազգադավ դիրքորոշում քարոզելու համար[2]: *Դիվանագիտական փաստաթղթով գործածության մեջ դրվեցին «Ղարաբաղի լեռնային» մաս և «Լեռնային Ղարաբաղ» տերմինները, որով կասկածի տակ դրվեց Արցախ նահանգի տարածքային ամբողջականությունը: Սա ազգադավ, կենտրոնախույս գործիչների միջոցով զավթիչների կողմից ՀՀ ներքին գործերին անօրեն կերպով միջամտելը օրինականացնելու դասական օրինակ է: Ցավալին այն է, որ վերոհիշյալ տերմիններն այսօր էլ գործածում են հայ դիվանագիտությունը և օրենսդիրները:*

Երկու երկրների հասարակական և պետական գործիչների մեջ գոյություն ունեին ակտիվիստների հոսանքներ, որոնք ղեկավարում էին հասարակական կարծիքը և ազդում կառավարությունների ընթացիկ քաղաքականության վրա[3]: *(Ա. Միքայելյանը փորձում է գումարել «X»-ն ու «Y»-ը: Եթե Ադրբեջանի զավթողա-*

---

[1] Հայրենիք 1923, մայիս, № 7, 164-165:
[2] Բեհբուդեան 2001, 787:
[3] Հայրենիք 1923, մայիս, № 7, 165:

կան և Հայաստանի ***հայրենի տարածքների միավորման*** *ծրագրերի միջև հավասարության գիծ դներ Թոմսոնը, ապա կարելի էր փորձել հասկանալ նպատակը, բայց հայ ժողովրդի ծոցից ելած և ազգային արժանապատվությունն ու շահերը գիտակցող մտավորականը բարոյական իրավունք չուներ դա անելու. - Ա.Հ.):*

Ադրբեջանի ակտիվիստներից էին *ծայրահեղ ռասիստներ* իթթիհատական Խան-Խոյսկին և մուսավաթական Խոսրով բեկ Սուլթանովը:

1920 թ. փետրվարին Իթթիհատի Բաքվում կայացած «Համագումարը բարձրաձայն հայտարարում և պահանջում է մինչև պատերազմը գոյություն ունեցած Թուրքիայի տարածքի լիակատար անձեռնմխելիությունը»[1]:*(Այսօր էլ Ադրբեջանի հիմնական կռվանը տարածքների անձեռնմխելիությունը և ամբողջականությունն է: Հարկ է, որ հայկական դիվանագիտությունը դրան հակադրի Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականության և անձեռնմխելության իրավունքի թեզը. - Ա.Հ.):*

Ադրբեջանի կառավարության զավթողական նկրտումների մասին է վկայում «Ադրբեջան» թերթի 1920 թ. հունվարի 26-ի խմբագրականը. «Զանգեզուրը Ադրբեջանի ամենաարժեքավոր և անբաժան մասն է: Նրա նկատմամբ ամեն մի ոտնձգություն ողջ Անդրկովկասի մեջ կայծակի արագությամբ հուզում կառաջացնի»[2] (*Ակներև է, որ Ադրբեջանի ահաբեկչական քաղաքականությունը ուժի դիրքերից ճնշում գործադրելու միջոց է եղել, որն ուղեկցվել է խաղաղ հայ ազգաբնակչության կոտորածներով ու այլ բռնարարքներով.-Ա.Հ.)*: Ծայրահեղ ազգայնամոլները նպատակ ունեին զենքի միջոցով վերջ տալու *Արցախ*-Զանգեզուրի հարցին: Սրանց կուռքն էր Խ. Սուլթանովը, որն **«անկախ կառավարութեան կամքէն»** *(՞)* կավերեր հայկական գյուղեր և իր կազմակերպած *գրոհայիններով* սարսափի մեջ կպահեր թէ Եվլախ-Շուշի խճուղին և թէ նրա շուրջը բնակվող խաղաղ հայ աշխատավորությանը[3]: *(Մի՞թե Արցախի ինքնապաշտպանության գործին լծված Ա. Միքայելյանն իրոք հավատում էր,որ Սուլթանովը գործում էր ինքնագլուխ: Մեր օրերում էլ սումգայիթյան ցեղասպանությունը՝ որպես պետական ահաբեկչության դասական փաստ, ադրբեջանական քարոզչական մեքենան ներկայացնում էր իբրև Ադրբեջանի իշխանությունների անգիտությամբ իրականացված վայրագություն: Գուցե այն ժամանակվա Ազգային խորհրդի, ԻՊ Մարմնի որոշ անդամներ և 1988-ի շարժման որոշ գործիչներ ադրբեջանական պետական ահաբեկչությանը վերաբերվում էին որպես «գործին օգուտ» երևույթ՝ միջազգային հանրության միջամտության ակնկալիքով. - Ա.Հ.):*

Հայաստանի ակտիվիստները կառավարությունից պահանջում էին գործուն քայլերի դիմել Արցախ-Զանգեզուրի հարցին վերջ տալու համար և «…առիթ չէին փախցներ՝ քննադատելու կառավարության թույլ քաղաքականությունը»[4]: Այդ հոսանքն ավելի ուժեղացավ 1919 թ. ամառը, Ղայբալի գյուղի հայերի կոտորածից…, *Արցախի* Ազգային Խորհրդի մի քանի գործիչների բռնի աքսորից հետո: 1919 թ. Զանգեզուրում Ադրբեջանի զորամասերի նկատմամբ տարած հաղթանակը ուժ

[1] Հայրենիք 1923, մայիս, № 7, 165:
[2] Բեհբուդեան 2001, 787:
[3] Հայրենիք 1923, մայիս, № 7, 166:
[4] Բեհբուդեան 2001, 788:

ներշնչեց հայ ակտիվիստներին, որոնք «միայն զէնքի միջոցով» էին տեսնում *Արցախի* հարցի լուծումը և կառավարությունից պահանջում էին քայլեր անել հենց այդ ուղղությամբ:

Օգոստոսյան ազգադավ համաձայնությունը նոր քննադատությունների դարպաս բացեց: Ակտիվիստներին հայտնի էր, որ *Ադրբեջանը քայլ առ քայլ քանդում էր արցախահայության դիմադրական ճակատը*՝ 50 միլիոն ռուբլի դրամագլուխ հատկացնելով հայերից զենքեր գնելու և հայ քաղաքական վերնախավի պաշտոններ ստացած մասի աջակցությունը ապահովելու համար: Կազմակերպված էր լրտեսական հզոր ցանց *Արցախի* գյուղերի մեջ, և նավթը, շաքարն ու աղը միջոցներ էին հայ բնակչության քաղաքական տրամադրության վրա ազդելու համար: «*Արցախի* Ազգային Խորհուրդն էլ կվերահսկվեր, մանավանդ որ բոլոր **պաշտոնյաները աշխատավարձ կստանային Ադրբեջանից**[1]:

Ակտիվիստների հոսանք կար նաև 2-րդ գնդի զինվորականների մեջ, որոնք առաջարկեցին կառավարությանը՝ «թույլ տալու, որ իրենք երթան *Արցախ*՝ արգելելու անոր ենթարկումը Ադրբեջանի լուծին»: Երևանի *Արցախցիների* հայրենակցական միությունը դիմեց ՀՀ կառավարությանը՝ զգուշացնելով, որ. «... պատրաստվում է Հայաստանի վերջին անվնաս մնացած շրջանի ոչնչացումը... Խնդրում ենք վճռական քայլեր առնել թրքական էմիսարների և Ադրբեջանի շովինիստական շրջանների արյունալի ագրեսիվ նպատակների առաջն առնելու համար»:

Վրաստանի հայ ակտիվիստների կարծիքով, «... հայությունը ... չի համաձայնի իր վիզը թեքել թրքական յաթաղանի հանդեպ... *Արցախի* փրկությունը նրա կազմակերպված կամքն է և կատարյալ վճռականությունը՝ ամեն գնով ապահովել իր ազատությունը...»[2]:

2. ՇՈՒՇԻԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ադրբեջանի ազդեցությանը հակազդելու և ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով 1919 թ. դեկտեմբերի 7-ին Արսեն Միքայելյանը և գնդ. Հ. Մեսյանը մտան Արցախ:

Գյուլիստանի բացառապես հայ բնակչությունը, չկամենալով Գանձակի նահանգին միանալ, բազում դիմումներ էր հղել դաշնակից պետությունների Այսրկովկասյան ներկայացուցիչներին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ խնդրելով իրենց շրջանը միացնել *Արցախին* : Նրանք ստեղծել էին ԻՊ և Զինվորական մարմիններ, նշանակել էին իրենց ճակատների հրամանատարների և պատրաստ էին զենքով դիմադրելու Ադրբեջանի *գաղութարարների* յուրաքանչյուր ոտնձգության:

Ջիվանշիրի Մեծ Շեն գյուղում դեկտեմբերի 18-ին տեղի ունեցավ խորհրդակցություն, որին մասնակցում էին նաև Վանքի շրջանի և Խաչենի 9-11 աչքի ընկնող գործիչներ: Պարզվեց, որ այդ շրջանի ինքնապաշտպանության մարմինների կազ-

[1] Հայրենիք 1923, մայիս, № 7, 166:
[2] Բեհբուդեան 2001, 788-789:

մակերպությունները համեմատաբար թույլ են[1] (՞):

Դեկտեմբերի 24-ին *Ա.Միքայելյանն ու գնդ. Զ.Մեսյանն անցան* Վանք գյուղը՝ ուսումնասիրելու ՀՀ-ի հետ Բասարգեչար-Զօդի կարճ ճանապարհով կապ պահպանելու հնարավորությունը:

Դեկտեմբերի 28-ին Սեյտի-Շեն գյուղում շրջանի 12 աչքի ընկնող գործիչներ նրանց ներկայացրին Խաչենի տնտեսապես անմխիթար դրությունը: Խաչենը գտնվում էր մշտական վտանգի տակ՝ Եվլախ-Շուշի խճուղուն և Աղդամին շատ մոտ գտնվելու պատճառով[2]:*(Սա չափազանցություն է: Տեղանքին քաջածանոթ լինելով, կարող եմ վկայել, որ ռազմաշունչ բնակչություն ունեցող, անտառապատ ձորերով և բարձունքներով հարուստ տարածքը հնարավորություն է ստեղծում կազմակերպելու ամուր պաշտպանություն: 1990-92 թթ. այդ բնագիծը թվական գերազանցություն ունեցող ադրբեջանական բանակի համար անանցանելի բնագծի էր վերածվել ընդամենը 60-ի մոտ ֆիդայիների ջանքերով. - Ա. Հ.):* Շրջանը ռազմականապես շատ թույլ էր, սակայն բնակչության մեծ մասը սպասում էր Ադրբեջանի լծից ազատվելուն և ՀՀ-ին միանալուն: Քննարկվեց կենտրոնական մարմին ստեղծելու և նրա շուրջը ուժեր համախմբելու, ժողովրդի ԻՊ-ն հզորացնելու և գալիք անակնկալները դիմագրավելուն պատրաստվելու հարցերը:

1920 թ. հունվարի 3-ին նրանք Վարանդայի Տռնավարզ գյուղում հանդիպեցին ԻՊ մարմնի անդամներին, Վարանդայի, Դիզակի և Շուշի քաղաքի մի քանի գործիչների և Զանգեզուրից Արցախ մտած մի քանի կազմակերպիչների հետ: Հունվարի 4-ին խորհրդակցությունում որոշվեց կազմել ԻՊ և զինվորական մարմինների ներքին կանոնագիր:

Հանձնարարվեց քաղաքի ներկայացուցիչներ Խ. Ե.-ին և բժ. Գ.-ին կազմակերպել ԻՊ մարմին, ցուցակագրել կռվող ուժերը և զենքի քանակը և այդ բոլորի մասին տեղեկագրել Ինքն. կենտր. մարմնին[3]:

1920 թ. հունվարի 3-4-ին մասնավոր և ընդհանուր խորհրդակցությունների ընթացքում Արցախը բաժանվեց վեց շրջանների՝ Գյուլիստան, Ջիվանշիր, Խաչեն, Դիզակ, Վարանդա և Շուշի քաղաք՝ իրենց լիազորներով: Նրանք պետք է կազմակերպեին ԻՊ մարմիններ, *զինեին բնակչությանը*, *ձեռք բերեին* ռազմամթերք, կապ պահպանեին կենտրոնի հետ և հսկեին կանոնագրի անշեղ գործադրությանը: Զինվորական *գործը* ենթարկվեց զինվորական ընդհանուր հրամանատարին: Որոշվեց պահել 7 սուրհանդակ՝ Գյուլիստան-Ջիվանշիր՝ 1, Ջիվանշիր-Խաչեն՝ 1, Խաչեն-Վարանդա՝ 1, Վարանդա-Շուշի՝ 1, Վարանդա-Դիզակ՝ 1, Արցախ-Զանգեզուր՝ 2:

ԻՊ կենտրոնական մարմնի անդամներ նշանակվեցին՝ Ա. Շ., Պ. Ա., Ա. Ա., Զ. Մ. և Ա. Մ.: *(Անուններն ու ազգանունները պարզելն այս ուսումնասիրության նպատակի մեջ չի մտել.- Ա. Հ.):*

1919 թ. նոյեմբերի 23-ին Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների միջև, դաշնակիցների ներկայացուցիչների ջանքերով և մասնակցությամբ,

---

[1] Բեհբուդեան 2001, 790 – 791:
[2] Հայրենիք 1923, յունիս, № 8, 111:
[3] Բեհբուդեան 2001, 791-792

կայացավ համաձայնություն, ըստ որի երկու կողմերը զենքի ուժին չպիտի դիմեին՝ «<u>վիճելի</u> <u>հողամասերի</u> <u>խնդիրը</u> կարգադրելու համար»[1]: *(Հայ դիվանագիտության առաջին սխալներից մեկն էլ պատմական հայկական հողերը որպես վիճելի հողամասեր ընդունելն էր: Հենց այն ժամանակներում էր անհրաժեշտ Ադրբեջանին հայտարարել Հայաստանի տարածքային ամբողջականության դեմ ոտնձգություններ կատարող ագրեսոր.-Ա. Հ.):*

Սակայն Ադրբեջանը ծրագրել էր *Արցախի* ուղղությամբ ճամփա հարթել դեպի Զանգեզուր, Հայաստանի հանրապետության սահմանների մեջ գտնվող Նախիջևանի թաթար գրոհայիններով մաքրել այդ շրջանը և Զանգեզուրի սահմանային հայկական գյուղերը հայ ազգաբնակչությունից:

1919 թ. դեկտեմբերի 18-ին Օրդուբադի և Նախիջևանի թաթարները շրջապատեցին Ներքին Ագուլիսը, կրակի մատնեցին տները, կողոպտեցին ազգաբնակչությանը, սպանեցին 70-ի չափ հայեր, իսկ մնացածներին քշեցին դեպի Վերին Ագուլիս գյուղը:

Դեկտեմբերի 24-ին՝ ժամը 15:00-ին, թաթարները Ագուլիսում անկանոն կրակ բացեցին և միաժամանակ գյուղի զանազան մասերում հրդեհեցին հարուստների տները: Ժամը 17:00-ին Օրդուբադի պարետ Էդիլ-բեյը հայերին տեղափոխեց թաթարական թաղը: Հաջորդ օրն առավոտից ժանդարմները ապաստանած հայերին քշեցին փողոցները և համազարկերով կոտորեցին նրանց՝ նախապես զատելով կանանց և օրիորդներին՝ իրենց գլխավորների համար: **Կոտորածին մասնակցում էին գավառապետը, տեղի և Նախիջևանի թաթարները, բազմաթիվ պաշտոնյաներ, սպաներ՝ իրենց զորամասերով»**[2]:

Ագուլիսի *ցեղասպանությունը* Ադրբեջանի կառավարությունը բացատրեց այսպես. «Զանգեզուրի գավառի 40-ի չափ մուսուլման գյուղերը՝ թալանված հայերի և հայկական զորքի կողմից և զրկված տներից և կարողությունից, փախել են Նախիջևանի գավառ: Թուրք փախստականները, կոտորվելով ցրտից և սովից, զայրացած հայերի դեմ, կառավարության համար անսպասելի կերպով շարժվեցին դեպի Ագուլիս և գրավեցին վերոհիշյալ գյուղերի հայկական տները»[3]:

Ակնհայտ է, որ Ադրբեջանի ղեկավարությունը սատարում էր իր գրոհայիններին՝ Հայաստանին պատկանող Նախիջևանում բնիկ հայերին ցեղասպանելու, տարածքի էթնիկ պատկերը բռնի փոխելու հարցում, ինչը չենք կարող արձանագրել Արցախի քաղաքական գործիչների մասին՝ թևանականների շարժման պահով:

Ագուլիսի հայերի ցեղասպանությանն ի պատասխան՝ 1920 թ. հունվարի 5-ին տումեցի խմբապետ Թևանը, «Դրօի հրամանով», հարձակվեց շրջանի Ալիանլու գյուղի վրա, իսկ հունվարի 19-ին, Զանգեզուրի ԻՊՈՒ-երը Շռուխը մաքրեցին թաթարական *բանդաներից*: *Սակայն Արցախում ԻՊ Կենտր. Մարմինը, փոխանակ սատարելու և ընդլայնելու թևանական շարժումը,* կտրուկ միջոցներով վերջ տվեց թևանականների «վտանգավոր արկածախնդրություններին», և Թևանին «խիստ և սպառնական դիտողություն արվեց»[4]: *Այս քայլով Արցախի ԻՊ կենտրոնական*

[1] Հայրենիք 1923, յունիս, № 8, 111:
[2] Բեհբուդեան 2001, 794:
[3] Հայրենիք 1923, յունիս, № 8, 115:
[4] Բեհբուդեան 2001, 794:

մարմնի գործիչները կաշկանդեցին թափ առնող ազգային-ազատագրական պայքարը և հայ բնակչությանը ներքաշեցին Ադրբեջանի դրածո Սուլթանովի հետ հաշտ ապրելու արկածախնդրության մեջ: Վերջինս էլ Թևանի նկատմամբ կիրառված պատժամիջոցներն ընկալեց որպես հայ քաղաքական շրջանակների կողմից իր իշխանության սպարում:

Ադրբեջանի արտգործնախարար Խան-Խոյսկին Շռուխի դեպքերին արձագանքեց հետևյալ *սպառնական* նոտայով՝ ուղղված ՀՀ կառավարությանը. «Պարտքս եմ համարում ձեզ տեղեկացնել, որ մահմեդական խաղաղ *(՞)* ազգաբնակչության դեմ ռազմական գործողությունները չդադարեցնելու դեպքում իմ կառավարությունը ստիպված կլինի վճռական միջոցներ ձեռք առնել պաշտպանելու համար իր քաղաքացիների կյանքն ու գույքը՝ դրանց առաջանալիք ամբողջ պատասխանատվությունը թողնելով հայկական կառավարության վրա»[1]:

Հայաստանի Հանրապետության տարածքում ապրող թաթարներին Ադրբեջանի քաղաքացիներ հայտարարող այս նոտայից ուսանելի դասեր կարող են քաղել նաև այսօրվա հայ դիվանագետներն ու քաղաքական վերնախավը:

Դիվանագիտական սպառնալիքներից Ադրբեջանը անցավ նաև ուժի ցուցադրման: 1920 թ. հունվարի 20-ին Գանձակից «… մի քանի զորամասեր … արշավում են դեպի Զանգեզուր…»[2]: Հունվարի 25-ին «Շուշի-Գորիս խճուղով Ադրբեջանն անց է կացրել 3 հատ երեք մատնաչափ տրամագիծ ունեցող դաշտային թնդանոթներ *(1902 թ. նմուշի՝ ռուսական 76,2 մմ թեթև դաշտային արագ կրակող հրանոթ: Քանի որ մեկ գնդի համար նախատեսված էր մեկ հրանոթ, ապա կարելի է եզրակացնել, որ հունվարի 20-ին Զանգեզուրի ռազմաճակատ են տեղափոխվել ադրբեջանական երեք գունդ)…* Հունվարի 27-ին Շուշի են ժամանել Նուրի փաշան, տաճկական սպաներ և գեներալ Նովրուզովը՝ ադրբեջանյան զորքերի հետ»[3]: *Հայկական հետախուզությունից ստանալով այս տեղեկությունները՝* ՀՀ արտգործ. նախարարը հետևյալ *երկչոտ* նոտան է հղել *Ադրբեջանին.* «Հայաստանի կառավարության ստացած պաշտոնական տեղեկությունների հիման վրա՝ Շուշիում և *Արցախում* կենտրոնանում են մեծ քանակությամբ ադրբեջանական զորքեր՝ հրամանատարությամբ *թուրք*ական և ադրբեջանական գեներալների՝ *Արցախը* գրավելու համար: Հակառակ … նոյեմբերի 23-ի համաձայնության՝ մի քանի զորասյուներ արդեն սկսել են շարժվել… Հայաստանի կառավարության անունից խնդրում եմ Ադրբեջանի կառավարությունից ձեռք առնել ամենաշտապ միջոցներ կասեցնելու համար ծրագրված հարձակումը»[4]:

Համեմատելով երկու հանրապետությունների նոտաները՝ տեսնում ենք հայկական դիվանագիտության անհարկի զգույշ ռազմավարությունը, որն ընդունված և հարգված չէ ասիական վայրենաբարո միջավայրի՝ մասնավորապես զավթումների ուղին որդեգրած Ադրբեջանի հետ տարվող քաղաքականության մեջ: Ըստ երևույթին, թշնամին այս նոտան ընկալել է որպես բողոքող կողմի թուլության արտահայտություն: Պատմությունը կրկնվում է նրանից դասեր չքաղողների հա-

[1] Հայրենիք 1923, յունիս, № 8, 116:
[2] Բեհբուդեան 2001, 796:
[3] Հայրենիք 1923, յունիս, № 8, 116:
[4] Հայրենիք 1923, յունիս, № 8, 116-117:

մար: Ապրիլյան պատերազմը և ադրբեջանական կողմի վերջերս արած ռազմատենչ հայտարարությունը՝ 64 ժամում լուծելու Արցախի հարցը, վկայում են, որ մեր հակառակորդը հասկանում է միայն ռազմական ուժի լեզուն:

Ադրբեջանի ռազմական պատրաստությունները և մոտալուտ վտանգը զգաստացրել էին գավառին և ենթարկեցրել ղեկավարող Կենտրոնական մարմնին: Սակայն Շուշիի քաղաքական գործիչները չէին մտածում միանալ գավառի ուղուն *(՞)*:**Հայ բոլշևիկները** *Արցախը* Ադրբեջանին միացնելու տեսակետը պատճառաբանում էին, թե Շուշի-Եվլախ խճուղով արցախահայությունը տնտեսապես ավելի կապված է համեմատաբար հարուստ Ադրբեջանի հետ, քան Զանգեզուրի լեռներով՝ աղքատ Հայաստանի հետ[1]: Նրանց նպատակն էր *Արցախը* դարձնել բոլշևիկյան Ռուսաստանի հենակետ՝ ՀՀ-ը բոլշևիկացնելու համար[2]: **Սոցիալ-հեղափոխականները** ևս այդ գաղափարի ջատագովներ էին (Արսեն Հովհաննիսյան և Ռուբեն Տեր-Գասպարյան): *(Միքայելյանը փաստացի խոստովանում է, որ պայքար էր գնում արևմտամետների և հյուսիսամետների միջև, որի արդյունքում հայ գործիչները չէին կարողանում հաշվի առնել փոփոխվող միջազգային պայմաններն ու հայ ազգի իրական շահերը.-Ա. Հ.):*

Սոց-դեմոկրատները համակրում էին *Արցախը* ՀՀ-ին կցելուն, բայց դեմ էին որևէ զինված ընդհարման: Միայն որոշ անհատներ նրանց մեջ ջերմորեն կողմնակից էին *Արցախի* ազատագրմանը: Ծայրահեղ ազգայնական **Ժողովրդական կուսակցության** Հայաստանի ղեկավարությունը *Արցախը* Հայաստանին միացնելու կողմնակից էր, և ժամանակակցի պնդումը, թե Շուշիի նրանց հետևորդ Ռուբեն Շահնազարյանը համագործակցում և սատարում էր Խ. Սուլթանովի քաղաքականությանը[3], կարիք ունի ստուգման:

ՀՅԴ-ն գավառում վարում էր *Արցախն* Ադրբեջանի լծից ազատագրելու և ՀՀ-ին կցելու ուղեգիծ: Սակայն Շուշիի դաշնակցականները, շրջապատված լինելով լրտեսների բազմությամբ, իրենց դեմ ունենալով Սուլթանովի կասկածամտությունը, մասնակցում էին միջկուսակցական ժողովներին և դիմումների ժամանակ չէին զատվում մյուսներից, բայց գավառի գործիչներին հայտնում էին, որ իրենք համակիր չեն ընդունված բանաձևերին և առաջարկություններին[4]: *Ա. Միքայելյանի տեղեկությունն այս հարցում ևս ճշման կարիք ունի: Ըստ իս՝ ժողովրդականները ևս, ՀՅԴ-ի պես, առերես լավ հարաբերություններ էին պահում ադրբեջանական գաղութարարների հետ՝ իրենց ազգայնական հայացքները թաքցնելու համար*: Եթե ՀՅԴ-ի *առերես* *քաղաքականությունն ուղեկցվեր քրիստափորյան «հարատև կռվի» գաղափարի իրականացմամբ և Շուշի քաղաքի ԻՊ լիարժեք կազմակերպմամբ, ապա Արցախը, ամենայն հավանականությամբ, այլ քաղաքական ճակատագիր կունենար*:

1920 թ. հունվարի 24-ին, Ագուլիսի և Շռուխի դեպքերից և Թևանի «ավանտյուրայից» հետո, քաղաքի միջկուսակցական ժողովի կողմից պատգամավորություն ուղարկվեց (1 բոլշևիկ, 1 սոց-հեղափոխական և 1 դաշնակցական) Ճարտար՝ գա-

[1] Դավիթ Հովհաննեսի Տեր-Դանիելյանը հերքել է այս մոլորությունը. հմմտ.՝ Դավիթ Անանուն 1920, 684-690:
[2] Բեհբուդեան 2001, 796:
[3] Հայրենիք 1923, յունիս, № 8, 117:
[4] Բեհբուդեան 2001, 797:

վառից պահանջելով դրսից եկած գործիչներին հեռացնել *Արցախից*: Նրանց պատասխանեցին, որ *Արցախի* գավառի գործիչները որոշել են ձեռք առնել ԻՊ միջոցներ, և շատ ցավալի է, որ քաղաքի կուսակցական պարագլուխները բացասական վերաբերմունք են ցույց տալիս դեպի այս դրական աշխատանքը: *Արցախում* դրսի գործիչներ չկան, և ոչ ոք իրավունք չունի հեռացնելու տեղական գործիչներին իրենց հայրենիքից: Պատվիրակությունը խոստացավ ԻՊՄ համագործակցության առաջարկը ներկայացնել Շուշի՝ կուսակցությունների ներկայացուցիչներին, և կարճ ժամանակում պատասխան տալ[1]:

1919 թ. հունվարին Սուլթանովի հրամանով Բալլուջա են ժամանում երկու հայ գավառապետներ՝ իրենց ոստիկաններով՝ ձերբակալելու համար *Խենթ* Մահրասային, Ալեքսան դայուն և ուրիշների: Ղազարը (Միքայել Բաղալքյոխյանը՝ 1886-1920 թթ.) զինաթափում է գավառապետներին և հրահանգում, որ լուր տանեն Սուլթանովին, թե չկարողացան ձերբակալել *Խենթ* Մահրասային և իր ընկերներին[2]: *(Այս միջադեպը մի օրինակ է,թե իրականում ինչպիսի վճռականությամբ պիտի աշխատեր ԻՊ մարմինը.-Ա.Հ.):* Սակայն վերջինս կարծես թե տեղյակ էլ չէր Ղազարի՝ Արցախ մտնելու և Բալլուջայի միջադեպի մասին:

Ադրբեջանի պատրաստություններին[3] և գավառի աշխատանքներին զուգընթաց առաջ էր տարվում նաև Շուշի քաղաքի ինքնապաշտպանության գործը: Գավառի տեղական գործիչները չէին կարող Շուշի մտնել, որտեղից ամիսներ առաջ փախել էին՝ Ադրբեջանական ոստիկանների հսկողությունից ազատվելու համար: **Շուշիում կային բավական հին և հեղափոխական անհատներ, որոնց էլ հանձնված էր քաղաքի ԻՊ գործի կազմակերպումը:** Արցախի ԻՊ կենտրոնական մարմնի պահանջով հունվարի 27-ին Յ. Ս[4].-ն ներկայացրեց Շուշիի ԻՊ ծրագիրը, որի համաձայն քաղաքն ուներ շուրջ 100 զինված կռվողներ, որոնք **անհրաժեշտության դեպքում պիտի գրավեին կարևոր դիրքերը**: ԻՊՄ-ն անհրաժեշտ համարեց վտանգի րոպեին դրսից 100 հոգի ևս օգնության ուղարկել, որոնց պիտի միանային նաև Հայոց թաղի 30-40 ոստիկանները: 240 հոգով **հնարավոր էր ապահովել քաղաքի ինքնապաշտպանությունը**[5]: *Ընդամենը մեկ տարի առաջ Շուշիում տեղակայված անգլիական զորքերի քանակը վկայում է, որ խելացի ծրագիր մշակելու դեպքում քաղաքը կարելի էր պաշտպանել նաև 100 զինվորով: Երկու պատերազմների փորձն ու տեղանքին քաջատեղյակ լինելը թույլ են տալիս ասել, որ իրարից բարձր պատերով և նեղ փողոցներով անջրպետված թաղամասերը փոքրիկ ամրոցներ են հիշեցրել, և դրանք պաշտպանելու համար մեծ ուժեր պետք չեն: 1918-19 թթ. Շուշիի թաղամասերում տեղի ունեցած ընդհարումներն էլ վկայում են,որ փոքրաթիվ ուժերով բազմիցս անցնելով հակահարձակման, հայերը խուճապի են մատնել ադրբեջանական գաղութարարների ուժերին*: Անհրաժեշտ էր քաղաք մտցնել նաև բավական թվով ռազմամթերք և ձեռքի ռումբեր: Շուշիի ԻՊ Մարմնի կարծիքով՝ ոստիկանապետ Ավետիս Տեր-

---

[1] Հայրենիք 1923, յունիս, № 8, 118
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 1, թ. 21:
[3] Հայրենիք 1923, յուլիս, № 9, 116-119:
[4] Յովակ Ստեփանյանը:
[5] Հայրենիք 1923, սեպտեմբեր, № 11, 118:

Ղուկասյանին անհրաժեշտ էր ծանոթացնել կատարված աշխատանքներին և համոզել, որ նա ստանձնի ԻՊ ուժերի ընդհանուր հրամանատարությունը:

Արցախի ԻՊ կենտր. մարմինը «կայացրեց հետևյալ որոշումները. 1) ամեն ջանք թափել քաղաքի 100 կռվողների թիվը բարձրացնելու, 2) կռվի նախօրյակին քաղաք մտցնել Վարանդա գավառի երկու հայ գավառապետներին՝ 40-ական ոստիկաններով. նկատի էր առնվում այն հանգամանքը, որ ոստիկաններն ավելի դյուրություն ունեին քաղաք մտնելու, իսկ գավառի գյուղացիները *չէին ուզում պաշտպանել ԻՊ դավաճանած և Սուլթանովի հետ համագործակցող շուշեցիներին*: 3) անպայման բանակցել և գավառ հրավիրել քաղաքի հայ ոստիկանապետ Ա. Տեր-Ղուկասյանին՝ նրան հանձնելու համար Շուշիի թե՛ ինքնապաշտպանությունը և թե՛ ղեկավարությունը, 4) 1918 թ. Մսմնայում թուրքերից խլված երկու թնդանոթները կարգի բերել և անհրաժեշտ պարագայում դրանցով ռմբակոծել քաղաքի թուրքաց թաղը, 5) ռազմամթերքի փոխադրությունը արագացնել և թելադրել, որ իրենց տրամադրության տակ եղած գումարով փամփուշտներ գնեն»[1]:

Արցախի ԻՊ կենտր. մարմինը Զանգեզուրից խնդրել է վտանգի պարագայում օգնության հասնել *արցախցիներին*:

Սակայն Արցախում Ադրբեջանի նահանգապետ նշանակված Խ. Սուլթանովն *ավելի եռանդով էր գործում:* Նախ նա հզորացնում է Թարթառի շրջանի զորամասը, ապա ավելացնում Կարյագինի ուղղությամբ ադրբեջանական գրոհայինների թիվը:

Զգուշանալով հայերի վրեժխնդրությունից՝ նա Շուշիի Հայոց թաղից տեղափոխվում է մահմեդական մասը: Հունվարի 29-ին իր մոտ կանչելով նահանգապետության կից խորհրդի հայ անդամներին՝ հայտնում է, որ Ադրբեջանի կառավարությունը վճռել է գրավել Մարգուշևանի շրջանի Յուզբաշովկան՝ Ավան Յուզբաշյանի կալվածքը[2]: Այդ պահանջը նա պատճառաբանում է ՀՀ-ից ակնկալվող արշավանքով և Թարթառի թուրքական զորամասի սպաների բնակության հարմարություններն ապահովելու մտադրությամբ: Նա առաջարկում է այդ հարցը լուծել հատուկ պատգամավորության միջոցով՝ համոզելով շրջանի գյուղացիությանը: Քաղաքի վերնախավը ինքնագլուխ կերպով, *Ադրբեջանի գործակալ* Գիգի աղա Քալանթարյանի գլխավորությամբ, պատգամավորություն ուղարկեց Ջիվանշիր:

Թարթառի շրջանի թաթարական զորամասի սպայակույտը Յուզբաշովկա մտնելու թույլատրության վերջնագիր ներկայացրեց Ջիվանշիրի հայերին: Ջիվանշիրի ԻՊ մարմնի ներկայացուցիչները Վանք գյուղում գտնվող գնդապետ Զ. Մեսյանի խորհրդով դիմում են Ադրբեջանի զորամասի սպայակույտին՝ մի քանի օր ժամանակ տալու՝ շրջանի համագումար հրավիրելու, գյուղացիության և Վարանդայի ԻՊ կենտր. մարմնի անդամների կարծիքն իմանալու համար: Վանք գյուղից գնդացիր է տեղափոխվում Մարտակերտ, որպեսզի *ոգևորեն շրջանի հայությանը:*

Փետրվարի 1-2-ը Հարավ գյուղում կայացավ Արցախի ԻՊ կենտր. մարմնի անդամների խորհրդակցություն՝ քննելու ստեղծված կացությունը: (*Զանգվածների*

---

[1] Բեհբուդեան 2001, 800:

[2] Հայրենիք 1923, սեպտեմբեր, № 11, 118-119:

մարտական տրամադրությունները չարտացոլող որոշման ընդունումը *վկայում էր Արցախի ԻՊ կենտրոնական մարմնի անդամների անվճռականությունն ու կտրվածությունը հեղափոխականացած զանգվածից. - Ա. Հ.):*

ա) Մարգուշևանը և Յուզբաշովկան զիջել Ադրբեջանին, բ) ոչ մի ընդդիմություն ցույց չտալ, որովհետև համապատասխան ուժ չունենք, և Զանգեզուրն էլ անտեղյակ է ու անպատրաստ՝ մեզ օգնության հասնելու համար, գ) ավելի ընդլայնել զինվորական կազմակերպությունները, որովհետև Մարգուշևանի դեպքերը «սկիզբն է երկանց»,

դ) ցուցակագրել բոլոր սպաներին և ապահովել նրանց ակտիվ մասնակցությունը,

ե) բոլորի մասին տեղեկագրել Զանգեզուր՝ հայտնելով միաժամանակ մեր կազմակերպության, զինվորական ուժի մասին և այն, որ Արցախում առկա սակավաթիվ ռազմամթերքով որևէ կռվի ժամանակ միայն երեք օր կարելի է դիմանալ»[1]:

Ա. Միքայելյանի ե) կետը *չի դիմանում քննադատության: Եթե ընդունելու լինենք, որ Արցախն ուներ 20 հազարից ավելի հրացանակիր՝ յուրաքանչյուրը 100-200 փամփուշտով[2] (2-4 մլն), իսկ Աղդամում կուտակված Նուրի փաշայի Գելիբոլու դիվիզիան ուներ 6 հազար զինվոր[3]՝ ամեն մեկին շարքից հանելու համար կար 333 փամփուշտ: Անգամ ընդունելով 3 հազար մարտիկների թիվը, միևնույն է, Նուրի փաշայի դիվիզիայի ամեն մի զինվորի դեմ կմնար 50-200 գնդակ: Անգամ ընդունելով, որ Ադրբեջանը արցախյան ռազմաճակատ էր նետել 80 հազար[4] զինվոր՝ ամեն մի թշնամու զինվորի վերացնելու համար մնում է 25-50 փամփուշտ, իսկ Արսենի տարբերակով՝ 3,75-7,5 փամփուշտ: Պիտի նշենք,որ Արցախի ԻՊՄ-ի աշխատանքային տեմպերով բազում տարիներ էին անհարժեշտ ԻՊ կազմակերպելու համար: Իսկ թշնամին չէր սպասում և օրըստօրե սեղմում էր օղակը: Ադրբեջանա-արցախյան 1988-1994 թթ. պատերազմի փորձը վկայում է, որ ծավալվող ընդհարումների պայմաններում ԻՊ ուժեր կազմակերպելն ավելի արագ է ընթանում, քանի որ վտանգի առկայությունը ստիպում է զենք ու զինամթերք հայթայթել նույնիսկ ռազմական և մարդկային տվյալներով բազմիցս գերազանցող թշնամուց:* **Սակայն այն ժամանակ *Արցախի բախտը տնօրինողները* բարվոք համարեցին այդ շրջանը, որքան էլ այն կարևոր լինի, զիջել առանց կռվի[5]:**

Իսկ դեպքերը զարգացան նրանց կամքին հակառակ: Ջիվանշիրի հայերը գրավեցին կարևոր ռազմական դիրքերը: Ոչ Գիգի աղան, և ոչ էլ Զ. Մեսյանի նամակը ԻՊ կենտր. մարմնի անունով, ազդեցություն չունեցան Մարգուշևանի *ըմբոստ և ռազմաշունչ ոգի ունեցող* հայ գյուղացիության վրա*: (Գրասենյակային վերնախավը թերագնահատել էր դյուցազուն ժողովրդի հնարավորությունները.- Ա.Հ.):* Փետրվարի 3-ին՝ առավոտյան դեմ, Ջիվանշիրի շրջանի հայ *զինյալները մերժեցին Յուզբաշովկան հանձնել Թարթառի զորամասի սպայակույտին*՝ այն որակելով որպես զորամասերի տեղափոխության *մասին* օգոստոսյան համաձայ-

---

[1] Բեհբուդեան 2001, 801:
[2] Իշխանյան 1999, 192:
[3] Իշխանյան 1999, 239:
[4] Թումյան 2008, 283:
[5] Բեհբուդեան 2001, 801- 802:

նության խախտման փորձ[1]:

Զենքի ուժով հայի արժանապատիվ ապրելու իրավունքը պաշտպանելու Մարգուշևանի միջադեպը, որը ոգևորիչ տպավորություն էր առաջ բերել Արցախի ազատատենչ հայերի և գործիչների մեջ, վախեցրեց ադրբեջանական գաղութարարներին և ստիպեց նրանց անցնել զիջման քաղաքականության:

Արցախի ԻՊ կենտր. մարմինը Սարուշեն գյուղում գումարված փետրվար 5-ի նիստում որոշեց.

ա) Ավելի ընդարձակել և լայնացնել զինվորական կազմակերպությունները, մասնակի կերպով կատարելով զինական մարզանքներ և զինվորական համախմբումներ:

բ) Անմիջապես ցուցակագրել բոլոր սպաները և գրել քաղաք՝ Յ. Ս.-ին, որ այնտեղ գտնվող սպաների անունները հաղորդի և բանակցի՝ գավառ անցնելու համար:

գ) Ռազմամթերքի տեղափոխության գործը արագացնել՝ գոյություն ունեցող մեկ խումբը բաժանելով երկուսի, զինաբերների թիվն ավելացնել:

դ) Նախօրոք պատրաստություններ տեսնել դեղորայքի, ծխախոտի, գարիի, ալյուրի, խոտի, որպեսզի կռիվների ժամանակ անակնկալների և դժվարությունների չհանդիպենք:

ե) Բժշկական մասի կազմակերպությունը հանձնել բժշկական ուսանող և ԻՊ մարմնի անդամ Ա. Ա.-ին:

զ) Գարի, ալյուր ևն հավաքել թշվառ և աղքատ գյուղացիներին օգնելու անվան տակ՝ ամեն պահեստ տեղական ԻՊ մարմնի հսկողութեան տակ թողնելով:

է) Անհրաժեշտ դեպքում կենտրոնական պահեստատեղիներ պիտի հանդիսանան՝ Դիզակի մեջ՝ Հադրութ և Տումի, Վարանդայի Ա. շրջան՝ Սարգսաշեն և Հարավ, Վարանդայի Բ. շրջան՝ Կղարծի, **Շուշի՝ թողնել տեղական ԻՊ մարմնին**, Խաչեն-Ջվանշիր-Գյուլիստան՝ թողնել Ջ. Մ.-ի հայեցողությանը[2]:

Հունվարի 27-ին Շուշի է ժամանում Նուրի փաշան գեներալ Նովրուզովի և ադրբեջանական մի քանի հազարանոց բանակի հետ: Փետրվար 6-7-ին, Խ. Սուլթանովը, քննադատելով արցախցիների համառությունը՝ Ադրբեջանին չմիանալու հարցում, հայտարարել էր, թե. «10-12 օրվա ընթացքում Զանգեզուրի և Արցախի հարցը վերջացած կլինի»[3]: *Նույնիսկ այս սպառնալիքը չարթնացրեց երկչոտ հայ վերնախավին խոր արջաքնից՝ կազմակերպելու ոչ միայն Շուշիի ինքնապաշտպանությունը, այլև դուրս քշելու քաղաքը զավթած ադրբեջանական զավթիչներին:*

ՀՀ կառավարությունը փետրվարի 20-ին դաշնակից պետությունների ներկայացուցիչներին հայտնում էր, որ «Ադրբեջանը որոշել է իրագործել այն պլանը, որ առաջ չէր հաջողվել... Հայաստանի ազգաբնակչության բոլոր խավերում առաջ է եկել մեծ հուզում»[4]: Փետրվարի 22-ի գիշերը, հայկական Բարեկենդանի օրը, Ադրբեջանական կանոնավոր զորամասերը հարձակվում են Խանքենդու հայերի վրա, սպանում մոտ 100 հոգի, վիրավորում շատերին, թալանում տները, առևանգում

[1] Բեհբուդեան 2001, 802:
[2] Հայրենիք 1923, յուլիս, № 9, 115-116:
[3] Հայրենիք 1923, յուլիս, № 9, 117:
[4] Բեհբուդեան 2001, 802:

կանանց և օրիորդների: Իսկ հայերի մնացած մասը գիշերով կարողանում է փախուստի դիմել և անցնել հայկական գյուղերը: Խանքենդու հայ բնակչությունը բռնատեղահանվում է[1]:

Ասկերանի միջով անցնող Եվլախ-Շուշի խճուղու մոտ գտնվող 2-3 ջրաղացներում սպանվում են 8-10 քյաթուկցի հայեր: Աղտամում առևտրի գնացած 12-15 խաչենցի հայեր զոհ են գնում թաթարական վայրագություններին[2]:

Ադրբեջանի պետական ահաբեկչության հետևանքով հայերից մաքրվում է Եվլախ-Աղդամ-Ասկերան-Խանքենդի-Ղայբալի-Թթու ջուր ճանապարհը, որպեսզի զավթիչների զորքերի տեղափոխությունը դեպի Զանգեզուր աննկատելի մնա:

Այս բոլորից հետո Սուլթանովն առաջարկում է Ազգային խորհրդին, որ վերջինս իր համաձայնությունը տա ադրբեջանյան զորք մտցնել *Արցախ*՝ Զանգեզուրի և Բասարքեչարի կողմից Հայաստանի Հանրապետության ծրագրած հարձակումները դիմագրավելու համար:

Փետրվարի 19-ին՝ Խանքենդու կոտորածից երեք օր առաջ, Սուլթանովը թիվ 1927 գրությամբ Ազգային Խորհրդից պահանջում է. «…որպես սկզբունքային հարց՝ քննության դնել *Արցախը* վերջնականապես Ադրբեջանին միացնելը՝ իբր նրա տնտեսական անբաժանելի մաս»[3]:

Այսպիսով՝ Արցախի վերնախավի երկչոտ, անհեռատես և ոչ արժանապատիվ քաղաքականությունը երկիրը կանգնեցրեց անխուսափելի պատերազմի առջև՝ Շուշիի հայության համար բավականին անբարենպաստ պայմաններով: Փետրվարի 28-ին 8-րդ համագումարի՝ Արցախն Ադրբեջանին վերջնականապես միացնելու վերջնագիրը ցույց տվեց հայ վերնախավի անհեռատես իբր դիվանագիտության կրախը:

Ադրբեջանի ուժգին պատրաստություններին զուգընթաց՝ հայոց կողմի տարած աշխատանքների շրջանակը բավականին ուռճացված և իրականությանը չհամապատասխանող է ներկայացված Ա. Միքայելյանի հուշերում: Ըստ նրա՝ գոյություն ունեցող ԻՊ մարմինների անդամների թիվն ավելանում էր, շրջանի կազմակերպողները և գործիչները՝ կրկնապատկվում: Գյուղերում ստեղծվել էին մարմիններ, և կար նորմալ կապ: Ուժեղ պայքար էր սկսվել *(չի նշվում պայքարի գոնե մեկ օրինակ.-Ա.Հ.)* Ադրբեջանի լրտեսների և հատկապես հայ փերեզակների դեմ, որոնք Շուշիից գավառ էին անցնում՝ Բաքվից բերած էժան ապրանքներով, պտտվում գյուղերը, ծախում կամ փոխանակում այդ իրերը, շփման մեջ մտնում գյուղացիների հետ, ծանոթանում ընդհանուր կացությանը, վերադառնում քաղաք, իրենց հավաքած տեղեկությունները հաղորդում Սուլթանովին[4] :

Առաջ էին տարվում պահեստների պատրաստությունները: Հրահանգված էր տեղական ԻՊ մարմինների միջոցով հրավիրել գյուղի ունևորներին ու համակիրներին և նվազագույն քանակությամբ, առանց պարտադրելու, կամավոր կերպով, ցորեն, ալյուր, գարի և խոտ հավաքել՝ աղքատների և ԻՊ մարմինների առօրյա հոգսերի համար: ԻՊ մարմինները միաժամանակ պարտավոր էին ցորենը աղալ

[1] Հայրենիք 1923, յուլիս, № 9, 118:
[2] Բեհբուդեան 2001, 805:
[3] Հայրենիք 1923, յուլիս, № 9, 118:
[4] Հայրենիք 1923, յուլիս, № 9, 119-120:

և ալյուրի վերածել: Շրջաններում ստեղծվում են կենտրոնավայրեր, որոնք մոտ պիտի գտնվեին ռազմաճակատներին և նախ պիտի արձանագրեին գրաստներ, որպեսզի փոխադրության դեպքում դժվարություններ չծագեին:Պահեստները բավական չէին: Անհրաժեշտ էր մտածել նաև դեղորայքի մասին, որի կարիքն այնքան զգալի էր, և որ կենսականորեն անհրաժեշտ պիտի լիներ ապագա հավանական ընդհարումների ընթացքում: Անհրաժեշտ էր Շուշիից, Աղդամից և այլ վայրերից դեղորայք գնել և փոխադրել գավառ: Այդ գործը հանձնարարված էր բժշկական ուսանողներից մեկին, որ միաժամանակ Արցախի ԻՊ կենտր. մարմնի անդամ էր:

Բավական ուշադրություն էր դարձվում **ծխախոտի և աղի** վրա: Անհրաժեշտ էր կապ պահպանել թաթարական առևտրական կենտրոնների հետ և դրամով կամ ցորենով փոխանակել: Ադրբեջանի պատրաստություններն առաջ են բերում տենդային (՞) աշխատանքներ հայ գյուղացիության մեջ: Յուրաքանչյուր ոք զգում էր մոտալուտ վտանգը և տեսնում ռազմագործողությունների ուրվականը: Եռանդուն կերպով տեղի են ունենում թյուրքերից փամփուշտի և հրացանների գնում: Ինքնաբերաբար և կազմակերպված*(՞)* կերպով խմբեր են անցնում Զանգեզուր՝ ռազմամթերքի տեղափոխության համար: Այնուամենայնիվ տասնյակ հազարավոր փամփուշտներ չէին բավականացնում ՝ որևէ լուրջ կռվի ժամանակ դիմագրավելու թշնամուն՝ եթե Զանգեզուրի կողմից զինվորական օժանդակություն չհասներ մեզ[1]: *(Այլ ականատեսների վկայություններից կարելի է դատել, որ լավ կազմակերպելու դեպքում եղած ռազմամթերքը բավարար էր և մի բան էլ ավելի: Ծավալված մարտերը վկայեցին, որ չկար զինամթերքի նկատմամբ խնայողական վերաբերմունք, քանզի որպես կանոն շատ էին աննպատակ կրակոցները: Ադրբեջանա-արցախյան 1988-1994 թթ. և 2016 թ. ապրիլյան պատերազմների փորձն էլ նույնն է վկայում[2]):*

Արսենը խոստովանում էր, որ ինքնապաշտպանության գործը սկսվել է ուշացումով: Շուշիում բավականին ուշ սկսեցին զգալ գալիք վտանգը: Շուշիի հայ վերնախավը մատնվել էր խուճապի, սակայն ինքնակազմակերպվելուն խանգարում էին գաղութարարների կամակատարները[3]:

Ըստ Միքայելյանի՝ հայ քաղվերնախավի երկվությունը մեծապես վնասեց *Արցախի* ԻՊ գործին: *Ավելացնենք, որ Արցախի ԻՊՄ-ի անվճռականությունը թույլ տվեց Սուլթանովին նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը և թելադրել դեպքերի հետագա ընթացքը: Շուշիի մեջ ՀՀ-ն կողմնակիցներն անկարող գտնվեցին արդյունավետ ԻՊ աշխատանքներ կատարելու, թեև Հայոց թաղի թաղամասերն ունեին պաշտպանվելու հարմար դիրքեր և հնարավորություններ՝ մահմեդական թաղամասի ակտիվությունը ճնշելու և այն լրիվությամբ վերացնելու համար:*

Գավառի գործիչները համոզված էին, որ անհրաժեշտ է *Արցախը* միացնել ՀՀ-ին և երկիրն ազատել անորոշ և անկանոն վիճակից: *(Այսօր էլ, Ռուսաստանի և ԱՄՆ-ի ծավալապաշտության նկատելի աճի պայմաններում, նման տրամադ-*

[1] Բեհբուդեան 2001, 806:
[2] 2020 թ. 44-օրյա պատերազմում վիթխարի քանակությամբ զենք ու զինամթերք թողնվեց ոսոխին, ինչին կանդրադառնանք այն դեպքում, երբ կատարվեն անհրաժեշտ ուսումնասիրություններ:
[3] Հայրենիք 1923, յուլիս, № 9, 120:

ությունն Արցախի Հանրապետությունում գնալով ակտիվանում են.-Ա.Հ.): Նրանց մի մասը ՀՀ կառավարությունից պահանջում էր ավելի վճռական լինել: Դժվարությունը կապում էին գարնան եղանակի հետ, երբ Զանգեզուրի և *Արցախի* միջև գտնվող Հագարի գետը կարող է հորդել և դժվարացնել ակնկալվող օժանդակությունը: Ուստի այդ մտավորականները առաջարկում էին **մինչև գարուն լուծել *Արցախի* հարցը**[1]**:** *Միքայելյանի այս վկայությունը հերքում է ադրբեջանական քաղաքական գործիչների և նրանց ջրաղացին ջուր լցնող հայ պատմաբանների այն թեզը, որ Շուշիի հայերի մարտի 23-ի ցեղասպանությունն իբր հայկական ապստամբության պատասխանը և հետևանքն էր:*

Գյուղացիությունը ավելի արմատական էր տրամադրված և *արդարացիորեն* ձգտում էր փոխվրեժի Խանքենդու դեպքերի համար: Կար մտադրություն հարձակվելու թաթարական Մալիբեկլու և Ավդալ-Գյուլափլու գյուղերի վրա: Մթնոլորտը էլեկտրականացած էր և ԻՊՄ-ն *տարերային շարժմանը կազմակերպված ընթացք տալու և ղեկավարելու փոխարեն* զսպում էր այն՝ մոտալուտ համագումարի պատճառաբանությամբ և սպասում ավելի պատեհ առիթի[2]: *(Ակնհայտ է, որ ժողովրդին համակող ոգևորության պահը ձեռքից բաց թողնվեց.-Ա.Հ.):*

1920թ. փետրվարի 22-ից մարտի 4-ը Շոշ գյուղում տեղի է ունեցել Արցախի հայության 8-րդ համագումարը: Շուշիի կուս. ներկայացուցիչները չկարողացան համաձայնության եզր գտնել համագումարի տեղի մասին: Սուլթանովը սպառնում էր և հրահանգում, որ ներկայացուցիչները հավաքվեն Շուշիում՝ խոստանալով պատգամավորների անձեռնմխելիություն և խոսքի կատարյալ ազատություն:

Երկու օր շարունակ տեղի են ունենում անարդյունք բանակցություններ գավառի և քաղաքի միջև: Քաղաքի 50 ներկայացուցիչներից 7-8 հոգի գնում են Շոշ գյուղ: Շոշի համագումարը վերջին նիստին ունենում է 96 պատգամավոր, և բանաձևերն էլ անցնում են միաձայն[3]: Շուշիի համագումարի *անջատողականները* 23 ձայնով «վճռում են Արցախը համարել Ադրբեջանի անբաժան մասը, որի վրա հենվելով, Ադրբեջանի ԶԼՄ-ները պահանջում էին «ժողովրդի արտահայտած կամքի» համաձայն *Արցախը* միացնել Ադրբեջանին: Ըստ երևույթին էլ, 1920 թ. այս որոշումն էլ հիմք է դարձել Արցախը Ադրբեջանի կազմում թողնելու՝ որպես ինքնավար մարզ:

Սակայն Արցախի 8-րդ, *օրինական* համագումարը ընդունել է հետևյալ բանաձևը.

«1919 թ. օգոստոսի 15-ին, Ղարաբաղի հայ ժողովրդի ամբողջ ներկայացուցչությունը 7-րդ համագումարում, մանրամասն քննելով Ղարաբաղի քաղաքական վիճակը, այն իրավական հողի վրա էր կանգնած, որ վիճելի երկրամասերի՝ այս կամ այն պետության հետ վերջնականապես կցվելու խնդիրը կախված է վեհաժողովի որոշումից, և հետևապես իզուր արյունահեղության տեղիք չտալու և հարևան ժողովրդի հետ խաղաղ համակեցության համար անհրաժեշտ է կյանքի այնպիսի

---

[1] Հայրենիք 1923, սեպտեմբեր, № 11, 110:
[2] Բեհբուդեան 2001, 808:
[3] Հայրենիք 1923, սեպտեմբեր, № 11, 111:

ճանապարհ գծել, որ երկու ժողովուրդներն էլ համերաշխ և հանգիստ ապրեն:

Այդ հիման վրա Արցախի հայության 7-րդ համագումարը, Ադրբեջանի կառավարության ներկայացուցիչների հետ որոշ հասկացողության գալով, մշակեց 26 կետից բաղկացած ժամանակավոր համաձայնության մի կանոնագիր: Հայ ժողովրդի ներկայացուցչությունն այն հույսն ուներ, թե այդ համաձայնությամբ երկու ժողովուրդներն էլ հաշտ ու համերաշխ կապրեն համատեղ առանց աչառության, Ադրբեջանը երկու ժողովուրդներին էլ համահավասար վերաբերմունք ցույց կտա և կարգ ու կանոնը կպահպանի:

8-րդ համագումարի՝ Շոշում հավաքված պատգամավորները դժբախտաբար ստիպված են մատնանշել այն տխուր և միանգամայն ցավոտ հանգամանքը, որ համաձայնությունը կայացնելուց մինչև այսօր Ադրբեջանի կառավարությունը ոչ մի կարգ ու կանոն չկարողացավ պահպանել Արցախում, այլ ընդհակառակը պատճառ եղավ անիշխանության:

«…» Ժամանակավոր համաձայնության ամենագլխավոր կետերը խախտված են Ադրբեջանի կառավարության կողմից: Առաջին կետը պարզ ասում է. «Ներկա ժամանակավոր համաձայնությունը ընդունվում է կողմերից մինչև այդ հարցի որոշումը խաղաղության վեհաժողովում, որի որոշումը պարտադիր է երկու կողմերի համար էլ»: Մինչդեռ Արցախի ժամանակավոր գեներալ-նահանգապետն իր սույն տարվա փետրվարի 19-ի գրությամբ, թիվ 1927, հանուն Շուշիի Ազգային խորհրդի, հայտնում է հետևյալը. «… օրակարգի իբրև առաջին կետ, կխնդրեմ քննության դնել *Արցախի* հարցի քաղաքական մասը՝ միանալու Արցախը Ադրբեջանի հետ, իբրև նրա տնտեսական անբաժանելի մասը»[1]:

«…» Ժամանակավոր գեներալ-նահանգապետ Սուլթանովը սույն թվի փետրվարի 14-ի՝ Ազգային Խորհրդի, իր խորհրդի հայ անդամների և հայ ինտելիգենցիայի ներկայացուցիչների պաշտոնական խորհրդակցության մեջ «…» արտահայտվել է.

«Ինչպես կնայի Ազգային խորհուրդը *Արցախի* ապագայի վրա: Խաղաղության վեհաժողովն արդեն գոյություն չունի. Ֆրանսիան և Իտալիան չեն կարող իրենց ապուրը եփել, ուր մնաց մեր կերակուրը, և մենք ինքներս պետք է դուրս գանք այս աննորմալ դրությունից»:

«…» Հասկանալի է, որ Սուլթանովը «…» խախտում է մեր պայմանների հենց առաջին կետը: Համաձայնության 7-րդ կետն ասում է. «Միջազգային բնույթ կրող բոլոր սկզբունքային հարցերը չեն կարող կիրառվել՝ առանց Խորհրդի նախնական քննության»: «…» Փետրվարի 18-ի դրությամբ ժամանակավոր գեներալ նահանգապետ Սուլթանովը Շուշիի Ազգային խորհրդին «…» առաջարկում է «…» Արցախի վիճակը ընդմիշտ կապել Ադրբեջանի հետ:

«…» Հետևապես և ամբողջապես խախտված է համաձայնության կետը:

Համաձայնության 15-րդ կետը հետևյալն է. «Զինվորական մասերը բնակվում են Խանքենդում և Շուշիում՝ խաղաղ ժամանակվա կազմով», բայց ամբողջ ամսվա ընթացքում այդ կետը չի պահպանված: Զանգեզուրի դեմ երկու անգամ արշավելու դեպքում թէ՛ Խանքենդ և թէ՛ Շուշի են մտել մի քանի գնդեր, որոնք եկել

[1] Հայրենիք 1923, սեպտեմբեր, № 11, 112:

են Գանձակից, Բաքվից և Զաքաթալայից: Եվ այդ գնդերը ահագին հուզում են առաջ բերել Արցախի ժողովրդի մեջ:

16-րդ կետն ասում է. «Զորական բոլոր տեղափոխությունները **Լեռնային Ղարաբաղի** շրջանում՝ Շուշիի, Ջիվանշիրի և Ջիբրայիլի գավառներում, որոնք հայերով բնակված են, կրնան տեղի ունենալ Խորհրդի անդամների երկու երրորդի համաձայնությամբ»: Համաձայնության այս կետը հիմնովին խախտված է՝ սկսած 1919 թ. հոկտեմբեր ամսից մինչև այժմ: Ադրբեջանը մոտ 12 հազար զինվոր է անցկացրել Ասկերանից, Խանքենդուց և Շուշիից, հոկտեմբեր ամսին, դեպի Զանգեզուր, մինչդեռ այսպիսի մի կարևոր խնդիր պետք է քննության առնվեր խորհրդում և որոշվեր ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:

Բացի դրանից Ադրբեջանի կառավարությունը պաշտոնապես հայտնել է Ազգային խորհրդին և Ջիվանշիրի հայ ժողովրդին, որ Ավան-Յուզբաշյանի կալվածքում զորք պիտի կենտրոնացնի. մի հանգամանք, որ միանգամայն խախտում է ամբողջ ժամանակավոր համաձայնությունը:

Արցախի հայության 8-րդ համագումարը, քննության առնելով *Արցախի* ներկա քաղաքական վիճակը և մանրամասն ծանոթանալով բոլոր վերոհիշյալ փաստերին, հետևյալ եզրակացության եկավ.

Լեռնային Ղարաբաղի հայության 8-րդ համագումարը՝ բաղկացած 96 պատգամավորներից՝ Գյուլիստանի, Ջիվանշիրի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի շրջաններից, որը տեղի ունեցավ Շոշ գյուղում, 1920 թ. փետրվարի 28-ից մինչև մարտի 4-ը, մանրամասն և բազմակողմանի քննության առնելով Լեռնային Ղարաբաղի ներկա քաղաքական դրությունը, գտնում է, որ 7-րդ համագումարից հետո (22 օգոստոս, 1919 թ.) Ադրբեջանի կառավարությունը պարբերաբար խախտել է ժամանակավոր համաձայնության ամենագլխավոր կետերը: 8-րդ համագումարը, համաձայն պատգամավորների իրենց ընտրած ժողովրդի տված մանդատի, հետևյալ որոշումները կայացրեց.

1. Ադրբեջանի կառավարությունը պարբերաբար խախտել է *Արցախի* ժամանակավոր համաձայնության ամենագլխավոր կետերը.

2. 1920 թ. փետրվարի 22-ին Խանքենդում, Ասկերանում և Շուշի-Եվլախ խճուղու վրա կառավարության զորքերի և ագենտների ձեռքով ակնհայտ նպատակով կոտորվել են մի քանի հարյուր հայեր, թալանվել են Խանքենդու հայերի բնակարանները և տարվել նրանց ունեցվածքը.

3. 8-րդ համագումարը, հավատարիմ մնալով 7-րդ համագումարի որոշումներին և երկուստեք ստորագրված ժամանակավոր համաձայնությանը, մինչև վեհաժողովի վերջնական որոշումը Արցախի և առհասարակ Անդրկովկասյան հանրապետությունների սահմանների վերաբերյալ, պահանջում է Ադրբեջանի կառավարությունից ժամանակավոր համաձայնության կետերի ամբողջական կիրառումը կյանքի մեջ.

4. Վճռականապես բողոքում է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առաջ՝ Խանքենդում, Ասկերանում և Շուշի-Եվլախ խճուղու վրա տեղի ունեցած անլուր կոտորածների առթիվ և կոչ է անում քաղաքակիրթ աշխարհի խղճին՝ վերջ տալու Ադրբեջանի նման քաղաքականությանը.

5. Հայտնում է, որ նման դեպքերի կրկնությունը կստիպի Արցախի հայությանը իր կյանքի և պատվի պաշտպանության համար համապատասխան միջոցների դիմել.

6. Միաժամանակ 8-րդ համագումարը կոչ է ուղղում Ադրբեջանի թյուրք գյուղացիությանն իր բողոքի ձայնը միացնելու Արցախի հայության բողոքին, ինչպես նաև դիմում է անում մամուլին.

7. Եվ վերջապես որոշում է այս բանաձևի պատճենը ուղարկել դաշնակից պետությունների Անդրկովկասի ներկայացուցիչ Հասկելին, դաշնակից պետությունների դիվանագիտական և զինվորական ներկայացուցիչներին, ինչպես նաև Արցախի ժամանակավոր գեներալ-նահանգապետին:

Նախագահ Ղարաբաղի հայության 8-րդ համագումարի՝ Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Մարտի 6, 1920թ.[1]:

Յոթերորդ կետը XIX դարի վերջի հայ քաղաքական ուժերի կողմից որդեգրած կործանարար՝ Եվրոպայի ուշադրությունը հայկական հարցի վրա հրավիրելու ոչ իրատեսական գործելաոճի շարունակման արտահայտությունն էր: Ցանկալի էր, որ համագումարի 3-րդ և 5-րդ կետերը լրացնեին իրար և լինեին ավելի արմատական, օրինակ. Սուլթանովն ու նրան ենթակա զինված կազմավորումները համարվեին օրենքից դուրս, ընտրվեր Արցախի հեղափոխական կառավարություն, հայտարարվեր համընդհանուր զորակոչ, և մտցվեր արտակարգ դրություն:

Ծանոթանալով 8-րդ համագումարի որոշումներին՝ Սուլթանովն անցավ ավելի վճռական գործողությունների: Մարտի 1-ին Սուլթանովի հատուկ հրամանով ցուցակագրվում են *աշխարհամարտին մասնակցած շուշեցի* հայ սպաներն ու *վետերանները,* և արգելվում է նրանց անցնելը դեպի գավառ[2]: *Հրամանից կարելի է եզրակացնել, որ Սուլթանովն ուներ իր լրտեսները նաև Արցախի ԻՊ մարմնում, որը գաղտնի հրահանգել էր Շուշիի ԻՊ մարմնին աշխարհամարտի սպաներին ուղարկել գավառ, որպեսզի նրանք ստանձնեն գործուն դեր ԻՊ կազմակերպմանը:*

Մարտի 4-ին Խ. Սուլթանովի նախաձեռնությամբ ադրբեջանական բանակի սպաների և 2-3 ուղեկցող զինվորների տեղավորումը հայերի կարևոր դիրք ունեցող տների մեջ նշանակում էր Շուշիում վերսկսել ադրբեջանական զավթիչների չհայտարարված պատերազմը: Ուժեղացվում է նաև հայկական թաղի թյուրք ոստիկանների կազմը[3]: Մարտի 7-13-ին *Ադրբեջանի ծավալած պետական ահաբեկչության հետևանքով* Խանածախի ճանապարհին սպանվում են 6, Եվլախ-Շուշի խճուղում՝ 10, *Շուշի-Հունտ սայլուղու* Հարամ Ջուր կոչվող վայրում՝ 2, Քարին Տակ գյուղի ճամփին՝ մեկ քարինտակցի հայեր: Մարտի 8-9-ին Շուշի քաղաքից գաղտնի հեռանում են էսէռների պարագլուխ Արսո Հովհաննիսյանը և ՀՅԴ-ական Հով. Ստեփանյանն իրենց ընտանիքներով՝ բավական խուճապ առաջացնելով ժողովրդի մեջ: Մարտի 12-ին Սուլթանովը Շուշի է մտցնում հաճի-սամլվեցի 150 *քուրդ գրոհայինների* ՝ ահաբեկելով հայ բնակչությանը:

Մարտի 13-ին Սուլթանովը հատուկ հրահանգ է ուղարկում *Արցախի* հայ-

[1] Յառաջ 2020, 4 ապրիլի, № 71 (Ամբողջական տեքստը՝ https://www.aniarc.am/2020/03/06/karabakh-armenians-8th-congress-1920-text/), հմմտ.՝ Հայրենիք 1923, սեպտեմբեր, № 11, 112-114:

[2] Բեհբուդեան 2001, 813:

[3] Հայրենիք 1923, սեպտեմբեր, № 11, 116:

կական շրջանի հայ ոստիկանապետներին, որ իրենց ոստիկաններով կազմ ու պատրաստ վիճակի մեջ մարտի 23-ին քաղաք գան՝ նահանգապետի տոնը շնորհավորելու[1]: Այս հրահանգը ժամանակակիցներն էլ են դիտարկել իբրև որոգայթ՝ գավառի հայ զինված ոստիկանությունը՝ թվով 250 հոգի, զինաթափելու, ձերբակալելու և *ոչնչացնելու* համար: *Հրահանգը և մարտի 23-ին Շուշի մտնող ոստիկանական խմբի գնդակոծումը ադրբեջանական կայազորի կողմից վկայում են, որ քաղաքի բնիկ հայերի ցեղասպանությունը նախօրոք ծրագրված էր, և ապստամբության տեսությունը հորինված էր այն արդարացնելու համար:*

Միաժամանակ Սուլթանովը հրահանգում է Մուսուլմանլարի կայազորի պետին «հողի երեսից մաքրել Խծաբերդ, Տումի և Հին Թաղեր գյուղերը (հայաշատ և ռազմունակ գյուղեր, որոնց միջոցով Արցախի հայությունը կապ էր պահպանում Զանգեզուրի հետ)[2]:

Այսպիսով՝ մինչ ԻՊՄ-ն խաղաղ կերպով առաջ էր տանում ԻՊ աշխատանքները, Ադրբեջանի կառավարությունը նախապատրաստական զինվորական ցույցեր էր կատարում *Արցախում*, Օրտուբաթի կողմից՝ Զանգեզուրի ուղղությամբ և ՀՀ ներսում՝ թաթարական ապստամբությամբ: Այդ բոլորը նշաններ էին, որ պատրաստություն է տեսնվում *լայնածավալ պատերազմով զավթելու Արցախն ու* Զանգեզուրը:

Արցախի ԻՊ կենտր. մարմնի որոշմամբ հետևյալ *կանխարգելիչ և* անհրաժեշտ քայլերն արվեցին.

ա) Մասնակի սպանությունների, թաթարական ավազակային խմբերի գործունեության առաջն առնելու և Ադրբեջանի հանկարծակի հարձակումները կանխելու նպատակով գիշերային պահակներ նշանակվեցին գյուղերի և կարևոր ճակատների ապահովության համար, բ) մի քանի կարևոր կենտրոնների մեջ կատարվեցին զինվորական համախմբումներ: գ) 1918 թ. թուրքական արշավանքի ժամանակ Մմնա գյուղի ձորում թուրքական զորագնդից խլված թնդանոթները Տումիից տեղափոխվեցին Սարուշեն, ուր վարպետը օրն ի բուն աշխատում էր դրանց վրա: դ) Շուշիի մեր ներկայացուցիչների ջանքերի շնորհիվ գավառ տեղափոխվեց մի տպարան և հիմք դրվեց «Ղարաբաղի Լրաբեր»-ի, որ վերանվանվեց «Ազատ Ղարաբաղ» օրաթերթի, շատ փոքրիկ ծավալով, ժողովրդին տեղյակ պահելու ստեղծված կացությանը, պայքարելու տարածվող և էլեկտրականացնող սադրիչ լուրերի ազդեցության դեմ: ե) Զինվորական ներկայացուցիչների հատուկ խորհրդակցության մեջ, որին մասնակցում էր և քաղաքի ԻՊ Մարմնի անդամ զինվորական գլխապետ Յ. Ս.-ն, որոշվում է, **կռվի պարագայում** *(ևս մի փաստ, որ ապստամբության տեսությունը սնանկ է. - Ա.Հ.)* ուժերը դասավորել հետևյալ կերպով.

Ասկերան: Ղազարը, Խաչենի և Քյաթուկի շրջանի 250 զինվորներով, պիտի գրավեր և պաշտպաներ Ասկերանի կիրճը:

Խանքենդի: Գնդապետ Զ. Մ. 450 զինվորներով պիտի գրավեր Խանքենդին, որտեղ կենտրոնացած էր թաթարական մի զորագունդ և բավական թվով ռազ-

---

[1] Բեհբուդեան 2001, 814:
[2] Հայրենիք 1923, սեպտեմբեր, № 11, 116:

մամթերք: Միաժամանակ 100 հոգի պիտի գրավեին Ղայբալի գյուղի բարձունքները՝ արգելելու *Հաջի Սամլուի* կողմից թյուրքերի հարձակումը[1]:

Մարտակերտի և Թարթառի շրջանում, 350 զինվորով, գլխապետ Յ. Տեր-Մարտիրոսյանը, պիտի հսկեր այդ շրջանի ադրբեջանական զինվորների շարժումները: Խծաբերդի շրջանի 450 զինվորներ՝ գլխապետ Հ. Ստեփանյանի հրամանատարությամբ, պարտականություն ունեին կապ պահպանելու Զանգեզուրի հետ և գրավելով որոշ դիրքեր՝ նպաստելու հայկական զորքերի առաջխաղացմանը: *(Պարզորոշ երևում է, որ Արցախի ԻՊ մարմինը նախահարձակ մարտավարություն չէր որդեգրել և ամբողջ հույսը դրել էր Զանգեզուրից սպասվող զորքերի հարձակման վրա: Եվս մի կռվան է ապստամբության ադրբեջանական վարկածի դեմ):*

Զանախչու գումարտակը՝ 500 հոգի, գլխապետ Ն. Ա.-ի ղեկավարությամբ, պիտի կտրեր դեպի Զանգեզուր տանող խճուղին և պաշտպաներ Շուշիի թիկունքը[2]: *Այս զորաշարժին կարելի էր հատկացնել ընդամենը 150-200 հոգի,իսկ մնացած 300 հոգին անհրաժեշտ էր Քարինտակի արահետով մտցնել Շուշի: Նման մարտավարության դեպքում սուլթանովականները ստիպված կլինեին անցնել քաղաքի մահմեդական մասը, և հայ բնակչությունը կփրկվեր ցեղասպանությունից:*

Շուշիի ԻՊ մարմնի տվյալներով զենքի տակ կային 120 երիտասարդներ և 40 ոստիկաններ: (*Մարտի 23-ին այդ ուժերի գործողությունների մասին ոչինչ հայտնի չէ. - Ա.Հ.*): **Անհրաժեշտ էր, սակայն, դրսից օգնություն հասցնել քաղաքին՝ ավելի ապահովելու համար: Այդ նպատակով Վարանդայի երկու ոստիկանապետները 45-ական զինված ոստիկաններով և 160 զինված գյուղացիներով պիտի գաղտնի ներս մտնեին քաղաք՝ Ն. Ա.-ի հսկողությամբ: Այդ ամբողջ զինված ուժերը՝ թվով *410 հոգի*, պիտի գտնվեին քաղաքի ԻՊ մարմնի և ոստիկանապետ *Ավետիս Տեր-Ղուկասյանի* հրամանի տակ[3]:** *Ռազմավարական սխալն ակնհայտ է: 250 զինյալների՝ Երևանյան մուտքով, ադրբեջանական զինվորների կողմից գրավված զորանոցի մոտով Շուշի աննկատ մտցնելն անհնարին էր: Նպատակահարմար էր դրանց մի մասը Կաշկառով և Քարինտակի արահետով մտցնել Նոր, Մելիքենց,Մեղրեցոց և Բարութխանայի թաղերը և վնասազերծել հայերի տներում գտնվող սպաներին ու զինվորներին: Որից հետո կարելի էր մոտենալ զորանոցին՝ վերևից կրակի տակ պահելով այն, աջակցել Երևանյան մուտքով մտնողներին: Համենայն դեպս այս դեպքում զորանոցից դուրս գալու ադրբեջանական կայազորի ցանկացած փորձ կդատապարտվեր անհաջողության:*

Այդ ակտիվ ուժերից զատ, որոնց թիվը հասնում էր մոտ 2500 հոգու, կային նաև մոտ 500 զինվոր Գյուլիստանի, Ղզղալայի և այլ շրջաններում:

Փաստորեն Արցախի ԻՊ մարմինը 2,5 ամսվա ընթացքում Արցախի զինվորական ուժը հասցրել էր 3000 հոգու, որը, պատկառելի թիվ լինելով, բավական չէր «միայնակ որոշ քայլերի դիմելու»՝... առանց Զանգեզուրի օգնության[4]:

[1] Բեհբուդեան 2001, 815:
[2] Հայրենիք 1923, սեպտեմբեր, № 11, 118:
[3] Բեհբուդեան 2001, 816:
[4] Հայրենիք 1923, սեպտեմբեր, № 11, 118:

Ասվածը նորից հաստատում է,որ ապստամբության վարկածը կոչված է եղել քողարկելու 1920 թ. մարտի 23-ին Արցախի դեմ սկսված ադրբեջանական բացահայտ ինտերվենցիան: Արցախի ԻՊՄ-ում չկային ոչ Նիկոլ Դումաններ, ոչ Խանասորի Վարդաններ և ոչ էլ Համազասպներ, որոնք փոքր և հաջող ռազմագործողություններով ոգևորեին և ապստամբության մղեին ժողովրդին: Զինվորականության թիվը նվազ ներկայացնելու միտումն էլ Միքայելյանի մոտ ակնհայտ է, որը հակասում Ստ. Շահումյանին և զոր. Անդրանիկին 15-20 հազարանոց զորք տրամադրելու այն ժամանակվա իշխանությունների պատրաստակամությանը: Արցախի ԻՊ մարմնի մեջ հավաքվածները Տոնավարզի *խորհրդակցության անունից դիմեցին* զանգեզուրցիներին՝ շեշտելով, որ առանց Զանգեզուրի օգնության « որևէ լուրջ կռվի ատեն *Արցախն* անկարող է երեք օրեն ավելի դիմադրել: Ուստի և խնդրեցինք պատրաստ ըլլալ՝ մեզ օժանդակելու համար»[1]: *Ինչպես զոր. Անդրանիկի արշավանքի, այնպես էլ հետագա իրադարձությունների ժամանակ մենք չենք նկատում Արցախի գործիչների ակտիվ ռազմավարական որևէ գործողություն: Իսկ առանց դրա հնարավոր չէր պայքարել Ադրբեջանի զավթողական ծրագրերի դեմ, որի մասին վկայում են 1988-1994 թթ. Ադրբեջանա-արցախյան պատերազմի ռազմաճակատներում տարած մեր փառավոր հաղթանակները: Երևի նշված հանգամանքը նկատի առնելով է, որ* Ա. Միքայելյանը Արցախի ԻՊ-ն ստանձնածներին թուլամորթ և անգործունյա է համարում: Զանգեզուրից հուսադրեցին, « որ իրենք ամեն պատրաստություն տեսած են՝ Արցախին օգնության հասնելու, որ որոշ ուղղությամբ իրենք էլ ուժեր են կենտրոնացնում: Հրահանգում էին մեր ուժերն էլ կենտրոնացնել և հատկապես ուշադրություն դարձնել Ասկերանի վրա»[2]:

Արցախը զինաթափելու և վերջնականապես գրավելու նպատակով 1920 թ. մարտի 23-ին Ադրբեջանը լայնածավալ ագրեսիա սկսեց: Ֆիզիկական բնաջնջումից փրկվելու համար արցախցիներն անցան տարերային ինքնապաշտպանական կռիվների:

Կռիվների ղեկավարությունը կենտրոնացած չէր մեկ անհատի ձեռքում. պարենավորման ընդհանուր վարիչն էր Հարություն Թումյանը (որը հետո Ասկերանի շտաբի վարիչն էր), Վարանդայի պարենավորման վարիչներ՝ Բյուզանդ Վարդապետ, Մարտիրոս Արզումանյան և Դանիել Առաքելյան (վերջինս հետո հիսուն հոգով միացավ Ղազարին): Կղարծի-Հացի-Ղզղալայի շրջանի պարենավորման վարիչ՝ Խաչատուր Մելքումյան, Դիզակի պարենավորման վարիչ՝ Ասլան Շահնազարյան՝ երկու օգնականներով՝ Արմենակ Տեր-Բաղդասարյան և Աբրահամ Աթաբեկյան, Սարուշենի ռազմամթերքի և հետո պարենավորման վարիչ՝ Խաչատուր Եղիազարյան, բժշկական մասի վարիչ՝ Ասատուր Ավետիսյան,Կենտրոնական շտաբի պետ՝ Բագրատ Բարաղամյան: Թնդանոթի հսկող Կոստիա Աթայան, Ճարտար-Սոսի շրջանի պարենավորման վարիչ՝ ճարտարեցի Գևորգ: **Շուշի քաղաքը ենթարկվում է իր ԻՊ մարմնին և Արցախի ԻՊՄ-ի հետ կապ էր պահում Ա. Միքայելյանի միջոցով:**

Աղդամի կողմից սկսված ադրբեջանական ագրեսիան կասեցնելու նպատակով

---

[1] Բեհբուդեան 2001, 816:
[2] Հայրենիք 1923, սեպտեմբեր, № 11, 119:

Ղազարը մոտ 350 զինվորներով Քյաթուկից իջնում և գրավում է Ասկերանի կիրճն ու Խոջալլու կայանը, զինաթափ անում այնտեղի ադրբեջանական կայազորին: Կտրվում է Շուշի քաղաքի հաղորդակցությունը Աղդամի ու Բաքվի հետ:

Մարտի 27-28-ին Ադրբեջանի զորամասերը ուժեղ հարձակում սկսեցին Ասկերանի դիրքերը գրավելու համար, բայց տալով մի քանի հարյուր սպանվածներ՝ նահանջեցին: Ղազարի զինվորները հետապնդում են նրանց գրեթե մինչև Աղդամ: Այնուհետև Ղազարը դիրքեր է փորում և սպասում թշնամու հարձակմանը և հայկական օժանդակ զորամասերի ժամանմանը: Նրա զորամասի թիվը աճում է մինչև 700 հոգու[1]: *(Սա մի անգամ ևս հաստատում է փոքրաթիվ ուժերով և մասնակի հաղթանակներով բնակչությանը ոգևորելու և ինքնապաշտպանության գործում ներգրավելու մարտավարության մեր վարկածի ճշմարտացիությունը.-Ա.Հ.):*

Մարտի 31-ին Սարուշեն է հասնում Զանգեզուրի հայկական զորամասի գնդացրային մի խումբ, որն իսկույն ուղարկվում է Ասկերան: Ապրիլի 1-ին Սարուշեն է հասնում Զանգեզուրի հայկական զորամասի պետ Ա. Թարվերդյանը՝ իր շտաբով և 100 ձիավորներով: Ապրիլի 2-ին նա ճանապարհվում է դեպի Դաշուշեն՝ ուսումնասիրելու Խանքենդին այդ կետից ռմբակոծելու կարելիությունը և ապա՝ գնալու Ասկերան՝ խորհրդակցելու համար Ղազարի և Զ. Մեսյանի հետ[2]:

Ապրիլի 3-ին, առավոտյան ժամը 7-ից Ադրբեջանի զորքերը հարձակվում են Ասկերանի վրա: Թշնամին կիրառում է թնդանոթներ, բայց նրա մի քանի հարձակումներ հետ են մղվում: Կռիվը տեղի է ունենում մոտ 50 քայլ հեռավորության վրա:

«…Ղազարը խնդրում է փամփուշտ հասցնել իրեն: Մոտ 10000 փամփուշտ բարձած ավանակների, ջորիների և ձիերի վրա»… ճանապարհի դժվարությունների հետևանքով Զանգեզուրից ուշ ստացվեց, որն էլ հանդիսանում է «Ասկերանի անկման ամենաողբերգական պատճառներից մեկը»[3]: *Սա ԻՊ մարմնի անհոգության խոստովանություն է: 1918-20 թթ., 1988-1994 թթ. և 2016 թ. ապրիլյան պատերազմներում ադրբեջանական զավթիչների դեմ մղված հերոսամարտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր մարտիկները, աննկարագրելի խիզախություն և տոկունություն ցուցաբերելով հանդերձ, աննպատակ փամփուշտներ շատ էին կրակում, որն էլ պատճառ էր դառնում զինամթերքի սպառմանը: Հայ զինվորը պետք է գիտակցի յուրաքանչյուր փամփուշտի գինը և աննպատակ կրակելու փոխարեն վարժվի «մի գնդակ՝ մի թշնամի» նշանաբանով: Մյուս կողմից՝ 2020 թ. 44-օրյա պատերազմի առանձին տեղամասերում մեր զորքերի ունեցած անհաջողությունների պատճառների նախնական վերլուծությունները ցույց են տալիս, որ կռվելու կամք չցուցաբերած որոշ զինվորականներ արդարացում են գտնում «փամփուշտների սակավության» ավանդական պատճառաբանության մեջ:*

Ասկերանի բերդի ուղղությամբ ընթացող թեժ մարտերի ընթացքում Խաչենի թևի կռվողները սկսում են հետ նահանջել: Ա. Թարվերդյանը, Ղազարի հրահանգի հիման վրա, իր ձիավորներից 50 հոգու ուղարկում է օգնության: *Ադրբեջանա-*

---

[1] Հայրենիք 1923, հոկտեմբեր, № 12, 118:
[2] Բեհբուդեան 2001, 818:
[3] Հայրենիք 1923, հոկտեմբեր, № 12, 119:

կան թնդանոթները ավերում էին *փորված խրամատները և սանրում* Խաչենի մարտիկների շարքերը: Փամփուշտների պակասության պատճառով կռվողները հետ են նահանջում: Ասկերանի ռազմաճակատի կենտրոնը կռվում էր աներեր, որովհետև այնտեղ էին Ղազարը և Զ. Մեսյանը:

Ապրիլի 3-ին՝ երեկոյան մոտ ժամը 4-ին, Զ. Մեսյանը հրահանգում է անմիջապես գրավել երկու բարձունքները՝ կռվողների *անկորուստ* նահանջն ապահովելու համար: *Զավթիչների հեծելազորն* անցնում է հարձակման: Մութը վրա է հասնում Ասկերանի անկումից հետո: Ղազարն ընկնում է հերոսաբար[1]:

Ադրբեջանական բանակի և Խանքենդու 1500 զինվորից բաղկացած կայազորի միացումը կանխելու համար գնդապետ Զ. Մեսյանը, Ալեքսան Դայու և սպա Լալայանի հետ միասին, մոտ 400 զինվորներով, մարտի 22-ի գիշերը շրջապատում է ներկայիս Ստեփանակերտի ադրբեջանական զորանոցը: Զավթիչները շրջապատված պահվել են մինչև ապրիլի 3-ը՝ Ասկերանի անկումը: *Ասկերանի անկման լուրը հուսալքում է* հայ կռվողներին, և նրանք խումբ-խումբ քաշվում են դեպի Խնածախի դիրքերը[2]: Եվլախ-Շուշի խճուղու վրա գտնվող մոտ 10 հայկական գյուղեր ավերվում են ադրբեջանական զավթիչների կողմից:

Դիզակի ռազմաճակատի հրամանատար Հովակ Ստեփանյանը մոտ 450 զինվորներով առաջանում է դեպի Զանգեզուր, գրավում Մուսուլմանլարը: Մարտի 24-ին մեր առաջապահ սուրհանդակները՝ ղարաղշլաղեցի Եղիշի առաջնորդությամբ, հանդիպում են Զանգեզուրի առաջապահներին: *Մարտի 25-ին* գնդապետ Ա. Թարվերդյանը ՝ *500 հետևակով* և *100 ձիավորներով*, 6 թնդանոթով, 12 գնդացիրներով և բավականաչափ փամփուշտներով, թողնում է դիրքերը և անցնում Զանգեզուրի մի այլ ճակատ, որտեղից թշնամու գերազանց ուժերը սպառնում էին Գորիսին[3]:

Շուշիի ԻՊ մարմնի և նախօրոք եղած առաջարկի հիման վրա Արցախի ԻՊԿՄ-ն կատարում է իր վրա դրված պարտականությունները՝ քաղաք ուղարկելով Վարանդայի երկու շրջանի ոստիկանապետներին՝ իրենց զինված ոստիկաններով (90 հոգի), 160 զինված գյուղացիներ՝ Ն. Ա.-ի (*սպա Ներսես Ազիզբեկյանի.-Ա.Հ.*) և Գ.-ի ղեկավարությամբ (ընդհանուր ղեկավարն էր *Աղապարոն Դանիելբեկյանը.-Ա.Հ.):* Քաղաքն այդ կռիվների ժամանակ իր տրամադրության տակ ուներ մոտ 400 զինված կռվողներ, որոնց օգտագործումը կախված էր քաղաքի ԻՊ մարմնից և ոստիկանապետ Ա. Տ. Ղուկասյանի հրահանգներից:

Սակայն ԻՊ մարմինը անգիտակ էր իրերի կացությանը, իսկ Ա. Տ. Ղուկասյանն էլ՝ անտարբեր: Օգնական ու ներսի ուժերը գործում են աներդաշնակ: *(Սա ինքնաարդարացման և արթնացած խիղճը թմրեցնելու թույլ փորձ է. - Ա.Հ.):*

Շուշիում Գարնանամուտի (Նովրուզի) տոնակատարության ժամանակ Բաք-

---

[1] Բեհբուդեան 2001, 819:

[2] Հայրենիք 1923, հոկտեմբեր, № 12, 120: Հովակ Ստեփանյանը անհաջողությունը կապել է Ալեքսան դայու արդեն հանձնված թշնամիների վրա կրակ բացելու և նրա ու սպա Լալայանի սպանվելու հետ (ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 3, թ. 27-28):

[3] Բեհբուդեան 2001, 820, Հայրենիք 1923, հոկտեմբեր, № 12, 121: Պարզ չէ՝ խոսքը ծանր պահին Արցախը թողնելու գնդապետ Թարվերդյանի մասին է, թե ոչ: Եթե այո, ապա նրա ճանապարհը Դիզակի սահմանագլխին փակել է Թևան Ստեփանյանը և պահանջել հետ գնալ ռազմաճակատ (ՀՅԴ ԿԱ, թծ. 1469, գ. 1, թ. 38):

վի 5-րդ գնդի հարբած և թմրանյութերի ազդեցության տակ գտնվող սպաներն ու զինվորները հրդեհել են իրենց բնակած հայերի տները և անկանոն հրացանաձգություն կատարել՝ խուճապի մատնելով քնից արթնացած խաղաղ հայ բնակիչներին:

Ներսես Ազիզբեկյանի գումարտակի և քաղաքի ԻՊ մարտիկները ապահովեցին 8-15000 հայ ազգաբնակչության անվտանգ նահանջի ճամփան՝ Քարինտակի լեռնային արահետով և Հունոտով դեպի Վարանդայի գյուղերը: Այս ժամանակ է, որ տխրահռչակ ադրբեջանական գործակալ Գիգի աղան խուճապի մատնված ժողովրդին հայտարարում է, թե նրանք, ովքեր հավաքվեն Բեկլարյանցի բակում, Սուլթանովը ձեռք չի տա և կապահովի նրանց կյանքը: Մոտ 2-3000 կին, երեխա և այլ անօգնական բնակիչներ հավաքվում են հիշյալ տան բակում՝ իբրև «ապահով» վայրում: Սուլթանովը, դրժելով խոստումը, բանտերն է լցնում իրեն վստահություն հայտնած խաղաղ քաղաքացիներին: Ապրիլի 4-ին՝ Ասկերանի անկումից հետո, Շուշի մտած թյուրք զինվորներն ու գրոհայինները թրատում և կացնահարում են բանտարկվածների մի մասին: Սուլթանովը *չի խնայում նույնիսկ* հայտնի բոլշևիկ և *Արցախը* Ադրբեջանին կցելու ջատագով, քննադատ-գրող Ալ. Ծատուրյանին: Շուրջ 2 հազար պատանիներ ու աղջիկներ բռնի մահմեդականացվում են[1]:

Այսպիսով՝ մարտի 23-ից ապրիլի 4-ը իրականացված՝ Շուշիի հայերի ցեղասպանության հետևանքով 7[2]-12[3] հազար անմեղ հայ մարդիկ մորթվում են և քաղաքի փառաշուք մասից՝ հայկական թաղից մնում են 7 հազար կողոպտված և ավերված տներ՝ 40 հազար մեռյալ պատուհաններով[4]:

3. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՇՈՒՇԻԻ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Շուշիի կործանումից հետո Գյուլիստանի, Ջիվանշիրի և այլ ճակատների վրա մղվում էին տեղական բնույթի կռիվներ: Ապրիլի 4-ին Տոնավարզ գյուղում տեղի է ունեցել մի խորհրդակցություն, որին մասնակցում էին Հ. Թումյանը, Ա. Թարվերդյանը, Զ. Մեսյանը, Կ. Աթայանը, Ա. Ավետիսյանը, Ա. Միքայելյանը և այլք: *Ընդունվել է* հետևյալ որոշումը.

ա) գնդապետ Թարվերդյանին ճանաչել Արցախի զինված ուժերի հրամանատար,

բ) շարունակել ԻՊ կռիվները:

Խորհրդակցությունից հետո ամրացվում են ռազմաճակատները, և կազմակերպվում Զանգեզուրից փամփուշտի փոխադրության գործը: Ապրիլի 4-5-ին երկու կողմերն էլ պատրաստություններ են տեսնում. Ադրբեջանը՝ հարձակման, իսկ Արցախը՝ ինքնապաշտպանության համար:

Ապրիլի 6-7-ին Շուշիից թաթարները սկսում են ռմբակոծել Շոշ և Քարինտակ

---

[1] Հայրենիք 1923, հոկտեմբեր, № 12, 121-122:
[2] Լեո 1925, 438:
[3] Шагинян 1927, 38:
[4] Ուլուբաբյան 1994(1), 79-80:

գյուղերը: Ադրբեջանի բանակը կատաղի հարձակման է անցնում Դաշուշենի ուղղությամբ: Թշնամու գերակշիռ ուժերի դեմ մղված համառ կռիվներից հետո ապրիլի 8-ին մեր զորքերը նահանջում են Տռնավարզի դիրքերը[1]:

Ապրիլի 9-ի առավորտյան 7-ից մինչև երեկոյան 7-ը տեղի ունեցած օրհասական կռիվների ընթացքում *մեր զորքերը,* չնայած փամփուշտի պակասությանը, *հետ են մղում թշնամու բոլոր հարձակումները* Տռնավարզի դիրքերի վրա: Ապրիլի 11-ին հետ մղվեց թշնամու *վերջին խոշոր հարձակումը*: Գիշերը ժամը 11-12-ի կողմերը 20 մարտիկներ, գնդապետ Զ. Մեսյանի գլխավորությամբ, գաղտնագողի մոտենում են Սզնեքի բարձունքներում գտնվող թաթար զինվորների դիրքերին և հարձակվում թշնամու խրամատների վրա[2]: Գիշերային խելահեղ այդ հարձակումը անակնկալի է բերում զավթիչներին և ստիպում նրանց ճողոպրել դեպի խճուղի և Շուշի: *Մեր զորքերը որպես ռազմավար* վերցնում են բավականաչափ փամփուշտներ և մեկ գնդացիր:

Փոքրաթիվ ուժերով գերակշիռ զավթիչների դեմ պայքարում հաջողության միակ գրավականը գիշերային հարձակումների մարտավարության որդեգրումն է: 1988-1994 թթ. պատերազմի փորձն էլ ցույց է տվել դրա առավելությունները: Նման մարտավարությունը թույլ է տալիս լուծել ամենաբարդ խնդիրներ և խուսափել անտեղի զոհեր տալուց:

Դժբախտաբար տարածաշրջանային անբարենպաստ զարգացումները խանգարում են հայկական ուժերին ազատագրելու Շուշին: Կովկասում տեղի են ունենում զինվորական և քաղաքական խոշոր դեպքեր. Դենիկինը պարտվում է, և բոլշևիկյան Ռուսաստանի զորքերը *մոտենում են Ադրբեջանի սահմաններին*:

Ապրիլի 17-ին Արցախ մտած Դրոյի[3] *զինվորների աչքի առջև բացվեցին շուրջ 20 օր տևած ռազմական գործողությունների ահավոր հետևանքները.* Գյուլիստանի շրջանի ռազմաճակատային մի քանի հայ գյուղեր դատարկվել էին, իսկ ազգաբնակչությունը գաղթել էր դեպի անվթար և ապահով Ջիվանշիր: Խաչենի մոտ 10 գյուղերի բնակչությունը տեղափոխվել էր Վանքի շրջանը: Վարանդայի առաջին շրջանի գյուղերից Քարինտակը, Շոշը և Քարաշենը գտնվում էին թշնամու ձեռքում: Վարանդայի երկրորդ շրջանը մնացել էր ապահով: Շուշի քաղաքի հայկական մասը այրվել և ավերվել էր,իսկ Դիզակը մնացել էր կանգուն: Բազմաթիվ գաղթականներ հացի և բնակարանի կարիք ունեին: Զինվորական ուժերը կազմալուծված վիճակում էին, և միայն Թարվերդյանի զորամասը կար իբրև ատաղձ ապագա զինվորական կազմակերպության համար[4]:

Դրաստամատ Կանայանը, մի քանի խորհրդակցություններից հետո, կազմակերպեց քաղաքացիական իշխանություն՝ հետևյալ կազմով. Ա. Շահնազարյան՝ վարիչների խորհրդի նախագահ, Ա. Ավետիսյան՝ ներքին գործոց վարիչ, բժ. Տեր-Գրիգորյան՝ առողջապահական մասի վարիչ, Խ. Մելքումյան՝ պարենավորման վարիչ, Հար. Թումյան՝ գաղթականության մասի վարիչ, Արշ. Քամալյան՝ գյուղատնտեսության վարիչ, Գր. Ղարագյոզյան՝ լուսավորության վարիչ. Ա. Միքա-

[1] Հայրենիք 1923, հոկտեմբեր, № 12, 122:
[2] Բեհբուդեան 2001, 821:
[3] Հայրենիք 1923, հոկտեմբեր, № 12, 123:
[4] Բեհբուդեան 2001, 823:

յելյան՝ քաղաքացիական ու զինվորական իշխանությունների միջև կապ պահպանող[1]:

Վարիչների խորհրդի պարտականությունն էր ՝ վարել ներքին կյանքի վերաբերյալ բոլոր գործառությունները, նպաստել զինվորական իշխանության գործունեությանը և պարենավորել թե՛ բանակը և թե՛ գաղթականներին:

Դրոն ստանձնում է զինվորական գործը և ձեռնարկում է բանակի վերակազմությունը: Վարիչների խորհրդի համաձայնությամբ և գործակցությամբ հայտարարում է Վարանդայում և Դիզակում 21-25 տարեկանների զորահավաք և կարճ ժամանակում զինում մոտ 3000 հոգու[2]:

Վարիչների խորհրդի միջոցով սկսվում են ցորենի, գարու և խոտի, դարմանի գնումներ ու բռնագրավումներ զինվորների համար: Դրվատանքի է արժանի արցախահայ գյուղացիությունը, որը մարտի 22-ից մինչև մայիսի 26-ը անտրտունջ կերակրում էր հազարավոր կռվողների և այդ բոլորի փոխարեն ստանում էր չնչին գումար «…» հայկական կտրոններով:

Դրոյի ջանքերով հեռախոսային ցանցով պատվեց Վարանդայի և Դիզակի շրջանը: Ստեղծվեց ուղիղ գծով կապ Զանգեզուրի հետ: Դիզակի շրջանում տեղավորվում է Նժդեհը՝ Ղափանի իր զորամասով:

Ապրիլի 24-ին Խաչեն-Ջիվանշիր են ուղարկվում գնդապետ Զ. Մեսյանը և Գ. Ղարագյոզյանը՝ զինվորական և քաղաքացիական իշխանություններ կազմակերպելու համար:

Ապրիլի 25-ին Թաղավարդ գյուղում տեղի է ունենում արցախահայության ներկայացուցիչների 9-րդ[3] համագումարը՝ գլխավորապես 3 կարևոր նպատակների համար.

ա) հաստատել և ընդունել վարիչների խորհրդի գոյությունը և կազմը.

բ) նպաստել զորահավաքին և պարենին.

գ) որոշել Արցախի քաղաքական դիրքը Հայաստանի հանդեպ և ընտրել ներկայացուցիչներ՝ անդրկովկասյան խորհրդաժողովում Արցախի դատը պաշտպանելու համար[4]:

Այս հաղորդումից կարելի է եզրակացնել, որ Ա. Միքայելյանը, ըստ երևույթին, ներկա չի եղել համագումարին և տեղյակ չի եղել վերջինիս ընդունած որոշմանը: Սակայն որոշումը պատմական է, ուստի մեջբերում ենք այն.

9-րդ համագումարը միաձայն ընդունել և հռչակել է հետևյալ որոշումները.

- Չեղյալ հայտարարել արցախահայության 7-րդ համագումարի Ադրբեջանի հետ կնքված ժամանակավոր համաձայնությունը:

- Հռչակել Արցախի միացումը ՀՀ-ին՝ որպես նրա անբաժան մաս:

- Խնդրել ՀՀ Մոսկվայում գտնվող պատվիրակությանը՝ համագումարի որոշման մասին հայտնել Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը[5]:

Որոշման երկրորդ կետը, ըստ իս, զգացմունքային էր. հաշվի չեն առնվել փո-

---

[1] Հայրենիք 1923, հոկտեմբեր, № 12, 123:
[2] Գևորգյան Հ. 2014, 592:
[3] Աբրահամյան 1991, 39:
[4] Հայրենիք 1923, հոկտեմբեր, № 12, 124:
[5] Աբրահամյան 1991, 39:

փոխված միջազգային պայմանները: Կարելի էր 2-րդ կետով Արցախը հռչակել բոլշևիկյան Ռուսաստանի բարեկամ, և Սուլթանովի իշխանությունը՝ որպես թուրք զավթիչների կամակատարի՝ լուծարել: Սակայն, հաշվի առնելով 1988-ի արցախահայության ազատագրական պայքարի նախօրյակին Հայաստանի ադրբեջանականացման մակարդակը, դրական ենք համարում 9-րդ համագումարի որոշումն ու դեպքերի հետագա ընթացքը: Այդ զարգացումների շնորհիվ եղավ 1988-1994 թթ. ադրբեջանա-արցախյան պատերազմի արդյունքում առաջ եկած ստատուս քվոն:

Շուշիի *հայության ցեղասպանությունից* և Ասկերանի անկումից հետո, դաշնակից պետությունների ներկայացուցիչների նախաձեռնությամբ, 1920թ. ապրիլ 11-ին, Թբիլիսիում տեղի է ունենում Անդրկովկասյան պետությունների խորհրդաժողովը, որի առաջին նիստում ընդունված բանաձևը ստատուս-քվոյի պահպանման փորձ էր.

«Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների խորհրդաժողովը, սկսելով իր աշխատանքները, որոշում է նախ՝ անմիջապէս դադարեցնել բոլոր արյունալի ընդհարումները, որոնք տեղի են ունենում Ղազախում, Նախիջևանում, Օրդուբադում և *Արցախում*... Ն. Աղաև, Ս. Մամիկոնյան և Ե. Գեգեչկորի»[1]:

Ապրիլի 12-ի նիստում ընտրվում է 6 հոգուց բաղկացած հանձնաժողով, որը պետք է.

1) Տեղում հսկի խորհրդաժողովի որոշումները՝ արյունալի ընդհարումները դադարեցնելու և նախկին գոյավիճակը վերականգնելու,

2) հետազոտի տեղի ունեցած ընդհարումների պատճառներն ու պատկերը:

Այդ հանձնախմբի անդամներից էին Ա. Պապովյանը, Ռ. Յուզբաշյանը, Ալշիբայան և Վեքիլովը[2]:

Հանձնաժողովը *Արցախ* է հասնում ապրիլի 22-ի կողմերը: *Արցախ* հասնելուց հետո հանձնախմբի անդամների միջև տեղի են ունենում տարաձայնություններ: Թյուրքերը պնդում են, թե նախ և առաջ պետք է այցելել թաթարական ավերված Ավդալ-Գյուլափլու և Զանգեզուր, իսկ հայերը՝ թե պետք է քննել Շուշիի *հայերի ցեղասպանությունը* և հայկական գյուղերի ավերածությունը: Հանձնախումբը ապրիլի 25-ին գրավոր ազդարարություն է ուղարկում գավառ, որ ապրիլի 27-ին պիտի անցնի գավառ՝ ծանոթանալու ընդհանուր կացությանը:

Վարիչների խորհուրդը ընտրում է երկու հոգի՝ բանակցելու հանձնախմբի հետ և ժամադրավայր է նշանակում Չանախչի գյուղը: Քանի որ այդ նամակին պատասխան չի ստացվում, ստիպված Արցախի ժամանակավոր կառավարության անունից գրվում է երկրորդ նամակը, որին ի պատասխան ստացվում է հետևյալ բովանդակությամբ նամակ.

«Հեղափոխական *Արցախը*, միշտ էլ կողմնակից լինելով Ադրբեջանի պրոլետարիատի շահերի պաշտպանությանը,սպասել է Ադրբեջանի կողմից խորհրդային իշխանության ճանաչմանը, կապիտալի բռնություններից նրա պրոլետարիատի ազատագրմանը և այդ իմանալով՝ մեր հայացքներն ուղղված են եղել դեպի

[1] Բեհբուդեան 2001, 824:
[2] Հայրենիք 1923, հոկտեմբեր, № 12, 124:

Խոր. Ռուսաստանի հետ ունեցած միության: Արցախի դեմոկրատիան խորապես համոզված է և հավատում է Անգլիայից և Արևմուտքի մնացած իմպերիալիստական պետություններից աշխատավոր ժողովրդի ազատվելուն՝ Խոր. Ռուսաստանի, Ադրբեջանի և *Թուրքիայի* Դաշնակցության ջանքերով:

Կեցցեն Խորհրդ. Ադրբեջանը, Խորհրդ. Ռուսաստանը և *Թուրքիան*, կարմիր բանակն ու պրոլետարիատի առաջնորդները:

Արցախի Ռևկոմի նախագահ՝ Խ. Սուլթանով, 1920, 29 ապրիլ, Շուշի»[1]:

Այս կոչի հետ միասին հանկարծ «հեղափոխականացած» Սուլթանովն ուղարկում է մի հրահանգ, որով Արցախի վարիչների խորհուրդը հայտարարում է լուծված և հրամայում է այդ կոչը տարածել շրջաններում՝ հնարավորություն տալով, որ աշխատավոր գյուղացիությունը ներկայացուցիչներ ընտրի՝ Շուշիի հեղկոմի համար:

Դրոն հրավիրեց վարիչների խորհրդի միացյալ խորհրդակցական ժողովը, որը որոշեց պատասխանել «Ռևկոմին» և նրա միջոցով Մոսկվա ուղարկել մի հեռագիր.

Ա) *Արցախի* հայ աշխատավոր ժողովուրդը երկար տարիների ընթացքում պայքարել է ռուս ցարական կառավարության և Ադրբեջանի խան-բեկական իշխանության դեմ.

Բ) *Արցախի* ժողովուրդը բարեկամական զգացմունք ունի հանդեպ Ռուսաստանի մեծ զանգվածի, բայց չի հավատում մի հեղափոխության, որ արյունռուշտ Սուլթանովների միջոցով և ղեկավարությամբ է առաջ տարվում.

Գ) *Արցախի* հայ ժողովրդի կամքն է միանալ Հայաստանի Հանրապետությանը[2]:

Անկասկած Սուլթանովը թույլ չէր տա նման բովանդակությամբ հեռագրի հղումը Լենինին:

1920 թ. ապրիլի 30-ին Խոր. Ադրբեջանը, իսկ մայիսի 1-ին ՌԽՖՍՀ-ը ՀՀ-ին առաջարկում են «անհապաղ դադարեցնել ամեն տեսակի ռազմական գործողությունները Խորհրդային Ադրբեջանի տարածքում և իր զորքերը դուրս բերել նրա սահմաններից: Դա պետք է կատարվի այս առաջարկությունը ստանալուց հետո՝ քսանչորս ժամվա ընթացքում: Հակառակ պարագայում այն կիրագործվի Ռուսաստանի կարմիր բանակի ուժերով, և դրա հետևանքների համար ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Հայաստանի կառավարության վրա[3]:

Քանի որ Դրոյի և Նժդեհի զորքերը դուրս չբերվեցին Արցախից, ուստի Ռուսաստանը փոխեց իր կոշտ դիրքորոշումը: 1920 թ. մայիսի 4-5-ին Վարանդա են գալիս կարմիր բանակի ներկայացուցիչներ Լևանդովսկին և Սահակ Տեր-Գաբրիելյանը՝ բանակցելու Դրոյի և Վարիչների խորհրդի հետ: Նրանք պահանջում են դատարկել *միայն Արցախը* և անցնել Հաքարի գետի մյուս կողմը՝ Զանգեզուր, որովհետև Ռուսաստանը մտադիր է *Արցախ* մտցնել կարմիր զորամասեր և այն հայտարարել չեզոք գոտի[4]*: Փաստորեն կարմիրները ակնարկում էին ապագայում*

[1] Բեհբուդեան 2001, 824-825:
[2] Հայրենիք 1923, հոկտեմբեր, № 12, 125:
[3] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 276, ց. 1, գ. 218, թ. 137:
[4] Բեհբուդեան 2001, 825:

Ադրբեջանին և Հայաստանին զսպելու համար Արցախին տրվելիք գործուն դերի մասին:

Դրոն պատասխանում է, որ *Արցախ* է մտել իր կառավարության հրահանգով այն ժամանակ, երբ Ադրբեջանը սկսել է կոտորել Շուշի քաղաքի անզեն բնակչությանը և ավերել հայկական գյուղերը: Կհեռանա միայն այն ժամանակ, երբ համապատասխան հրաման ստանա իր կառավարությունից: Այն ժամանակ Լևանդովսկին և Սահակ Տեր-Գաբրիելյանը առաջարկում են Վարիչների խորհրդի իշխանությունը տարածել միայն Վարանդայի և Դիզակի վրա: *Այս առաջարկին Դրոյի տված միևնույն՝ վերոհիշյալ պատասխանը վկայում է քաղաքական ճկունության պակասի մասին: Փաստորեն Ռուսաստանը ՀՀ-ի կառավարությանը՝ ի դեմ Դրոյի, առաջարկում էր բոլշևիկացում՝ Արցախի Վարանդա և Դիզակ գավառների դիմաց*[1]*:*

Ադրբեջանի բոլշևիկացումը, Խորհրդ. Ռուսաստանի ներկայացուցիչների երևալը, Հայաստանի բոլշևիկյան հեղաշրջման մասին տարածված լուրերը և բոլշևիկյան գործակալների աշխատանքները առաջ են բերում *Արցախի* հայ ժողովրդի մեջ տրամադրության բեկում: *Նույնիսկ* Վարիչների խորհրդի մի քանի անդամների մեջ տրամադրություն է ստեղծվում Խորհրդային Ռուսաստանի հետ հասկացողության գալու[2]:

Մայիսի 14-18-ը Խաչեն գավառը բոլշևիկացվում է: Մայիսի 21-ին Ջիվանշիրի հայ բոլշևիկները՝ միացած ռուսական կարմիր բանակի մի հարյուրյակ ձիավորների հետ, հարձակվում են Վանք գյուղի վրա՝ Զ. Մեսյանին ձերբակալելու, բայց չեն կարողանում:

Այդ ժամանակամիջոցում ռուսական որոշ զորամասեր են տեղափոխվում դեպի Շուշի և Զանգեզուր: Այսպիսով՝ հակառակ Դրոյի և Վարիչների խորհրդի թափած ջանքերի և կազմակերպած բանակին՝ *Արցախը* դրվում է նոր անակնկալի առջև[3]:

Մայիսի 24-ին Զանախչի գյուղում Դրոն, Նժդեհը, գնդապետ Միրիմանյանը և Ա. Միքայելյանը *հրավիրում են* խորհրդակցություն և արձանագրում.

Ա) Որ *Արցախի* ժողովրդի տրամադրությունները զգալի փոփոխության են ենթարկվել և աստիճանաբար կարող են վերածվել թշնամության.

Բ) Որ մայիս 12-ից սկսած Հայաստանի կառավարությունից «…» ոչ մի տեղեկություն չի ստացվել: Ուրեմն Հայաստանի Հանրապետությունը գտնվում է օրհասական վտանգի մեջ.

Գ) Որ Նժդեհի Ղափանի զորամասը չի կարող երկար մնալ *Արցախում*, որովհետև բոլորն էլ գյուղացիներ են և կամավոր, ուստի կկամենան վերադառնալ հայրենիք՝ դաշտային աշխատանքների լծվելու.

Դ) Որ ռուսական բանակի որոշ զորամասեր խճուղու վրայով գրավում են կարևոր դիրքեր, որով կտրում են *Արցախի* հայկական զորամասի նահանջի ճամփան:

---

[1] Դիվանագիտական ճկուն քաղաքականության հնարավորությունների քննարկումը չի մտնում մեր այս ուսումնասիրության շրջանակների մեջ:
[2] Հայրենիք 1923, հոկտեմբեր, № 12, 126:
[3] Բեհբուդեան 2001, 825:

Այս բոլորը նկատի առնելով՝ որոշվում է *Արցախում* իշխանությունը հանձնել հայ բոլշևիկներին՝ նրանց տրամադրության տակ թողնելով բավական թվով ռազմամթերք, հեռախոսներ և մեկ գնդացիր՝ ժողովրդի ինքնապաշտպանության համար, և բանակի, սպաների ու վտանգված գործիչների հետ միասին անցնել Զանգեզուր:

Մայիսի 26-ին իշխանությունը հանձնվում է բժ. Համբարձումյանին, և հայկական զորամասը՝ Դրոյի առաջնորդությամբ, Քիրսի վրայով անցնում է դեպի Խծաբերդ և ապա՝ Զանգեզուր[1]:

Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ Խորհրդային իշխանությունը ոչ միայն Բաքվի հայությանն ազատեց նախապատրաստվող ցեղասպանությունից, այլև արցախահայությանը շունչ առնելու և իր մղած պայքարը վերագնահատելու ժամանակ տվեց:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն աշխատանքով հնարավորինս փորձել ենք վերահիմաստավորել 1920 թ. մարտի 23-ին Ադրբեջանի իրականացրած՝ Շուշիի հայերի ցեղասպանության պատճառահետևանքային կապը՝ մեր մտորումները հիմնավորելով իրադարձությունների անմիջական մասնակցի հուշերով, որին հաճախ մեղադրում են ճակատագրական սխալներ գործելու և արկածախնդրության հասնող որոշումներ ի կատար ածելու անհաջող փորձերի մեջ:

Մասնակից-ականատեսից մեջբերումներ կատարելով՝ հերքել ենք ադրբեջանական քարոզչության ասպարեզ նետած և քաղաքական հոտառության պակաս ունեցող հայ պատմագիրների կողմից գործածվող «մարտյան ապստամբության» վարկածը:

Տողերիս հեղինակի խորին համոզմամբ՝ հայ և թյուրք-թաթարական շահերի հակամարտության սկիզբ պետք է ընդունել ոչ թե 1905-1906 թթ. հայ և թաթար-*թուրքական* ընդհարումները, ինչպես դա արել է Ա. Միքայելյանը, այլ *1840 թ. Այսրկովկասի վարչական բաժանումը, երբ ցարիզմը, ըստ երևույթին, հիմք ընդունելով 1555 թ. Ամասիայի թուրք-իրանական* ***զավթողական*** *պայմանագիրը*[2] *որպես միջազգային փաստաթուղթ, Հայաստանի արևելյան տարածքները մտցրեց Վրացա-Իմերեթական նահանգի և Կասպիական մարզի մեջ:* Ադրբեջանական պատմաբաններն էլ, հիմք ընդունելով 1868 թ. Ելիզավետպոլի նահանգի ստեղծումը, որի մեջ մտցվել էին Ղազախը, Շուշին և Զանգեզուրը, Արցախի նկատմամբ ներկայացնում են զավթողական նկրտումներ:

Ներկա ուսումնասիրությամբ քաղաքագետների ուշադրությունը փորձել ենք կենտրոնացնել այն կարևոր փաստի վրա, որ Այսրկովկասում պետականություն կերտելու առաջին փորձ կատարվել է Արցախի Շուշի կենտրոնում 1917 թ. սեպտեմբերի 18-ին: Եվ այն ժամանակ ՀՀ կառավարությունը, *Արցախի անկախության ճանաչմամբ և փոխօգնության պայմանագրի կնքմամբ,* կարող էր թույլ չտալ 400000-ից ավելի հայ ազգաբնակչություն ունեցող տարածքների զավթումը թուրք-

[1] Հայրենիք 1923, հոկտեմբեր, № 12, 127:
[2] https://hy.wikipedia.org/wiki/Ամասիայի_պայմանագիր(բեռնման օրը 14. 08. 2020):

ադրբեջանական զավթիչների կողմից:

Անչափ կարևորում ենք, որ 1918 թ. դեպի Բաքու արշավող թուրքական բանակի համար լուրջ սպառնալիք էր Արցախը՝ իր ներուժով և Զանգեզուր մտած գեներալ-մայոր Անդրանիկը՝ իր զորամասով: Ա. Միքայելյանի տվյալներին մոտեցել ենք քննական վերլուծությամբ, քանի որ սուբյեկտիվ պատճառներով նա ԻՊ կանոնավոր ուժերի ստեղծումը վերագրում է իրեն և Մեսյանին: Այնինչ, դեռևս 1918 թ. հոկտեմբերի 26-ին արցախցիները զոր. Անդրանիկին հայտնել էին, թե պատրաստ են 15000 կռվողներ տրամադրելու, եթե նա մտնի Արցախ: Դրան հավատալով է, որ 1918 թ. նոյեմբերի 29 - դեկտեմբերի 1-ը գեներալ-մայոր Անդրանիկը Հարվածող զորամասի և արցախցիների գնդի զորաշարժով զավթիչներից ազատագրեց Զաբուղը, Մարքիզ լեռան բարձունքները և բացեց Գորիս-Բերդաձոր խճուղին: Ինչո՞ւ առասպելական հերոսը չշարունակեց ադրբեջանական զավթիչների դուրս քշելը Շուշիից և ավարտին չհասցրեց Արցախի միավորելը Զանգեզուրի հետ՝ մինչ այսօր էլ մնում է առեղծված: Ա. Միքայելյանը դա վերագրում է դարերով թրծված թուրքական դիվանագիտության խափանարարական գործունեությանը: Կարծում ենք, որ պետք է պարզել, թե ինչո՞ւ Արցախից օժանդակող զորաշարժ չեղավ կամ, թե ինչո՞ւ Արցախի գործիչները թույլ տվեցին Թոմսոնի ներկայացուցիչներին անվտանգ այցելել զոր. Անդրանիկին: Անհասկանալի է նաև, թե ինչու գեներալ-մայոր Անդրանիկը, *փոխանակ ամրանար Մարքիզ լեռան տարածքում և կայազորներ տեղադրեր արդեն ազատագրված բնակավայրերում՝ հետագայում ուժի դիրքից պայմաններ թելադրելու ակնկալիքով,* հետ քաշվեց Գորիս*: Ոչ միայն Ա. Միքայելյանը, այլև ժամանակի գործիչները փաստում են միայն, որ այս ռազմավարական սխալից օգտվելով՝ թշնամու գրոհայինները շրջափակմամբ Արցախը* կտրեցին Զանգեզուրից:

Հիրավի, չնայած հայ զինվորության թափած արյան լճերին և ռազմական ակնառու հաջողություններին՝ Արցախի հարցը 1918-1920 թթ. հայ վերնախավի մեղքով մնաց «վիճելի տարածք» Հայաստանի և Ադրբեջանի միջև: *Մեր օրերում էլ հայ վերնախավը չի կարողանում «վիճելի տարածքների» գորդյան հանգույցից արժանապատիվ ելք գտնել:*

Խորապես համոզված ենք, որ թուրքական դիվանագիտության աջակցությամբ շրջանառության մեջ դրված *Արցախն* Ադրբեջանի տնտեսական անբաժանելի մաս լինելու գաղափարի ազդեցության տակ է արցախահայության 7-րդ համագումարը, ՀՀ-ից անջատ, Ադրբեջանի հետ կնքել ազգադավ, «ժամանակավոր համաձայնություն», որով և, իրավաբանական հիմք է ստեղծվել Ադրբեջանի կողմից Արցախի ներքին կյանքին միջամտելու և **Ադրբեջանից աշխատավարձ ստացող** *պաշտոնյաների* միջոցով, հայ ազգաբնակչության մեջ ադրբեջանական կողմորոշում քարոզելու համար: Հենց այն ժամանակներում են *շրջանառվել «Դաշտային և Լեռնային Ղարաբաղ» տերմինները՝ կասկածի տակ դնելով Արցախի տարածքային ամբողջականությունը:*

Փորձառու և ժողովրդականություն վայելող Համազասպի փոխարեն գրասենյակային *գնդ. Զ. Մեսյանին Արցախ գործուղելը վկայում է, որ* ՀՀ կառավարությունը հիմնականում մտահոգված էր Նախիջևանի ազատագրման և *ադրբեջանա-*

կան զավթիչների դեմ պայքարի ելած արցախցիներին այնտեղ տեղափոխելու ցնորամիտ ծրագրի իրականացմամբ:

Շուշիի ԻՊ կազմակերպման վերաբերյալ Միքայելյանի տեղեկությունները վիճահարույց են: Ըստ նրա քաղաքում կային շուրջ 100 զինված կռվողներ և Հայոց թաղի 30-40 ոստիկաններ: *Անշուշտ, նեղ փողոցներում կռվելու համար մեծ ուժեր պետք չեն: 1918-1919 թթ. ընդհարումներն էլ վկայում են, որ փոքրաթիվ ուժերով հայերը ոչ միայն պաշտպանվել, այլև անցել են հակահարձակման, խուճապի մատնել թշնամուն Շուշիի հայ-թուրքական ռազմագծի ողջ երկայնքով: Ա. Միքայելյանի վկայությամբ՝* Շուշիի զինյալների ընդհանուր հրամանատարությունը ստանձնած Ավետիս Տեր-Ղուկասյանին պակասում էր նահանգապետ Խ. Սուլթանովի *վճռականությունը:* Վերջինս հզորացնում էր Թարթառի և Կարյագինի շրջանների գրոհայիների քանակակազմը նաև քուրդ գրոհայիններով, Հայոց թաղից տեղափոխվում է թուրքական մասը: Սակայն ականատեսը չի նշում, որ Ադրբեջանի ***պետական ահաբեկչության հետևանքով*** կատարվել են Եվլախ-Ասկերան-Շուշի ճանապարհի շրջակայքի բնակավայրերի բնակչության ոչ միայն զանգվածային ***սպանություններ ազգային հողի*** վրա, այլև ***բռնի տեղահանություններ***:

Կարծում ենք՝ **1920 թ. փետրվարի 22 - մարտի 4-ը Շոշի և Շուշիի** համագումարների որոշումները էական տարբերություններ չունեն: Միակ տարբերությունն այն է, որ *Շոշի համագումարը* պահանջում էր Ադրբեջանից ժամանակավոր համաձայնության կետերի ամբողջական կիրառում: *Արմատական որոշում կլիներ, եթե ստեղծվեր Ազգային փրկության կառավարություն, Սուլթանովը համարվեր օրենքից դուրս և ձերբակալվեր, հայտարարվեր համընդհանուր զորահավաք և այլն*:

Ա. Միքայելյանը քաղաքական գնահատականներ չի տվել Սուլթանովի մարտի 1-13-ը արձակած հրամաններին ու ծավալած ագրեսիվ գործունեությանը: Այնինչ դրանք զավթիչներին բնորոշ բռնաճնշումներ, բռնարարքներ էին: Սուլթանովը սրտացավությամբ չէր ղեկավարվել, երբ պահանջել էր *հայ ոստիկաններին ներկայանալ Շուշի,այլ նրանց զինաթափելու և կոտորելու մտադրությամբ*: Եվ սա *ևս մի փաստ է, որ մարտի 23-ի Շուշիի հայության ցեղասպանությունը նախօրոք մշակված հրեշավոր մի ծրագիր էր, և այն արդարացնելու համար էլ, Ադրբեջանը կառավարական մակարդակով նախօրոք հորինել էր ապստամբության տեսությունը:*

Ըստ Ա. Միքայելյանի՝ ցեղասպանության նախօրյակին Շուշիի ԻՊՈԽ-ի թվակազմը պիտի հասցվեր *410 հոգու*:

Համոզված ենք, որ ռազմավարական սխալ էր այն, որ ԻՊՄ-ն հույսը դրել էր Զանգեզուրից ակնկալվող օգնության վրա: Այնինչ կարելի էր հաջող և փոքր ռազմագործողություններով ոգևորել ժողովրդին, արագացնել զորամիավորումների կազմավորումը և թշնամուց ձեռք բերել ռազմավար՝ զինամթերքի և հանդերձանքի տեսքով:

Մեր պատմագրությունը պետք է լրջորեն աշխատի Ադրբեջանի բանակի 1920 թ. մարտի 23-ի սադրիչ գործողությունները Արցախի դեմ լայնածավալ ռազմական ագրեսիա համարելու ուղղությամբ: Միքայել (Ղազար) Բադալքյոխյանի՝ մոտ 350

զինվորներով Ասկերանի կիրճի գրավումը և Խոջալու կայանի ադրբեջանական կայազորի զինաթափումը ոչ թե արկածախնդրություն պետք է որակել, այլ ագրեսորի առաջխաղացումը կասեցնելու խիզախում:

Ասկերանի դիրքերի վրա մարտի 27-28-ին ադրբեջանական զավթիչների նկատմամբ տարած հաղթությունից ոգևորված ևս 350 հոգու միանալը Մ. Բադալքյոխյանի մարտիկներին վկայում է *փոքրաթիվ ուժերով և մասնակի հաղթանակներով բնակչությանը ոգևորելու և ինքնապաշտպանության գործում ներգրավելու մարտավարության տողերիս հեղինակի վարկածի ճշմարտացիությունը:*

Ապրիլի 3-ին՝ առավոտյան ժամը 7-ից, Ադրբեջանի զորքերը՝ Խալիլ փաշայի հրամանատարությամբ, թնդանոթների կատաղի կրակի աջակցությամբ, հարձակվել էին Ասկերանի վրա: Ըստ Ա. Միքայելյանի՝ ոչ միայն փամփուշտների պակասությունը, այլև Արցախի ԻՊ-ն ստանձնածների թուլամորթությունը և անգործունյա լինելը հանդիսացան Ասկերանի անկման հիմնական պատճառները: Մ. Բադալքյոխյանն ընկավ հերոսի մահով, իսկ ողջ մնացած հայ մարտիկները լքեցին Ասկերանը:

Մարտի 22-ի գիշերը զինամթերք ձեռք բերելու ակնկալիքով Արցախի ԻՊՈՒ-ի հարձակումը զավթիչների՝ Վարարակնում (Խանքենդում) տեղակայված կայազորի վրա անհաջող ելք ունեցավ:

Շուշիի ինքնապաշտպանության ձախողման վերաբերյալ մեր եզրահանգումները հետևյալն են.

1. Մահմեդական գարնանային տոնակատարության ժամանակ, նախօրոք տրված ազդանշանով, Շուշին ռազմակալած Բաքվի 5-րդ գնդի թուրք սպաներն ու զինվորները հրդեհել են իրենց հյուրընկալած հայերի տները և անկանոն հրացանաձգություն կատարել՝ խուճապի մատնելով քնից արթնացած խաղաղ հայ բնակիչներին:

2. Հավատ ընծայելով ՀՀ կառավարության և Ադրբեջանի, ինչպես նաև Սուլթանովի հետ ձեռք բերված համաձայնությանը, ըստ որի ոչ մի պարագայում մարտական գործողություններ Շուշիում չպիտի ծավալվեին, քաղաքի 120-550 զինյալների զգալի մասը տարվել էր Վարարակնի զորանոցի գրոհին մասնակցելու:

3. Արցախի ԻՊ կենտր. մարմինը ուշացումով Շուշիին օգնության է ուղարկել երկու ոստիկանապետների՝ 90 ոստիկաններով և 160 զինված գյուղացիներով՝ Աղապարոն Դանիելբեկյանի ղեկավարությամբ: Գավառից օգնության հասած մի այլ գումարտակ՝ սպա Ներսես Ազիզբեկյանի հրամանատարությամբ, զբաղեցրել է Քերծի թաղի հատվածը: Ոստիկաններն ու Ա. Դանիելբեկյանը չեն կարողացել կատարել իրենց վրա դրված առաջադրանքը՝ շրջափակել զորանոցն ու զբաղեցնել Կուսանաց վանքի հարակից թաղամասերի դիրքերը:

4. Իրենց հերթին, քաղաքի ԻՊ մարմինը և Ա. Տ. Ղուկասյանն անընդունակ են գտնվել ոչ միայն համաձայնեցնելու Շուշիի ներսի և օգնական ուժերի գործողությունները, այլև կազմակերպելու դեռևս 1919 թ. գոյություն ունեցող Շուշիի հայ-թուրքական ռազմագծի պաշտպանությունը, որից էլ օգտվել են թվական գերազանցություն ունեցող ադրբեջանա-թուրքական զավթիչները:

5. Քերծի թաղի հատվածը զբաղեցրած Ն. Ազիզբեկյանի գումարտակը չի ծա-

վալվել դեպի Մեղրեցոց և Ամենափրկիչ եկեղեցու թաղամասերը, ինչը թույլ կտար փրկել գոնե Շուշիի մի մասը: Այնուամենայնիվ, վերջինիս մարտիկներին հաջողվել է ապահովել շուրջ 8000 հայ ազգաբնակչության անվտանգ նահանջի ճամփան՝ Քարինտակի լեռնային արահետով և Հունոտով: Այդ ընթացքում քաղաքի Ամենափրկիչ եկեղեցուն հարող թաղամասերում զավթիչների առաջխաղացումը կասեցվել է փոքրաթիվ ԻՊ ուժերի կողմից: Եթե Շուշիից ԻՊ ուժերը չհանվեին, և օգնության հասածները միանային նրանց, ապա այսօր մենք, հավանաբար, կունենայինք այլ պատմական իրավիճակ: Ցավոք, պատմական անցյալը փոխել չենք կարող, սակայն կարող ենք նրա էջերից դառը, բայց օգտակար դասեր քաղել:

Սուլթանովի հրամանով բանտարկված են 2-3 հազար քաղաքացիներից Դրոյի պահանջով ազատ արձակվածներից բացի, տուժածները մոտ 2-2,5 հազար շուշեցիներ բռնի մահմեդականացվել են, իսկ մոտ 500 քաղաքացիների դեռևս ապրիլի 4-ին գազանաբար սպանել են Գանձակից Շուշի մտած ադրբեջանական բանակի զինվորները:

Այսպիսով՝ Շուշիի հայերի ցեղասպանությունը ադրբեջանական կառավարության կազմակերպած պետական ահաբեկչության տխրահռչակ օրինակ է, որը շարունակելու մղումով ապրիլի 6-7-ին թշնամին հարձակվել է Քարաշենի վրա: Օրհասական կռիվներ մղելով թշնամու ահռելի ուժերի դեմ՝ ապրիլի 8-ին մեր զորքերը նահանջել են դեպի Տռնավարզ: Ապրիլի 9-ին ամբողջ օրը արյունալի կռիվներ են ծավալվել Տռնավարզի դիրքերի համար: Թշնամին չի կարողացել հաղթահարել հայ մարտիկների դիմադրությունը:

Գիշերը ԻՊ ուժերը անցել են հակահարձակման և ռազմական նախաձեռնությունը վերցրել իրենց ձեռքը: *Անշուշտ, թվաքանակով և զինվածությամբ գերազանցող զավթիչների դեմ գիշերային հարձակման ռազմավարությունը գերադասելի է ցերեկային մարտերից*

Չանախչիի 1920 թ. մայիսի 24-ի խորհրդակցությունն անհրաժեշտ էր գումարել մինչև Ադրբեջանի խորհրդայնացումը: Երևի այդ դեպքում խորհրդային իշխանությունը ոչ միայն Բաքվի հայությանը, այլև արցախահայությանը կազատեր նախապատրաստվող ցեղասպանությունից:

Անժխտելի փաստ է, որ խորհրդայնացումը հայությանը շունչ առնելու և իր մղած պայքարը վերագնահատելու ժամանակ տվեց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 276, ց. 1, գ. 218:
2. ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 1 (Բալաեան Գ., Յոլեան Զ., Ղարաբաղի դէպքերի վերաբերյալ սկսած 1918 թ. յունիս ամսից մինչև 1920 թ. մայիսի 26-ը), թթ. 1-41:
3. ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 3 (Ստեփանյան Յ., Յոլյան Զ., ՀՅԴ գերագույն դատարանին, 20.08. 1923 թ.), թթ. 1-36:
4. Աբրահամյան Հ. 1991, Արցախյան գոյամարտ, Երևան, Գիտելիք,175 էջ:
5. Բալայան Վ. 2002, Արցախի պատմություն, Երևան, Ամարաս, 440 էջ:
6. Բալայան Վ. 2012, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պե-

տականակերտման պատմության (1813-2007 թթ.), Ստեփանակերտ, Սոնա, 416 էջ:
7. Բեհբուդեան Ս. 2001, Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, Գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), Երևան, էջ 778-827:
8. Գևորգյան Հ. 2014, Դրո, Երևան, ԵՊՀ, 920 էջ:
9. Դանիելյան Է. 2002, Անդրկովկասում ապաստանած արևմտահայ գաղթականության թվաքանակի հարցի շուրջ (1914-1917թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, № 2, էջ 112-119, էլեկտրոնային տարբերակը՝ http://lraber.asj-oa.am/803/1/2002-2(112).pdf):
10. Դավիթ Անանուն 1920, Ղարաբաղ, Հայաստանի կօօպերացիա, սեպտեմբերի 15, № 17, էջ 684-690:
11. Թումյան Հ. 2008, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ. (պատմական ակնարկ), Երևան, Անտարես, 336 էջ:
12. Իշխանյան Ե. 1999, Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, Հայաստան, 732 էջ:
13. Լեո 1925, Անցյալից. հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, Խորհրդային Կովկաս, 480 էջ:
14. Կարապետյան Մ. 2014, Առաջին համաշխարհային պատերազմը և հայերը, Հայ զինվոր, 19.06.-25.06., № 23 (1041):
15. Կիսիբեկյան Ա. 2011, Հուշեր, հ. 1, Երևան, Առասպել ինդեքս, 519 էջ:
16. Հայ ժողովրդի պատմություն 1981, Հ. 6. Խմբ. կոլ.՝ Աղայան Ժ. Պ., Բարսեղյան Խ. Հ., Երկանյան Վ. Ս., Համբարյան Ա. Ս., Հովհաննիսյան Ա. Գ., Հովհաննիսյան Ռ. Փ., Մուրադյան Դ. Ա.: ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստ., Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1052 էջ:
17. Հովհաննիսյան Է. 2018, 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը Ղարաբաղում (ըստ «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերի»), «Պատմություն և մշակույթ» (հայագիտական հանդես), Երևան, ԵՊՀ, էջ 203-209:
18. Միքայէլեան Ա. 1923, Ղարաբաղի վերջին դէպքերը, Հայրենիք (Բոսթոն),մայիս, № 7, էջ 156-167:
19. Միքայէլեան Ա. 1923, Ղարաբաղի վերջին դէպքերը, Հայրենիք (Բոսթոն), յունիս, № 8, էջ 110-123:
20. Միքայէլեան Ա. 1923, Ղարաբաղի վերջին դէպքերը, Հայրենիք (Բոսթոն), յուլիս, № 9, էջ 117-121:
21. Միքայէլեան Ա. 1923, Ղարաբաղի վերջին դէպքերը, Հայրենիք (Բոսթոն), սեպտեմբեր, № 11, էջ 110-119:
22. Միքայէլեան Ա. 1923, Ղարաբաղի վերջին դէպքերը, Հայրենիք (Բոսթոն), հոկտեմբեր, № 12, էջ 118-127:
23. Յառաջ օրաթերթ 1920, 4 ապրիլի, № 71:
24. Ուլուբաբյան Բ. 1994 (1), Արցախյան գոյապայքարը, հ. Ա, Երևան, Գիր գրոց, 300 էջ:
25. Ուլուբաբյան Բ. 1994 (2), Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, Մ. Վարանդեան, 378 էջ:
26. Арутюнян А. 1971, Кавказский фронт 1914 -1917. Ереван, Айастан, 416 с.
27. Мелкумян Н. (ред.) 2000, Нагорно-Карабахская Республика: путь к вершинам, Степанакерт, МИД НКР, 258 с.
28. Мелик-Шахназаров З. 1995, Записки карабахского солдата: Воспоминания участника событий 1918-1920 гг. в Нагорном Карабахе. Москва-Ереван, М. Шварц: Центр рус.-арм. инициатив, 79 с.
29. Шагинян М. 1927, Нагорный Карабах. Очерк. Москва-Ленинград, Государственное издательство, 42 с.

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀՂՈՒՄՆԵՐ

1. https://hy.wikipedia.org/wiki/Ամասիայի_պայմանագիր (բեռնման օրը՝ 14. 08. 2020):
2. https://hy.wikipedia.org/wiki/Հայերի_մասնակցությունը_Առաջին_համաշխարհային_պատերազմին#cite_note-18 (բեռնման օրը՝ 18. 08. 2020):
3. Железом и кровью.https://ru.wikipedia.org/wiki/%D0%96%D0%B5%D0%BB% D0%B5%D0%B7%D0%BE%D0%BC_%D0%B8_%D0%BA%D1%80%D0%BE%D0%B2%D1%8C%D1%8E (բեռնման օրը՝ 14. 08. 2020):
4. Ղարաբաղի հայության 8-րդ համագումարի բանաձևը. 22 փետրվար - 4 մարտ, 1920 թ., Շոշ. https://www.aniarc.am/2020/03/06/karabakh-armenians-8th-congress-1920-text/ (բեռնման օրը՝ 10. 08. 2020):

Ամփոփում

Շուշի քաղաքի ինքնապաշտպանության ձախողման պատճառները ՀՀ կառավարության ներկայացուցիչ Արսեն Միքայելյանի մեկնությամբ

Աշոտ Հարությունյան

Անցյալ դարի 80-ական թվականներից մինչ օրս շարունակվող ադրբեջանա-արցախյան «գորդյան հանգույցի» լուծման հայեցակարգ մշակելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նախկինում Հայկական բարձրավանդակի արևելյան տարածքներում տեղի ունեցած նմանատիպ իրավիճակների պատմական փորձը: Ուսումնասիրելով 1919-20-ականների ադրբեջանա-արցախյան հակամարտության ականատեսներից մեկի՝ Արսեն Միքայելյանի հուշերի եզրափակիչ մասը՝ փորձել ենք քննադատական վերլուծությամբ 1920 թ. մարտի 23-ին Հայաստանի Արցախ նահանգի անառիկ ամրոց Շուշի քաղաքում Ադրբեջանի կողմից իրականացված հայոց ցեղասպանության պատմությունից դասեր տալ հայ քաղաքական վերնախավին՝ հետագա ցեղասպանությունները կանխելու հույսով: Միևնույն ժամանակ, համեմատելով անցյալի և ներկայի հակամարտությունները՝ տողերիս հեղինակը ներկայացրել է դրանցում առկա նմանությունները՝ փորձագետների ուշադրությունից վրիպած այն գործոնները, որոնք հանգեցրել են մեր հաղթանակին, ինչպես նաև Արցախի և Ադրբեջանի միջև հակամարտությունը «ուժի կիրառմամբ» լուծելու հայեցակարգը՝ Միացյալ Հայաստանի տեսլականի տեսանկյունից: Միքայելյանի կողմից հաճախակի օգտագործվող Ղարաբաղ օտարահունչ տեղանվանումը փոխարինել ենք հայահունչ Արցախով: Շեղատառերով առանձնացված են տողերիս հեղինակի դատողությունները:

Թեմայի նպատակն է Ա. Միքայելյանի վկայություններով հերքել ադրբեջանական քարոզչության կողմից մշակված և նույնիսկ որոշ հայ պատմաբանների կողմից օգտագործվող «մարտյան ապստամբության» վարկածը և լույս սփռել այն իրադարձությունների վրա, որոնց հետևանքով տեղի ունեցավ Շուշիի հայերի ցեղասպանությունը:

Հիմնաբառեր. *պատմական Հայաստան, Ադրբեջան, թյուրք-թաթարներ, հայատյացություն, հողային վեճեր, ցեղասպանություն, մղձավանջային գոտի*

Резюме

Причины провала самообороны в городе Шуши в интерпретации представителя правительства РА Арсена Микаеляна

Ашот Арутюнян

Чтобы разработать концепцию азербайджано-арцахскского «гордиева узла», существующего с 1980-х годов, необходимо учитывать исторический опыт подобных ситуаций, имевших место в прошлом на восточных территориях Армянского нагорья. Изучая мемуары одного из свидетелей азербайджано-арцахского конфликта 1919-20 гг. Арсена Микаеляна: «Последние события в Арцахе», мы попробовали с критическим анализом преподать урок армянской политической элите из истории геноцида армян, совершенного Азербайджаном 23 марта 1920 года в городе Шуши, неприступной крепости Арцаха, провинции Армении, с надеждой предотвратить повторение дальнейших преступлений против человечества. В то же время, сравнивая прошлые и настоящие конфликты, автор моих строк представил сходство в них, выпавшие из внимания экспертов факторы, приведшие к победе, и концепцию «применения силы» для урегулирования конфликта между Арцахом и Азербайджаном с точки зрения идеала Единой Армении.

Цель этой статьи, по мнению А. Микаеляна, опровергнуть версию «мартовского восстания», разработанную азербайджанской пропагандой и даже применяемую некоторыми армянскими историками.

Ключевые слова: *историческая Армения, Азербайджан, тюрко-татары, армянофобия, земельные споры, геноцид.*

Abstract

Reasons for the Failure of Self–defense in the City of Shushi Interpreted by the Representative of Armenian Government Arsen Mikayelyan

Ashot Harutyunyan

In order to develop the concept of the Azerbaijani-Artsakh “Gordian knot” which has been going on since the 1980s, it is necessary to take into account the historical experience of similar situations that took place in the past in the eastern territories of the Armenian Highlands. Studying the final part of the memoirs of Arsen Mikayelyan who is one of the eyewitnesses of the Azerbaijani-Artsakh conflict of 1919-1920, we tried to teach a lesson through critical analysis to the Armenian political elite illustrating the Armenian Genocide committed by Azerbaijan on March 23, 1920, in Shoushi, the impregnable fortress in the Artsakh province of Armenia. It

aimed to prevent the repetition of further genocides. Comparing past and present conflicts, the author of my lines presented their similarities and the factors that escaped the attention of the experts that led to our victory, as well as the concept of resolving the conflict between Artsakh and Azerbaijan by “use of force”, from the point of view of the ideal of United Armenia.

We have replaced the foreign name "Karabakh” frequently used by Mikayelyan with Armenian-sounding “Artsakh”. The judgments of the author of my lines are separated by italics.

The purpose of this article is to contradict by means of Mikayelyan's testimonies the version of the “March uprising” developed by Azerbaijani propaganda and even used by some Armenian historians, to shed light on the events that led to the genocide of the Armenians of Shushi.

Keywords: *Historical Armenia, Azerbaijan, Turkic-Tatars, Armenophobia, land dis putes, genocide, nightmare zone*

ՄՀԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, պահեստազորի մայոր, «Կաճառ» գիտական կենտրոնի տնօրեն, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հումանիտար ամբիոնի վարիչ
Արցախի Հանրապետություն, Շուշի, Մուրացան 2
Էլ. հասցե՝ kachar.gk.shushi@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 10.08.2020, գրախոսվել է 08.08.2020, ընդունվել է տպագրության 20.08.2020

ՇՈՒՇԻՈՒՄ 1920 Թ. ՄԱՐՏՅԱՆ ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ (ՊԱՏՄԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐ)[1]

Ներածություն

Մեկ դար առաջ Այսրկովկասի ծաղկուն քաղաքներից, հայ հոգևոր-մշակութային ու քաղաքական կենտրոններից մեկը՝ Շուշի քաղաքը, դարձավ ինքնահռչակ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության (այսուհետև՝ ԱԴՀ) կանոնավոր զորքերի և թուրք-քրդական զինված հրոսակախմբերի ռազմական հանցագործության զոհը: Մի քանի օրում հրո ճարակ դարձան Շուշի քաղաքի ոսկեդարի (1820-1920 թթ.) ընթացքում արարված համամարդկային նշանակություն ունեցող արժեքները, հայ ժողովրդի մշակութային ժառանգության բացառիկ գոհարներ, ճարտարապետական կոթողներ, իսկ այդ ամենն արարած հայ ազգաբնակչությունը ցեղասպանության ենթարկվեց. գազանաբար հոշոտվեցին հազարավոր խաղաղ քաղաքացիներ, առևանգվեցին և հետագայում մահմեդականացվեցին հարյուրավոր աղջիկներ ու երեխաներ, զնդաններում տանջամահ կամ սրախողխող արվեցին հարյուրավոր երևելի ու անմեղ մարդիկ: Մարդկության դեմ իրագործված այդ ոճրագործությունից ու ռազմական հանցագործությունից անգամ

[1] Հետազոտությունն իրականացվել է ԱՀ ԿԳՍ նախարարության տրամադրած ֆինանսական աջակցության շնորհիվ՝ N 18 AK-007. «Ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները Արցախում» գիտական թեմայի շրջանակում:

100 տարի անց հայ պատմագրությունն այդպես էլ սպառիչ պատասխաններ չի տվել Արցախում 1920 թ. ռազմաքաղաքական զարգացումների և թուրք-ադրբեջանական զավթիչների դեմ պայքարի, Ալեքսանդր Խատիսյանի կառավարության քաղաքականության, ընդհանրապես Արցախի և, մասնավորապես, հայ դիմադրական շարժման կենտրոն Շուշիի ինքնապաշտպանության հետ առնչվող բազմաթիվ հարցերի:

Ձեռնարկելով սույն հոդվածը՝ նպատակ ենք ունեցել 1920 թ. գարնանային ռազմարշավում Շուշի քաղաքի ինքնապաշտպանության ձախողման պատճառների վերաբերյալ հայ պատմագրության գնահատականների քննական վերլուծության հիման վրա վեր հանել դրանց պատմական, քաղաքական, իրավական ու ռազմական տեսանկյունները և արդի մարտահրավերների հետ համադրմամբ կատարված համապատասխան հետևություններն ու անհրաժեշտ եզրահանգումները ներկայացնել ուսումնասիրողների ուշադրությանը:

Առաջադրված նպատակին հասնելու համար հետամուտ ենք եղել հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմանը.

ա) ներկայացնել թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, ինչը թույլ կտա որոշարկել սույն հոդվածի հեղինակի տեղն ու դերը հիմնախնդրի ձևակերպման ու գիտականորեն պարզաբանման գործում,

բ) սահմանել Շուշիի ինքնապաշտպանության ձախողման պատճառների շուրջ հայ պատմագրության առաջադրած գաղափարների ու տեսակետների վերլուծության ռազմագիտական բաղադրիչները,

67. Վիրաբյան Ա. 2003, Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում. 1918-1920 թթ., կազմ.՝ Միրզոյան Ս., Ղազիյան Ա., Երևան, ՀՀ պատմութ. արխիվ, 523 էջ:
68. Վիրաբյան Ա. 2012, Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում. 1918-1920 թթ., փաստաթղթերի ժողովածու, գիրք II, կազմ.՝ Միրզոյան Ս., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, 592 էջ:
69. Վիրաբյան Վ. 2011, Արցախ-Ղարաբաղյան հիմնախնդիրը անդրկովկասյան հանրապետությունների 1920 թ. ապրիլյան վեհաժողովում, Գիտաժողովի նյութեր: Միջազգային գիտաժողով՝ նվիրված ԼՂՀ և ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձին:

Խաղաղ Կովկասը տարածաշրջանի զարգացման գործոն / ԼՂՀ ԿԳՆ: Մեսրոպ Մաշտոց համալսարան, Երևան, «Լիմուշ» հրատ., էջ 275-290:
70. Տեր-Գասպարյան Ռ. 1993, Շուշի քաղաքը [Շուշիի հիմնադրման պատմությունը], պատ. խմբ.՝ Պ.Մ. Մուրադյան, Պ.Ա. Չոբանյան, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 125 էջ:
71. Տեր-Դանիելյան Մ. (Արամայիս) 1993, Ղարաբաղի տագնապը (պատմության համար). օրագրություն (26 ապրիլի-26 հուլիսի 1919 թ.), խմբ.՝ Մ. Մ. Արշակյան, Երևան, «Հայաստան», 116 էջ:
72. Տեր-Սարգսյան Մ. (Միտսար) 1991, Լեռնային Ղարաբաղ, «Ավանգարդ», 21 մարտի, № 34, 23 մարտի, № 35, էջ 3:
73. Ուլուբաբյան Բ. 1994, Արցախյան գոյապայքարը, Երևան, «Գիր գրոց», 300 էջ:
74. Քաջազնունի Հ. 1923, ՀՀ դաշնակցությունն անելիք չունի այլևս, Թիֆլիս, 111 էջ:
75. Азербайджан 1920, 2 апреля, № 67:
76. Арутюнян М. 2005, Отступление от политики арменоцида и миф о восстании (К годовщине мартовской трагедии в Шуши), «Азат Арцах», 26 марта, № 20, с. 4:
77. Баликян О. 1990, К политике Азербайджанской республики в феврале 1920 г., «ВАА», № 2, с. 256-258.
78. Газарян В. 1988, Двух истин не бывает, «Советский Карабах», 20 июля,
79. Газиян А., «… Но в Карабахе войн не станет меньше» свидетельствуют письма убийц и мародеров после Шушинской резни 1920 г., «Голос Армении», 30 марта 2004 г.,№ 32, с. 1-2:
80. Гулиев Д. (ред.) 1989, К истории образования Нагорно Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918 1925: Документы и материалы. Баку, «Азернешр», 334 с.:
81. Атаджанян В. А. (ред) 1989, Товмасян В. А., Нерсисян Ю. Б. (сост.), Карабахский вопрос: история и сущность в документах и фактах, 2-е перераб. изд., Степанакерт, Изд.-во «Арцах», 159 с.
82. Мелик-Шахназаров З. 1995, Записки карабахского солдата: Воспоминания участника событий 1918-1920 гг. в Нагорном Карабахе, Москва, Шварц: Центр рус.-арм. инициатив, 79 с.
83. Микаелян В., Хурщудян Л. 1988, Некоторые вопросы истории Нагорного Карабаха, «ВОН», № 4, с. 43-56:
84. Мкртчян Ш. Давтян Щ. 1997, Шуши. город трагической судьбы, Ереван, «Амарас», 160 с.
85. Галоян. Г., Худавердян К. (ред.) 1988,Нагорный Карабах (Историческая справка), Ереван, Изд. АН Арм. ССР, 96 с.
86. Микаелян В. А.(ред.) 1992, Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, Ереван, Изд-во АН Армении, 756 с.
87. Атаджанян В. А. (ред) 1989, Правда о Нагорном Карабахе. Сост. В. А. Товмасян, Ю. Б. Нерсисян. Степанакерт, «Арцах», 132 с.
88. Факты о геноцидной политике Азербайджана. Составитель, ответственный редактор, автор вступительной статьи и комментария кандидат исторических наук, доцента М. А. Арутюнян. Качар (Ежегодник НЦК). Книга 12 (143-154), 2018, Шуши, Издательство научного центра «Качар», 2020, 240 с.
89. Эвоян В., Баликян О., Из истории Нагорного Карабаха (1918-1921 гг.), «ВАА», 1989, № 1, с. 86-130:

90. Balayan V. 2016, The Massacre of the Armenians of Shushi on March 23, 1920 as a Consequence of Impunity of the Armenian Genocide in 1915, Journal of Armenian Studies (International Review of Armenian Studies), Y., Printing House of the NAS RA, , № 2, p. 95-105:
91. Hovannisian R. 1972, The Republic of Armenia. v. 1. The first year, 1918 1919. University of California press, B.. L.A. L., 592 p.
92. Hovannisian R. 1996, The Republic of Armenia. v. 3. FromLondon to Sevres, February-August, 1920. University of California press, B. L.A. L., 535 p.
93. Melik Shahnazarow Z. 1996, Sketches of Karabakh soldier, Moscow, 103 p.

Ամփոփում

Շուշիի 1920 թ. մարտյան եղեռնագործության պատճառները և արդի մարտահրավերները (պատմական, քաղաքական, իրավական ու ռազմական տեսանկյուններ)

Միեր Հարությունյան

Ձեռնարկելով սույն հոդվածը՝ նպատակ ենք ունեցել քննական վերլուծության ենթարկելու 1920 թ. գարնանային ռազմարշավում Շուշի քաղաքի ինքնապաշտպանության ձախողման պատճառների վերաբերյալ հայ պատմագրության գնահատականները և արդի մարտահրավերների հետ համադրմամբ կատարված համապատասխան հետևությունների ու անհրաժեշտ եզրահանգումների վրա հրավիրելու ուսումնասիրողների ուշադրությունը:

Հայ պատմագրության մեջ այս կամ այն կերպ արծարծված, բայց դեռևս միասնական կարծիքի չարժանացած հիմնահարցերից կարելի է հատկանշել Շուշիից նահանջող ռուսական ստորաբաժանման հանդեպ վերաբերմունքը, զենքի և զինամթերքի, կռվող ուժի պակասը, նախանշանակման վայր Շուշիի գնդի տեղափոխումը, ռազմավարական նշանակություն ունեցող Բերդաձորի անկումը, հայերի դիմադրության կարևոր կենտրոններից մեկի՝ Բաքվի կորուստը, զորավար Անդրանիկի արշավանքի ընդհատումը, կառավարման ու անվտանգության ապահովման ոլորտներում թույլ տրված կոպիտ սխալները, հատկապես ինքնապաշտպանության սխալ ռազմավարությունը, նախահարձակ մահմեդականների հետ գոյակցության հնարավորության մասին պատրանքները, ռազմաքաղաքական ու սոցիալ-տնտեսական մի շարք գործոնների անտեսումը և այլն:

Շուշի քաղաքի ինքնապաշտպանության ձախողման պատճառներին առանձին անդրադառնալը պայմանավորված է պատմագրության հիմնախնդիրները ճիշտ հասկանալու և պատճառահետևանքային կապի մեջ դիտարկելու անհրաժեշտությամբ:

Հիմնաբառեր. *Շուշի, մարտյան եղեռնագործություն, Զանգեզուր, Արցախ, Հայաստան, Ադրբեջան, գեներալ-նահանգապետ, Այսրկովկաս, ինքնապաշտպանություն, ՀՅԴ*

Резюме

Причины мартовского арменоцида 1920 г. в г. Шуши и современные вызовы (исторические, политические, правовые и военные аспекты)

Мгер Арутюнян

Работая над статьей, мы стремились критически анализировать оценки армянской историографии о причинах провала самообороны города Шуши во время весенней кампании 1920 года и обратить внимание исследователей на соответствующие выводы и необходимые заключение, сделанные в сочетании с современными вызовами.

Из проблем, поднятых в армянской историографии тем или иным образом, но еще не удостоившись единого мнения, можно отметить отношение к российскому подразделению, отступившему из Шуши, дефицит оружия и боеприпасов, нехватка боевой силы, транспортировка Шушинского полка до места назначения, падение имеющего стратегическое значение Бердадзора, потеря одного из важнейших центров армянского сопротивления Баку, прерывание маневра генерала Андраника, грубые ошибки в сфере управления и обеспечения безопасности, особенно неправильная стратегия самообороны, иллюзии возможности сосуществования с агрессивно настроенными мусульманами, пренебрежение рядом военно-политических и социально-экономических факторов и т. д.

Акцент на причинах провала самообороны Шуши связан с необходимостью правильно понять проблемы историографии и рассмотреть их в причинно-следственной связи.

Ключевые слова: *Шуши, мартовский геноцид, Зангезур, Арцах, Армения, Азербайджан, генерал-губернатор, Закавказье, самооборона, АРФД*

Abstract

Causes of the March Armenocide of 1920 in Shushi and Modern Challenges (historical, political, legal and military aspects)

Mher Harutyunyan

Undertaking this article, we aimed to analyze the estimations of Armenian historiography on the reasons for the failure of self-defense of Shushi in the spring of 1920 military campaign, to draw the researchers' attention to the relevant findings and necessary conclusions made in combination with modern challenges.

Among the keywords that have been mentioned in Armenian historiography in one way or another, but have not yet received a common opinion, are the attitude towards the Russian unit retreating from Shushi, the lack of weapons, ammunition and fighting force, transportation of

the Shushi regiment to its destination, the fall of Berdadzor, which is of strategic importance, the loss of Baku which was one of the most important centers of Armenian resistance, the interruption of General Andranik's invasion, gross mistakes in the sphere of management and security, especially the wrong strategy of self-defense, the illusions about the possibility of coexistence with aggressive Muslims, the neglect of a number of military-political and socio-economic factors, etc.

Referring to the reasons of the failure of Shushi's self-defense separateley is associated with the need to correctly understand the problems of historiography and consider them in a causal connection.

Keywords: *Shushi, March genocide, Zangezur, Artsakh, Armenia, Azerbaijan, Governor-General, Transcaucasia, self-defense, ARF*

ՀԱՄԼԵՏ ՄԱՐՏԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ,
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, պ.գ.դ.
Հոդվածը ներկայացվել է 22.04.2020,
գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 20.04.2021

ՇՈՒՇԻԻ 1920 Թ. ՋԱՐԴԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԵՐԸ

1918 թ. հունիսի 4-ին, երբ Անդրկովկասյան Սեյմի ու Կոմիսարիատի լուծարմամբ կնքվեց Բաթումիի հաշտության պայմանագիրը, Հարավային Կովկասում ձևավորվում են երեք անկախ հանրապետություններ՝ Հայաստան, Վրաստան և Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետություն, որը Թուրքիայի ռազմական նախարար Էնվեր փաշայի եղբոր՝ Նուրի փաշայի և Ջեմալ Ջահիդ բեյի գլխավորած թուրքական զորքերի կողմից 1918 թ. սեպտեմբերին Բաքու քաղաքը գրավելուց հետո կոչվեց Ադրբեջանի դեմոկրատական հանրապետություն:

Բաթումիի պայմանագրով Հարավային Կովկասում ձևավորված երեք հանրապետություններն ի սկզբանե ունեին որոշակի հակասություններ, որոնք վերածվում են բացահայտ թշնամական գործողությունների, անգամ պատերազմի:

Հարկ է նշել, որ հայ և հարավկովկասյան թուրքերի, իսկ Բաթումիի պայմանագրից հետո Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների փոխհարաբերություններում վիճելի տարածքների հարցում առավել դժվարն ու անլուծելին Արցախի, Զանգեզուրի ու Շարուր-Նախիջևանի խնդիրն էր. այդ գավառների նկատմամբ Ադրբեջանի իշխանությունները, հատկապես ռուսական զորքերի կողմից Կովկասյան ռազմաճակատը պարպելուց հետո, ավելի ուժգնությամբ էին շարունակում դրսևորել իրենց զավթողական ձգտումները:

Հայաստանը թեպետ հռչակել էր իր անկախությունը, սակայն տնտեսական և ռազմաքաղաքական առումով դեռևս չափազանց թույլ էր և բոլորովին ի զորու չէր որևէ լուրջ քայլեր ձեռնարկել՝ պետականությունը հզորացնելու ու վիճելի տարածքների հարցը հօգուտ հանրապետության լուծելու ուղղությամբ:

Իրենց որդեգրած ծրագրերի իրագործման գործում նախաձեռնությունն ու հնարավորությունն այդ ժամանակահատվածում թուրքական կողմինն էր: Պատե-

ռազմը շարունակվում էր, և թուրքական զորքերը, լավագույնս օգտվելով ռուսական զորքերի զանգվածաբար հեռանալու պատճառով ռազմաճակատի մերկացումից, առանց մեծ ջանքեր գործադրելու, Թուրքիայի պաշտպանության նախարար Էնվեր փաշայի եղբոր՝ Նուրի փաշայի գլխավորությամբ 1918 թ. մայիսի կեսերին մուտք են գործում Հարավային Կովկաս[1]:

Ռիչարդ Հովհաննիսյանի բնութագրմամբ՝ «Այնժամ Ադրբեջանի հանրապետությունը մոտակա Ելիզավետպոլը (Գյանջա) ընտրեց որպես իր ժամանակավոր մայրաքաղաք և դիմեց թուրքական օգնությանը, որպեսզի իր գերիշխանությունը հաստատի Բաքվի նահանգում և Ելիզավետպոլի նահանգի մնացած մասում՝ Ղարաբաղում և Զանգեզուրում»[2]:

Հարավային Կովկաս թուրքական զորքերի մուտք գործելուց հետո թուրք իշխանությունների հանձնարարությամբ Նուրի փաշան Գանձակում կազմակերպում է իսլամական բանակը, որը պիտի սատար կանգներ ինքնահռչակ Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետությանը՝ բռնազավթելու հայկական նահանգները, այդ թվում՝ նաև Զանգեզուրն ու Արցախը[3]:

Հաստատվելով Գանձակում՝ Նուրի փաշան վերջնագիր է ներկայացնում արցախահայության 1-ին համագումարի մասնակից պատգամավորների կողմից 1918 թ. հուլիսի 22-ին ընտրված Արցախի ղեկավար մարմնին՝ Արցախի կառավարությանը (Լեռնային Ղարաբաղի ժողովրդական կառավարություն) և պահանջում ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը:

Արցախի 1-ին համագումարի մասնակից պատգամավորները, քննարկելով Նուրի փաշայի՝ իրենց առաջադրած Ադրբեջանի գերիշխանությունն ընդունելու առաջարկությունը, մերժում են ընդունել այն: Ռիչարդ Հովհաննիսյանի ամփոփ բնութագրմամբ՝ «1918 թ. օգոստոսի սկզբներին արցախահայությունն իր գումարած առաջին համագումարում մերժում է ընդունել իրեն ներկայացրած Նուրի փաշայի վերջնագիրն ու հետ է վերադարձնում նրա պատվիրակներին»[4]:

Նույն տարվա սեպտեմբերի 12-ին Արցախի ժողովրդական կառավարությունը ստանում է Ջամալ-Ջահիդ փաշայի ստորագրությամբ վավերացված հետևյալ վերջնագիրը.

Ա. Ընդունել Ադրբեջանի գերիշխանութիւնը

Բ. Յանձնել ժողովրդի մօտ գտնուող ռազմամթերքը

Գ. Բանալ Ասկերան-Շուշի խճուղին…[5]:

Ստեղծված իրավիճակում Արցախի կառավարությունը պիտի անհրաժեշտ քայլեր ձեռնարկեր դիմակայելու իր անվտանգությանը սպառնացող մարտահրավերներին: Այդ նպատակով արցախահայությունը 1918 թ. սեպտեմբերի 6-ին Շուշիում հրավիրում է երկրորդ համագումարը, որ ի թիվս քննարկվող մի շարք հրատապ հարցերի՝ պիտի իր վերաբերմունքն ու գնահատականը հայտներ Արցախի ժողովրդական կառավարության գործունեության վերաբերյալ:

---

[1] Յուսաբեր, 1918, թիւ 235:
[2] Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 88:
[3] Տես նույն տեղում:
[4] Տես Հովհաննիսյան Ռ., Նշվ. աշխ., էջ 88:
[5] Յուսաբեր, 1918, թիւ 240:

Համագումարի որոշմամբ Արցախի ժողովրդական կառավարությունը հետայսու կոչվելու էր Արցախի Հայոց Ժողովրդական (Ազգային) Խորհուրդ, որը բաղկացած էր 10 անդամներից:

Խորհրդի որոշմամբ՝ իր անդամների կեսը մեկնելու էր գյուղերը, իսկ մյուս կեսը պիտի մնար քաղաքում[1]:

Եղիշե Իշխանյանի հավաստմամբ՝ երկրորդ համագումարի պատգամավորները երեք-չորս օր քննարկում են վերջնագիրը և որոշում, որ «Ղարաբաղի հայութիւնը չի կարող ճանաչել Ադրբէջանի գերիշխանութիւնը, եւ որ Ղարաբաղի հարցը Բաթումի խորհրդաժողովի որոշումով պէտք է լուծում ստանայ Պոլսի խորհրդաժողովում, մինչեւ այդ Ղարաբաղը պէտք է մնայ ինքնուրոյն»[2]:

Թուրք հրամանատարության ու Ադրբեջանի իշխանությունների՝ Արցախին ներկայացրած վերջնագրերը լուսաբանող սկզբնաղբյուրների ուսումնասիրությունն աներկբա ցույց է տալիս, որ արցախահայության հրավիրած համագումարների մասնակից պատգամավորներն իրենց ներկայացված վերջնագրին մերժողական կամ խուսափողական պատասխան տալու համար, որպես կանոն, վկայակոչում են Պոլսում կայանալիք խորհրդաժողովը, որը կոչված է որոշելու վիճելի տարածքների, այդ թվում նաև Արցախի կարգավիճակի, պատկանելիության հարցը: Անտարակույս, Արցախի կողմից համանման մարտավարությամբ առաջնորդվելը պայմանավորված է ինչպես իր ներքին կյանքում տիրող իրավիճակի, այնպես էլ Հայաստանում տիրող կացության թելադրանքով:

Թուրքերի՝ Արցախին տիրելու նկրտումներն ավելի գործնական բնույթ են կրում հատկապես Բաքվի անկումից հետո: Թուրքական զինուժը սեպտեմբերի 14-ին գրավում է Բաքուն ու սրի քաշում հայ բնակչությանը: Իր ուշադրությունն առավելագույնս կենտրոնացնելով Զանգեզուրի ու Արցախի վրա՝ թշնամին ծրագրում է իր առաջադրած վերջնագիրը չընդունելու դեպքում զենքի ուժով լուծել խնդիրը:

1918 թ. սեպտեմբերի 19-ին Արցախի կառավարությունը ստանում է Նուրի փաշայի երեք լեզուներով՝ թուրքերեն, ֆրանսերեն և հայերեն գրված վերջնագիրը, որի միջոցով թուրք հրամանատարությունը հերթական անգամ առաջարկում է ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը և արգելք չհանդիսանալ զորքի Շուշի մուտք գործելուն՝ միաժամանակ սպառնալով, որ հակառակ պարագայում արցախահայության հետ կվարվեն այնպես, ինչպես վարվել են Սասունի և Զեյթունի հետ[3]:

Այդ նույն օրերին շարունակվում էին Արցախի 3-րդ համագումարի աշխատանքները: Համագումարի երկրորդ օրը շրջաններից հաղորդագրություններ են հասնում, որոնք հայտնում են Վարանդայի և Խաչենի ուղղությամբ դեպի Արցախ թուրքական զորքերի առաջխաղացման մասին: Նուրի փաշան, կանխատեսելով, որ Արցախը դարձյալ կարող է մերժել իր առաջադրած վերջնագիրը, հրամայում է, որ Աղդամում վաղօրոք կենտրոնացած Ջամիլ Ջահիդ բեյի գլխավորած դիվի-

[1] Տես Մշակ, 1919, 27 փետրվարի:
[2] Հայրենիք ամսագիր, 1933, թիւ 11, էջ 89:
[3] Տես Կիսիբեկյան Ա., նշվ. աշխ., հ. 1, էջ 337:

զիան պատրաստվի ներխուժել Արցախ: Կարելի է ասել, որ Ասկերանի անկումից հետո թուրքերի համար բացվում է դեպի Շուշի տանող ուղին: Հարց է ծագում, ինչպիսի՞ ռազմական կարողություններ ու ինքնապաշտպանական ուժեր ուներ Շուշին, և արդյո՞ք հայ բնակչությունը մարտական ու բարոյահոգեբանական պատրաստվածությամբ ի զորու էր կազմակերպել քաղաքի ինքնապաշտպանությունը և խոչընդոտել թուրքական զորամասի մուտքը Շուշի: Վստահաբար կարելի է պնդել, որ եթե ադրբեջանցիները փորձեին միայն իրենց ռազմական ուժերով ներխուժել Շուշի, ապա քաղաքի հայ բնակչությունը, չնայած ունեցած զենք ու զինամթերքի սահմանափակությանը, այնուամենայնիվ կարող էր դիմել ինքնապաշտպանության ու խոչընդոտել թուրքերի մուտքը քաղաք: Բայց իրավիճակը կտրուկ փոխվում է, երբ ասպարեզում է հայտնվում Ջամիլ Ջահիդ բեյի՝ զրահատեխնիկայով զինված կանոնավոր զորամասը:

Պիտի ասել, որ Շուշին առանձնահատուկ նշանակություն ուներ ոչ միայն հայության համար, այլև թուրք հրամանատարության հետապնդած ծրագրերում:

Գերասիմ Բալայանի և Զախար Յոլյանի խմբագրած «Ղարաբաղի դեպքերի վերաբերյալ՝ սկսած հունիս ամսից 1918 թ. մինչև մայիս ամսի 26-ը 1920 թ.» խորագիրը կրող զեկուցագրի ուշագրավ բնութագրմամբ՝ «Շուշին հանդիսանում էր միակ կուլտուր-կրթական կենտրոնը թէ՛ Ղարաբաղի և թէ՛ Զանգեզուրի հայութեան համար իր միջնակարգ դպրոցներով, գրադարաններով և հասարակական և այլ կազմակերպութիւններով, ուր մօտ 100 տարւայ ընթացքում շատ սերունդներ էին կրթւել: Շուշին միակ շաղկապն էր 300.000 հայ բնակչութեան, և ներկայումս, երբ չկայ այդ քաղաքը, չկայ ուրեմն նաև կրթական կենտրոն ահագին թւով բնակչութեան համար, չկայ մարմնի սիրտը, չկայ Ղարաբաղին և Զանգեզուրին մտաւոր կեանքի մատակարարողը»[1]:

Թուրքական կողմը, անշուշտ, չէր կարող չիմանալ Արցախի և Զանգեզուրի հայության կյանքում Շուշիի ունեցած անգնահատելի ու վճռորոշ դերն ու նշանակությունը և այդ պատճառով Կովկասում հաստատվելու առաջին իսկ օրից իր գլխավոր ուշադրությունը բևեռում է նախ և առաջ Շուշի քաղաքին տիրելուն:

Պատրաստվելով ներխուժել Շուշի՝ քաղաքի մահմեդական մասի պարետ Հասան Բասրի բեյը Ջամիլ Ջահիդ բեյի հրամանով պարիսպների հարևանությամբ կենտրոնացնում է զգալի քանակությամբ մարտական ուժեր և հրահանգում հայկական քաղաքամասին հավաքել ու հանձնել իր մոտ գտնվող զենքը:

Այս իրավիճակում իր բարձրության վրա է գտնվում Ազգային խորհուրդը: Վաղօրոք տեղեկանալով թուրք հրամանատարության մտադրության մասին և շատ լավ հասկանալով, որ դրանով թուրքական կողմը ձգտում է զինաթափել ու հեշտությամբ բռնազավթել Շուշին՝ Ազգային խորհուրդը գաղտնի հրահանգում է բնակչությանը թաքցնել զենքը, իսկ թուրք պարետին հանձնել միայն հնացած բերդան հրացանները: Կատարելով Ազգային խորհրդի հրահանգը՝ հայկական քաղաքամասի հայերը հավաքում են բերդան հրացանները, և այն պահին, երբ ուզում են բարձել սայլերը, հանկարծ վրա են հասնում մի խումբ երիտասարդներ,

[1] ՀՅԴ ԿԱ (Հ.Յ. Դաշնակցության Բոստոնի Կենտրոնական Արխիվ, թղ. (թղթածրար), 1649, գ. 1, էջ 5:

գողանում են ամբողջ զենքն ու արագորեն անհետանում[1]:

«Այդ դեպքին տեղեկանալուց հետո,- գրում է Արցախի կառավարության ռազմական մասի վարիչ Հարություն Թումյանը,- թուրքերը այլեւս անօգուտ համարեցին զենք պահանջել քաղաքի հայերից: Նրանք բավականացան հայտարարելով, որ զենք պահողները խստիվ կպատժվեն»[2]:

Սեպտեմբերի 25-ին Ջամիլ Ջահիդ բեյի գլխավորած 6000 զինվորներից բաղկացած Գալիպոլյան դիվիզիան, իր կազմում ունենալով նաև 3 զրահապատ ինքնաշարժ, 66 գնդացիր ու 9 դաշտային թնդանոթ, ճանապարհին ռմբակոծելով ու զինաթափելով հայկական գյուղերը, ներխուժում է Շուշի[3]:

Առանց դիմադրության գրավելով Արցախի մայրաքաղաք Շուշին՝ Ազգային խորհրդի մի քանի անդամների ու մտավորականների ձերբակալելուց հետո Ջամիլ Ջահիդ բեյը ձգտում է նույնպիսի հաջողությամբ և առանց ավելորդ ջանք ու եռանդ գործադրելու՝ գրավել նաև Արցախն ամբողջությամբ, բայց գավառը, ինչպես աներկբա ցույց տվեց ժամանակը, բնավ տրամադրված չէր որևէ դեպքում, առանց դիմադրության հանձնվել թուրք-ադրբեջանական զորամասերին ու մանավանդ ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը:

Ավելին՝ Արցախի բնակավայրերը ներխուժած թուրք-ադրբեջանական ռազմական ուժերի դեմ մղած մի շարք կռիվներում արցախայության ինքնապաշտպանական ուժերը տոնում են անժխտելի հաղթանակներ ու խափանում գավառը բռնազավթելու թշնամու բազմիցս կրկնվող ձեռնարկումները:

Հարկ է ընդգծել, որ այդ ժամանակահատվածում, բացի Շուշի քաղաքից, գավառը թուրք ադրբեջանցիների համար մնում էր բացարձակապես անձեռնմխելի[4]:

Արցախն ու Զանգեզուրը բռնազավթելու նորահռչակ Ադրբեջանի իշխանությունների նկրտումները նախկին սցենարով դրսևորվում են նաև Առաջին աշխարհամարտից հետո, երբ Հարավային Կովկասում հաստատվում են հաղթող Անտանտի տերությունները, որոնց շարքում առավել ազդեցիկն ու գերիշխողը Անգլիայի դիվանագիտական ու ռազմական ներկայացուցչությունն էր, որն ի սկզբանե որդեգրել էր, կարելի է ասել, հակահայ, ադրբեջանամետ քաղաքականություն:

Պատմական տվյալ ժամանակահատվածում Արցախում և Զանգեզուրում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունն աներկբա հավաստում է, որ Ադրբեջանի իշխանությունների ու անգլիական կողմի համար գաղտնիք լինել չէր կարող Զանգեզուրն ու Արցախը խաղաղ ճանապարհով Ադրբեջանին ենթարկելու իրողությունը: Անցյալի փորձը, Զանգեզուրի և Արցախի հայության անկոտրում կամքն ու մարտական ոգին միանշանակ հավաստում են, որ հակառակորդ կողմը հարցի լուծումը տեսնում էր միմիայն զենքով:

Այս կապակցությամբ արտահայտելով Արցախի նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների որդեգրած քաղաքականությունը՝ Ադրբեջանի զինված ուժերի շտաբի պետ, ցարական բանակի գեներալ-լեյտենանտ Սուլկևիչը Խոսրով բեկ

---

[1] Տես Թումյան Հ., նույն աշխ., էջ 170:
[2] Նույն տեղում:
[3] Տես ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 1, էջ 5:
[4] Տես Գևորգյան Հ., ՀՀ կառավարության մարտավարությունը Սյունիքում և Արցախում 1918-1920 թթ., Երեւան, 2018, էջ 510 631:

Սուլթանովին հասցեագրած հրահանգում գրում է. «Գլխից հանել ու դեն շպրտել Ղարաբաղի հարցի խաղաղ լուծման վերաբերյալ հասկացողությունը»[1]:

Ավելին՝ հստակ ներկայացնելով Արցախի խնդիրը բացառապես զենքի ուժով լուծելու Ադրբեջանի պաշտոնական դիրքորոշումը՝ Սուլկևիչը միաժամանակ խորհուրդ է տալիս «...աբդուլհամիդյան հեծելագնդերի օրինակով քրդերից կազմակերպել զինված ջոկատներ և դրանք ամենուրեք օգտագործել հայերի դեմ»[2]:

Ստանալով կառավարության հանձնարարությունն ու ֆինանսական անհրաժեշտ միջոցները՝ Խոսրով բեկ Սուլթանովը թուրք սպաների աջակցությամբ կազմակերպում է քրդական հատուկ զինված հեծյալ խմբեր, որոնք կոչվում էին ջանբեզարներ (կյանքից հոգնած, հուսահատված) և դրանք կենտրոնացնում է Շուշիում ու Արցախի սահմանամերձ շրջաններում (Աղդամ, Ջևանշիր, Ջեբրայիլ): Ուշագրավ է, որ քրդական հեծելախմբերի հրամանատարությունը Խոսրով բեկ Սուլթանովը վստահում է իր եղբայրներին՝ Սուլթան բեկին և Իսկանդեր բեկին[3]:

Սպառելով արցախահայության՝ Ադրբեջանի գերիշխանությունը հոժարակամ ընդունելուն միտված բոլոր փորձերը՝ Խոսրով բեկ Սուլթանովը 1919 թ. մայիս-հունիս ամիսներին դիմում է զենքի:

Սթափ գնահատելով ու համակողմանիորեն հաշվարկելով Արցախի համար Շուշիի ունեցած ռազմավարական դերն ու նշանակությունը՝ Սուլթանովը վճռում է նախ և առաջ լուծել քաղաքին լիովին տիրելու խնդիրը: Նրա նախաձեռնությամբ Ադրբեջանի բանակի մի քանի կանոնավոր զորամասեր, ինչպես նաև իր եղբոր՝ Սուլթան բեկ Սուլթանովի գլխավորած քրդական ու մահմեդական հրոսակախմբերը մայիսի 3-ին կենտրոնանում են Շուշիի շրջակայքում և փակում են դեպի քաղաքը ձգվող ուղիները: Միաժամանակ, ադրբեջանական կանոնավոր զորախմբերը գրավում են հայկական թաղամասի կարևորագույն դիրքերն ու հրամանատարական բարձունքները, դրանով քաղաքամասը կտրում դրսի աշխարհից:

Սուլթանովի տենդագին պատրաստությունները, ինչ խոսք, չէին կարող աննկատ մնալ. հայկական կողմը նույնպես որոշակի քայլեր է ձեռնարկում դիմակայելու ադրբեջանական հարձակումներին:

Հովակ Ստեփանյանի իրազեկմամբ՝ Զինվորական շտաբի հանձնարարությամբ իրենց հաջողվել էր մի քանի տասնյակ զինվորներ մտցնել Շուշի, նրանցից ամենաընտիր 60 զինվորների Ազգային խորհրդի կարգադրությամբ տեղաբաշխում են քաղաքի ամենակարևոր ու իշխող դիրքում՝ զորանոցում: Դարձյալ իր սև գործն է կատարում գեներալ Շատելվորդը: Հենց նրա գործուն աջակցությամբ ու հրահանգով հունիսի 4-ին Շուշիում գտնվող անգլիական առաքելության զինվորները հայերից խաբեությամբ բռնագրավում են քաղաքին տիրապետող ամենալավ դիրքը՝ զորանոցը, ու այն հանձնում թուրք զինվորների տնօրինությանը, ապա թմբուկների և զուռնայի նվագակցությամբ թուրքական թաղից թուրք զինվորներին բերում ու տեղաբաշխում են Շուշիի հինավուրց բերդի հայկական զորանոցում, ապա նաև գրավում քաղաքի հայկական մասը[4]:

---

[1] Սկյան Վ., Շուշի, Երևան, 1991, էջ 74:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 74-75:
[4] Տես ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 3, էջ 2:

«Շուշիի մեջ,- նշում է Լեոն,- սկսվեց վերջին ժամանակները սովորական դարձած երեւույթը՝ հրացանաձգությունը թուրք եւ հայ թաղերի միջեւ: Հայերը շտապեցին մտնել իրենց դիրքերի մեջ՝ պաշտպանվելու համար: Բայց եկան անգլոհնդիկ զորքերը, հանեցին հայերին դիրքերից եւ տարան նրանց քաղաքից դուրս: Հայերը, այսպիսով, մնացին անպաշտպան՝ թուրքերի կամայականությանը մատնված»[1]:

Խոսրով բեկ Սուլթանովը Շուշին լիովին տիրելու նպատակով ավելացնում է քաղաքում գտնվող թուրք զինվորների քանակը և խիստ հսկողություն սահմանում գավառից դեպի Շուշի ձգվող ուղիների վրա: Բացի այդ ամենից՝ հենց Սուլթանովի նախաձեռնությամբ քաղաքում տեղաբաշխված անգլիական առաքելության հնդիկ զինվորների թիվը հասցնում են 300-ի, որոնց մեծ մասը մուսուլմաններ են[2]:

Սուլթանովի ձեռնարկած պատրաստությունները պարզորոշ հուշում էին, որ Շուշիի հայ բնակչությանը սպասում է մի նոր, նախորդների համեմատությամբ առավել դժվարին մարտահրավերներ:

Հայկական զինուժի զգալի մասը թեպետ անգլիացիների գործուն մասնակցությամբ դուրս էր բերվել Շուշիից, բայց քաղաքում մնում են ոչ մեծ քանակությամբ մարտական ուժեր, որոնք պատրաստ էին մինչև վերջին փամփուշտը դիմակայել հակառակորդի հարձակումներին:

Պետք է նկատել, որ հայ մարտական ուժերի ամենախոցելի տեղը ռազմամթերքի պակասությունն էր, նրանք կռվում էին՝ ունենալով խիստ սահմանափակ քանակությամբ ռազմամթերք:

Սուլթանովը, վաղօրոք ստանալով Շուշիում անգլիական զինվորական ներկայացուցիչ մայոր Մոնկ Մեզոնի համաձայնությունը, հունիսի 4-ին հրամայում է թուրքական քաղաքամասից կրակ տեղալ հայկական քաղաքամասի վրա, ապա գրոհի է նետում քաղաքում գտնվող ադրբեջանական զորամասը, նրան աջակցող Հաջի Սամլուի քրդական հեծելագունդն ու թուրք քոչվորների հրոսակախմբերը:

Ե. Իշխանյանի վկայությամբ՝ «Մեր փամփուշտի պաշարը իւրաքանչիւր հրացանակիրի համար փամփուշտակալների մէջ եղածն էր՝ 150-200 հատ: Մեր մարտիկներին խստիւ արգելւած էր աննպատակ հրացան արձակելը, և թուրքերի կրակած 1500-2000 փամփուշտին պատասխանում էին մէկ ու անվրէպ գնդակով: Մեր զուսպ լինելը աւելի էր գազազեցնում թուրքերին, որոնք աւելի և աւելի էին ուժեղացնում կրակը: Մեր մօտաւոր հաշւով այն օրը՝ յունիսի 4-ին, թուրքերը երկու հարիւր հազարից աւելի փամփուշտ էին պարպել՝ շփոթ առաջ բերելու նպատակով, բայց իզուր»[3]:

Այդ օրը Շուշիում ընթացող կռվում ունենալով սահմանափակ քանակությամբ ռազմամթերք ու թվակազմով զգալիորեն զիջելով հակառակորդին՝ արցախցի քաջակորով մարտիկները մարտում դրսևորած իրենց անբասիր վարպետության ու մարտական հզոր, անկոտրում ոգով, հերթական անգամ ապացուցում են, որ

---

[1] Լեո, Անցյալից, 2009, էջ 390:
[2] Տես Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 223:
[3] Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղ. 1917-1920, Ե., 1999, էջ 450:

հաղթանակներ նվաճելու գլխավոր պայմանը բոլորովին էլ թվաքանակն ու զինվածության գերակշռությունը չէ:

Ռմբակոծության հետևանքով հայկական քաղաքամասի բնակչության մեջ թեպետ ծայր է առնում խուճապը, սակայն հայկական մարտական ուժերը համապատասխան դիրքեր են գրավում և դիպուկ համազարկերով պատասխանելով թուրքերի կրակահերթերին ու հարձակումներին՝ անկասելի գրոհ են ձեռնարկում ու դիրքերից դուրս մղում թուրք զինվորներին, որոնք, լքելով մարտադաշտը, դիմում են փախուստի:

Որպես ռազմավար՝ հայ մարտիկները հակառակորդից առգրավել են երկու գնդացիր, հրացաններ, ատրճանակներ և զինամթերք: Հայկական կողմը ունեցել է ութ վիրավորներ, որոնցից մահացել են երկուսը, իսկ կռվի ժամանակ զոհվել է հարյուրյակի լեգենդար հրամանատար, «Գեորգիևյան խաչ» շքանշանի լրիվ ասպետ մայոր Բագրատը, որն անձամբ է առաջնորդել հարյուրյակի գրոհն ու առաջինն է ներխուժել թուրք զինվորների հենակետը[1]:

Դժվար է ասել, թե հետագայում ինչպիսի ուղղվածությամբ պիտի զարգանային Շուշիում տեղի ունեցող կռիվները, եթե չմիջամտեին ծավալվող դեպքերին ակնդետ հետևող անգլիական առաքելության զինվորները:

Հարություն Թումյանի վկայությամբ՝ «Կռվի տաք ժամանակ, երբ սկսել էր ուժեղանալ խուճապը թուրքական դիրքերում, հնդկական զինվորների շղթան, արագ երթով մոտենալով հայկական պաշտպանական կետերին թիկունքից, հայ մարտիկներին ստիպեց հեռանալ դիրքերից: Հայերի ամբողջ պաշտպանական գիծը գրավվեց անգլիական զինված ուժերի կողմից»[2]:

Գ. Բալայանի և Զ. Յոլյանի կազմած զեկուցագրում այդ դեպքի մասին նույնպես նշվում է. «Յունիսի 4-ին 1919 թ. Ադրբէջանը ուժեղ զինուորական ցոյց է կազմակերպում և անգլիացիների միջոցով գրաւում է հայկական մասում գտնուող զօրանոցը: Անգլիացինրի միջոցով հեռացնում են դիրքերում գտնուած հայ մարտիկներին և քաղաքի պաշտպանութիւնը վերցնում իբրև իրենց ձեռքը»[3]:

Բրիտանական առաքելության ճնշմամբ հրացանաձգությունը դադարեցվում է հունիսի 5-ին, ժամը 16-ին:

Թուրքերը, օգտվելով անգլիացի զինվորների օգնությունից, վերականգնում են մարտաշարքերն ու ավելի սաստկացնում հայկական քաղաքամասի վրա տեղացող կրակն ու ռմբակոծությունը, իսկ հայկական ուժերը հայտնվում են ծանրագույն իրավիճակում:

Աբրամ Կիսիբեկյանի մեկնաբանմամբ՝ հայտնվելով ծանրագույն կացությունում՝ Շուշիի հայերը քաղաքի ռմբակոծությունը դադարեցնելու խնդրանքով ճարահատյալ դիմում են անգլիացիներին, որոնք, ի զարմանս դիմողների, պատասխանում են. «Ադրբէջանի կառավարութիւնը պահանջում է, որ Դաշնակցության ականավոր գործիչներ Եղիշե Իշխանյանը, Հարություն Թումյանը և Աստվածատուր Ավետիսյանը հեռանան Ղարաբաղից, որից հետո կդադարի քաղաքի ռմբա-

[1] Տես Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 39:
[2] Նույն տեղում, էջ 223:
[3] ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 1, էջ 11:

կոծումը, իսկ մենք նրանց ապահով Թիֆլիս կհասցնենք: Ուրիշ ելք չկար. նրանք ներկայացան ու անգլիական փակ ավտոյով անգլիացիների հսկողությամբ քաղաքից դուրս տարան այդ երեք անձնավորությանը: Մի ժամից հետո ռմբակոծությունը դադարեց[1]:

Ռմբակոծությունը, ճիշտ է, դադարում է Շուշիում, բայց գավառի շրջաններում դեպքերը զարգանում են միանգամայն հակառակ ուղղվածությամբ:

Քանի որ Արցախին զինական ու ֆինանսական օգնություն ցույց տալու գործում Հայաստանի հանրապետության հնարավորությունները խիստ սահմանափակ էին, ուստի Հայաստանի կառավարությունը ի սկզբանե քայլեր է ձեռնարկում զուտ դիվանագիտական ճանապարհով աջակցել Արցախին, և այդ նկատառումով ՀՀ վարչապետներ Հովի. Քաջազնունին ու Ալ. Խատիսյանը, ինչպես նաև արտաքին գործերի նախարարները բազմիցս դիմել են հաղթող Անտանտի տերություններին՝ հայցելով նրանց միջամտությունն ու օգնությունը:

Հայաստանի հանրապետության արտաքին գործերի նախարարը, Փարիզի խաղաղության կոնֆերանսում ՀՀ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանի միջոցով Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարին հասցեագրած դիմումում ներկայացնելով Ադրբեջանի իշխանությունների գործադրած բռնարարքների հետևանքով Արցախում տիրող աղետալի կացությունը, նշում է. «Ադրբեջանի կառավարությունը, օգտվելով գործելու լրիվ իրավունքի ազատությունից, իր բոլոր ջանքերը թափեց, որպեսզի զինվորական ձևով գրավի այն բոլոր շրջանները, որտեղ հայերը բնակչության հսկայական մեծամասնություն են կազմում:

Անցյալ հունվար ամսից ի վեր ադրբեջանական բանակը կրկնակի հարձակում գործեց Հայկական Ղարաբաղի դեմ, որի ժողովուրդը միաձայն որոշել էր իր ընդհանուր ժողովում միանալ մայր հայրենիքին՝ Հայաստանին:

Որպեսզի հայ լեռնականների դիմադրությունը ընկճի՝ ադրբեջանական կառավարությունը, որ իր զորքերով արդեն գրավել էր ռազմագիտական գլխավոր կետերը, իսկական դարան կազմակերպեց:

1919 թ. հունիս ամսի առաջին շաբաթում չորս գյուղեր սոսկալի կորուստներ կրեցին: Հայ կանայք ու աղջիկներ բռնաբարվեցին: Անզեն ժողովուրդը սրի անցկացվեց: Այդ անկարգությունների ընթացքում 580 մարդ սպանվեց...»[2]:

Այդ օրերին Արցախում կատարված դեպքերի մասին ուշագրավ տեղեկություններ են պարունակվում Գանձասար գյուղի բնակիչ Աթանես Ղահրամանյանի վկայությունում: Աթանես Ղահրամանյանը Խաչենից անցել է կռիվների շրջան ու այնտեղ ականատես է եղել ադրբեջանական կանոնավոր զորքերի ու նրանց համագործակցող քրդական հրոսակախմբերի կողմից հայկական գյուղերում իրականացված անմարդկային գործողություններին: Նա հունիսի 17-ին հասնում է Թիֆլիս ու իր տեսածն է պատմում Վրաստանում Հայաստանի հանրապետության ներկայացուցչության տեղեկատու բյուրոյին[3]:

Ըստ Ա. Ղահրամանյանի վկայության՝ հունիսի 4-ին, երբ ադրբեջանական

---

[1] Աբրամ Կիսիբեկյան, նշվ. աշխ., էջ 357:
[2] Նախիջևան Շարուր 1918 1921 թթ., էջ 190:
[3] Տես ՀՅԴ ԿԱ, թծ. 8/8, գ.19, էջ 1:

զինուժը ռազմական գործողություններ է սկսում Շուշի քաղաքում, քրդական հեծյալ հրոսակախմբերը Սուլթան բեկ Սուլթանովի գլխավորությամբ կազմ ու պատրաստ սպասում են Խանքենդի մերձակայքում, որպեսզի անհրաժեշտության դեպքում օգնության շտապեին քաղաքում գործող Խոսրով բեկ Սուլթանովի առաջնորդած զորախմբին, եթե հայերը դուրս քշեին նրան Շուշիից: Անգամ չսպասելով Շուշիում Խոսրով բեկ Սուլթանովի առաքելության ավարտին՝ Սուլթան բեկի գլխավորած քրդական հրոսակախմբերն անսպասելիորեն հարձակվում են Ղայբալլու գյուղի վրա ու սրի քաշում հայ բնակչությանը: Կոտորածից հրաշքով փրկվում են ընդամենը 18 կին ու երեխա: Ղայբալու գյուղի կոտորածի լուրն առնելուն պես Կրկժան, Փահլուլ, Ջամիլու, Ղլիշբաղ և Խանաբադ գյուղերի բնակիչները, մատնվելով ահ ու սարսափի, գաղթում են Ասկերանի շրջանի Խնածախ և Բալուջա գյուղերը[1]:

Հաջորդ օրը՝ հունիսի 5-ին, քրդական հրոսակախմբերը թուրքական զորամասի գործուն աջակցությամբ հարձակվում են Խնածախ գյուղի վրա: Արժանին պիտի մատուցել Խնածախի մարտիկներին. դույզն-ինչ տեղիք չտալով իրենց գյուղի վրա գրոհող թշնամու գերակշռող ուժերի ճնշմանը՝ անկոտրում պաշտպանությամբ դիմագրավում են հակառակորդի հարձակումներին: Անհաջողությունից հետո նույն ուժերը, ստանալով համալրում, հունիսի 6-ին և 7-ին շարունակում են գրոհները, բայց հայ ինքնապաշտպանական ուժերը, դիմելով հակահարձակման, հետ են մղում թշնամու ձեռնարկած բոլոր գրոհները:

Հունիսի 7-ին մարտադաշտում հայտնվում է անգլիական մի վաշտ, որի պետը պահանջում է, որ իրեն ներկայանա հայկական զինուժի հրամանատարը: Ի պատասխան անգլիական վաշտի հրամանատարի՝ հայերը հայտնում են, որ իրենք զինվորներ չեն, այլ հասարակ գյուղացիներ ու չունեն հրամանատար:

Ավելի քան տարօրինակ է ու զայրացուցիչ անգլիական վաշտապետի պահվածքն ու հետևյալ հայտարարությունը. «...գիւղացիները պէտք է հպատակուեն Ադրբէջանին, ու այդ դէպքում նրանց ֆիզիկական գոյութիւնը ապահովուած է. իսկ եթէ նրանք երկու օրուայ ընթացքում չհամաձայնուեն ենթարկուելու, ապա անգլիացիք վերցնում են իրենցից պատասխանատուութիւնը, եթէ կոտորածներ լինեն»:

Հայկական կողմը անգլիացի վաշտապետին պատասխանելու համար մատնանշում է թուրքերի ու քրդերի կողմից իրականացված Ղայբալու գյուղի կոտորածը, սակայն անգլիացիք պատասխանում են, որ դա Ադրբէջանի ներքին գործն է եւ իրենք այդպիսի գործերին չեն խառնւում»[2]:

Զուգահեռաբար Ադրբեջանի իշխանությունները բազմիցս ռազմական գործողություններ են ձեռնարկում՝ Զանգեզուրը բռնազավթելու նպատակով, բայց չարաչար պարտվում են՝ հանդիպելով զանգեզուրյան մարտական ուժերի անկոտրում դիմադրությանը:

Զանգեզուրում 1919 թ. նոյեմբերի 4-7-ը տեղի ունեցած քառօրյա հերոսամարտում կրած պարտությունից և հաջորդ տարվա հունվար-մարտյան դեպքերից հե-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

տո ադրբեջանական իշխանությունները եռանդով նախապատրաստություններ են տեսնում զենքի ուժով մեկընդմիշտ լուծելու Արցախի խնդիրը, և այդ գործում Ադրբեջանի թիկունքում դարձյալ կանգնած էր Թուրքիան, որ թեպետ պարտվել էր 1-ին աշխարհամարտում, բայց շարունակում էր ինչ-ինչ միջոցներով սատար կանգնել իր կրտսեր եղբորը:

Համաիսլամական ու համաթուրանական շարժումը շարունակում էր գործել, որի արտահայտությունը կարելի է համարել Թուրքիայի և Ադրբեջանի միջև 1919 թ. հոկտեմբերի 29-ին կնքված դաշինքը, որի հոդվածներից կարելի է հիշատակել. «Իսլամի Խալիֆայութեան ներկայացուցիչ օսմանեան կառավարութեան եւ Ադրբէջանի միջեւ, որ ճգնում է ձեռք բերել իր անկախութիւնը, սկզբունքով համաձայնութիւն կայացաւ, որ որեւէ յարձակման կամ Ադրբէջանի բնական սահմաններու պահպանման տեսակէտով առաջանալիք որեւէ վտանգի դէպքում օսմանեան կառավարութիւնը կարիք եղած պարագային իր զինուորական աջակցութիւնը պիտի տայ, եւ երկու մահմետական երկրներն իրար փոխադարձաբար նեցուկ պիտի ըլլան...»:

Համաձայն Մուդրոսի համաձայնագրի, երբ Թուրքիան պարտավորվում էր իր զորքերը դուրս բերել գրավյալ շրջաններից ու նաև Արցախից, այդ տարածքներում թողեց հսկայական քանակությամբ զենք ու զինամթերք, ինչպես նաև պատերազմի բովով անցած փորձառու սպաներ: Որևէ կասկած լինել չի կարող, որ դրանով Թուրքիան հետապնդում էր կանխամտածված, հեռահար նպատակներ:

Արցախում ծավալվող հետագա դեպքերը եկան ապացուցելու, որ Ադրբեջանի հանդեպ Թուրքիայի ստանձնած պարտավորությունն ավելի քան իրական էր ու կշռադատված:

Զանգեզուրյան մարտական ուժերը 1920 թ. հունվար-մարտ ամիսներին լիովին մաքրել էին Զանգեզուրի տարածքը մահմեդական բնակչությունից և դեպքերի զարգացմամբ պիտի լուրջ ուշադրություն բևեռեին Արցախի վրա: Քանի որ արդեն բացվել էին Զանգեզուրի տարածքով դեպի Արցախ տանող ուղիները, ուստի ՀՀ կառավարությունը կարող էր որոշակի մարտական ուժեր ուղարկել արցախահայությանն օգնության ու վերջնականապես լուծել գավառը Մայր հայրենիքին միավորելու խնդիրը:

Այսուհանդերձ, այդ նույն ժամանակահատվածում, երբ զանգեզուրյան մարտական ուժերը Զանգեզուրի տարածքը մաքրում էին թուրք բնակչությունից, Արցախում տիրող իրավիճակը ավելի և ավելի էր լարվում ու շիկանում:

Արցախում տիրող կացությունը ավելի պայթյունավտանգ է դառնում, երբ Ադրբեջանի կառավարությունը Անգլիայի ներկայացուցչության ղեկավար գեներալ Թոմսոնի համաձայնությամբ 1919 թ. հունվարի 15-ին Զանգեզուր-Արցախի գեներալ-նահանգապետ է նշանակում դոկտոր Խոսրով բեկ Սուլթանովին, որն առավելապես հայտնի էր իր բռնապետական հակումներով ու հայության նկատմամբ դրսևորած թշնամական վերաբերմունքով[1]:

Հիշյալ ժամանակահատվածում Հայաստանի հանրապետությունում, ինչպես նաև Զանգեզուրում ու Արցախում տիրող իրավիճակը հրամայաբար թելադրում

[1] ՀՅԴ ԲԿԱ, թղ. 3/3 3.3, գ.3, թ. 2:

էր, որ այս հարցում ՀՀ կառավարության մարտավարությունը նույնպես պիտի լիներ միանշանակ, առավելագույնս կշռադատված և համահունչ Հայաստանում, Զանգեզուրում և Արցախում տիրող կացությանը:

ՀՀ կառավարության գործունեությունն ու որդեգրած մարտավարությունը բնութագրող փաստերը մատնանշում են, որ վիճելի հարցերը վճռելիս ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանի գլխավորած Հայաստանի կառավարության համար առավել նախապատվելին եղել է խաղաղության ուղին, այսինքն՝ վիճելի հարցերը լուծել ոչ թե զենքի միջոցով ու արյունահեղությամբ, այլ քաղաքական դաշտում՝ խաղաղ ճանապարհով: ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանի ներկայացրած տեղեկություններից պարզվում է, որ նա այդ օրերին խաղաղություն հաստատելու, ինչպես նաև Արցախի հարցով դիմել է ոչ միայն Ադրբեջանի կառավարության նախագահ Ուսուբեկովին, այլև Փարիզում գտնվող Հայաստանի հանրապետության պատվիրակությանը, որպեսզի նրա միջոցով Խաղաղության վեհաժողովին ներկայացներ Արցախում տեղի ունեցած դեպքերի իրական պատկերն ու շուտափույթ վճիռ կայացվեր Արցախի վերաբերյալ[1]:

Իզուր էին Արցախի հարցը քաղաքական դաշտում խաղաղ ճանապարհով վճռելու ՀՀ կառավարության վարչապետի ձեռնարկած քայլերը: Դեպքերը Արցախում զարգանում էին միանգամայն այլ սցենարով ու բոլորովին այլ ուղղվածությամբ:

Հայոց Ազգային խորհուրդը, ապա նաև ՀՀ կառավարությունը, ի դեմս Շուշիի գնդի և ֆինանսական միջոցների, աջակցել էին Արցախին, բայց այդ օգնությունը, պիտի ասել, այնքան էլ ծանրակշիռ ու բավարար չէր, որպեսզի ապահովեր արցախահայության ապստամբության հաղթանակը:

Քանի որ ՀՀ կառավարությունը դեռևս ի զորու չէր բավարար քանակությամբ ռազմական ուժեր, զենք ու զինաթերք առաքել Արցախ, ուստի ՀՅԴ բյուրոյի համաձայնությամբ այնտեղ է գործուղում Արսեն Միքայելյանին ու գնդապետ Զ. Մեսյանին, որոնց հետագայում միանում է ՀՀ բանակի մայոր Սերյոժա Դալի Ղազարը, որոնք պիտի կազմակերպեին ու առաջնորդեին արցախահայության զինված պայքարը:

Արցախ գործուղված Արսեն Միքայելյանն ու գնդապետ Մեսյանը 1919 թ. դեկտեմբերի 19-ին հասնում են Գյուլիստան, որտեղից պիտի անցնեին Արցախ:

Արցախի Ազգային խորհրդի ռազմական մասի վարիչ Խաչատուր Մելքումյանի վկայությամբ՝ չանցած երկու օր Սուլթանովը տեղեկանում է Արցախում ՀՀ կառավարության ներկայացուցիչների գտնվելու մասին և նահանգապետին կից խորհրդին հայտնում, որ ինչ-որ կասկածելի մարդիկ են անցել Ջիվանշիրի շրջան (Գյուլիստան, Ջրաբերդ):

Հայկական խորհուրդը կտրականապես ժխտում է, որ նման բան չկա, և միաժամանակ հայտնում է ՀՅԴ Ապառաժի կենտր. կոմիտեին, որ եթե իրոք որևէ լուրջ գործ է կատարվում, ապա ցանկալի ու նպատակահարմար կլինի, որ այն կատարվի գաղտնի[2]:

---

[1] Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Համազգային, 1968, էջ 197:
[2] ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 4, էջ 9 10:

ՀՀ կառավարության և ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Արսեն Միքայելյանը գնդապետ Մեսյանի ընկերակցությամբ Արցախ էր գործուղվել ու հանձնարարություն ստացել, որպեսզի Արցախի Ազգային խորհրդի ու Արցախի ՀՅԴ կենտրոնական կոմիտեի համագործակցությամբ, առանց ցուցադրական ելույթների, հնարավորինս անաղմուկ, լռելյայն և պատշաճ մակարդակով նախապատրաստեին ու առաջնորդեին արցախահայության ազատագրական պայքարը:

Հարց է առաջանում՝ Արցախին անծանոթ գործիչներն ինչպե՞ս, ի՞նչ հիմունքներով պիտի առաջնորդվեին, որպեսզի կարողանային կազմակերպել ու առաջնորդել արցախահայության ազատագրական պայքարը, որը, անտարակույս, լինելու էր դժվարագույնն ու լեցուն բազմաթիվ չնախատեսված երևույթներով ու անակնկալներով:

Այդ հանգամանքը, բնականաբար, չէր կարող չմտահոգել Արցախի պատասխանատու գործիչներին, որոնք ստեղծված կացության թելադրանքով 1920 թ. հունվարի 1-ին գումարում են ՀՅԴ Ապառաժի կենտր. կոմիտեի արտակարգ նիստ, որտեղ լսում ու քննարկում են Զանգեզուրից եկած ներկայացուցիչների և Ներսես Նասիբյանի զեկուցումներն ու կայացնում հետևյալ որոշումը. «Կ. Կոմիտէն, անցիալում և այժմ էլ կանգնած լինելով այն տեսակետի վրայ, որ հայկական Ղարաբաղը ինչ գնով էլ ուզում է լինի, պիտի ազատագրել և միացնել Հայաստանին, բայց նկատի ունենալով, որ Հայաստանից եկած ներկայացուցիչները պայմաններին ծանոթ չեն, որ առանց տեղական ընկերների մասնակցութեան չեն կարող որևէ գործ սկսել և յաջողութեամբ առաջ տանել, այդ իսկ պատճառով առաջարկում է Հայաստանից եկած ներկայացուցիչներին առանց Կ.Կ.-ի համաձայնության Ղարաբաղում ոչ մի գործ չը սկսել»[1]:

Այո, ՀՅԴ Ապառաժի կենտրոնական կոմիտեի որոշումը շատ ճիշտ էր ու կշռադատված և համահունչ Արցախում տիրող կացությանը: Գործի շահերը պահանջում էին, որ բոլոր նրանք, ովքեր կոչված էին կազմակերպելու և առաջնորդելու արցախահայության ազատագրական պայքարը, գործեին առավելագույնս փոխհամաձայնեցված ու խորապես կշռադատված և հաշվարկված մարտավարությամբ:

Ինչպիսի՞ հանձնարարությամբ էին Արցախ գործուղվել Ա. Միքայելյանն ու գնդապետ Զ. Մեսյանը, և ո՞րն էր տվյալ ժամանակահատվածում Արցախի հարցում ՀՀ կառավարության ծրագրած մարտավարությունը:

Հովակ Ստեփանյանի տեղեկացմամբ՝ Ա. Միքայելյանն իր հետ կայացած զրույցներից մեկի ժամանակ հետևյալ տեսակետն է պնդում. «քանի որ Հայաստանը խուսափում է արտաքին պատերազմից, ապա միայն Արցախին ապստամբեցնելն է հնարավորություն ընձեռելու Զանգեզուրից արշավելու Արցախ՝ արցախահայությանն օգնելու պատրվակով»[2]:

Եթե, իրոք, Ա. Միքայելյանը համանման տեսակետ է հայտնում, ապա կարելի է եզրակացնել, որ նա Արցախ էր եկել հենց այդ նպատակով, այսինքն՝ ապստամբություն առաջ բերելու հանձնարարությամբ:

---

[1] Նույն տեղում, էջ 11:
[2] Տես ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 3, էջ 5:

Ա. Միքայելյանն ու Զ. Մեսյանը ՀՅԴ բյուրոյից խիստ հրահանգ էին ստացել գաղտնի պահել, սկզբնական շրջանում չբացահայտել իրենց ստացած հանձնարարությունը և միայն անհրաժեշտ պահին այդ մասին տեղեկացնել Արցախի գործընկերներին:

Պատմական հիշյալ ժամանակահատվածում Արցախում տեղի ունեցած դեպքերը լուսաբանող սկզբնաղբյուրների հավաստմամբ՝ արցախահայության ազատագրական պայքարը կազմակերպելու ու առաջնորդելու գործում ի սկզբանե այնքան էլ հարթ չեն ընթացել ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Արսեն Միքայելյանի և Արցախի պատասխանատու գործիչների փոխհամագործակցությունն ու միմյանց նկատմամբ դրսևորած վերաբերմունքը: Իսկ այդ անցանկալի ու տհաճ երևույթը չէր կարող իր բացասական ազդեցությունը չգործել Արցախում ծավալվող դեպքերի վրա:

Նրանց փոխհարաբերություններում առկա անհամաձայնությունը դրսևորվում է Վարանդայի Տռնավարզ գյուղում կայացած հանդիպման ժամանակ: Այդ հանդիպման ժամանակ, ինչպես որ սպասվում էր, ՀՀ կառավարության ներկայացուցիչներն ու Ինքնապաշտպանական մարմնի անդամները հիմնականում քննարկում են Արցախի ազատագրական պայքարը հուսալիորեն կազմակերպելուն առնչվող հարցերը և հանգում ընդհանուր հայտարարի՝ գտնելով, որ անհրաժեշտ է միասնական ուժերով առաջ տանել ինքնապաշտպանական գործն ու ընտրել կենտրոնական ինքնապաշտպանական մարմին:

Իսկ ի՞նչ սկզբունքով, ինչպե՞ս կատարել կենտրոնական ինքնապաշտպանական մարմնի անդամների ընտրությունը:

ՀՅԴ Ապառաժի կենտրոնական կոմիտեի առաջարկությամբ՝ Արցախի Կենտրոնական ինքնապաշտպանական մարմնի կազմում պիտի ընդգրկվեին Հայաստանից եկած երկու ներկայացուցիչները ու մեկական ներկայացուցիչ ՀՅԴ կենտր. կոմիտեի և Ինքնապաշտպանական մարմնի կազմից: Կենտրոնական ինքնապաշտպանական մարմնի պարտականությունն էր համադրել ու ղեկավարել գավառի տարբեր շրջաններում գործող զինվորական և ինքնապաշտպանական մարմինների գործունեությունն ու անհրաժեշտ տեղեկությունները ժամանակին հաղորդել Ազգային խորհրդին:

Արսեն Միքայելյանը չի համաձայնվում ՀՅԴ Ապառաժի կենտրոնական կոմիտեի առաջարկած տարբերակով կազմել Կենտրոնական ինքնապաշտպանական մարմին, բայց ասում է, որ առանց տեղական ընկերների մասնակցության և համաձայնության ոչինչ չի ձեռնարկելու[1]:

Խաչատուր Մելքումյանի խոստովանությամբ՝ ՀՀ կառավարության ներկայացուցիչ Արսեն Միքայելյանը այնքան էլ հաշվի չէր առնում ՀՅԴ Ապառաժի կենտր. կոմիտեի կարծիքը, քանի որ ինքն ավելի մեծ լիազորություններով էր գործուղվել Արցախ[2]:

Պարզվում է, որ Ա. Միքայելյանի համանման կեցվածքն ունի որոշակի հիմք, և այն բոլորովին պատահական չէր: Նա Խ. Մելքումյանին ցույց է տալիս ՀՅԴ

[1] Տես ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 4, էջ 12-13:
[2] Նույն տեղում, էջ 9:

բյուրոյից տրված մի փոքրիկ թղթի վրայ գրված լիազորագիր, որի բովանդակությունը հետևյալն է. «Միքայելեանը հանդիսանում է Ղարաբաղում Բիւրօն: Բոլոր կուսակցական մարմինները ենթարկվում են նրան»[1]:

ՀՅԴ բյուրոյի կողմից տրված լիազորագիրը ստորագրել է Ռուբեն Տեր-Մինասյանը, որն այդ ժամանակ, կարելի է ասել, ամենաազդեցիկ դեմքն էր ՀՅԴ բյուրոյում:

Թեպետ Տռնավարզ գյուղում կայացած հանդիպման ընթացքում Ա. Միքայելյանի ժխտողական վերաբերմունքն առաջացնում է ընկերների դժգոհությունը, բայց փետրվարի 3-ին և 4-ին տեղի ունեցած ժողովների ժամանակ ընտրվում են հատուկ հանձնախմբեր, որոնք պիտի կազմեին Ինքնապաշտպանական ու Զինվորական մարմինների ներքին կանոնագիրը:

Եթե ընդհանրացնենք ու գնահատենք 1920 թ. հունվարի 3-4-ին Վարանդայի շրջանի Տռնավարզ գյուղում տեղի ունեցած հանդիպման ընթացքում ՀՀ կառավարության, ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչների և ՀՅԴ Ապառաժի կենտր. կոմիտեի անդամների համատեղ աշխատանքի ձեռք բերած արդյունքը, ապա պիտի նշել, որ մշակվեցին համաձայնության, գործունեության ընդհանուր սկզբունքները, կատարվեց աշխատանքի բաժանում, որոշվեցին ինքնապաշտպանական և զինվորական մարմինների լիազորներն ու ներկայացուցիչները՝ իրենց համապատասխան աշխատավարձով, ընդունվեց Ինքնապաշտպանական ու Զինվորական մարմինների կանոնագիրը:

Խորհրդակցության մասնակիցները ընտրում են Կենտրոնական ինքնապաշտպանական մարմնի հինգ անդամներին, որոնցից երկուսը Արսեն Միքայելյանն ու գնդապետ Զ. Մեսյանն են[2]:

Կենտրոնական ինքնապաշտպանական մարմինը, համաձայն ՀՀ կառավարության և Ազգային խորհրդի հրահանգի, պիտի նախապատրաստական աշխատանքները տաներ հնարավորինս անաղմուկ ու լռելյայն և ձգտեր խուսափել անցանկալի զինված բախումներից ու միջադեպերից: Շատ կարևոր էր, որ այդ ընթացքում Արցախում պահպանվեր խաղաղ կարգավիճակ: Բայց այն օրերին, երբ Տռնավարզ գյուղում արդեն դեռ նոր-նոր էր ավարտվել խորհրդակցությունը, մասնակիցները նամակ են ստանում, որի հեղինակը հայտնում է, որ հունվարի 4-ին Դիզակի Տումի գյուղի խմբապետ Թևանն իր մի քանի զինակիցներով հարձակվել է նույն շրջանի թուրքական Ալիանլու գյուղի վրա՝ թալանի նպատակով, բայց հայտարարում է, որ այդ ամենը կատարում է Դրոյի հրամանով: Թևանը միաժամանակ հայտարարում է, որ շուտով հարձակվելու են հայկական զորքերը, և Արցախը կազատագրվի ու կմիացվի Հայաստանին:

Թուրքական գյուղի վրա Թևանի զինախմբի հարձակումը կարող էր տեղիք տալ լուրջ հետևանքների: Թուրքերը կարող էին դիմել պատասխան գործողությունների, և այդ պարագայում չէր բացառվում, որ անխուսափելի (՞.- Խմբ.) դառնային ազգամիջյան զինված բախումները, ինչը բնավ ձեռնտու չէր Արցախին, որը դեռևս պատրաստ չէր զինված առճակատման ու ընդհարումների:

---

[1] Տես նույն տեղում, էջ 13:
[2] Տես նույն տեղում, էջ 114:

«Նորընտիր Ինքն. Կեդր. Մարմինը, խորհրդակցութեան միւս անդամներու հետ,- գրում է Ա. Միքայելյանը,- նկատի առաւ այդ նամակը եւ որոշեց, որ բոլորս ալ խումբ-խումբ ճամբայ ելնենք դէպի Տումի գիւղը, տեղւոյն վրայ քննենք Թեւանի արկածախնդրութեան մանրամասնութիւնները եւ կտրուկ միջոցներու դիմելով՝ ջանանք առաջին իսկ մեր քայլով վերջ տալ նման վտանգաւոր արկածախնդրութիւնը»[1]:

Կենտրոնական Ինքնապաշտպանական մարմնի մի քանի անդամներ մեկնում են Տումի և շնորհիվ գնդապետ Զաքար Մեսյանի ջանքերի՝ հարթվում է միջադեպը, ապա խիստ դիտողություն է արվում Թևանին, ու թուրքերից նրա բռնագրաված ապրանքները վերադարձնում են տերերին[2]:

Արցախի ինքնապաշտպանական մարմինները, որքան էլ աշխատեին գործել ծածուկ ու լռելյայն, Խոսրով բեկ Սուլթանովը, այնուամենայնիվ, շնորհիվ իր բազմաթիվ լրտեսների ու մատնիչների զեկուցումների, տեղեկանում էր գավառում գտնվող ՀՀ կառավարության ներկայացուցիչների ու նրանց ծավալած գործունեության մասին:

Այդ փաստը պարզորոշ երևաց հունվարի վերջերին, երբ Դալի Ղազարը Գանձակի վրայով անցնում է Խաչենի շրջան և Բալուջա գյուղում անսպասելիորեն հանդիպում է Սուլթանովի առաջին հայ օգնական Բագրատ Մելիք-Շահնազարյանին, շրջանային կոմիսարներ Բագրատ Միքայելյանին և Աղապարոն Դանիելբեկյանին և մոտ 20 ձիավոր միլիցիոներների: Դալի Ղազարն առանց որևէ հրահանգի և տեղեկություն ունենալու Ղարաբաղում տիրող իրավիճակի մասին, զինաթափում է բոլորին և խստորեն հրահանգում, որ չհամարձակվեն մյուս անգամ մտնել հայկական գյուղերը, և հրամայում է նրանց վերադառնալ Շուշի[3]:

Բալուջա գյուղում տեղի ունեցած դեպքի պատճառով գազազած Սուլթանովը ժողովի է կանչում Շուշիի բոլոր հայ գործիչներին, միջկուսակցական խորհրդի անդամներին և սպառնալիքով պատվիրում, որ նրանք մեկնեն գավառ և պահանջեն Հայաստանից եկածներին անհապաղ թողնել Արցախի սահմաններն ու հեռանան:

Արցախում Հայաստանի ներկայացուցիչների գտնվելու փաստը խորը անհանգստություն է պատճառում Ադրբեջանի իշխանություններին և, իհարկե, Խ. Սուլթանովին, որոնք հարմար պատրվակ էին փնտրում ձեռնարկելու առավել վճռական գործողություններ՝ Արցախն առանց որևէ պայմանի վերջնականապես գրավելու և իր անբաժանելի մասը դարձնելու նպատակով: Արցախում Հայաստանի ներկայացուցիչների գտնվելու փաստն ու Դալի Ղազարի կողմից թուրք ոստիկաններին զինաթափելու դեպքն ավելի քան բավարար էին, որպեսզի Ադրբեջանն ու Խ. Սուլթանովը Արցախի նկատմամբ ձեռնարկեին առավել վճռական ու ազդու գործողություններ:

Նախորդ փորձերից Ադրբեջանի իշխանություններն արդեն խորապես համոզվել էին, որ Արցախը երբեք չի համաձայնվելու ճանաչել Ադրբեջանի իշխա-

---

[1] Նույն տեղում, էջ 114:
[2] Տես նույն տեղում, էջ 115:
[3] Տես նույն տեղում, էջ 17:

նությունը ու առավել ևս համակերպվելու նրա կազմում ընդգրկվելու ու նրա անբաժանելի մասը կազմելու իրողությանը: Այդ պատճառով Ադրբեջանը պատրաստվում է անհրաժեշտության դեպքում դիմել զենքի և անթաքույց հայտարարում է, որ «Ադրբէջանի շահերի պաշտպանութեան տեսակէտից անհարաժեշտ է համարում զորքեր մտցնել Հադրութ, Մարգուշևան և Քիրսի դիրքերը՝ ապագայ յարձակումներից Բասար Բիլարի և Զանգեզուրի կողմից ապահովելու Ադրբէջանի սահմանները»[1]:

Զուգահեռաբար Ադրբեջանի կառավարությունը հերթական անգամ վերջնագիր է ներկայացնում Արցախին և խստագույնս հրահանգում գումարել նոր համագումար: Ընդառաջելով Ադրբեջանի առաջարկությանը՝ Արցախի Ազգային խորհուրդը փետրվարի 28-ը նշանակում է համագումարի օր և պաշտոնական գրություններ է ուղարկում բոլոր շրջաններ: Համագումարի աշխատանքներին մասնակցում են Արցախում գործող կուսակցությունների, անգամ բոլշևիկների ու էսեռների ներկայացուցիչների մի մասը, ինչպես նաև Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Ջիվանշիրի և Գյուլիստանի հայ բնակչության կողմից ընտրված պատգամավորները[2]:

Արցախը պիտի գումարեր իր հերթական՝ 8-րդ համագումարը, իսկ ինչպիսի՞ն է ՀՀ կառավարության դիրքորոշումը: Այդ հարցում ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանը Փարիզի խաղաղության վեհաժողովին ուղղված բողոք-ուղերձում հայտնում է, որ Ղարաբաղը կազմում է Հայաստանի անբաժանելի մասը, և նրա բռնակցումը մեկ այլ պետութեան ամբողջովին հակասում է ազգերի ինքնորոշման սկզբունքին[3]:

Ինչպես նախորդ համագումարների հրավիրման ժամանակ, այս անգամ ևս Խ. Սուլթանովը պահանջում է, որ 8-րդ համագումարը տեղի ունենա Շուշի քաղաքում: Շուշին, ինչպես արդեն հայտնի է, գտնվում էր նրա ազդեցության ոլորտում, և եթե անհրաժեշտ լիներ ճնշում գործադրել համագումարի պատգամավորների վրա և նրանց ստորագրել տալ իր պահանջը, այն է՝ անվերապահ ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը, ապա Սուլթանովը կարող էր օգտագործել քաղաքում տեղաբաշխված զորքի ուժը:

Իհարկե, Արցախի տարբեր շրջաններից ընտրված պատգամավորները քաջ գիտակցում էին համագումարը Շուշիում գումարելու Սուլթանովի նպատակը և ջանքեր էին գործադրում, որ այն տեղի ունենա ոչ թե Շուշիում, այլ նրա մերձակա Շոշ գյուղում:

Այս գործում, պետք է ընդգծել, որ զգալի է Արսեն Միքայելյանի դերակատարությունը:

Որպեսզի խոչընդոտի, թույլ չտա, որ համագումարը գումարվի և ընթանա նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովի գրած սցենարով, Արսեն Միքայելյանը փետրվարի 28-ին մի ծածկագիր նամակ է ուղարկում Խաչիկ Մելքումյանին, որտեղ գրում է. «Ադրբէջանը փետրուարի 28-ին համագումար է նշանակել Շուշի

---

[1] Նույն տեղում:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 29:
[3] Տես նույն տեղում, գ. 50 (մաս 1), թ. 124:

քաղաքում մի շարք հայտարարություններ անելու: Նկատի ունենալով Ադրբէջանի և բոլշևիկների ազդեցութիւնը քաղաքում և միւս կողմից էլ այն հանգամանքը, որ մի շարք ներկայացուցիչներ չեն կարող Շուշի գնալ, այդ պատճառով ամէն կերպ աշխատեք 28-ի համագումարը խանգարել և կայացնել Շոշ գիւղում»[1]:

Անհրաժեշտ էր գավառի տարբեր շրջաններից, նույնիսկ Շուշիից ընտրված պատգամավորների ճնշող մեծամասնությունը կենտրոնացնել Շոշ գյուղում ու կատարված փաստի առաջ կանգնեցնել Խ. Սուլթանովին: Այդ նպատակով Ա. Միքայելյանը փետրվարի կեսերին նամակ է ուղարկում Շուշիում գտնվող Հովակ Ստեփանյանին և հայտնելով, որ դեպքերն արդեն հասունանում են՝ առաջարկում է, որ նա հեռանա Շուշիից ու անցնի գավառ:

Արցախում սպասում էին Դրոյին: Փետրվարի 15-ին Վարանդայի Հարավ գյուղում տեղի է ունենում զինվորական գաղտնի ժողով, որի մասնակիցները Դրոյին ու ՀՀ կառավարությանն են ուղարկում Արցախում ռազմական գործողություններ ձեռնարկելու իրենց առաջադրած ծրագիրն ու նախագիծը:

Ճիշտ է՝ Արցախում սպասում էին Դրոյին, բայց այդ ժամանակ օրակարգում համագումարի հրավիրման խնդիրն էր, որը, Ա. Միքայելյանի գնահատմամբ, պիտի տեղի ունենար ոչ թե Սուլթանովի առաջարկած Շուշի քաղաքում, այլ Շոշ գյուղում:

Փետրվարի 28-ին Շոշ գյուղում են հավաքվում Վարանդայի, Խաչենի, Ջիվանշիրի և Գյուլիստանի ներկայացուցիչները՝ բացի բոլշևիկներից: Շոշ գյուղում կայացած համագումարին Դիզակի շրջանից մասնակցում է ընդամենը մեկ ներկայացուցիչ, մյուսները գնում են Շուշի ու միանում բոլշևիկներին:

Այսպիսով՝ Արցախի պատգամավորները բաժանվում են երկու խմբի, և 8-րդ համագումարը տեղի է ունենում Շուշի քաղաքում և Շոշ գյուղում: Սուլթանովի սպառնալիքով Շուշիում հավաքված պատգամավորները բազմիցս փորձում են Շոշ գյուղում հավաքված պատգամավորներին համոզել, որ տեղափոխվեն Շուշի, բայց նրանց ջանքերն անցնում են ապարդյուն:

Խ. Մելքումյանի բնութագրմամբ՝ «Շուշի են հաւաքւում հայ ժողովրդի տականքները և բոլշևիկեան հովերով տարուածները. թվով 45 հոգի, իսկ Շոշու գիւղումն են հաւաքւում 96-ից աւելի ներկայացուցիչներ, որոնք միշտ էլ պայքարել են Ադրբէջանի դէմ և մեծ յոյսեր էլ չեն ունեցել բոլշևիկներից»[2]:

Համագումարի աշխատանքներին մասնակցել են նաև ՀՀ կառավարության և գավառի գործիչները: Շուշի քաղաքում և Շոշ գյուղում նույն օրերի կայացած համագումարներն ընդունում են, կարելի որակել, հակոտնյա, իրարամերժ որոշումներ:

Շոշ գյուղում տեղի ունեցած համագումարի պատգամավորները, նկատի ունենալով Ադրբեջանի կողմից հայկական բնակավայրերում իրականացված կոտորածները, ավարառության բազմաթիվ դեպքերը, ինչպես նաև օգոստոսյան համաձայնագրի մի շարք կետերի խախտումները, կայացնում են հետևյալ որոշումը. «…ի նկատի ունենալով, որ Ադրբէջանի կառավարութիւնը բազմիցս խախ-

[1] Տես ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, Նույն տեղում, գ. 4, էջ 19-20:
[2] Նույն տեղում, էջ 22:

տել է 7-րդ համագումարի համաձայնագրի գլխաւոր կետերը՝ զօրք տեղափոխելով, կոտորածներ կազմակերպելով և կատարեալ անիշխանութեան ենթարկելով գաւառը, բողոքում է այդ բոլորի դէմ և պահանջում է Ադրբեջանի կառավարութիւնից սրբութեամբ կատարել համաձայնագրի կէտերը, և 8-րդ համագումարը կանգնած է 7-րդ համագումարի որոշումների վրայ[1]:

Շուշի քաղաքում հավաքվածները ներկայացնում են հետևյալ որոշումը. «Քանի որ Ղարաբաղի լեռնային մասը տնտեսապէս կապւած է Եւլախ-Շուշի խճուղիով Ադրբէջանի հետ, ուստի համագումարը որոշում է, որ նա պէտք է լինի Ադրբեջանի անբաժանելի մասը, և միջոցներ պետք է ձեռք առնել Հայաստանից եկած գործակալներին հեռացնելու Ղարաբաղից»[2]:

Երկու մասի բաժանված համագումարի տարբեր ուղղվածություն ունեցող որոշումները ներկայացնում են Սուլթանովի դատին:

Խ. Սուլթանովին, իհարկե, չէր կարող բավարարել այն, ինչ տեղի ունեցավ: Նա ձգտում էր համագումարից կորզել Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու և նրա անբաժանելի մասը կազմելու որոշումը: Շուշիում կայացած համագումարը թեպետ ընդունեց համանման որոշում, բայց նրա գնահատմամբ առավել կարևորը Շոշ գյուղի համագումարն էր, որի աշխատանքներին մասնակցում էին ավելի մեծ թվով պատգամավորներ, որոնք մերժեցին ընդունել Շուշիում հավաքվելու իր պահանջն ու չընդունեցին այնպիսի որոշում, ինչպիսին էր՝ Շուշիում հավաքված պատգամավորների ընդունածը: Նրա համար, թերևս, առավել մտահոգիչը Շոշ գյուղում կայացած համագումարում Հայաստանի ներկայացուցիչների ներկայության փաստն է:

Ադրբեջանի և Սուլթանովի համար այլևս այլընտրանք գոյություն ունենալ չէր կարող, նրանք պիտի շարունակեին նախապատրաստվել, բայց այս անգամ՝ առավել լրջությամբ:

Համագումարի աշխատանքները լուսաբանող սկզբնաղբյուրների տեղեկացմամբ՝ համագումարի ավարտից հետո Արցախում այլևս չէր նկատվում Ադրբեջանի իշխանության և ոչ մի նշույլ: Արցախի վարչությունը փաստորեն ենթարկվում է Ա. Միքայելյանին: Եթե Ադրբեջանի իշխանությունները որևէ գործի հարցով դիմում էին իրենց ենթակա հայ պաշտոնյաներին, ապա նրանք պարտադիր ներկայանում էին Ա. Միքայելյանին և գործում նրա հրահանգներով: Շրջաններում կատարվող դեպքերի ու վեճերի մասին ինքնապաշտպանական մարմինները հայտնում էին Կենտրոնական մարմնին ու Ա. Միքայելյանին և փաստորեն չէին ենթարկվում Ադրբեջանին[3]:

Արցախի համար կարևորագույնն առանց որևէ արկածախնդրության և ցուցադրական երևույթների, համակողմանիորեն հաշվարկված ու կշռադատված մարտավարությամբ կազմակերպվելու ու գործելու խնդիրն էր:

Այսուհանդերձ, 8-րդ համագումարի ավարտից հետո անգամ, ինքնապաշտպանության գործին մասնակից տեղական գործիչները, նույնիսկ ՀՅԴ Ապառաժի

[1] Նույն տեղում, էջ 23:
[2] Նույն տեղում:
[3] Տես ՀՅԴ ԿԱ, թծ. 1469, գ. 1, 2, 3, 4:

կենտր. կոմիտեի անդամները դեռևս հստակ չգիտեին իրենց գործունեության բուն նպատակն ու ուղղվածությունը, իրենք ինչի՞ էին պատրաստվում՝ ինքնապաշտպանության, թե՞ ապստամբության:

Թեպետ Ա. Միքայելյանը Արցախի գործընկերներին չէր հայտնում ՀՀ կառավարության ու ՀՅԴ բյուրոյի կողմից իրեն տրված հանձնարարության բուն նպատակը, սակայն գավառում ծավալած նրա բացարձակ գործունեությունը, այն է՝ Զանգեզուրից զենք ու զինամթերքի տեղափոխությունը, զանազան շրջաններում պարենավորման և դեղորայքի պատրաստություններ տեսնելն արդեն խոսուն փաստեր էին[1]:

Այս հարցում փոքր ինչ անհասկանալի է տեղացի գործիչների արտահայտած դժգոհությունը Ա. Միքայելյանից, որը ինչ-ինչ պատճառաբանությամբ բացեիբաց նրանց չէր հայտնում իր գործունեության բուն նպատակն ու ուղղվածությունը: Եթե անգամ հպանցիկ ուշադրությամբ դիտենք Տոնավարզ գյուղում փետրվարին տեղի ունեցած ժողովի կողմից ընտրված հատուկ հանձնախմբերի կազմած Ինքնապաշտպանական ու Զինվորական մարմինների ներքին կանոնագիրը, ապա միանգամայն պարզ ու հասկանալի է դառնում, որ Ա. Միքայելյանն ու Զ. Մեսյանը ՀՀ կառավարության և ՀՅԴ բյուրոյի հանձնարարությամբ Արցախ էին եկել՝ առաջ բերելու արցախահայության ապստամբությունը:

Գավառի տարբեր շրջանների ինքնապաշտպանական մարմինների անդամները, կարծես ըմբռնելով Արսեն Միքայելյանի գործունեության իրական նպատակը, գալիս են նրա մոտ ու հայտնում, որ այդպիսի գործունեությունը Արցախին անխուսափելիորեն կտանի դեպի կործանում: Նրանց պնդմամբ՝ եթե Զանգեզուրում գտնվող Հայաստանի զորամասը երեք օրվա ընթացքում Արցախ չմտնի, ապա Արցախը միմիայն իր սեփական ուժերով ու այդպիսի պատրաստությամբ ոչ միայն անզոր կլինի հարձակում ձեռնարկելու, այլև չի կարողանալու երկար ժամանակ պաշտպանվել[2]:

Հարկ է ընդգծել, որ նրանց նշած Զանգեզուրում գտնվող հայկական զորամասը վերաբերում է Դրոյի գլխավորած ընդամենը 600 մարտիկներից բաղկացած զորամասին, որի հրամանատարն այդ օրերին գտնվում էր մարտադաշտում և կռիվներ էր մղում իր հայրենի Սուրմալու գավառը ներխուժած քուրդ հրոսակախմբերի դեմ:

Բացի Դրոյի գլխավորած զորամասից՝ Զանգեզուրում այդ ժամանակ Հայաստանի մեկ այլ զորամաս գոյություն չուներ:

Մի հարցում նրանց հարցադրումը տեղին է ու հիմնավորված:

Ռազմամթերքի քանակը Արցախում խիստ սահմանափակ էր: Պարզվում է, որ Արսեն Միքայելյանը երկուս ու կես ամիսների ընթացքում կարողացել էր Զանգեզուրից Արցախ տեղափոխել ընդամենը 60.000 փամփուշտ և երկու գնդացիր[3]:

Հասկանալի է, որ տևական կանոնավոր կռիվների բռնկման պարագայում, ինչպես իրավացիորեն նշում են շրջանների ինքնապաշտպանական մարմինների անդամները, այդպիսի պատրաստվածությամբ Արցախը ոչ միայն անզոր կլինի

---

[1] Տես ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 1, էջ 28:
[2] Տես նույն տեղում, գ. 1, էջ 28:
[3] Տես նույն տեղում, գ. 3, էջ 16:

հարձակում ձեռնարկելու, այլև չի կարողանալու երկար ժամանակ պաշտպանվել:

Արցախում ծավալվող դեպքերը լուսաբանող սկզբնաղբյուրների հավաստմամբ՝ գավառում իրավիճակը կտրուկ կերպով փոխվում է, երբ այնտեղ է հաստատվում Դալի Ղազարը, և Ա. Միքայելյանի հաստատած մենիշխանությունը փոխարինվում է երկիշխանության: Համաձայն սահմանված կարգի՝ Արցախի ռազմական ուժերը պիտի գործեին Զ. Մեսյանի ընդհանուր հրամանատարությամբ, սակայն Դալի Ղազարը կարողանում է իր ձեռքը վերցնել զինվորական գործը, և գավառում կազմակերպված զինվորական ուժերն առավելապես գործում են նրա որդեգրած մարտավարությամբ:

Պատմական տվյալ ժամանակահատվածում Արցախում տիրող իրավիճակն ու այնտեղ տեղի ունեցած դեպքերը լուսաբանող սկզբնաղբյուրների հավաստմամբ՝ Ա. Միքայելյանն ու Դալի Ղազարը գործում են ոչ թե լռելյայն, առանց աղմուկի և ցուցադրական գործողությունների, այլև ճիշտ հակառակ մարտավարությամբ ու ուղղվածությամբ: Նրանց գործունեությունը կրում էր բացահայտ տեսանելի, ցուցադրական բնույթ, և այդ ամենը, անկասկած, չէր կարող վրիպել նրանց գործողություններին ակնդետ հետևող Ադրբեջանի իշխանությունների ու Խ. Սուլթանովի տեսադաշտից[1]:

Հ. Թումյանի մեկնաբանմամբ՝ Արցախի ապստամբությունը թույլ կազմակերպելու ու չկշռադատված մարտավարությամբ գործելու հարցում իր մեղքի մեծ բաժինն ունի ՀՀ ռազմական մինիստր Ռուբեն Տեր-Մինասյանը, որը Հայաստանի կառավարության հանձնարարությամբ պիտի լրջորեն զբաղվեր Արցախի խնդրով: Միաժամանակ, համաձայն ՀՀ կառավարության կողմից նրան տրված հանձնարարականների, նախ և առաջ պիտի խորապես ուսումնասիրեին Արցախում տիրող իրավիճակը, ապա պահպանելով խիստ զգուշավորություն՝ հանգիստ ու լռելյայն կազմակերպեին արցախահայության ինքնապաշտպանությունը[2]: Իրականում տեղի է ունենում ճիշտ հակառակը: Նրա ընտրությամբ՝ Արցախ գործուղված գործիչները փոխանակ իրենց գործունեությունը ծավալեին՝ հիմք ունենալով ՀՀ կառավարության առաջադրած հանձնարարականները, գործում էին ճիշտ հակառակ ուղղվածությամբ՝ բացահայտ ու միահեծան և բոլորովին հաշվի չէին առնում անգամ Կենտրոնական ինքնապաշտպանական մարմնի և ՀՅԴ Ապառաժի կենտր. կոմիտեի անդամների կարծիքը:

Ըստ Հ. Թումյանի՝ համաձայն ՀՀ կառավարության հանձնարարականի, Ռուբենը Արցախ պիտի ուղարկեր լուրջ, շրջահայաց, փորձված գործիչներ: Միաժամանակ նա պարտավոր էր Ադրբեջանի կողմից Արցախի վրա հարձակում ձեռնարկելու դեպքում Զանգեզուրի միջոցով անհապաղ ռազմական օգնություն տալ Արցախին: Բայց չեն կատարվում ոչ մեկը և ոչ էլ մյուսը:

«Սակայն,- նշում է Հ. Թումյանը,- հետագայում միայն պարզվեց, որ Տեր-Մինասյանն ունեցել է գործողությունների իր կործանարար ծրագիրը, որը նա աշխատել էր թաքցնել ղեկավար մարմիններից»[3]:

---

[1] Տես ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 1, 3, 4, 5:
[2] Տես Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 273:
[3] Նույն տեղում:

Ո՞րն է, և ի՞նչ հանգամանքներով է պայմանավորված ՀՀ ռազմական նախարարի կործանարար ծրագիրը:

Հ. Թումյանի փաստարկմամբ՝ Ռուբենի անմիջական նպատակների մեջ էր մտնում Հայաստանին միացնել ոչ թե Արցախը, այլ Նախիջևանը, որն ըստ նրա ծրագրի՝ հայկական զորքերը պիտի գրավեին 1920 թ. գարնանը: Բայց ինչպե՞ս, չէ՞ որ Նախիջևանում ռազմական մեծ ուժեր էին կենտրոնացած Նուրի, Խալիլ, Քյազիմ և մյուս փաշաների ու բեկերի ձեռքում, իսկ Ադրբեջանը երբեք չէր կարող թույլ տալ, որ Նախիջևանի նման ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող շրջանն անցնի Հայաստանի հանրապետությանը: Որպեսզի հնարավորություն ընձեռվեր Հայաստանին միացնելու Նախիջևանը, անհրաժեշտ էր չեզոքացնել Ադրբեջանի անխուսափելի ռազմական միջամտությունը, այսինքն՝ պիտի Հայաստանն ապահովել Ադրբեջանի հարձակումից, բայց ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով:

«Հայաստանի ռազմական մինիստրը,- պնդում է Հ. Թումյանը,- մտածեց օգտագործել Ադրբեջանի եւ Հայկական Ղարաբաղի միջեւ ստեղծված լարված հարաբերությունները եւ «Ղարաբաղի հայության զինված ուժերը նետել Ադրբեջանի դեմ առանց նախապես ապահովելու այդ ուժերը զինամթերքով եւ պարենով[1]:

Հարկ է նկատել, որ ավելի քան տարակուսելի է ու ոչ համոզիչ Հ. Թումյանի արտահայտած «Ղարաբաղի հայության զինված ուժերը նետել Ադրբեջանի դեմ առանց նախապես ապահովելու այդ ուժերը զինամթերքով եւ պարենով» դատողությունը: Մի՞թե Ռուբենը չէր հասկանում, որ Արցախում ապստամբություն առաջ բերելու համար առավել օգտակար ու արդյունավետ կլիներ, եթե Ադրբեջանի կանոնավոր զորամասերի հարձակումներին դիմակայեր զենք ու զինամթերքի բավարար քանակությամբ զինված բանակը: Անտարակույս, եթե արցախյան մարտական ուժերին հաջողվեր կանգնեցնել Ադրբեջանի կանոնավոր զորքերի հարձակումը, ապա Ադրբեջանը հարկադրված կլիներ իր ուշադրությունն առավելապես կենտրոնացնել Արցախի վրա, և այդ դեպքում Նախիջևան արշավող հայկական զորքերին առավել մեծ հնարավորություն էր ընձեռվում ազատագրելու Նախիջևանն ու վերջնականապես լուծելու մաքրամաքուր հայկական նահանգը Հայաստանին միավորելու խնդիրը:

Պատմական տվյալ ժամանակահատվածը լուսաբանող սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը միանշանակ մատնանշում է, որ հայ պետական և ռազմական գործիչներից Նախիջևանի, ինչպես նաև Արցախի խնդրում առավել մեծ հետաքրքրություն է ցուցաբերել Դրոն: Նա բազմիցս փորձել է իր առաջնորդած զորամասով արշավել Նախիջևան ու զենքի ուժով լուծել գավառը Հայաստանին միավորելու խնդիրը, սակայն միշտ էլ հանդիպել է ՀՀ կառավարության հարուցած արգելքներին, բայց ոչ երբեք Ռուբենի աջակցությանը: Փոքր-ինչ առաջ անցնելով՝ նշենք, որ 1920 թ. օգոստոսին, երբ Դրոն պատրաստվում էր գեներալ Շելկովնիկյանի զորամասի զինակցությամբ արշավել Նախիջևան, ստանում է ՀՀ զինվորական նախարար Ռուբենի անսպասելի ու կտրուկ հետևյալ հրամանը. «Զինուորական նախարարը, նկատի ունենալով այն պարագան, որ Արցախից Գորիս անցած

[1] Նույն տեղում, էջ 274:

բոլշևիկեան հեծեալ մի գունդ Նախիջևան էր գնացել թուրքերին օգնութեան, որպեսզի Հայաստանը չգրաւի Նախիջևանը, գտնում էր, որ այդպէս շարժւելը նշանակում էր պատերազմ յայտարարել Ռուսաստանին, ինչ որ անխոհեմութիւն է»[1]:

Հ. Թումյանի համոզմամբ՝ Ռուբենը դիտավորյալ էր ընտրում Ա. Միքայելյանին, որպեսզի նրա միջոցով կարողանար իրականացնել Արցախի նկատմամբ իր լրջորեն չկշռադատված ծրագիրը: Այդ նշանակումը Ռուբենը թաքցրել է անգամ Երևանում գտնվող Արցախից արտաքսված գործիչներ՝ Եղիշե Իշխանյանից, Հարություն Թումյանից ու Աստվածատուր Ավետիսյանից, որոնք քաջատեղյակ էին Արցախում տիրող կացությանն ու կարող էին անհրաժեշտ ու օգտակար խորհուրդներ տալ:

Կարելի է նկատել. եթե Արցախի գործիչներից Դալի Ղազարի գործունեության ամենաընդգծված քննադատը Հովակ Ստեփանյանն է, ապա Արսեն Միքայելյանինը՝ Հարություն Թումյանը, որի գնահատմամբ՝ Ռուբենը Արցախ է ուղարկում մի մարդու, որը նոր էր վերադարձել Հյուսիսային Ամերիկայից և ոչ միայն բան չէր հասկանում զինվորական գործերից, այլեւ լուրջ անձ չէր: Նա թեթեւ էր բնավորությամբ, մեծամիտ էր եւ ինքնահավան: Հետեւապես որեւէ երաշխիք լինել չէր կարող, որ այդպիսի մեկը իր արկածախնդրական թեթևամիտ գործողություններով ծանր փորձությունների պատճառ չէր դառնա դժբախտ Ղարաբաղի համար[2]:

ՀՀ կառավարության և Արցախի կենտրոնական մարմնի հանձնարարությամբ Արցախի մարտական ուժերը պիտի գործեին գնդապետ Զ. Մեսյանի հրամանատարությամբ, և ցավ չէ, որ Ա. Միքայելյանը բան չէր հասկանում զինվորական գործերից, բայց ավելի քան պարսավելի են ու չկշռադատված նրանց գործունեության մարտավարությունը, արկածախնդրական թեթևամիտ ցուցադրական գործողությունները:

Ելակետ ունենալով Արցախում կատարված դեպքերը պատկերող հուշագրությունների և վավերագրերի վկայությունները՝ կարելի է ասել, որ Դալի Ղազարի ժամանմամբ Արցախում հաստատվում է մի նոր իրավիճակ, որտեղ գործող գլխավոր անձը դառնում է հենց Դալի Ղազարը: Խ. Մելքումյանի տեղեկացմամբ՝ Դալի Ղազարը իր ձեռքն է վերցնում զինվորական գործը և շրջելով շրջանները՝ օրը ցերեկով հրապարակավ զորահանդեսներ է կազմակերպում ու ոգևորված ճառեր արտասանում: Նրա ներկայությունը լուրջ ազդեցություն է գործում ու որոշակիորեն փոխում Ա. Միքայելյանի գործունեության ուղղվածությունը: Նա նույնպես, հետևելով իր գործընկերոջ օրինակին, գործում է բացահայտ և երբեմն ոչ միայն մասնակցում է Դալի Ղազարի կազմակերպած զորահանդեսներին, այլև ինքն է նախաձեռնում համանման զորահանդեսներ[3]:

Հ. Ստեփանյանը նշում է, որ ինքը՝ որպես զինվորական, Ա. Միքայելյանի առաջարկությամբ ու ընկերակցությամբ մեկ անգամ մեկնել է՝ դիտելու Ղարաբուլաղի մերձակայքում նշանակված մեծ զորաշարժը, որին մասնակցում էին չորսհինգ վաշտ արցախցի զինվորներ: Իսկ այս նույն օրը Վարանդայի Ճարտար

---

[1] Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, Իմ յիշելի յուշերը, հ. 1, էջ 161:
[2] Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 274:
[3] Տես ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 4, էջ 24:

գյուղում զորահանդես է անցկացնում Դալի Ղազարը[1]:

Եղիշե Իշխանյանը, որն այդ ժամանակ գտնվում էր Զանգեզուրում, անդրադառնալով Արցախում տեղի ունեցած դեպքերի գնահատմանը, իր քննադատական վերաբերմունքն է արտահայտում ապստամբության կազմակերպիչների ոչ ծանրակշիռ, ցուցադրական գործողությունների նկատմամբ և որպես ապացույց իր քննադատական դիտողությունների՝ նշում է. «Ապստամբութիւնից առաջ մի անգամ Դալի Ղազարի առաջարկութեամբ Արցախի ձիաւոր մարտիկ ուժերի ընդհանուր ցուցադրում է կատարւում. բոլոր շրջաններից ձիաւոր մարտիկները կենտրոնանում են որոշեալ վայրում, հազարից ավելի հեծեալներ: Դալի Ղազարը չափազանց ոգևորւում է ձիաւորներով ու բացականչում. այսքան ձիաւոր ուժ միատեղ հաւաքւած մեր կառաւարութիւնը չունի. այս ձիաւորներով կարելի է ամբողջ Մուղանի դաշտը գրաւել»[2]:

Ինչ խոսք, որ համանման ելույթները, Արցախի մի շարք վայրերում բազմիցս կրկնվող բացահայտ զինվորական մարզումները և այլ բնույթի ցուցադրական ձեռնարկումները չէին կարող չգրավել ադրբեջանական իշխանությունների ուշադրությունը:

«Արսեն Միքայելյանը,- շարունակում է Ե. Իշխանյանը,- Դալի Ղազարը և Մեսեանը թերագնահատել էին Ադրբեջանի զինուորական ուժը և ունեցած նիւթական կարողութիւնը: Եւ Արցախի հայութեան հասած դժբախտութիւնը ամբողջովին այդ թերագնահատման արդիւնքն է»[3]:

Արցախ գործուղված ՀՀ կառավարության ներկայացուցիչները քաջատեղյակ էին, որ իր կազմավորման առաջին իսկ օրից Ադրբեջանի կառավարությունը, օգտվելով Հայաստանի հանրապետության դեռեւս ոչ այնքան կայուն վիճակից և Թուրքիայի, ապա նաև Անդրկովկասում հաստատված դաշնակից տերությունների աջակցությունից, հաստատակամորեն նպատակադրվել էր բռնությամբ զավթել Արցախը և դրանով իսկ մեկընդմիշտ արմատախիլ անել Հայաստանին վերամիավորվելու արցախահայության ձգտումները:

Միաժամանակ, Ադրբեջանի իշխանությունները, շրջափակման մեջ վերցնով Արցախը, ձգտում են սովամահության սպառնալիքով իրենց կամքը թելադրել արցախահայությանը: Կառավարության հրահանգով խստորեն արգելվում է արցախցիներին վաճառել հացահատիկ, գյուղատնտեսական ուրիշ մթերքներ եւ այլն:- Կառավարության որոշմամբ՝ կախաղան էր սպառնում բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեին խախտել հրահանգն ու որեւէ մթերք վաճառել հայերին:

Արցախի նկատմամբ կիրառած վերոհիշյալ գործողությունների հետեւանքով Միայն Բերդաձոր, Հարար և Փարաջանց գյուղերի 5000 գաղթականներից բոյկոտի օրերին մահացավ 1500 մարդ:

Ժամանակակիցների վկայությամբ Ղարաբաղի բոլոր գյուղերում սովը համաճարակի նման կոտորում էր հատկապես ծերերին ու երեխաներին: Այսպես՝ Ծամձոր գյուղում, որ ուներ ընդամենը 120 ընտանիք, երկու շաբաթվա ընթացքում

---

[1] Նույն տեղում, գ. 3, էջ 20-21:
[2] Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 614:
[3] Նույն տեղում, էջ 615:

սովամահ եղան 90 մարդ[1]:

Այսուհանդերձ, արցախցիները, չհանդուրժելով մուսավաթականների զավթողական պահանջները, բազմիցս գումարված համաժողովներում արտահայտելով ողջ արցախահայության կամքն ու ցանկությունները, մշտապես Հայաստանի հանրապետությանը վերամիավորվելու որոշումներ էին կայացնում: Հայոց հինավուրց Արցախ աշխարհում բազում անընդմեջ արյունալի բախումներ էին տեղի ունեցել հայերի ու թուրքերի միջև:

1919 թ. նոյեմբերին Զանգեզուրում կրած խայտառակ պարտությունից և հաջորդ տարվա հունվար-փետրվարյան դեպքերից հետո ադրբեջանական իշխանությունները եռանդով նախապատրաստություններ են տեսնում զենքի ուժով լուծելու Արցախի խնդիրը:

Արցախում ՀՀ կառավարության և ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Արսեն Միքայելյանը, ահազանգելով Արցախին սպառնացող իրական վտանգի մասին, Դրոյին հետևյալն է գրում. «Զանգեզուրի ռազմական գործողությունները սոսկալի յուզմունք են առաջ բերում Ադրբէջանի թրքութեան մէջ: Անմիջապէս զօրքեր են տեղափոխում: Թրքութիւնը զինւում, կամաւորական խմբեր է կազմում և նախապատրաստական աշխատանքի է դիմում՝ յարձակուելու Զանգեզուրի և Արցախի հարցը ընդմիշտ լուծելու համար: Ի նկատի ունենալով Շուռնուխի գործողությունների հետևանքով Արցախում ստեղծուած դրութեան բարդութիւնը՝ Արցախի ներկայացուցիչները խնդրում են Դրոյին, միշտ պատրաստ լինել՝ Ադրբէջանի յարձակման դէպքում օգնութեան հասնելու: Մինչ այդ պահանջում են ուղարկել փամփուշտներ և դրամ[2]:

Դեպքերը զարգանում և իրար են հաջորդում չափազանց արագ: Եթե իրոք ադրբեջանական զորքերը Հաճի Սամլուի քրդական հեծելախմբերի համագործակցությամբ ներխուժեին Արցախ, ապա ի՞նչով և ի՞նչպես կարող էր Դրոն օգնել արցախցիներին:

Ավելին՝ նույն օրերին Դրոն իր հանձնարարությամբ Արցախ գործուղված իր ներկայացուցիչներից ստանում է հետևյալ ահազանգը. «Հայկական Ղարաբաղը զինուած է չափից դուրս թոյլ, իսկ ռազմամթերք կայ չնչին քանակութեամբ...»[3]:

Ի պատասխան արցախցիների դիմումի ու ՀՀ կառավարության ներկայացուցիչ Արսեն Միքայելյանի ու իր հանձնարարությամբ Արցախում գտնվող գործիչների ահազանգի՝ Դրոն հայտնում է հետևյալը. «... Ինչքան հնարաւոր է, իր ուժերի սահմաններում կօգնի ձեզ: Դրօն Արցախի գործիչներին տալիս է իր ապագայ գործողութիւնների ծրագիրը Արցախին օգնութիւն հասցնելու դէպքում, և առաջարկում է՝ Ադրբէջանի յարձակման դէպքում Արցախի ինքնապաշտպանութեան գործողութիւնների տեղական նախագիծը ուղարկել իրեն: Դրօն յայտնում է, որ իր տրամադրութեան տակ եղած դրամի ու ռազմամթերքի պաշար շատ քիչ կայ, ուստի Գորիսից մեկնում է կարճ ժամանակով Քեշիշքենդ (Վայոց Ձոր), որտեղից ուղիղ գծով կապվելու է Հայաստանի կառավարութեան հետ՝ արագացնելու փամ-

[1] Տես Սայան Վ., նշվ. գիրքը, էջ 75:
[2] Տես ՀՀ ԲԿԱ,, թծ. 8, գ. 10:
[3] ՀՅԴ ԲԿԱ, թծ. 1469, գ. 1, էջ 24:

փուշտի և դրամի առաքումը Արցախի համար և վերջնականապէս ստանալու կառաւարութեան հաւանութիւնը Արցախի գործողութիւնների սկսման վերաբերեալ և ծանօթանալու ընդհանուր քաղաքականութեան հետ»[1]:

Եթե Զանգեզուրում, ապա նաև Արցախում ծավալվող գործողությունները պիտի կենսագործվեին ՀՀ կառավարության համաձայնությամբ ու որոշմամբ, ապա որևէ հարկ չպետք է լիներ, որ Դրոն վերոհիշյալ նպատակով մեկներ Քեշիշքենդ (Վայոց Ձոր), իսկ այնտեղից՝ Երևան: ՀՀ կառավարությունը պարտավոր էր ակնդետ հետևել Զանգեզուրում ծավալող գործողություններին ու պատրաստ լիներ ժամանակին Արցախ մեկնող զորամասերին ապահովելու անհրաժեշտ զենք ու զինամթերքով: Այսինքն՝ այս դեպքում պիտի անխափան ու արդյունավետ գործեին թիկունքի, այն է՝ այս պարագայում Հայաստանի ու ռազմաճակատի, այն է՝ Զանգեզուրի ու Արցախի կապն ու հաղորդակցության ուղիները: Հավանաբար, ՀՀ կառավարությունը դեռևս ինչպես հարկն է չէր հաղթահարել նախորդ տարում Թուրքիայի և Ադրբեջանի բազմապիսի աջակցությամբ հանրապետության գրեթե ողջ տարածքում բռնկված մահմեդական բնակչության զանգվածային զինված ելույթների պատճառով հանրապետությանը հարուցած ծանրագույն հետևանքները:

Արցախցիների դիմումը և Դրոյի պատասխանն ու ձեռնարկած քայլերը մատնանշում են, որ Հայաստանի կառավարությունը, գլխավոր ուշադրությունը բևեռելով մահմեդական բնակչության զինված ելույթների խաղաղեցման, ապա նաև Զանգեզուրը թուրք բնակչությունից մաքրելու հույժ կարևոր խնդիրների կենսագործմանը, դեռևս ինչպես հարկն է չէր նախապատրաստել անհրաժեշտ միջոցներ՝ վերջնականապես լուծելու նաև Արցախի հարցը: Այդ պատճառով հայկական մարտական ուժերի մուտքը Զանգեզուրից Արցախ ձգձգվում է, թեպետ այնտեղ ծավալվող դեպքերն, ընդհակառակը, թելադրում էին գործել առավելագույնս արագ և կազմակերպված:

Զանգեզուրում և Արցախում ծավալվող հետագա դեպքերը միանշանակ մատնանշում են, որ Ադրբեջանը, երբեք չհրաժարվելով Զանգեզուրն ու Արցախը բռնազավթելու նկրտումներից, զանգեզուրյան հունվարյան դեպքերից հետո դույզն-ինչ մատնված չէր անգործության: Այդ մասին աներկբա հավաստում են ՀՀ արտաքին գործոց նախարարությանը հասցեագրված՝ Ադրբեջանում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության զեկուցագրերը: Ներկայացրած զեկուցագրերում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը բազմիցս տեղեկացնում ու ահազանգում է Ադրբեջանի կառավարության ռազմական ձեռնարկումների իսկությունը, մասնավորապես Զանգեզուրի և Արցախի սահմանամերձ տարածքներում զորքերի կենտրոնացման փաստերը[2]:

1920 թ. հունվարի 22-ի թվագրյալ հաղորդագրությունում Ադրբեջանում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության աշխատակից Առաքելյանը հաղորդում է. «Այսօր Սուլթանովը հատուկ առաջադրանքով մեկնել է Ղարաբաղ: Հուսալի աղբյուրների տեղեկացմամբ՝ պարզվում է, որ նա մեկնում է Վարանդա և Զանգելան՝ այնտեղ զորքեր կենտրոնացնելու նպատակով, իբր թե

[1] ՀՀ ԲԿԱ, թղ. 8, գ. 10:
[2] Տե՛ս Нагорныи Карабах в 1918-1923 гг., Ереван, 1992, с. 355-362:

կանխելու Զանգեզուրից սպառնացող վտանգը»[1]:

Ադրբեջանի տենդագին նախապատրաստությունը, ինչ խոսք, չէր կարող գաղտնիք լինել ՀՀ կառավարության համար:

1920 թ. մարտի 6-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանը Արցախի հայրենակցական միության անունից հեռագրում է Ամերիկյան զինվորական կոմիսարին, իսկ կրկնօրինակները՝ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի ներկայացուցիչներին և տեղեկացնելով Ադրբեջանի իշխանությունների իրականացվող ռազմական պատրաստությունների մասին՝ խնդրում է շտապ միջոցների դիմել՝ կանխելու ադրբեջանական կանոնավոր զորամասերի մասնակցությամբ Արցախի վրա ձեռնարկվող հարձակումը[2]:

Ամերիկյան զինվորական կոմիսարին հայտնելով Արցախին սպառնացող վտանգը՝ Ալ. Խատիսյանը հույս է հայտնում, որ գերագույն կոմիսարը, ունենալով «...մեծ հեղինակություն, եվրոպական մշակույթ, չի հաշտվելու Ադրբեջանի հյուսած խարդավանքների հետ և կձեռնարկի հնարավոր բոլոր միջոցները՝ նպաստելու մայր հայրենիքին՝ Հայաստանին Արցախի քաղաքական վերամիավորմանը: Մեկ անգամ ևս հիշեցնում ենք Ձեզ, որ ադրբեջանցիները չեն համարվում Արցախի և Հայաստանի որևէ մասի բնիկներ: Օգտվելով Թուրքիայի քաղաքական և նենգ քաղաքականությունից՝ Ադրբեջանը ձգտում է բռնազավթել մեր հայրենիքի այս կամ այն տարածքը: Այդ քաղաքականությունն ուղղված է մեր հայրենիքի միասնականության դեմ և առաջ է բերում պատերազմի մշտական իրավիճակ:

Խոնարհաբար խնդրում ենք՝ Ձեր միջամտությամբ վերջ տալու Թուրքիայի և Ադրբեջանի դավերին ու խարդավանքներին:

Նախագահ՝ Անանուն, քարտուղար՝ Հարությունյան»[3]:

Ընդամենը երկու օր անց՝ մարտի 8-ին, Հայաստանի արտաքին գործերի նախարար Ալ. Խատիսյանն ուղերձ է հղում Ադրբեջանի արտաքին գործերի նախարարին և նրա ուշադրությանը ներկայացնելով Ադրբեջանի կանոնավոր զորամասերի կողմից Արցախին սպառնացող իրական վտանգը՝ ՀՀ կառավարության անունից «...կտրուկ բողոք է հայտնում ընդդեմ Խանքենդի և Աղդամի անմեղ խաղաղ հայ բնակիչների կոտորածի ու ադրբեջանական կառավարության ագրեսիվ գործունեության կապակցությամբ, որն անխուսափելիորեն հանգեցնելու է մեծածավալ արյունահեղության»[4]:

ՀՀ կառավարության անունից Ադրբեջանին հայտնելով կտրուկ բողոքը՝ Ալ. Խատիսյանն ընդգծում է.

«...խնդրում եմ ձեռնարկել Ձեզանից կախված բոլոր հնարավոր միջոցները՝ կանխելու ադրբեջանական զորքերի ներխուժումը Արցախի խորքերը, որը սպառնում է անխուսափելի արյունահեղ ընդհարումներ»[5]: ՀՀ կառավարությունն Արցախի հարցով, ինչպես արդեն նշվել է, բազմիցս էր դիմել դաշնակից տերությունների միջամտությանն ու օգնությանը, բայց անգամ ամենաճակատագրական

[1] Նույն տեղում, с. 362:
[2] Տես Нагорный Карабах в 1918-1922 гг., с. 382-383:
[3] Նույն տեղում:
[4] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 117:
[5] Նույն տեղում:

պահին, ինչպես հարկն է, չէր ստացել ակնկալվող աջակցությունը: Բացառություն չէր կարող կազմել նաև այդ դիմումի պատասխանը:

Պատմական հիշյալ ժամանակահատվածում Արցախի և Զանգեզուրի իրական կացությունը լուսաբանող սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը պարզորոշ ցույց է տալիս, որ համաձայն Ադրբեջանի իշխանությունների որդեգրած մարտավարության՝ զորքերը Արցախի ու Զանգեզուրի վրա հարձակումը պիտի ձեռնարկեին մի քանի ուղղությամբ ու միաժամանակ, ընդսմին առավել մեծաքանակ մարտական ուժեր նախատեսվում էր կենտրոնացնել Արցախի ուղղությամբ: Համանման մարտավարությամբ, այն է՝ մեծաքանակ զորքերի մասնակցությամբ հզոր հարձակումների ձեռնարկմամբ՝ Ադրբեջանի իշխանությունները ձգտում էին ու լիահույս էին արագորեն ընկճել արցախահայության դիմադրությունը, որից հետո ավելի դյուրին կլիներ լուծել Զանգեզուրը բռնազավթելու խնդիրը:

Ադրբեջանական իշխանությունների ձեռնարկած միջոցառումների մասին ՀՀ կառավարության ներկայացուցիչներ Արսեն Միքայելյանն ու Կ. Աթանեսյանը Զանգեզուրի իշխանությանը հասցեագրած նամակում հայտնում են, որ «Ադրբեջանը խոշոր ուժեր է կենտրոնացնում 1. Ջեբրայիլ-Զանգեզուր ուղղութեամբ, 2. Նախիջևանի և Օրդուբադի ուղղություններով՝ շրջափակելու Զանգեզուրը...

Միաժամանակ Ադրբեջանը խոշոր ուժեր է մտցնում Թարթառի հովիտը»[1]:

Զանգեզուրի իշխանություններին տեղեկացնելով Արցախին սպառնացող վտանգի իրողությանը՝ նրանք հավատացած էին, որ ժամանակին կստանան ՀՀ մարտական ուժերի աջակցությունը:

Ստանալով նամակը՝ Ս. Մելիք-Յոլչյանը Ա. Միքայելյանի ու Կ. Աթանեսյանի հաղորդածի մասին տեղեկացնում է ՀՀ վարչապետին ու սպարապետին և պատասխան նամակում գրում է. «Դրօն այստեղ չէ, սպասեցեք նրա վերադարձին, որովհետև Ղարաբաղի գործերի ղեկավարութիւնը մտնում է նրա իրաւասութիւնների մէջ, մանաւանդ որ մեզ մօտ չկա ոչ մի փամփուշտ ու ոչ մի դրամ:

Ս. Մելիք-Յոլչյանը միաժամանակ նրանց հիշեցնում է Դրոյի հրահանգը. «...ինչքան կարելի է իրենց գործունեութիւնը տանեն գաղտնի, որ Ադրբեջանը չջղայնանա...»[2]:

Ինչ պիտի արվեր. ՀՀ կառավարությունն այդ պահին չէր կարող օգնություն հասցնել Արցախ: Գործի շահերը հրամայաբար պահանջում էին, որ Արցախի ապստամբության կազմակերպիչները գործեին սթափ, կշռադատված ու անպայման հաշվի առնեին արցախահայության հնարավորություններն ու Դրոյի կողմից իրենց տրված անաղմուկ ու առանց ցուցադրական ելույթներով գործելու հրահանգը:

Ըստ Գ. Բալայանի և Զ. Յոլյանի կազմած վերոհիշյալ զեկուցագիր-տեղեկագրի՝ Զանգեզուրից Հայաստանի հանրապետության վարչապետ Ալ. Խատիսյանի հաղորդած «Զանգեզուրի ուժերի գլխաւոր ուշադրութիւնը պէտք է դարձնել Օրդուբաթի և Նախիջևանի վրայ» տեղեկությունը ստանալուց հետո Ա. Միքայելեանը Դալի Ղազարի հետ սկսում են իրենց պատասխանատուութեամբ ինքնագլուխ

[1] ՀՀ ԲԿԱ, ֆ. Ս. Վ. (Սիմոն Վրացեան), թղ. 8, գ. 10, էջ 3:
[2] Նույն տեղում:

գործել: Ա. Միքայելեանը իր ստացած տեղեկութիւններին իրազեկ չէ անում տեղական ինքնապաշտպանութեանը գործակցող գործիչներին...»[1]:

Մարտի սկզբներին Արսեն Միքայելյանի, Դալի Ղազարի և Հովակ Ստեփանյանի մասնակցությամբ տեղի է ունենում զինվորական գաղտնի ժողով, որտեղ ընտրվում է զինական ուժերի հրամանատարական կազմը և որոշվում, չսպասելով Զանգեզուրից սպասվող օգնությանը, մարտի 23-ին սկսել ապստամբությունը:

Ըստ ՀՅԴ Ապառաժի կենտր. կոմիտեի անդամ Խ. Մելքոնյանի, որը միաժամանակ Ա. Միքայելյանի հրահանգով նշանակվել էր Վարանդայի լիազոր, «Արցախում ապստամբություն սկսելու որոշումը, տեղյակ չպահելով անգամ գավառի ինքնապաշտպանական շրջանների հրամանատարներին ու առանց նրանց համաձայնության, կայացվել է Ա. Միքայելյանի, Դալի Ղազարի և Դիզակի ինքնապաշտպանական շրջանի հրամանատար Հովակ Ստեփանյանի համատեղ համաձայնությամբ ու վճռով: Այդ նրանք են որոշել ապստամբությունը սկսել մարտի 16-ին, ապա փոխել են օրն ու նշանակել մարտի 23-ին»[2]:

Ավելին՝ ըստ նրա պնդման՝ «Ղարաբաղի ապստամբութիւնից ես ոչ մի տեղեկութիւն չեմ ունեցել:Ապացույց դորան, որ մարտի 22-ին ես պատահմամբ գալիս եմ Սարուշեն և նոյն օրը վերադառնում Կղարծի, կես ժամ չանցած, ինձնից յետոյ գալիս է Աւդուռ-Միւրիշէնի ճակատի հրամանատար սպայ Միքայել Պարսեղեանը և յայտնում, որ այս գիշեր պիտի Չրախլուի դիրքերը բռնենք և արդէն ինքը Դալի Ղազարի դիսպոզիցեան ունի ստացած»[3]:

Մարտի 22-ի գիշերը Խ. Մելքումյանը 120 զինվորներով Կղարծի գյուղից մեկնում է Մյուրիշեն, ապա Միքայել Պարսեղեանի գլխավորած մարտախմբի հետ գրավում են Չրախլուի բոլոր դիրքերն ու սպասում Դալի Ղազարի հրահանգին:

Հարկ է նկատել, որ ավելի քան անհասկանալի է ՀՀ կառավարության և ՀՅԴ բյուրոյի ներկայացուցչի նախաձեռնությամբ տեղի ունեցած զինվորական ժողովի կայացրած՝ Արցախում տիրող կացությանը ոչ համահունչ, միանգամայն չկշռադատված ու վնասակար այդօրինակ որոշումը:

Ըստ Խ. Մելքոնյանի՝ Արցախում թույլ կազմակերպված ապստամբության վաղաժամկետ բռնկման գլխավոր մեղսագործներից մեկը, եթե ոչ ամենագլխավորը, եղել է Դալի Ղազարը՝ իր անխոհեմ, չկշռադատված ու ցուցադրական գործողություններով: Դալի Ղազարը, որն իր ձեռքն էր վերցրել Արցախի զինվորական գործը, փոխանակ, համաձայն իրենց տրված հրահանգի, գաղտնիորեն ու անաղմուկ նախապատրաստեր մարտական ուժերը, շրջել է շրջաններում և հրապարակավ ու ցուցադրաբար կազմակերպել Արցախի մարտական ուժերի զորահանդեսներ[4]:

Դիզակի զինվորական շրջանի հրամանատար Հովակ Ստեփանյանի բնութագրմամբ՝ «... ազատ լեռներում օդ ծծող Դալի Ղազարը, Արսէն Միքայէլեանը, Զախար Մեսեանն ու ռոտմիստր Տէր-Մարտիրոսեանը կազմակերպում են օրը ցերեկով պարատներ (զօրատես) և հազարաւոր զինուած հայ գիւղացիների վաշտերը թմբկահարութեամբ զինավարժութիւններ են կատարում Վարանտայում և

[1] Նույն տեղում, էջ 3-4:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ, 4, էջ 22:
[3] Նույն տեղում, էջ 28:
[4] Տես նույն տեղում, էջ 22:

Ջիւանշիրում ու Խաչէնում»[1]:

Իրականում գնդապետ Զախար Մեսյանը չի կազմակերպել զորահանդեսներ, այդ մասին, բացի Հ. Ստեփանյանի մեջբերումից, չկա որևէ մեկ այլ փաստաթուղթ, որը մատնանշեր ցուցադրական գործողություններին նրա մասնակցությունը:

Դալի Ղազարի չկշռադատված ու ցուցադրական վերոհիշյալ գործողությունների իրողությունը, ինչպես արդեն նշվել է, վկայակոչում է նաև Եղիշե Իշխանյանը:

Իհարկե, քնած չէին Արցախում կատարվող իրադարձություններին ակնդետ հետևող Ադրբեջանի իշխանությունները:

«...Դալի Ղազարի գալուց յետոյ,- գրում է Խ. Մելքոնյանը,- Ղարաբաղի ինքնապաշտպանական գործը այլ պատկեր է ստանում: Կամաց-կամաց ռազմականի է անցնում և ամբողջը յայտնի է դառնում Սուլթանովին: Այն, որ մինչև Դալի Ղազարի գալը գաղտնի էր, յետոյ յայտնի է դառնում, որովհետև հրապարակի վրայ էր ամէն ինչ»[2]:

Ավելին, Խ. Մելքոնյանի գնահատմամբ՝ «...խորապէս համոզված եմ, որ եթէ Դալի Ղազարը այդ օրերին չգար Ղարաբաղ, երբեք Ա. Միքայելյանը յանձն չէր առնել առանց Զանգեզուրի և Դրոյի կարգադրութեան այդպիսի պատասխանատու գործ սկսել, անգամ եթէ ցանկանար էլ...»[3]:

Ադրբեջանը տեղյակ էր Արցախում տիրող կացությանն ու զորքեր է կենտրոնացնում՝ հերթական անգամ զենքի կիրառմամբ արցախահայությանը պարտադրելու ընդունել իր իշխանությունը:

Հայաստանի զորքերի գլխավոր հրամանատար - գլխավոր շտաբի պետ, գնդապետ Վեքիլովի և գեներալ զորաբնակարանապետ (квартирмейстр) գնդապետ Պրիմատովի կազմած՝ Հայաստանի ռազմաքաղաքական իրավիճակը (հունվարի 1-ից մինչև ապրիլի 1-ը 1920 թ.) ներկայացնող համառոտ տեղեկագրի վկայությամբ՝ թեպետ նոյեմբերի 22-ին կայացած հայ-ադրբեջանական համաձայնագիրը չլուծեց Արցախի հարցը, սակայն Հայաստանի կառավարությունը հույս ուներ, որ այդ հարցը լուծվելու էր գարնանը Փարիզում կայանալիք կոնֆերանսում[4]:

1920 թ. գարնանը Ադրբեջանի իշխանությունների ձեռնարկած քայլերն ու Զանգեզուրին և Արցախին սպառնացող աղետը հրամայաբար թելադրում էին ՀՀ կառավարությանը, որ անհրաժեշտ է ձերբազատվել այդ հարցում դրսևորած հանգիստ ու սպասողական կարգավիճակից և գործել առավել վճռական մարտավարությամբ, մանավանդ որ քաջատեղյակ էր Զանգեզուրն ու Արցախը զենքի ուժով զավթելու նպատակով Ադրբեջանի տենդագին ռազմական նախապատրաստությանը:

ՀՀ կառավարությունը Զանգեզուրի ու Արցախի վրա Ադրբեջանի հարձակումը կանխելու նպատակով, հավատարիմ իր դավանած մարտավարության, դիմում է ոչ միայն դաշնակից տերություններին, այլև որպես միջնորդի՝ Վրաստանի կառավարությանը:

Հայաստանի վարչապետ Ալ. Խատիսյանը Վրաստանի արտաքին գործերի

[1] ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ, 3, էջ 8:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427 (մաս 1), թ. 179:

նախարար Գեգեչկորիին հասցեագրած դիմումում նախ հիշեցնում է, որ Անդրկովկասյան երեք հանրապետությունների ընդհանուր համաձայնությամբ Թիֆլիսում նախատեսվում էր հրավիրել կոնֆերանս, որը կոչված էր լուծելու ոչ միայն վիճելի տարածքների, այլև Զանգեզուրի և Արցախի հարցը: Հակառակ դրան՝ Ադրբեջանի կառավարությունը խախտում է 1919 թ. օգոստոսի 22-ին Արցախի Ազգային խորհրդի հետ կնքած համաձայնագիրը և որոշում է զենքի ուժով բռնագրավել Զանգեզուրն ու Արցախը:

Ալ. Խատիսյանի տեղեկացմամբ՝ Ադրբեջանի կառավարությունը, կենտրոնացնելով կանոնավոր զորամասեր ու հրոսակախմբեր, մարտի 20-ին Արցախի հայ բնակչությանը ներկայացրել է զինաթափվելու վերջնագիր: Արցախի բնակչությունը մերժում է ընդունել իրեն ներկայացրած վերջնագիրը՝ գտնելով, որ դրանով Ադրբեջանը խախտում է օգոստոսի 22-ի համաձայնագիրը, իսկ զինաթափումը հավասարազոր է կոտորածի[1]:

Ըստ Հայաստանի հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պատասխանատու աշխատակիցներ գնդապետ Վեքիլովի և գնդապետ Պրիմատովի կազմած տեղեկագրի՝ «Գարնան առաջին նշանները ցույց են տալիս, որ Ադրբեջանը պատրաստվում է Արցախի հարցը լուծել զենքի միջոցով: Մարտի 11-ին և 12-ին Բաքվից Ղարաբաղ և Զանգեզուր (Ջեբրայիլի տարածքով) է ուղարկել զորքերի համար անհրաժեշտ բոլոր տեսակի զենքերով բարձած 90 վագոն: Ղարաբաղի զինաթափման հարցը վճռված է»[2]:

Ալ. Խատիսյանը Վրաստանի արտաքին գործերի նախարար Գեգեչկորիին ուղղված վերոհիշյալ դիմումում հայտնում է, որ Ադրբեջանը, ստանալով արցախահայության մերժողական պատասխանը, Արցախը զենքի ուժով զինաթափելու նպատակով ադրբեջանական կանոնավոր զորամասերի ու հրոսակախմբերի միջոցով ամբողջ ճակատով հարձակում է ձեռնարկում Զանգեզուրի և Արցախի վրա: Շուշիում կոտորվել է ողջ հայ բնակչությունը: Հակառակ հայ բնակչության կամքի ու ցանկության, Փարիզի խաղաղության կոնֆերանսի որոշման և Լորդ Քերզոնի վերջին հեռագրի՝ Ադրբեջանը ձգտում է վերջնականապես նվաճել Արցախն ու Զանգեզուրը:

Ալ. Խատիսյանի գնահատմամբ՝ օգտվելով Անդրկովկասյան երեք հանրապետությունների միջև գոյություն ունեցող վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու Հայաստանի կառավարության դրսևորած խաղաղասիրական դիրքորոշումից՝ Ադրբեջանի կառավարությունը Անդրկովկասում վերստին վառում է պատերազմի բռնկման կրակը, որը կարող է կործանարար ազդեցություն գործել բովանդակ Անդրկովկասի վրա[3]:

Վրաց արտաքին գործերի նախարարին ներկայացնելով վիճելի տարածքների, մասնավորապես Արցախի, Զանգեզուրի նկատմամբ Ադրբեջանի դրսևորած զավթողական նկրտումները՝ Ալ. Խատիսյանը նշում է. «Իմ կառավարության անունից խնդրում եմ, հանուն Անդրկովկասին սպառնացող վտանգի կանխման, ձեր կող-

---

[1] Տես ՀՀ ԲԿԱ, ֆ. ՍՎ, գ. 8/8, էջ 3:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427 (մաս 1), թ. 179:
[3] Տես ՀՀ ԲԿԱ, ֆ. ՍՎ, գ. 8/8, էջ 3:

մից Ադրբեջանի կառավարության վրա գործադրեք համապատասխան միջոցներ, որպեսզի անհապաղ դադարեցնեն Արցախի և Զանգեզուրի վրա իրականացվող հարձակումները և հրաժարվեն Արցախի հարցը զենքի ուժով լուծելու փորձերից»[1]:

Պիտի ընդգծել, որ Գեգեչկորին սթափ և կշռադատված է գնահատում հայ-ադրբեջանական պատերազմի բռնկման պարագայում Անդրկովկասին, այդ թվում Վրաստանին սպառնացող վտանգի հավանականությունը և հիմք ընդունելով Ալ. Խատիսյանի կողմից ՀՀ կառավարության անունից իրեն ներկայացրած խնդրանքը՝ նոյեմբերի 5-ին դիմում է Փարիզի խաղաղության կոնֆերանսի գլխավոր կոմիսարին, ԱՄՆ-ի ներկայացուցիչ գնդապետ Հասկելին, Անդրկովկասում Բրիտանիայի գլխավոր կոմիսար Ուորդրոպին, Ֆրանսիայի և Իտալիայի առաքելությունների ներկայացուցիչներին հետևյալ ուղերձով.

«Ձերդ գերազանցութիւն,

Ըստ մեր ունեցած տեղեկութիւնների՝ Զանգեզուրի գավառում նախապատրաստվում են գործողութիւններ, որոնք կարող են ունենալ վատթարագույն հետևանքներ: Գտնում ենք, որ Անդրկովկասյան հանրապետությունների միջև գոյութիւն ունեցող ամբողջ դժվարությունները կարելի է կարգավորել միայն խաղաղ համաձայնության միջոցով: Զենքի միջոցով վիճելի հարցերի լուծումը անցանկալի է ու վտանգավոր: Մենք ձգտում ենք հավաստիացնել Հայաստանին և Ադրբեջանին բարեկամաբար լուծել Զանգեզուրի գավառում իրենց միջև գոյութիւն ունեցող վիճելի հարցերը: Հույս ունենալով, որ մեր միջնորդությունը կարող է հանգեցնել ցանկալի արդյունքի, պատիւ ունենք խնդրել Ձեզ՝ գործադրել Ձեր ունեցած ողջ ազդեցութիւնը, կանխելու զինուած բախումը Հայաստանի և Ադրբեջանի միջև:

Այդ նկատառումով՝ Վրաստանի արտաքին գործերի նախարարութիւնը գտնում է, որ ժամանակն է ձեռնարկել այնպիսի ազդեցիկ գործողութիւններ, որոնք կհանգեցնեն վիճելի հարցերի խաղաղ կարգավորմանը»[2]:

Ժամանակը միանշանակորեն ցույց տվեց, որ ՀՀ կառավարության կողմից դաշնակից տերություններին և Վրաստանի կառավարությանը ներկայացրած դիմումներն այս անգամ դարձյալ որևէ ցանկալի արդյունք չեն ունեցել և չէին կարող ունենալ: Զանգեզուրն ու Արցախը զենքի ուժով բռնազավթելու Ադրբեջանի իշխանությունների որդեգրած քաղաքականությունն ու նկրտումներն անբեկանելի էին:

Նույն տարվա մարտի 23-ին ադրբեջանական բազմահազարանոց բանակը, որին միանում են Հաջի Սամլուի քրդական հեծյալ հրոսակախմբերը, տարբեր ուղղություններով ներխուժում են Արցախ: Սկսվում են անհավասար, իսկ մի քանի ինքնապաշտպանական շրջաններում՝ հերոսական մարտերը:

Հաջորդ օրը՝ մարտի 23-ին, Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Խոյսկին Հայաստանում հավատարմագրված իրենց դիվանագիտական ներկայացուցչին հայտնում է. 22-ի գիշերը ամբողջ Ղարաբաղում բռնկվել է հայերի ապստամբությունը: Միաժամանակ, հայկական զինված ուժերը հարձակվել են Խանքենդի, Ասկերանի և այլ բնակավայրերի վրա: Հարձակումն առայժմ հետ է մղվել, հայ-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 8:

կական կողմի կորուստներն ավելի մեծ են: Շտապ հաղորդեք Վեդիբասարի և Նախիջևանի շրջաններում կայանալիք հետագա դեպքերի մասին: Անհրաժեշտ է հնարավոր բոլոր միջոցներով անհապաղ օգնել Վեդիբասարին ու Նախիջևանին և նրանց տեղեկացնել Ղարաբաղում ծավալվող դեպքերի մասին»[1]:

Միանգամայն պարզ է և հասկանալի Հայաստանի տարածքում գտնվող թուրքաբնակ շրջաններում, մասնավորապես Վեդիբասարում ու Նախիջևանում ծավալվող դեպքերի նկատմամբ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի ցուցաբերած հետաքրքրության բուն նպատակը: Հայաստանի թուրքաբնակ շրջանների զինված ելույթներն անտարակույս իրենց վրա կբևեռեին ՀՀ կառավարության ուշադրությունը, և Ադրբեջանն առավել դյուրին միջոցների գործադրմամբ՝ կարող էր հաղթահարել արցախահայության դիմադրությունն ու վերջնականապես լուծել գավառը Ադրբեջանի գերիշխանությանը ենթարկելու խնդիրը:

Իսկ այդ նույն ժամանակահատվածում ադրբեջանական զինվորական ուժերը Արցախում և մասնավորապես Շուշիում ձեռնարկած գործողություններին զուգընթաց, ինչպես արդեն նշվել է, հերթական անգամ հարձակում են գործում նաև Զանգեզուրի վրա: Այդ հարձակումը կարելի է համարել ադրբեջանական հրամանատարության ծրագրած մարտավարական քայլ, որի գլխավոր նպատակը նախ և առաջ Արցախի գրավումն էր: Եթե Ադրբեջանին հաջողվեր այդ հարձակմամբ Արցախը կտրել Զանգեզուրից, ապա Արցախը լիովին կհայտնվեր շրջափակման մեջ, և այդ դեպքում ադրբեջանական կանոնավոր զորամասերն ու նրանց զորակցող թուրք և քուրդ հրոսակախմբերը մեծ հնարավորություն էին ձեռք բերում առավել դյուրին միջոցների գործադրմամբ հաղթահարելու արցախահայության ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունն ու բռնագրավելու գավառը:

Ըստ ՀՀ զինվորական նախարարության հետախուզության բաժնի պետ կապիտան Տիգրան Դևոյանի կողմից Հայաստանի զինվորական ուժերի շտաբի պետին ներկայացրած զեկուցագրի՝ ադրբեջանական զինական ուժերը Զանգեզուրի վրա հարձակում են գործել երեք ուղղությամբ. 1. Մինքենդից դեպի Գորիս, 2. Կարլարայից Ղափանը Զանգեզուրից կտրելու նպատակով դեպի Ալի Ղուլի Ուշաղի և 3. Ջեբրայիլի կողմից[2]:

Զանգեզուրի մարտական ուժերը, ինչպես արդեն նշվել է, հերթական անգամ դրսևորելով մարտական անկոտրում ոգի և մարտնչելու անզուգական վարպետություն, մարտի 23-26-ին տեղի ունեցած կռիվներում ջախջախել են թնդանոթների և բազմաթիվ հրոսակախմբերի աջակցությամբ հարձակվող ադրբեջանական 5-րդ և 7-րդ գնդերին, որոնք վերջերս էին Բաքվից ու Լենքորանից տեղափոխվել Ջեբրայիլ[3]:

Համաձայն Ադրբեջանի բանակի 2-րդ դիվիզիայի շտաբի պետ, գնդապետ Սոկոլովի խոստովանության՝ ադրբեջանական կանոնավոր զորամասերի զինակցությամբ Զանգեզուրի վրա ձեռնարկված հարձակմանը մասնակցել են նաև Դաղստանի և լեզգիների գումարտակներն ու քրդական հեծյալ զորախմբերը,

---

[1] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 214:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 242:
[3] Տես Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 432:

որոնք մասնակցել էին նախորդ տարվա նոյեմբերին տեղի ունեցած կռիվներին[1]:

Զանգեզուրում հերթական անգամ պարտություն կրելուց հետո Ադրբեջանի իշխանությունները իրենց ողջ ուշադրությունը կենտրոնացնում են Արցախի վրա:

Ինչպիսի՞ն էր Արցախի և ադրբեջանցիների մարտական ուժերի հարաբերակցությունը: Ըստ ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբի կազմած վերոհիշյալ տեղեկագրի՝ հայկական բանակի գլխավոր շտաբը ամերիկյան հյուպատոսության ուշադրությանն է ներկայացնում Արցախի և ադրբեջանցիների մարտական ուժերի մոտավոր քանակը: Եթե հիմք ընդունենք տեղեկագրում ներկայացված տվյալները, ապա պարզվում է, որ այդ նույն ժամանակահատվածում Արցախում զինված տղամարդկանց քանակը հավասար է եղել մոտավորապես 30.000-ի: Տեղեկագրում նշված չէ, թե 30.000 զինված տղամարդկանցից քանիսն է մասնակցել Արցախի տարբեր շրջաններում ընթացող ինքնապաշտպանական մարտերին: Այս առումով տեղեկագրում համեմատաբար ավելի սպառիչ ու որոշակի են ներկայացված Արցախի վրա հարձակվող ադրբեջանական զորքերի քանակի մասին տվյալները[2]:

Արցախի վրա տարբեր ուղղություններից հարձակվող զորքերի քանակը կազմել է. «Ընդամենը՝ 4 հետևակային, 3 հեծյալ գնդեր և ռոտմիստր Սուլթանովի քրդական 4-5 ջոկատներից բաղկացած հեծյալ դիվիզիոնը: Սովորաբար ղարաբաղյան կռիվների ժամանակ ադրբեջանական գործող կանոնավոր զորքերի գնդերի անձնակազմը առավելագույնս համալրվում էր, և նրանց կազմում կարելի է հաշվել 8000 սվին և 2000 սուր»[3]:

Եթե հիմք ընդունենք այդ տվյալները, ապա ստացվում է, որ Արցախի վրա հարձակվող 4 հետևակային գնդերը իրենց կազմում ունեցել են 32.000, իսկ 3 հեծյալ գնդերը՝ 6000 զինվորները և այդ ամենին գումարած՝ ռոտմիստր Սուլթանովի քրդական 4-5 ջոկատներից բաղկացած հեծյալ դիվիզիան:

ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբի կազմած տեղեկագրում ներկայացված տվյալները միանշանակորեն ցույց են տալիս, որ եթե նույնիսկ Արցախի 30.000 զինված տղամարդիկ ամբողջությամբ մասնակցեին մարտական գործողություններին, ապա դարձյալ զուտ քանակական առումով զգալիորեն զիջել էին թշնամու մարտական ուժերին:

Հ. Ստեփանյանի հավաստմամբ՝ կազմված էր ապստամբության բռնկման դեպքում արցախյան մարտական ուժերի գործողությունների մարտավարության նախագիծը, որի կրկնօրինակը ուղարկվել էր Դրոյին, սպարապետ գեներալ Թ. Նազարբեկյանին, իսկ նա այդ նախագիծը հանձնել է Զանգեզուրի զինվորական ուժերի հրամանատար գեներալ Ղազարյանին:

Եթե կառուցվածքային վերլուծության ենթարկենք նախագիծը, ապա պիտի առանձնացնել հետևյալը.

1.Ռոտմիստ Տեր-Մարտիրոսյանը պիտի զորահավաք կատարեր ու գրավեր Մարգուշևանն ու Թարթառը, ապա իր գլխավորած զորախմբի ուժը ցույց տալու

---

[1] Տես նույն տեղում:
[2] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 242:
[3] Նույն տեղում, թ. 174:

նպատակով առաջանար Աղդամ: Միաժամանակ ռոտմիստ Տեր-Մարտիրոսյանը պիտի մշտապես հսկեր ու իր ձեռքում պահեր Եվլախ-Աղդամ խճուղու այն մասը, որն անցնում էր Թարթառով ու դրանով խոչընդոտեր ադրբեջանական կանոնավոր զորքի տեղաշարժերը դեպի Շուշի:

2.Գնդապետ Զ. Մեսյանը Ջիվանշիրի ուժերի մի մասի ու Խաչենի ուժերով արշավում է Խանքենդ և գրավում է այդ ավանը, որտեղ գտնվող զինապահեստներում ամբարված էին մեծ քանակությամբ զենք ու զինամթերք:

3.Դալի Ղազարը գրավում է Ասկերանի կիրճն ու Խոջալուն և կտրում Խանքենդի և Աղդամի կապը: Միաժամանակ Դալի Ղազարը պիտի քայլեր ձեռնարկեր՝ դրսից պաշտպանելու Շուշին, ու թույլ չտար, որ լրացուցիչ ուժեր տեղափոխվեին ու կենտրոնանային քաղաքում:

4.Դիզակի ռազմական ուժերը պետք է գրավեին Մուսուլմանլարի ամառանոցները և անակնկալ հարվածեին ադրբեջանական զորքի ու կամավորական խմբերի թիկունքին: Դրանով նրանք հնարավորություն կընձեռեին Դրոյի էքսպեդիցիոն զորամասին, որ նա առավել դյուրին ու արագորեն անցներ Զանգեզուրից դեպի Արցախ ձգվող ճանապարհն ու նշանակված ժամին հասներ նախանշված վայրը:

5.Գաղտնիք չէր, որ Արցախի ամենաթույլ կողմը Շուշիի պաշտպանությունն էր: Քաղաքի զորանոցում տեղաբաշխված էր թուրքական զորամասը, թուրք բնակչությունը զինված էր, իսկ հայերն անզեն ու անպաշտպան: Ավելին՝ Շուշիի հայկական քաղաքամասի ինքնապաշտպանական մարմնի տրամադրության տակ չկար գրեթե ոչինչ: Այդ դեպքում ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով կարելի էր փրկել Շուշիի հայությանը վերահաս աղետից:

Ըստ կազմած նախագծի՝ անհարժեշտ էր չորս կողմից շրջափակել քաղաքը և թույլ չտալ, որ ադրբեջանական բանակի հրամանատարությունը լրացուցիչ մարտական խմբերով ուժեղացներ քաղաքում գտնվող թուրքական զորամասը:

Այստեղ իր վճռական խոսքը պիտի ասեր Խանքենդի վրա հարձակվող գնդապետ Զ. Մեսյանի գլխավորած զորախումբը: Շուշիի փրկության գլխավոր երաշխիքը մեծապես պայմանավորված էր այդ ավանի գրավմամբ: Եթե գնդապետ Զ. Մեսյանը կարողանար ժամանակին գրավել Խանքենդը, ապա նրա զինապահեստներում մեծ քանակությամբ ամբարված զինամթերքն ու թնդանոթները կարելի էր գործադրել թուրքերի դեմ, և այդ պարագայում նրանք չէին հանդգնի կոտորածներ սանձազերծել քաղաքում:

6.Զուգահեռաբար գնդապետ Զ. Մեսյանը մեկ վաշտի և Վարանդայի հրամանատարի երկու վաշտերի ուժերով պետք է գրավեր համապատասխան դիրքերն ու խոչընդոտեր, թույլ չտար, որ Հաջի Սամլուի քուրդ զինյալները Խալիֆալլուի ձորով մտնեին Շուշի և օգնեին իրենց ազգական Խ. Սուլթանովին:

Հ. Ստեփանյանի հավաստմամբ՝ Ա. Միքայելյանն ու Դալի Ղազարը հավանություն են տվել նախագծին ու անառարկելիորեն ընդունել նախագծի առաջադրած բոլոր կետերը[1]:

Ավելին, Ա. Միքայելյանը հավատացրել է, որ «Խանքենտին գրավելուց յետոյ Զախարը (նկատի ունի գնդապետ Մեսյանին. - Հ. Գ.) մտնելու է Շուշի, այնպէս

[1] Տես ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 3, էջ 23-24:

որ այդքան մի մտածիր քաղաքի մասին, այլ գնա և կատարիր քո դժուարին խնդիրը Դիզակում, ուր չունենք կարող ոյժ, իսկ հայդուկ Սասունցի Մանուկը լաւ կռուող է, բայց չի կարող ղեկավարել, նա կլինի քո օգնականը»[1]:

Հարկ է ընդգծել՝ թեպետ նախագիծը վատ չէր մտածված, բայց Արցախում, հատկապես Շուշիում ծավալվող հետագա դեպքերը բոլորովին չեն կատարվում այնպես, ինչպես ներկայացված էր նախագծում:

Համաձայն ՀՀ կառավարության ներկայացուցիչների ու Կենտրոնական ինքնապաշտպանական մարմնի որոշման՝ փոխվում է ապստամբության օրը. այժմ պետք է սկսվեր ոչ թե փետրվարի 16-ին, այլ փետրվարի 23-ին, որի մասին սուրհանդակների միջոցով անմիջապես հաղորդում են Զանգեզուրին: Միաժամանակ Զանգեզուրի հետ համաձայնեցնում են միմյանց հետ հաղորդակցվելու միջոցները, որի համաձայն «Խծաբերդի մօտի սարի գլխից ամսի 22-ին ցոյց տալ հինգ մեծ կրակ, պատասխանը Կոռնիձորից ստանալ մի մեծ կրակով, դա նշան կը լինի, որ Զանգեզուրը պատրաստ է օգնութեան գալու Ղարաբաղի հինգ ապստամբ գաւառամասերին, բացի այդ նշանից, երկու-երեք օր առաջ Զանգեզուրից գրաւոր պատասխան պիտի ստացէր համաձայնութեան համար, իսկ մարտի 22-ի առաւօտեան Կոռնիձորի դաշտից թնդանօթի մի հարւած պիտի աւետեր միւս օրը գաղտնի ապստամբութեան պատրաստութիւնը»[2]:

Համաձայնեցված բոլոր նշաններով՝ Զանգեզուրը տալիս է իր համաձայնությունը, և մարտի 23-ի առավոտյան ժամը 3-ին ապստամբությունը սկսվում է վաղօրոք սահմանված բոլոր շրջաններում: Մեծ հաջողությամբ բոլոր ճակատներում կտրում են հեռախոսային և հեռագրային թելերը, Դալի Ղազարը գրավում է Ասկերանը, իսկ ռոտմիստր Տեր-Մարտիրոսյանը՝ Թարթառը, բայց չի կարողանում շարժվել դեպի Աղդամ[3]:

Այդ հարցի վերաբերյալ իր հուշերում ուշագրավ տեղեկություններ է հաղորդում դեպքերի անմիջական մասնակից Զարեհ Մելիք-Շահնազարովը:

Նրա իրազեկմամբ՝ «Արցախում ապստամբություն սկսելու ծրագիրն ու մարտավարության խնդիրները զինվորականները քննարկել են իրենց տանը կայացած խորհրդակցությունում: Նա այդ ժամանակ ծառայել է Արցախի բանակում, բայց հինգ օրով նրան բանակից հետ են կանչել, և իրենց տանը կայացած խորհրդակցության ժամանակ ինքն է գրի առել, սրբագրել խորհրդակցության մասնակիցների ելույթներն ու առաջարկությունները»[4]:

Խորհրդակցության մասնակիցները, ի թիվս մի շարք հարցերի, հիմնականում քննարկել են հույժ կարևոր հետևյալ խնդիրը. Արցախի ոռ շրջաններում պիտի սկսեին ապստամբությունը:

Զարեհի հավաստմամբ՝ Հայաստանի ներկայացուցիչ Արսեն Միքայելյանը պնդել է, որ ապստամբությունը հարկավոր է սկսել երեք՝ Խանքենդ, Ասկերան և Ղարաբաղ-Գանձակ շրջաններում, և մարտական ուժերը պիտի տեղաբաշխել հենց այդ բնակավայրերում: Նրա գնահատմամբ՝ «...Շուշիի վրա պետք չէ հար-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում. 1649, գ. 3, էջ 25-26:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս Мелик-Шахназаров З., Записки карабахского солдата, Москва, 1995, с. 52:

ձակում գործել, քանի որ այնտեղ թուրքերն իրենք կհանձնվեն»[1]:

Ի հակադրություն Ա. Միքայելյանի՝ Զարեհի հայրը՝ Սամսոն Մելիք-Շահնազարովը և Դալի Ղազարը պահանջել են նախ՝ սկսել Շուշիից, արագորեն գրավել Խանքենդը, ապա նոր շարժվել Ասկերան: Նրանց փաստարկմամբ՝ եթե Արցախի մարտական ուժերը կենտրոնանան Ա. Միքայելյանի մատնանշած ուղղություններում, այդ թվում նաև Ասկերանում, ապա Շուշին միանգամայն կմնա անպաշտպան, և դրանով հրաշալի հնարավորություն կընձեռվի հակառակորդին հեշտությամբ գրավելու ու ամրապնդվելու քաղաքում: Իսկ Շուշին իր աշխարհագրական դիրքով ունի անվիճելի գերիշխող դիրք ամբողջ Արցախի նկատմամբ:

Թեպետ խորհրդակցության մասնակիցները համառորեն փորձում են ապացուցել, որ առավել նպատակահարմար ու օգտակար կլինի, եթե Արցախի մարտական ուժերը գործեն իրենց առաջարկած մարտավարությամբ, սակայն ՀՀ կառավարության և ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Արսեն Միքայելյանը մնում է անդրդվելի:

Այս հարցում ավելի քան տարօրինակ է Ա. Միքայելյանի դիրքորոշումը. չէ՞ որ նա օրեր առաջ ընդունել էր Հովակ Ստեփանյանի ներկայացրած մարտավարության նախագիծն ու նրանում տեղ գտած՝ Շուշիի ազատագրմանը վերաբերող միջոցառումների պահանջները:

Անկարող լինելով կոտրել Արսեն Միքայելյանի համառությունը՝ Դալի Ղազարը պատասխանում է. «Ձեր հրամանը ես կկատարեմ և կվերցնեմ Ասկերանը, բայց իմացեք, որ Շուշին այդ ժամանակ կմնա անպաշտպան, և թուրքերը կգրավեն քաղաքը: Նրանց նույնիսկ հարկ չի լինի կռվով վերցնել քաղաքը: Դրա համար անգամ բավարար կլինի միայն հրդեհելը, հիշեցե՛ք իմ խոսքերը…»[2]:

Եթե հիմք ընդունենք Արսեն Միքայելյանի գործունեությունը բնութագրող սկզբնաղբյուրներում տեղ գտած տվյալները, ապա պիտի շեշտել, որ ավելի քան տարօրինակ է ու նաև պարսավելի ՀՀ կառավարության ներկայացուցչի պահվածքն ու գործելակերպը: Վճռվում էր Արցախի ճակատագիրը, և այդ բախտորոշ պահին ինչպե՞ս կարելի էր շրջանցել տեղացի գործիչների, անգամ Կենտրոնական ինքնապաշտպանական մարմնի անդամների կարծիքը ու միայնակ կայացնել կարևորագույն նշանակություն ունեցող վճիռներ, որոնք կարող էին պատճառ դառնալ անկանխատեսելի ու անշրջելի ողբերգության:

Անհասկանալի է, թե ինչու է ՀՀ կառավարության և ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչների որոշմամբ փոխվել ապստամբության օրը. այն պետք է սկսվեր ոչ թե փետրվարի 16-ին, այլ մարտի 23-ին, որի մասին սուրհանդակների միջոցով անմիջապես հաղորդում են Զանգեզուրին:

1920 թ. մարտի 23-ին ուժեղ կռիվներ են սկսվում Արցախի հարավային և արևելյան սահմանների ամբողջ երկարությամբ՝ Դիզակից մինչև Գյուլիստան, առանձնապես կատաղի մարտեր են ծավալվում Ասկերանի ճակատում: Ասկերանի ուղղությունը զուտ մարտավարական առումով կարևորագույն նշանակություն ուներ և՛ ադրբեջանական, և՛ հայկական կողմերի համար: Շուշիում գտնվում էր

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 53:

թուրքական զորանոցը, որտեղ տեղաբաշխված էին ավելի քան վեց հարյուր թուրք զինվորներ, բացի դրանից՝ թուրքական թաղամասը նույնպես զինված և կազմակերպված էր: Եթե քաղաքում բռնկվեին կռիվները, ապա որևէ կասկած լինել չէր կարող, որ թուրք զինված ամբոխը կմիանար կանոնավոր զորքին ու կհարձակվեր հայկական քաղաքամասի վրա: Կարելի է ասել, որ Շուշիում տնօրինում էր թուրքական կողմը: Դեպի քաղաք ձգվող հիմնական ուղին անցնում էր Ասկերանով: Գրավել Ասկերանը նշանակում էր փակել Շուշի տանող մայրուղին ու ավելի ապահովել ու ամրապնդել Շուշի հայերի պաշտպանությունը հնարավոր հարձակումից:

Ավելին, Ասկերանի աննկուն պաշտպանությունը կարող էր նախադրյալներ ստեղծեր Շուշի քաղաքի ուղղությամբ ազատագրական մարտեր մղելու համար:

Թուրք հրամանատարությունը, առանձնահատուկ կարևորություն տալով Ասկերանի ուղղությանը, Աղդամում կենտրոնացնում է զգալի քանակությամբ ադրբեջանական կանոնավոր ռազմական զորամասեր և բազմաթիվ թուրք ու քուրդ անկանոն ուժեր, այսպես կոչված՝ կամավորական խմբեր, որոնք կռիվները սկսվելու դեպքում 15 կմ ձգվող ճակատով՝ սկսած Վարազաբույնից մինչև Քարագլուխ, պիտի հարձակվեին Ասկերանի վրա[1]:

Կռիվները սկզբնական շրջանում Ասկերանի ճակատում, ինչպես արդեն նշվել է, հաջողությամբ էին զարգանում հայկական կողմի համար. հայ մարտական ուժերը Դալի Ղազարի հրամանատարությամբ մարտի 23-ին սրընթաց գրոհով գրավում են Ասկերանը: Թշնամին, մարտադաշտում թողնելով բազմաթիվ սպանված և վիրավոր զինվորներ ու զգալի քանակությամբ զենք և զինամթերք, դիմում է փախուստի[2]:

1920 թ. մարտի 23-ին, երբ Դալի Ղազարի գլխավորած մարտական ուժերը գրավում են Ասկերանը, այդ նույն ժամանակ հայկական մեկ այլ, թվակազմով ավելի թույլ մարտախմբեր փորձում են շրջապատել Շուշիի և Խանքենդի (ներկայիս Ստեփանակերտ, նախկինում՝ Վարարակն) թուրքական զորանոցները, որտեղ գտնվող զինվորները թվաքանակով զգալիորեն գերազանցում էին իրենց շրջապատելու փորձ անող հայ մարտիկներին[3]:

Արցախի մարտական ուժերի գործողությունների ուսումնասիրությունը միանշանակորեն ցույց է տալիս, որ դրանք, հատկապես Շուշիում, ձեռնարկվել են ոչ այնքան կազմակերպված ու փոխհամաձայնեցված և տեղիք տվել մեծ ողբերգության ու զոհերի: Նույն օրը, երբ հայ մարտական ուժերը մուտք են գործում Ասկերան, տեղի է ունենում Շուշիի ողբերգությունը:

Ե. Իշխանյանի հավաստմամբ՝ Շուշիի հայ բնակչության կոտորածը կատարվել է հայ մարտախմբերից մեկի չկշռադատված և անմիտ ինքնագործողության հետևանքով: Մարտի 22-ին երեսունհինգ զինյալներ Բագրատ Միքայելյանի գլխավորությամբ Երևանյան դռներից ներս են մտնում քաղաք և առանց շուշեցիներին տեղյակ պահելու՝ աննկատ մոտենում և շրջապատում են թուրք զինվորների զորանոցը, և համազարկեր տեղալով՝ պահանջում այնտեղ գտնվող ավելի քան 600 զինվորներին դուրս գալ ու հանձնվել:

[1] Տես Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 281:
[2] Ասկերանի կռիվների մասին տես Գևորգյան Հ., ՀՀ կառավարության մարտավարությունը Սյունիքում և Արցախում 1918-1920 թթ., Երևան, 2018, էջ 788-795:
[3] ՀԱԱ, Ֆ. 120, ց. 1, գ. 563, թ. 173:

Բնական է, որ 600 զինվորներ հենց այնպես, առանց դիմադրության չէին կատարելու իրենց ներկայացրած՝ հանձնվելու պահանջը: Այստեղ էլ կատարվում է ամենասարսափելին ու ամենաողբերգականը. վեց հարյուր թուրք զինվորներ արագորեն դուրս են գալիս զորանոցից, հրացանազարկ անում, փախուստի մատնում իրենց շրջապատողներին և հարձակվում Շուշիի հայ բնակչության վրա[1]:

Բագրատ Միքայելյանի գլխավորած մարտախմբի չկշռադատված, անմիտ գործողության հետևանքով թուրք-ջարդարարների զոհն են դառնում Շուշիի հազարավոր հայ բնակիչներ: Բացի հազարավոր մարդկային զոհերից՝ արցախահայությունն ունենում է հսկայական նյութական կորուստներ, որոնց ընդհանուր գումարը հասնում է հարյուրավոր միլիոն ռուբլու[2]:

Շուշիի կոտորածին իրենց կազմած վերոհիշյալ տեղեկագրում անդրադառնում են նաև գնդապետ Վեքիլովն ու գնդապետ Պրիմատովը՝ նշելով. «Մարտի 22-ին ապստամբները գրավել են Ասկերանի բերդը և շրջափակել են Խանքենդի ու Շուշիի մուսավաթական կայազորները:

Թաթարները պատասխանել են Շուշիի գլխովին կոտորածով (մարտի 22-ին սպանվել է 8000 մարդ) և Զանգեզուրի վրա ձեռնարկած ընդհանուր հարձակումով...»[3]:

Ըստ Արցախի ինքնապաշտպանական մարմնի անդամ, Դիզակի ճակատի հրամանատար Հովակ Ստեփանյանի վկայության՝ Շուշիի մեծ ողբերգության պատճառը Խանքենդում նախօրեին տեղի ունեցած դեպքերն էին: Խանքենդը, որտեղ գտնվել են զենքի պահեստներն ու թնդանոթները, համարվել է Արցախի ապստամբության կենտրոնական ճակատը, որի հրամանատարությունը հանձնարարված էր գնդապետ Մեսյանին: Նրա գլխավորությամբ մարտական ուժերը պիտի հարձակվեին Խանքենդի վրա, գրավեին այնտեղ ամբարված զենքն ու զինամթերքը, թնդանոթները, ապա առաջանային դեպի Շուշի և պաշտպանեին քաղաքը հակառակորդի հնարավոր հարձակումներից: Սակայն դեպքերը զարգանում են վատթարագույն ուղղվածությամբ: Այն մարտական խումբը, որը մտնում է Խանքենդ, ինչ-ինչ պատճառներով առաջնորդում է ոչ թե անձամբ գնդապետ Մեսյանը, այլ Ալեքսան դային ու սպա Լալայանը, որոնք հաջողությամբ գրավում են ավանը, բայց չեն կարողանում իրենց ձեռքում պահել: Ալեքսան դային անձնատուր եղած թուրք զինվորների վրա կրակ է բացում, իսկ թուրք զինվորներից մի քանիսը, զենքի դիմելով, սպանում են նրան, ապա և սպա Լալայանին: Առաջնորդների կորուստը վճռական ազդեցություն է գործում: Արցախցի մարտիկները, խուճապի մատնվելով, լքում են մարտադաշտն ու դիմում փախուստի[4]:

Հ. Ստեփանյանի գնահատմամբ՝ «...այս դժբախտութիւնը պատճառ է դառնում Շուշւա մեծ տրագետիային, քանի որ Խանքենտու առատ ռազմամթերքը մնում է թշնամու ձեռքում, ինչպես և դաշտային թնդանօթները... ամենամեծ անյաջողութիւնը հէնց այդտեղ պատահեց: Միւս կողմից՝ դրսից մեծ յաջողութեամբ Շուշի մտած վառակիր Ներսէս Ազբէկեանը փոխանակ անմիջապէս գրաւելու զօրանոցը,

[1] Տես Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 612:
[2] Տես նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427 (մաս 1), թ. 179:
[4] Տես ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 3, էջ 14, 14 բ:

բարձրանում է Ռիզին Բախչա կոչած վայրը և այնտեղից յիմարաբար համազարկեր տեղում քնած ասկեարների վրայ, որոնք զարթնելով դիմում են ինքնապաշտպանութեան, ապա և գնդացիրներից կրակ բաց անելով՝ զինուած հայերին փախուստի են մատնում: Գիւղացի առաջնորդները և զինուորները հեշտութեամբ նահանջում են՝ չմտածելով, թէ ինչ հանցաւոր քայլ են անում...»

«Շուշում, երբ թուրքերը հաստատ լուր են առնում Խանքենտու դեպքի մասին, իսկ քաղաք մտած հայ ոյժերի անշնորք գործողութիւնն էլ աւելի է երես տալիս նրանց, սկսում են կրակել տները, թալանել և կոտորել հայ բնակչութեանը: Հայ քաղաքացիների մեծամասնութիւնը ահաբեկւած թողնում է քաղաքը և նահանջող ոյժերի հետ մտնում գաւառ: Շուշում մնում են 3-4 հազար հայեր՝ Ռուբէն Շահնազարեանի յորտորներով: Դրանց մեծ մասը կոտորւում են և բռնաբարւում: Սպանւում է և թեմի առաջնորդը...»[1]:

Շուշիի կործանումը, կարելի է փաստել, ծանրագոյն ու անփոխարինելի կորուստ է Արցախի համար:

Գերասիմ Բալայանի և Զախար Յոլյանի կազմած տեղեկագրի գնահատմամբ՝ «Որպեսզի պարզ լինի, թէ Շուշի քաղաքի աւերումով ինչ վնաս է կրում տեղական հայութիւնը, բաւական է ասել, որ Շուշին հանդիսանում է միակ կուլտուր-կրթական կենտրոնը թէ Ղարաբաղի և թէ Զանգեզուրի հայութեան համար իր միջնակարգ դպրոցներով, գրադարաններով և հասարակական այլ և այլ կազմակերպութիւններով, ուր մօտ 100 տարւայ ընթացքում շատ սերունդներ էր կրթւել: Շուշին միակ շաղկապն էր 300.000 հայ բնակչութեան, և ներկայումս երբ չկայ այդ քաղաքը, չկայ ուրեմն նաև կրթական կենտրոն ահագին բնակչութեան համար, չկայ մարմնի սիրտը, չկայ Ղարաբաղին և Զանգեզուրին մտաւոր կեանքի մատակարարողը:

Ղարաբաղին հասցրած հարվածը խիստ անգութ էր և անփոխարինելի...»[2]:

Արցախում տեղի ունեցած դեպքերի ուսումնասիրությունն աներկբա հավաստում է, որ Արցախի ռազմական ուժերի հրամանատարությունը մարտական գործողությունների ընթացքը ծրագրելիս զուտ մարտավարական առումով թույլ էր տվել էական ու չկշռադատված սխալներ և վրիպումներ:

Այս առումով երիցս ճիշտ է և ուշագրավ Դրոյի տված գնահատականը:

«Դրոն,- գրում է Ա. Կիսիբեկյանը,- խիստ ջղայնացավ ու խիստ կարմրելով, ձեռքը մեկնելով դեպի Արսեն Հովհաննիսյանը (նկատի ունի ՀՀ կառավարության ներկայացուցիչ Արսեն Միքայելյանին.- Հ.Գ.)՝ ասաց.

Դուք բոլորդ՝ փոքրից մինչև մեծը, երեխաներ եք, ուրիշ ոչինչ: Ինչ եք մտածել, որ մտել եք Ասկերանի փոսի մեջ, և անուշադրության մատնելով՝ Շուշին թողել անտեր ու անտիրական: Միթե դուք այդքանը չեք հասկանում, որ Շուշին ում ձեռքին է գտնվում, նա էլ Ղարաբաղի տերն է...

Դուք ձեր բոլոր ուժերը պետք է կենտրոնացնեիք հենց Շուշվա վրա և այնտեղ մաքրեիք թշնամուց, որից հետո թշնամին Ղարաբաղի որևէ կետում չէր կարող կանգնել»[3]:

---

[1] Նույն տեղում:
[2] ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 1, էջ 3:
[3] Կիսիբեկյան Ա., նշվ., աշխ., էջ 503-504:

Զավեշտալի է, որ այն պահին, երբ այրվում է Շուշիի հայկական թաղամասը, կատարված դեպքերից անտեղյակ՝ Արսեն Միքայելյանը նամակով Խ. Մելքումյանին հայտնում է, թե «...յաջողութիւնները մեր կողմն են. Ասկերանը, Խանքենտին մեր ձեռքին է, և մեր թնդանօթների հրանոթից Շուշւա թուրքական թաղը այրւում է: Միւս օրը Սղնախի ճակատից եկողները պատմեցին, որ Շուշու հայկական թաղն է այրւում: Անմիջապէս մի սուրհանդակ եմ ուղարկում Սարուշէն և երկտողով հայտնում Ա. Միքայելեանին մանրամասն տեղեկութիւններ»[1]:

Շուշիի ողբերգական դեպքերի մասին պատմում է նաև Զարեհ Շահնազարովը, որը միակն է Շուշիի սպանդի փրկվածներից, որի վկայությունից պարզվում է, որ քաղաքում տեղի ունեցած կոտորածի ժամանակ, ճիշտ է, ոչ մեծ ընդգրկումով, բայց, այնուամենայնիվ, ինքնապաշտպանական մարտեր եղել են:

Ըստ Զարեհի պատմածի՝ 1920 թ. մարտի 13-ին իրենց գումարտակի հրամանատար, շտաբս - կապիտան Գարեգինը իրեն թույլատրում է զորամասից մեկնել տուն՝ Շուշի, և տեսակցել հիվանդ հորը՝ Սամսոն Շահնազարյանին: Մարտի 17-ին մահճակալին գամված Սամսոնը կանչում է որդուն՝ Զարեհին, և պատվիրում իր մոտ հրավիրել իրենց հարևանին՝ երաժիշտ Արտաշեսին՝ կլարնետով: Գալիս է երաժիշտը: Մահամերձ հայրը խնդրում է, որ նա նվագի «Դլե յաման»-ը: Արտաշեսը նվագում է, և այդ պահին երաժշտությունը լսելիս փոքր ինչ պայծառանում է հիվանդի դեմքը, բայց դա ընդամենը վայրկյաններ էին:

«Դլե յամանի» հնչյունները լսելիս Սամսոն Շահնազարյանը կնքում է իր մահկանացուն[2]:

Շուշիի կոտորածի նախօրեին Զարեհը փողոցում հանդիպում է թուրքական զորամասի զինվորներին ու նրանց առաջնորդին:

Զարեհի բնութագրմամբ՝ Խոսրով բեկ Սուլթանով, այդպես էին անվանում այդ սարսափելի դաժան մարդուն, հայերի երդվյալ թշնամուն, որը Անդրկովկասի մուսուլմանների առաջնորդներից մեկն էր: Սուլթանովը պատասխանատու է թուրք մուսուլմանների կողմից բռնազավթած Արցախի բնակավայրերում իրականացրած հայ բնակչության զանգվածային կոտորածների համար: Այդ նա էր, որի հրամանով կոտորեցին ծերերին, կանանց ու երեխաներին[3]:

Արցախի մարտական ուժերը գտնվում էին մարտական դիրքերում: Այն պահին, երբ Շուշիում սկսվում է հայ բնակչության կոտորածը, քաղաքում եղել են շատ քիչ թվով հայ զինվորներ:

Մարտի 23-ի առավոտյան ուժեղ հրացանաձգություն է սկսվում քաղաքի ամբողջ երկու սահմաններում՝ հայկական և թուրքական: Միաժամանակ բռնկվում է հրդեհը: Թուրքերը, տեսնելով, որ հայերը ցույց չեն տալիս կազմակերպված դիմադրություն, սկսում են հրդեհել տները, իսկ քամին, ի դժբախտություն հայ բնակչության, այդ պահին փչում էր հայկական քաղաքամասի ուղղությամբ: Չնայած հայերի բնակարանները քարաշեն էին, բայց կրակի բոցերով արագորեն բռնկվում են տների փայտյա ձեղնահարկերը, ու հրդեհը տարածվում է հայկական

[1] Նույն տեղում,թծ. 1649, գ. 3, էջ 30:
[2] Տե՛ս Заре-Мелик Шахназаров, նշվ. աշխ., էջ 40:
[3] Նույն տեղում, էջ 41:

ողջ թաղամասով: Հրդեհի բոցերից ազատվելու համար բնակիչները դուրս են գալիս տներից ու թափվում փողոցները:

Ճիշտ է, քաղաքում հայ զինվորների քանակը սահմանափակ էր, բայց կային 4-6 մարտիկներից բաղկացած մի քանի մարտական խմբեր, որոնք կարող էին դիմել կազմակերպված ինքնապաշտպանության, բայց, դժբախտաբար, քաղաքում չեն եղել փորձառու զինվորականներ, որոնք միավորեին ու առաջնորդեին մարտական խմբերն ու կազմակերպեին բնակչության պաշտպանությունը:Այդ պատճառով մարտախմբերը դուրս են եկել տներից ու գործել են միմյանցից անջատ, չփոխկապակցված ու չհամաձայնեցված:

Այս խոսուն փաստն ավելի քան բավարար է պնդելու, որ Արցախի ապստամբության կազմակերպիչների տեսադաշտից դուրս է մնացել ամենակարևորը՝ ողջ Արցախի համար ռազմավարական նշանակություն ունեցող կենտրոնի՝ Շուշիի ճակատագիրն ու քաղաքի հայ բնակչության պաշտպանության ու անվտանգության ապահովման խնդիրը:

Զարեհը 6 մարտիկներից կազմված խմբի կազմում աննկատ դուրս է գալիս այրվող տնից ու արագ տեղաշարժերով և օգտվելով հրդեհի հետևանքով առաջացած ծխածածկույթից՝ կարողանում է մի դիրքից տեղափոխվել մեկ այլ դիրք ու առաջ շարժվելու ընթացքում դիպուկ կրակոցներով գնդակահարում իրենց հանդիպած թուրք զինվորներին, որոնք այդ պահին տարված էին ոչ միայն խուճապի ու սարսափի մատնված հայերի գնդակահարությամբ, այլև ավարառությամբ, հայի ունեցվածքի թալանով[1]:

Բարեբախտաբար, մարտախմբի մարտիկները զինված էին հեռահար մոսիններով և ունեցել են մեծ քանակությամբ զինամթերք, որը նրանց հնարավորություն էր ընձեռում անընդմեջ կրակ տեղալով իրենց հանդիպած հակառակորդի վրա՝ առաջ շարժվել:

Նույն օրը՝ երեկոյան, անընդմեջ կռիվներ մղելով՝ մարտախումբը հասնում է քաղաքի մեծահարուստներից մեկի տանը, որտեղ հանդիպում են այնտեղ հավաքված տարբեր սեռի ու տարիքի 500-600 փախստական հայերի, որոնց այդ տեղում կանգնեցրել էր քաղաքի նախկին քաղաքագլուխ Գիգի աղան՝ խոստանալով փրկել նրանց կյանքն ու ապահովել անվտանգությունը:

Զարեհի խմբի անդամները դիմել են փախստականներին ու հորդորել, որ չլսեն ու չհավատան Գիգի աղայի տված կեղծ խոստումներին: Գիգի աղան իր հերթին դիմում է փախստականներին և գլխից հանելով փափախը՝ հարվածում է գետնին ու հավատացնում, որ նրանց հետ ոչ մի վատ բան չի պատահելու, եթե մնան քաղաքում, այլապես նրանք կենթարկվեն անխուսափելի կոտորածի: Փախստականները երկընտրանքի մեջ էին՝ ինչ պիտի անեին, ու՞մ լսեին:

«Այդժամ մեր ընկերները,- գրում է Զարեհը,- դիմում են երիտասարդությանը. Տղաներ, ով ուզում է մահից փրկվել, եկեք մեզ հետ»: Իսկ ես ասացի նախկին քաղաքագլխին. «Գիգի աղա, դուք կործանել եք ձեր որդուն, ինքդ խուսափել ես դաշնակցական գնդակից, իսկ այժմ ուզում եք կործանել հարյուրավոր անմեղ մարդկանց: Դու ինքդ կենդանի կմնաս, բայց նրանք ոչխարի պես կմորթվեն: Եվ

[1] Նույն տեղում:

ավելացրի բարձրաձայն, որպեսզի բոլորը լսեն. «Ես ձեզ եմ հարցնում, եղե՞լ է այնպես, որ ինչ որ հայ, որը ընկել է թուրքի կամ մուսուլմանի ձեռքը, փրկվել է նրանց յաթաղանից»[1]:

Դժբախտաբար, հավաքվածներից քչերն են հետևել Զարեհի խմբին ու փրկվել, իսկ մեծ մասը հավատացել է Գիգի աղայի խոստումներին ու մնացել քաղաքում: Հետագայում պարզվում է, որ նրանցից շատ քչերին է հաջողվել փրկվել, իսկ մեծամասնությանը կոտորել են ոչ միայն զինվորները, այլև քաղաքի թուրք բնակիչները, որոնք մեծ հաճույքով շրջում էին հայկական քաղաքամասում և այրված տներից ու մոխրակույտերի մեջից հավաքում հրդեհի ճիրաններից փրկված հայի ունեցվածքը:

«Խորտակված տրամադրությամբ,- Շուշիի ողբերգության պատմությունը եզրափակում է Զարեհը,- մենք իջանք Շուշիի մերձակայքում գտնվող հայկական գյուղի ուղղությամբ: Քաղաքը քանդված և հրդեհված՝ փռված էր մեր ոտքերի տակ: Մի քանի թաղամասեր դեռևս այրվում էին, և հսկայական հրդեհի ծուխը մի քանի կիլոմետր տրամագծով ծածկել էր քաղաքի շրջակայքը:

Ժամանակ առ ժամանակ ներքևում լսվում էին կրակոցներ և անհասկանալի աղմուկ...»[2]:

Ինչպիսի՞ն է Հայաստանի հանրապետության կառավարության գնահատականը Շուշիի ողբերգության և ընդհանրապես Արցախում տեղի ունեցող դեպքերի նկատմամբ:

ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանի գնահատմամբ՝ մարտի 22-ին Շուշիում բռնկված ապստամբության սկզբնական շրջանում հաջողությունը ուղեկցել է հայկական կողմին, ու այդ պատճառով Ադրբեջանի վարչապետ, արտաքին գործերի նախարարը բողոքի նամակ է հղում ՀՀ կառավարությանը: Ադրբեջանի ներկայացրած բողոքին Ալ. Խատիսյանը տվել է խուսափողական պատասխան՝ հայտնելով, որ իր գլխավորած կառավարությունը որևէ մասնակցություն չունի ապստամբության բռնկման գործում:

Քանի որ ապստամբությունը Արցախում զարգանում է արցախահայության համար վատթարագույն ուղղվածությամբ, հետևաբար փոխվում են նաև ՀՀ կառավարության դիրքորոշումն ու կեցվածքը:

«...Ղարաբաղը,- շարունակում է Հայաստանի վարչապետ Ալ. Խատիսյանը, կապրէր սարսափելի օրեր: Ապստամբութիւնը ձախողվեցաւ, սկսան ճնշումները: Ապրիլի 6-ին գերագոյն կօմիսարներ՝ տը Մարտէկլ, Գաբա ու Ուորտրոպ (ֆրանսիական, իտալական և անգլիական) ուղարկեցին յանձնաժողով Շուշի և հրաւիրեցին խաղաղութեան խորհրդաժողով Թիֆլիսի մէջ:

... 13-ին ստորագրուեցաւ արձանագրութիւն բոլոր վիճելի հարցերը խաղաղութեամբ լուծելու համաձայնութեան մասին»[3]:

Ս. Վրացյանի հավաստմամբ՝ Արցախում բռնկված ապստամբությունը և Շուշիի հայ բնակչության կոտորածի լուրը ցնցող տպավորություն է գործել ոչ միայն

[1] Նույն տեղում, էջ 48:
[2] Նույն տեղում, էջ 51:
[3] Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 198:

Հայաստանում, այլև Թիֆլիսում, ուր գտնվում էին հաղթող տերությունների դիվանագիտական ներկայացուցչությունները:

«Մարտի 27-ին,- գրում է Ս. Վրացյանը,- Ղարաբաղի հայրենակցական միութեան ներկայացուցիչներ Գ. Բալայեանը և Լէօն մի յուշագիր ներկայացրեցին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի ու Յունաստանի ներկայացուցիչներին, գնդ. Հասկելին, Հայաստանի վարչապետին և Վրաստանի կառավարութեան՝ խնդրելով նրանց միջնորդութիւնը Ղարաբաղի հարցում: Նրանք պահանջում էին՝ անմիջապէս հեռացնել ադրբէջանական զօրամասերը, բանալ ճանապարհները և յարգել օգոստ. 22 ի համաձայնութիւնը»[1]: Նույն օրը Արցախում բռնկված կռիվները դադարեցնելու խնդրանքով դաշնակիցների ներկայացուցիչների միջնորդությանն է դիմում նաև Վրաստանի վարչապետ Ժորդանիան:

Ամփոփում

Շուշիի 1920 թ. ջարդերը և հայ բնակչության ինքնապաշտպանության փորձերը

Համլետ Գևորգյան

1920 թ. գարնանը Ադրբեջանի իշխանությունների ձեռնարկած քայլերն ու Զանգեզուրին և Արցախին սպառնացող մարտահրավերները հրամայաբար թելադրում էին ՀՀ կառավարությանը, որ անհրաժեշտ է ձերբազատվել այդ հարցում դրսևորած հանգիստ ու սպասողական դիրքից և գործել առավել վճռական մարտավարությամբ, մանավանդ քաջատեղյակ էր Զանգեզուրն ու Արցախը զենքի ուժով զավթելու նպատակով Ադրբեջանի տենդագին ռազմական նախապատրաստությանը: Ադրբեջանական զինված ուժերն Արցախում և մասնավորապես Շուշիում ձեռնարկած գործողություններին զուգընթաց՝ հերթական անգամ հարձակում են գործել նաև Զանգեզուրի վրա: Եթե Ադրբեջանին հաջողվեր այդ հարձակմամբ Արցախը կտրել Զանգեզուրից, ապա Արցախը լիովին կհայտնվեր շրջափակման մեջ, և այդ դեպքում ադրբեջանական կանոնավոր զորամասերն ու նրանց զորակցող թուրք և քուրդ հրոսակախմբերը մեծ հնարավորություն էին ձեռք բերում առավել դյուրին միջոցների գործադրմամբ հաղթահարելու արցախահայության ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը:

Արցախի մարտական ուժերը գտնվում էին մարտական դիրքերում: Այն պահին, երբ Շուշիում սկսվել է հայ բնակչության կոտորածը, քաղաքում եղել են շատ քիչ թվով հայ զինվորներ: Թեև քաղաքում հայ զինվորների քանակը սահմանափակ էր, բայց կային 4-6 մարտիկներից բաղկացած մի քանի մարտական խմբեր, որոնք կարող էին դիմել կազմակերպված ինքնապաշտպանության, բայց, դժբախտաբար, քաղաքում չեն եղել փորձառու զինվորականներ, որոնք միավորեին ու առաջնորդեին մարտական խմբերն ու կազմակերպեին բնակչության պաշտպանությունը: Այդ պատճառով մարտախմբերը դուրս են եկել տներից ու գործել են միմյանցից անջատ, չփոխկապակցված ու չհամաձայնեցված:

Արցախում սաստկացած ռազմական գործողությունների և Շուշիի հայ բնակչության

[1] Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 374:

կոտորածի լուրը ցնցող տպավորություն է գործել ոչ միայն Հայաստանում, այլև Թիֆլիսում, ուր գտնվում էին հաղթող տերությունների դիվանագիտական ներկայացուցչությունները:

Հիմնաբառեր. *Հայաստան, Արցախ, Զանգեզուր, Շուշի, Ադրբեջան, թուրք զավթիչներ, կոտորածներ, ինքնապաշտպանության ուժեր, ռազմական գործողություններ, կառավարություն*

Резюме

Погромы 1920 г. в Шуши и попытки самообороны армянского населения

Гамлет Геворгян

Шаги, предпринятые азербайджанскими властями весной 1920 года, и вызовы, угрожающие Арцаху, диктовали правительству Республики Армения избавиться от спокойного и выжидающего положения в этом вопросе и предпринять более решительную тактику, тем более, что были особенно хорошо осведомлены о лихорадочной подготовке Азербайджана к захвату силой оружия Зангезура и Арцаха. Параллельно с операциями в Арцахе, в частности в Шуши, азербайджанские вооруженные силы вновь атаковали Зангезур. Если бы Азербайджану удалось отрезать Арцах от Зангезура этим нападением, Арцах оказался бы полностью в осаде, и в этом случае регулярные азербайджанские воинские части и поддерживающие их турецко-курдские бандформирования имели бы прекрасную возможность преодолеть сопротивление сил самообороны арцахских армян.

Арцахские вооруженные силы находились на боевых позициях. Во время расправы над армянским населением в Шуши в городе было очень мало армянских солдат. Количество армянских солдат в городе было ограничено, но было несколько боевых групп по 4-6 бойцов, которые могли прибегнуть к организованной самообороне, но, к сожалению, в городе не было опытных солдат, которые могли бы объединиться и возглавить боевые группы и организовать защиту населения. Поэтому боевые группы покинули свои дома и действовали раздельно, разрозненно и нескоординированно.

Известие об эскалации боевых действий в Арцахе, резне армянского населения Шуши произвело шокирующее впечатление не только на Армению, но и на Тбилиси, где располагались дипломатические миссии держав-победительниц.

Ключевые слова: *Армения, Арцах, Зангезур, Шуши, Азербайджан, турецкие захватчики, массовые убийства, силы самообороны, боевые действия, правительство*

Abstract

The Massacres of 1920 in Shushi and the Attempts of Self–defense of the Armenian Population

Hamlet Gevorgyan

The steps taken by the Azerbaijani authorities in the spring of 1920 and the challenges threatening Zangezur and Artsakh imperatively dictated to the Armenian government that it was necessary to get rid of the calm and expectant attitude expressed with regard to this issue and act with more decisive strategy, especially since the government was well aware of Azerbaijan's feverish military preparations to seize Zangezur and Artsakh by force of arms. In parallel with the operations in Artsakh, particularly in Shushi, the Azerbaijani armed forces again attacked Zangezur. If Azerbaijan managed to cut off Artsakh from Zangezur with this attack, Artsakh would be completely under siege, and in this case the regular Azerbaijani military units and the Turkish-Kurdish bandit formations supporting them would have a great opportunity to overcome the resistance of the Artsakh-Armenian self-defense forces.

The Artsakh military forces were in combat positions. At the moment when the massacre of the Armenian population in Shushi began, there were very few Armenian soldiers in the city. The number of Armenian soldiers in the city was limited, but there were several battle groups of 4-6 fighters who could resort to organized self-defense, but unfortunately there were no experienced soldiers in the city who could unite and lead the fighting groups and organize the protection of the population. That is why the fighting groups came out of their homes and acted separately, scattered and uncoordinated.

The news of the escalation of hostilities in Artsakh, the massacre of the

Armenian population of Shushi made a shocking impression not only in Armenia, but also in Tbilisi, where the diplomatic missions of the victorious powers were located.

Keywords: *Armenia, Artsakh, Zangezur, Shushi, Azerbaijan, Turkish invaders, massacres, self-defense forces, military operations, government*

ՀԱՄԼԵՏ ՄԱԼԽԱՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱ Պատմության ինստիտուտի
գլխավոր գիտաշխատող,
նորագույն պատմության բաժնի վարիչ
Հոդվածը ներկայացվել է 12.03.2020,
գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 20.04.2021

ՇՈՒՇԻԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ (1919 Թ. ՀՈՒՆԻՍ ԵՎ 1920 Թ. ՄԱՐՏ)

«Հայոց արևելից կողմանց»՝ Արցախ աշխարհի բազմադարյան պատմության առավել ծանր ու դրամատիկ իրադարձություններով լի տարիները 1918-1920 թվականներն էին: Հենց այդ տարիներին Լեռնային Ղարաբաղը դարձավ «վիճելի տարածք»:

1918 թ. մայիսի վերջերին Անդրկովկասի երեք հանրապետությունների հռչակումից հետո Ադրբեջանի նորաթուխ մուսավաթական կառավարությունը հավակնում էր բռնազավթել պատմական Հայաստանի մի շարք տարածքներ, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղը: Ելնելով իրենց ռազմավարական նպատակներից՝ Ադրբեջանի նվաճողական ծրագրերին բացահայտ կերպով օգնում էին Օսմանյան Թուրքիան, որոշ ժամանակ անց՝ Անգլիան, իսկ ավելի ուշ՝ Խորհրդային Ռուսաստանը, ինչը մեծապես բարդ ու դժվարին վիճակ էր ստեղծում Հայաստանի համար:

1918 թ. աշնանը թուրքական բանակի հեռանալուց հետո երկրամասում հաստատվեց անգլիացիների գերակայությունը: Բրիտանական զինվորական հրամանատարության Անդրկովկաս մուտք գործելուց հետո արցախահայության համար սկսվեցին ավելի դառը ժամանակները: Անդրկովկասում խաղաղություն հաստատելու ձգտման քողի տակ երկրամասում Անգլիան աշխարհաքաղաքական շահերը ապահովելու խնդիր ուներ: Մի կողմից՝ Բաքվի «սև ոսկու» շլացնող ցոլքը, մյուս կողմից՝ Ադրբեջանին որպես պատվար ընդդեմ Ռուսաստանի օգտագործելու հավակնությունը անգլիացիներին դարձրին ադրբեջանցիների դաշնակիցը: Բաքվում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնին, այնուհետև՝ նրան փոխարինած գնդապետ Շատելվորդին թև ու թիկունք դարձրած Արևելյան Հայաստանի Շուշու, Զանգեզուրի, Ջեբրայիլի և Ջիվանշիրի գավառների գեներալ-նահան-

գապետ հռչակված (Ադրբեջանի կառավարության 1919 թ. հունվարի 15-ի որոշումով) Խոսրով բեկ Սուլթանովը, դիվանագիտական ճնշումներով, սպառնալիքներով, զինված ուժ գործադրելով, ցանկանում էր արցախահայությունից կորզել Ադրբեջանին հպատակվելու համաձայնություն: Արցախցիների պատասխանը անփոփոխ էր ու հստակ. «Ո՛չ Ադրբեջանի իշխանությանը, միաժամանակ կողմ՝ հարևան թուրք ժողովրդի հետ խաղաղ բարեկամական հարաբերություն պահպանելուն»:

Որքան ուժեղանում էին Ադրբեջանի իշխանությունների ճնշումներն ու բռնությունները, այնքան ավելի անկոտրում էր դառնում Արցախի հայության անկախ ու ազատ ապրելու և իր պատմությունն ինքնուրույն կերտելու կորովն ու կամքը: Չկարողանալով հաշտվել այս իրողության հետ՝ Ադրբեջանը շարունակում էր բոլոր միջոցներով սպառնալ գավառի հայության ֆիզիկական գոյությանը: Ադրբեջանի կառավարությունը մշտապես անուշադրության էր մատնում Հայաստանի հանրապետության իշխանությունների պարբերաբար արված նախազգուշացումներն ու հորդորները՝ դադարեցնելու ոտնձգությունները Հայաստանի տարածքի մաս կազմող Լեռնային Ղարաբաղի նկատմամբ:

Ադրբեջանը փորձեց նախահարձակ լինել և արագորեն ընկճել Լեռնային Ղարաբաղում հայության դիմադրությունը: Տեղյակ լինելով իրերի դրությանը՝ Ղարաբաղում ԱՄՆ-ի զինվորական հրամանատարության ներկայացուցիչը վկայաբերում է, որ մայիս ամսից Ադրբեջանի կառավարության, ի դեմս Սուլթանովի, գործունեությունը Ղարաբաղի հայերի նկատմամբ կտրուկ ագրեսիվ բնույթ ստացավ[1]: Բավական է նշել, որ ապրիլ-մայիս ամիսներին ադրբեջանական կանոնավոր զորամասերը և քրդական զինված խմբավորումներն ավելի քան 40 հարձակում կատարեցին հայկական բնակավայրերի վրա[2]: Ադրբեջանի հաճախակի դարձած զինված հարձակումները սպառնում էին Ղարաբաղի հայության ֆիզիկական գոյությանը:

Ստեղծված կացությունն օրինաչափորեն դնում էր տեղի հայությանը զինելու և ինքնապաշտպանության պատրաստվելու խնդիրը: Սակայն մայոր Գիպոնի գլխավորությամբ անգլիական 5 հոգանոց ներկայացուցչության Շուշի ժամանելուց հետո (1918 թ. նոյեմբերի սկզբին) բնակչության զգոնությունը և ինքնապաշտպանության նախապատրաստման գործը չափազանց թուլացավ: Արցախի զինված կազմավորումների մի մասը ցրվեց: Ժողովուրդն իր հույսը դրեց ներկայացուցչության վրա: Այս իրողության և հնարավոր հետևանքների մասին խոսվում է Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահի՝ Բաքվի Հայոց ազգային խորհրդին ուղղած նամակում. «Անգլիական ներկայացուցչության այստեղ ժամանելուց հետո, մեր ամբողջ հույսը դնելով նրա վրա, դիմել ենք խաղաղ կյանքի՝ հաստատ համոզված լինելով, որ մեր կյանքի դեմ ոչ մի դավ չի նյութվելու»: Այնուհետև շարունակում է. «Ղարաբաղցիները, ճշգրտությամբ կատարելով անգլիական ներկայացուցչության առաջարկությունը, Սուլթանովի գործողություններին հակակշիռ ոչինչ չձեռնարկեցին: Այդպես վարվելով չարաչար պիտի պատժվենք

[1] ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 64:
[2] Նույն տեղում, թ. 1:

ու հիմնահատակ կործանվենք»[1],- տագնապում է նամակագիրը: Ղարաբաղի հայության զանգվածային կոտորածի սկիզբը դրվեց 1919 թ. մայիսի 20-ից: Այդ օրը թուրքերը արգելեցին սննդամթերք անցկացնել հայկական շրջաններ: Սննդամթերք անցկացնելու յուրաքանչյուր փորձ ավարտվում էր ճանապարհին թուրքերի կողմից թալանով ու սպանություններով[2]: Ղարաբաղում իրադրությունը չափազանց լարվեց մեկ շաբաթ անց (մայիսի 27-ին)՝ քոչի սար բարձրանալու ժամանակ: Այդ օրը քոչվորները զինված խմբերի ուղեկցությամբ բռնեցին սար տանող ճանապարհը: Ժողովուրդը սպառնաց, որ եթե Ադրբեջանը շարունակի տնտեսական բոյկոտը, Ղարաբաղը ստիպված կլինի փակել քոչվորների ճանապարհը: Իր նպատակին հասնելու համար Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի դեմ հանեց լրացուցիչ կանոնավոր զորամասեր և հազարավոր անկանոն քուրդ ելուզակներ, ոչ պաշտոնական տվյալներով՝ շուրջ 10 հազար մարդ: Շուտով Լեռնային Ղարաբաղը հայտնվեց օղակի մեջ:

Սուլթանովը մտադիր էր առաջին հարվածը հասցնել Արցախի ազատագրության շարժման կենտրոն Շուշի քաղաքին:

Հունիսի սկզբներին գեներալ նահանգապետը կարգադրեց Շուշիի հայկական մասից գանձարանը և հեռագրատունը տեղափոխել քաղաքի թուրքական մաս: Դա լրջորեն անհանգստացրեց քաղաքի հայ բնակչությանը: Բանն այն է, որ այդ հիմնարկություններում աշխատողների մեծ մասը կանայք էին, և նրանց համար դժվար էր թուրքական մասում աշխատելը: Բոլոր արժեթղթերի 95 %-ը (600000 ռուբլի) պատկանում էր հայերին, ինչպես և 3000000 ռուբլի խնայողական դրամարկղի գումարը[3]: Հայերը դիմեցին անգլիական ներկայացուցչությանը՝ այդ տեղափոխությունը արգելելու խնդրանքով: Ներկայացուցչությունը հավաստիացրեց, որ տեղափոխությունը չի կատարվի: Սակայն հունիսի 2-ին Սուլթանովը, առանց որևէ նախազգուշացման, գանձատունը և հեռագրատունը քաղաքի հայկական թաղամասից փոխադրեց թուրքական թաղամաս: Հունիսի 2-ին նա Շուշիի թուրքական թաղամաս մտցրեց քրդական 3 հազարանոց ավազակախումբ, ինչպես նաև 1500 զինված թաթարական քոչվորներ: Հունիսի 2-ին և 3-ին Շուշիի հայկական թաղամասից բոլոր թաթարները ծածուկ հեռացան թաթարական թաղամաս[4]: Հունիսի 3-ին թուրքական զորամասերը փակեցին Շուշիից դեպի Գորիս տանող խճուղին[5]: Համակողմանի նախապատրաստությունից հետո՝ հունիսի 4-ին, առավոտյան ժամը 10-ին, Սուլթանովի հրամանով սկսվեց Շուշիի հայկական թաղամասի գնդակոծումը: Այդ օրը քաղաքի թուրքական թաղամաս աշխատանքի մեկնած 50 հայերից վերադառնում են 7-ը, իսկ մնացածներին քրդերը գազանաբար հոշոտում են[6]: Շուշիի հայկական թաղամասի գնդակոծումը տևեց շուրջ 16 ժամ: Մուսավաթ զինվորները և քրդական բանդան մտան քաղաքի հայկական թաղամաս և սոսկալի ավերածություններ կատարեցին[7]: Երկու կողմերից զոհվեց

[1] Նույն տեղում, ֆ. 223, ց. 1, գ. 74, թ. 45:
[2] Нагорный Карабах в 1918-1923 гг., 1992, 264-265. 52
[3] Արամայիս, Ղարաբաղի տագնապը, 1993, 26:
[4] ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 64:
[5] Նույն տեղում:
[6] «Ժողովուրդ», 22 հունիսի 1919 թ.:
[7] ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 64:

20 մարդ: Այդ օրերին քաղաքի թուրքական մասում մորթվեց 40 հայ[1]: Սուլթանովի հրոսակախմբերն իրենց «բարձրության» վրա գտնվեցին Ղայբալիշեն գյուղը կործանելիս: Ղայբալիշենը գտնվում էր Շուշիի հարևանությամբ: Գյուղի վրա հարձակումը սկսվեց հունիս 5-ին՝ գիշերվա ժամը 10-ին: Թուրքերը երեք կողմից աքցանի մեջ առան գյուղը և փակեցին այնտեղից դուրս գալու բոլոր ճանապարհները: Հրոսակները, մտնելով գյուղ, սոսկալի ոճրագործություն կատարեցին: 70 տուն ունեցող գյուղը մեկ օրվա ընթացքում վերածվեց մոխրակույտի, իսկ հարյուրավոր մարդիկ՝ մեծ մասամբ երեխաներ, կանայք ու ծերեր, սրի քաշվեցին: Ըստ Ղարաբաղի դեպքերը քննող պառլամենտական հանձնաժողովի կազմած արձանագրության, Ղայբալիշենի կործանման ժամանակ մորթվել է 500 մարդ: Եկեղեցին քարուքանդ է արվել: Տների ավերակներում կիսախանձ դիակներ են: Գետինը ծածկված է երեխաների դիակներով: Ղայբալիշենի մոտ գտնվող մատուռում մորթվել էր 50 հայ[2]: Ըստ այլ աղբյուրների՝ գյուղի 700 բնակչից փրկվել էին 100-180 մարդ[3]: Այս սահմռկեցուցիչ իրողությունը հաստատող փաստերով է հագեցած դեպքերի ու իրադարձությունների ականատեսի այս վկայաբերումը. «Ղայբալուշենի տները վառվում էին մեկը մյուսի հետևից, և ծուխը թանձրացել էր լեռան լանջին: Պարզ էր, որ «բարի հարևանները» անցնում էին տնետուն ու մի առ մի վառում՝ գյուղի հետքը կորցնելու մտադրությամբ: Բայց երկինքը խղճաց, սկսվեց մի հորդ անձրև ու բոցավառվող տների կրակը հանգցրեց, որից հետո տիրեց մի սպանող, գերեզմանային լռություն»[4]:

Սուլթանովը Ղայբալիշենի ավերումը կազմակերպել էր բրիտանական զինվորական սպայակույտի համաձայնությամբ: Ըստ ականատեսների՝ այն պահին, երբ թուրք-քրդական զորքը հոշոտում էր խաղաղ բնակչությանը, բրիտանական ներկայացուցչության անդամները Սուլթանովի տան պատուհանից հրճվանքով դիտում էին այդ «տեսարանը»[5]:

Մուսավաթական ու քրդական բանդաները, նրանց հետ թաթարական խուժանը նոր արյունահեղություններ կազմակերպեցին նաև քաղաքամերձ Կրկժան, Փահլուր, Ջամիլու գյուղերում՝ կոտորելով հարյուրավոր մարդկանց: Հունիսյան կոտորածների ժամանակ Ղարաբաղում զոհվեց 600-620 մարդ[6]:

Հունիսի 7-ին թշնամին հարձակվեց Քարինտակ ու Դաշուշեն գյուղերի վրա և հանդիպելով բնակչության լուրջ դիմադրությանը՝ նահանջեց[7]: Մուսավաթական Ադրբեջանի կառավարող շրջաններում ու բրիտանական հրամանատարության սպայակույտում հունիսյան դեպքերը մեծ իրարանցում առաջ բերեցին:

Գեներալ-նահանգապետ Սուլթանովը պաշտոնանկ արվեց, անգլիական հրամանատարությունը ևս հետ կանչեց իր ներկայացուցիչ Մոնկ Միզոնին[8]: Արցախյան եղեռնագործությունը խորապես ցնցեց Կովկասի ողջ հայությանը: Ամենուր տեղի

---

[1] «Պահակ», 14 հունիսի 1919 թ.:
[2] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թթ. 168-172:
[3] Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 23, թ. 387, գ. 76, թ. 12:
[4] Արամայիս, 64:
[5] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 92:
[6] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 1, թ. 64, գ. 309, թթ. 139, 152:
[7] Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 557, թ. 26:
[8] «Արձագանք», 16 հունիսի 1919 թ.:

ունեցան բողոքի միտինգներ: Այսպես, հունիսի 22-ին Թիֆլիսում կայացավ 30 հազարանոց միտինգ: Մասնակիցների թվում էին նաև թիֆլիսահայ մտավորականության աչքի ընկնող ներկայացուցիչներ Հովի. Թումանյանը, Ալ. Սպենդիարյանը, Մելիք-Հովսեփյանը և ուրիշներ: Միտինգի մասնակիցների անունից ընդունվեց դիմում՝ ուղղված դաշնակից երկրների կառավարություններին, որտեղ մասնավորապես պահանջվում էր դատի տալ կոտորածի հեղինակներին, Ղարաբաղից անհապաղ հեռացնել Ադրբեջանի կողմից նշանակված «իշխանությանը», որին չի ճանաչել և չի ճանաչում հայկական Ղարաբաղը, և կցել մայր երկրին՝ Հայաստանին[1]:

Հունիսի 16-ին Երևանում կայացած միտինգի մասնակիցների՝ Հայաստանի հանրապետության կառավարությանը հասցեագրված դիմումում մասնավորապես ասված է, որ Ադրբեջանի զորքերը՝ Սուլթանովի գլխավորությամբ, ավերել են հայկական 6 գյուղ, սպանել են 600 մարդ և սպառնում են շարունակել կոտորածը, արյան մեջ խեղդել Ղարաբաղը: Մենք համոզված ենք, որ սա շարունակությունն է էնվերների ու թալեաթների արյունոտ քաղաքականության: Բազմամարդ միտինգներ տեղի ունեցան նաև Ալեքսանդրապոլում, Կարսում, Եկատերինոդարում և Անդրկովկասի հայաշատ վայրերում[2]:

Հունիսյան կոտորածների կապակցությամբ իր ձայնը հնչեցրեց նաև Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը: Թիֆլիսում գտնվող անգլիական գեներալ Կորիին ուղղված հեռագրում վեհափառ հայրապետը խնդրում էր պաշտպան կանգնել Ղարաբաղի հայությանը, որը գտնվում էր նոր ջարդերի վտանգի առաջ[3]: Հայաստանի հանրապետության կառավարությունն Ադրբեջանի կառավարությանն ուղղված հեռագրով ամենավճռական կերպով բողոքեց Ղարաբաղի նկատմամբ գործադրված բռնի և արյունալի գործողությունների դեմ և վերստին հայտարարեց, որ ինքը չի ճանաչում Սուլթանովի «գեներալ-նահանգապետությունը» հայկական Ղարաբաղի սահմաններում[4]:

Արխիվային փաստաթղթերի ու նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ղարաբաղի ջարդերը նախապես ծրագրվել ու կազմակերպվել էին Ադրբեջանի մուսավաթական կառավարության և նրա դրածո Սուլթանովի կողմից:

Անգլիական հրամանատարության կողմից Շուշի մեկնած գնդապետ Գլատերբերգը, ծանոթանալով կատարված արյունալի անցքերին, Շատելվորդին ներկայացրած զեկուցագրերում համարձակություն ունեցավ խոստովանել ճշմարտությունը: Գլատերբերգը փաստերի հիման վրա ցույց է տալիս, որ ցանկության դեպքում Սուլթանովը կարող էր կանխել այդ ողբերգությունը: Վերջում նա պահանջում է կատարած հանցավոր քայլերի համար դատի տալ գեներալ-նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովին[5]: Այդ կապակցությամբ Սուլթանովին գլխավոր հանցագործ է ճանաչում նաև տեղում հարցը ճշտելու նպատակով Ղարաբաղ մեկնած Ադրբեջանի պառլամենտականներից (Զուբարյան, Խոջայան, Ղարաբեկով, Ռուս-

---

[1] «Ժողովուրդ», 27 հունիսի 1919 թ., «Հայաստանի աշխատավոր», 26 հունիսի 1919 թ.:
[2] ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 45, ֆ. 4033, ց. 5, գ. 469, թթ. 1-2:
[3] «Ժողովուրդ», 22 հունիսի 1919 թ., «Ազգ», Բոստոն, 2 սեպտեմբերի 1919 թ.:
[4] «Արձագանք», 16 հունիսի 1919 թ.:
[5] «Պահակ», Բոստոն, 26 օգոստոսի 1919 թ., ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թթ. 168-171:

տամբեկով) կազմված հանձնաժողովը[1]:

Այդ կապակցությամբ արտահայտելով իր տեսակետը՝ Ադրբեջանի կառավարության ղեկավար Ուսուբբեկովը ցինիկորեն ասել է. «Որքան էլ ցավալի լինեն Ղարաբաղի վերջին անցքերը, իմացած եղեք, որ դրանք վերջինը չեն լինելու, քանի դեռ Ղարաբաղի հայկական գավառները կշարունակեն իրենց դիմադրությունն Ադրբեջանին»[2]:

Այդ իրադարձությունները արցախահայությանը մեկընդմիշտ համոզեցին, որ պետք չէ հավատալ անգլիացիներին ու դաշնակից մյուս երկրներին և հույսեր կապել նրանց հետ: Այդ կապակցությամբ դիպուկ է ասված. «Անգլիացիներն ականատես էին..., բայց կարծես իրենց լռությամբ սրբագործում էին թուրքական տականքների արյունռուշտությունները...»[3]: Արցախահայությունը համոզվեց, որ իր հայրենիքի ու իր օջախի պաշտպանը միայն ինքն է ու իր թիկունքին կանգնած մայր Հայաստանը: Դրա ապացույցը հունիսյան դեպքերին անմիջապես հաջորդող օրերին Ղարաբաղի գավառներում տեղի ունեցող գյուղացիական համագումարներն էին և նրանց ընդունած որոշումները՝ երբեք չենթարկվել Ադրբեջանին[4]:

Այդ օրերին Հայաստանի կառավարությունը հնարավորություն չուներ ռազմական ուժով իրական օգնություն ցույց տալ Արցախին, ստիպված բավարարվեց նրան վերաբերող մի շարք որոշումներ ընդունելով: Այսպես, օրինակ, Հայաստանի հանրապետության մինիստրների խորհուրդը 1919 թ. հունիսի 14-ի նիստում լսեց զինվորական մինիստրի պաշտոնակատար Դրաստամատ Կանայանի (Դրո) առաջարկությունը Ղարաբաղի զորամաս (բաղկացած 1 հետևակ գումարտակից, երկու լեռնային թնդանոթից և 54 ձիավոր հետախույզներից) կազմակերպելու համար 1500000 ռուբլի հատկացնելու մասին[5]: Մինչ այդ մինիստրների խորհուրդը հունիսի 6-ի նիստով Ղարաբաղի կարիքների համար հատկացրել էր ևս 1 մլն ռուբլի: Մի շարք խանգարիչ հանգամանքների պատճառով այս և նման այլ որոշումները կյանքի չկոչվեցին, որը և բացասաբար անդրադարձավ արցախահայոց ինքնապաշտպանական համակարգի ամրապնդման վրա:

Ամփոփելով կարելի է ասել, որ Շուշին թեև փաստորեն գրավվել էր Սուլթանովի կողմից, սակայն այս ոճրագործությամբ նա ոչինչ չշահեց. դեռ կանգուն էին գավառները, ուր հայությունը միակամ էր՝ երբեք անձնատուր չլինել թշնամուն:

1920 թ. գարնան սկզբին Ադրբեջանը ձեռնամուխ եղավ ուժային մեթոդով Ղարաբաղի հարցի «լուծմանը» և այդ նպատակի համար ոչ միայն զինվորական հիմնական ուժեր, այլև «կամավորների» անվան տակ ահագին թվով զինված հրոսակախմբեր կենտրոնացրեց Ղարաբաղի գավառում: Ստույգ տվյալներով 1920 թ. գարնանը Ղարաբաղում կենտրոնացված էր ավելի քան 10 հազար զինվոր: Շտապ կերպով կազմակերպվեց քրդական մի դիվիզիա: Շուշի ժամանեց Նուրի փաշան 10 թուրք սպաների ուղեկցությամբ[6]: Մարտի 11-ին և 12-ին Բաքվից

---

[1] «Պահակ», Բոստոն, 26 օգոստոսի 1919 թ.:
[2] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թթ. 168-170:
[3] Արամայիս, նշվ. աշխ., էջ 66:
[4] «Աշխատավոր», 19 հունիսի 1919 թ., «Արձագանք», 24 հունիսի 1919 թ.:
[5] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 27, մաս առաջին, թ. 134:
[6] «Ժողովուրդ», 26 մարտի 1920 թ.:

Ջեբրայիլի վրայով Ղարաբաղ և Զանգեզուր ուղարկվեց 90 վագոն՝ բեռնված զենքով ու զինամթերքով[1]: Եվլախ կայարանը լցված էր բեռնատար ավտոմեքենաներով, զենքի տարբեր տեսակներով ու ռազմամթերքով[2]:

Ամրացվեցին Շուշին և Խանքենդ ավանը: Մուսավաթական զորամասերը գրավեցին Ասկերանի անցուղին և դրանով ապահովեցին Ադրբեջանի կապը Շուշիի հետ[3]:

Ամրանալով Ղարաբաղի ռազմավարական նշանակություն ունեցող կետերում՝ Ադրբեջանը փորձեց զինաթափել ժողովրդին: Այդպիսի փորձեր արվեցին նաև Զանգեզուրի սահմաններում և Ջեբրայիլի շրջանում: Ադրբեջանի գործակալները Լեռնային Ղարաբաղում ժողովներ էին գումարում, զենք բաժանում մուսուլման բնակչությանն ու գրգռիչ ճառեր արտասանում հայերի դեմ: Այդ ամենը խոսում է այն մասին, որ Ղարաբաղի դեմ ուղղված Ադրբեջանի դավերը մասնակի բնույթ չունեին: Ղարաբաղը և Զանգեզուրը գործ ունեին լայնամասշտաբ պատերազմական գործողությունների հետ:

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունն իր բնօրրան երկիրը թշնամուց պաշտպանելու և նախնյաց երկրում ապրելու իր օրինական իրավունքը վերահաստատելու համար հարկադրված էր անհավասար կռվի ելնել թուրք-թաթարական կանոնավոր բանակների և բազմահազար հրոսակների դեմ, երբ սրանք Ադրբեջանի կենտրոնական իշխանության հրամանով «Ղարաբաղ-Զանգեզուրի հարցը մեջտեղից վերացնելու» նպատակով ուզում էին զինաթափ անել և արյան բաղնիք սարքել այդ գավառներում: Այլ խոսքով՝ ստեղծված կացությունը թելադրեց արցախահայությանը դիմելու ինքնապաշտպանության: Ինքնապաշտպանության գործի կազմակերպումը ղեկավարում էին արցախցի գործիչները: 1920 թ. հունվարին Երևանից Զանգեզուրի վրայով Ղարաբաղ ժամանեցին Արսեն Միքայելյանը, Ասատուր Ավետիսյանը, Արսեն Հովհաննիսյանը (Արսո), Դալի Ղազարը, կապիտան Մարտիրոսյանցը, գնդապետ Մեսյանը և մի քանի այլ սպաներ: Նրանք Վարանդայի Սարուշեն գյուղում հիմնեցին զինվորական շտաբ, որի պետ հաստատվեց Արսեն Միքայելյանը: Նրա մերձավոր զինակիցները դարձան Արտեմ Թումանյանը, Անուշավան Ավետիսյանը, Խաչատուր Մելքումյանը և ուրիշներ: Գավառում նոր կազմավորված զորամասերի համար նշանակվեցին ռազմական պետեր: Կապիտան Մարտիրոսյանցը նշանակվեց Ջիվանշիրի զորամասի հրամանատար, գնդապետ Մեսյանը՝ Խաչենի, Դալի Ղազարը՝ Վարանդայի, Հովակիմ Ստեփանյանը՝ Դիզակի[4]: Զինվորական հրամանատարները վերոհիշյալ շրջաններում կազմակերպեցին նոր զորամասեր, ծառայության վերցրին նախկին սպաներին և սկսեցին լրջորեն նախապատրաստվել ինքնապաշտպանության:

Ադրբեջանի կենտրոնական իշխանության հրահանգով Սուլթանովը 1920 թ. մարտի 20-ին վերջնագիր ներկայացրեց Ղարաբաղի հայ ազգաբնակչությանը, ըստ որի հատուկ նշանակված տեղերում երեք օրվա ընթացքում նրանք պիտի

---

[1] «Нагорный Карабах в 1918-1923», с. 431.
[2] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թթ. 51-52:
[3] Աբրահամյան Հ., 1991, 34:
[4] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թթ. 21-24:

կամավոր հանձնեին իրենց զենքերը[1]: Ղարաբաղի բնակչությունը համարելով այդ վերջնագիրը օգոստոսյան ժամանակավոր համաձայնագրի ակնհայտ խախտում և պատերազմի նախանշան, որին պիտի անխուսափելիորեն հաջորդեին բռնությունները, վճռականորեն մերժեց այն: Մարտի 20-ին Սուլթանովի կարգադրությամբ Ղարաբաղում կենտրոնացած թուրք-թաթարական մեծաթիվ զորքերը սկսեցին բռնությամբ զինաթափել բնակչությանը: Ղարաբաղի գեներալ-նահանգապետը Շուշի քաղաքի մահմեդական բնակիչներին հրահանգում է պատրաստ լինել և սպասել իր ազդանշանին՝ քաղաքի հայկական մասը հիմնահատակ կործանելու համար: Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի դեմ Ադրբեջանի հարձակումը սկսվեց 1920 թ. մարտի 22-ին:

Այդ օրը Ադրբեջանի սահմանի ամբողջ երկայնքով՝ Գանձակից մինչև Զանգեզուր, ծավալվեցին մարտական գործողություններ: Ասկերանի (հրամանատար՝ Ղազար), Խանքենդի (հրամանատար՝ Զ. Մեսյան), Դիզակի (հրամանատար՝ Հովակ Ստեփանյան) զորամասերը կենաց ու մահու կռիվ էին մղում մի քանի անգամ թվաքանակով գերազանցող հակառակորդի դեմ: Թշնամու անցած ճանապարհին հազարավոր մարդիկ են կոտորվում, կանայք ու աղջիկներ անարգվում, ավերվում են ամբողջ գյուղեր: Ադրբեջանցի զինվորը 1920 թ. ապրիլի 8-ին մորը ուղարկած նամակում գրում է. «Աղդամից դուրս եկանք և մինչև Շուշի-բերդը գրավեցինք, ինչքան հայի գյուղեր կային, այրեցինք ու իրենց էլ կոտորեցինք, կանանց էլ բանտարկեցինք, որոնց շատ նեղություններ էինք տալիս»[2]:

Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների կիզակետը դարձավ Շուշիի հայ ազգաբնակչության սպանդը: Այդ օրերին արցախահայության դահիճ Սուլթանովի ղեկավարությամբ մուսավաթական բանակը և մահմեդական խուժանը Շուշիում կատարեցին սոսկալի ոճրագործություն՝ կրակի ու թնդանոթի բերան տալով հայ բնակչության մեծ մասին: Թաթարները պատրաստվում էին մեծ հանդիսավորությամբ նշել 1920 թ. Նովրուզ բայրամը՝ Ամանորը: Տոնակատարությանը մասնակցելու անվան տակ զորքը բերվեց Շուշի: Շուշի եկան նաև Աղդամի թուրք բեկերը[3], ինչպես նաև Ղարաբաղի տարբեր շրջաններից տասնյակ հարյուրավոր մուսուլմաններ:

Ի թիվս Ղարաբաղի մյուս շրջանների՝ Շուշիի հայությանը ևս կարգադրված էր մինչև մարտի 22-ը հոժարակամ զենքերը հանձնել: Ժամկետը լրանալուց հետո՝ մարտի 22-ի առավոտյան, Սուլթանովի հրամանով զինվորական պահակախմբերը սկսում են շրջել քաղաքի հայկական թաղամասը և խուզարկել բնակարանները: Այդպիսի մի պահակախումբ՝ սպայի գլխավորությամբ, ներս է խուժում մի հայ ընտանիք և պահանջում հանձնել զենքերը: Տաքարյուն հայ երիտասարդի ներկայությամբ թուրք սպան քստմնելի առաջարկություն է անում երիտասարդի գեղեցիկ հարսին: Երիտասարդը հրազենով սպանում է թուրք սպային: Ասկյարները նույն բախտին են արժանացնում երիտասարդին, նրա հարսին, մորը, քրոջը և գոռում-գոչյունով դուրս են թափվում, թաթար զինվորներին օգնության կանչում,

[1] «Հառաջ», 20 ապրիլի 1920 թ.:
[2] Ահրահամյան Հ., 37:
[3] ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 14, թթ. 84-85:

թե՝ հայերը կոտորում են թուրքերին: Այս դեպքը Սուլթանովը միտումնավոր վերագրում է նրան, թե իբր քաղաք է թափանցել հայկական մի ջոկատ և փորձել է զինաթափել ասկյարներին: Գազազած նահանգապետը կարգադրում է հիմնահատակ կործանել Շուշիի հայկական թաղամասը (7 հազար տուն): Սկսվեց Շուշիի հայության նոր սպանդը: Թաթար զինվորները և մահմեդական մոլեռանդ խուժանները խուժում են քաղաքի հայկական թաղամասը, հրդեհում բազմաթիվ բնակելի տներ ու հասարակական շինություններ, կոտորում անզեն բնակչությանը: Ըստ ականատեսի հաղորդման՝ «Ամենուրեք կրակի բոցեր էին բարձրանում: Երեկոյան դեմ քաղաքի տեսարանը սոսկալի էր: Ամեն կողմից լսվում էին լացի ու աղմուկի ձայներ»[1]:

Մուսուլմանական զորքը և բնակչությունը մի ամբողջ օր՝ մարտի 23-ին, արյան խրախճանք է կատարում քաղաքում: Հայ բնակչության մեծ մասը սրի է քաշվում՝ սպանվում են հազարավոր տղամարդիկ, կանայք, ծերեր և երեխաներ: Շուշիում զոհվածների թիվը հասնում էր մոտ 8 հազարի[2]: Այդ օրերին Շուշիում զոհվեցին Ալեքսանդր Ծատուրյանը (Ռուբեն), Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը, բժիշկ Յարամիշյանը, բանաստեղծներ Մ. Ջանումյանը, Փիրջանյանը, ուսուցիչներ Թավրիզյանը, Տեր-Գաբրիելյանը, գիտության ու մշակույթի այլ ներկայացուցիչներ[3]:

Մահից փրկված Շուշիի հայության բեկորները՝ 5-6 հազար մարդ, մազապուրծ փախան Վարանդա և Դիզակ[4]:

Կոտորածին մասնակցած զինվորների ու կամավորների նամակները լրացուցիչ լույս են սփռում Ղարաբաղում տեղի ունեցած դեպքերի ու մահմեդականների ձեռքով կատարված ոճիրների վրա: Բաքվում գտնվող որդուն հայրը (գրողն ըստ երևույթին շուշեցի թուրք էր) գրում էր. «Տեսածդ Էրմենիստանը այրված է, հինգ կամ տասը տուն պահեցին: Հազարից ավելի հայեր գերի բռնվեցին, տղամարդկանց բոլորին կոտորեցին, խալիֆին (եպիսկոպոսին. խոսքը Վահան եպիսկոպոսի մասին է. - Հ.Հ.), բոլոր մեծամեծ մարդկանց: Նշանավոր հայերին սպանելուց հետո գլուխները կտրած շուկաներում պտտեցնել էին տալիս»[5]: Քաղաքի հայկական թաղամասում թուրքերի կատարած թալանի ու կողոպուտի մասին նույն նամակագիրը նշում է, որ «այս կողմերում այլևս ոչ մի հայ չեք գտնի և ոչ էլ այնպիսի թուրքի կարող եք հանդիպել, որ հարյուր հազարից պակաս թալան բերած լինի: Այնպիսի մարդ կա, որ մեկ միլիոնից ավելի ապրանք է բերել...: 10-15 տուն է մնացել, կառավարությունը չուզեց այրել, որպեսզի ասկյարները բնակվեն: Քաղաքը ավերակ դարձավ»[6]: Մեկ այլ նամակագիր վշտացած էր, որ հայերի կոտորածով և տների ու խանութների թալանով իրենք մի միլիոնի չափ կորուստ ունեն, որովհետև նրանց տված ապառիկները չեն կարող հավաքել[7]:

Այսպիսով մարտ-ապրիլ ամիսներին մուսավաթական բանակը և մուսուլմա-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 67:
[2] Նույն տեղում, գ. 427, առաջին մաս, թ. 179, երկրորդ մաս, թ. 245, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թ. 145:
[3] Աբրահամյան Հ., 37:
[4] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թ. 145, «Հառաջ», 20 ապրիլի 1920 թ.:
[5] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թթ. 163-164:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում, թ. 113:

նական մոլեռանդ խուժանը՝ թուրք սպաների հրամանատարությամբ, անհամար կոտորածներ ու ավերածություններ պատճառեցին Արցախ աշխարհին: Ավերվեցին ավելի քան երեք տասնյակ գյուղեր ու շեներ: Սպանվեցին հազարավոր խաղաղ բնակիչներ: Ղարաբաղի ամբողջ տարածքում սպանվածների թիվը հասնում էր 10 հազարի[1]: Ըստ Ղարաբաղի հայոց Ազգային խորհրդի կազմած վիճակագրության՝ կործանված գյուղերից ու շեներից մոտ 20 հազար չափահաս և ավելի քան 4 հազար անչափահաս մարդ ապաստան գտան Վարանդայի, Դիզակի և մասամբ Զանգեզուրի գյուղերում[2]:

1920 թ. ապրիլի 4-ին Հայ հեղափոխական դաշնակցության Երևանի խորհուրդը, լսելով Ս. Վրացյանի զեկուցումը Ղարաբաղի և Զանգեզուրի վերջին դեպքերի մասին, որոշեց բոլոր միջոցներով աջակցել կառավարությանը՝ ապահովելու համար Զանգեզուրի և Ղարաբաղի միացումը Հայաստանի հանրապետությանը[3]: Ապրիլի 7-ին Երևանում ապրող ղարաբաղցիների հայրենակցական միության նախաձեռնությամբ հրավիրվեց ընդհանուր ժողով: Միության վարչության նախագահ Դավիթ Անանունը ժողովականներին տեղեկացրեց Ղարաբաղի արյունալի անցքերի մասին: Ժողովականները կոչով դիմեցին հարևան ժողովուրդների դեմոկրատական կազմակերպություններին, որ նրանք գործի դնեն բոլոր միջոցները՝ սանձելու Ադրբեջանի կառավարությանը, վերջ տալու արցախահայության դեմ ուղղված բարբարոսություններին[4]:

Հայ ժողովրդի արցախյան հատվածի նկատմամբ Ադրբեջանի կազմակերպած վանդալիզմի դեմ բողոքի ձայն բարձրացրեց Հայաստանի կառավարությունը և վճռեց անհապաղ օգնության հասնել: Կառավարությունը դաշնակիցների ուշադրությունն է հրավիրում հայության նկատմամբ Լեռնային Ղարաբաղում սաստկացող կոտորածների վրա և կոչ է անում միացյալ ճնշում գործադրելու Ադրբեջանի վրա՝ այդ արյունահեղություններին վերջ տալու համար:

Ղարաբաղը գրավելու նպատակով Ադրբեջանի կառավարության և նրա դրածո Սուլթանովի քաղաքականությունը արցախահայությանը ոտքի հանեց պայքարի, ինչը Ադրբեջանի կողմից ներկայացվեց որպես «ապստամբություն»: Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանը ապրիլի 15-ին, այսինքն՝ Ղարաբաղի հայտնի դեպքերից մի քանի օր անց, Ադրբեջանի արտգործնախարար Խան Խոյսկու հանդիպման ժամանակ խստորեն դատապարտում է Ադրբեջանին՝ Ղարաբաղի նկատմամբ ցուցաբերած ագրեսիվ քաղաքականության և հավակնությունների համար[5]: Մեկ այլ հանդիպման ժամանակ (ապրիլի 20-ին) նա Խան Խոյսկուն դատապարտում է՝ ասելով, որ Ադրբեջանի ղեկավարների և Սուլթանովի վարած քաղաքականությունը մի նպատակ ունի՝ բնիկ ժողովրդին արմատախիլ անել իր պատմական բնօրրանից[6]:

Ղարաբաղում ստեղծված մթնոլորտի և ժողովրդական ընդվզման մանրամաս-

---

[1] Նույն տեղում, թթ. 163-164:
[2] Նույն տեղում, թ. 69, «Հառաջ», 12 մայիսի 1920 թ.:
[3] «Հառաջ», 11 ապրիլի 1920 թ.:
[4] «Հառաջ», 11 ապրիլի 1920 թ.:
[5] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թթ. 155-156:
[6] Նույն տեղում, ֆ. 278, ց. 1, գ. 14, թթ. 72-73:

ներն ավելի որոշակի արտահայտված են այն զեկուցման մեջ, որ վարչապետ Ալ. Խատիսյանը ընթերցել է պառլամենտի նիստում: «1918 թ. նոյեմբերին Զանգեզուրում պարտություն կրելուց հետո Ադրբեջանի կառավարությունը նորից փորձ արեց գրավել Ղարաբաղը՝ նպատակ ունենալով կատարված փաստի առաջ դնել թե՛ Հայաստանի կառավարությանը, և թե՛ Փարիզի կոնֆերանսին,- ընդգծել է վարչապետն ու ավելացրել,- մարտի 22-ը, որ ներկայացվում է Ղարաբաղի «ապստամբության» օր, ես հերքում եմ. հայերի կողմից ապստամբություն չի եղել, այլ դա պատասխան է եղել Ադրբեջանի կանոնավոր զորքերի հարձակման: Ժողովուրդը, զգալով մոտալուտ վտանգը, կանգնել է. և եթե դա ապստամբություն չէ նրանց կողմից, ուրեմն, ավելի ճիշտ, նորմալ վերաբերմունք է կոտորածի դեմ»[1]:

Բոլորովին հիմքից զուրկ են «ապստամբությունը» Հայաստանի կողմից կազմակերպված լինելու վերաբերյալ ադրբեջանական կողմի վայրահաչոցները:

Այսպիսով՝ Ադրբեջանի ղեկավարության բոլոր ջանքերը, կատարված բռնարարքների, գազանությունների ու հանցագործությունների իրականացնողների և անմիջական մասնակիցների բոլոր գործողությունները մի նպատակ ունեին՝ բնիկ ժողովրդին արմատախիլ անել իր պատմական բնօրրանից: Ադրբեջանն այդպես էլ չկարողացավ իր իշխանությունը տարածել Լեռնային Ղարաբաղի վրա: Արցախահայությունը զենքով դիմագրավեց իր անվտանգության վրա ծանրացած սպառնալիքին: Այս և հետագա մյուս կռիվներից ծնվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (1991 թ.):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Հ. 1991, Արցախյան գոյամարտ, Երևան, Գիտելիք, 175 էջ:
2. «Ազգ», Բոստոն, 2 սեպտեմբերի 1919 թ.:
3. «Աշխատավոր», 19 հունիսի 1919 թ.:
4. Արամայիս 1993, Ղարաբաղի տագնապը, Երևան, Հայաստան, 118 էջ:
5. «Արձագանք», 16 հունիսի 1919 թ.:
6. «Արձագանք», 24 հունիսի 1919 թ.:
7. «Ժողովուրդ», 22 հունիսի 1919 թ.:
8. «Ժողովուրդ», 27 հունիսի 1919 թ.:
9. «Ժողովուրդ», 26 մարտի 1920 թ.:
10. «Հայաստանի աշխատավոր», 26 հունիսի 1919 թ.:
11. «Հայրենիք», մայիս, 1926, էջ 51-52:
12. «Հառաջ», 12 մայիսի 1920 թ.:
13. «Հառաջ», 11 ապրիլի 1920 թ.:
14. «Պահակ», 14 հունիսի 1919 թ.:
15. «Պահակ», Բոստոն, 26 օգոստոսի 1919 թ.:
16. Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, Ереван, 1992.

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թթ. 49-52:

Ամփոփում

Շուշիի հայության կոտորածները (1919 թ. հունիս և 1920 թ. մարտ)

Համլետ Հարությունյան

«Հայոց արևելից կողմանց»՝ Արցախ աշխարհի, բազմադարյան պատմության առավել ծանր ու դրամատիկ իրադարձությունները տեղ գտան 1918-1920 թվականներին, երբ Լեռնային Ղարաբաղը հայտարարվեց «վիճելի տարածք»:

Բաքվում բրիտանական առաքելության աջակցությամբ Արևելյան Հայաստանի Շուշիի, Զանգեզուրի, Ջեբրայիլի և Ջիվանշիրի գավառների գեներալ-նահանգապետ հռչակված Խոսրով բեկ Սուլթանովը դիվանագիտական ճնշումներով, սպառնալիքներով, ուժ գործադրելով ցանկանում էր արցախահայությունից կորզել Ադրբեջանին հպատակվելու համաձայնություն: Արցախցիները թեև մերժում էին Ադրբեջանի իշխանությունը, բայց դեմ չէին թուրք ժողովրդի հետ բարիդրացիական հարաբերությունների պահպանմանը:

Սուլթանովը 1919 թ. հունիսի սկզբներին առաջին հարվածը հասցրեց Արցախի ազատագրական շարժման կենտրոն Շուշի քաղաքին՝ մարդկային ու նյութական անդառնալի կորուստներ պատճառելով հայկական թաղամասերին: Այնուհետև 70 տուն ունեցող մոտակա Ղայբալիշենը մեկ օրվա մեջ վերածվեց մոխրակույտի, իսկ հարյուրավոր մարդիկ սրի քաշվեցին, որոնց մեծ մասը երեխաներ էին, կանայք ու ծերեր:

Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ողբերգական դեպքերը շարունակվեցին նաև 1920 թ.: Մուսուլմանական զորքը և բնակչությունը մարտի 23-26-ին ցեղասպանության հանցագործություններ էին կատարում Շուշի քաղաքում: Զոհված խաղաղ բնակիչների թիվը հասնում էր 8 հազարի, մազապուրծ փախածներինը՝ շուրջ 5-6 հազարի:

1920 թ. մարտ-ապրիլ ամիսներին մուսավաթական բանակի և մուսուլմանական մոլեռանդ խուժանի, թուրք սպաների հրամանատարությամբ, Արցախում կատարած կոտորածներից ու ավերածություններից տուժեցին ավելի քան երեք տասնյակ գյուղեր ու շեներ, սպանվեցին 10 հազար խաղաղ բնակիչներ: Ըստ Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի կազմած տեղեկանքի, կործանված գյուղերից ու շեներից մոտ 20 հազար չափահաս և ավելի քան 4 հազար անչափահաս մարդ ապաստան գտավ Վարանդայի, Դիզակի և մասամբ Զանգեզուրի գյուղերում:

Հիմնաբառեր. *Արցախ, «վիճելի տարածք», Շուշի, Զանգեզուր, Սուլթանով, Ղայբալիշեն, կոտորած, սպառնալիք, հարձակում, ավերված գյուղեր:*

Резюме

Резня армян Шуши (июнь 1919 – март 1920 гг.)

Гамлет Арутюнян

1918–1920 гг. были наиболее тяжёлым и полным драматических событий временем для «Армянского восточного края» – Арцаха, которого в эти годы объявили «спорной территорией».

Провозглашенный при поддержке британской миссии в Баку генерал-губернатором части Восточной Армении – Шуши, Зангезурского, Джебраильского и Дживанширского уездов, Хосров-бек Султанов дипломатическим давлением, угрозами, применением силы стремился вырвать у арцахских армян согласие стать поданными Азербайджана. Арцахцы отвергали власть Азербайджана, хотя и не были против сохранения добрососедских отношений с тюркским народом.

В начале июня 1919 г. Султанов нанес первый удар по центру освободительного движения Арцаха – городу Шуши, нанеся ее армянской части необратимые человеческие и материальные потери. Затем, за один дель было обращено в пепел близлежавшее село Гайбалишен, имевшее 70 домов. Сотни человек были вырезаны, большинство из них – женщины, дети и старики.

Трагические события, происходившие в Нагорном Карабахе, продолжились и в 1920 г. 23-26 марта мусульманские войска и население осуществили преступление геноцида в городе Шуши. Число убитых армянских жителей достигало 8.000, едва спасшихся бегством – около 5.000-6.000.

От резни и разрушений, причиненных Арцаху мусаватистской армией и мусульманским фанатичным сбродом под руководством турецких офицеров в марте-апреле 1920 г., пострадали более трех десятков сел и поселков, были убиты 10.000 мирного населения. По справке, составленной Армянским Национальным советом Карабаха, около 20.000 взрослых и более 4.000 несовершеннолетних лиц укрылись в селах Варанды, Дизака и частично Зангезура.

Ключевые слова: *Арцах, «спорная территория», Шуши, Зангезур, Султанов, Гайбалишен, резня, угроза, нападение, разрушенные села.*

Abstract

Massacres of the Armenians of Shushi (June 1919 – March 1920)

Hamlet Harutyunyan

The most difficult and dramatic events of the centuries-old history of the Artsakh world - "On the other side of the Armenian East", took place in 1918-1920, when Nagorno Karabakh was announced a "disputed territory". Khosrov Bek Sultanov, who was proclaimed a Governor General of the Eastern Armenian provinces of Shushi, Zangezur, Jebrail and Jivanshir with the support of the British mission in Baku, wanted to extort an agreement from the Artsakh Armenians to submit to Azerbaijan through diplomatic pressure, threats and force. Although the people of Artsakh rejected the Azerbaijani government, they were not against maintaining good-neighborly relations with the Turkish people.

In early June 1919, Sultanov dealt the first blow to the city of Shushi - the center of the Artsakh liberation movement, causing irreparable human and material losses to the Armenian districts. Then the nearby Ghaibalishen, which has 70 houses, turned to ashes in one day, and hundreds of people were killed, most of them children, women and the aged.

The tragic events that took place in Nagorno Karabakh continued in 1920 as well. The Muslim army and the population committed genocidal crimes in the city of Shushi on March 23-26. The number of dead civilians reached 8000, the number of escaped refugees was about 5000-6000. In March-April 1920, under the command of the Musavat army, the fanatical Muslim mob and the Turkish officers, more than thirty villages were damaged in the massacres and destruction in Artsakh, and 10,000 civilians were killed. According to a reference issued by the Armenian National Council of Karabakh, about 20,000 adults and more than 4,000 minors from the destroyed villages and buildings found refuge in the villages of Varanda, Dizak and partly Zangezur.

Keywords: *Atsakh, "disputed territory", Shushi, Zangezur, Sultanov, Ghaibalishen, massacre, threat, assault, destroyed villages.*

ԳԼՈՒԽ Բ

ԱՐՑԱԽԻ 1918-1920 ԹԹ. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ



American Relief Committee
SHUSHA BRANSH
Американскій Комитетъ Помощи
Шушинское отдѣленіе

Джамгаровская ул.
д. Джамгарова
ШУША

Dr. B. M. Harman
Jamgaroff's house
Shusha

5 іюня 1919 г.

ЕГО ПРЕВОСХОДИТЕЛЬСТВУ
Г-ну Вр. Генералъ-Губернатору.

Въ зданіе Американской Миссіи въ городѣ Шушѣ попало нѣсколь ко пуль. Пули пробили двери и пролётѣли по комнатамъ, гдѣ про изводятся работы.

Пребывая здѣсь , какъ гражданинъ Сѣверо- Американскихъ Соединенныхъ Штатовъ съ подданными С.А. Соед. Штатовъ, я просилъ бы Васъ, какъ Генералъ-Губернатора, немедленно принять экстренныя мѣры къ предотвращенію подобныхъ случаевъ,такъ какъ дальнѣйшее пребываніе здѣсь Американской Миссіи, прибывшей сюда для оказанія помощи голодающимъ,является весьма небезопаснымъ.

Американскій Комитетъ Помощи
Шуша
№ 45
American Mission, Shusha

Շուշիում ամերիկյան առաքելության քարտուղարի գրությունը Ղարաբաղի գեներալ-նահանգապետին՝ առաքելության շենքի վրա արձակված կրակոցների համար բողոքներ կայացնելու մասին, 5 հունիսի 1919 թ.(ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 60, թ. 35):

Записка секретаря американской миссии в Шуши генерал-губернатору Карабаха об осуществлении протестов из-за произведённых выстрелов по зданию миссии, 5 июня 1919 г. (НАА, ф. 252, п. 1, д. 60, л. 35).

A letter from the Secretary of the US Mission in Shushi to file a complaint to the Governor-General of Karabakh over the shooting at the mission building, June 5, 1919 (NAA, f. 252, l. 1, w. 60, p. 35).

ՎԱՀՐԱՄ ՌԱԶՄԻԿԻ ԲԱԼԱՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր
Արցախի պետական համալսարան, պատմության
և քաղաքագիտության ամբիոն
Արցախի Հանրապետություն,
Ստեփանակերտ, Մ.Գոշի 5
Էլ.հասցե՝ vahrambalayan@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 10.04.2021, գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 20.04.2021

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՇՈՒՇԻՈՒՄ XIX ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Մինչև XVIII դարի 50-ական թվականները Շուշին ազգային հիմքում միատարր հայկական բնակավայր էր: Ղարաբաղի խանության գոյության շրջանում Շուշի սկսեցին թափանցել պարսիկներ, թուրքեր և քրդեր, որոնց պաշտոնական աղբյուրները հիշատակում են մահմեդականներ հավաքական անվամբ: Ղարաբաղի խաների հակահայ քաղաքականության, ինչպես նաև 1795-1797թթ. Աղա Մուհամմադ խանի արշավանքների հետևանքով Արցախի մի շարք բնակավայրերից, այդ թվում Շուշիից, հայությունն սկսեց արտագաղթել:

1813թ. Գյուլիստանի պայմանագրից հետո այդ ամենին գումարվեցին ցարական արքունիքի՝ Ղարաբաղի խանի և նրան հպատակ մահմեդական բեկերի նկատմամբ ունեցած քաղաքական սեթևեթանքներն ու ընդգծված կողմնակալ մոտեցումները, հակահայ դիրքորոշումները: 1823թ. իրենց դավաճանած Մեհտի-Ղուլի խանին ռուսները ոչ միայն թույլատրեցին Պարսկաստանից վերադառնալ Շուշի, այլև իր հետ բերել մահմեդական 3000 ընտանիքներ, որոնց մեծ մասը թուրքեր էին: Վերջիններիս ռուսական կառավարությունը 6 տարով ազատեց հարկերից: Մահմեդական վերաբնակիչների մի մասը հաստատվեց Շուշիում: Այդ ամենի հետևանքով, հօգուտ թուրքերի, մի քանի տարով փոխվեց Շուշիի ազգագրական դեմքը:

Մեսրոպ Թաղիադյանը, լինելով Շուշիում, գրել է, որ 1821թ. նոյեմբերին բնակավայրում ապրում էին հայեր և թուրքեր: Հայերն ունեին 500 տուն բնակչություն[1]:

Ռուսական աղբյուրների տվյալների համաձայն՝ 1823թ. ամրոցում ապրում էր

[1] Թաղիադեանց Մ. 1847, 286-287:

8290 մարդ, որից հայեր՝ 3350 (41 տոկոս), թուրքեր (թաթարներ)՝ 4670 (56 տոկոս), այլ ազգեր, հիմնականում քրդեր՝ 270 (3 տոկոս)[1]:

Հետաքրքիր է, որ ներկայումս ադրբեջանցի հեղինակները, առանց սկզբնաղբյուրներ մատնանշելու, կամայականորեն նույն հարաբերակցությունը վերագրում են Շուշիի պատմության հետագա շրջանին, այն դեպքում, երբ 1833 թվականից ժողովրդագրական պատկերը բերդավանում արդեն փոխվել էր: 1833թ. Շուշիում ապրում էր 7304 մարդ, որոնցից 3850-ը (52,8 տոկոսը) հայեր էին, 3446-ը (47,1 տոկոսը)՝ թուրքեր (թաթարներ), 0,1 տոկոսն էլ՝ այլ ազգերի ներկայացուցիչներ[2]:

Ըստ 1841թ. եկեղեցական ծխական մատյանների՝ Շուշիի հայ ազգաբնակչությունը հետևյալ սեռային կազմն ուներ. «Սբ. ԱԾ Մայր եկեղեցվոյ Ագուլեաց՝ 447 տուն՝ 1304 արական, 1174 իգական, Ամենափրկիչ եկեղեցւոյ Ղազանչեցվոց՝ 364 տուն՝ 1221 արական, 1016 իգական, Սբ. ԱԾ եկեղեցւոյ Մեղրեցոց՝ 102 տուն՝ 241 արական, 217 իգական, Սբ. ԱԾ եկեղեցւոյ Ներքին թաղի՝ 46 տուն՝ 153 արական, 127 իգական»[3]:

1841թ. Շուշիում ապրում էր 5453 հայ: 10 տարվա մեջ հայերի թիվը հասավ 6827-ի, որոնցից Ագուլեցոց թաղում՝ 485 տուն՝ 1521 արական և 1312 իգական բնակիչներով, Ղազանչեցոց թաղում համապատասխանաբար՝ 378 տուն՝ 1354 արական, 1051 իգական, Մեղրեցոցում՝ 188 տուն՝ 672 արական, 560 իգական և Վերին թաղում՝ 56 տուն՝ 202 արական, 155 իգական[4]:

Հաջորդ տեղեկությունը մեզ է հասել ռուսական աղբյուրներից: 1854 թվականին արդեն քաղաքի կարգավիճակ ունեցող Շուշիում բնակչությունը կազմել էր 15.194 մարդ, որից 7760-ը (51.1 տոկոսը) հայեր էին, 7391-ը (48,6 տոկոսը)՝ թուրքեր (թաթարներ), 43-ը (0,3 տոկոսը)՝ ռուսներ[5]:

1852թ. Թիֆլիսից, Շամախուց և Նուխիից հետո Այսրկովկասում իր մեծությամբ չորրորդ քաղաքը համարվում էր Շուշին:

Այդ ժամանակներից սկսած՝ Շուշին բռնել էր համաչափ զարգացման ուղին: Արհեստագործության վրա խարսխված Շուշիի տնտեսությունը նոր բնագծեր նվաճելու համար աշխատուժի կարիք ուներ: Ինքնաբերաբար Արցախի լեռնային սակավահող գյուղերում կուտակված ազատ աշխատուժի սպառման կենտրոն դարձավ քաղաքի կարգավիճակ ստացած Շուշին: 6 տարվա ընթացքում քաղաքի ազգաբնակչությունը 4753 մարդով ավելացավ:

Նախկինում գոյություն ունեցած ղազանչեցոց, ագուլեցոց, մեղրեցոց, ղարաբաղցուց կամ ջրաբերդցուց թաղերին ավելանում են նորերը: Այդ ժամանակ Շուշիի հայկական քաղաքամասն արդեն բաղկացած էր 18 թաղամասերից. «1. Մելիքենց թաղ, Ղումլուղու թաղ, 2. Քամու ճեղաց (Ջրաղաց.- Վ.Բ.), 3. Խանցկեցւոց թաղ, 4. Կազարմէն թաղ, 5. Վերին թաղ, 6. Փոշտին թաղ, 7. Վանքին թաղ, 8. Աղբրին թաղ, 9. Ներքին թաղ, 10. Աղաբեկենց ձորին թաղ, 11. Ագուլեաց թաղ,

---

[1] ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 163; (Описание Карабахской провинции составленное в 1823г. действительном статстким советником Могилевским и полковником Ермоловым 2-ым, 1866г.)
[2] ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 51-52:
[3] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 43:
[4] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2604:
[5] Кавказский Календарь на 1856 г., отдел III, 1855, 358-359.

12. Ղազանչեցոց թաղ, 13.Մեղրեցւոց թաղ, 14.Գեաւուր Թալին թաղ, 15. Հին հանգստարանի թաղ, 16. Դաբաղներին ձոր թաղ, 17. Բաղունց ձորին թաղ և 18. Դիւզին թաղ»[1]:

XIX դարի կեսերին Վերին թաղի բնակչությունն աճում էր ի հաշիվ այստեղ տեղափոխված փահլուրցիների և վարարակցիների[2]:

Արցախի որոշ գյուղերից այնքան շատ բնակիչներ էին ապրում Շուշում, որ հաճախ այդ թաղերում ձևավորվում էին նոր միջավայր կամ թաղամասեր, որոնք կոչվում էին նրանց նախկին բնակավայրերի անուններով: Օրինակ՝ Մեղրեցոց եկեղեցու ներքևով անցնող ճանապարհի տակ ապրում էին մի քանի տասնյակ գիշեցի ընտանիքներ, և այդ մասը կոչվում էր «Գիշեցոց տներ»[3]:

Տարբեր գյուղերում արմատավորված սովորությունները Շուշիի միջավայրում փոխակերպվում կամ էլ այս կամ այն դրսևորումներով շարունակում են գոյատևել՝ դառնալով քաղաքային համակեցության նոր կանոններ: Հետաքրքիր է այն փաստը, որ վերոհիշյալ ժամանակահատվածում Շուշիում ապրող թուրք-թաթարներին և քրդերին պարսիկներ էին անվանում: 1881թ. Հայկունին, լինելով Շուշիում, գրել է. «Բնակիչները կամ հայ են, կամ պարսիկ, մի քանի տնւոր էլ՝ ծառայող ռուներ»[4]:

Համաձայն Շուշիում կազմված ընտանեկան ցուցակների՝ 1860թ. քաղաքում կար 2966 ընտանիք, որը կազմում էր 17.484 մարդ: Հայկական քաղաքամասում բնակվում էր 9533 մարդ (54.53 տոկոս), իսկ թուրքականում՝ 7951 մարդ (45.47տոկոս)[5]:

1873թ. Շուշիում կազմակերպված մարդահամարի տվյալներն առավել ամբողջական տեղեկություններ են հաղորդում մեզ քաղաքի բնակչության թվի և կազմի վերաբերյալ:

1873թ. Շուշիում ապրում էր 24552 մարդ, որից 13504 (55 տոկոսը) հայեր էին, 10804 (44 տոկոսը)՝ թուրքեր (թաթարներ) և 244-ը (1 տոկոսը)՝ այլ ազգերի ներկայացուցիչներ[6]:

Շուշիի ազգաբնակչության օրեցօր աճող թվաքանակի մասին են խոսում 1886թ. կազմված քաղաքի ընտանեկան ցուցակներից ստացված տվյալները:

1886թ. Շուշիի ազգաբնակչությունն արդեն կազմել էր 26.806 մարդ, որից 15.188 (56.7 տոկոսը) հայեր էին, 11.595 (43.2 տոկոսը)՝ թուրքեր (թաթարներ), 21 (0.07 տոկոսը)՝ ռուսներ, և միայն 2 հոգի՝ հրեաներ[7]:

1886 թվականի տվյալներով՝ Շուշին բնակչության թվակազմով Բաքվից

---

[1] ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 1, թ. 52:
[2] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4627, թ. 27:
[3] Կիսիբեկյան Ա. 2011, հ.1, 180:
[4] Հայկունի 2010, 316:
[5] Տեր-Գասպարյան Ռ. 1993, 78-79: Այս տվյալը հեղինակը վերցրել է «Камеральное описание города Шуши за 1860 г.», Архив министерств. внут. дел Азерб. ССР, фонд 10, ед. хран. 48, лист 1-1025, սակայն ըստ ներկայացվածի քաղաքում հայերից, թուրքերից բացի այլազգիներ չկային, որը անհավանական է թվում: Ամենայն հավանականությամբ ազգային փոքրամասնությունների ցուցակները ներառվել էին հայերի և թուրքերի ընտանիքների կազմի մեջ:
[6] Статистические таблицы о народонаселении Кавказского края, сборник сведений о Кавказе т. VII 1880, XXII-XXV.
[7] Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 118, թ. 89-93:

(86.611 մարդ) և Թիֆլիսից (78445 մարդ) հետո իր մեծությամբ Այսրկովկասում երրորդ քաղաքն էր: Այդ նույն ժամանակահատվածում Շուշին ավելի շատ բնակիչներ է ունեցել, քան Երևանի նահանգի Նախիջևանը, Օրդուբադը և Նոր Բայազետը, կամ Քութայիսի նահանգից՝ Բաթումը, Օզուրգեթին, Փոթին, Սուխումը, Ռեդուտ-Կալեն միասին վերցրած[1]: 11 տարիների ընթացքում Շուշիի հայերի թվաքանակը պակասեց 768 շնչով:

Այսպես, 1897թ. առաջին համառուսական մարդահամարի տվյալներով Շուշիում ապրում էր 25881 մարդ, որից 14420-ը (55.7 տոկոսը)՝ հայեր, 10778-ը (41.6 տոկոսը)՝ թուրքեր (թաթարներ), 396-ը (1.5 տոկոսը)՝ ռուսներ, 133-ը՝ լեհեր, 1 չեխ, 1 լատիշ, 73 մոլդովացիներ, 1 ֆրանսիացի, 12 գերմանացիներ, 5 պարսիկներ, 1 օս, 2 գնչուներ, 4 հրեաներ, 39 վրացիներ, 4 ավարներ, 1 չեչեն, 8 բաշկիրներ, 1 չուվաշ: Բացի այդ՝ քաղաքում ապրում էին 249 ժամանակավոր բնակիչներ և 745 օտարերկրյա բնակիչներ[2]:

Բնակչության թվակազմի նման անկումը կարելի է բացատրել հիմնականում տնտեսական այն տեղաշարժերով, որ XIX դարի վերջերին կատարվեց Այսրկովկասում: Տնտեսական տեղաշարժերը հիմնականում պայմանավորված էին հետևյալ նոր զարգացումներով ու շարժառիթներով.

ա) Պարսկաստանի հետ Ռուսաստանի արտաքին ապրանքաշրջանառության անկումը, որի հետևանքով Շուշին դադարում է մեծածախ առևտրի կենտրոն լինելուց.

բ) տարածաշրջանի քաղաքների հետ Շուշիի երկաթուղային կապի բացակայությունը.

գ) Դաշտային Ղարաբաղի բնակավայրերի արագ զարգացումը և Շուշիին հակակշիռ ստեղծելու հանգամանքը.

դ) Բաքվի նավթարդյունաբերության աննախադեպ աճը. Բաքուն դարձել էր էժան աշխատուժի կլանման վայր:

1899թ. Բաքվում կար 22.000 բանվոր, 1900 թ.՝ 26.000, իսկ 1901 թ.՝ արդեն 33.000: Հայերը կազմում էին բանվորների 25 տոկոսը, պարսիկները՝ 22, ռուսները՝ 19, լեզգիները՝ 14, Կազանի թաթարները՝ 3, այլազգիները՝ 1[3]: Բաքվի բանվորների թիվը համալրվում էր Արցախից և Սյունիքից տեղափոխված հայերի հաշվին:

Քանի որ Շուշին վաճառաշահ քաղաք էր, հետևաբար առևտրականի հոգեբանություն ունեցող ազգաբնակչության մի մասը, նոր կյանքի և տնտեսական շահավետ հեռանկարների որոնումների ակնկալիքով, հայտնվում էր «սև ոսկու» համբավ ունեցող Բաքվում:

«Տարազ»-ի թղթակիցը տարակուսանքով գրել է. «Զարմանալի իրողութիւն է, որ թուրք ազգաբնակչութիւնը, լինի նա գիւղում թէ քաղաքում, վարակւած չէ գաղթականութեան, եթէ կարելի է ասել, համաճարակ ախտով: Շուշու թուրքերը տե-

---

[1] Իշխանեան Բ. 1917, 117, 121:

[2] Первая всеобщая перепись Российской империи, т. LXIII, Елисаветпольская губерния, под ред. Тройницкого 1904, 2-3.

[3] «Արշալոյս» 1905, օգոստոսի 30, հմ. 2: Բանվորների ըստ ազգային կազմի տոկոսային հարաբերակցության մնացած մասը՝ 16 տոկոսը ամենայն հավանականությամբ թուրքեր էին:

ղից չեն շարժւում. Նրանք հետզհետէ առնում են գաղթող հայերի տները, հետզհետէ բարձրանում են դէպի հայոց թաղը....»[1]: Իսկ «Արձագանք»-ի թղթակիցը նույն ժամանակաշրջանում նկատել է. «Սիւնեաց աշխարհի Շուշի քաղաքը, որի որդիքը այնքան մեծ հակում ունեին ուրիշ քաղաքներ գաղթելու, դարձեալ բովանդակում է իւր պատերի մէջ 19120 հայ 32570 բնակչից, ասել է՝ 60%»[2]:

XIX դարի 80-ական թվականներից՝ պանթուրքիստական գաղափարախոսության ձևավորման շրջանում, թուրք ազգայնականները փորձում էին Այսրկովկասի բնիկ ժողովուրդներին՝ մանավանդ հայերին, դուրս մղել և նրանց տեղը գրավելու ճանապարհով հաստատվել ու տարածաշրջանում թելադրողի դեր ստանձնել:

Դրա արձագանքները հասել էին նաև Շուշի: 1881թ. Հայկունին գրել է. «Նրանց (թուրքերի - Վ.Բ.) տներն ամբողջապէս լերան արևելեան լանջերուն են սփռուած եղել, իսկ այժմ դրանք կամաց-կամաց բարձրանում և բռնում են նաև լերան արևմտեան լանջերն եւս: Ինձ թվում է, որ շատ ժամանակ չանցած՝ շուշեցի հայք ստիպուած պէտք է լինին կամ քաղաքի յետ ընկած անկիւններումը սեղմուիլ, կուչ գալ, կամ թողնել իրանց բնակավայրը և գաղթել»[3]:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Շուշիի ազգաբնակչության թվակազմի աճ է նկատվում: Դա հիմնականում բացատրվում է Շուշիի տնտեսության մեջ արհեստագործության նկատմամբ մանուֆակտուրային, ֆաբրիկային, գործարանային արտադրության զգալի աճով: Շուշեցի գործարարները, դաժան մրցապայքարին դիմանալու նպատակով, տնտեսության մեջ սկսեցին ներդրումներ կատարել և ֆաբրիկաները հագեցնել ժամանակակից տեխնիկայով: Դա որոշակիորեն մեղմեց իրավիճակը: Լուծվեց քաղաքի ազգաբնակչության զբաղվածության հարցը: 1904թ. Շուշիի բնակչության թիվը հասավ 33187-ի, որից 17982-ը (54.2 տոկոսը) հայեր էին, 14548 (43.8 տոկոսը) թուրքեր (թաթարներ) էին, 593-ը (1.8 տոկոսը)՝ ռուսներ, և 64-ը (0.2 տոկոսը)՝ այլ ազգերի ներկայացուցիչներ[4]:

Շուշիի հայության համար նոր արհավիրք դարձան 1905-1906 թվականների հայ-թուրքական ընդհարումները, որոնց հետևանքով հայկական քաղաքամասում ավերվել են 300, իսկ թուրքականում 200 բնակելի տներ, հասարակական շենքեր[5]:

Հարյուրավոր հայեր զոհ գնացին այդ ընդհարումներին, իսկ մյուս մասն էլ նորից վերցրեց գաղթականության ցուպը:

Նկատենք, որ այդ ընդհարումների ժամանակ, վերջին հաշվով, հայերին հաջողվեց ուժի միջոցով խաղաղություն պարտադրել թուրքերին: Այդ ամենով հանդերձ՝ հայության մի մեծ հատված, անհասկանալի ու անբացատրելի տրամաբանությամբ, իր ունեցվածքն ու հայրենիքը թողնում էր թուրքին և բախտ որոնում օտար ափերում:

Ցավալի այդ հարցերին անդրադարձել էր քննարկվող ժամանակաշրջանի հայկական մամուլը: «Արշալոյս» թերթը իր խմբագրականում գրել է. «Շատանալու,

---

[1] «Տարազ» 1891, հմ. 22:
[2] Ա.Կ. 1891, մարտ, N 2, 18:
[3] Հայկունի 2010, 20:
[4] ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 265, թ. 144:
[5] Բալայան Վ. 2017, 343:

տարածվելու ձգտումով զինված թուրքը ոչ մի բանի առաջ կանգ չի առնում: Նա խլում է, գողանում է, հնարում է վեճեր, ... կազմակերպում սուտ վկայություն և կատարում սպանություններ: Կռվի մեջ թուրքը բնազդային բավականություն է ստանում, մինչդեռ հայը՝ վիշտ ու կսկիծ:

Պատմությունը ստեղծել է հայերի մեջ, հակառակ տարածվելու օրենքի, ցրվելու հակում, ... նա երկար չի մտածում, որ պայքարի և տարածվի իր երկրում, այլ դիմում է տարագրության:

Ինքնապաշտպանության զգացմունքը հայի մեջ դարերով ճնշված է եղել: Նա դառել է ավելի վախկոտ, թուրքի ուժը իր երևակայության մեջ բարձրացնող և հակված ավելի փախչելու թուրքերից, քան նրան դիմադրելու: Համարյա առանց պայքարի թուրքերը տարիներ շարունակ նորանոր տարածքներ էին գրավում: Տարածվելու հոսանքը զարգանալով թուրքերի մեջ առաջ բերեց մի քաղաքական վարդապետություն, որ թուրքը ամենից լավն է, և նա պետք է տիրի Անդրկովկասին և ինչու չէ՝ նաև աշխարհին: Այդ ամենը հիմնավորվում էր շարիաթի միջոցով հետևյալ կերպ. Անդրկովկասը առաջ պատկանում էր իսլամ դավանողներին, ուրեմն նա պետք է ազատվի քրիստոնյաներից, ռուսներից և նրանց դաշնակից հայերից, և որ ռուսներին անցնելը հակառակ է շարիաթին, և կատարվածը ապօրինի է ...

Ամեն մի հայ, որ կամենում է իրավացի տեր դառնալ իր կայքին, պարտավոր է տալ նախկին իսլամական պետությանը նշանակյալ հարկը: Իսկ եթե նա այդ հարկը չի տալիս, ուրեմն դա մեղսագործություն է, և ամեն մի մահմեդական ոչ միայն իրավունք ունի, այլև պարտական է խլել նրանից կայքը»[1]:

«Այժմ,- պատմում է Շուշիում ապրող «Արշալոյս»-ի թղթակիցը,- երբ համեմատաբար քաղաքս խաղաղ և ապահով դրութեան մէջ է, քան հայ-թուրքական ընդհարումներից յետոյ, և մանաւանդ Շուշի-Ելլախ ճանապարհը բաց է, հայերը սկսել են մեծ խմբերով գաղթել քաղաքիցս դէպի Կովկասի և Ռուսաստանի աւելի ապահով քաղաքները:

Գաղթում են, ինչպէս կարողանում են ... Եվ այդպիսով գաղթում է ունևորը և չունևորը, տնատէրը և ոչ տնատէրը, վաճառականն ու արհեստավորը:

Գաղթում է նա, ով շատ հեշտութեամբ կարող է ապրել ուրիշ քաղաքներում, բայց և գաղթում է նա, ով զրկուած է ամեն ինչից և ամբողջ յոյսը դրել է իր բազկի վրայ՝ թե իրան և թե իր բազմամարդ ընտանիքը կերակրելու համար: Հատկապես կարելի է ասել, որ գաղթել են համարյա բոլոր ունևոր և միջին դասակարգերը: Մնում են, ուրեմն, ստորին (արհեստաւոր և բանւոր) դասակարգերը, որոնք առանց ունևորների գոյութիւն ունենալ չեն կարող, որովհետև ունևորն է գլխաւորապես նրանց աշխատանք, գործ, ապրելու միջոց տալիս: Մարգարէ չպետք է լինել գուշակելու համար, որ վաղը, միւս օրը այդ դասակարգերն էլ, աշխատանք չգտնելու պատճառաւ, դիմեն օտար քաղաքները»[2]:

Այս պայմաններում Շուշիի հայության թիվը կտրուկ պակասեց: Եթե հայ-թաթարական ընդհարումների նախօրյակին՝ 1904թ., քաղաքում ապրում էր 17982

[1] Արշալոյս 1906, մարտի 23, N 63:
[2] Արշալոյս 1905, հոկտեմբերի 13, N 37:

հայ, ապա 1906 թ. այդ թիվը պակասեց 5184-ով և հասավ 12798-ի[1]:

Մի կարճ ժամանակահատված, երբ 1907 թվականից Ռուսական կայսրությունում կյանքը որոշակիորեն կարգավորվեց, մինչև 1917թ. իրադարձությունները, Շուշին նորից ապրեց իր բնականոն կյանքով: Դա իր բարերար ազդեցությունն ունեցավ ժողովրդագրական գործընթացների վրա: 1914թ. Շուշիի ազգաբնակչության թիվը հասավ 42.130 մարդու, որից 22.004 (52.2 տոկոսը) հայեր էին, 18.864-ը (44.7 տոկոսը)՝ թուրքեր (թաթարներ), 1188-ը (2.8 տոկոսը)՝ ռուսներ, և 74-ը՝ այլ ազգերի ներկայացուցիչներ[2]:

1916թ. Շուշիում ապրում էր 43.864 մարդ[3]: Մեկ այլ հեղինակի տվյալների համաձայն՝ Շուշիում 43869 բնակիչներից 23.396-ը (53.33 տոկոսը) հայեր էին, 19121-ը՝ մահմեդականներ, 1249-ը՝ ռուսներ, մյուսները՝ վրացիներ, լեռնականներ, եվրոպացիներ[4]: Համարյա նույն տվյալներն են պարունակվում անգլիական աղբյուրներում[5]: Եղիշե Իշխանյանի հաշվարկներով՝ քաղաքում 1918թ. ապրում էր 32,000 հայ[6]:

1886 թվականից մինչև 1914 թվականն ընկած ժամանակահատվածում Այսրկովկասի քաղաքների ժողովրդագրական գործընթացների խորապատկերի վրա տեսանելի են Շուշիի համանման զարգացումների արդյունքները: Ստորև ներկայացրած աղյուսակը[7] պատմում է դրա մասին:

Անդրկովկասի քաղաքները
Թիֆլիսի նահանգ

	Թվականներ	1886	1897	1914	1886-1914
1	Թիֆլիս	78445	159590	344629	339,32%
2	Ախալքալաք	4303	5440	7484	73,92%
3	Ախալցխա	16116	15357	23924	50,84%
4	Գորի	7243	10269	25635	254,20%
5	Դուշեթ	2027	2566	2213	9,17%
6	Սղնախ	10604	8994	17690	66,80%
7	Թելավ	11214	13929	13231	35,82%
8	Զաքաթալա	1231	3009	4000	224,13%
Ընդամենը՝		131183	21151	440826	236.04%

Քութայիսի նահանգ

1	Քութայիս	22643	32476	57917	156,00%
2	Բաթում	14803	28508	38615	160,86%

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 265, թ. 144:
[2] Кавказский календарь на 1915 г. 1914, 81-214.
[3] Кавказский календарь на 1917г. 1916, 190.
[4] Ալեքսանյան Հ. 2007, 116:
[5] Armenia, political and Ethnic Boundaries 1878-1948, 1998, 447.
[6] Իշխանեան Ե. 1999, 321:
[7] Իշխանեան Բ. 1917, 117-121:

3	Օզուրգեթ	1472	4710	8580	482,88%
4	Փոթի	4709	7346	19667	317,64%
5	Սուխում	412	7998	46530	11193,68%
6	Ռեդուդ Կալե	382	780	802	109,98%
Ընդամենը՝		44421	81818	172111	287,70%

Երևանի նահանգ

1	Երևան	14738	29006	51286	248,00%
2	Ալեքսանդրապոլ	24230	30616	54316	116,80%
3	Նախիջևան	6939	8790	8945	29,00%
4	Օրդուբադ	4199	4611	5655	34,67%
5	Նոր Բայազետ	7488	8486	13290	77,50%
Ընդամենը՝		47594	81509	130492	174,15%

Գանձակի նահանգ

1	Գանձակ	20294	33625	56305	177,44%
2	Նուխի	25894	24734	54678	111,12%
3	Շուշի	26800	25881	42568	60,00%
Ընդամենը՝		72994	84210	153551	112,00%

Բաքվի նահանգ

1	Բաքու	86611	111904	248812	187,27%
2	Ղուբա	13917	15363	13459	-3,40%
3	Լենքորան	4222	8733	13967	223,70%
4	Շամախի	22139	20007	27527	24,07%
Ընդամենը՝		126889	156007	303765	147,28%

1920թ. մարտի 23-ի եղեռնագործությունից հետո 10000 ավելի հայեր զոհվեցին, ողջ մնացածներն էլ հիմնականում լքեցին քաղաքը:

Մուսավաթական թուրքերի կատարած գործն իր ավարտին հասցրին բոլշևիկ գործիչները: 1921թ. 400 շուշեցիներ դիմում են Լեռնային Ղարաբաղի կենտգործկոմի նախագահ Արմենակ Ղարագյոզյանին՝ խնդրելով թույլ տալ վերադառնալ հայրենի քաղաք, վերաշինել տները և բնակվել այնտեղ: Խորհրդային Ադրբեջանի դրածոն մերժեց այդ խնդրանքը: Դրա փոխարեն հարևան թուրքաբնակ և քրդաբնակ գյուղերից սկսեցին մահմեդականների տեղափոխել Շուշի և հայերի՝ շուրջ 800 երկհարկանի կիսավեր տները տրամադրեցին նրանց[1]:

[1] Կիսիբեկյան Ա. 2011, հ.1, 7; հ. 2, 143:

Շուշին լիովին հայաթափելուց հետո խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունն արգելեց այն դարձնել ԼՂԻՄ կենտրոն: 1921թ. հուլիսի 5-ին, Կովկասյան բյուրոյի տխրահռչակ որոշումը կայացնելու ժամանակ, Նարիմանովը պնդում էր, որ Շուշիի փոխարեն Խանքենդի գյուղը դարձնեն ԼՂԻՄ վարչական կենտրոն:

Ավելին, ԼՂԻՄ սահմանները ճշտող հանձնաժողովի անդամ Միրջաֆար Բաղիրովը 1923թ. հոկտեմբերի 8-ին ԱԿ(բ)Կ Կենտկոմին հայտնում է, որ անհրաժեշտ է Բերդաձորի և Ստեփանակերտի արանքում գտնվող թուրքաբնակ Խալփալու, Զարսլու, Մուսուլմանլար գյուղերը, ինչպես նաև Շուշի քաղաքն ընդգրկել Քրդստանի օկրուգի կազմի մեջ և այն դարձնել նոր ձևավորվող վարչական միավորի կենտրոն[1]: Միայն արցախահայության պայքարի շնորհիվ այդ ծրագիրը ձախողվեց:

1921թ. Շուշին ուներ 9223 բնակիչ, որոնցից 8894-ը թուրքեր էին: 1923թ. Շուշիում ապրում էր 6965, 1926թ.՝ 5104, 1939թ.՝ 5428, իսկ 1959թ.՝ 6100 մարդ[2]:

1982թ. հունվարի 14-ին Վագիֆի դամբարանի բացմանը մասնակցելու և դրան նվիրված միջոցառումներն անձամբ ղեկավարելու համար Հ. Ալիևը 300 հոգուց բաղկացած մի շքախմբով ժամանել էր Ստեփանակերտ և Շուշի[3]:

Դամբարանի բացման ժամանակ Հ. Ալիևը, երևակայությամբ համեմված իր ճառում, նշել է. «Այստեղ (Շուշիում) է սկիզբ առել Ադրբեջանի պատմությունը, և այստեղ է, որ նա պիտի շարունակի զարգանալ»[4]:

Դեռևս 1968թ. բանաստեղծ Սամեդ Վուրղունի տղան՝ Վագիֆ Վեքիլովը, մոլլա Փանահ Վագիֆին նվիրված «Ես ճշմարտություն եմ որոնել» հոդվածում գրել է, որ Ղարաբաղն այն հողն է, ուր ադրբեջանցիները տեղ են հատկացրել և հաց ու ջուր տվել եղբայր հայերին[5]:

Ահա այդ զառանցական մտավարժանքների պայմաններում Ադրբեջանը փորձում էր հզորացնել խորհրդային տարիներին թուրքաբնակ դարձած Շուշին:

Շուշիի թուրք (ադրբեջանցի) ազգաբնակչությունը տարեցտարի աճում էր: 1988թ. քաղաքում ապրում էր 13500 մարդ, որի 15 տոկոսը՝ մոտ 2200 հոգի, հայեր էին, իսկ մնացածը՝ թուրքեր(ադրբեջանցիներ)[6]:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարի առաջին իսկ օրերից սկսած՝ Շուշիի հայությանը նորից արտաքսեցին իրենց հայրենի բնակավայրից: Դրա փոխարեն Խորհրդային Հայաստանից տեղափոխված թուրքերով (ադրբեջանցիներով) սկսեցին վերաբնակեցնել քաղաքը:

Պատահական չէ, որ Շուշիի ազգաբնակչությունը 1989թ. հասել էր 16.000-ի, որից 15710-ը ադրբեջանցիներ (թուրքեր) էին և ընդամենը 290-ը՝ հայեր[7]:

Քաղաքն ազատագրելուց հետո առաջին հերթին իրենց հայրենի օջախներ վերադարձավ XX դարի 80-ական թվականներին բերդաքաղաքում ապրած շուշեցիների մի մասը: Նրանց հետ միասին քաղաքում հաստատվեցին Ադրբեջանից

[1] WWW.irs-az.com/100331140534plf, Վ.Բալայան 2012, 178:
[2] Տեր-Գասպարյան Ռ 1993, 83: Бакинский рабочий 1959, 24 сентября; Кочарян Г. 1925, 9.
[3] Բեգլարյան Հ. 2005, 467:
[4] Բեգլարյան Հ. 2005, 442:
[5] Молодеж Азербайджана 1968, 21 сентября, N 112.
[6] Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ. 2004, 26:
[7] ethno-kavkaz.narod.ru/rnkarabakh.htm/.

բռնագաղթվածները և պատերազմական գործողությունների հետևանքով ԼՂՀ-ից տեղահանված քաղաքացիները: Հետագա տարիներին Շուշիում վերաբնակվել են տարբեր երկրների և բնակավայրերի հայ քաղաքացիներ: 1996թ. Շուշիում հաստատված բնակչության ներէթնիկ խմբերի հետևյալ պատկերի մասին է պատմում ներքոհիշյալ աղյուսակը[1]:

Ներէթնիկ խումբ	ընտանիք	տոկոսը
շուշեցիներ	221	20,7
ստեփանակերտցիներ	302	28,3
բռնագաղթվածներ Ադրբեջանից	222	21,0
տեղահանվածներ ԼՂՀ շրջաններից	200	18,7
վերաբնակիչներ ՀՀ-ից	121	11,3
Ընդամենը	1066	100,0

Նախկին ժամանակների համեմատ՝ քաղաքը չնայած նոսր է բնակեցված, այնուամենայնիվ տարաբնակեցման որոշ եղանակների ազդեցությամբ գրեթե ամբողջ տարածքը զբաղեցվել է: Հետպատերազմյան տարիներից առայսօր քաղաքի վերաբնակեցման և բնական աճի մասին պատկերացում կազմում ենք ներքոհիշյալ աղյուսակի[2] միջոցով:

տարեթիվ	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005*	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Շուշիի բնակչության թիվը	3609	3609	2900	2600	2745	2893	2994	3052	3119	3191	3320	3429	3599	3880	4136	4247	4281	4310	4233	4246

*2005 թ. Մարդահամարի տվյալներով

Քաղաքի առանձնատներում ապրող բնակիչների մի մասն իր կարիքների համար սահմանափակ չափով զբաղվում է հողագործությամբ ու անասնապահությամբ:

Շուշիի ազգաբնակչությունը հիմնականում ներգրավված է պետական հաստատությունների աշխատանքներում: Զգալի թիվ են կազմում զինծառայողները:

Շուշիում 2010թ. կար 1419 տուն, 3880 բնակիչ[3], 2018թ.՝ 1619 տուն, 4446 բնակիչ[4]:

Եզրակացություններ

Մինչև XVIII դարի 50-ական թվականները Շուշին ազգային հիմքում միատարր հայկական բնակավայր էր:

Ղարաբաղի խանության գոյության շրջանում Շուշի սկսեցին թափանցել պար-

[1] Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ. 2004, 31:
[2] Տվյալները մեզ է տրամադրել ԼՂՀ վիճակագրական ազգային ծառայությունը:
[3] ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
[4] ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ. 2018, էջ 5:

սիկներ, թուրքեր, քրդեր, որոնց, հավաքական իմաստով, աղբյուրներն անվանում էին մահմեդականներ:

Ռուսական տիրապետության առաջին տարիներին մահմեդական բեկերի նկատմամբ ցարական արքունիքի ունեցած բարեհաճ վերաբերմունքի հետևանքով թուրքերի, քրդերի և պարսիկների թվաքանակը Շուշիում սկսեց աճել:

1830-ական թվականների սկզբներից բերդավանի տնտեսական վերելքի և դրան հաջորդած կրթամշակութային, հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացման պայմաններում հայ ազգաբնակչության թվաքանակը մինչև 1920թ. մարտյան ջարդերը անշեղ աճում էր և գերազանցում մահմեդականների, մասնավորապես թուրք-թաթարների թվաքանակը:

1920թ. մարտյան ջարդերից հետո և դրան հաջորդած խորհրդային տարիներին Ադրբեջանի հայատյաց քաղաքականության հետևանքով Շուշիի հայ բնակիչների թվաքանակը կտրուկ նվազեց:

1992թ. մայիսի 9-ին Շուշին ազատագրվելուց հետո հայ ազգաբնակչությունը վերահաստատվեց բերդաքաղաքում: Շուշին վերականգնեց իր հայեցի կերպարը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալեքսանյան Հ. 2007, Շուշիի և Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը 1916-1926թթ., Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 370 էջ + 1 էջ ներդիր:
2. ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, Ստեփանակերտ, 2018, «ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն», 10 էջ:
3. Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազգային-ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, Սոնա, 2012, 416 էջ:
4. Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, Զանգակ, 2017, 560 էջ + 32 էջ ներդիր:
5. Բեգլարյան Հ. 2005, Արցախնամե, գիրք 4-րդ, Ստեփանակերտ, «Սոնա», 648 էջ:
6. Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ. 2004, Շուշին 1992-2002թթ., Հայերի վերադարձը ազատագրված քաղաք (ազգագրական ակնարկ), Երևան, «Հեղինակային հրատ», 96 էջ:
7. Թաղիադեանց Մ., 1847, Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. Ա, Կալկաթա, «Ի տպարանի Արարատեան ընկերութեան», 382 էջ:
8. Իշխանեան Ե., 1999, Լեռնային Ղարաբաղ (197-1920), Երևան, «Հայաստան», 1999, 730 էջ:
9. Կիսիբեկյան Ա. 2011, Հուշեր, հ. 1, Երևան, «Առասպել», 519 էջ:
10. Կիսիբեկյան Ա. 2011, Հուշեր, հ. 2, Երևան, «Առասպել», 606 էջ:
11. Հայկունի (Եղիշե Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց), Ուղեգնացական ակնարկներ, Երևան, 2010, 316 էջ:
12. Տեր-Գասպարյան Ռ. 1993, Շուշի, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 125 էջ:
13. Ա. Կ. 1891, Անդրկովկասի քաղաքների հայ ազգաբնակչութիւնը, Արձագանք, Թիֆլիս, մարտ, N 2:

14. Իշխանեան Բ., Ժողովուրդների տերիտորիական բաժանումները Անդրկովկասում, Գործ, Բաքու, նոյեմբեր-դեկտեմբեր, N 11-12:
15. ԱրՊՀ հայագիտական կենտրոն:
16. ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 43, գ. 2604, ց. 15, գ. 265, թ. 144, ֆ. 57, ց. 1, գ. 118, թ. 89-93:
17. ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 163, գ. 51-52:
18. Արշալոյս 1905, Թիֆլիս, օգոստոսի 30, N 2:
19. Արշալոյս 1905, Թիֆլիս, հոկտեմբերի 13, N 37:
20. Արշալոյս 1906, Թիֆլիս, մարտի 23, N 63:
21. Տարազ 1891, Թիֆլիս, N 22:
22. Кавказский календарь на 1856 г. 1855, отдел III, Издании отъ канцелярии Кавказского намиъстника.- Тифлись, 1855, 1518 с.
23. Кавказский календарь на 1915г. 1914, Тифлис, «Тип. Глав. Упр. Зак. Краей», 1200 с.
24. Кавказский календарь на 1917г. 1916, С прил. Карты Кавказа, Азиатской Турции и Персии /Под ред. Н. П. Стельмащука; Издан по распоряжению Наместника его Императорского Величиства на Кавказе.- Тифлись, 1916, 1075 с.
25. Кочарян Г. 1925, Нагорный Карабах, Баку, Общество обследования и изучения Азербайджана, 68 с.
26. Описание Карабахской провинции составленное в 1823 г. Действительном статским советником Могилевском и полковником Ермоловом 2-ым, 420 с.
27. Первая всеобщая перепись Российской империи, Т. CX III, Елисаветпольская губерния, 1904, под ред. Тройницкого, издание Центрального статистического комитета Министерства внутренних дел, 184 с.
28. Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г. 1888, Тифлис, Тип. И. Мартиросянца», 473 с.
29. Бакинский рабочий 1959, Баку, 24 сентября.
30. Молодеж Азербайджана 1968, Баку, 21 сентября, N112.
31. Cthno-Kavkaz.narox. ru (rnkarabakh. htm).

Ամփոփում

Ժողովրդագրական գործընթացները Շուշիում XIX դարից մինչև մեր օրերը

Վահրամ Բալայան

Մինչև XVIII դարի 50-ական թվականները Շուշին ազգային հիմքում միատարր հայկական բնակավայր էր:

Ղարաբաղի խանության գոյության շրջանում Շուշի սկսեցին թափանցել պարսիկներ, թուրքեր, քրդեր, որոնց, հավաքական իմաստով, աղբյուրներն անվանում էին մահմեդականներ:

Ռուսական տիրապետության առաջին տարիներին մահմեդական բեկերի նկատմամբ

ցարական արքունիքի ունեցած բարեհաճ վերաբերմունքի հետևանքով թուրքերի, քրդերի և պարսիկների թվաքանակը Շուշիում սկսեց աճել:

1830-ական թվականների սկզբներից բերդավանի տնտեսական վերելքի և դրան հաջորդած կրթամշակութային, հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացման պայմաններում հայ ազգաբնակչության թվաքանակը մինչև 1920թ. մարտյան ջարդերը անշեղ աճում էր և գերազանցում մահմեդականների, մասնավորապես թուրք-թաթարների թվաքանակը:

1920թ. մարտյան ջարդերից հետո և դրան հաջորդած խորհրդային տարիներին Ադրբեջանի հայատյաց քաղաքականության հետևանքով Շուշիի բնակիչների՝ հայերի թվաքանակը կտրուկ նվազեց:

1991թ. մայիսի 9-ին Շուշին ազատագրվելուց հետո հայ ազգաբնակչությունը վերահաստատվեց բերդաքաղաքում: Շուշին վերականգնեց իր հայեցի կերպարը:

Հիմնաբառեր. *Շուշի, հայեր, թուրքեր, թաթարներ, քրդեր, ռուսներ, ազգային, թվաքանակ, աճեց, նվազեց, բնակիչներ:*

Резюме

Демографические процессы в Шуши с XIX века до наших дней

Ваграм Балаян

До 50-х годов XVIII в. Шуши был населенным пунктом, где проживали исключительно армяне.

В период существования Карабахского ханства в Шуши начали проникать персы, турки, курды, которых собирательно называли мусульманами.

В первые годы русского господства вследствие доброжелательного отношения царского двора к мусульманским бекам численность турок, курдов и персов в Шуши начала расти.

С начала 1830-х годов в условиях экономического роста и последующего оживления культурно-образовательной и общественно-политической жизни крепостного поселения численность армянского населения до мартовских погромов 1920 г. неуклонно росла и превысила мусульманское, в частности тюрко-татарское население.

После мартовских погромов 1920 г. и в последующие советские годы в результате армянофобской политики Азербайджана армянское население в Шуши резко сократилось.

После освобождение Шуши 9 мая 1992 г. армянское население вернулось в город-крепость. Шуши восстановил свой армянский облик.

Ключевые слова: *Шуши, армяне, турки, татары, курды, русские, национальный, численность, увеличилась, уменьшилась (сократилась), жители.*

Abstract

Demographic Processes in Shushi from the XIX Century to the Present Day

Vahram Balayan

Until 1950s of the XVIII century Shushi was a homogeneous settlement on a national basis (ethnicity).

During the existence of Karabakh Khanate the Persian, Turkish and Kurdish people who in a collective sense were named Muslims by some sources, began to penetrate into Shushi.

Due to the benevolent attitude of the Tsarist Courtyard towards the Muslim beks during the first years of Russian domination the number of Turks, Kurds and Persians began to increase in Shushi.

In the conditions of Berdavan's economic growth from the beginning of 1830s which was followed by the activation of educational-cultural, social-political life, the number of the Armenian population was steadily increasing, surpassing the number of Muslims, particularly Turks and Tatars till the massacres of March in 1920.

After the massacres of 1920 and in the Soviet years that followed, the number of Armenians in Shushi was dramatically decreased, as a result of Azerbaijanis' anti-Armenian policy.

After the liberation of Shushi on May 9, 1992, the Armenian population was re-established in the city-fortress. Shushi restored its Armenian image.

Keywords: *Shushi, Armenians, Turks, Tatars, Kurds, Russians, national, number, increased, decreased, population.*

ԱԵԼԻՏԱ ԳՈՒՐԳԵՆԻ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ
Էլ. հասցե՝ aelita.dolukhanyan@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 10.04.2021, գրախոսվել է 10.04.2021, ընդունվել է տպագրության 20.04.2021

ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒ ԳՐԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ՝ ԸՍՏ ՊԱՏՄԱԲԱՆ ԱՍԱՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ

Խորհրդային միության կառավարության սխալ տարածքային բաժանման հետևանքով պատմական Մեծ Հայքից, այսինքն՝ Հայաստանից անջատվում են Նախիջևանի ողջ շրջանը, Լեռնային, Դաշտային Ղարաբաղը և հանձնվում Ադրբեջանին: Դրանից բացի՝ Թուրքիային է հանձնվում հսկայածավալ Կարսի մարզը, որում նաև Բագրատունիների հռչակավոր Անի մայրաքաղաքն էր: Այսինքն՝ բուն ՀՍՍՌ-ին մնում է պատմական Հայաստանի մեկ տասներորդ մասը և այն, ինչ որպես Հայկական նահանգ 1828-ին մտել էր Ռուսական կայսրության մեջ, խիստ փոքրացված ձևով է դառնում ներկա Հայաստանի տարածք:

Թուրքերը, որոնք իրենց կոչեցին ադրբեջանցիներ (երկիրն էլ 1918-ից կոչվեց Ադրբեջան և աշխարհի քաղաքական քարտեզի վրա երևաց միայն 1918-ից սկսած), եռանդուն ձևով սկսեցին հալածել հայերին ու հայաթափ անել իրենց խորհրդային տարածքում հայտնված հայկական գյուղերն ու քաղաքները: Ահա մի փաստ Ասատուր Մնացականյանի «Նաղաշ Հովնաթան «Տաղեր» գրքի առաջաբանից. «1961 թվականի հոկտեմբերին, երբ Շոռոթի վերջին բնակիչները դեռևս չէին լքել իրենց բնօրրանը, Նաղաշ Հովնաթանի ծննդյան 300-ամյակին նվիրված հանդիսությունների կապակցությամբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի մի խումբ աշխատակիցներ եղան Շոռոթում և կամեցան պսակ դնել տապանին: Որոնումներն իզուր անցան: Տարեցները հիշում էին, որ տապանաքարը մինչև

1920-ական թվականների վերջերը պահպանված է եղել ... Վերստին պետք եղավ մխիթարվել այն ճշմարտությամբ, թե իսկական հուշարձանը հոբելյարի թողած ժառանգությունն է»[1]:

Թուրքերի և ադրբեջանցիների կողմից հայկական պատմական հուշարձանների ոչնչացումն անպատիժ կատարվում է դարեր շարունակ: Վերցնենք Ռոբերտ Կըր Պոռթերի հուշերը (1823թ.) Անիի ավերակների ճարտարապետական հիասքանչ լինելու մասին և հիմա այցելենք Անի. անգլիացի ճանապարհորդի նկարագրած շքեղ շինությունները ուղղակի չեք գտնի, թուրքերը դրանք քանդել են: Նույնը կատարվել է ամբողջ Արևմտահայաստանի ու Կիլիկյան Հայաստանի տարածքում: Վերջինիս վերաբերյալ ֆրանսիացի հայագետ Վիկտոր Լանգլուան ահազանգում է Ֆրանսիայի թագավոր Նապոլեոն Երրորդին, որի միջոցներով հնագիտական պեղումների էր մեկնել 1852-1853 թվականների ընթացքում[2]:

Այս բոլոր փաստերը հայտնի էին հրաշալի միջնադարագետ, պատմաբան, բանասեր Ասատուր Մնացականյանին, որը չլռեց և խորհրդային տարիներին՝ XX դարի II կեսին, հանդես եկավ հայոց պատմությունն ու անցյալը նենգափոխող ադրբեջանցի գիտնականների՝ մասնավորապես Զիա Բունիաթովի քննադատությամբ և հոդվածներով, և գրքերով:

Այսօր այդ երկու գրքերն առավել քան արդիական են: Դրանք են՝ ա) «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը», Երևան, 1966, 286 էջ, բ) «О литературе Кавказской Албании», Ереван, 1969, Изд. АН Арм. ССР, 220 стр.

Մնացականյանի նույն գրքի հայերեն ու ռուսերեն տարբերակները կարևոր են: Հայերենը՝ որպեսզի հայերը գիտական փաստերով իմանան իրենց իրավունքները, ռուսերենը՝ մեր իրավունքներն իմանան ռուսերենով կարդացող խորհրդային գիտնականները, նաև կրթված հանրությունը:

Հայ ժողովրդի պատմությունից հայտնի է, որ 387-ին Բյուզանդիան ու Պարսկաստանը Հայաստանը բաժանում են իրենց միջև: Երկրի Արևելյան մասն անցնում է Պարսկաստանին, ուր Արշակունիները շարունակում են թագավորել մինչև 428 թվականը: Սակայն հայկական պետականությունը թուլացնելու նպատակով պարսիկները Հայաստանի Արևելյան կողմի մի շարք նահանգներ՝ Ուտիքը, Արցախը, Փայտակարանը հանձնում են Աղվանքին: Այս փաստը գիտեն նաև մերօրյա օտարազգի հայագետները:

Ֆրանսիացի հայագետ Ժան-Պիեռ Մահեն հատուկ հոդված է նվիրել Աղվանքի արքա Վաչագան Բարեպաշտին, որը Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի հիմնական դեմքն է: Իր այս հոդվածում Մահեն նշում է, թե Մեծ Հայքի վաղնջական տարածքները՝ Ուտիքը, Արցախը և Փայտակարանի մի մասը հանձնվեցին Աղվանքին: Սասանյան Պերոզը սպանվում է հեփթաղներից, և նրա փոխարեն Պարսկաստանի գահին նստում է Վաղարշը, որը շտապում է կնքել Նվարսակի (484թ.) պայմանագիրը: Այդ պայմանագրով Վահան Մամիկոնյանը դառնում է Արևելյան Հայաստանի մարզպան, փաստորեն երկրի իրավական տերը, և Պարսկաստանը խոստանում է չխառնվել Հայաստանի ներ-

[1] Նաղաշ Հովնաթան 1983, 6-7:
[2] Տես Langlois V. 1855.

քին գործերին: Այդ ժամանակահատվածում Աղվանքը սերտ կապերի մեջ էր Մեծ Հայքի հետ: Մահեն հիշեցնում է, որ Մաշտոցն այբուբեն էր ստեղծել նաև աղվանների համար[1]:

Այս հարցերին անդրադառնում է Ասատուր Մնացականյանը՝ տալով սպառիչ գիտական պատասխաններ: Նախքան այդ պատասխաններին անդրադառնալը դիմենք գիտական մեծ հեղինակություն ունեցող հանրագիտարաններում եղած՝ Հայաստանի, Թուրքիայի մասին փաստեր պարունակող հոդվածներին:

Այժմ Ադրբեջանի նախագահը, խախտելով կրթված մարդուն հատուկ բառապաշարը, հայերին կոչում է «մունդառ էրմանի», Երևանն ու Արցախը համարում իրենցը: Թող նա բացի հետևյալ հանրագիտարանները:

1988-ին Փարիզում լույս տեսած «Petit Robert – 2»[2] հանրագիտարանի հոդվածը. «Arménie» «Hayastan» նախապես կոչվել է Ուրարտու, սկզբնավորվել է Վանա լճի շրջակայքում... Տիգրանի ժամանակ Հայաստանը հզոր պետություն էր՝ կազմված Մեծ և Փոքր Հայքերից: 1828-ին Ռուսական կայսրության մեջ մտցնելուց հետո Հայաստանի մայրաքաղաք դառնում է Երևանը: Տրդատ Երրորդի ժամանակ (294-324) Հայաստանն առաջինը ողջ աշխարհում քրիստոնեությունը հռչակել է պետական կրոն, և Գրիգոր Լուսավորիչը դարձել է առաջին կաթողիկոսը: Թուրքերի մասին ասվում է, որ նրանք Հայաստանի տարածք են եկել XI դարի սկզբին[3]:

«Ադրբեջանցի» անուն հնագույն ժամանակներում Հայաստանի պատմության մեջ չի հիշատակվում:

Բրոկհաուզ, Էֆրոնի բառարանում Հայաստանը ներկայացված է որպես վաղնջական պատմություն ունեցող լեռնային երկիր, որն ընկած էր Սև ու Կասպից ծովերի արանքում[4]: Նույն բառարանում չկա Ադրբեջան պետություն: Բրոկհաուզը, Էֆրոնը նշում են, թե Ադրբեջանը Պարսկաստանի մի մասն է՝ Թավրիզ կենտրոնով, այն Պարսկաստանի ամենահյուսիսարևմտյան հատվածն է[5]:

Ֆրանսիական հայագիտության սկզբնավորող Սեն-Մարտենի 1818-ին Փարիզում լույս տեսած «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» կոթողային աշխատության I հատորում Արցախը, Գանձակը և Հայաստանի Արևելյան կողմի բոլոր գավառները նկարագրվում են որպես պապենական հայկական տարածքներ՝ սկսած վաղնջական ժամանակներից:

Սեն-Մարտենն իր գրքում նշում է, թե լեռնային Արցախում դեռ XIX դարի սկզբին կային փոքրիկ ինքնուրույն հայկական իշխանություններ, որոնց տերերն իրենց կոչում էին մելիքներ, այսինքն՝ փոքրիկ թագավորներ[6]:

Նա նաև Արցախ նահանգի մասին խոսելիս հիշեցնում է, թե իր օրերում, այսինքն՝ 1818-ին, Արցախի մեծ մասն արդեն Ռուսական կայսրության կազմում էր:

Հայագետը մեզ է ավանդում նաև Գանձակ քաղաքի անվան բացատրությունը:

---

[1] Դոլուխանյան Ա. 2020, 286:
[2] «Petit-Robert - 2» 1988, 104.
[3] «Petit-Robert - 2» 115.
[4] Брокгауз ф. Ефрон И. 2012, 71.
[5] Հմմտ. 21:
[6] Saint Martin A. 1818, 34.

Այն առաջացել է «գանձ» բառից, որովհետև հայ թագավորներն իրենց գանձերը պահում էին այդ քաղաքում[1]:

Կարելի է նմանօրինակ բազմաթիվ փաստեր բերել, սակայն վերադառնանք Ասատուր Մնացականյանի գրքին, որը բազմակողմանի փաստերով ապացուցում է, թե որքան սին են Զիա Բունիաթովի և նրա մերօրյա հետևորդների նենգափոխումները:

Ասատուր Մնացականյանը զուգադրաբար ներկայացնում է Աղվանքի ու Մեծ Հայքի պատմությունն ու գրականությունը՝ սկսած V դարից մինչև XIII դարը ներառյալ՝ Մեսրոպ Մաշտոցից (V դար) մինչև Կիրակոս Գանձակեցի (XIII դար):

Հենվելով Կորյունի, Մովսես Խորենացու, Մովսես Կաղանկատվացու երկերի ընձեռած փաստերի վրա՝ Մնացականյանը ներկայացնում է Մաշտոցի աղվանական գրերը ստեղծելու իրողությունը և ցավով նկատում, թե այդ գրերով ստեղծված որևէ աղվանական գրական կամ կրոնական գործ չի հասել մեր օրերը:

Արդեն V դարից Աղվանքում երկրի ներքին կառավարումն ու տնտեսությունը անցնում է հայերի ձեռքը: Գրագետ մարդիկ, չնայած արդեն կար Մաշտոցի ստեղծած աղվանական գիրը, գրում ու խոսում էին հայերեն[2]:

Արցախը, Ուտիքը, Փայտակարանը և մյուս հայկական գավառները Մեծ Հայքի կազմում են եղել մինչև Արտաշես Առաջինի ժամանակները: Ստրաբոնի պատմության փաստերը նենգափոխելը ոչինչ չի նշանակում: Ստրաբոնը նշում է, թե Արցախը և Ուտիքը հայախոս գավառներ էին[3]:

Ի դեպ, նշանավոր հայագետ Մարի Բրոսսեն, որն առաջինը ֆրանսերենով հրատարակեց Ստեփանոս Օրբելյանի ամբողջական «Սյունիքի պատմությունը», մի առանձին գիրք նվիրեց այդ պատմությանը՝ իր առաջաբանով, ծանոթագրություններով, որոնցում շատ մեծ տեղ են զբաղեցնում այն հատվածները, որոնք վերաբերում են Արցախին: Դրանցում, բացի հայկական իրողություններից, աղվանականի մասին և այդ ժողովրդի ստեղծած գրականության վերաբերյալ ոչինչ չենք գտնում[4]:

Աս. Մնացականյանը երկար խոսում է VII դարի հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի մասին, որը, ըստ Զիա Բունիաթովի ու ներկա ադրբեջանական գիտնականների, իր պատմությունը գրել է աղվաներեն, հետո հայերը թարգմանել են գրաբար՝ ոչնչացնելով բոլոր բնագրերը, ինչպես նաև աղվանական ողջ գրականությունը: Ահա այդ իսկ պատճառով այնպիսի «աղվանացի» նշանավոր մատենագիրներ, ինչպիսիք են Մովսես Կաղանկատվացին, Դավթակ Քերթողը, Համամ Արևելցին, Մխիթար Գոշը, Կիրակոս Գանձակեցին, իբր հիմա չունեն իրենց աղվաներեն բնագրերը, այլ կան միայն հայերեն թարգմանվածները:

Մնացականյանը շատ ճիշտ նկատում է, թե վերոհիշյալ մատենագիրների այսպես կոչված թարգմանություններում չկան աղվանական լեզվի հետքեր, որը բնական է թարգմանությունների համար:

---

[1] Saint Martin A. 1818, 150:
[2] Мнацаканян А. 1969, 16.
[3] Мнацаканян А. 19:
[4] Հմմտ. Stéphanos Orbelian 1864,1866.

Կամ ինչու՞ Մովսես Կաղանկատվացին չի օգտագործել որևէ աղվան մատենագրի գործ, մինչդեռ բարեխղճորեն թվարկում է այն բազմաքանակ հայկական աղբյուրները, որոնցից օգտվել է իր երկը շարադրելիս: Ավելին՝ պատմաբանը փաստերով հիմնավորում է, որ աղվանական եկեղեցու պաշտոնական լեզուն եղել է հայերենը[1]:

Մանրամասն ներկայացվում է VII դարի բանաստեղծ Դավթակ Քերթողի «Ողբք ի մահն Ջևանշիր մեծի իշխանին» քերթվածը: Սա հրաշալի մի գործ է, որը պահպանված է Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» մատյանում՝ քերթվածի ստեղծման մանրամասներով[2]:

Ըստ Մնացականյանի՝ Դավթակ Քերթողը եղել է հայ և իր ողբը գրել է մայրենի լեզվով: Ողբը գրված է հայերենի այբբենակարգով՝ Ա-ից մինչև Ք: Ըստ որում՝ օգտագործված են հայերենի բոլոր 36 տառերը: Ջևանշիրն էլ եղել է հայացված պարսկական Սասանյան դինաստիայի շառավիղ՝ հայասեր ու հայամետ[3]:

1986 թվականին գրականագետ Լևոն Մկրտչյանը, որը խիստ շնորհակալ գործ է կատարել հայ միջնադարյան բանաստեղծներին ռուսերեն ու եվրոպական լեզուներով թարգմանելու գործում, Դավթակ Քերթողի վերոհիշյալ քերթվածը շքեղ ձևով հրատարակել է գրաբարով, արևելահայերենով, ռուսերենով, անգլերենով, ֆրանսերենով, գերմաներենով, իսպաներենով, լեհերենով: Գրքի առաջաբանում նա իրավացիորեն գրում է. «Հայաստանը շահագրգռված էր Աղվանքի ուժեղացումով, որովհետև Աղվանքի մեջ էր մտնում Հայաստանի մի մասը, և որովհետև Աղվանքում եկեղեցին հայկական էր, ոչ քաղկեդոնական, որ նույնպես ուժեղացնում էր Հայաստանն ու նրա կապերը իրենից անջատված հյուսիսարևելյան շրջանների հետ[4]:

Ասատուր Մնացականյանը փաստում է, որ Մովսես Կաղանկատվացու ողջ պատմության մեջ օգտագործված է հայկական թվականությունը նշելու ձևը և ոչ թե աղվանականը: Նա միաժամանակ փաստում է, թե Ջևանշիր իշխանին նվիրված երգի հեղինակը հայերենի փայլուն գիտակ է[5]:

Ադրբեջանցիները աղվանական գրականության դեմք են համարում IX դարի երկրորդ կեսի իշխան, ապա Հայաստանի Արևելյան կողմանց թագավոր Համամ Արևելցուն, որը Ներսես Շնորհալուց երեք դար առաջ փառաբանել է հայոց այբուբենը՝ ուսուցողական չափածո տողեր նվիրելով հայոց այբուբենի առանձին տառերին[6]:

Ա. Մնացականյանը չի մոռանում հիշեցնել, որ հայ միջնադարյան մատենագրության փայլուն դեմքերից Վարդան Արևելցին (XIII դար), որը պատմիչ էր, աշխարհագետ, մեկնիչ, թարգմանիչ, փիլիսոփա, մանկավարժ, ծնվել է Գանձակ քաղաքում ու իրեն կոչել Վարդան Գանձակեցի, Վարդան Աղվանցի: Այս հիմքով նրան միթե կարելի է ազգությամբ աղվան համարել: Վարդան Արևելցին բազմիցս

---

[1] Мнацаканян А. 107.
Անգլիական հրամանատարությունը մի նպատակ ուներ՝ ստիպել Ղարաբաղի

---

[1] Michael P. Croissant. ISBN 0-275-96241-5

[2] հմմտ. Թումյան Հ. 2008, էջ 199:

հայությանը ենթարկվել Ադրբեջանին, դրանով իսկ «վերածել Անդրկովկասը մի ապահով պլացդարմի՝ ոչ միայն Անդրկասպյան մուսուլմանական երկրները նվաճելու եւ գաղութների վերածելու համար, այլեւ Անդրկովկասն ապահովելու ռուսների վերագրավումից եւ դարձնելու հակաբոլշեւիկյան պայքարի կռվան՝ օգտագործելով նրա հարուստ նյութական ռեսուրսները[1]»:

Իզուր չէ, որ 1919թ. Անդրկովկասում գտնված անգլիական ներկայացուցիչներից մեկը (գեներալ Բիչը) մասնավոր խոսակցության ժամանակ ասել է. «Սա պատմության մեջ չէ՞ որ միակ դեպքն է, երբ կարելի է Ռուսաստանին քշել Անդրկովկասից:[2]»

Ուստի Ադրբեջանին որպես պատվար ընդդեմ Ռուսաստանի օգտագործելու հավակնությունը անգլիացիներին դարձրեց ադրբեջանցիների դաշնակիցը: Եվ պատահական չէ, որ Բաքվում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնին, այնուհետև նրան փոխարինած գնդապետ Շատելվորդին թև ու թիկունք դարձած Արևելյան Հայաստանի Շուշու, Զանգեզուրի, Ջեբրայիլի և Ջիվանշիրի գավառների գեներալ-նահանգապետ հռչակված Խոսրով բեկ Սուլթանովը[3] դիվանագիտական ճնշումներով, սպառնալիքներով, զինված ուժ գործադրելով ևս ձգտում էր արցախահայությունից կորզել Ադրբեջանին հպատակվելու համաձայնություն: Իհարկե, արցախահայության անհնազանդությունն ու ինքնուրույնությունն Ադրբեջանի իշխանությունների վարած քաղաքականությանը չէր համապատասխանում, ուստի նրանք չէին կարող հանդուրժել արցախահայության նման պահվածքը: Ադրբեջանը փորձեց նախահարձակ լինել և արագորեն ընկճել Լեռնային Ղարաբաղի հայության դիմադրությունը: Հաճախակի դարձած զինված հարձակումները սպառնում էին Ղարաբաղի հայության ֆիզիկական գոյությանը:

Աշխարհաքաղաքական բարդագույն պայմաններում ծնված Հայաստանի Առաջին հանրապետությունը անկախ պետականութան վերականգնման հայոց իղձերի մարմնավորումն էր: Դարակազմիկ այդ իրադարձությունը ազգային գիտական միտքը մեր օրերում փորձում է իմաստավորել ներքին ու արտաքին քաղաքական այն գործընթացների համատեքստում, որոնք ուղեկցել են ինքնիշխան պետականության վերականգնման մեր պայքարին, կամ որոնցում թափ է առել այն[4]:

Հայաստանի հանրապետությունը իր արտաքին քաղաքականության ոլորտում եղել է ավելի կամ պակաս ազատ իր սեփական գործողություններում: Սակայն 1919թ. կեսերին նրա միջազգային վիճակը բարդացավ: Հայաստանի հանրապետության անկախությանը լուրջ վտանգ էր սպառնում՝ պայմանավորված Թուրքիայի և Ադրբեջանի զավթողական նկրտումներով, ինչպես նաև Վրաստանի թուրքամետ դիրքորոշմամբ:

Հրաժարվելով իր ազդեցության ոլորտում Անդրկովկասը պահելու ուժային մարտավարությունից՝ Ռուսաստանի հարավի կամավորական բանակի և «Հա-

---

[1] Թումյան Հ. 2008, էջ 199:
[2] ՀԱԱ (ՀՊՊԿԱ), ֆ.45, գ. 33,թ. 5, հմմտ. Թումյան Հ. 2008, էջ 199:
[3] «Нагорный Карабах в 1918-1923гг.», 1992,с. 64.Գեներալ Վ.Թոմսոնի երաշխավորությամբ 1919 թ. հունվարի 15-ին Խոսրով բեկ Սուլթանովը՝ ծննդով Շուշիի Մինքենդ գյուղից, ազգությամբ քուրդ, մասնագիտությամբ բժիշկ, մուսավաթական, նշանակվել է նշված գավառների գեներալ-նահանգապետ: Հմմտ. Արամայիս 1993, էջ 114:
[4] Մանասյան Ալ. 2018, էջ 3:

տուկ խորհրդակցության» գլխավոր հրամանատարությունը, համաձայն 1919թ. հուլիսի 2-ի գաղտնի հրահանգի,անցավ Անդրկովկասի հետ առևտրատնտեսական և ֆինանսական համագործակցության մարտավարությանը՝ նպատակ ունենալով տիրանալ Անդրկովկասի կարևորագույն տնտեսական լծակներին և ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտներին, դրանով իսկ հասնել Անդրկովկասի նկատմամբ քաղաքական գերիշխանությանը: Անդրկովկասում իր հենակետը ստեղծելու նպատակով, ի դեմս Հայաստանի հանրապետության, «Հատուկ խորհրդակցությունը» փորձում էր վերականգնել պաշտոնական հարաբերությունները վերջինիս հետ[1]:

Փաստորեն, երկու կողմերն էլ՝ ինչպես Ռուսաստանի հարավի կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունն ու «Հատուկ խորհրդակցությունը», այնպես էլ Հայաստանի հանրապետությունը, ձգտում էին վերականգնել պաշտոնական հարաբերությունները՝ առաջնորդվելով քաղաքական նկատառումներով և սեփական շահերով:

Սակայն Անդկովկասի հանրապետությունների զավթողական մտադրությունների ուժեղացմամբ 1919 թ. աշնանը կրկին բարդացավ հանրապետության ռազմաքաղաքական իրավիճակը:

Վրաստանի և Ադրբեջանի անբարյացակամ, հաճախ նույնիսկ բացահայտ թշնամական վերաբերմունքը 1919թ. աշնանը վերածվեց ուղղակի սպառնալիքի: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա այստեղ տեղի են ունեցել փոփոխություններ, որոնք սկզբում հուսադրող էին, բայց հետո որոշ ժամանակ Հայաստանի համար վտանգավոր բնույթ էին ստացել: Պատմական ասպարեզում հայտնվել է քեմալական Թուրքիան, որը ձգտում էր ընդլայնել իր սահմաններն ու ազդեցությունն Արևելքում,անմիջական կապ հաստատել Ռուսաստանի մուսուլմանական շրջանների հետ: Իսկ թուրք-թաթարական ժողովուրդներով բնակեցված տարածքներից դեպի Ռուսաստան տանող կամուրջը Կովկասն էր, որին տիրելը համաթուրանական պլանների իրականացման հիմնական պայմանն էր: Այդ քաղաքական մտադրության մեջ հատուկ դեր ուներ Բաքվի նավթահանքերը գրավելու ակնկալիքը[2]: Այդ տեսանկյունից Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի անկախության հռչակումը ձեռնտու էր թուրքերին, քանի որ ավելի էին խորանում նորաստեղծ հանրապետությունների իրարամերժ ձգտումները: Դրանով իսկ ռազմաքաղաքական նպաստավոր պայմաններ էին ստեղծվում դեպի Կովկաս թուրքերի հետագա առաջխաղացման համար:

1919 թ. օգոստոսին քեմալական զորքերի համար Անդրկովկասից անգլիական զորքերի հեռացմամբ Թուրքիայի և Ադրբեջանի համար բարենպաստ պայմաններ են ստեղծվել Հայաստանի ոչնչացման և Թուրքիայի սահմանները Ադրբեջանին մոտեցնելու համար: Այդ նկատառումով Մ. Քեմալը հեռագրեց Մահմուդ փաշային. «Մենք ոչ մի թիզ հող չենք զիջելու Հայաստանին»[3]: Թուրքիայի ակտիվ աջակցությամբ ոգևորված Ադրբեջանն ու Վրաստանը ձգտում էին լուծել Հայաստանի

[1] Հայոց պատմություն 2010, հ.4, էջ 137:
[2] Հայոց պատմություն 2010, հ.4, էջ 107-108:
[3] Քեմալ Մուստաֆա 1932,. էջ 120; Հմմտ.՝ Սիմոնյան Հ. 1986, էջ 502:

հանրապետության հետ տարածքային վեճերը ռազմական ուժի միջոցով:

1919 թ. օգոստոսի 22-ին Ադրբեջանի ճնշման տակ Շուշիում Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև ստորագրվեց համաձայնագիր, որով Լեռնային Ղարաբաղը ժամանակավորապես՝ մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի կողմից հարցի վերջնական որոշումը, ճանաչում է Ադրբեջանի իշխանությունը: Վերջինս իր իշխանությունը տարածեց նաև Շուշիի, Ջևանշիրի և Կարյագինոյի գավառների վրա, ինչի հետևանքով Զանգեզուրը երկու կողմից սեղմվեց «օղակի» մեջ: Այդ պատճառով Ադրբեջանը տենդագին պատրաստվում է պատերազմի, «որպեսզի նվաճի Զանգեզուրը: Թուրքիայի եւ Ադրբեջանի գործակալները շարունակում են պատրաստել դավադրություններ Հայաստանի դեմ»[1]: Ադրբեջանը ձգտում է տիրանալ Զանգեզուրին և իր վերահսկողությունը հաստատել տարածքում Աղդամից մինչև Ղամարլու, ապա միանալ Արաքսի մուսուլմաններին և նրանց օգնությամբ կապ հաստատել Թուրքիայի հետ: Իր ռազմական ծրագրերն իրականացնելու նպատակով և Թուրքիայի ուղղակի ճնշմամբ գաղտնի ռազմական պայմանագրեր են կնքվել՝ ուղղված ինչպես կամավորական բանակի, այնպես էլ Հայաստանի հանրապետության դեմ[2]:

Կարևոր է նշել, որ Մուստաֆա Քեմալի գլխավորած Միլլի շարժումը կարող էր անհաջող լինել, եթե այն որևէ խոշոր պետության կողմից աջակցություն չստանար: Նման պետություն էր Խորհրդային Ռուսաստանը, որը պայքարում էր միջազգային «իմպերիալիզմի» դեմ: Մ. Քեմալին հաջողվեց շատ դիվանագիտորեն օգտվել ստեղծված հանգամանքներից և իր գլխավորած շարժումը հայտարարել «իմպերիալիզմի» դեմ ուղղված հեղափոխական պայքար, որը, իբր, նպատակ էր հետապնդում Թուրքիայում կոմունիստական կարգեր հաստատելու: Խորհրդային Ռուսաստանի ղեկավարները հավատացին դրան և միանալով Մ. Քեմալին՝ նրան ցուցաբերեցին համակողմանի աջակցություն[3]:

Փաստորեն, Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միությունը առաջին հերթին ոտնահարում էր Հայաստանի և հայ ժողովրդի շահերը: Ինչպես արդեն նշվեց, Հայաստանի հանրապետության վիճակը բարդացել է նաև նրանով, որ նրա անմիջական հարևանները՝ Վրաստանն ու Ադրբեջանը, դեռևս 1919 թ. հունիսի 16-ին կնքել են գաղտնի հակառուսական ռազմական պայմանագիր՝ ուղղված նաև Հայաստանի հանրապետության դեմ: Այս բարդ իրավիճակից դուրս գալու համար Հայաստանի հանրապետության կառավարությունը Վրաստանի հետ մերձեցման ուղիներ էր փնտրում՝ դրանով իսկ փորձելով կանխել Ադրբեջանի հետ Վրաստանի ռազմական պայմանագրից բխող գործողությունները[4]:

Ինչպիսի՞ փոխհարաբերությունների մեջ էին գտնվում ՀՀ-ն և Լեռնային Ղարաբաղը:

Արցախահայությունը համոզվեց, որ իր հայրենիքի ու իր օջախի պաշտպանը միայն ինքն է ու իր թիկունքին կանգնած մայր Հայաստանը: Դրա ապացույցը

[1] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 355, մ. 1, թ. 206: Հմմտ.՝ Петросян Г. 2012,стр.317.
[2] Петросян Г. 2012, стр.318.
[3] Հմմտ. «Հայրենիք» ամսագիր, 1926, № 3, մարտ, էջ 70, Հմմտ. 1940 թ., № 12, դեկտեմբեր, էջ 143:
[4] Հմմտ. Петросян Г. 2012, стр.320.

հունիսյան դեպքերին անմիջապես հաջորդող օրերին Ղարաբաղի գավառներում տեղի ունեցող գյուղացիական համագումարներն էին և նրանց ընդունած որոշումները՝ երբեք չենթարկվել Ադրբեջանին[1]:

Այդ օրերին Հայաստանի կառավարությունը հնարավորություն չուներ ռազմական ուժով իրական օգնություն ցույց տալու Արցախին, ստիպված բավարարվեց նրան վերաբերող մի շարք որոշումներ ընդունելով[2]: 1919 թվականի սեպտեմբեր-հոկտեմբերին Երևանում տեղի ունեցավ Հայաստանում կառավարող կուսակցության՝ ՀՅԴ իններորդ ընդհանուր ժողովը, որի օրակարգի կարևորագույն հարցը հենց Արցախն էր: Բանավեճեր եղան, թե ինչպես կարգավորել Արցախի խնդիրը: Միակ դաշնակցականը, որը կողմ էր արտահայտվում Արցախը Հակարի գետից այն կողմ թողնել Ադրբեջանի կազմում, Իշխան Արղությանն էր: Ընդհանուր ժողովում, սակայն, այս տեսակետը անընդունելի էր:

Իններորդ ժողովից երկու տարի անց Հայաստանի վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը ՀՅԴ Ամերիկայի շրջանի 29-րդ պատգամավորական ժողովին ուղարկած գրության մեջ, որը տեղ է գտել ՀՅԴ Բոստոնի «Հայրենիք» ամսագրի առաջին համարում, այսպես է ներկայացնում. «Ընդհանուր ժողովը խիստ կտրուկ հրահանգ տվեց ապահովելու Ղարաբաղի միացումը Հայաստանին: Մինչդեռ Հայաստանի և Ադրբեջանի միջև բարեկամական հարաբերություններ հաստատելու կարիքն այնքան կարևոր էր Հայաստանի համար, որ ավելի իմաստուն կլիներ, որ այս հարցում որոշ չափով լիներինք վերապահ, մանավանդ, որ չէր կարելի չհամաձայնվել այն մտքին, որ Ղարաբաղը Ադրբեջանի համար ավելի ևս կենսական տնտեսական նշանակություն ունի, քան Հայաստանի, և դժվար թե Ադրբեջանը այս հարցում տեղի տար՝ առանց արտաքին սաստիկ ճնշման: Ղարաբաղը եղավ կռվախնձոր Հայաստանի և Ադրբեջանի միջև:

Բյուրոն, համաձայն Ընդհանուր ժողովի որոշման, Ղարաբաղ ուղարկեց գործիչներ՝ կազմակերպական աշխատանքներ կատարելու համար: Ադրբեջանցիք իրենց հերթին ուղղարկեցին զինվորական ուժեր:

1920 գարնանը առաջ եկավ Ղարաբաղի ապստամբությունը, որին հաջորդեց փաստական պատերազմը ադրբեջանական զորքերի հետ, որովհետև Զանգեզուրում գտնվող Հայաստանի զորամասը, ընկեր Դրոյի հրամանատարությամբ, վերահասու լինելով հայ-ադրբեջանյան ընդհարումներին՝ մտավ Ղարաբաղ և մասնակցեց կռիվներին: Ադրբեջանի կառավարությունը Ղարաբաղի դեմ ուղղեց համարյա իր ամբողջ բանակը, որից օգտվեցին բոլշևիկները և ապրիլ 28-ին մտան Բաքու»[3]:

Արցախցիները, հատկապես գյուղացիությունը, չէին ուզում ենթարկվել: Ղա-

[1] Աշխատավոր», 19 հունիսի 1919 թ., «Արձագանք», 24 հունիսի 1919 թ.: Հմմտ. Հարությունյան Հ.,էջ 57:

[2] Այսպես, օրինակ, Հայաստանի հանրապետության մինիստրների խորհուրդը 1919 թ. հունիսի 14-ի նիստում լսեց զինվորական մինիստրի պաշտոնակատար Դրաստամատ Կանայանի (Դրո) առաջարկությունը Ղարաբաղի զորամաս (բաղկացած 1 հետևակ գումարտակից, երկու լեռնային թնդանոթից և 54 ձիավոր հետախույզներից) կազմակերպելու համար 1 500 000 ռուբլի հատկացնելու մասին: Մինչ այդ մինիստրների խորհուրդը հունիսի 6-ի նիստում Ղարաբաղի կարիքների համար հատկացրել էր ևս 1 մլն ռուբլի: Մի շարք խանգարիչ հանգամանքների պատճառով այս և նման այլ որոշումները կյանքի չկոչվեցին, որը և բացասաբար անդրադարձավ արցախահայոց ինքնապաշտպանական համակարգի ամրապնդման վրա: ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 27, մաս առաջին, թ. 134: Հմմտ. Հարությունյան Հ.,էջ 57:

[3] «Հայրենիք», 1922 թ., թիվ 1, Նոյեմբեր, էջ 43-54:

ռաբաղի հայության 8-րդ համագումարը 1920-ի փետրվարի վերջին-մարտի սկզբին ընդունեց բանաձև, որում ասվում էր, որ Ադրբեջանը պարբերաբար խախտել է ժամանակավոր համաձայնության ամենագլխավոր կետերը, կոտորել մի քանի հարյուր հայերի: Հավատարիմ մնալով 7-րդ համագումարի ժամանակավոր համաձայնությանը՝ արցախահայությունը հայտարարեց, որ եթե կրկնվեն ջարդերն ու հարձակումները, Ղարաբաղի հայությունը իր կյանքի և պատվի պաշտպանության համար համապատասխան միջոցների կդիմի:

Այսպես՝ 1920թ. մարտին Շուշիում բռնկվում է ապստամբություն, որը փաստացի ղեկավարում էր ՀՅԴ Արցախի ներկայացուցիչ (ինչպես արդեն նշվել էր վերևում) Արսեն Միքայելյանը:

Հայաստանի կառավարությունը հավանություն չէր տալիս Ղարաբաղում զինված ապստամբությանը, բայց կառավարությունից դուրս գտնված ուժերը կազմակերպեցին ապստամբություն Ղարաբաղում՝ Շուշիի պարիսպների տակ և լեռներում:

Սիմոն Վրացյանը գրում է. «Ապստամբությունը կազմակերպված էր անփորձ մարդկանց ձեռքով: Հետևանքները կարող էին լինել շատ ավելի աղետաբեր, եթե ապրիլին Ղարաբաղ չհասներ Դրոն իր էքսպեդիցիոն զորամասով: Ապրիլին նա զորահավաք հայտարարեց Վարանդայում և Դիզակում, ամրացրեց ճակատները և 45 օր մնաց Ղարաբաղում: Ապրիլի 22-ին Թաղավարդ գյուղում հրավիրվեց Ղարաբաղի 9-րդ համագումարը, որը 44 ձայնով մեկի դեմ մի անգամ էլ որոշեց մերժել Ադրբեջանի իշխանությունը և Ղարաբաղը համարեց Հայաստանի մաս[1]»:

Դրոն Ղարաբաղում էր 1920-ի ապրիլի կեսերից: Ըստ Արսեն Միքայելյանի՝ Դրոյի մուտքը մեծ ոգևորություն էր առաջ բերել: Նա պետք է վերակազմեր և ուժեղացներ Ղարաբաղի դիմադրական ուժը և Ղարաբաղը միացներ Հայաստանին: Դրոյի ժամանումից կարճ ժամանակ անց Ղարաբաղ է գալիս նաև Նժդեհը՝ Կապանի իր զորամասով, և տեղավորվում Դիզակի շրջանում:

Ինչո՞ւ հայերը կազմակերպված դիմադրություն չցուցաբերեցին մուսավաթականներին:

Ստեղծված կացությունը օրինաչափորեն դնում էր տեղի հայությանը զինելու և ինքնապաշտպանության պատրաստվելու խնդիրը: Սակայն մայոր Գիպոնի գլխավորությամբ անգլիական 5 հոգանոց ներկայացուցչության Շուշի ժամանելուց հետո (1918 թ. նոյեմբերի սկզբին) բնակչության զգոնությունը և ինքնապաշտպանության նախապատրաստման գործը չափազանց թուլացավ: Արցախի զինված կազմավորումների մի մասը ցրվեց: Ավելի ուշ՝ 1919թ. ապրիլի 24-ին, Շուշիում տեղի ունեցած Ղարաբաղի հայության 5-րդ համագումարի (ապրիլի 23-29) որոշումից կատաղելով, Շատելվորդը[2] հայտարարեց. «Ի նկատի ունեցե՛ք, որ ձեր ճանապարհները կարող են փակել, այն ժամանակ դուք որտեղի՞ց մթերք կստանաք, ինչպե՞ս կպահպանեք հաղորդակցություն արտաքին աշխարհի հետ: Կարող են ձեզ տնտեսական բոյկոտ հայտարարել, կարո՞ղ եք առանց հացի ապրել: Եվ

[1] Վրացյան Ս. 1993, էջ 396:

[2] Շատելվորդն ապրիլի սկզբին փոխարինել էր Բաքվում գտնվող անգլիական զորամասերի հրամանատար Վ. Թոմսոնին: Նա արցախահայությունից պահանջում էր ենթարկվել Ադրբեջանին: Համագումարի աշխատանքներին մասնակցելու համար նա ժամանել էր Շուշի:

եթե հուզված, զինված ամբոխը հարձակվի ձեզ վրա, կարո՞ղ եք պաշտպանվել»[1]: Այդ հարցերը տալով Շատելվորդը, կարծես թե, միևնույն ժամանակ սովորեցնում էր Ադրբեջանին, թե ինչ պետք է անել Ղարաբաղը հպատակեցնելու համար: Եվ Սուլթանովի հետ տեսակցելուց հետո նա դժգոհ թողնում հեռանում է Շուշիից: Իսկ ժողովուրդն էլ իր հույսը դրեց ներկայացուցչության վրա: Այնինչ Դիզակի շրջանի Դոլանլար գյուղի ուղղությամբ, հենց համագումարի օրերին՝ ապրիլի 28-ին, թուրքական մեծաթիվ ուժերը հարձակում ձեռնարկեցին[2]: Դա պատասխան էր համագումարի որոշման, թե Ադրբեջանը ճանաչել չեն ուզում, և նախանշան, որ հարձակումներն այսուհետ սիստեմատիկ են դառնալու՝ անպաշտպան, ամեն կողմից կտրված Ղարաբաղի համառությունը կոտրելու համար: Ավելին, մայիսի 5-ին Սուլթանովը հրամայեց, որ Շուշիում գանձարանը հայկական մասից տեղափոխեն թուրքական մասը, չնայած, որ «գրեթե բոլոր ծառայողները հայեր էին, բոլոր արժեքավոր թղթերի 95 տոկոսը (600 000 հազար ռուբլի) պատկանում էր հայերին, ինչպես և 3 000 000 ռուբլի խնայողական դրամարկղի գումարը, ինվենտարը հայերի ծախքով էր ձեռք բերված և եթե գանձարանը տեղափոխվեր թուրքական մասը, հայերից ո՞վ պետք է հանդգներ այնտեղ գնալու[3]»: Իհարկե Շուշիի հայերը Սուլթանովի գնդացիրների, թնդանոթների, զորքերի ու զինված ամբոխի դեմ չէին կարող դուրս գալ՝ իրենց տրամադրության տակ ունենալով միայն «70 զինված երիտասարդ, պահեստում էլ՝ …400 փամփուշտ»[4]: Ստեղծված նման անելանելի պայմաններում Սուլթանովը բարձրաձայնեց, որ «գանձարանում պահվում են Ադրբեջանի կառավարության մեծաքանակ գումարները, և այդ գումարների պահպանումը միայն իրենց ասկյարներին կարող են վստահել…»[5]: Առհասարակ նկատելի և հասկանալի էր, որ Ղարաբաղում անգլիացիների բռնած դիրքը տանում է դեպի արյունահեղություն:

Ղարաբաղի հայության զանգվածային կոտորածի սկիզբը դրվեց 1919 թ. մայիսի 20-ից: Այդ օրը թուրքերը արգելեցին սննդամթերք անցկացնել հայկական շրջաններ: Սննդամթերք անցկացնելու յուրաքանչյուր փորձ ավարտվում էր ճանապարհին թուրքերի կողմից թալանով ու սպանություններով[6]: Ղարաբաղում իրադրությունը չափազանց լարվեց մեկ շաբաթ անց (մայիսի 27-ին)՝ քոչի սար բարձրանալու ժամանակ: Այդ օրը քոչվորները զինված խմբերի ուղեկցությամբ բռնեցին սար տանող ճանապարհը:

Ժողովուրդը սպառնաց, որ եթե Ադրբեջանը շարունակի տնտեսական բոյկոտը, Ղարաբաղը ստիպված կլինի փակել քոչվորների ճանապարհը: Իր նպատակին հասնելու համար Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի դեմ հանեց լրացուցիչ կանոնավոր զորամասեր և հազարավոր անկանոն քուրդ ելուզակներ, ոչ պաշտոնական տվյալներով՝ շուրջ 10 հազար մարդ: Շուտով Լեռնային Ղարաբաղը հայտնվեց օղակի մեջ:

---

[1] Արամայիս(Միսակ Տեր-Դանիելյան) 1993, էջ 18:
[2] Արամայիս 1993, էջ 21:
[3] Արամայիս 1993, էջ 25-26:
[4] Արամայիս 1993, էջ 26:
[5] Արամայիս 1993, էջ 27:
[6] Нагорный Карабах в 1918-1923 гг., 1992, стр.264-265.

Սուլթանովը մտադիր էր առաջին հարվածը հասցնել Արցախի ազատագրության շարժման կենտրոն Շուշի քաղաքին:

1920 թ. գարնան սկզբին Ադրբեջանը ձեռնամուխ եղավ ուժային մեթոդով Ղարաբաղի հարցի «լուծմանը» և այդ նպատակի համար ոչ միայն զինվորական հիմնական ուժեր, այլև «կամավորների» անվան տակ ահագին թվով զինված հրոսակախմբեր կենտրոնացրեց Ղարաբաղի գավառում:

Ստույգ տվյալներով 1920 թ. գարնանը Ղարաբաղում կենտրոնացված էր ավելի քան 10 հազար զինվոր: Շտապ կերպով կազմակերպվեց քրդական մի դիվիզիա: Շուշի ժամանեց Նուրի փաշան՝ 10 թուրք սպաների ուղեկցությամբ[1]:

Մարտի 11-ին և 12-ին Բաքվից Ջեբրայիլի վրայով Ղարաբաղ և Զանգեզուր ուղարկվեց 90 վագոն՝ բեռնված զենքով ու զինամթերքով[2]: Եվլախ կայարանը լցված էր բեռնատար ավտոմեքենաներով, զենքի տարբեր տեսակներով ու ռազմամթերքով[3]:

Ամրացվեցին Շուշին և Վարարակն(Խանքենդ) ավանը: Մուսավաթական զորամասերը գրավեցին Ասկերանի անցուղին և դրանով ապահովեցին Ադրբեջանի կապը Շուշիի հետ[4]:

Ամրանալով Ղարաբաղի ռազմավարական նշանակություն ունեցող կետերում՝ Ադրբեջանը փորձեց զինաթափել ժողովրդին: Այդպիսի փորձեր արվեցին նաև Զանգեզուրի սահմաններում և Ջեբրայիլի շրջանում: Ադրբեջանի գործակալները Լեռնային Ղարաբաղում ժողովներ էին գումարում, զենք բաժանում մուսուլման բնակչությանն ու գրգռիչ ճառեր արտասանում հայերի դեմ: Այդ ամենը խոսում է այն մասին, որ Ղարաբաղի դեմ ուղղված Ադրբեջանի դավերը մասնակի բնույթ չունեին:

Ղարաբաղը և Զանգեզուրը գործ ունեին լայնամասշտաբ պատերազմական գործողությունների հետ[5]:

Արցախահայությունն ու նրա քաղաքական ուժերը ժամանակին կռահեցին անգլիացիների հակահայկական քաղաքականության էությունը և համոզվեցին, որ նրանց խոստումներին հավատալը սխալ է, իսկ նրանց հետ հույսեր կապելը՝ կործանարար: Ուստի նման պայմաններում արցախահայությանը մնում էր ապավինել սեփական ուժերի վրա:

«Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունն իր բնօրրան երկիրը թշնամուց պաշտպանելու և նախնյաց երկրում ապրելու իր օրինական իրավունքը վերահաստատելու համար հարկադրված էր անհավասար կռվի ելնել թուրք-թաթարական կանոնավոր բանակների և բազմահազար հրոսակների դեմ, երբ սրանք Ադրբեջանի կենտրոնական իշխանության հրամանով «Ղարաբաղ-Զանգեզուրի հարցը մեջտեղից վերացնելու» նպատակով ուզում էին զինաթափ անել և արյան բաղնիք սարքել այդ գավառներում: Այլ խոսքով՝ ստեղծված կացությունը թելադրեց արցախահայությանը դիմել ինքնապաշտպանության: Ինքնապաշտպանության գոր-

---

[1] «Ժողովուրդ», 26 մարտի 1920 թ.:
[2] «Нагорный Карабах в 1918-1923», стр.431.
[3] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թթ. 51-52: Հմմտ. Հարությունյան Հ., էջ 58:
[4] Աբրահամյան Հ. 1991,էջ 34:
[5] Հմմտ. ՝ Հարությունյան Հ., էջ 58:

ծի կազմակերպումը ղեկավարում էին արցախցի գործիչները: 1920 թ. հունվարին Երևանից Զանգեզուրի վրայով Ղարաբաղ ժամանեցին Արսեն Միքայելյանը, Ասատուր Ավետիսյանը, Արսեն Հովհաննիսյանը (Արսո), Դալի Ղազարը, կապիտան Մարտիրոսյանցը, գնդապետ Մեսյանը և մի քանի այլ սպաներ: Նրանք Վարանդայի Սարուշեն գյուղում հիմնեցին զինվորական շտաբ, որի պետ հաստատվեց Արսեն Միքայելյանը: Նրա մերձավոր զինակիցները դարձան Արտեմ Թումանյանը, Անուշավան Ավետիսյանը, Խաչատուր Մելքումյանը և ուրիշներ: Գավառում նոր կազմավորված զորամասերի համար նշանակվեցին ռազմական պետեր: Կապիտան Մարտիրոսյանցը նշանակվեց Ջիվանշիրի զորամասի հրամանատար, գնդապետ Մեսյանը՝ Խաչենի, Դալի Ղազարը՝ Վարանդայի, Հովակիմ Ստեփանյանը՝ Դիզակի[1]:

Զինվորական հրամանատարները վերոհիշյալ շրջաններում կազմակերպեցին նոր զորամասեր, ծառայության վերցրին նախկին սպաներին և սկսեցին լրջորեն նախապատրաստվել ինքնապաշտպանության:

Ինչը առիթ հանդիսացավ Շուշիի հայ բնակչության կոտորածի իրականացման համար:

Ադրբեջանի կենտրոնական իշխանության հրահանգով Սուլթանովը 1920 թ. մարտի 20-ին վերջնագիր ներկայացրեց Ղարաբաղի հայ ազգաբնակչությանը, ըստ որի հատուկ նշանակված տեղերում երեք օրվա ընթացքում նրանք պիտի կամավոր հանձնեին իրենց զենքերը[2]: Ղարաբաղի բնակչությունը, այդ վերջնագիրը համարելով օգոստոսյան ժամանակավոր համաձայնագրի ակնհայտ խախտում և պատերազմի նախանշան, որին պիտի անխուսափելիորեն հաջորդեին բռնությունները, վճռականորեն մերժեց այն: Մարտի 20-ին Սուլթանովի կարգադրությամբ Ղարաբաղում կենտրոնացած թուրք-թաթարական մեծաթիվ զորքերը սկսեցին բռնությամբ զինաթափել բնակչությանը: Ղարաբաղի գեներալ-նահանգապետը Շուշի քաղաքի մահմեդական բնակիչներին հրահանգում է պատրաստ լինել և սպասել իր ազդանշանին՝ քաղաքի հայկական մասը հիմնահատակ կործանելու համար: Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի դեմ Ադրբեջանի հարձակումը սկսվեց 1920թ. մարտի 22-ին:

Այդ օրը Ադրբեջանի սահմանի ամբողջ երկայնքով՝ Գանձակից մինչև Զանգեզուր, ծավալվեցին մարտական գործողություններ: Ասկերանի (հրամանատար՝ Ղազար), Վարարակնի (Խանքենդի) (հրամանատար՝ Զ. Մեսյան), Դիզակի (հրամանատարներ՝ Հովակ Ստեփանյան և Ալեքսան Դայի) կենաց ու մահու կռիվ էին մղում մի քանի անգամ թվաքանակով գերազանցող հակառակորդի դեմ: Թշնամու անցած ճանապարհին հազարավոր մարդիկ են կոտորվում, կանայք ու աղջիկներ անարգվում, ավերվում են ամբողջ գյուղեր:

1920թ. ապրիլի 7-ին ադրբեջանցի զինվոր Իսմայիլ Ալմանդարբեկովը Շուշիից Բաքվում գտնվող իր եղբորը գրել է. «Տեսածդ Էրմենիստանը (խոսքը վերաբերում է Շուշու հայկական մասին) այրված է: Հինգ կամ տասը տուն պահեցին: Հազարից ավելի հայեր գերի բռնվեցին: Տղամարդկանց բոլորին կոտորեցին, մինչև

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թթ. 21-24: Հմմտ. ՝ Հարությունյան Հ., էջ 59:
[2] «Հառաջ», 20 ապրիլի 1920 թ.:

անգամ խալիֆին (եպիսկոպոսին), բոլոր մեծամեծ մարդկանց...նշանավոր հայերին սպանելուց հետո գլուխները կտրած բազարներում պտտեցնել էին տալիս... Այս կողմերում (քաղաքում) այլևս ոչ մի հայ չեք գտնի և ոչ էլ թյուրքի կարող եք հանդիպել, որը հարյուր հազարից պակաս թալան բերած լինի...Հայերի ողջ հարստությունը քաղաքի բնակիչ մուսուլմանները թալանեցին[1]»:

Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների կիզակետը դարձավ Շուշիի հայ ազգաբնակչության սպանդը:

Այդ օրերին թաթարները պատրաստվում էին մեծ հանդիսավորությամբ նշելու 1920 թ. Նովրուզ բայրամը՝ Ամանորը: Տոնակատարությանը մասնակցելու անվան տակ զորքը բերվեց Շուշի: Շուշի եկան նաև Աղդամի թուրք բեկերը[2], ինչպես նաև Ղարաբաղի տարբեր շրջաններից տասնյակ հարյուրավոր մուսուլմաններ:

Ինչո՞վ էին զբաղվում հայերն այդ ժամանակ:

1919թ. օգոստոսին Ղարաբաղի հայերի 7-րդ համագումարը համաձայնություն էր տվել Բաքվի հետ կնքելու ժամանակավոր համաձայնագիր, ըստ որի՝ Արցախը մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովում իր կարգավիճակի վերջնական լուծումը համարվում էր Ադրբեջանի սահմաններում գտնվող տարածք[3]:

Համագումարի օրերին սուր տարակարծություններ կային Արցախի քաղաքացիների և գյուղացիների միջև. վերջինները մեղադրում էին քաղաքացիներին, որ դավաճանել են՝ համաձայնելով համակերպվել Ադրբեջանի պայմաններին:

Համագումարի օրերին Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ, շուշեցի Տիգրան Բեկզադյանն իր հայրենակիցներին ակնարկել էր, որ դրսից օգնություն ստանալու հնարավորություն չկա, և Արցախն ինքը պետք է պաշտպանի իրեն: Բացի այդ, անգլիացիների կողմից Ղարաբաղ-Զանգեզուրի գեներալ-նահանգապետ նշանակված Սուլթանովը վերջնագիր էր ներկայացրել՝ 48 ժամվա ընթացքում հպատակվել, հակառակ դեպքում սպառնում էր հայությանը հնազանդեցնել զենքով:

Թուրք-թաթարական հակահայկական գործունեության պատճառով գավառը հայտնվել էր մեկուսացման մեջ և ամբողջովին կտրվել դրսի աշխարհի հետ հաղորդակցվելու ճանապարհներից: Ազգամիջյան կռիվները, ահագնացող սովն ու համաճարակային հիվանդությունները մարդկային հազարավոր կյանքեր էին խլում:

1917 թ. նոյեմբեր-դեկտեմբերի դրությամբ Լեռնային Ղարաբաղում գրեթե իշխանություն չկար: Գոյություն ունեցող միակ տեղական մարմինը՝ 72 հոգուց կազմված գործադիր կոմիտեն, ըստ էության, անգործության էր մատնված:

Արցախում իրադարձությունները շուտով այնպիսի ընթացք ստացան, որ միջկուսակցական բյուրոյի վերակազմության անհրաժեշտություն զգացվեց: Անիշխանությունն առկա էր բոլոր բնագավառներում: Տնտեսական ճգնաժամն աննա-

---

[1] Թումյան Հ. 2008, էջ 286-287:

[2] ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 14, թթ. 84-85: Հմմտ. ՝ Հարությունյան Հ., էջ 60:

[3] ՀԱԱ, ֆ.199,ց.1,գ.90,թ.67-68:Հմմտ. Արամայիս 1993, էջ 26-29:Нагорный Карабах в 1918-1923 гг. 1992, док. № 214. Հմմտ. Нагорный Карабах в международном праве и мировой политике. 2008. Документы и комментарий / Сост., отв. ред., авт. вступ. ст. и коммент. д. ю. н., проф. Ю.Г. Барсегов,– Т. 1. с. 366. Հմմտ. Временное соглашение армян Нагорного Карабаха с Азербайджанским Правительством, 26 августа 1919 года. См.: К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918-1925., 1989, с. 23-25. Маммадов. Мусаев. 2008 ,стр.29.

խադեպ չափերի էր հասել, քաղաքական կրքերն ու ազգամիջյան հակամարտությունները երկու ժողովուրդներին մղում էին փոխադարձ վրիժառության և անխոհեմ քայլերի: Մուսավաթականները, օգտվելով ստեղծված իրավիճակից, ուժեղացնում էին տեղի մահմեդականների լրտեսական ու քայքայիչ գործունեությունը: Այդ ամենին գործադիր կոմիտեն չէր կարողանում համարժեք քայլերով հակազդել:

Անդրկովկասում անկախ պետությունների կազմավորման ու գոյության ամբողջ շրջանում նրանց միջև հարաբերություններն ունեին լարված բնույթ՝ պայմանավորված տարածքային վեճերով: Անկախ պետության կարգավիճակում հայտնվելուն պես «վիճելի» տարածքներին տիրանալու Ադրբեջանի ձգտումը դարձավ պետական քաղաքականության հիմնաքար:

1918-1920 թթ. Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջան հակամարտությանը հօգուտ Բաքվի անմիջական միջամտություն ցուցաբերեցին ոչ միայն թուրքերը, այլև նրանց փոխարինելու եկած, Բաքվում նավթային շահեր հետապնդող անգլիացիները, որոնք ամեն կերպ փորձում էին ճնշել արցախցիներին և ստիպել նրանց ենթարկվել մուսավաթական Ադրբեջանին: Այդ փորձերը ի վերջո ձախողվեցին: Ո՛չ թուրքերին, ո՛չ անգլիացիներին չհաջողվեց կոտրել արցախցիների կամքը, հայրենի երկրամասը զավթիչներից պաշտպանելու նրանց վճռականությունը:

Այսպիսով՝ ռուս բոլշևիկների անմիջական օգնությամբ և սպառնալիքի տակ Արցախը ևս խորհրդայնացվեց: Ռուսաստանը, սակայն, խորհրդայանացնելով Ղարաբաղը, դա չի միացրել Ադրբեջանին: Ապացույցը 1920թ. օգոստոսի 10-ին Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքված համաձայագիրն էր, որով Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարվում էին վիճելի տարածքներ:

1918-1920 թթ. պաշտպանական մարտերում արցախահայությունը, ի դեմս երկրամասի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարների և նրանց ձևավորած ժողովրդական կառավարության ու Ազգային խորհրդի, ձեռք բերեց ինքնակազմակերպման ու ինքնակառավարման իրավաքաղաքական անգնահատելի փորձ: Լեռնային Ղարաբաղը հայտարարելով Հայաստանի հանրապետության անկապտելի մաս՝ արցախահայության ձևավորած լեգիտիմ իշխանությունները կազմակերպեցին հայրենի երկրամասի ինքնապաշտպանությունը[1], արժանապատվորեն այն ներկայացրին Ադրբեջանի ու անգլիացիների հետ բանակցություններում[2]:

1919-1920 թթ. թուրքական կանոնավոր բանակի ու մուսավաթականների հետ բախումներում արցախահայությունը հերոսական գոյամարտերում հայրենի երկրամասը աշխարհաքաղաքական բարդագույն պայմաններում հասցրեց «նոր ափեր», իրավաքաղաքական նոր միջավայր՝ պայմանավորված տարածաշրջանը Խորհրդային Ռուսաստանի ազդեցության ոլորտում հայտնվելով և անդրկովկասյան հանրապետություններում խորհրդային կարգերի հաստատմամբ[3]:

---

[1] 1917-1923 թթ. իրադարձությունների վերաբերյալ արխիվային փաստական նյութերին կարելի է ծանոթանալ Հրանտ Աբրահամյանի «Մարտնչող Արցախը. 1917-2000» (Եր., 2003) գրքի Ա մասում:

[2] Մանրամասն Հմմտ. Нагорный Карабах в 1918-1923 гг. (под ред. В. А. Микаеляна), Е., 1992:

[3] 1920 թ. ապրիլի 24-29-ին Լեռնային Ղարաբաղի Թաղավարդ գյուղում տեղի ունեցավ արցախահայության 9-րդ համագումարը, որը հայրենի երկրամասը հռչակեց Հայաստանի առաջին հանրապետության անկապտելի մաս: Գուցե այն կարող էր դիվանագիտական իմաստով ավելի նուրբ քայլ անել՝ խորհրդային իշխանություն հռչակելով Լեռնային Ղարաբաղում: Դա կնշանակեր, որ երկրամասը հռչակվում է Հայաստանի մաս՝ բայց չհակադրվելով երկրամաս վերադարձած բոլշևիկյան Ռուսաստանին:

Շուշին այսօր կանգուն է, Շուշին այսօր վերականգնում է իր վաղեմի փառքն ու վեհությունը, Շուշին միշտ եղել է ու կմնա հայկական բնօրրան...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱԱ ,ֆ.45, գ. 33,թ. 5:
2. ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թթ. 21-24:
3. ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թթ. 51-52:
4. ՀԱԱ, ֆ.199,ց.1,գ.90,թ.67-68:
5. ՀԱԱ , ֆ.199, ց.1, գ.128, թ.249:
6. ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 355, մ. 1, թ. 206:
7. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 27, մաս առաջին, թ. 134:
8. ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 14, թթ. 84-85:
9. К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918-1925. 1989, Документы и материалы: Баку: Азернешр, 193 с.
10. Нагорный Карабах в 1918-1923 гг. 1992, Сборник документов и материалов (под ред. В. А. Микаеляна), Ереван, Издательство АН Армении, 756 с.
11. Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий / Сост., отв. ред., авт. вступ. ст. и коммент. д. ю. н., проф. Ю.Г. Барсегов. – В 2 т. – М.: КРУГЪ, 2008. – Т. 1. – 944 с.
12. Установление Советской властьи в Закавказье, 1971, Тифлис, 73 7с.
13. Արամայիս (Միսակ Տեր-Դանիելյան) 1993, Ղարաբաղի տագնապը (պատմության համար): Օրագրություն (26 ապրիլի-26 հուլիսի 1919թ.), Երևան, «Հայաստան», 118 էջ:
14. Թումյան Հ. 2008,Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ.,Պատմական ակնարկ, Երևան,«Անտարես», 336 էջ:
15. Աբրահամյան Հ. 1991, Արցախյան գոյամարտ, Երևան, 174 էջ:
16. Հարությունյան Հ. 1996, Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թթ., Երևան, 296 էջ:
17. Հարությունյան Հ. 1998, Շուշին արցախյան գոյապայքարում (1918–1920 թթ.), 43էջ:
18. Միքայելյան Ա., 1923, Ղարաբաղի վերջին դեպքերը,Հայրենիք, թիվ 12, Բոստոն:
19. Հայոց պատմություն. Նորագույն ժամանակ(1918-1945), 2010, հ. 4, գիրք 1, խմբ. Խորհուրդ Վ. Բարխուդարյան և ուրիշներ, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 800 էջ:
20. Սիմոնյան Հ. 1986, Թուրքական ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 586 էջ:
21. Վրացյան Ս. 1993,Հայաստանի հանրապետություն, Երևան, «Հայաստան», էջ 396, 704 էջ:
22. Քեմալ Մուստաֆա 1932,. Նոր Թուրքիայի ճանապարհը: 1919-1920 թթ. Անգորայի բազայի պատրաստում, հ. II, Մ., 416 էջ:
23. Золян С., 2001, Нагорный Карабах: проблема и конфликт, изд. «Лингва», Ереван, 307 стр.
24. Мелик-Шахназаров Зарэ 1995., Записки карабахского солдата (Воспоминания участника событий 1918-20 гг. в Нагорном Карабахе), Москва, Изд. Шварц.

25. Маммадов Мусаев. 2008, Армяно-азербайджанский конфликт: история, право, посредничество – Тула: Гриф и К, 2006 (1-е изд.), 2007 (2-е изд.), Баку (2-е изд., переработанное и дополненное) - 196 с.
26. Петросян Г. 2012, Отношения Республики Армении с Россией (1918-1920 гг.), Издательство «ЕГУ», 424с.
27. Шушинский Ф.М. оглу, 1968, Шуша, Азербайджанское государственное издательство, Баку, 163 стр.
28. Michael P. Croissant. The Armenia-Azerbaijan Conflict: Causes and Implications.
29. Richard G. Hovannisian 1997, The Repablic of Armenia, Vol. III:From London to Se'vres, February-August 1920, 452 p..
30. Richard G. Hovannisian 1997, The Armenian People from ancient to modern times, ed. By prof. USA,. Vol. II, 618 p.
31. Համաշխարհային դիվանագիտություն, 2005 թիվ 11, ապրիլ-հունիս, 178 էջ, «Մ-Դիզայն» հրատ., Բաքու, (Diplomatiya aləmi N 11, aprel – iyun, 2005, Baku, «M-Dizayn»,178 s.:
32. Մանասյան Ա. 2018 Ադրբեջան-Արցախ հարյուրամյա հակամարտության փոխակերպումները իրադարձային հենքի և իրավաքաղաքական արդյունքների դիտակետից, «Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», Երևան, № 2 (26), էջ 3-16:
33. «Աշխատավոր», 1919 թ., 19 հունիսի:
34. «Արձագանք», 1919 թ. 24 հունիսի:
35. «Ժողովուրդ», 1920 թ. 26 մարտ:
36. «Հայրենիք», 1922 թ., Բոստոն, Ա տարի, թիվ 1, նոյեմբեր:
37. «Հայրենիք», 1926, Բոստոն, № 3, մարտ:
38. «Հայրենիք», 1940 թ., Բոստոն, № 12, դեկտեմբեր:
39. «Հառաջ», 1920 թ. 20 ապրիլ:

Ամփոփում

Շուշիի 1920 թ. մարտյան ոճրագործությունը ներքաղաքական ու արտաքաղաքական գործընթացների համատեքստում

Նունե Սարումյան

Հարյուր տարի առաջ Շուշիում մահմեդականների կողմից հայ բնակչության նկատմամբ իրագործվեց դաժան ոճրագործություն, որը տարածաշրջանում ստեղծված ներքին քաղաքական լարված իրավիճակի, ինչպես նաև արտաքին քաղաքական ուժերի աջակցության և թողտվության արդյունք էր: Նմանատիպ իրավիճակում Անդկովկասյան տարածաշրջանում ձևավորված Ադրբեջանի հանրապետությունը Թուրքիայի հովանավորությամբ և Անգլիայի աջակցությամբ ամեն միջոց կիրառեց Խորհրդային Ռուսաստանի համաձայնությամբ ուղի հարթելու թուրքիզմի գաղափարախոսության իրականացման համար:

Չնայած ստեղծված ծանր պայմաններին և օրհասական վիճակին՝ Շուշիի հայ բնակչությունը տեղի հայկական ինքնապաշտպանական ուժերի միջոցով հնարավորինս տարերայնորեն դիմադրելով, մեծ կորուստների գնով կարողացավ մի քանի հազար հոգու փրկել: Անասելի դաժանությունները, բռնությունները, գազանությունները հասարակական առաջադեմ գործիչների կողմից դատապարտվեցին, սակայն իրենք՝ մահմեդական ոճրագործները փորձեցին ու փորձում են այդ ոճրագործությունը բարդել հայ բնակչության վրա:

1918-1920 թթ. պաշտպանական մարտերում արցախահայությունը՝ ի դեմս երկրամասի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարների և նրանց ձևավորած ժողովրդական կառավարության ու Ազգային խորհրդի, ձեռք բերեց ինքնակազմակերպման ու ինքնակառավարման իրավաքաղաքական անգնահատելի փորձ,թուրքական կանոնավոր բանակի ու մուսավաթականների հետ բախումներում նա հերոսական գոյամարտերում հայրենի երկրամասը աշխարհաքաղաքական բարդագույն պայմաններում հասցրեց «նոր ափեր», իրավաքաղաքական նոր միջավայր:

Ժամանակակից քաղաքական իրադարձությունների արդյունքում Շուշին այսօր կանգուն է, Շուշին այսօր վերականգնում է իր վաղեմի փառքն ու վեհությունը, Շուշին միշտ եղել է ու կմնա հայկական բնօրրան...

Հիմնաբառեր. *ոճրագործություն, բռնություններ, Շուշիի ամրոց, շրջափակում, Շուշիի հայկական թաղամաս, հրդեհում, ինքնապաշտպանական մարտին*

Резюме

Мартовское преступление в Шуши 1920 года в контексте внутриполитических и внешнеполитических процессов

Нуне Сарумян

Сто лет назад мусульмане в Шуши совершили чудовищное преступление против армянского населения, которое стало результатом напряженной внутриполитической ситуации в регионе, а также поддержки внешнеполитических сил. В аналогичной ситуации Азербайджанская Республика, образованная в Закавказском регионе под эгидой Турции и при поддержке Великобритании, использовала все средства, чтобы подготовить почву для реализации идеологии тюркизма с согласия Советской России.

Несмотря на тяжелые условия, армянское население Шуши с помощью местных армянских сил самообороны отразило ужасную ситуацию и сумело спасти несколько тысяч человек ценой больших потерь. Невыразимые зверства, насилие и зверства были осуждены прогрессивными общественными деятелями, но сами мусульманские преступники пытались и пытаются обвинить в этом преступлении армянское население.

1918-1920 гг. в оборонительных боях армяне Арцаха в лице съездов полномочных представителей народов региона, сформированного ими Народного правительства и Национального совета приобрели бесценный правовой и политический опыт самоор-

ганизации и самоуправления, в самых сложных геополитических условиях в столкновениях с турецкой регулярной армией и мусаватистами в героической борьбе они вывели свою родину на «новые берега», новую политико-правовую среду.

В результате современных политических событий Шуши стоит сегодня, Шуши восстанавливает былую славу и величие, Шуши всегда был и останется колыбелью армян…

Ключевые слова: *Преступление, насилие, крепость Шуши, блокада, армянский квартал Шуши, пожар, отряд самообороны*

Abstract

March Crime in Shushi of 1920 in the Context of Internal Political and Foreign Political Processes

Nune Sarumyan

One hundred year ago, a brutal crime was committed by Muslims against the Armenian population in Shushi, which was the result of the internal political situation in the region, as well as the support of foreign political forces.

In a similar situation, the Republic of Azerbaijan formed in the Transcaucasian region, under the auspices of Turkey and with the support of Britain, used every means to pave the way for the implementation of the ideology of Turkism with the consent of Soviet Russia. Despite the difficult conditions, the Armenian population of Shushi resisted the dire situation with the help of the local Armenian self-defense forces and managed to save several thousands of people at the cost of great losses. The unspeakable cruelty, violence and atrocities were condemned by progressive public figures, but the Muslim criminals themselves tried and are trying to blame the Armenian population in that crime.

In the defensive battles of 1918-1920s, the Armenians of Artsakh, represented by the congresses of the plenipotentiaries of the people of the region, the People's Government and the National Council formed by them, gained invaluable legal and political experience of self-organization and self-government.

In the clashes with the Turkish regular army and the Musavatists, the Armenians of Artsakh brought their homeland to "new shores", into a new political-legal environment struggling heroically for survival in difficult geopolitical conditions. As a result of modern political events, Shushi is standing today¸ Shushi is restoring its ancient glory and majesty, Shushi has always been and will remain an Armenian cradle…

Keywords: *crime, atrocities, Shushi fortress, blockade, Armenian district of Shushi, fire, self-defense body.*

ԳԼՈՒԽ Գ

ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԻՐԱԳՈՐԾԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՂԵՌՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ







Գանձակի հայոց վիճակային փոխանորդ Լևոն վարդապետի գրությունը Արսեն վարդապետին՝ Շուշիի հայերի կոտորածների մասին, 21 ապրիլի 1920 թ.(ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 46, թ. 14):

Записка армянского епархиального викария Гандзака Левона вардапета Арсену вардапету о резне армян Шуши, 21 апреля 1920 г. (НАА, ф. 57, п. 5, д. 46, л. 14).

Armenian Diocesan Vicar of Gandzak Archimandrite Levon's letter to Archimandrite Arsen about the massacres of Armenians in Shushi, April 21, 1920 (NAA, f. 57, l. 5, w. 46, p. 14).

Տ. ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ ԱՍՐՅԱՆ
Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի
հրապարակչական բաժնի տնօրեն,
Ստեփանակերտի Ս. Աստվածամոր Հովանի
մայր եկեղեցու հոգևոր հովիվ
Ռաֆֆի 7, Շուշի, Արցախի Հանրապետություն
էլ. հասցե՝ monk-deacon@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 10.04.2021, գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 20.04.2021

1920 Թ. ՇՈՒՇԻԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Հայ առաքելական եկեղեցու պատմությունն ամբողջովին համահունչ է հայ ժողովրդի պատմությանը: Եվ հայ ժողովրդի կյանքում արձանագրված պատմական կարևորագույն իրադարձություններն իրենց ուղղակի դրսևորումներն են ունեցել նաև Հայ եկեղեցու իրականության մեջ: Բնականաբար, բացառություն չէ նաև հայ ժողովրդի ամենամռայլ էջերից մեկը՝ 1920թ. մարտին Ադրբեջանի կողմից իրականացված՝ Շուշիի հայ բնակչության ցեղասպանությունը, որի հետևանքով ծանրագույն կորուստներ ունեցավ նաև Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը:

Կոտորածից օրեր անց մամուլում լուրեր հայտնվեցին այն մասին, որ դաժանաբար սպանվել են նաև Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը[1] և Շուշիի քահանաները[2]: Ապրիլի 16-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարին ուղղված իր զեկույցում Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանը, Շուշիի կոտորածի վերաբերյալ տեղեկություններ հայտնելիս, մեջբերումներ է կատարում իր տրամադրության տակ հայտնված մի քանի նամակներից, որոնց հեղինակները ոճրագոր-

[1] Ծնվել է 1845 թ. Մեղրիում: Ուսանել է Գևորգյան ճեմարանում: Կնոջ մահվանից հետո մտել է վանք և 1887 թ. ապրիլի 21-ին ձեռնադրվել աբեղա: Նույն թվականի հուլիսի 16-ին ստացել է վարդապետական պատիվ և նշանակվել Արցախի թեմի Նուխիի առաջնորդական փոխանորդ՝ դառնալով նաև Ս. Էջմիածնի սինոդի անդամ: 1913 թ. փետրվարի 27-ին նշանակվել է Տաթևի վանքի վանահայր: 1916 թ. ապրիլի 30-ին նշանակվել է Արցախի թեմի կառավարիչ: 1917 թ. ապրիլի 16-ին օծվել է եպիսկոպոս: Սպանվել է 1920 թ. մարտի 23-ին:
[2] Տես «Նոր աշխատավոր» 1920. «Մշակ» 1920:

ծության անմիջական մասնակից թուրքեր էին: Նամակներից մեկում մասնավորապես ասվում է. «Հազարից ավելի հայեր գերի բռնվեցին, տղամարդկանց բոլորին կոտորեցին, մինչև անգամ ավետարանը, խալիֆին (եպիսկոպոսին), բոլոր մեծամեծ մարդկանց.... Նշանավոր հայերին գլուխները կտրած բազարներում պտտեցնել էին տալիս սպանելուց հետո»[1]:

Շուշիի կոտորածի և եկեղեցականների կորուստների լուրերի իսկությունը հաստատում է նաև Գանձակի առաջնորդական փոխանորդ Լևոն վարդապետ Պերյանը՝ ապրիլի 21-ին հոգևորականներից մեկին ուղղված իր նամակում և հավելում. «Այստեղ երկար ժամանակ անհաւատ մնացինք այս տեղեկութիւնների հանդէպ, որոնք աւելի և աւելի յամառում են, համարելով դրանք պռովօկացիա՝ Գանձակի շրջակայքի հայ գիւղերի զինաթափութիւնը դիւրացնելու և հայ ժողովուրդը խեղճացնելու նպատակով: Անձնապէս ինքս դեռևս չեմ ուզում հաւատալ, մինչև իսկ մի ռուս պաշտօնեայ ինձ յանձնեց մի բանալի, ըստ երևույթին եկեղեցու, որը նա գտել է Հայոց մասում և տեսել մի հայ քահանայի դիակ՝ ի շարս այլ սպանուածների»[2]:

Շրջանառվող լուրերը խոր տագնապ են պատճառում Գևորգ Ե Ամենայն հայոց կաթողիկոսին: Վեհափառ հայրապետի հրահանգով հայրապետական դիվանը ապրիլի 17-ին նամակով դիմում է Վրաստանի թեմի առաջնորդ Մխիթար եպիսկոպոսին. «Նկատի ունենալով, որ Դուք ըստ ամենայնի հնարաւորութիւն կունենաք այդ տխուր լուրը ստուգելու՝ Նորին Սրբութիւնը հրամայեց դիւանիս գրել Գերապատուութեանդ ստուգելու ինչպէս այս, նոյնպէս և Շուշի քաղաքի կոտորածների լուրերը և իսկութիւնը, ամենայն մանրամասնութեամբ հաղորդել դիւանիս՝ զեկուցանելու Նորին Սրբութեանը»[3]:

Պատասխան նամակում Մխիթար Սրբազանը հայտնում է. «....ցաւ ի սիրտ՝ ամենախոնարհաբար զեկուցում եմ Ձերդ սրբութեան, որ .... թուրքերը, վերցնելով Շուշին, աւերել և ոչնչացրել են քաղաքի հայկական մասը, կոտորելով առանց սեռի և հասակի խտրութեան մօտ 5000 հայ[4], որոնց թւում թեմական առաջնորդ տ. Վահան սրբազան եպիսկոպոսին, որի գլուխը կտրելով բարբարոսաբար շրջեցրել են քաղաքում ի տես գազանացած խուժանի: Սպանուած են և բոլոր քահանաները, բացառութեամբ տ. Գաբրիէլ[5] քահանայ տ. Յովհաննիսեանի, որը, բանտից փախչելով, մահուանից ազատուել է»[6]:

Արցախի թեմական առաջնորդի և թեմի հոգևորական ու աշխարհիկ ծառա-

---

[1] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ. 2003, 459:
[2] Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան 2001, 744-745:
[3] Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան 2001, 744:
[4] Զոհերի թվի հարցն անշուշտ փոքր-ինչ դուրս է մեր համեստ ուսումնասիրության շրջանակներից, այդուհանդերձ, հաշվի առնելով, որ այն շոշափվում է մեջբերման մեջ, հարկ ենք համարում նշել, որ այդ առնչությամբ տարբեր տվյալներ են նշվում: Օրինակ՝ Հ. Աբրահամյանը հղում է կատարում արխիվային մի վավերագրի (որի տակ ստորագրել էր ՀՀ բանակի գլխավոր շտաբի պետ գնդապետ Վեքիլովը), որտեղ ասված է, որ մարտի 22-ին Շուշիում սպանվել է 8000 մարդ (Աբրահամյան 2003, 317): Իսկ ողբերգական իրադարձություններից շուրջ 6 տարի անց Շուշի այցելած Մ. Շահինյանը գրում է. «1920 թվականի մարտին այստեղ երեք օրում ավերել ու կրակի են մատնել 7000 տուն ու մորթել են՝ ոմանք ասում են 3-4 հազար հայ, ոմանք՝ 12 հազարից ավելի: Փաստ է, որ 35 հազար հայերից Շուշիում ոչ ոք չէր մնացել» (Шагинян 1931, с. 362):
[5] Հրատարակչական վրիպակ է, պետք է լինի Գարեգին (Հմմտ. ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 216, թթ. 15-16):
[6] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, 749:

յողների սպանության, ինչպես նաև թեմի կրած նյութական կորուստների և այլ արհավիրքների մասին առավել ընդարձակ պատկերացում ենք կազմում թեմի կոնսիստորիայի[1] անդամ Կարապետ քահանա Վարդապետյանցի և ատենադպիր Միրզա Տեր-Սարգսյանի՝ մայիսի 15-ին Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղված զեկույցից. «Վահան եպիսկոպոսը սպանուեց առաջնորդարանում, չկամենալով դուրս գալ: Վահան եպիսկոպոսի սպանութեան մասին մեզանից յետոյ դուրս եկած հայ ոստիկանապետ Աւետիք Տէր-Ղուկասեանը պատմում է, որ նոյն օրը երեկոյեան ժամը 10-ին ինքը կարողացել է մտնել Սրբազանի մօտ և յայտնել, թե այլևս հնար չկայ մնալու, պետք է կամ փախչել, կամ մի կերպ ընկնել Սուլթանովի մօտ: Սրբազանը պատասխանել է, թե առաջնորդարան և կոնսիստորիա չեմ թողնիլ և չդուրս գալ, և .... յամառում է ու նստում»: Կես ժամ չանցած բարբարոսները ներխուժում են առաջնորդարան և դաժանորեն սպանում Վահան սրբազանին և առաջնորդարանում գտնվող թեմական ծառայողներին ու նրանց ընտանիքներին: Ինքը՝ Ավետիք Տեր-Ղուկասյանը, կարողանում է արդեն հրդեհված առաջնորդարանի պատուհաններից մեկից ցած նետվել ու մի կերպ մազապուրծ փախչել:

Զեկույցի հեղինակները հայտնում են, որ կոտորածներին զոհ են գնացել նաև թեմական վարչության գրեթե բոլոր անդամները. «Կոնսիստորայի կողմից սպանուած են՝ անդամ Խորէն ա. քահ. Իսկանդարեանը, կարգապահ Անանիա Տէր-Դանիէլյանը և դիւանապահ Յովհաննէս Ղարաբէկեանը: Քահանաներից սպանուած է Յարութիւն ա. քահ. Վարդապետեանը, իսկ Գարեգին ա. Քահ. Յովհաննիսեանը ազատուել է բանտից կիսամեռ դրութեան մէջ և միանգամայն մերկ. սպանուած են թեմ. դպրոցի տեսուչ Աղ. Ծատուրեանը, ուսուցիչ Գաբրիէլ Ղուլիքևխայեանը, հոգաբարձու Անդրեաս բէկ Տէր-Յարութիւնեանը, Ղուկասեան ուսումնարանի տեսուչ բժ. Նիկողայոս Եարամիշեանը և այլն: Այսպէս ահա չկայ հոգևոր վարչութիւն, և մնացել ենք մի անդամ ու մի ատենադպիր, մերկ ու քաղցած, կոչուած է ժամանակաւոր մարմին գործերը վարելու»[2]:

Քահանաներից մեկի սպանության մանրամասները նկարագրում է Զարեհ Մելիք-Շահնազարյանը՝ մեջբերելով կոտորածների դժոխքով անցած Տաթևիկ Տեր-Սահակյանցի հուշերը: Վերջինս, ներկայացնելով գերեվարված հայերի նկատմամբ իրագործված ոճիրները, իր խոսքի շարունակության մեջ պատմում է. «Այնուհետև սկսում են հաշվեհարդար տեսնել գերի տղամարդկանց և պատանիների հետ, որոնց նախօրոք կապկպել էին: Նրանց հերթով բերում էին կաշվե գոգնոցով դահճի մոտ, որը, սուր դանակը ձեռքին, նստած էր աթոռին: Առաջինը նրա մոտ բերեցին գեղեցկահասակ, երկարամորուք քահանա Տեր Հարությունին: Նրա ձեռքերը կապված էին թիկունքին, ոտքերը՝ շղթայված: Դահիճը նրան գցում է մեջքի վրա, գլուխը դնում ծնկանը, հետո բռնում մորուքը և ցուցադրաբար սուր դանակով կտրում գլուխը: Հետո թուրքերը քահանայի գլուխը ցից են հանում և տանում քաղաքի թաթարական թաղամասի փողոցներով պտտեցնում»[3]:

Հսկայական էին նաև Արցախի թեմի կրած նյութական կորուստները: Կարա-

---

[1] Թեմական հոգևոր մարմին՝ վարչական և դատական գործառույթներով:
[2] Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան 2001, 747-748:
[3] Мелик-Шахназаров 1995, ст. 43-44:

պետ քահանա Վարդապետյանցի և ատենադպիր Միրզա Տեր-Սարգսյանի վերոնշյալ զեկույցում ամփոփ կերպով ծանուցվում է. «Առաջնորդարանը, թեմական դպրոցը, եկեղեցիները թալանուած են, ապա այրուած: Կռիւը սկսելով առաւօտեան ժամը 5-ին՝ հնարաւորութիւն չի եղել կոնսիստորիայից ոչ մի դոկումենտ, ոչ մի գործ ու գանձ ազատել, նոյնպէս և եկեղեցիներից»[1]: Լիարժեք գնահատել հասցված վնասը պարզապես անհնար է: Ամբողջ գույքը, եկեղեցական պարագաները, արվեստի գործերը, գիրք-գրականությունը, փաստաթղթերը և այլնը, կողոպտվել կամ ոչնչացվել են: Սակայն թեկուզ միայն այն փաստը, որ Շուշին 1830-ականներից ի վեր Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի հոգևոր կենտրոնն էր[2], և այնտեղ բնականաբար կենտրոնացված էր վերոնշյալ արժեքների մի զգալի մասը, որոշակիորեն հուշում է, որ կորուստների չափերն իրոք բավականին մեծ են եղել: Մեծագույն կորուստներից մեկը թերևս կարելի է համարել Արցախի թեմի արխիվի ոչնչացումը:

Ողբերգական այս իրադարձությունների հետևանքով Հայ եկեղեցու կրած կորուստների շարքում արձանագրվեց նաև ևս մեկ առանձնահատուկ ցավալի փաստ: Կուսանոցները Հայ առաքելական եկեղեցում հազվադեպ երևույթներ են: 1816 թվականից Շուշիում գործում էր Կուսանաց անապատը, որը Նոր Ջուղայի Ս. Կատարինե և Թիֆլիսի Ս. Ստեփանոս վանքերի հետ միասին պահպանում էր Հայ եկեղեցու կանանց մենաստանների մոռացված ավանդույթները: Իրականացված ոճրագործությունների հետևանքով վերջ դրվեց նաև բացառիկ այս երևույթի գոյությանը[3]:

Այսպիսով՝ ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք փաստել, որ 1920 թ. Շուշիի ցեղասպանության հետևանքով Արցախի թեմն ուղղակի գլխատվեց, ինչպես բառացիորեն (թեմական առաջնորդի և հոգևոր իշխանության ներկայացուցիչների օրինակով), այնպես էլ ավելի լայն, փոխաբերական իմաստով: Շուշիի անկումը փաստացիորեն նաև Արցախի թեմի հոգևոր կենտրոնի ոչնչացումն էր:

Արցախի թեմի անդառնալի կորուստներն իրենց ծանրագույն հետևանքներն ունեցան թեմի հետագա ճակատագրի վրա: Հենց միայն թեմի առաջնորդի սպանությունը մեծ հարված էր Արցախին ու նրա թեմին: Բարդագույն ժամանակահատվածում՝ 1916-1920 թթ., թեմի հոգևոր տեսչությունն ստանձնած Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը, զուտ հոգևոր առաջնորդի իր կարգավիճակից բխող կարևորությունից զատ, իր անձնական բարձր հատկանիշների և անսահման հայրենասիրության շնորհիվ մեծ հեղինակություն էր ոչ միայն եկեղեցական ասպարեզում, այլ նաև արցախահայության հասարակական-քաղաքական կյանքում: Լինելով Արցախը Մայր Հայաստանին միավորելու ամենաջերմեռանդ ջատագովներից մեկը՝ Սրբազանը կարևորագույն տարբեր գործընթացներում գործուն ներկայություն և առանցքային դերակատարում ուներ. բանակցում էր Ադրբեջանի կառավարության և անգլիական միսիայի հրամանատարության հետ՝ փորձելով ապահովել իր հոգևոր հոտի անվտանգությունը, մասնակցում էր արցախահա-

[1] Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան 2001, 747:
[2] Տես Բալայան 2007, 70-78:
[3] Տես Մկրտչյան 2014, 204-213:

յության համագումարներին, ինքնապաշտպանական գործողությունների կազմակերպմանը, փորձում էր հարթել ներքաղաքական կյանքում առկա տարաձայնություններն ու պահպանել արցախահայության միասնականությունը և այլն[1]: Իսկ զուտ հոգևորականի նրա կերպարը ժամանակակիցները բացառապես մեծագույն դրվատանքով են բնորոշում. «եկեղեցասեր, դպրոցասեր, անաչառ և շիտակ պաշտոնյա եկեղեցու և իր առաջնորդական կառավարության», «վերին աստիճանի մաքրության և բարոյականության» տեր և այլն[2]: Իսկ ժամանակակիցներից Եղիշե Իշխանյանը հետագայում գրում է. «Շատ համեստ մարդ էր Վահան Սրբազանը և յարգւած ժողովրդի կողմից», «բարի, անբասիր վարքի տէր և եկեղեցուն նւիրւած մարդ»[3]: Եվ, ըստ էության, ավետարանական քաջ հովվի իր նկարագիրը Վահան Սրբազանը պսակեց մարտիրոսական վախճանով՝ հրաժարվելով փախուստի կամ առավել ևս դահիճ Սուլթանովի ողորմածությանն ապավինելու միջոցով սեփական կյանքը փրկելու որևէ փորձից:

Նման արժանավոր առաջնորդից ու նրա կազմած թեմական վարչությունից զրկվելով՝ Արցախի գլխատված թեմն անկարող գտնվեց որևէ կերպ դիմադրելու Ադրբեջանի հակահայկական ու հակաեկեղեցական քաղաքականությանը: Նշյալ իրադարձություններից շուրջ մեկ ամիս անց՝ ապրիլի 28-ին, Ադրբեջանը խորհրդայնացվեց, իսկ մուսավաթական պարագլուխները մի ակնթարթում վերածվեցին բոլշևիկ հեղափոխականների: Սակայն այս «գունափոխությունը» որևէ կերպ չփոխեց Ադրբեջանի հակահայկական զավթողական քաղաքականությունը: Ավելին, այն, ինչ որ նախորդ տարիներին Ադրբեջանին չհաջողվեց իրականացնել Թուրքիայի և արևմտյան երկրների (մասնավորապես անգլիացիների) ամենալայն աջակցության պայմաններում, ի կատար ածվեց Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ. Արցախը բռնակցվեց Ադրբեջանին: Արցախի բռնայուրացման հարցերի վերջնական լուծման համապատկերում Ադրբեջանի համար պակաս կարևոր չէր նաև իր զավթողական ծրագրերի համար իրական վտանգ ներկայացնող անձանց ու հաստատությունների չեզոքացումն ու ոչնչացումը: Ուստի բնական է, որ ադրբեջանական իշխանութիւնների համար իրենց ազդեցութեան ոլորտից դուրս՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից կառավարվող և ազգային-ազատագրական պայքարի օջախ լինելու փառապանծ ավանդույթներ ունեցող Արցախի թեմն առաջնահերթ թիրախ էր դիտարկվում: Իսկ Խորհրդային միության որդեգրած հակակրոնական ու հակաեկեղեցական դաժան պայքարն ուղղակի անսահմանափակ դաշտ էր բացում Արցախի թեմի նկատմամբ Ադրբեջանի սանձարձակ քաղաքականութեան համար: Վահան սրբազանի սպանությունից հետո երկու տարի շարունակ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը չէր կարողանում Արցախում թեմակալ առաջնորդ նշանակել: Այդ երկու տարիների ընթացքում ադրբեջանական իշխանություններին հաջողվեց գրեթե կազմալուծել Արցախի թեմը. արդեն 1922 թ. թեմի մեջ մտնող 159 բնակա-

[1] Տես Աբրահամյան 2009, 165-199:
[2] Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան 2001, 626:
[3] Իշխանյան 1999, 140, 656: Հերթական անգամ հիշելով Վահան Սրբազանին՝ Ե. Իշխանյանը խոր կսկիծով գրում է. «....կրկին ու կրկին յիշեցի Ղարաբաղի անփառունակ ապստամբութիւնը, որի հետևանքը եղաւ Շուշու հայկական մասի ծայրէիծայր հրդեհի ճարակ դառնալը ու հիմնայատակ կործանւելը և կրկին պատկերացրի, թէ ինչպէս է նահատակւել այն բարի ծերունին, այրւելով հրդեհւած հինաւուրց առաջնորդարանի շէնքում, որտեղ իր կացարանն էր» (Իշխանյան 1999, 657):

Գևորգ Ե Սուրենյանց

վայրերից 27-ը չունէին եկեղեցի, քահանաներ ունեին միայն 39-ը[1]: Համեմատության համար նշենք, որ 1914 թ. տեղեկագրի համաձայն՝ Արցախի թեմն ուներ 222 գործող եկեղեցի և 188 քահանա[2]: Վիճակագրական այս թվերը կտրուկ նվազեցին հատկապես 1920 թ. սկսած:

1922 թ. մարտի 27-ին Գէորգ Ե Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Անանիա արքեպիսկոպոս Համազասպյանը նշանակվեց Արցախի թեմի առաջնորդ: Դժոխային պայմաններում երկու տարվա պաշտոնավարումից հետո յոթանասունամյա առաջնորդը ստիպված եղավ 1924 թ. մայիսի 27-ին հրաժարական ներկայացնել: 1925 թ. Գէորգ Ե Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Վրթանէս ծայրագոյն վարդապետ (1928-ից՝ եպիսկոպոս) Հակոբյանը նշանակվում է Արցախի թեմի առաջնորդ: Չնայած Մայր Աթոռի և Արցախի թեմի առաջնորդի գործադրած հերոսական բոլոր ջանքերին՝ Ադրբեջանի իշխանությունների բռնությունները հասան իրենց գագաթնակետին՝ հանգուցալուծվելով 1933 թ. Արցախի թեմի վերջնական փակումով[3]: Հետագա տարիներին Արցախում հոգևոր-եկեղեցական կյանքի վերականգնման բոլոր ջանքերը կտրականապես կասեցվեցին Ադրբեջանի կողմից՝ ընդհուպ մինչև 1980-ականների վերջ Արցախը վերածելով Հայ եկեղեցու և հոգևորականության համար փակ տարածքի: Բազմաթիվ վանքեր, եկեղեցիներ ու մատուռներ կամ լիովին ոչնչացվեցին, կամ էլ վերածվեցին կրթական-մշակութային նշանակության շինությունների, պահեստների, անասնագոմերի և այլն: Առավել հայտնի կոթողները «աղվանականացնելու» և «ադրբեջանականացնելու» աճպարարություններով հայտարարվեցին «ադրբեջանական հուշարձաններ»[4]: 1920 թ. ավերակված Շուշիում այրված ու թալանված, բայց դեռևս կանգուն մնացած եկեղեցիները հետագա տարիներին աստճանաբար վերացան երկրի երեսից. իսպառ ոչնչացվեցին Ագուլեցվոց եկեղեցին ու Կուսանաց անապատը, Մեղրեցոց եկեղեցուց մնաց միայն խորանի հատվածը, որն ադրբեջանցիները վերածեցին բացօթյա կինոդիտումների բեմի: Պղծվեցին նաև հրաշքով կանգուն մնացած երկու եկեղեցիները. Ս. Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցին ադրբեջանցիները հանքային ջրերի ըմպելասրահ էին դարձրել[5], իսկ հոյակերտ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ տաճարի պղծման վերջին եղանակն իբրև զինապահեստ ծառայեցնելն էր:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ 1920 թ. Շուշիի ցեղասպանությունը «սկիզբն էր երկանց», արյունոտ այն ելակետը, որով սկսվեց Ադրբեջանի կողմից

[1] Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան 2001, 759-766:
[2] Տես «Արարատ» 1914, 637:
[3] Տես Գարիկ սարկաւագ Ասրյան 2016, 97-110:
[4] Տես Տ. Ներսէս քահանայ Ասրեան 2017, 245-276:
[5] Տես Մկրտչյան, Դավթյան 2008, 30-32:

Արցախի թեմի քայքայման և վերացման բուն գործընթացը:

Ադրբեջանական բռնարարքների ավերիչ հետևանքները թոթափելու և Արցախում հոգևոր-եկեղեցական կյանքի վերականգնման հնարավորությունն ընձեռվեց միայն արցախյան ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ: 1989 թ. Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ վերաբացվեց Արցախի պատմական թեմը[1]: Իսկ 1992 թ. Շուշիի ազատագրումից հետո թեմակալ առաջնորդ Պարգև Սրբազանի տնօրինությամբ Արցախի թեմի առաջնորդարանը, 72 տարվա հարկադիր բացակայությունից հետո, վերահաստատվեց Շուշիում: 2019 թ. Արցախի թեմը տոնեց վերաբացման 30-ամյակը: Այդ 30 տարիները հոգևոր վերածննդի, կորուստների վերականգնման և նոր արժեքներ ստեղծելու[2] տարիներ են: Իհարկե, ինչպես քանիցս արդեն նշեցինք, կորուստների մի զգալի մասն անդառնալի է, դրա վերականգնումը, հասկանալի պատճառներով, անհնար է:

Ամփոփելով վերոնշյալը՝ փաստենք, որ Ադրբեջանի (լինի մուսավաթական, խորհրդային, թե հետխորհրդային) հետ թեկուզ համակեցության և արցախահայության ամենաբնական իրավունքների, անգամ կյանքի, սեփականության, հավատի և դավանանքի ազատության իրավունքների իրագործումն անհամատեղելի իրողություն է: Աստվածատուր այդ իրավունքների իրագործումը հնարավոր է բացառապես սեփական անկախ պետականության պայմաններում:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. Արխիվային վավերագրեր

Հայաստանի ազգային արխիվ, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան, ֆ. 57, g. 5, գ. 216, թթ. 15-16:

Բ. Տպագիր վավերագրեր

Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան **2001,** Գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), կազմեց եւ առաջաբանը գրեց Սանդրօ Բեհբուդեանը, Երեւան, «Ոսկան Երեւանցի» հրատարակչութիւն, 980 էջ:

Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ. **2003,** Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Պատասխանատու խմբագիր՝ Ամատունի Վիրաբյան, Կազմողներ՝ Սոնյա Միրզոյան, Ալվարդ Ղազիյան, Երևան, «Լուսաս» ՍՊԸ տպարան, 523 էջ:

Գ. Մամուլ

«Արարատ» **1914**, Յուլիս, Ս. Էջմիածին:

«Նոր աշխատավոր» **1920**, 14 ապրիլի, Թիֆլիս:

«Մշակ» **1920**, 9 մայիսի, Թիֆլիս:

Դ. Հուշագրություն

Իշխանյան Ե. **1999,** Լեռնային Ղարաբաղ (1917-1920)**,** Երևան, «Հայաստան», 730 էջ:

[1] Տես Տ. Ներսէս քահանայ Ասրեան 2018, 509-528:

[2] Ամենավառ վկայությունը Ստեփանակերտի Ս. Աստվածամոր Հովանի փառահեղ մայր եկեղեցու կառուցումն է, որի օծման և բացման արարողությունը կատարվեց Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի ձեռամբ 2019 թ. ապրիլի 7-ին՝ Արցախի թեմի վերաբացման 30-ամյակի առիթով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Шагинян М. **1931**, Советское Закавказье, Очерки, 1922-1930, Москва, Государственное издательство художественной литературы “Ленинград”, 680 с.
2. Мелик-Шахназаров З. **1995**, Записки карабахского солдата (Воспоминания участника событий 1918-20 гг. в Нагорном Карабахе), Москва, 79 с.
3. Աբրահամյան Հ. **2003**, Մարտնչող Արցախը 1917-2000, Գիրք Ա, 1917-1923, Երևան, «Զանգակ-97», 340 էջ:
4. Աբրահամյան Հ. **2009**, Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցախի թեմը (1901-1933), Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչութիւն, 224 էջ:
5. Բալայան Մ. **2007,** Շուշիի վերածումը Ղարաբաղի հոգևոր կենտրոնի, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան», Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 70-78:
6. Մկրտչյան Շ., Դավթյան Շ. **2008,** Շուշի. ողբերգական ճակատագրի քաղաքը, Երևան, «Գասպրինտ», 242 էջ:
7. Մկրտչյան Հ. **2014,** Շուշիի կուսանաց անապատը, «Շուշին՝ հայկական մշակույթի օջախ», Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված գիտական կոնֆերանսի զեկուցումներ, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, էջ 204-213:
8. Գարիկ սարկավագ Ասրյան **2016**, Արցախի թեմը Խորհրդային Ադրբեջանի բռնաճնշումների կիզակետում 1920-1933 թթ., «21-րդ դար», Երևան, թիվ 5 (69), էջ 97-110:
9. Տ. Ներսէս քահանայ Ասրեան **2017**, Արցախի փակուած թեմի պատմութիւնից (1933-1988), «Հայկազեան Հայագիտական Հանդէս», Հատոր ԼԷ., Պեյրութ, էջ 245-276:
10. Տ. Ներսէս քահանայ Ասրեան **2018,** Արցախի վերաբացուած թեմը Խորհրդային միութեան վերջին տարիներին (1988-1991), «Հայկազեան Հայագիտական Հանդէս», Հատոր ԼԸ., Պեյրութ, էջ 509-528:

Ամփոփում

1920 թ. Շուշիի ցեղասպանության հետևանքով Արցախի թեմի կորուստները և հետագա ողբերգական ճակատագիրը

Տ. Ներսես քահանա Ասրյան

1920 թ. մարտին Ադրբեջանի կողմից Շուշիի հայության նկատմամբ իրականացված ցեղասպանության հետևանքով հսկայական կորուստներ ունեցավ նաև Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը: Շուշին 1830-ական թվականներից Արցախի թեմի հոգևոր կենտրոնն էր, այստեղ էր կենտրոնացված ադմինիստրատիվ ռեսուրսը և հոգևոր-մշակութային ու նյութական ժառանգության զգալի մասը: Ադրբեջանցիների իրականացրած ցեղասպանության հետևանքով այդ ամենը բառացիորեն ոչնչացվեց: Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը և թեմական վարչության անդամների մեծամասնությունը դաժանաբար սպանվեցին: Եկեղեցական ամբողջ ունեցվածքը կողոպտվեց կամ հրկիզվեց:

Եկեղեցական ղեկավարությունից ու հոգևոր կենտրոնից զրկված Արցախի թեմը հայտնվեց խիստ խոցելի ու անպաշտպան իրավիճակում: Ադրբեջանական իշխանությունները հետևողականորեն մեծացրին բռնաճնշումները և 1933 թ. վերջնականապես փակեցին Արցախի թեմը: Մինչև 1988 թ. Արցախի տարածքում արգելված էր Հայ առաքելական եկեղեցու գործունեությունը:

Միայն արցախյան ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ հնարավոր եղավ Արցախում վերականգնել հոգևոր-եկեղեցական կյանքը և արցախահայության կրոնի ու դավանանքի ազատության իրավունքը:

Հիմնաբառեր. *Ադրբեջան, Շուշի, ցեղասպանություն, Արցախի թեմ, Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյան, կորուստներ, բռնաճնշումներ:*

Резюме

Потери Арцахской Епархии в результате геноцида в Шуши и ее дальнейшая трагическая участь

Отец Нерсес Асрян

В результате совершенного Азербайджаном геноцида армян в городе Шуши в марте 1920г. Арцахская епархия Армянской Апостольской Церкви тоже понесла колоссальные потери. Начиная с 1830-х гг. Шуши являлось духовным центром Арцахской епархии, где были сосредоточены административный ресурс и значительная часть духовно-культурного, а также материального наследия. Все это было буквально уничтожено в результате геноцида, совершенного азербайджанцами. Глава Арцахской епархии епископ Ваан Тер-Григорян и большинство членов епархиального управления были жестоко убиты. Все церковное имущество было разворовано или предано огню.

Лишенная церковного руководства и духовного центра, Арцахская епархия оказалась в крайне уязвимой и беззащитной ситуации. Азербайджанские власти последовательно усилили репрессии и в 1933 году окончательно ликвидировали Арцахскую епархию. До 1988г. деятельность Армянской Апостольской Церкви на территории Арцаха была запрещена.

Только благодаря Арцахской национально-освободительной борьбе стало возможным восстановить духовно-церковную жизнь и право армян Арцаха на свободу религии и вероисповедания.

Ключевые слова: *Азербайджан, Шуши, геноцид, Арцахская епархия, епископ Ваан Тер-Григорян, потери, репрессии.*

Abstract

Losses of the diocese of Artshakh as a result of Shoushi genocide of 1920 and further tragic fate

Father Nerses Asryan

The Artsakh Diocese of the Armenian Apostolic Church also suffered huge losses due to the genocide committed by Azerbaijan against the Armenians of Shushi in March 1920. Since 1830s Shushi had been the spiritual center of the Diocese of Artsakh, and the administrative resources, as well as the major part of the cultural, spiritual and material heritage were accumulated there. As a result of the genocide committed by the Azerbaijanis, all of this has been literally destroyed. Bishop Vahan Ter-Grigorian, the leader of the Diocese of Artsakh, and the majority of the Diocesan Board were brutally murdered. The whole Church property was stolen or burnt. Deprived of the Church leadership and spiritual center, the Diocese of Artsakh found itself in an extremely vulnerable and defenseless situation. The Azerbaijani authorities consistently intensified their repressions, and in 1933 they ultimately banned the Diocese of Artsakh. Until 1988, the activities of the Armenian Apostolic Church were banned in the territory of Artsakh.

Only thanks to the Artsakh national-liberation struggle it was possible to restore the spiritual-ecclesiastical life in Artsakh and the right of the Armenians of Artsakh to freedom of religion and belief.

Keywords: *Azerbaijan, Shushi, genocide, Diocese of Artsakh, Bishop Vahan Ter-Grigorian, losses, repressions.*

ՄԵԼԱՆՅԱ ԳՈՒՐԳԵՆԻ ԲԱԼԱՅԱՆ
պ.գ.թ., դոցենտ,
ԱՀ ԿԳՄ նախարարություն
melanyabalayan@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 10.04.2021,
գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 20.04.2021

1920 ԹՎԱԿԱՆԻ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՇՈՒՇԻՈՒՄ

1836թ. ռուսական կայսրության հայտնի կանոնադրությամբ Շուշին ճանաչվել էր Ղարաբաղի հոգևոր կենտրոն, որտեղ էլ տեղակայվել էր առաջնորդարանը: Լեոյի բնորոշմամբ՝ «Շուշին դառնում էր հոգևոր կենտրոն այն հայության համար, որ ապրում էր երեք քաղաքներում (Շուշի, Նուխի, Լենքորան) և դրանց վերաբերուող գաւառներում»[1]:

Այս իրողությունը ինքնին նոր հնարավորություն էր Շուշիի հոգևոր կյանքի վերընթացի, ինչն էլ անվերապահորեն կատարվեց:

Շուշիի հայաբնակ թաղամասերից յուրաքանչյուրը ունեցել է իր հոգևոր կենտրոնը՝ եկեղեցին: XIX դարասկզբից մինչև 1920թ. այստեղ կառուցվել և ակնառու հոգևոր գործունեություն են իրականացրել Ագուլեցոց Ս.Աստվածածին, Մեղրեցոց Ս.Աստվածածին, Ղազանչեցոց Ս.Ամենափրկիչ, Վերին Թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ կամ Ղարաբաղցոց, Ներքին Թաղի Ս.Աստվածածին, Կուսանաց Ս.Աստվածածին եկեղեցիները:

Ագուլեցոց Ս.Աստվածածին եկեղեցու մասին առաջին տեղեկությունները վերաբերում են 1785թ.[2], իսկ 1822թ. եկեղեցին պարզապես վերակառուցվել է և հայտնի էր որպես «…զհոյակապ նորաշէն տաճարս յանուն սբ. Աստվածածնի»[3]:

Մեղրեցոց Ս.Աստվածածին եկեղեցու մասին մեզ հայտնի առաջին հիշատակությունը վերաբերում է 1708թ.[4]: Եկեղեցին վերակառուցվել է 1832թ., այնուհետև 1906թ. հիմնովին վերանորոգվել էր:

---

[1] Լէօ 1914, էջ 124:
[2] ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 616, թ. 24:
[3] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2626, թ. 8:
[4] Թօփճեան Յ. 1895, 45:

Շուշիի արևելյան Ներքին թաղում գործում էր Ս.Աստվածածին եկեղեցին: Սակայն թաղամասում թուրքերի աստիճանական ներթափանցման հետևանքով հայերը ստիպված տեղափոխվեցին Վերին թաղամաս, որտեղ էլ 1847թ. կառուցեցին Ս.Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (Կանաչ ժամը): 1844-1858թթ. կառուցվեց Շուշիի ամենամեծ հոգևոր կենտրոնը համարվող Ղազանչեցոց Ս.Ամենափրկիչ մայր տաճարը:

1838թ. բացվեց Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմական դպրոցը: Թեմական դպրոցի բացումը և արդյունավետ գործունեությունը, հոգևոր մյուս դպրոցների հետ միասին, ևս իրենց նպաստը բերեցին Շուշիում և ողջ Ղարաբաղում հոգևոր-մշակութային կյանքի աննախադեպ վերընթացին:

Սակայն 1918-20թթ. տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները միանգամայն այլ ընթացք հաղորդեցին Հայ առաքելական եկեղեցու, մասնավորապես Արցախի թեմի գործունեության ու, վերջին հաշվով՝ գոյության առումով:

Դեռևս 1918 թվականից Ադրբեջանը կանոնավոր զորամասեր էր կենտրոնացրել Ղարաբաղի սահմանին և պարբերաբար հարձակումներ էր գործում՝ նպատակ ունենալով նվաճել այն: Ղարաբաղը հայտնվել էր շրջափակման մեջ:

1918թ. Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսը նամակ է ուղարկել Մայր Աթոռ, որում մանրամասն ներկայացրել է թուրքական հարձակումների հետևանքով ստեղծված կացությունը, եկեղեցիների ու վանքերի բացահայտ կողոպուտը, թալանն ու ավերածությունները. «Տաճկա-ադրբէջանական արշաւանքը մեր վիճակում աւերել է 35-ի չափ հայ գիւղեր, որոնց 11-ը Վարանդայի և Խաչէնի գաւառածայրերից են: ...Ժողովրդի մի մասը կոտորած, եկեղեցիները նոյնպէս կողոպտուած»[1]:

1919թ. մայիսի 20-ից, ինչպես Համլետ Հարությունյանն է գրել. «Ղարաբաղի հայության զանգվածային կոտորածի սկիզբը դրվեց»[2]: 1919թ. հունիսին Ղարաբաղում տեղի ունեցած կոտորածների կապակցությամբ արդեն իսկ իր ձայնը հնչեցրեց նաև Ամենայն հայոց Գևորգ 5-րդ կաթողիկոսը: Թիֆլիսում գտնվող անգլիական գեներալ Կորիին ուղղված հեռագրում վեհափառ հայրապետը խնդրում էր պաշտպան կանգնել Ղարաբաղի հայությանը, որը գտնվում էր նոր ջարդերի վտանգի առաջ[3]:

1920թ. Շուշիում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը թերևս դարձավ ամենաողբերգական իրադարձությունը Ղարաբաղի հոգևոր մշակութային կենտրոնի համար: Ցեղասպանության հետևանքով մեծապես տուժեց նաև Հայ առաքելական եկեղեցու Ղարաբաղի հոգևոր թեմը: Ժամանակակցի վկայությամբ «Շուշին միակ շաղկապն էր 300.000 հայ բնակչութեան, և ներկայումս երբ չկայ այդ քաղաքը, չկայ ուրեմն նաև հոգևոր և կրթական կենտրոն ահագին բնակչութեան համար, չկայ մարմնի սիրտը, չկայ Ղարաբաղին և Զանգեզուրին մտաւոր կեանքին մատակարարողը: Ղարաբաղին հասցված հարվածը

---

[1] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933թթ.) 2001, 662-663:

[2] Հարությունյան Հ., Շուշիի հայության կոտորածները (1919 թ. Հունիս և 1920թ. մարտ), էջ 52: http://armstudies.asj-oa.am/68/1/50.pdf

[3] «Ժողովուրդ» 1919, 22 հունիսի; «Ազգ» 1919, Բոստոն, 2 սեպտեմբերի:

խիստ անգութ էր և անփոխարինելի»[1]: Իրավամբ, Շուշին հոգևոր-մշակութային ու կրթական կենտրոն էր ոչ միայն Ղարաբաղի, այլև հոգևոր թեմի մեջ ներառված ավելի ընդարձակ տարածքների՝ Զանգեզուրի համար: Հետևաբար, ինչպես պահպանված վավերագիրն է վկայում՝ «հասցված հարվածը անգութ էր»:

Հոգևորականության և եկեղեցու դեմ իրականացված բռնությունների մասին պահպանվել են բազմաթիվ վկայություններ ինչպես ժամանակակիցների թողած վկայություններում, այնպես էլ Հայ եկեղեցու վավերագրերում:

Շուշիում տեղի ունեցած կոտորածների և մասնավորաբար հոգևորականության նկատմամբ կատարած բռնարարքների նկարագրությամբ կոնսիստորիայի անդամ Կարապետ քահանա Վարդապետյանցը հատուկ զեկուցագիր է ուղարկել Ամենայն հայոց կաթողիկոսին՝ միաժամանակ խնդրելով թեմի նոր կառավարիչ նշանակել. «Տարւոյս մարտի 10, 23-ին Շուշում սկսած կռիվները խաչ դրին քաղաքի հայկական թաղի վրայ: Այրւեց հայոց ամբողջ քաղաքամասը… Վահան եպիսկոպոսը սպանւեց առաջնորդարանում, չկամենալով դուրս գալ: Առաջնորդարանը, թեմական դպրոցը, եկեղեցիները թալանւած են, ապա այրւած: Կռիվը սկսւելով առաւօտեան ժամը 5-ին՝ հնարաւորութիւն չի եղել կոնսիստորիայից ոչ մի դոկումենտ, ոչ մի գործ ու գանձ ազատել, նոյնպէս և եկեղեցիներից»[2]: Վերոնշյալը փաստացի վկայություն է նաև եկեղեցում պահպանվող արժեքավոր փաստաթղթերի ու եկեղեցական այլ մասունքների կորստի մասին: Նույն վավերագիրը հաղորդում է նաև, որ «Վահան եպիսկոպոսի սպանութեան մասին մեզանից յետոյ դուրս եկած հայ ոստիկանապետ Աւետիք Տէր-Ղուկասեանը պատմում է, որ նոյն օրը երեկոյեան ժամը 10-ին ինքը կարողացել է մտնել Սրբազանի մօտ և յայտնել, թէ այլևս հնար չկայ մնալու, պէտք է կամ փախչել, կամ մի կերպ ընկնել Սուլթանովի մօտ: Սրբազանը պատասխանել է, թէ առաջնորդարան և կոնսիստորիա չեմ թողնիլ և չդուրս գալ և վստահ, որ թուրքերն իրան ձեռք չեն տալ, յամառում է ու նստում…»[3]:

Ըստ նույն վավերագրի. «Կոնսիստորիայի կողմից սպանւած են՝ անդամ Խորեն ա.քահ. Իսկանդարեանը, կարգապահ Անանիա Տէր-Դանիէլեանը և դիւանապահ Յովհաննէս Ղարաբէկեանը: Քահանաներից սպանւած է Յարութիւն ա.քահ. Վարդապէտեանը …: Այսպէս ահա չկայ հոգևոր վարչութիւն և մնացել ենք մի անդամ ու մի ատենադպիր»[4]:

Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Մխիթար եպիսկոպոսը Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղված հատուկ գրության մեջ, իր մտահոգությունն արտահայտելով թուրքերի կողմից Շուշիի գրավման մասին, նշել է. « … տարւոյս ապրիլի 6-ին, թուրքերը, վերցնելով Շուշին, աւերել եւ ոչնչացրել են քաղաքի հայկական մասը, կոտորելով առանց սեռի և հասակի խտրութեան մօտ 5000 հայ, որոնց թւում թեմական առաջնորդ տ. Վահան սրբազան եպիսկոպոսին, որի գլուխը կտրելով բարբարոսաբար շրջեցրել են քաղաքում ի տես գազանացած խուժանի: Սպանուած են և բոլոր քահանաները, բացառութեամբ տ. Գաբրիէլ քահանայ տ. Յով-

[1] ՀՅԴ ԿԱ, թղ. 1649, գ. 1, էջ 3:
[2] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, 747:
[3] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, 747:
[4] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, 747:

հաննիսեանի, որը բանտից փախչելով՝ մահուանից ազատվել է: Շուշիի մնացած հայ բնակչութիւնը, մօտաւորապէս 6000 հոգի, քաղաքից հեռանալով գիւղերը, ազատուել են կոտորածից: Շուշիի հետ մենք ներկայումս հաղորդակցութիւն չունենք»[1]:

Հիրավի, գազանության ակնհայտ դրսևորում, որ թուրքի կողմից արդեն իսկ թե անսպասելի և թե եզակի չէր[2]: Շուշիում հայերի նկատմամբ իրականացված սպանդի մասին հոգեցունց վկայություններ է պարունակում նույն օրերին Շուշիում գտնված Զարեհ Մելիք-Շահնազարյանի «Ղարաբաղցի զինվորի գրությունները» հուշագրությունը, որում ներառված են թե հեղինակի և թե այլ շուշեցիների դժնդակ օրերի հուշերը: «Շուշիի սպանդից չորս օր անց հանդիպեցինք գեղեցկուհի, սակայն կիսախելագարված Տաթևիկ Տեր-Սահակյանցին, որը հրաշքով էր փրկվել սպանդից և սարսափով պատմում էր թուրք ոճրագործների գազանությունների մասին, նշելով. «հայ գերիներին հերթով բերում էին սուր դանակը ձեռքին թուրք դահճի մոտ: Առաջինը բերում են ձեռքերը մեջքին կապած, ոտքերը երկաթներով շղթայված գեղեցկահասակ, երկարամիրուք քահանա Տեր-Հարությունին և սուր դանակով գլխատում: Այնուհետև քահանայի գլուխը ցից են հանում ու տանում քաղաքի թուրքական թաղամասի փողոցներով ի ցույց բոլորի»[3]:

Թիֆլիսում հրատարակվող «Սլովո» ռուսալեզու թերթը նույն 1920թ. ապրիլի 16-ին գրել է. «քաղաքի հայկական թաղամասում քարը քարի վրա չի մնացել»:

1886 թվականից Կուսանաց Ս.Աստվածածին եկեղեցու մայրապետն էր Վարվառա Բահաթրյանցը: 1920թ. հայերի ջարդերի ժամանակ Կուսանաց անապատից փրկվել են միայն Հռիփսիմե մայրապետն ու Նունե Սարգսյանը, որոնք ապաստանել են Աշխաբադում[4]: Վերջինս նույնպես որոշ հուշագրություններ է թողել 1920թ. իրադարձությունների մասին[5]:

Ի դեպ, ժամանակակիցների վկայությունների շարքում կարևոր տեղ ունեն նաև կոտորածին մասնակցած թուրք զինվորների ու կամավորների նամակները: Բաքվի իրենց հարազատներին ուղարկված գրություններում նրանք անթաքույց հպարտությամբ են նկարագրել Ղարաբաղում տեղի ունեցած դեպքերն ու մահմեդականների կատարած աննախադեպ թալանը: Այսպես՝ ջարդերի մասնակից թուրք սպա Իսմայիլ Ալիմարդանբեկովը Շուշիից Բաքվում ապրող իր եղբորը հղված նամակում գրել է. «… Տեսածդ Էրմանիստանը (խոսքը Շուշիի հայկական թաղամասին է վերաբերում. - Մ.Բ.) հիմնովին վառված է, հինգ կամ տասը տուն պահեցինք: Հազարից ավելի հայեր գերի բռնվեցին, տղամարդկանց բոլորին կոտորեցինք, մինչև անգամ ավետարանը, խալիֆին (Վահան եպիսկոպոսին) …»[6]: Փաստերը բազմաթիվ են ու խոսուն:

1920թ. մարտի 23-ի ողբերգական իրադարձությունների հետևանքով Շուշիի հայկական թաղամասի հետ միասին հրկիզվեցին նաև հայ հոգևոր-պաշտամուն-

---

[1] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, 749:
[2] Բալայան Մ. 2009, 207:
[3] Мелик-Шахназаров З. 1995, 40-41.
[4] Բալայան Վ. 2017, 279:
[5] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2722, թ. 7-8:
[6] Բալայան Վ. 2017, 445:

քային ճարտարապետության կարևորագույն կոթողները՝ եկեղեցիները:

Ագուլեցոց եկեղեցին թուրքերը հրկիզել էին դեռևս 1905թ. հայ-թաթարական ջարդերի ժամանակ: Սակայն եկեղեցին կիսավեր պահպանվել է մինչև 1972թ.: Խորհրդային ժամանակներում թուրքերը հիմնահատակ քանդել և տեղում կառուցել են թուրքական դպրոց[1], իսկ եկեղեցու կառուցման մասին արձանագրությամբ ճակատային քարը վերջերս գտնվել է Շուշիի հայկական գերեզմանատանը:

1920թ. Մեղրեցոց Ս.Աստվածածին եկեղեցին ևս հրկիզվեց: Նրանից պահպանվել են եկեղեցու կիսավեր պատերի որոշ մնացորդներ:

1920թ. մարտի 23-ին Շուշիի հայկական թաղամասի հետ միասին հրկիզվեցին նաև Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցը, Մեղրեցոց եկեղեցուն կից գործող ծխական դպրոցի երկհարկանի շենքը, Վերին թաղի կամ Կանաչ ժամի և Ագուլեցոց եկեղեցական ծխական դպրոցների շենքերը: Գանձակից Լևոն վարդապետը 1920թ. ապրիլի 21-ի գրությամբ հետևյալն է հաղորդել. «Ղարաբաղից ստացուած տեղեկութիւնները արդէն աներկբայօրէն ասում են Շուշու հայկական մասի աւերածութիւն, հայ բնակչութեան կոտորածը, որի ժամանակ սպանուել են Վահան Սրբազանը և քահանաները: Եւ ինչպէս պատմում են ռուս բժիշկ, ինտելիկենդ ռուսներ, բարեացակամ զինուորական թուրքեր, այդ աւերածութիւնը և կոտորածը ամենասոսկալիներից են, որոնց ենթարկուել են և շրջակայ հայ գիւղերը: … մինչև իսկ մի ռուս պաշտօնեայ ինձ յանձնեց մի բանալի, ըստ երևույթին եկեղեցու, որը նա գտել է Հայոց մասում և տեսել մի հայ քահանայի դիակ՝ ի շարս այլ սպանուածների»[2]:

1918-20թթ. աննախադեպ բռնությունները պատճառ հանդիսացան Շուշիում ազգային ու հոգևոր կյանքի ընդհանուր անկման: Ակնհայտ փաստ է, որ ցանկացած ժողովրդական շարժում կամ պատերազմ ունի իր ծնող պատճառները, և դրանց հիմնավոր լուծումը մեծապես կախված է համակողմանի վերլուծությունից ու ճիշտ ընկալումից: Արցախյան հիմնախնդրի լուծման պարագայում թերևս ճիշտ կողմնորոշվելը այնքան էլ դժվար չէ, քանզի ինչպես պատմական փաստերը, այնպես էլ մարդկային քաղաքակրթության ներկա ժամանակներում տեղի ունեցող իրադարձությունները ավելի քան ակնառու են և մատնանշում են միայն մեկ ճանապարհ, որ կոչվում է. «Ազգային միասնությամբ դեպի նոր վերածնունդ ու հզոր ազգային պետականություն» գաղափարը:

Եզրակացություն

XIX դարի սկզբներից Շուշիում և ողջ Ղարաբաղում հոգևոր-մշակութային կյանքը աննախադեպ վերընթաց ապրեց: Շուշիի հայաբնակ թաղամասերից յուրաքանչյուրը ունեցավ իր հոգևոր կենտրոնը՝ եկեղեցին:

1918-20թթ. բռնությունները պատճառ հանդիսացան Շուշիում ազգային ու հոգևոր-մշակութային կյանքի ընդհանուր անկման:

1920թ. մարտի 23-ի ողբերգական իրադարձությունների հետևանքով զոհվեցին Ղարաբաղի հայոց հոգևոր թեմի առաջնորդը և Շուշիի հոգևորականության

[1] Բալայան Վ. 2017, 281:
[2] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, 744-745:

մեծ մասը: Շուշիի հայկական թաղամասի հետ միասին հրկիզվեցին նաև եկեղեցիները, դպրոցները:

Թուրքերի կողմից Շուշիում 1920թ. մարտի 23-ին հայերի նկատմամբ իրականացված ջարդերը կրել են ընդծված քաղաքական, կրոնական ու մշակութային նպատակներ:

Հոգևորականության և եկեղեցու դեմ իրականացված բռնությունների մասին պահպանվել են բազմաթիվ վկայություններ ինչպես ժամանակակիցների թողած վկայություններում, այնպես էլ Հայ եկեղեցու վավերագրերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱԱ, ֆ. 332, g. 1, գ. 616, թ. 24:
2. ՀԱԱ, ֆ. 56, g. 1, գ. 2626, թ. 8:
3. ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 2722, թ. 7-8:
4. ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 1, էջ 3:
5. Ազգ, Բոստոն, 1919, 2 սեպտեմբերի:
6. Բալայան Մ. 2009, Հայ Աղվանից եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը), Ստեփանակերտ, Վաչագան Բարեպաշտ, 240 էջ:
7. Բալայան Վ. 2017, Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, Զանգակ, 560 էջ, 32 էջ ներդիր:
8. Թօփճեան Յ. 1895, Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Ա., Վաղարշապատ, 112 էջ:
9. Ժողովուրդ 1919, 22 հունիսի:
10. Լէօ 1914, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի (1838-1913), Թիֆլիզ, հրատ. Նոյն դպրոցի հոգաբարձութեան, տպարան Ն.Աղանեանի, Պոլից. 7, 692 էջ:
11. Հարությունյան Հ. 2015, Շուշիի հայության կոտորածները (1919թ. հունիս և 1920թ. մարտ), էջ 50-69: http://armstudies.asj-oa.am/68/1/50.pdf
12. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, գիրք Թ., Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), կազմեց և առաջաբանը գրեց Սանդրօ Բեհբուդեանը, Երևան, Ոսկան Երեւանցի, 980 էջ:
13. Мелик-Шахназаров З. 1995, Записки Карабахского солдата (воспоминания участника событий 1918-1920гг. в Нагорном Карабахе), Москва, Шварц, 79 с.

Ամփոփում

1920 թվականի բռնությունները Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ Շուշիում

Մելանյա Բալայան

XIX դարի սկզբներից Շուշիում և ողջ Ղարաբաղում հոգևոր-մշակութային կյանքը աննախադեպ վերընթաց ապրեց: Սակայն 1918-20թթ. բռնությունները պատճառ հանդիսացան Շուշիում ազգային ու հոգևոր-մշակութային կյանքի ընդհանուր անկման: 1920թ. մարտի 23-ի ողբերգական իրադարձությունների հետևանքով զոհվեց հոգևորականության մեծ մասը, որոնց թվում էր Ղարաբաղի հայոց հոգևոր թեմի առաջնորդը: Շուշիի հայկական թաղամասի հետ միասին հրկիզվեցին նաև հայ հոգևոր ճարտարապետության կարևորագույն կոթողներ հանդիսացող եկեղեցիները: Հոգևորականության և եկեղեցու դեմ իրականացված բռնությունների մասին պահպանվել են բազմաթիվ վկայություններ ինչպես ժամանակակիցների թողած վկայություններում, այնպես էլ Հայ եկեղեցու վավերագրերում:

Հիմնաբառեր. *Ղարաբաղ, եպիսկոպոս, հոգևորականություն, եկեղեցի, առաքելական, ծիսական, քաղաքականություն, Շուշի:*

Резюме

Насилие в отношении Армянской Апостольской Церкви в Шуши в 1920 году

Меланя Балаян

С начала XIX века национально-духовная и культурная жизнь переживала беспрецедентный рост как в г. Шуши, так и во всем Карабахе. Однако, политические события в 1918-20гг. привели к общему спаду национальной и культурной жизни города Шуши. В результате трагических событий 23 марта 1920г. большинство армянских священнослужителей были убиты, в их числе глава Епархии Армянской Апостольской церкви Карабаха. Вместе с армянским кварталом г. Шуши были подожжены церкви, которые являются важными памятниками армянской архитектуры. Сохранились многочисленные свидетельства о вандализме и насилии, которые были организованы в отношении Армянской Апостольской церкви и духовенства Карабаха, как в воспоминаниях современников-очевидцев, так и в документах Армянской церкви.

Ключевые слова: *Карабах, епископ, духовенства, церковь, апостольский, политика, Шуши.*

Abstract

Violence against the Armenian Apostolic Church in Shushi in 1920

Melanya Balayan

At the beginning of the XIX century the cultural-religious life in Shushi and in the whole territory of Karabakh has been incredibly flourished. However, the violence of 1918-1920 led to a complete decline in national, cultural and religious life in Shushi. As a result of tragic events of March 23, 1920, the majority of Armenian clergy and religious leaders were killed or beheaded; among them was the Primate of the Diocese of Artsakh of the Armenian Apostolic Church. Together with the Armenian district of Shushi, the churches which are considered to be the valuable monuments of Armenian religious architecture were set on fire. Numerous testimonies of violence against the clergy have been preserved both in the testimonies of contemporaries and in the documents of the Armenian Apostolic church.

Keywords: *Karabakh, Bishop, clergy, church, Apostolic, parish, politics, Shushi.*

ՎՐԵԺ ԿԻՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
պ. գ. թ.,
ԱՀ ԿԳՄՄ նախարարություն,
Vrezh1639@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 10.04.2021,
գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 20.04.2021

«ՇՈՒՇԻԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

(XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

XIX դարի սոցիալ-տնտեսական տեղաշարժերը որոշակի պայմաններ էին ստեղծում կրթաուսումնական կյանքի զարգացման համար: Նոր տնտեսական հարաբերությունները պահանջ են դնում ունենալ ուսյալ մասնագետներ: Հայ մեծահարուստները միջոցներ չէին խնայում իրենց զավակներին, ինչպես նաև տաղանդաշատ հայրենակիցներին հայրենի երկրում և արտասահմանում ուսում տալու: Քաղաքի մշակույթի բնագավառում ձեռք բերած հաջողությունները արդյունք էին դպրոցական կյանքի կազմակերպման, ինչում անգնահատելի դեր ունեցան հայ առաքելական եկեղեցին և, մասնավորապես, Արցախի թեմի առաջնորդները:

1820-1920 թթ. ընթացքում Շուշիում գործող թվով տասը կրթօջախների համբավը դուրս էր եկել երկրամասի սահմաններից: Դրանց թվում էին Ղարաբաղի Հայոց թեմական դպրոցը (հիմնվել է 1838 թ.), Ղարաբաղի Տիրամայր Սուրբ Մարիամ օրիորդաց ուսումնարանը (1864 թ.), Ռեալական ուսումնարանը (1881 թ.), Մարիամ-Ղուկասյան օրիորդաց գիմնազիան (1912 թ.) և այլն:

Մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում մեծ էր բարերարների դերը, որոնց հատկացրած նյութական միջոցներով էլ հիմնվել են դպրոցներ և ուսումնարաններ:

Դպրոցների դերը Շուշիի կյանքում անժխտելի է, և այդ տեսակետից առաջնության պատիվը պատկանում է Հայոց թեմական հոգևոր դպրոցին: Այն բացվել է 1838 թ. հունիսի 22-ին Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյանի ջանքերով

ու միջոցներով: Սկզբում դպրոցը պահպանության որոշակի աղբյուրներ չուներ: Բաղդասար միտրոպոլիտը դպրոցը բացեց՝ հույսը դնելով հայրենակիցների աջակցության և օժանդակության վրա[1]:

Սեփական շենք չունենալու պատճառով դպրոցը տեղավորված է եղել վարձու շենքում՝ տարեկան 100 ռուբլի վարձով: Դպրոցն սկզբում 65 աշակերտ և 2 ուսուցիչ ուներ: Նյութական սղության պատճառով այն 1843 թ. ժամանակավորապես փակվել է: 1845 թ. միտրոպոլիտը կրկին ժողովրդի օգնությանն է դիմում, և դպրոցը նույն թվի օգոստոսի 17-ին վերաբացվում է՝ 45 աշակերտով և 5 ուսուցչով[2]: Շուշեցի Քալանթարյաններն իրենց տունը վեց ամիս ժամանակով ձրի տրամադրում են դպրոցին, իսկ պետական դպրոցի տեսուչ Խիտրովը հանձն է առնում ձրի վարել դպրոցի տեսչության պաշտոնը և ռուսերեն, պատմություն ու աշխարհագրություն դասավանդել[3]:

Թեմական դպրոցը պահելու նպատակով Բաղդասար միտրոպոլիտը յուրաքանչյուր ծխականից գանձվող հատուկ տուրք (20 կոպեկ) սահմանեց, իր միջոցներով շենք կառուցեց: 1853 թ. իր հիմնադրած թեմական դպրոցի համար շենք կառուցելու նպատակով նա առաջնորդարանի դիմաց հողատարածք է վերցնում, սակայն մահվան պատճառով նրա ձեռնարկումը մնում է անկատար: Դա ավարտին է հասցնում Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը՝ 1872 թ. հունիսի 22-ին կատարելով դպրոցի նոր շենքի բացումը:

Դպրոցն ավելի բարեկարգ տեսք է ստանում 1908-1910 թթ. տեսուչ Ավետիք Տեր-Պողոսյանի օրոք և նրա ջանքերով[4]:

1913 թ. շուշեցիները պատրաստվում էին նշելու դպրոցի հիմնադրման 75-ամյակը[5]: Թեմականի հիմնադրման հոբելյանի առիթով հանգանակություններ են կատարվում: Զավեն և Բաբկեն եպիսկոպոսները հանգանակում են 600.000 ռուբլուց ավելի գումար, որը ներառում էր մոսկվաբնակ ղարաբաղցի Բաղդասար Արզումանյանի նվիրաբերած 200.000 ռուբլին, Հռիփսիմե Խանդամիրյան-Ղուկասյանի, դպրոցի սան Միքայել Արամյանցի, Մովսես Թավադյանի, Գրիգոր Բեգլարյանցի որդիների նվիրաբերությունները և այլն[6]: Միքայել Արամյանցը դպրոցին էր նվիրել 45.000 ռուբլի արժողությամբ իր տունը, որը գտնվում էր Շուշիում: Նա իր վրա էր վերցրել նաև վերակառուցման և ճանապարհի վերանորոգման ծախսերը[7], որի համար հուլիսի 18-ի կոնդակով ստացել էր Վեհափառի օրհնությունը[8]:

Թեմական դպրոցին գումարներ են նվիրաբերել նաև մոսկվաբնակ Ա. Խանդամիրյանը՝ 10.000 ռուբլի, շուշեցի բաքվաբնակ Ղարաբեկյանցը՝ 1000 ռուբլի, Պողոս Ալեքսանյանը՝ 3000 ռուբլի, Մկրտիչ Հովհաննիսյանը և Սուրեն Ադամյանը՝ 20.000 ռուբլի, Պողոս Ղուկասյանը՝ 10.000 ռուբլի, Մնացական Խունունցը՝

---

[1] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 174, թ. 115:
[2] Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), Թիֆլիս, 1914, էջ 183:
[3] «Տարազ», Թիֆլիս, 1913, հմ. 7-8:
[4] Խուդոյան Ս., Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Եր., 1987, էջ 370-374:
[5] Քոչարյան Ա., Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի հիմնադրման 75-ամյակի տոնակատարությունները՝ ըստ արխիվային վավերագրերի, ԲՀԱ, 2012, հմ. 1-2, էջ 213:
[6] «Տարազ», Թիֆլիս, 1913, հմ. 7-8:
[7] Անթանեսյան Վ., Միքայել Արամյանց, Եր., 2011, էջ 46:
[8] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 309, թ. 86 շրջ.-87:

7000 ռուբլի և ուրշներ[1]:

Շուշիում մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում մեծ ավանդ են ներդրել Թադևոս Թամիրյանն ու Արիստակես Խանդամիրյանցը: Վերջինս իր մահից առաջ այդ նպատակի համար հատկացրել է 15.000 ռուբլի, որը, տարիներ շարունակ մնալով բանկում, 1891 թ. կազմել էր 48.000 ռուբլի: Նույն թվականին Խանդամիրյանցի ցանկությունն ի կատար է ածում նրա հարսը՝ Նինո Խանդամիրյանցը՝ այդ 48.000 ռուբլին բաշխելով հետևյալ կերպ. 20.000 ռուբլի հատկացնում է Շուշիի Հայոց թեմական դպրոցին, 20.000 ռուբլի՝ Շուշիում օրիորդական նոր ուսումնարան բացելու, 5.000 ռուբլի՝ այդ դպրոցի գավիթը դրսից ջուր բերելու գործին, իսկ մնացած 3.000 ռուբլին՝ չքավոր հայ աշակերտներին: Իսկ Թադևոս Թամիրյանը մեկ միլիոն ռուբլի էր կտակել Շուշի քաղաքին, որից 300 000 ռուբլի՝ թեմական դպրոցներին, 100 000 ռուբլի՝ ռուս-թաթարական դպրոցին[2]:

1910 թ. Բաքվում բնակվող շուշեցի Պ. Թադևոսյանը 30.000 ռուբլի նվիրում է իր ծննդավայրի ազգային ուսումնարանին և խոստանում ապագայում ուսման ծրագրերը ընդլայնելու նպատակով ևս 20.000 նվիրել: 1912 թ. «Կոչնակ»-ը հայտնում է, որ Շուշիում մահացած Գրիգոր Բեգլարյանցի որդիները թեմական դպրոցին են հատկացրել 15.000 ռուբլի: 1915 թ. աշնան սկզբներին Թիֆլիսում վախճանված Ա. Թյունիպեկյանը կրթական նպատակների համար կտակում է 150.000 ռուբլի[3]:

Թեմական դպրոցի գործունեությունն ընդհատվեց 1920 թ. մարտին Շուշի քաղաքում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների պատճառով:

Շուշիի հայությունն Արևելյան Հայաստանում առաջինը լուրջ ուշադրություն դարձրեց աղջիկների կրթության գործին, և այդ հարցում իրենց մանկավարժական նվիրվածությամբ ակտիվ դերակատարություն ունեցան հենց արցախցի կին լուսավորիչները[4]: Այդ գործին նվիրվեցին առաջադեմ գործիչներ Պ. Շանշյանը, Պ. Պռոշյանը, Հ. Հախումյանը, Մ. Հախումյանը, և ուրիշներ, որոնց նախաձեռնությամբ 1864 թ. Շուշիում հիմնվեց «Դպրոցասեր հայուհյաց ընկերություն»-ը[5]: Ընկերության անմիջական օժանդակությամբ 1864 թ. ապրիլի 7-ին Շուշիում բացվեց օրիորդաց դպրոց մեծահարուստ Համբարձում Հախումյանի սեփական տանը՝ Մարիամ Հախումյանի միջոցներով և տնօրինությամբ: Վերջինիս խրախուսել և մեծապես օգնել էին այն ժամանակ թեմականի տեսուչ Պետրոս Շանշյանը և ուսուցիչ Պերճ Պռոշյանը: Այս դպրոցի բացումն այնքան մեծ իրադարձություն էր, որ անգամ փոխարքայի կին, մեծ իշխանուհի Օլգա Ֆյոդորովնան Մարիամ Հախումյանին հատուկ շնորհակալություն հայտնեց[6]:

Այստեղ բարձր մակարդակի վրա էր աղջիկների կրթման և դաստիարակման գործը: Մարիամ Հախումյանը խոստացել էր ուսումնարանի վարձը իր սեփակա-

[1] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ. Ա, Ստեփանակերտ, 2014, էջ 329-330:
[2] Բալայան Վ., Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Եր., 2017, էջ 335:
[3] http: //www.shushi.org/education.php.
[4] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, էջ 336-354:
[5] Հարությունյան Մ. Գ., Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին, Ստ., 2010, էջ 21:
[6] Ղարաբաղու տիրամայր Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացուիլը, Շուշի, 1864:

նությունից վճարել և իր հաշվին պահել երկու աղքատ աշակերտուհի[1]: Դպրոցում ուսուցումը հայերեն է տարվել: Այն փակվում է 1872 թ.:

Մարիամյան դպրոցի փակվելուց որոշ ժամանակ անց՝ 1879 թ. մարտի 13-ի հայրապետական կոնդակով Շուշիի առաջնորդական փոխանորդ Արիստակես վարդապետ Սեդրակյանի ջանքերով բացվեց Հռիփսիմյան իգական դպրոց[2]: Նրա գրության համաձայն՝ դպրոցի ֆինանսական աղբյուրները պատահական էին և սակավ, ուստի խնդրում էր օգտվել վիճակային արդյունքներից[3]: 1884 թ. Ղարաբաղի թեմի ծխական դպրոցների թեմական տեսչի ներկայացրած տեղեկագրի համաձայն՝ Հռիփսիմյան դպրոցը ժամանակավորապես գործում էր Արզուման Բաբալյանցի տանը՝ Կուսանաց անապատի մոտակայքում: Այն ուներ 2 դասարան՝ 50 աշակերտով[4]:

1886 թ. Շուշիում բացվում է ևս մեկ՝ «Մարիամյան» անունը կրող օրիորդաց դպրոց[5]: 1896 թ. շուշեցի Բաբա Բեգլարյանը հօգուտ Մարիամյան օրիորդաց ուսումնարանի մի հողամաս է կտակել, որից ստացված միջոցներով պետք էր չորս որդեգիրների ուսման վճարը իրականացվեր[6]: Համաձայն սինոդի կտակների վերաբերյալ գործի՝ շուշեցի Հովհաննես Գրիգորի Խունունցը իր կտակի 6-րդ կետի բ մասով՝ հօգուտ աղքատ ուսանողների՝ կտակել է 1) քաղաքի հայկական եկեղեցական-ծխական իգական ուսումնարաններին՝ 150 ռուբլի, 2) Մարիամյան դպրոցին՝ 150 ռուբլի[7]:

Օրիորդաց դպրոցը 1896 թ. փակվում է և վերաբացվում է 1905 թ. փետրվարին[8]:

1909/10 ուսումնական տարվա ընթացքում դպրոցին դրամական մուտք է եղել աշակերտների ուսման վարձից 2.000 ռուբլի և մոսկվաբնակ շուշեցի Ժամհարյան եղբայրների նվիրադրամը, որը տրվում է յուրաքանչյուր տարի՝ 200 ռուբլի չափով: Դպրոցը տեղավորված էր առաջնորդարանի շինության մի մասում, որը կազմում էր շինության մոտավորապես կեսը, սակայն զուրկ էր անհրաժեշտ հարմարություններից[9]: Բաքվի հայոց եկեղեցիների գործակալի առաջարկով[10], բարեգործական նպատակով, Մարիամյան օրիորդաց դպրոցին 50.000 ռուբլի գումար նվիրելու ցանկություն էր հայտնել նաև Նիկոլայ Առափելյանցը (Առաֆելյանց), նամակով այդպիսի ցանկություն էին հայտնել նաև բաքվաբնակ շուշեցիներ Բեգլարյանցը և Սարուխանյանցը[11], իսկ շուշեցի Թեոդորոս Խաչիյանցը կտակել է 1000 ռուբլի:

Դպրոցը գործունեությունը դադարեցրեց 1920 թ. ադրբեջանցիների կազմակերպած կոտորածների պատճառով: Իսկ արդեն խորհրդային տարիներին Մարիամ-Ղուկասյան դպրոցը գործել է՝ որպես Մ. Ֆրունզեի անվան ուսումնարան:

---

[1] «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1864, մարտի 14, ապրիլի 4:
[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 149, թ. 13:
[3] Նույն տեղում, թ. 13 շրջ.-14:
[4] Ֆ. 56, ց. 10, գ. 883, թ. 162 շրջ.: «Մշակ», 1879, հուլիսի 18:
[5] Ֆ. 56, ց. 10, գ. 914, թ. 33 շրջ.-34:
[6] Ֆ. 57, ց. 2, գ. 1553, թ. 27 շրջ.:
[7] Նույն տեղում, թ. 165-165 շրջ.:
[8] Նույն տեղում, գ. 905, թ. 14:
[9] Նույն տեղում, գ. 932, թ. 3:
[10] Նույն տեղում, գ. 1830, թ. 53 շրջ.:
[11] Նույն տեղում, թ. 46 շրջ.:

Հայ ժողովրդին բաժին հասած բազմատեսակ աղետների հետևանքով որբացած հայ մանուկներին օգնելու նպատակով Շուշիի կանանց հանձնաժողովը հիմնում է որբանոց-դպրոց[1]: Վեհափառը Բաքվի հայոց եկեղեցիների գործակալ Զավեն եպիսկոպոսին հանձնարարում է սատարել բարեգործական այդ ձեռնարկությանը ու այդ գործի հաջողությունն ապահովելու համար դիմել բարեգործ անձանց և հաստատություններին[2]: Զավեն եպիսկոպոսը դիմումներ է հղում բարերար Մովսես Բուդաղյանցին[3], Բաքվի Մարդասիրական ընկերությանը, Նպաստամատույց մասնաժողովին և այլ բարերարների: Թիֆլիսի Նպաստամատույց հանձնաժողովը խոստանում է Շուշիի որբանոց-դպրոցին հատկացնել 3-4 հազար ռուբլի գումար[4]: Սակայն որբանոցին տրվող օգնությունը սուղ էր: Հատկապես առաջին տարիներին որբանոցի վիճակը հուսահատական էր: Զավեն եպիսկոպոսի միջոցով որբանոցին էր հատկացվել 200 ռուբլի, ինչում ավանդ ունեին Սարգիս Խանդամիրյանցը և տիկին Բահաթրյանը[5]:

1911 թ. մարտի 25-ին Շուշիի որբանոցի հոգաբարձությունը «Մշակ» թերթի խմբագրությանն է ներկայացնում որբանոցի գոյությունը պահպանելու համար նվիրատվություններ կատարած անձանց ցանկը՝ նվիրաբերված գումարների տեղեկացումով՝ թերթում նվիրատուներին շնորհակալություն հայտնելու և այդ տվյալները հրապարակելու խնդրանքով: Վերջիններս Բաքու, Կրասնովոդսկ, Սամարղանդ և այլ քաղաքներից էին, մոտ 130 նվիրատուներ՝ 500 ռուբլուց քիչ ավելի գումարով, որը հանգանակել էր հոգաբարձության անդամ Մ. Եղիազարյանցը, իսկ 250 ռուբլի՝ Մնացական Խունունցը[6]:

Որբանոցին նվիրատվություններ են կատարել նաև Արցախի տարբեր բնակավայրերի հայերը, որոնք նույնպես անմասն չմնացին այդ ծանր պահին: 1911 թ. Շուշիի բնակիչ Թեոդորոս Խաչիյանցը Շուշիի որբանոցին կտակել է 250 ռուբլի, չքավորներին՝ 200 ռուբլի, մարաղացի Առաքել Տեր-Ներսիսյանցը՝ 15 ռուբլի[7]:

Շուշիում կային երեք միդասյա եկեղեցական-ծխական դպրոցներ, որոնցից Թադևոսյանը և Ագուլյացը՝ երկսեռ, Մեղրեցոց Ս. Աստվածածին եկեղեցու միդասյանը՝ արական[8]:

Թադևոսյան երկսեռ միդասյա դպրոցը գտնվում էր Վերին թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու բակում: Դպրոցը հիմնվել է 1895 թ. բաքվաբնակ շուշեցի Իսահակ Թադևոսյանցի մեկենասությամբ: 1896 թ. ցարական կառավարության հրամանով մյուս դպրոցների հետ միասին փակվում է նաև այս դպրոցը և վերաբացվում միայն 1905 թ.՝ ազգային դպրոցները վերաբացելու թույլտվություն ստանալուց հետո[9]:

Այստեղ սովորում էին քաղաքի ամենաչքավոր երեխաները: Ուսումը դպրոցում

---

[1] ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, թ. 796:
[2] Ֆ. 57, g. 2, գ. 1830, թ. 12:
[3] Նույն տեղում, թ. 6:
[4] ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, թ. 797:
[5] Ֆ. 57, g. 2, գ. 1590, թ. 18 շրջ., 19:
[6] Ֆ. 227, g. 1, գ.159, թ. 3-5:
[7] Ֆ. 200, g. 1, գ. 1553, թ. 44:
[8] Ֆ. 57, g. 2, գ. 1908, թ. 11 շրջ.:
[9] Ֆ. 57, g. 2, գ. 905, թ. 14:

ձրի էր, երեխաները ձրիաբար ստանում էին նաև դպրոցական պարագաներ, ծայրահեղ չքավորները՝ նաև հագուստ: Թադևոսյան դպրոցը պահվում էր բաքվաբնակ շուշեցի Իսահակ Թադևոսյանի կտակած 30.000 ռուբլի գումարի տոկոսներով, որոնք տարեկան կազմում էին 1.600 ռուբլի, և որոնցով հոգում էին դպրոցի ծախսերը: Մայր գումարը պահվում էր բանկում՝ դպրոցի անունով, տոկոսների մնացորդը կցվում էր մայր գումարին: Դպրոցն ուներ երկու սենյակից և պատշգամբից բաղկացած լավ կահավորված սեփական շինություն, որը կառուցվել էր բարերար Իսահակ Թադևոսյանի միջոցներով[1]:

Շուշիի եկեղեցական-ծխական դպրոցները պահվում էին եկեղեցու արդյունքներով, ուսումնավարձով, ինչպես նաև նվիրատվություններով: Բացառություն չէր նաև Մեղրեցոց միդասյա արական դպրոցը, որը գտնվում էր Մեղրեցոց Ս. Աստվածածին եկեղեցու բակում: Այն բացվել էր 1907 թ. աշնանը: Սովորողներից մոտ 35 հոգի ձրիավարժ էին՝ իբրև չքավոր: Դպրոցի շինությունը, եկեղեցապատկան լինելով, ուներ անհարմարություններ[2]: Դպրոցի տարեկան եկամուտները ձևավորվում էին աշակերտների ուսման վարձից՝ 200 ռուբլի, և Մեղրեցոց Ս. Աստվածածին եկեղեցու հատկացրած նպաստից՝ մոտ 500 ռուբլի[3]:

Այս դպրոցին իր ավանդն էր բերել Թեոդորոս Խաչիյանցը, որը դպրոցի վերանորոգության նպատակով ներդրել էր 3.000 ռուբլի և կառուցել երեք սենյակից բաղկացած երկրորդ հարկ: Մանուկ սերնդի ուսման ու դաստիարակության գործի համար Խաչիյանցի կատարած բարեգործությունը արժանացել է Վեհափառի գոհունակությանը և 1913 թ. փետրվարի 8-ի կոնդակով օրհնվել[4]:

Շուշիի երրորդ միդասյա դպրոցն Ագուլյաց եկեղեցու երկսեռ դպրոցն էր, որը գտնվում էր Ագուլյաց Ս. Աստվածածին եկեղեցու բակում: Դպրոցը բացվել էր 1908 թ. սեպտեմբերին[5]: Այս դպրոցում ուսումը ձրի էր: Երեխաները ձրիաբար ստանում էին նաև դպրոցական պարագաներ, ամենաչքավորները՝ հագուստ: Դպրոցի շինությունը պատկանում էր Ագուլյաց եկեղեցուն, որն ուներ անհրաժեշտ հարմարություններ: Ագուլյաց դպրոցը պահվում էր Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի հաշվով: Մասնաճյուղը հոգում էր դպրոցի համարյա բոլոր ծախսերը[6]:

Շուշիում գործում էր նաև Կուսանաց վանքի եկեղեցական-ծխական դպրոցը: Այն բացվել է 1914 թ. Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ Զավեն եպիսկոպոսի ջանքերով: Դպրոցի պահպանության ծախսերը հոգում էր բաքվաբնակ Արսեն Կարասիլնիկյանը, որն արժանանում է Վեհափառի օրհնությանը[7]:

Բարերարների շնորհիվ Շուշիում բացված հաջորդ դպրոցը Մարիամ-Ղուկասյան օրիորդաց դպրոցն էր: Դպրոցը կառուցվում է շուշեցի Պողոս, Արշակ, Հակոբ և Աբրահամ եղբայրների հոժարությամբ՝ իրենց հանգուցյալ քրոջ՝ Մարիամ Ղուկասյանի հիշատակը հավերժացնելու համար:

[1] Նույն տեղում, գ. 932, թ. 3 շրջ.:
[2] Ֆ. 56, ց. 15, գ. 543, թ. 25:
[3] Ֆ. 57, ց. 2, գ. 932, թ. 3 շրջ.:
[4] Ֆ. 57, ց. 2, գ. 309, թ. 20:
[5] Ֆ. 56, ց. 15, գ. 620, թ. 11:
[6] Ֆ. 57, ց. 2, գ. 932, թ. 3 շրջ.- 4:
[7] Նույն տեղում, գ. 1032, թ. 54-56:

1914 թ. սեպտեմբերից Մարիամ-Ղուկասյան օրիորդաց դպրոցը գործել է Ղուկասյանների սեփական տանը: Ղուկասյան եղբայրները դպրոցին նվիրաբերում են 300.000 ռուբլի, որի տոկոսները կազմում էին դպրոցի հաստատուն եկամտի աղբյուրը:

1881 թ. հիմնված Շուշիի ռեալական ուսումնարանը կարգավիճակով պետական էր: Սկզբնական շրջանում պարապմունքներն անցկացվում էին շուշեցի մեծահարուստ Մովսես բեկի տանը: Հաստատությունն ուներ 2 նախապատրաստական և 5 հիմնական դասարաններ: 1901 թ. Կովկասի փոխարքայի որոշմամբ ուսումնարանի համար կառուցվում է մի փոքր շենք, իսկ արդեն 1901-1908 թթ. շուշեցի բարերար Գրիգոր Առաքելյանի միջոցներով կառուցվում է ուսումնարանի եռահարկ նոր շենք, որը մինչ օրս կանգուն մնացած եզակի կառույցներից է: Ռեալական ուսումնարանը, թեև պահվում էր պետական միջոցներով, բայց հայ բարերարները տարբեր տարիների ուսումնարանին հատկացրել են գումարներ. Թադևոս Թամիրյանը՝ 100 000 ռուբլի[1], Հովհաննես Խունունցը՝ 200 ռուբլի[2] և այլն: Ռեալական ուսումնարանը գործել է մինչև 1920 թվականը:

Շուշիում գործում էր նաև մեկ այլ արհեստագործական ուսումնարան, որը բացվել էր 1883 թ. շուշեցի մեծահարուստների հանգանակած գումարներով[3]: Այս ուսումնարանի շրջանավարտները նպաստեցին Շուշիի տնտեսության զարգացմանը:

Բացի վերը նշվածներից՝ Շուշիում գործում էին քաղաքային տղայոց դպրոցը (հիմնադրվել է 1875թ., ուներ 300-350 սովորող, ուսման տևողությունը՝ 7 տարի), երեք պետական դպրոց՝ մոտ 200 աշակերտներով, որոնց մեծ մասը հայեր էին: XIX դարում և XX դարի առաջին տասնամյակներում գործում էին մասնավոր և երկսեռ ծխական դպրոցներ թաղական եկեղեցիներին առընթեր: Շուշիում էր գտնվում 1900-ական թթ. Ղարաբաղի միակ մանկատունը, որի 100 սաներից 70-ը արևմտահայ էին: Գործում էր 2 մանկապարտեզ, նաև կարուձևի 2 դպրոց: Այսպիսի ակտիվ կրթաուսումնական գործունեության շնորհիվ արդեն 1897 թ. Շուշիի գավառի 138.771 բնակչից գրագետ էին 9.654-ը կամ 6,96%-ը, որն ավելի բարձր ցուցանիշ էր, քան Երևանի նահանգի ցուցանիշը[4]:

Այսպիսով՝ գալիս ենք այն համոզման, որ չնայած ֆինանսական սուղ միջոցներին, ցարական իշխանությունների ճնշումներին ու հետապնդումներին, շնորհիվ բարեգործների ֆինանսական աջակցության և քաղաքի հայ հասարակության ներկայացուցիչների նվիրատվության, Շուշիի հայկական դպրոցները մեծ դեր ունեցան արցախահայության ուսումնառության համար: Դպրոցական ցանցի ընդլայնումը հիմք հանդիսացավ մշակութային զարթոնքին, և XIX դարը դարձավ կարևոր շրջան Արցախի մշակույթի բազմադարյան պատմության համար:

Անշուշտ, պետք է ընդգծել, որ Արցախում գրահրատարակչության և պարբերական մամուլի զարգացումը պայմանավորված էր Շուշիի՝ արդյունաբերական, արհեստագործական և առևտրական կենտրոն դառնալով: Այս ամենի արդյունքում

[1] Բալայան Վ., նշվ. աշխ, էջ 335:
[2] Ֆ. 57, ց. 2, գ.1553, թ. 165-165 շրջ.:
[3] Բալայան Վ., նշվ. աշխ, էջ 202:
[4] Первая всеобщая перепись населения Российской империи 1897. СпБ, 1905, с. 1.

ժամանակի ընթացքում գրահրատարակչությունը դարձավ նաև շուշեցի բարեգործների ուշադրության և հոգածության առարկան: Գ. Լևոնյանը իրավացիորեն նշել է, որ Թիֆլիսից հետո հայկական տպագրության գործում Անդրկովկասի քաղաքների մեջ ամենանշանակալից դերը խաղացել է հենց Շուշին[1]:

Շուշիում գրահրատարակության գործի բարգավաճումը 1864-1902 թթ. սերտորեն պայմանավորված էր «Հայոց հոգևոր տեսչություն» տպարանով[2], որտեղ տպագրվեց 41 գիրք: 40 տարվա ընթացքում հրատարակվեցին կրթական[3], գրական, կրոնական, քերականական, ուսուցողական, թարգմանական ուղղվածության գրքեր, Կովկասի Հայոց բարեգործական ընկերության Շուշիի գրադարանի գրացուցակներ[4], բարեգործության մասին հրապարակախոս Կոստանտին Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան) գրքերը, հայագետ Մանուկ Աբեղյանի առաջին աշխատությունը:

Առանձնակի հարկ ենք համարում հիշատակել շուշեցի անվանի հայագետ Լեոյի անունը, որն իր գրահրատարակչական գործունեությունը սկսել էր հենց այս տպարանում որպես սրբագրիչ, և իր բազմաթիվ գրքերը տպագրվեցին այդտեղ, որոնցից մեկի հրատարակությունը հովանավորել էր շուշեցի բարեգործ Սմբատ Դադյանը: Մի շարք գրքեր տպագրվեցին շուշեցի բարեգործներ Ավետիք Պապյանցի և Հովսեփ Տեր-Մինասյանի հովանավորությամբ:

Շուշիում գրահրատարակչության գործը թեմատիկ-բովանդակային որակական ավելի բարձր մակարդակի բարձրացրեց հայտնի հրատարակիչ-բարեգործ Միրզաջան Մահտեսի Հակոբյանցը, որն իր տան կից մասնաշենքում որդիների հետ հիմնեց տպարան[5]: Այնտեղ 1879-1900 թթ. հրատարակվեց 50 միավոր գիրք, ինչը էական թիվ էր անգամ ամբողջ Անդրկովկասի հայկական տպագրության համապատկերում:

Մի շարք գրքեր տպագրվեցին շուշեցի բարեգործներ Տ. Նազարյանի, Ս. Հախումյանցի, Զ. Սարգսյանի, Ա. Հակոբյանցի հովանավորությամբ:

«Միրզաջան Մահտեսի Հակոբյանց» տպարանը այրվեց 1905 թ. հայ-թաթարական կռիվների ժամանակ թաթար խաժամուժի կողմից:

1890 թ. սկսած՝ գրահրատարակչության ոլորտում սկսում է ակտիվանալ Հայոց բարեգործական ընկերությունը՝ Շուշիի տեղական վարչության հետ համատեղ որոշելով հրատարակվելիք գրքերի թեման և նպատակ հետապնդելով տպագրել ժողովրդական զանգվածների համար նախատեսված օգտակար գրքեր: Բարձր գնահատելով շուշեցիների բարեգործական նախաձեռնությունը՝ «Մշակ»-ը գրել է. «Շուշիի տեղական վարչութեան ձեռնարկած գործը համակրելի գործ է և խրախուսանքի արժանի, մեր ժողովուրդը զուրկ է բոլորովին որևէ մտաւոր սնունդից: Հենց այդ պատճառով ժողովրդական գիրք հրատարակելը մի վերին աստիճանի

---

[1] Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 227:

[2] Ավագյան Ս., Նյութեր Ղարաբաղի նախասովետական շրջանի մամուլի պատմությունից, Եր., 1969, էջ 16-19:

[3] Կարգադրութիւն Ղարաբաղու Սուրբ տիրամայր Մարիամու օրիորդաց ուսումնարանի, Շուշի, 1864: Ղարաբաղու տիրամայր Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացուիլը, Շուշի, 1864: Հաշիւ Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրանոցի հոգաբարձութեան 1889-1890 ուսումնական տարուայ համար, Շուշի, 1890: Կանոնադրութիւն Շուշուայ հոգեւոր դպրոցի, Շուշի, 1894:

[4] Գրացուցակ Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան Շուշու գրադարանի, Շուշի, 1891, 1894:

[5] Ավագյան Ս., նշվ. աշխ., էջ 33-37:

լուրջ գործ է»[1]:

1914-ի հուլիսի 4-ին և 6-ին ամառային ժողովարանի դահլիճում տեղի է ունենում Շուշիի երգեցիկ խմբի համերգը՝ Դանիել Ղազարյանի և Երվանդ Սարդարյանի ղեկավարությամբ, որի ընթացքում ելույթ են ունենում Ս. Դեմուրյանը, Հ. Պողոսյանը, Ե. Սարդարյանը (երգ), Հ. Շահգելդյանը (դաշնամուր)՝ կատարելով Գր. Միրզայանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Ստ. Դեմուրյանի, Դ. Ղազարյանի, Ա. Տիգրանյանի, Տ. Չուխաճյանի, Մոնյուշկոյի, Մասնեի ստեղծագործությունները: Դաշնամուրի նվագամասը կատարում են Օ. Դեմուրյանն ու Հ. Շահգելդյանը:

1913-ի օգոստոսի 8-ին Շուշիի ամառային ակումբի դահլիճում տեղի է ունենում երգչուհի Ա.Ստեփանյանի և դաշնակահարուհի Հ. Գյուրջյանի համերգը, որի ծրագրում ընդգրկված էին Բախի և Ռախմանինովի ստեղծագործությունները, գնչուական երգեր և ռոմանսներ: Իսկ 1919-ի օգոստոսի 13-ին Շուշիի ամառային ակումբի դահլիճում ներկայացվում է Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան (դի-

[1] Ներքին լուրեր 1904, N 141:

ռիժոր՝ Լ. Վարդունի, ռեժիսոր՝ Գ. Քոչարյան):

Շուշիի երաժշտական կյանքում կարևոր նշանակություն ունի 1907թ. մարտի 31-ին քաղաքի հոգևոր դպրոցի դահլիճում տեղի ունեցած բարեգործական ներկայացում-համերգը՝ ի նպաստ ռեալական դպրոցի կարիքավոր աշակերտների: Երեկույթի 3-րդ բաժնում ելույթ է ունենում 90 աշակերտ-աշակերտուհիներից բաղկացած երգչախումբը, որը ղեկավարում էր ռեալական դպրոցի ուսուցիչ Հարություն Մելիքյանը: Երգեցիկ խմբի ծրագիրը կազմված էր հիմնականում Կոմիտասի, ինչպես նաև Գ. Սյունիի մշակումներից: Ծրագրում ընդգրկված էին նաև ջութակի և վոկալ կատարումներ. «Դահլիճը ծայրէ ծայր լիքն էր երկսեռ հասարակութեամբ. կային բաւականի ռուսներ երկու սեռից, զինուորականներ և պաշտօնական անձնաւորութիւններ... Երրորդ մասը ամենաաջողն էր. համերգայինը: Ռեալական դպրոցի երիտասարդ ուսուցիչ պ. Յարութիւն Մելիքեանը մօտ 90 հոգուց բաղկացած քառաձայն խումբ էր կազմել և կարճ ժամանակվայ ընթացքում հասարակութեան տուեց բաւականին գեղեցիկ և ներդաշնակ կազմված երգեր: Խումբը երգեց Կոմիտաս վարդապետի «Ալագեազ», «Սոնա եար», «Խումար պառկէ», Կարա-Մուրզայի «Վարդ կօշիկս» և Գր. Միրզայեանի «Սարէն կուգայ» ներդաշնակ երգերը: Գովելի և խրախուսանքի արժանի է պ. Յարութիւն Մելիքեանի եռանդը, որ ինքը այնքան էլ մասնագէտ չը լինելով ձայնագրութեան մէջ, բայց կարողացել էր վերոհիշեալ երգերը կարճ ժամանակում սովորեցնել աշակերտ-աշակերտուհիներին: Բացի հայերէն երգերից պ. Գերասիմօվը (ռուս) սօլօ երգեց մի քանի օպերային կտորներ: Պարոնի ձայնը շատ դուրեկան է և բարձր նօտաներում շատ զօրեղ է հնչում: Այնուհետև երաժշտապետ պ. Լեմոսը ջութակի վրա մի քանի կտորներ նուագեց. նրան ձայնակցում էր դաշնամուրի վրա տիկին Սմորադսկայան: Հանդիսականները թէ Մելիքեանին և թէ միւսներին բուռն ծափահարութեամբ էին դիմաւորում: Համերգից յետոյ տեղի ունեցան եւրոպական և ասիական պարեր մինչև ժամը 3-ը...»[1]:

Իսկ 1908 թ. մայիսի 11-ին Շուշիի հոգևոր դպրոցի ձայնագրության ուսուցիչ Ռուբեն Մանասյանի՝ ի նպաստ տեղի կարիքավոր աշակերտների կազմակերպած համերգի ընթացքում 80 աշակերտներից կազմված երգչախումբը կատարում է Կոմիտասի և Սյունիի մշակումներից. «...Քառաձայն խումբը բաւական աջող երգեց Կոմիտաս վարդապետի ներդաշնակած «Սարի վրով», «Երի-երի ջան», «Մեզ նոր արև», «Ալագեազ», «Մեր դռանը», «Սօնա-եար», «Անձրևն եկաւ», յետոյ Կարա-Մուրզայի «Նոր-Մօդայի խմբերգը», «Ջան գիւլում», և Գ. Միրզայեանի «Ինջլիկ» երգերը: Համեմատաբար թոյլ երգեցին Կոմիտաս վարդապետի «Հիմի էլ լռենք» և «Հոյ ջանում» երգերը: Բայց չը նայելով դրան, պէտք է ասած, որ համերգը բաւարար տպաւորութիւն թողեց...»[2]:

[1] Յովսեփեան Լ. 1907:
[2] Յովսեփեան Լ. 1908:

Եզրակացություններ

1. Շուշին ապրում էր ակտիվ համերգային կյանքով՝ շնորհիվ Քրիստափոր Կարա-Մուրզայի, Ստեփան Դեմուրյանի, Եղիշե Բաղդասարյանի, Գրիգոր Սյունիի և այլոց բեղուն գործունեության: Տեղի էին ունենում համերգներ ինչպես տեղի երաժշտական կոլեկտիվների ուժերով, այնպես էլ հյուրախաղերով հանդես էին գալիս անվանի երաժիշտները:

2. Համերգային հայտագրերում մեծ տեղ էր գրավում խմբերգային երգեցողությունը: Համերգների ծրագրերում տեղ էին գտնում ինչպես հայ դասականների (Տիգրան Չուխաճյան, Կոմիտաս, Մակար Եկմալյան, Քրիստափոր Կարա-Մուրզա, Ալեքսանդր Սպենդիարյան) ստեղծագործությունները, այնպես էլ ժամանակակից կոմպոզիտորների (Ստեփան Դեմուրյան, Եղիշե Բաղդասարյան, Գրիգոր Սյունի, Անուշավան Տեր-Ղևոնդյան) խմբերգերն ու ժողովրդական երգերի խմբերգային մշակումները: Զգալի տեղ էր հատկացվում նաև արևմտաեվրոպական (Բախ, Ֆրանց Շուբերտ, Ռոբերտ Շուման, Ջակոմո Պուչչինի, Ժյուլ Մասնե, Ստանիսլավ Մոնյուշկո) և ռուս (Միխայիլ Գլինկա, Նիկոլայ Ռիմսկի-Կորսակով, Պյոտր Չայկովսկի, Սերգեյ Ռախմանինով, Գրիգորի Կազաչենկո) դասական, ինչպես նաև ուկրաինական (Նիկոլայ Լիսենկո) երաժշտության պրոպագանդմանը:

3. Հնչում են ինչպես հայ ժողովրդական երգեր, այնպես էլ ռուսական, գնչուական, վրացական ժողովրդական երգեր:

4. Պրոպագանդվում է նաև հայկական օպերային երաժշտությունը: Համերգների ընթացքում հնչում են հատվածներ Կարա-Մուրզայի «Շուշան» օպերայից, արիաներ Ա.Տիգրանյանի «Անուշից», ներկայացվում է «Անուշ» օպերան:

Այսպիսով՝ կարող ենք վստահաբար արձանագրել այն մեծ դերն ու նշանակությունը, որն ունեցավ Շուշիի՝ «Անդրկովկասի կոնսերվատորիայի» երաժշտական մթնոլորտը հայ երաժշտական գործիչների ձևավորման գործում, որոնք իրենց զգալի ավանդը բերեցին տարածաշրջանում և նրա սահմաններից դուրս երաժշտության զարգացման գործին:

...2021 թվականի սեպտեմբերի 10-ին լրանում է Գրիգոր Սյունիի ծննդյան 145-ամյակը: Այդ տարեդարձին ընդառաջ՝ կարծում եմ նպատակահարմար կլինի աշխատանքներ իրականացնել Շուշիում կոմպոզիտորի թանգարան ստեղծելու ուղղությամբ՝ ներգրավելով նաև Սյունիի ժառանգներին: Եվ այդ թանգարանի հետ համատեղ, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը ձեռնամուխ կլինի կոմպոզիտորի ժառանգության հրատարակության գործին:

2013 թվականին ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, Սյունի ընտանիքի հովանավորությամբ հրատարակվեց Սյունիի խմբերգերը պարունակող ստվարածավալ հատորը՝ Ռոբերտ Աթայանի գիտական նախաբանով և վերլուծական դիտողություններով: Եվ այդ հատորը ես սիրով կուղարկեմ Շուշի, որպեսզի դառնա Գրիգոր Սյունիի թանգարանի առաջին նմուշը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան Ա. 2009, Գրիգոր Սյունի, Նշանավոր ճեմարանականներ. Պրակ Բ, Էջմիածին, Մայր աթոռ Ս. Էջմիածնի հրատ., էջ 387-394:
2. Ասատրյան Ա. 2007, Դանիել Ղազարյանի կյանքն ու գործունեությունը Շուշիում, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 233-243:
3. Արցախեցի. 1901, Նամակ Շուշուց, «Մշակ», Թիֆլիս, 19 հունիսի, N 131:
4. Բրուտյան Ց. 2000, Արցախյան ոգին երաժշտության ծիրի մեջ, Երևան, «Ամրոց», 320 էջ, 1 մամուլ ներդիր:
5. Ծրագիր, ԳԱԹ, Երաժշտական բաժին, Ե. Բաղդասարյանի ֆ., N 74:
6. Ծրագիր, ԳԱԹ, երաժշտական բաժին, Ե. Բաղդասարյանի ֆ., N 76:
7. Կարա-Մուրզա. 1901, Նամակ Շուշուց, «Մշակ», Թիֆլիս, 16 օգոստոսի, N 179:
8. Մազմանյան Ռ. 2006, Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, Երևան, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հրատ., 207 էջ:
9. Մազմանյան Ռ. ձեռագիր, Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1911-1900, Երևան, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի արխիվ:
10. Մ.Ղ. 1901, Կարա-Մուրզայի համերգը Շուշում, «Տարազ», Թիֆլիս, N 23, 1901:
11. Յովսեփեան Լ. 1907, Թատրօն եւ երաժշտութիւն, «Մշակ», Թիֆլիս, 10 ապրիլի, N75:
12. Յովսեփեան Լ. 1908, Թատրօն և երաժշտութիւն, «Մշակ», Թիֆլիս, 20 մայիսի, N109:
13. Ներքին լուրեր. 1902, «Մշակ», Թիֆլիս, 17 օգոստոսի, N180:
14. Ներքին լուրեր.1902, «Մշակ», Թիֆլիս, N 147:
15. Ներքին լուրեր. 1903, «Մշակ», Թիֆլիս, 10 հուլիսի, N 148:
16. Ներքին լուրեր. 1903, «Մշակ», Թիֆլիս, 3 օգոստոսի, N 166:
17. Ներքին լուրեր. 1904, «Մշակ», Թիֆլիս, 7 հուլիսի, N 141:
18. Սերմացան. 1901, Նամակ Շուշուց, «Մշակ», 3 հուլիսի, N 143, Թիֆլիս, 1901:

Ամփոփում

Երաժշտական կյանքը Շուշիում

Աննա Ասատրյան

Ծանրակշիռ են Շուշիի դերն ու նշանակությունը Անդրկովկասի, Միջին Ասիայի և Ռուսաստանի, ինչպես նաև սփյուռքահայ երաժշտական արվեստի՝ կոմպոզիտորական և կատարողական արվեստի զարգացման գործում: Պատահական չէ, որ քաղաքը կոչվել է «Անդրկովկասի կոնսերվատորիա»: Այստեղ ակտիվ է եղել երաժշտական կյանքը, ինչն էլ իր հերթին նպաստել է շուշեցիների երաժշտական մակարդակի բարձրացմանը: Շուշիում են ծնվել և նրա երաժշտական մթնոլորտում որպես երաժիշտներ ձևավորվել հայ կոմպոզիտորներ և երաժիշտ-կատարողներ Գրիգոր Սյունին, Եղիշե Բաղդասարյանը, Դանիել Ղազարյանը, Արշակ Կոստանյանը, Բոգդան Թումանյանը, Հովհաննես Իոանիսյանը, Ալեքսանդր Ալեքսանդրյանը, Գրիգոր Մելիքյանը, Բալա Մելիքյանը և ուրիշներ: Ծանրակշիռ է

Շուշիի դերը ժողովրդական երաժշտական արվեստի զարգացման գործում: Անդրկովկասում լայն ճանաչում գտած շուշեցի երաժիշտները նոր աստիճանի են բարձրացրել ժողովրդական երաժշտական գործիքներով (թառ, քամանչա, զուռնա և այլն) կատարողական արվեստը, մշակել-կատարելագործել են արևելյան երաժշտության զանազան ժանրեր:

Շուշեցի երաժիշտներից շատերն իրենց բազմարդյուն գործունեությունը նվիրաբերեցին ոչ միայն հարազատ, այլև տարբեր ժողովուրդների ազգային երաժշտության զարգացման գործին:

Հիմնաբառեր. *Շուշի, երաժշտական կյանք, Գրիգոր Սյունի, Եղիշե Բաղդասարյան, Դանիել Ղազարյան, Արշակ Կոստանյան, Բոգդան Թումանյան, Հովհաննես Իոանիսյան, Ալեքսանդր Ալեքսանդրյան, Գրիգոր Մելիքյան, Բալա Մելիքյան:*

Резюме

Музыкальная жизнь в Шуши

Анна Асатрян

Весомы роль и значение Шуши в деле развития как композиторского, так и музыкально-исполнительского искусства Закавказья, Средней Азии и России, а также зарубежных армян. Не случайно город назывался “консерваторией Закавказья”. Музыкальная жизнь здесь была достаточно активной, что способствовало повышению музыкального уровня шушинцев. Армянские композиторы и исполнители Григор Сюни, Егише Багдасарян, Даниел Казарян, Аршак Костанян, Богдан Туманян, Ованнес Иоанисян, Александр Александрян, Григор Меликян, Бала Меликян и другие родились в Шуши и сформировались как музыканты в музыкальной атмосфере этого города. Весом вклад Шуши и в развитие народного музыкального искусства. Завоевавшие широкую популярность в Закавказье музыканты подняли на новую ступень искусство игры на народных музыкальных инструментах (тар, кеманча, зурна и т.п.), обработали и усовершенствовали различные жанры восточной музыки.

Ключевые слова: *Шуши, музыкальная жизнь, Григор Сюни, Егише Багдасарян, Даниел Казарян, Аршак Костанян, Богдан Туманян, Ованнес Иоанисян, Александр Александрян, Григор Меликян, Бала Меликян.*

Abstract

Music life in Shushi

Anna Asatryan

The role and significance of Shushi is notable in the development of composing and performing musical arts of Transcaucasia, Central Asia and Russia, as well as of Armenians in Diaspora. It is no coincidence that the city was called "the Transcaucasian Conservatory". The music life was active there, which in its turn contributed to the increase of the musical level of the people of Shushi. Armenian composers and musicians-performers Grigor Syuni, Yeghishe Baghdasaryan, Daniel Ghazaryan, Arshak Kostanyan, Bogdan Tumanyan, Hovhannes Ioanisyan, Alexander Alexandryan, Grigor Melikyan, Bala Melikyan and others were born in Shushi and became musicians in the musical atmosphere of the city. The role of Shushi in the development of folk music is also significant. The musicians of Shushi, who are widely known in Transcaucasia, raised the art of playing folk musical instruments (tar, kamancha, zurna, etc.) to a new level, and have developed and perfected various genres of Eastern music. Many of the musicians from Shushi dedicated their multifaceted activities not only to the development of their native music, but also to the national music of different peoples.

Keywords: *Shushi, music life, Grigor Syuni, Yeghishe Baghdasaryan, Daniel Ghazaryan, Arshak Kostanyan, Bogdan Tumanyan, Hovhannes Ioanisyan, Alexander Alexandryan, Grigor Melikyan, Bala Melikyan.*

ԳՐԻԳՈՐ ՎԼՈՒՅՐԻ ՕՐԴՈՅԱՆ
ԵԹԿՊԻ Արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հոդվածը ներկայացվել է 10.04.2021,
գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 20.04.2021

ՇՈՒՇԻԻ ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՎԵՐԵԼՔՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

«Շուշին Անդրկովկասի մյուս քաղաքների բացարձակ հակապատկերն է: Տները կանոնավոր են, գեղեցիկ են, բարձր եւ բազմաթիվ հրաշագեղ պատուհաններով լուսավորված: Փողոցներն ամենուր պատված են լայն սալիկներով, իսկ տանիքները՝ եվրոպականի նման են»[1]:



Խանդամիրյան թատրոնի շենքը (1902):

[1] *Верещагин В.*, 1870, 215.

XIX դարավերջին և XX դարասկզբին հայ թատերական մշակույթի նշանավոր կենտրոններից մեկը Շուշին էր: Պատահական չէ, որ ժամանակին շատերը Շուշին անվանում էին «Կովկասյան փոքր Փարիզ»[1]: Թիֆլիսից հետո շեն ու բարեկեցիկ կյանքով ապրող այս ամառանոցային քաղաքը գրավիչ էր հյուրախաղային դերասանախմբերի համար ոչ միայն իր աշխարհագրական նպաստավոր դիրքով և թատերասեր ու նրբանկատ հանդիսականով, այլև իր թատրոնական շենքով, որի հարմարավետությունն ու բեմադրական հնարավորությունները թերևս կարող էին բացառիկ համարվել ընդհանրապես այդ ժամանակաշրջանի հայ գավառական իրականության մեջ: Ճարտարապետորեն և տեխնիկապես թատրոնի բոլոր պահանջներին համապատասխանող այս շքեղաշուք կառույցը, որ գտնվել է Ղազանչեցոց եկեղեցու հարևանությամբ՝ Խանդամիրյանների սեփականությունը համարվող հողատարածքում, առաջին անգամ իր հյուրընկալ դռները բացեց 1891 թվականի հուլիսի 7-ին՝ Մուրացանի «Ռուզան» ներկայացումով: Կազմակերպիչը թատրոնի հիմնադիր Մկրտիչ (Նիկիտա) Խանդամիրյանն էր, որը սկզբնապես իր շուրջն էր համախմբել տեղի շնորհալի թատերասերներին և նրանց հորդորել հիմնավորապես բարեփոխել Շուշիի թատերական կյանքը:

Շուշիի «Խանդամիրյան» թատրոնի դերասանական կազմը, 1901թ.
1-ին շարք (կանգնածներ), ձախից՝ Հուշարար Տիրացյան, Օսիկ Սրբեփանյան, Գևորգ Պետրոսյան, Մաթևոս Աղայան
2-րդ շարք, ձախից՝ Հովհաննես Զարիֆյան, Փառանձեմ, Մկրտիչ Խանդամիրյան, Վարդիթեր Ֆելեկյան, Վոլոդյա Մելիք-Փաշայան
3-րդ շարք, ձախից՝ Աշխեն Արաքսյան, Պողոս Արաքսյան, Մարի-Հրանույշ Ֆելեկյան

[1] Մելիք-Շահնազարյան Ա., 2012:

Մինչ այդ տեղի բնակչության համար արդեն վաղուց էր ավանդույթ դարձել պարբերաբար հաղորդակից լինել հայ նորագույն թատերական արվեստին, շփվել նրա լավագույն ներկայացուցիչների հետ: Դեռևս 1865-ին էր, երբ Չմշկյան-Ամրիկյան-Մանդինյան թատերախումբն առաջին անգամ այստեղ հանդես եկավ «Վարդան Մամիկոնյան», «Սամվել» և «Շկոլի վարժապետը» հյուրախաղային ներկայացումներով: Սա շուշեցիների առաջին հանդիպումն էր նորագույն թատրոնի հետ և բեմահարթակից դրամայի ընկալման առաջին փորձը: Ինչպես երևում է, այդ, հիրավի պատմական իրադարձությունը վճռորոշ դեր խաղաց Շուշիի հետագա մշակութային կյանքում:

Այսպես 1873-ին Խանդամիրյաններն այստեղ կառուցեցին քաղաքային ակումբ, որը նախատեսված էր, ինչպես հասարակական հավաքույթների, այնպես էլ թատերական ներկայացումների, պարային և երաժշտական համերգների համար: Իսկ 1882-ին Շուշիում չափազանց նշանակալի երևույթ դարձան Պետրոս Ադամյանի հյուրախաղերը: Այս անգամ շուշեցի հանդիսականն առիթ ունեցավ հաղորդակցվելու եվրոպական թատերագրությանը՝ Շեքսպիրի «Համլետ» ու Ջակոմետտիի «Ոճրագործի ընտանիք» պիեսներին: Ներկայացումներն իրապես ցնցող տպավորություն էին գործել: Լեոն, որն այդ ժամանակ Շուշիում էր և ադամյանական խաղի ականատեսը, գրել է. «Դեմքերի վրա շեքսպիրյան հանճարի հրճվանքն էր դրոշմվել. արվեստի բարձր գաղափարների ու ճաշակի հետ էր կապել Ադամյանը տեղի հանդիսատեսին: Հրաշք գործած բեմական հանճարը դարձել էր ամբողջ քաղաքի սիրելին»[1]: Նույնպես ուշագրավ է դրամատուրգ Եկատերինա Բահաթուրի վկայությունը. «Ադամյանը համակում էր ամենքին, հասցնում ինքնամոռացության, հիպնոսացնում: Ամբողջ դահլիճը ցնցվում էր, հանդիսատեսները մի մարդու պես ոտքի էին կանգնում, մի վայրկյան կարծես քարացած լինեին: Ես ինքս մոռացա, որ թատրոնում եմ, մոռացա, որ տաժանակիր աշխատանքից փախած այդ ոճրագործը (Կորրադո.– Գ. Օ.) միմիայն հանճարեղ դերասան է...»[2]:

Ամիսներ անց այստեղ հյուրախաղերի են եկել Սաֆրազյան ամուսինները (Ստեփան և Ալմա)՝ բավական հարուստ խաղացանկով. «Շուշանիկ», «Սանդուխտ կույս», «Սամվել», «Թուղթ խաղացողի կյանքը», «Խան Սարիբի վեզիրը», «Կըռթ-կըռթ» և այլն[3]: Հաջորդ տարի՝ 1883 թվականին, թատերական կյանքն այստեղ, էլ ավելի է աշխուժանում՝ ասպարեզ են գալիս սիրողական խմբեր, Աբրահամ Տեր-Գասպարյանի և Հովհաննես Ճաղարբեկյանի նախաձեռնությամբ բեմադրվում են Գ. Սունդուկյանի «Պեպոն» (1883), «Քանդած օջախը», Թ. Ֆասուլյաճյանի (փոխ.) «Երկու քաղցածները» (1887), Մ. Տեր-Գրիգորյանի «Վույ քի իմ վեչեր» և «Ո՞վ է մեղավոր» (1883) վոդեվիլները[4]:

Հետաքրքրությունը թատրոնի նկատմամբ գնալով աճում էր: 80-81 թվականներին ներկայացումներ են կազմակերպվել նաև դպրոցական միջավայրում. «Որդիական սեր կամ Ֆեոդորա» (Խ. Աբովյան), «Վարդան Մամիկոնյան կամ Վար-

[1] Զարյան Ռ., 1961, 176:
[2] Խանդամիրյան Բ., Հարությունյան Ս., 1978, 7:
[3] Սաֆրազյան Ստ., 1882:
[4] Հարությունյան Բ., 1980, 139-140, 291:

դանանց պատերազմ» (Հ. Կարենյան) և «Դալալ Ղաղո» (Մ. Տեր-Գրիգորյան)[1]: Շատերն արդեն ոչ թե սոսկ հետաքրքրվում էին բեմական արվեստով՝ իբրև հանդիսատես, այլ նաև մասնակցում էին հյուրախաղերի եկած դերասանների ներկայացումներին՝ հանդես գալով օժանդակ կազմում: Իսկ ահա 80-ականների վերջին, երբ ֆրանսիական ուղևորությունից հետո քաղաք է վերադարձել Մկրտիչ Խանդամիրյանը, Շուշին սկսել է ապրել լիարժեք և կանոնավոր թատերական կյանքով: Ծագումով ազնվական այս երիտասարդը, որ ստացել էր եվրոպական չափանիշներին համապատասխան փայլուն կրթություն, դեռևս պատանեկան տարիներին էր հրապուրվել թատրոնով: Ֆրանսիայում ուսանելու տարիներն էլ իրենց արգասաբեր դերը կատարեցին՝ նրա այդ հակումն ավելի հստակ և նպատակային դարձնելու առումով:

XIX դարի 70-80-ական թվականներին Խանդամիրյանը գտնվել է Մարսելում՝ մետաքսի արտադրության մեջ մասնագիտանալու նպատակով, ինչպես պատվիրել էր հայրը: Այստեղ նա, իհարկե, չէր կարող անհաղորդ մնալ այն նշանակալի թատերական իրադարձություններին, որ տեղի էին ունենում Ֆրանսիայի մայրաքաղաքային կյանքում: Հենց այդ ժամանակ էլ Փարիզում մի կողմից լայն թափ էր առնում մասնավոր թատրոնների գործունեությունը, մյուս կողմից ձևավորվում էին թատերական գեղագիտության նորագույն ուղղություններ՝ նատուրալիզմն ու նեոռոմանտիզմը:

Այսպիսի նպաստավոր միջավայրում՝ մշակութային տարբեր հոսանքների կիզակետում, էապես հարստացել են նրա թատերական գիտելիքները, և հղկվել է գեղարվեստական ճաշակը: Գալով Շուշի, որը ժամանակին պատմական Հայաստանի արևելյան գավառներից մեկն էր, նա լծվել է իր վաղեմի երազանքն իրականացնելու գործին՝ թատերական կյանքի բարենորոգմանը: Միևնույն ժամանակ նա բնավ չի խզել իր հոգևոր կապն առաջադեմ ու քաղաքակիրթ եվրոպական աշխարհի հետ: Բորիս Խանդամիրյանը՝ որդին, տարիներ անց մտաբերել է, որ հայրն «իր գրադարանը մշտապես հարստացնում էր հայկական, ռուսական պարբերականներով ու գրականությամբ, Ֆրանսիայից ստանում էր պատկերազարդ «Իլյուստրացիոն» հրատարակությունը, որին կից առանձին հատորներով Շուշի էին գալիս Զոլայի, Մոլիերի, Ռուսոյի, Ստենդալի, Մոպասանի և այլ դասականների երկերը: Ֆրանսիայից նա իր հետ բերել էր հայագիտությանը վերաբերող գրականություն ևս: Նաև թարգմանիչ էր, ֆրանսերենից թարգմանել է Ժորժ Օնեի «Դոկտոր Ռամոն»: Թարգմանություններ է արել նաև ռուսերենից: Հրատարակել է «Անձկության ժամեր» ոտանավորների ժողովածուն, գրել է պիեսներ»[2]:

Վստահաբար կարելի է ասել, որ Շուշի վերադառնալիս Խանդամիրյանն արդեն որոշակի պատկերացում ունեցել է իր հետագա անելիքների մասին, ընդ որում՝ ոչ միայն մետաքսագործության ասպարեզում, այլ նաև ու, թերևս, առաջին հերթին թատրոնաշինության: Նախապես նա անմիջապես իր շուրջն է համախմբել տեղի թատերասերների մեջ աչքի ընկած ուժերը և փորձել է ստեղծել մշտական գործող դերասանախումբ: Այդ կազմից հայտնի են մի քանի ազգանուններ՝

[1] Հովհաննիսյան Հ., 1996, 416:
[2] Խանդամիրյան Բ., Հարությունյան Ս., 1978, 12:

Գ. Նազարյան, Ա. Աբրահամյան, Ա. Կոստանդյան, Օ. Թառումյան, Ս. Միքայելյան, Գ. Իշխանյան, Մ. Դավթյան, դերասանուհիներ՝ Գ. Թառումյան, Գ. Աթաբեկյան, Գ. Գյանջեցյան[1]:

Սիրողական այս խմբի գործունեությունը սկզբնապես ծավալվել է հայոց թեմական և հոգևոր ուսումնարաններում: Հենց այդ ժամանակ էլ, ըստ երևույթին, Խանդամիրյանը ձեռնամուխ է եղել թատերական շենք կառուցելու իր նախագծի իրագործմանը: Ուշագրավ է, որ զուգահեռաբար նա հանդես է եկել ոչ միայն, իբրև թատերական գործի հմուտ կազմակերպիչ, այլև ռեժիսոր՝ խաղացանկում ընդգրկելով, ինչպես հայրենական, այնպես էլ եվրոպական դրամատուրգիայի գործեր՝ Գ. Սունդուկյանի «Էլի մեկ զոհ» (1889), «Պեպոն» (1890), «Խաթաբալա» (1890), Հ. Կարենյանի «Վարդանանց պատերազմը» (1890), Խ. Գալֆայանի «Արշակ Երկրորդը» (1891), Մ. Տեր-Գրիգորյանի «Էս էլ քի մոցիքլություն» (1890), «Պեպոյի տկճուրը» (1891), Ն. Փուղինյանի «Դալալ Ղաղոն» (1889), Վ. Մադաթյանի «Կըռթ-Կըռթը» (1890), Է. Տեր-Գրիգորյանի «Կռվապատճառը ես էի» (1890) և Մոլիերի «Բռնի ամուսնություն» (1890) պիեսները[2]:

Վերջապես 1891 թվականին ազդարարվեց Շուշիի նորակառույց «Խանդամիրյան թատրոնի» բացումը՝ Մուրացանի «Ռուզան» պիեսի բեմադրությամբ: Պետք է նկատել, որ բարեգործական սկզբունքով ներկայացված այս գործի ընտրությունն էլ պատահական չէր, այստեղ էլ Խանդամիրյանը դրսևորել է իրեն որպես լայնախոհ և թատերական գործին քաջատեղյակ անձնավորություն: Արցախյան իրականությանը վերաբերող և նեոռոմանտիզմի ոգով ներշնչված դրամատիկական երկի բեմադրությունը նշանակալից էր ոչ միայն իր հայրենասիրական հնչեղությամբ, այլև իրապես պրոֆեսիոնալ թատրոն ունենալու գիտակցությամբ. չէ՞ որ հենց ազգային թատերագրությունն է կանխորոշում ազգային բեմարվեստի դիմագիծը: Հայ մամուլն էլ չի հապաղել արձագանքելու այդ պատմական իրողությանը: Այսպես՝ «Տարազի» թղթակիցը գրել է. «Հուլիսի 7-ին Շուշիում թատերասերները հօգուտ Շուշու բարեգործական ընկերության ներկայացրին «Ռուզան» պիեսը՝ պարոն Մ. Խանդամիրյանի թատրոնական նորակառույց դահլիճում: Դահլիճը, բեմը, որի վրա առաջին ներկայացումն այդ օրն էր, կարգ ու սարքը, հարմարությունները Շուշում չտեսնված բաներ են: Առաջին ներկայացմանը դահլիճը լիքն էր: Մի տոմսակ անգամ չէր մնացել, և շատերը ձեռնունայն հետ էին դառնում թատրոնից: Տիկին Ն. Յարամիշյան-Ռուզանը բեմին կենդանություն էր տալիս: Նա կատարյալ ֆուրոր արավ հասարակության մեջ: Ինչպես երևում էր, տիկինը շատ էր աշխատել իր դերի վրա, և հենց այդ պատճառով սար ու ձորի հեռավորություն կար նրա և խաղացողների միջև, որոնք սովորաբար մեկնվում էին բեմի անկյունում և խոսում էին եկեղեցու փոխասացների նման: Տիկին Յարամիշյանի պես աշխույժով խաղացողը միշտ կարող է գավառական բեմի զարդ համարվել»[3]:

Թեև հետագայում տեղացի դերասանական ուժերից կազմված այս թատերախումբն այդպես էլ չդարձավ բառիս բուն իմաստով պրոֆեսիոնալ՝ ժամանակը

[1] Հովհաննիսյան Հ., 1996, 417:
[2] Հարությունյան Բ., 1980, 316, 323, 325, 330, 332, 340:
[3] Հարությունյան Բ., 1980, էջ 23:

չբավարարեց, այնուամենայնիվ նրա առկայությունն էապես նպաստեց հյուրախաղային ներկայացումների կազմակերպման գործին, որոնք 90-ականներից ի վեր սկսել են ավելի հաճախակի երևույթ դառնալ Շուշիի իրականության մեջ: «Խանդամիրյան թատրոնը» հայ դերասանների համար Կովկասի ամենագրավիչ հուրախաղային կենտրոններից մեկն էր և իր նշանակությամբ ավելի կարևոր, քան Ալեքսանդրապոլի և Երևանի թատրոնները[1]: Ամենից առաջ, դա պայմանավորված էր բարեկեցիկ և հարմարավետ թատրոնական շենքի առկայությամբ, որ Թիֆլիսից հետո, արևելահայ իրականության մեջ հիրավի կարող էր եզակի երևույթ համարվել: Թատրոնն ուներ այդ ժամանակաշրջանի բոլոր նորագույն տեխնիկական պահանջներին համապատասխանող բեմահարթակ, գեղեցիկ և ընդարձակ դահլիճ, սրան կից՝ լայն ու հարմարավետ ճեմասրահ:

Խանդամիրյաններն ապրում էին այդ նույն շենքում, որի առանձին մի մասնաճյուղը հատուկ նախատեսված էր հուրախաղերի եկած դերասանների համար՝ իբրև հանրակացարան: Շենքի բակային հատվածում գտնվում էր մրգատու ծառերով այգին, որն առանձնակի գրավչություն էր հաղորդում ամբողջ շինությանը: «Թատրոնը քարաշեն էր, դրսի կողմից երկհարկանի, բակից՝ մասամբ եռահարկ, ուր պահվում էին դեկորները, բուտաֆորիան, ռեկվիզիտը, թատրոնական այլ պարագաներ՝ պատվիրված անձամբ թատրոնատիրոջ կողմից և պատրաստված նրա ճաշակով ու անմիջական մասնակցությամբ: Դեկորների օգտագործումը մեքենայացված էր, դերասաններն ունեին իրենց հարդասենյակները: Շենքի առաջին հարկում ապրում էր Խանդամիրյանն իր ընտանիքով: Այդ հարկում էր գտնվում նաև թատրոնի գրադարանը: Դահլիճը, որը լուսավորվում էր նավթի լամպերով, ուներ 350 աթոռ՝ պարտեր, օթյակներ, ամֆիթատրոն: Շենքն ու ներկայացումները սպասարկում էին Խանդամիրյանի կողմից պատրաստված մարդիկ, որոնց աշխատավարձը վճարում էր ինքը՝ Խանդամիրյանը, թատրոնի եկամուտներից: Շենքը տրվում էր վարձով՝ նախապես կայացված համաձայնությամբ»[2]: Գրիգոր Ավետյանը, որը ժամանակին հաճախ է հյուրախաղերով այցելել Շուշի, առանձնակի ջերմությամբ է մտաբերել Շուշիում անցկացրած իր հյուրախաղային օրերը. «Նիկիտա Խանդամիրյանի թատրոնը, որը… աչքի էր ընկնում սարք ու կարգով, իր մաքրությամբ, մանավանդ տիրոջ կողմից դեպի դերասաններն ունեցած սիրով ու հարգանքով, դարձել էր մեզ համար մի ուխտատեղի, և ամեն ամառ շտապում էինք օր առաջ գնալ ու մեր սիրելի Նիկիտա Աբրամիչին տեսնել: Արտասովոր մի մարդ էր նա, երկար ժամանակ Փարիզում էր ապրել և այնտեղից հետը բերել մաքրություն, խստություն ու ճշմարտություն՝ դեպի ամեն ինչ և ամենքի վերաբերմամբ»[3]:

Ստեղծվել էր պարբերաբար Շուշի այցելող դերասանների մի խումբ, որոնց թվում էին Գրիգոր Աբրահամյանը, Մաթեոս Աղայանը, Մարի Զաբելը, Վարվառա Մելիքյանը, Արշակ Հարությունյանը և ուրիշներ: «Դարավերջին Շուշի այցելող խմբերը ղեկավարել է այնպիսի մի պրոֆեսիոնալ դեմք, ինչպիսին էր Գևորգ Պետ-

[1] Հովհաննիսյան Հ., 1996, 418:
[2] Խանդամիրյան Բ., Հարությունյան Ս., 1978, 11-12:
[3] Ավետյան Գ., 1933, 134-136:

ռոսյանը: Շուշիի բեմում շատ է ծափահարվել հայ շրջիկ խմբերի առաջնուհին՝ Փառանձեմը (Սահակյան-Սաղաթելյան): Այս բեմում հաճախ են խաղացել պոլսեցի Մարի և Վարդիթեր Ֆելեկյանները, և գուցե, ամենից ավելի՝ Արամ Վրույրը Մարի Զաբելի հետ»[1]: Մինչև 1905 թվականը, մինչև տեղի հայ բնակչության եղեռնական կոտորածներն ու քաղաքի հրդեհվելը, որին զոհ գնացին բազմաթիվ մշակութային հուշարձաններ և դրանց թվում նաև Խանդամիրյան թատրոնը, Շուշին այն եզակի հայկական քաղաքներից էր, որն իրավամբ կարող էր պարծենալ բովանդակությամբ հարուստ և կանոնավոր հիմքերի վրա դրված իր թատերական կյանքով: Այդ ժամանակաշրջանում չի եղել քիչ թե շատ նշանավոր մի հայ դերասան, որ գոնե մեկ անգամ հյուրախաղերով այստեղ հանդես եկած չլիներ: Վերոհիշյալ դերասաններից բացի՝ Շուշի հաճախ են այցելել Հովհաննես Աբելյանը, Սիրանույշը, Սաթենիկ Ադամյանը, Հովհաննես Զարիֆյանը և ուրիշներ:

Տասնհինգ տարի շարունակ ու անընդմեջ աշխատելով ի նպաստ հայ ժողովրդի և նրա թատերական մշակույթի բարգավաճմանը՝ Շուշիի Խանդամիրյան թատրոնը թերևս այսօր էլ շարունակեր գործել նույնքան արդյունավետ ու եռանդուն, եթե տեղի չունենային 1905-ի ամռան այն սահմռկեցուցիչ իրադարձությունները, որոնց զոհ գնաց տեղի հայ բնակչության մեծամասնությունն իր պատմական արժեքներով հանդերձ: Այդ օրհասական դեպքերը հետագայում այսպես է վերհիշել հայ մեծ դերասան և ծնունդով շուշեցի Վաղարշ Վաղարշյանը. «Ես տեսա, թե ինչպես բորբոքուն, ահռելի մի բոց հարևան տնից սողաց դեպի Խանդամիրյան թատրոնը, տանիքն առավ իր կործանարար ճարճատյունի մեջ, և շենքը սկսեց բոցավառվել: Կարծես ոչ ոք չէր տեսնում այդ կործանարար աղետը, որ գնար օգնության: Ես ճչալով փորձ արի վազել դեպի բոցավառվող թատրոնը, հրացանավոր մի մարդ բռնեց թևիցս և ինձ շպրտելով բակի մի անկյունը, հրամայեց չշարժվել: Թատրոնի շենքը անտեր ու անօգնական իմ աչքի առաջ ճարճատում էր բոցերի լափից: Միթե չէր կարելի փրկել այն: Միթե այն գեղեցիկ լուսավոր սրահը, այն աթոռներն ու ջահերը, այն բեմն ու վարագույրը, այն «անտառներն ու պալատները» պետք է բոցկլտային ու մոխրանային հրդեհի երախում: Միթե թատրոն ասած բանը վերանալու էր իմ կյանքից...»[2]: Նունպիսի ցավագին հույզերով ու մտքերով էր տոգորված այդ դժնդակ օրերին ողջ հայ ժողովուրդը, որին անողոքաբար սրախողխող էին անում ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես, և թերևս հենց դա էր ամենասոսկալին ու ողբերգականը:

Այսպիսով՝ իրավամբ կարելի է ասել, որ անգնահատելի է Խանդամիրյան թատրոնի դերն ու նշանակությունը հայ թատրոնի պատմության մեջ: Կառուցվելով XIX դարավերջի նորագույն բեմադրական պահանջներին համապատասխան, շնորհիվ իր գործունյա ու բանիմաց հիմնադրի ջանքերի, և առավելապես՝ նրա հայրենասիրության՝ այդ բացառիկ թատերական կառույցը դարձել է Կովկասի նշանավոր մշակութային կենտրոններից մեկը, դեպի ուր ձգվել են գրեթե բոլոր ճանաչված հյուրախաղային թատերախմբերի ու առաջնակարգ դերասանների ճանապարհները: Կարճ ժամանակամիջոցում այստեղ են հանդես եկել հայ բեմի

[1] Հովհաննիսյան Հ., 1996, 418:
[2] Վաղարշյան 1959, 53-54:

շատ ու շատ նշանավոր վարպետներ՝ իրենց լավագույն դերերով, ինչը մեծապես նպաստել է հայ թատերական մշակույթի հետագա առաջընթացին, ինչպես նաև տեղի դերասանական խմբերի ձևավորմանը: Եվ այդ ամենը շնորհիվ այն իրողության, որ Շուշիի քաղաքային կյանքը, ընթանալով ժամանակին համաքայլ, արձագանքել է արտաքին աշխարհի բոլոր բարձրորակ գեղարվեստական երևույթներին՝ չխորշելով նաև նորարարական ստեղծագործական գաղափարներից, որոնք հայ թատրոնում ի հայտ եկան հատկապես XIX դարավերջին և XX դարասկզբին:

Հենց դրանով էլ պայմանավորված է Խանդամիրյան թատրոնի գլխավոր պատմական առաքելությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ավետյան Գ. 1933,** Քառասուն և հինգ տարի հայ բեմի վրա, Երևան:
2. **Զարյան Ռ. 1961,** Ադամյանի կյանքը, Երևան:
3. **Խանդամիրյան Բ., Հարությունյան Ս. 1978,** Էջեր Շուշիի հայ թատրոնի անցյալից, Երևան:
4. **Հարությունյան Բ. 1980,** XIX-XX դարերի հայ թատրոնի տարեգրություն (1801-1922), հատ. 1, Երևան:
5. **Հովհաննիսյան Հ. 1996,** Հայ թատրոնի պատմություն. XIX դար, Երևան:
6. **Մելիք-Շահնազարյան Ա. 2012,** Կովկասյան փոքր Փարիզը // «Անալիտիկոն», Ստեփանակերտ, 04 (40), ապրիլ, http://theanalyticon.com/?p=1644
7. **Սաֆրազյան Ստ. 1882,** Շուշի, «Մեղու Հայաստանի», 16 սեպտեմբերի:
8. **Վաղարշյան Վ. 1959,** Ընկերներս, բարեկամներս և ես, գիրք Ա, Երևան:
9. **Верещагин В. 1870,** Путешествие по Закавказью в 1864-1865 гг., Всемирный путешественник, т. 7, Москва.

Ամփոփում

Շուշիի Խանդամիրյան թատրոնի վերելքն ու անկումը

Գրիգոր Օրդոյան

Անգնահատելի է Խանդամիրյան թատրոնի դերն ու նշանակությունը հայ թատրոնի պատմության մեջ: Կառուցվելով XIX դարավերջի նորագույն բեմադրական պահանջներին համապատասխան, շնորհիվ իր գործունյա ու բանիմաց հիմնադրի ջանքերի, և առավելապես՝ նրա հայրենասիրության, այդ բացառիկ թատերական կառույցը դարձել է Կովկասի նշանավոր մշակութային կենտրոններից մեկը, դեպի ուր ձգվել են գրեթե բոլոր ճանաչված հյուրախաղային թատերախմբերի ու առաջնակարգ դերասանների ճանապարհները: Կարճ ժամանակամիջոցում այստեղ են հանդես եկել հայ բեմի շատ ու շատ նշանավոր վարպետներ՝ իրենց լավագույն դերերով, ինչը մեծապես նպաստել է հայ թատերական մշակույթի հետագա առաջընթացին, ինչպես նաև տեղի դերասանական խմբերի ձևավոր-

մանը: Եվ այդ ամենը շնորհիվ այն իրողության, որ Շուշիի քաղաքային կյանքը, ընթանալով ժամանակին համաքայլ, արձագանքել է արտաքին աշխարհի բոլոր բարձրորակ գեղարվեստական երևույթներին՝ չխորշելով նաև նորարարական ստեղծագործական գաղափարներից, որոնք հայ թատրոնում ի հայտ եկան հատկապես XIX դարավերջին և XX դարասկզբին: Հենց դրանով էլ պայմանավորված է Խանդամիրյան թատրոնի գլխավոր պատմական առաքելությունը:

Հիմնաբառեր. *Շուշի, Կովկասյան փոքր Փարիզ, Խանդամիրյան թատրոն, հյուրախաղեր, դերասանախումբ, նեոռոմանտիզմ, մշակույթ:*

Резюме

Развитие и упадок театра Хандамирян города Шуши

Григор Ордоян

Неоценима роль и значение театра Хандамирян в истории армянской театральной культуры. Построенный в конце XIX века соответственно новейшим техническим требованиям архитектуры, благодаря высокой образованности и деловым качествам его основателя, но более всего его патриотизму, это уникальное в свое время театральное здание стало важнейшим культурным центром на Кавказе, куда стекались пути почти всех гастролирующих театральных трупп и выдающихся актеров. За короткое время здесь выступило много знаменитостей армянской сцены, что, несомненно, во многом способствовало последующему прогрессу армянской театральной культуры, а также созданию местных актерских трупп. И все это благодаря тому, что городская жизнь в Шуши, идя в ногу со временем, откликалась на все высокохудожественные явления внешнего мира, не чуждаясь также и новаторских творческих идей, которые особенно проявились в армянском театре конца XIX и начала XX веков. Именно этим и обусловлена главная историческая миссия театра Хандамирян.

Ключевые слова: *Шуши, Кавказский маленький Париж, Театр Хандамирян, гастроли, актерская труппа, неоромантизм, культура.*

Abstract

The Rise and Fall of the Khandamiryan Theater of Shushi

Grigor Ordoyan

The role and significance of the Khandamiryan Theater is invaluable in the history of the Armenian theater. Built in accordance with the latest theatrical requirements of the late XIX century, and thanks to the efforts of its active and knowledgeable founder, especially thanks to his patriotism, this unique theatrical structure has become one of the most prominent cultural centers in the Caucasus, that's why the paths of almost all the famous touring troupes and leading actors stretched there. In a short period of time, many famous masters of the Armenian theatrical stage performed here with their best roles, which greatly contributed to the further development of the Armenian theatrical culture, as well as to the formation of local groups of actors. And all this thanks to the fact that the city life of Shushi, keeping pace with the times, has responded to all high-quality artistic phenomena of the outside world without shying away from the innovative creative ideas that appeared in Armenian theater, especially in the late 19th and early 20th centuries. That was the main historical mission of the Khandamiryan Theater.

Keywords: *Shushi, Caucasian Little Paris, Khandamiryan Theater, tours, group of actors, neo-romanticism, culture.*

ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐԻԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
Էլ. հասցե՝ marina–arutunyan@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 10.04.2021,
գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 20.04.2021

ՇՈՒՇԻՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԻՑ ՓՐԿՎԱԾ՝ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ԵՎ XIX ԴԱՐԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Ներածական

Հայ գրչության արվեստի ձևավորմանն ու զարգացմանը նվիրված են բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ:

Արցախի գրչագրության արժեքային համակարգի ուսումնասիրության հարցում կարևորվում են Սարգիս արքեպս. Հասան-Ջալալյանցի[1], Մակար եպս. Բարխուդարյանցի[2], Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի[3], Յովհաննես եպս. Շահխաթունյանցի[4], Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի[5], Գարեգին Հովսեփյանի[6], Խաչիկ Դաղյանի[7], Օ. Եգանյանի[8] և ուրիշների ձեռագրական հավաքածուների դերն ու նշանակությունը:

Սակայն ինչպես վերոնշյալ գիտական հետազոտություններում, այնպես էլ ժամանակակից գրականության մեջ քիչ տեղեկություններ կան Շուշիի ձեռագրական մշակույթի, հատկապես վերջինիս մշակութային արժեքների ոչնչացումից փրկված՝ XVIII դարի վերջի և XIX դարի ձեռագրերի վերաբերյալ: Այս հրապարակումը նպատակ ունի լրացնելու Շուշիի ձեռագրական մշակույթի պատմության ուսումնասի-

---

[1] Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 228, վավ. 15:
[2] Բարխուտարեանց Մ. 1895:
[3] Սբատեանց Մ. 1904:
[4] Շահխաթունեանց Յովհ. եպիսկ. 1842:
[5] Կարապետ եպիսկոպոս 1914:
[6] Հովսեփեան Գ. 1951:
[7] Թօփճեան Յ. 1898:
[8] Եգանեան Օ., Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն, էջ 59-62:

ության բաց թողնված էջերը:

Գրչության արվեստը (նաև՝ գրչագրություն) պատմական Հայաստանում ստեղծվել էր դեռևս հնագույն ժամանակաշրջանում՝ փորագրությունների տեսքով: Արվեստի այս տեսակը լայնորեն կիրառվել է միջնադարում: Արցախում նշանավոր էին Դադիվանքի (նաև՝ Դադոյի), Ամարասի, Գանձասարի[1], Գտչավանքի (հնում՝ Քթիշ, հետագայում՝ Կտիչ, Գտիչ, իսկ նոր ժամանակներում մելիքանիստ Տող գյուղի անունով՝ Տող), Խանածախի, Ավետարանոցի, Խզնավար գյուղի, Չարեքա վանքի, Փառիսոսի վանքի, Երից մանկանց վանքի, Ծարա գավառի, Սբ. Հակոբա վանքի[2], Եղիշե առաքյալի վանքի, Առաջաձոր գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու (ներկայիս Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջան), Հիրհերի (Հերհերի), ինչպես նաև Արցախի հյուսիսարևելյան հատվածի մի շարք վայրերի գրչագրության կենտրոնները:

Շուշիում[3] ձեռագրական մշակույթը լայն թափ ստացավ XVIII դարի երկրորդ կեսից: Սակայն ցավով նշենք, որ ինչպես Արևելյան Հայաստանի մյուս շրջաններում, այնպես էլ Արցախում գրված և ընդօրինակված հայկական ձեռագրերից քչերի հանդեպ է բարեհաճ գտնվել պատմական ճակատագիրը: Խնդիրն այն է, որ դեռևս միջնադարում Հայաստանում վաչկատուն ցեղերը (սելջուկ-թուրքեր, թաթար-մոնղոլներ, Լանկ-Թեմուրի արյունարբու հրոսակախմբեր) անխնա ոչնչացնում էին մշակութային արժեքները, նախ և առաջ ձեռագրերը, գորգերը, հայկական եկեղեցիները, իսկ ոսկյա և արծաթյա թանկարժեք զարդերը, կենցաղային իրերը՝ հափշտակում: Նույն դաժանությամբ էին վարվում նաև կովկասյան թաթարները: Պետք է նշել, որ այս վաչկատուն ցեղերը, որոնք մինչև XX դարի սկիզբը ազգային ինքնության գիտակցություն չունեին և իրենց ուրիշներից՝ մասնավորապես քրիստոնյաներից, տարբերում էին «մուսուլման» ընդհանրական անվանումով, այսպես կոչված «ադրբեջանցի» տիտղոսը ամրագրեցին XX դ. սկզբին: Փաստորեն, Թուրքիայի քաղաքական նոր նկրտումների և ճնշումների տակ, թուրքական բանակի ինտերվենցիայի հետևանքով 1918 թ. ստեղծվում է կովկասյան թաթարների, այսպես կոչված, ադրբեջանական պետությունը. նավթաշատ Բաքուն հռչակվում է պետության մայրաքաղաքը, որի կառուցմանը, ինչպես նաև նրա արդյունաբերական և մշակութային զարգացմանը «ադրբեջանցիներն» ամենևին չեն մասնակցել:

«Ադրբեջանցիները» տասնամյակներ շարունակ Նախիջևանում, Արցախում (Լեռնային, Դաշտային) և Բաքվում հայկական կոտորածներին զուգահեռ մշակութային արժեքների ոչնչացման քաղաքականություն էին իրականացրել: Նրանք նպատակասլաց հայաթափել էին Նախիջևանը և Դաշտային Արցախ-Գարդման-

[1] Տարբեր դարաշրջաններում Գանձասարում գրված ձեռագրերի, ինչպես նաև վանքում եղած իրերի, տապանաքարերի վերաբերյալ որոշ արժեքավոր տեղեկություններ կան ԳԱԹ-ում (ֆոնդ Ս. Քամալյանի, g. 2, բաժին 44):

[2] Բարխուտարեանց Մ. 1996, 109:

[3] Շուշի բերդաքաղաքի հիմնադրման և բնակեցման ճշգրիտ տարեթվի մասին տարբեր կարծիքներ կան գիտական գրականության մեջ: Ընդհանրապես, հետազոտողների մի մասը (հատկապես՝ օտար ուսումնասիրողները) Շուշիի հիմնադրումը համարում են XVIII դարի հիսունական թվականները: Սակայն նշենք, որ այն որպես բնակավայր-ամրոց գոյություն է ունեցել դեռևս ավելի վաղ ժամանակներում (Բալայան Վ. 2017, 38): 1846 թ. Շուշի ամրոցը վերանվանվել է Շուշի քաղաք (Աբրահամյան Հ., Շուշիի ինքնավարության հարցի շուրջ, էջ 4: Աբրահամյան Հ. 2015):

քը, աստիճանաբար ոչնչացրել հայկական մշակութային արժեքները, բարբարոսաբար բնաջնջել Ջուղայի խաչքարերը, իսկ թուրքերը տարիներով մշակութային ցեղասպանություն են իրականացրել Արևմտյան Հայաստանում: Այս մասին վկայում են բազմաթիվ փաստեր՝ փաստավավերագրական ժողովածուներում, հուշագրություններում, գիտական հետազոտություններում, պատմագրական և մատենագիտական աշխատություններում, որոնք ներկայացված են:

Արցախի, հատկապես նրա մշակութային կենտրոն Շուշիի համար 1918-1920 թվականները համարվում են առավել ծանր իրադարձություններով լի ժամանակաշրջան[1], քանի որ այս տարիներին էր, որ Ադրբեջանի նորաթուխ մուսավաթական կառավարությունը հավակնում էր բռնազավթել պատմական Հայաստանի մի շարք տարածքներ, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղը: Ինչպես նշում է պ.գ.դ. Համլետ Հարությունյանը, արևելահայության վիճակն ավելի ծանրացավ, երբ Արևելյան Հայաստանի Շուշու, Զանգեզուրի, Ջեբրայիլի և Ջիվանշիրի գավառների գեներալ-նահանգապետ հռչակված (Ադրբեջանի կառավարության 1919 թ. հունվարի 15-ի որոշումով) Խոսրով բեկ Սուլթանովը դիվանագիտական ճնշումներով, սպառնալիքներով, զինված ուժ գործադրելով ցանկանում էր արցախահայությունից կորզել Ադրբեջանին հպատակվելու համաձայնություն: Սակայն արցախցիների պատասխանը անփոփոխ էր ու հստակ. ո՛չ Ադրբեջանի իշխանությանը[2]: Չկարողանալով հաշտվել այս իրողության հետ՝ Ադրբեջանը շարունակում էր բոլոր միջոցներով սպառնալ գավառի հայության ֆիզիկական գոյությանը: Ադրբեջանական զինված ուժերի լայնամասշտաբ հարձակումները սկսվեցին 1920 թ. մարտի 22-ի երեկոյան: Լույս 23 -ի գիշերը թուրքական կանոնավոր զորամասերը և խուժանը սկսեցին ավերել ու վառել հայկական թաղամասերի շինությունները, մշակութային հուշարձանները, կողոպտեցին հայերին, կազմակերպեցին ու իրականացրին արյունալի ջարդեր: Չնայած ինքնապաշտպանական մարտերին՝ Շուշիում հայերն ունեցան ինչպես մարդկային[3], այնպես էլ մշակութային արժեքների զգալի կորուստներ: Շուշիում ավերվեցին հայկական դպրոցները (թեմական դպրոցը[4], մասնավոր, հասարակական դպրոցներ), Բագրատ Տեր-Սահակյանի և Մելքոն Բաբաջանյանի տպարանները (որոնց գործունեությունն ընդհատվեց 1920 թ. մարտի 23-ին), պատմամշակութային[5] հուշարձանները (եկեղեցիներ, խաչքարեր, մշակութային օջախներ):

Չնայած «ադրբեջանցիների» կողմից իրականացված՝ մշակութային արժեքների ոչնչացմանը, հայ մշակույթի անխոնջ ներկայացուցիչների ջանքերի շնորհիվ փրկվել և մեզ են հասել մի քանի ձեռագրեր, որոնք պահվում են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և Էջմիածնի ձեռագրատանը:

Մեր գիտական ուսումնասիրության մեջ շեշտը հիմնականում դրել ենք XVIII դարի վերջին և XIX դարում գրված ձեռագրերի վրա.

---

[1] Բալայան Վ. 2017, 423:
[2] Հարությունյան Հ., Շուշիի հայության կոտորածները (1919 թ. հունիս և 1920 թ. մարտ), էջ 50-51:
[3] Միքայէլեան Ա., Ղարաբաղի վերջին դեպքերը, էջ 121-122:
[4] ԼԷօ 1914:
[5] Հարությունյան Մ. Գ. 2010:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐ
ՁԵՌԱԳԻՐ Հմր 7428
ԺՈՂՈՎԱԾՈՒ
(ԲԺՇԿԱՐԱՆ)

ՎԱՅՐ՝ Շուշի բերդ, 1791-1792 թ.: **ԳՐԻՉ՝** Միքայէլ Աստապատեցի: **ԹԵՐԹ՝** 154: **ՆՅՈՒԹ՝** թուղթ: **ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝** 33,2 X 21,2: **ԳՐՈՒԹՅՈՒՆ՝** երկսիւն: **ԳԻՐ՝** բոլորգիր: **ՏՈՂ՝** 37-40: **ԿԱԶՄ՝** ստվարաթուղթ: **Հշտկրն. գրչի՝** էջ 4 ա, 72ա, 103ա: **ՎԻՃԱԿԸ՝** լավ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - «Միքայէլ Աստապատեցւոյ Տոմար բժշկութեան, Բժշկարան»: - «Աչից դեղ խիստ ազնիւ»[1]: «Վասն ստամոքն այտոցի»[2]: «Վասն լերդացաւ»[3] : «Վասն գլխացաւին»[4]: «Աչացաւ»[5]:

«Տոմարական աղիւսակ»[6] :

«Վասն ականջի ցաւերին» - «Ականջն որ խլանաց, կամ ջուր երբայ մնաց մէջն և չի լսէ, առ գլուխ սխտոր ծեծե, գդալ քացախ և գդալ ջուր և ապակէ մէջ եփես, քամէ պարզ ջուրն շիշի մէջ ածէ յետոյ քիչ-քիչ քսել....»[7]:

«Վասն բերանի խոցերին»[8]:

«Օձն որ մարդն խայթէ» - «....թթու բան լից վրայն խնձորի տերևն ծեծէ կապէ վրայն նաև ծեծած տերևն խնձորի և ջուրն հան խառնէ գինին և տուր խմէ. օձահարի և այլ գազանհարի շատվարն (խառնուրդ) լաւէ և փորձաց...օձն որ մարդոյ բերանն կշտում չի լաւանայ, բողկն ծեծէ ջուրն խառնէ զաֆրանն և խմել տուր....»[9]:

«Հապ փորացաւի»[10] : «Սպեղանիք զանազան կազմեալ, օրինակէ»[11] : «Հապ հազի»[12] :

«Թուական Սարկաւագի»[13] : «Տոմարական գործիք»[14] (Լուսնացոյց) :

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ - «Տօմար բժշկութե արարեալ վաղեմի իմաստնոց..... ձեռամբ յօգնամեղ Միքայէլ քահանայի.... օգնեա Սբ Հոգի Աստուած իմ»[15] :

«Բժշկարան գիրք արարեալ վաղեմի ժամանակաց իւր այբուբեն գրոցն օրինակ է՝ ձեռամբ Տէր Միքայէլէ Աստապատեցւոց Շուշի բերդն ՍՄԽԱ թուին»[16]:

«Տէր Միքայէլ գրողս յիշեա ՍՄԽԱ թուին Շուշու բերդս»[17] :

---

[1] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 4ա:
[2] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 15ա:
[3] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 17ա:
[4] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 30ա:
[5] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 42ա:
[6] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 61ա-71բ, 77բ, 123բ -124բ, 151ա-152ա:
[7] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 73բ:
[8] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 74ա:
[9] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 95ա:
[10] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 103բ:
[11] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 107բ:
[12] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 117բ:
[13] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 125ա-126բ:
[14] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 127ա:
[15] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 4ա:
[16] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 72ա:
[17] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 103ա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ - Ձեռագրում ուշագրավ է «Լուսնացոյց» -ը: Այն ներկայացված է աղյուսակներով, որոնցում գրված են տարեթվերը՝ սկսած 1774 թ. մինչև 1912 թ.: Տարեթվերին զուգահեռ նշված են ամիսները՝ ըստ համաստեղությունների(խոյ, ցուլ, երկվորյակ, խեցգետին, առյուծ, կույս և այլն)[1] : Որոշ աղյուսակներում կան հայոց տարեթվերի վերծանություն[2]:

ՁԵՌԱԳԻՐ Հմր 8212

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՎԱՅՐ՝ Շուշի, 1822 թ.: **ԳՐԻՉ ՝** Մեսրովբ Թաղիադեանց:
ՍՏԱՑՈՂ՝ Աղա Կարապետ: **ԹԵՐԹ՝** 123: **ՆՅՈՒԹ՝** թուղթ:
ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 21 X 17,2: **ԳՐՈՒԹՅՈՒՆ՝** միասիւն: **ԳԻՐ՝** նոտրգիր: **ՏՈՂ՝** 20-29: **ԿԱՋՄ՝** կտդ: **Հշտկրն. գրչի՝** էջ 6 ա, 77բ: 1-5, 79-81, 120-123 էջերը ՝ չգրված: **ՎԻՃԱԿԸ՝** բավարար, կազմի Ա փեղկի արտաքին եզրի կաշին քերծուած-մաշուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - «Գիրք որ կոչի Աստուածանմանութիւն» (էջ 6ա): «Յառաջաբանուի հեղինակի»[3] :

Ա) «Գլուխ նախընթաց, յաղագս թէ որքան մեծ իցէ ճանաչելն զԱստուած»[4] :

Բ)«Գլուխ նախընթաց յաղագս թէ որքան մեծ իցէ ճանաչելն զԱստուած»[5]:

Գ) «Եզրակացուի»[6] :

Դ) «Նմանութիւն»[7]:

Ե) «Յաղագս թէ Աստուած է գոյացական էակ և նմանուի»[8] :

Զ) «Յաղագս թէ Աստուած է կենդանի էակ» - «....թէ Աստուած իցէ կենդանի, բայց զի կարգ բանին այսպէս պահանջե վասն այն ցուցանելի է նախ վկայութեամբ Սբ գրոց....»[9] :

Է) «Յաղագս թէ Աստուած է իմացական էակ» - «....իմացական գոլն ցուցանի նախ վկայութեամբ Սբ գրոց, զի ասէ յոր իմաստուն է մտօք, զօրաւոր և մեծ, և իմաստունն ասէ գոյ 'ի նմա հոգի մտաւոր .... Սբ Միածին....»[10] :

Ը)«Յաղագս թէ Աստուած է անձնիշխան էակ» - «Սոյն է ասել թէ Աստուած է անձնիշխան, քանզի անձնիշխան անուին ոչ այլ ինչ է, թէ ոչ կամք ազատ: Ապա 'ի ցուցանելն թէ կամքն է 'ի Աստուած, միանգամայն ցուցանի և անձնիշխանութիւն....»[11] **Թ)**«Յաղագս թէ Աստուած է ճշմարիտ էակ»[12]:

Ժ) «Յաղագս թէ Աստուած է ամենաբարի էակ»[13] :

---

[1] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 127ա-127բ, 153բ - 154ա:
[2] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 138ա-139ա, 142ա -148ա:
[3] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 7ա:
[4] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 7 բ:
[5] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 7 բ:
[6] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 10ա:
[7] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 16բ:
[8] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 19ա:
[9] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 21ա:
[10] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 22ա:
[11] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 22 բ:
[12] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 23բ:
[13] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 24բ:

Ի) «Յաղագս թէ Աստուած է մի միայն»[1] :

Լ) «Յաղագս նմանուի, որ արտահանի 'ի ճանաչման է Սրբոյ Երրորդութեան»[2]: «Տէր՝ ի թուականիս Հայոց»[3] :

«Փիլիպպոսի Համառօտ մեկնութիւն ոմանց բանից եղելոց ի Տրամաբանութեանն Անտոնի Գովդնոյ»[4] :

Ա) «Եզրք», «Պարզ նախադասութեանց ոմանց առաջին ընտերակայի»[5]:

Բ) «Օրէնք Աստուածային....»[6]:

Գ) «Կանօնք ներգործուի»[7]:

Դ) «Որպես բաղձանք բարոյական առաքինութեան»[8] :

Ե) «Զինչէ հաւասարեալ և անհաւասար սահմանն»[9]:

Զ) «Զինչէ տեսականուին գործնականի և տեսականի»[10]:

Է) «Զինչէ գործողական հաւաքաբանուին, որոյ մեծագոյն և այլն», «Զինչէ, որ ասէ, թէ ապացուցուիք այլոց»[11]:

Ը) «Արդ մարդկուի և կենդանուի նշանակել են....»[12]:

Թ) «Վասն գոյացուի»[13] :

Ժ) «Զինչէ, որ ասէ գոյացուի առանց քանակուե և այլն»[14] :

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ - «Եւ այժմ արտագրեալ զգուշութեամբ 'ի նախկին գաղափարե անտի 'ի նորին իսկ ձեռագրէ աշխատասիրութեամբ նուաստ Մեսրովպայ սարկաւագի Կարբեցւոյ միաբան Թաղիադեանց, որ պաշտօնատար հարազատ եւ ծառայ՝ Յովհաննէս խորհրդական գրագիր Արքեպիսկոպոսի Տարօնացւոյ: 'Ի հայրապետութեան տեառն Եփրեմայ Սրբազան կաթողիկոսին Ամենայն Հայոց, յամի 1822, փետրուարի 19, 'ի Շուշի քաղաքի, որի վիճակայ Արցախու»[15] :

«....զայս գիրք .... իբրև զբոլորեալ փունջս ծաղկանց ընծայեցի Աղայ Կարապետ գերազնիւ իմաստասիրի եւ այն՝ ոչ վասն մարմնոյ բարե ցանկութեան, այլ յաղագս զբարեկամուին .... Խոնարհ ծառայ գերազնիւ ձեռամբ Մեսրովբ սարկաւագ Կարբեցի Դաւթայ Թաղիադեանց»[16]:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ ՁԵՌԱԳՐԵՐ

ՁԵՌԱԳԻՐ Հմր 166
ԱՒԵՏԱՐԱՆ

---

[1] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 26ա:
[2] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 57ա:
[3] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 78 ա:
[4] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 82ա:
[5] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 82բ:
[6] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 83 ա:
[7] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 89 ա:
[8] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 89բ:
[9] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 92բ:
[10] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 93բ:
[11] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 95ա:
[12] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 103ա:
[13] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 106ա:
[14] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 106բ:
[15] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 6ա:
[16] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 77բ:

ՎԱՅՐ՝ Շուշի, 1867-72թթ.: **ԳՐԻՉ, ԾԱՂԿՈՂ՝** Մարգարիտ Ալեքսանեանց:
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ անհայտ: **ԹԵՐԹ՝** 241: **ՊՐԱԿՆԵՐ՝** 50: **ՆՅՈՒԹ՝** թուղթ:
ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 34,6 X 24,5: **ԳՐՈՒԹՅՈՒՆ՝** երկսիւն: **ԳԻՐ՝** բոլորգիր:
ՏՈՂ՝ 31: **Մնրնկր՝** ավետարանիչ, կխ, լզ: **ԶԱՐԴԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ՝** թռչնագիր, կենդանագիր: **ՊԱՀՊԱՆԱԿ՝** 1+1, թուղթ: **ԿԱԶՄ՝** արծաթապատ տախտակ: **Հշտկրն. գրչի՝** էջ 3ա: **ՎԻՃԱԿԸ՝** լավ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - *‹‹Աւետարան ըստ* Մատթէոսի››: *‹‹Աւետարան ըստ Մարկոսի››* ‹‹Աւետարան ըստ Ղուկասու››: ‹‹Աւետարան ըստ Յոհաննու››:

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ - Մանրանկարներն աչքի են ընկնում մեծ նրբաճաշակությամբ: ‹‹Աւետարան››-ի յուրաքանչյուր գլուխ սկսվում է գլխատառերով, որոնց գրվածքը ներկայացվել է զանազան կենդանիների կամ ձկների, երբեմն՝ նուրբ ծաղիկների պատկերներով: Որոշ գլխագրեր գրված են երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն: Ձեռագրի սկզբում պատկերված են չորս ավետարանիչները: Աշխատանքում կան կիսախորաններ[1] և լուսանցազարդեր: Հետաքրքիր է Սբ. Գրիգոր Նարեկացու մանրանկարը, որում նրա հայացքն ուղղված է դեպի երկինք՝ ամպերի մեջ երևացող մանուկը գրկած Տիրամորը[2]: Ուշագրավ են Շուշի քաղաքի հայոց թաղամասի[3], Մայր Աթոռ Սբ . էջմիածնի մանրանկարները[4]:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ - «Հոգին Սուրբ եկեսցէ: Սուրբ Աւետարան Յիսուսի Քրիստոսի: Ձեռագրեաց Մարգարիտ Ալէքսանեաց, ի Շուշի, յամի 1872(ՌՑԻԱ)»[5]:

«Ձեռագրեաց Մարգարիտ դուստր Ղազանչեցի, այժմ Շուշի քաղաքացի, հանգուցեալ ազնուազարմ Ումբրի-բէյի Յովհանեան, ի կողմանէ ամուսնոյն Ալէքսանեանց, ի կասրութեան Ռուսաց Ալեքսանդր Բ, ի Հայրապետութեան Տ. Տ. Գէորգայ Դ Կաթողիկոսի Ամենայն Հայոց եւ յառաջնորդութեան հայոց Ղարաբաղու վիճակի Տեառն Սարգսի արքեպիսկոպոսի Ջալալեանց….»:

«Շնորհօք Սուրբ Հոգւոյն, ողորմութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ազդմամբ ամենակալին եւ ամենագթածին Աստուծոյ եւ պաշտելի բարեխօսութեամբ եւ պաշտպանութեամբ ամենասրբուհի Աստուածամօրն եւ Թագուհւոյն երկնի եւ երկրի, միակ Տիրամօր Կուսին Մարիամայ, ես մեղաւոր անարժան աղախին Մարգարիտս ի դստերացն Ումբրի-բէյի Յովհանեանց, ծնելոյ ի Շուշի քաղաքի, աշխարհին Արցախայ Մեծին Հայաստանի, սկիզբն արարի ձեռամբ իմով գծագրել զՍուրբ Աւետարանս, ի Փրկչական թուին 1867 և շնորհապարգև օժանդակութեամբ Սրբոյ Երրորդութեանն յաւարտ հասուցի աշխատելով կարի յոյժ վասն գեղեցկութեան մատենիս, յամի Տեառն 1872, ի տիս ամաց կենաց իմոց իբրև երեսնից: Նուիրեցի զայս ի դուռն Արարատեան Աստուածակառոյց Առաքելական Մայր Սուրբ Կաթողիկէ եկեղեցւոյն Սրբոյ Էջմիածնայ, ի փրկութիւն հոգւոց ծնողացն իմոց Ումբրի-բէյի եւ Հռիփսիմէին եւ եղբօրն իմոյ Յովհանիսին …. ի փրկութիւն հոգւոյս տառապեալ աղախին Մարգարիտս եւ ամուսնոյս Պետ-

[1] Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. Հ՝ 166, թ. 3ա, 15ա, 120ա, 149ա:
[2] Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. Հ՝ 166, թ. 10 բ , 50 ա , 76 բ, 117 ա:
[3] Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. Հ՝ 166, թ. 10 ա:
[4] Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. Հ՝ 166, թ. 149 բ:
[5] Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. Հ՝ 166, թ. 3ա:

րոսի Ալէքսանեանց»:

ԿԱԶՄ - Ձեռագրի կազմը արծաթապատ է, որի վրա փորագրված են գեղեցիկ, մանր քանդակներ: Առաջին երեսին՝ ձվաձև շրջանակի մեջ, փորագրված է Հիսուս Քրիստոսի բարձրաքանդակ մանրանկարը: Նա պատկերված է գահի վրա նստած դիրքով՝ Ավետարանը ձախ ձեռքին: Կազմի նույն երեսի չորս անկյուններում՝ կլոր շրջանակների մեջ, փորագրված են չորս ավետարանիչները, որոնց յուրաքանչյուրի ձեռքին կա մեկական Ավետարան: Շրջանակներից դուրս առկա են գեղեցիկ զարդաքանդակներ: Կազմի երկրորդ երեսի կենտրոնում՝ ձվաձև շրջանակի մեջ, առկա է ինքնատիպ բարձրաքանդակ, որում պատկերված են նորածին Հիսուսը, Մարիամ Աստվածածինը, Հովսեփը և երկու հրեշտակներ: Առկա են նաև այլ գեղեցիկ զարդաքանդակներ[1]:

ՁԵՌԱԳԻՐ Հմր 186
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՏԵԱՆ
(հայատառ պարսկերեն)

ՎԱՅՐ՝ Շուշի, 1809թ.: **ԳՐԻՉ՝** գրիչ՝ Ալի բեգ Վալիֆ:
ԹԵՐԹ՝ 137: **ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝** 35,5 X 22: **ՆՅՈՒԹ՝** թուղթ:
ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ միասիւն: **ԳԻՐ՝** բոլորգիր: **ՏՈՂ՝** 14- 24:
ԿԱԶՄ՝ ստվարաթուղթ: **Վիճակը՝** անբավարար:
Հշտկրն. էջ 137 ա: **Հիշատակագրություն՝** էջ 76բ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - Ձեռագրում ներկայացվում են պարսկերենով արձանագրություններ՝ սոցիալական խնդիրների վերաբերյալ: Հիմնականում վերաբերում են կալվածքների, գյուղացիների անասունների հաշվառմանը:

ՁԵՌԱԳԻՐ Հմր 279
ԿՈՆԴԱԿ

ՎԱՅՐ՝ Շուշի, 1822 թ.: **ԳՐԻՉ՝ անհայտ: ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝** ԵՓՐԵՄ Ա ՁՈՐԱԳԵՂՑԻ : **ԾԱՂԿՈՂ՝** անհայտ: **ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝** 45,4 X 32,7: **ՆՅՈՒԹ՝** թուղթ: **ԳՐՈՒԹՅՈՒՆ՝** միասյուն: **ԳԻՐ՝** նոտրգիր: **ՏՈՂ՝** 36: **Մնրնկր՝** լգ.:
ՁԱՐԴԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ՝ թռչնագիր: **Վիճակը՝** բավարար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - « Յիսուսի Քրիստոսի ծառայ եւ շնորհի: Նորին Տէր Եփրեմ Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Ծայրագոյն Պատրիարգ Աստուածայնոյ եւ Առաքելականի եկեղեցւոյ Քրիստոսի, նաև Մեծի Մայր Աթոռոյն Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի ….. Շնորհք, սէր, ողորմութիւն, խաղաղութիւն եւ ամենաքաղցր ակնարկութիւն Սրբոյ Երրորդութեան հանդերձ սքանչելահրաշ զօրութեամբ քրիստոսամուխ Սրբոյ Գեղարդեանն եւ պահպանութեամբ Աջոյ Սրբոյ Լուսաւորչին եւ Սրբոյն Յակոբայ Մծբնայ Հայրապետին եւ այլ ամենայն Աստուածային Սրբու-

[1] ‹‹Էջմիածին›› 1962, N 12, էջ 57-59:

7. http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Hayarvest2002/2005/2005(3).pdf.

Ամփոփում

Թուրքերի նկատմամբ արտահայտված բացասական ստերեոտիպերը Օսիպ Մանդելշտամի «Կառապանը» բանաստեղծության մեջ և Նադեժդա Մանդելշտամի հուշերում

Լուսինե Ղարախանյան

Հոդվածում ներկայացված են XX դարի ռուսական և համաշխարհային դասական պոեզիայի կարկառուն ներկայացուցիչ Օսիպ Մանդելշտամի մի քանի բանաստեղծություններ, որոնք գրվել են 1920 թվականի ջարդերի հետևանքով այրված և ավերված Շուշիի տպավորության տակ: Մանդելշտամի պոեզիայում այրված Շուշին դառնում է քաղաքական թեմա: Բարբարոսների կողմից այրված Շուշին ներկայացված է գեղագիտական և հոգեբանական, զգայական և հուզական պատումով, որն ընթերցողին է փոխանցում այդ ժամանակի համապարփակ պատկերը:

Վախը, որպես հիմնական հույզ, արտացոլվում է յուրաքանչյուր բառի և տողի մեջ, նրա ստեղծագործության և մտքի մեջ:

Թուրքերի նկատմամբ բացասական կարծրատիպերի ֆոնի վրա էլ ավելի են ընդգծվում համակրանքը, կարեկցանքը և դրական վերաբերմունքը հայերի նկատմամբ:

Հիմնաբառեր. *բացասական ստերեոտիպեր, ադրբեջանցի թուրքեր, հրկիզված Շուշի, հետերոկարծրատիպեր, Օսիպ Մանդելշտամ, էթնիկական, հոգեբանական «պրիզմայի էֆեկտ»:*

Резюме

Отрицательный стереотип, сложившийся в отношении к туркам в стихотворении «Фаэтонщик» Осипа Мандельштама и воспоминаниях Надежды Мандельштам

Лусине Караханян

В статье представлены несколько стихотворений выдающегося представителя классичкской русской и мировой поэзии XX века Осипа Мандельштама, написанные под впечатлением сгоревшего и разрушенного Шуши, в результате погромов 1920-го года. Сгоревший город Шуши, в поэзии Мандельштама, становится политической темой. Сожженный варварами Шуши, представлен эстетитечским и психологическим, чувственным и эмоциональным повествованием, которое передает читателю всеобеъмлющую картину того времени.

Страх, как базовая эмоция, отражается в каждом слове и строке, в его сочинении и мысли.

На фоне отрицательных стереотипов по отношению к туркам еще больше подчеркивается симпатия, сострадание и положительное отношение к армянам.

Ключевые слова: *негативные стереотипы, азербайджанские турки, сожженный Шуши, гетеростереотипы, Осип Мандельштам, этнический, психологический «эффект призмы».*

Abstract

Negative steerotypes expressed against turks in Osip Mandelstam's "The phaetonist" poem and in memories of Nadezhda Mandelstam

Lusine Kharaxanyan

The article presents a few poems created with the impressions of burnt Shushi by Osip Mandelstam - one of the classic figures of Russian and world poetry of the 20th century.

The burnt Shushi becomes a political topic in his poetry, where negative stereotype is expressed towards the Turks. Shushi burned by barbarians is presented with accurate aesthetic and psychological, emotional and sentimental interpretations, which convey the realities of the time to the reader in a comprehensive way. Fear as a basic emotion is reflected in every corner of the line, word, writing, thought. Against the background of the negative stereotypes expressed towards the Turks, the positive stereotypes expressed towards the Armenians are emphasized.

Keywords: *negative stereotypes, Azerbaijani Turks, burnt Shushi, heterostereotypes, Osip Mandelstam, ethnic, psychological "prism effect".*

ЮЛИЯ ЮРЬЕВНА АРУТЮНЯН
старший научный сотрудник
научного центра "Качар",
yuliaharutyunyan22@gmail.com
Статья представлена 10.04.2021,
рецензирована 10.04.2021,
принята к публикации 20.04.2021

ТЕМА ШУШИНСКОЙ РЕЗНИ В РУССКОЙ ЛИТЕРАТУРЕ

Долгие годы меня интересовала тема резни армян в русской литературе. Многолетние поиски показали, что в отличие от темы Геноцида армян, которая достаточно широко представлена в русской литературе, резня армян в Шуши еще не удостоилась художественного осмысления.

В различных публикациях, как, например, заметка в газете «Слово», издаваемой в Тбилиси[1], в выступлении Орджоникидзе[2] можно встретить оценки трагических событий, которые, однако, не считаются литературными произведениями. Серго Орджоникидзе с ужасом вспоминал картину, которую увидел в некогда красивейшем армянском городе Шуши в мае 1920 года, разрушенном и разгромленном до основания азербайджанскими и турецкими войсками.

Знаменитая русская писательница Мариэтта Шагинян имеет ценные воспоминания, изложенные довольно образными и художественными мотивами. Спустя шесть лет после погромов, посетив Шуши, писательница была ошеломлена тишиной. «Первое, что меня поразило,- тишина. Такой страшной тишины я не испытала нигде, никогда, и сразу же она кажется неестественной. Вдруг вам начинает мерещится, что тишина бормочет: камни шушукаются, шатаются, шуршат, и волосы у вас на голове встают дыбом. Здесь в течении трех дней в марте 1920 года было разрушено и сожжено 7000 домов и вырезано - цифры называют

[1] Тбилисская газета «Слово» в номере от 16 апреля 1920 года, сообщая о погромах в Шуши, писала: «В городе не осталось камня на камне». Подробности: https://regnum.ru/news/polit/2894200.html (Дата обращения: 10 апреля 2021 г.).

[2] Серго Орджоникидзе, возглавлявший с апреля 1920 г. Кавказское бюро ЦК РКП (б) и активно участвовавший в установлении советской власти в Азербайджане, отмечал в 1936 г.: «Я с ужасом вспоминаю и сегодня ту картину, которую мы увидели в Шуше в мае 1920 года. Красивейший армянский город был разрушен, разгромлен до основания, а в колодцах мы увидели трупы женщин и детей» (Орджоникидзе 1945, 422).

разные; одни говорят: 3-4 тысячи армян, другие - более 12 тысяч. Факт тот, что из 35 тыс. армян не осталось в Шуше ни одного. Кой-где в канавах еще можно увидеть пучки женских волос с запекшейся на них черной кровью. Человеку с воображением здесь трудно дышать: идешь, идешь, идешь сплошным рядом обугленных стен, точнее кусков стен, торопишься итти и боишься никогда не выйти; ждешь, чтоб тишина развалилась, наконец, на куски над твоей головой и дала тебе набрать в легкие воздуха…»[1].

Надежда Мандельштам в квартале Мегрецоц

В описании последствий кровопролития в Шуши непревзойденным считается стихотворение знаменитого русского поэта XX века Осипа Мандельштама «Фаэтонщик». Мрачные впечатления и тяжелые чувства получили свое воплощение в строках, отражающих зеркало души.

Так, в Нагорном Карабахе,
В хищном городе Шуше,
Я изведал эти страхи
Соприродные душе…[2]

Интересные образы художественного отражения трагической развязки резни армянского населения Шуши можно найти в дневниковых записях жены поэта Надежды Мандельштам, сопровождавшей его в путешествии. Вспоминая о поездке в Карабах, она описала, как они на рассвете выехали на автобусе из Гянджи в Шушу. Город начинался с бесконечного кладбища, потом крохотная базарная площадь, куда спускаются улицы разоренного города. Случалось видеть деревни, брошенные жителями, состоящие из нескольких полуразрушенных домов, но в этом городе, когда-то, очевидно, богатом и благоустроенном, картина катастрофы и резни была до ужаса наглядной.

Они прошлись по улицам, и всюду одно и то же: два ряда домов без крыш, без окон, без дверей. В вырезы окон видны пустые комнаты, изредка обрывки обоев, полуразрушенные печки, иногда остатки сломанной мебели. Дома из знаменитого розового туфа, двухэтажные. Все перегородки сломаны, и сквозь эти остовы всюду сквозит синее небо.

Говорят, что после резни все колодцы были забиты трупами. Если кто и уцелел, то бежал из этого города смерти. На всех нагорных улицах не встретили ни

[1] Шагинян 1927, 38, ср. также Мкртчян, Давтян 1997, 73.
[2] Мандельштам 1990, 183. (электр. версия: https://rvb.ru/20vek/mandelstam/dvuhtomnik/01text/vol_1/01versus/0188.htm [дата обращения: 13.04. 2021])

одного человека. Лишь внизу - на базарной площади - копошилась кучка народу, но среди них ни одного армянина, только мусульмане.

У Осипа Мандельштама создалось впечатление, будто мусульмане на рынке - это остатки тех убийц, которые с десяток лет назад разгромили город, только впрок им это не пошло: восточная нищета, чудовищные отрепья, гнойные болячки на лицах.

Торговали горстями кукурузной муки, початками, лепешками…

Они не решились купить лепешек из этих рук, хотя есть хотелось… Осип Мандельштам писал, что в Шуше то же, что у нас, только здесь нагляднее и поэтому невозможно съесть ни куска хлеба… И воды не выпьешь из этих колодцев…

В городе не было не только гостиницы, но даже комнаты для приезжающих по имени «общо», где спят вместе мужчины и женщины. Автобус на Гянджу уходил наутро. Люди на базаре предлагали им переночевать у них, но Надежда боялась восточных болячек, а Мандельштам не мог отделаться от мысли, что перед ним погромщики и убийцы.

«Решили ехать в Степанакерт, областной город. Добраться туда можно было только на извозчике. Вот и попался безносый извозчик, единственный на стоянке, с кожаной нашлепкой, закрывавшей нос и часть лица. Им не верилось, что он действительно довезет до Степанакерта…»

На высоком перевале
В мусульманской стороне
Мы со смертью пировали-
Было страшно, как во сне.[1]

Поэту было страшно, так как в «Нагорном Карабахе, в хищном городе Шуше» он увидел следы массовых убийств армян, разрушений, погромов:

Сорок тысяч мертвых окон
Там видны со всех сторон.

Осип Мандельштам никак иначе не мог назвать этот город, как хищным. Шуши в стихотворении Мандельштама – мертвый город, а в тюрках, оставшихся в Карабахе, поэт видел наследников убийц и не мог отделаться от мысли, что перед ним погромщик.

Три основных образа стиха - смерть, страх, сон. Как правильно отметил Т. Хзмалян: «Интонации стиха зыбки, и он как бы балансирует между сном и явью, сном и страхом, сном и смертью.»[2] Поэт ассоциирует погромщиков Шуши с фаэтонщиком.

Нам попался фаэтонщик,
Пропеченный, как изюм,
Словно дьявола погонщик,
Однасложен и угрюм.

---

[1] Мандельштам 1990, 183(электр. версия: https://rvb.ru/20vek/mandelstam/dvuhtomnik/01text/vol_1/01versus/0188.htm [дата обращения: 13.04. 2021]).
[2] Хзмалян 1991, 91.

«Фаэтонщик» становится для Мандельштама преступным образом, который олицетворяет варварскую сущность извозчика. И в этом тоже поэт не ошибается, так как фаэтонщик является классическим наследником сожженных в Шуше предков, которые, как клеймо, отражаются на его лице.

Я очнулся: стой, приятель!
Я припомнил - черт возьми!
Это чумный председатель
Заблудился с лошадьми[1].

Задумываясь над этими словами, Игорь Чиннов писал: «Что именно называет Мандельштам чумой? И кто такой фаэтонщик - тот, кто правит, кто держит в руках "вожжи", "бразды правления", кто направляет ход коней: Мандельштам называет его "чумный председатель"... Этот председатель правит "безносой канителью". Что же это за "безносая канитель", что значит "пошли толчки, разгоны" и что значит "чума"?»[2].

Армянам хорошо известно, что такое «чума». Об этом узнал и Мандельштам, увидев разграбленный город. После 23 марта 1920 года на территории Армении турками были уничтожены еще тысячи армян.

Свыше семи десятилетий Шуши оставался в плену у коварного врага, и лишь майское солнце 1992 года подарило древнему армянскому престольному городу новую жизнь и новое дыхание. По-новому наступали весны для Шуши, по-новому восходили зори возрождающегося города, возвещающие о торжестве созидательного гения человека над злом.

Так прошло 30 лет. Но 27 сентября 2020 года вследствие террористической войны древний армянский город Шуши, считавшийся «Кавказским Парижем», снова оккупирован азербайджано-турецкими захватчиками. Они безвозбранно оскверняют армянские памятники и церкви - это продолжение геноцидальной политики Азербайджана, выявившейся более ста лет назад. Ввиду агрессии противника десятки тысяч людей остались без крова, без нажитого годами имущества. Тысячи погибших и без вести пропавших, сотни пленных... **Все это неоспоримое доказательство кровожадности** врага. Геноцид армянского народонаселения Арцаха, продолжавшийся более века, по сей день остается безнаказанным. Нюрнберг военных террористов положил бы конец преступлениям Азербайджана и Турции.

ЛИТЕРАТУРА

1. Мандельштам О., 1990, Сочинения в 2-х т., т. 1, Москва, Художественная литература, 638 с. (электр. версия: https://rvb.ru/20vek/mandelstam/dvuhtomnik/01text/vol_1/01versus/0188.htm [дата обращения: 13.04. 2021]).

[1] Мандельштам 1990, 183 (электр. версия: https://rvb.ru/20vek/mandelstam/dvuhtomnik/01text/vol_1/01versus/0188.htm [дата обращения: 13.04. 2021]).
[2] Хзмалян 1991, 90.

2. Мкртчян Ш., Давтян Щ., 1997, Город трагической судьбы, Ереван, Амарас, 56 с.
3. Орджоникидзе С., 1945, Избранные статьи и речи: 1918-1937, Москва, с. 422.
4. Хзмалян Т., 1991, «Фаэтонщик» - стихотворение О. Мандельштама о Нагорном Карабахе. Вестник Ереванского Университета, № 1, с. 89-92. https://regnum.ru/news/polit/2894200.html (Дата обращения: 10 апреля 2021 г.)
5. Шагинян М., 1927, Нагорный Карабах, Москва-Ленинград, Государственное издательство, 42 с.

Резюме

ТЕМА ШУШИНСКОЙ РЕЗНИ В РУССКОЙ ЛИТЕРАТУРЕ

Юлия Арутюнян

Многолетние поиски показали, что в отличие от темы Геноцида армян, которая достаточно широко представлена в русской литературе, резня армян в Шуши еще не удостоилась художественного осмысления.

Знаменитая русская писательница Мариэтта Шагинян имеет ценные воспоминания, изложенные довольно образными и художественными мотивами.

Непревзойденным остается стихотворение выдающегося русского поэта XX века Осипа Мандельштама «Фаэтонщик». Мрачные впечатления и тяжелые чувства получили свое воплощение в строках, отражающих зеркало души автора.

Осип Мандельштам никак по-другому не мог назвать этот город, как хищным. Шуши в стихотворении Мандельштама – мертвый город, а в тюрках, оставшихся в Арцахе, поэт видел наследников убийц, не мог отделаться от мысли, что перед ним погромщики.

Интересные образы художественного отражения трагических последствий резни армянского населения города Шуши можно найти в дневниковых записях жены поэта Надежды Мандельштам.

Свыше семи десятилетий Шуши оставался в плену у коварного врага, и лишь майское солнце 1992 года подарило древнему армянскому престольному городу новую жизнь и новое дыхание. По-новому наступали весны для Шуши, по-новому восходили зори возрождающегося города, возвещающие о торжестве созидательного гения человека над злом.

Так прошло 30 лет. Но 27 сентября 2020 года вследствие террористической войны древний армянский город Шуши, считавшийся «Кавказским Парижем», снова оккупирован азербайджано-турецкими захватчиками. Они безвозбранно оскверняют армянские памятники и церкви - это продолжение геноцидальной политики Азербайджана. Ввиду агрессии противника десятки тысяч людей остались без крова, без нажитого годами имущества. Тысячи погибших и без вести пропавших, сотни пленных… Все это является доказательством кровожадности врага. Геноцид армянского народонаселения Арцаха, продолжавшийся более века, остается безнаказанным по сей день. Нюрнберг военных террористов положил бы конец преступлениям Азербайджана и Турции.

Ключевые слова: *Осип Мандельштам, Мариэтта Шагинян, Нагорный Карабах, Шуши, фаэтонщик, трагическая судьба, погромы, жертвы, резня, геноцид, страхи, чума.*

Ամփոփում

ՇՈՒՇԻԻ ԿՈՏՈՐԱԾԻ ԹԵՄԱՆ ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Յուլիա Հարությունյան

Բազմամյա փնտրտուքը ցույց է տվել, որ ի տարբերություն Հայոց ցեղասպանության թեմայի, որը բավական լայնորեն ներկայացված է ռուս գրականության մեջ, Շուշիում հայերի կոտորածը դեռևս չի արժանացել գեղարվեստական վերաիմաստավորման:

Նշանավոր ռուս գրող Մարիետտա Շահինյանն ունի արժեքավոր հուշեր, որոնք շարադրված են բավական ազդեցիկ ու գեղարվեստական մոտիվներով:

Անգերազանցելի է մնում XX դարի ականավոր ռուս գրողներից մեկի՝ Օսիպ Մանդելշտամի «Կառապանը» բանաստեղծությունը: Նրա մռայլ տպավորությունները և ծանր ապրումները իրենց մարմնացումն են ստացել բանաստեղծական տողերում, որոնք արտացոլում էին դրանց հեղինակի հոգու հայելին:

Օսիպ Մանդելշտամը բոլորովին այլ կերպ, քան գիշատիչ, չէր կարողացել անվանել այդ քաղաքը: Շուշին Մանդելշտամի բանաստեղծության մեջ մեռած քաղաք էր, իսկ ի դեմս Արցախում մնացած թուրքերի բանաստեղծը տեսնում էր մարդասպանների ժառանգների, ուստի չէր կարողանում ազատվել այն մտքից, որ իր առջև ջարդարար է:

Շուշի քաղաքի հայ բնակչության կոտորածի ողբերգական հետևանքների գեղարվեստական արտացոլման հետաքրքիր պատկերներ կարելի է գտնել բանաստեղծին ուղեկցող կնոջ՝ Նադեժդա Մանդելշտամի օրագրություններում:

Ավելի քան յոթ տասնամյակ Շուշին մնաց նենգ թշնամու գերության մեջ, և միայն 1992-ի մայիսյան արևը նոր կյանք և նոր շունչ հաղորդեց հայոց հին գահանիստ քաղաքին: Գարունները Շուշիի համար նորովի եկան, վերակառուցող և վերակենդանացող քաղաքի արշալույսները նորովի բացվեցին, և նրանք հայտարարեցին չարի նկատմամբ մարդու ստեղծագործ հանճարի հաղթանակի մասին:

Այսպիսով՝ անցավ 30 տարի: Բայց 2020-ի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ագրեսիվ և ահաբեկչական պատերազմից հետո «Կովկասյան Փարիզ» համարվող հին հայկական Շուշին կրկին գրավվեց ադրբեջանցի և թուրք զավթիչների կողմից: Ադրբեջանցիները անպատիժ պղծում են հայկական հուշարձաններն ու եկեղեցիները. սա Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության շարունակությունն է, որը ի հայտ է եկել ավելի քան 100 տարի առաջ: Հազարավոր զոհվածներ, տասնյակ անհայտ կորածներ, հարյուրավոր ռազմագերիներ: Այս ամենը ապացույցն է այն բանի, թե որքան արյունարբու է թշնամին: Արցախի հայ բնակչության ցեղասպանությունը, որը շարունակվում է ավելի քան հարյուր տարի, մնում է անպատիժ: Ադրբեջանցի և թուրք ռազմական հանցագործների և ահաբեկիչների Նյուրնբերգը վերջապես վերջ կդնի Ադրբեջանի և Թուրքիայի ռազմական հանցագործությունների շարքին:

Հիմնաբառեր. *Օսիպ Մանդելշտամ, Մարիետտա Շահինյան, Լեռնային Ղարաբաղ, Շուշի, կառապան, ողբերգական ճակատագիր, ջարդեր, զոհեր, կոտորած, ցեղասպանություն, սարսափներ, ժանտախտ:*

Abstract

THE TOPIC OF SHUSHI MASSACRE IN RUSSIAN LITERATURE

Yulia Harutyunyan

Many years of research have shown that, unlike the topic of the Armenian Genocide, which is widely represented in Russian literature, the massacre of Armenians in Shushi has not yet deserved an artistic reinterpretation. Famous Russian writer Marietta Shahinyan has valuable memories, which are composed with quite influential and artistic motives. The poem "The Phaetonist" by one of the outstanding Russian writers of the 20th century, Osip Mandelstam, remains unsurpassed. His gloomy impressions and hard feelings received their embodiment in poetic lines, which reflected the mirror of the author's soul. Osip Mandelstam could not call the city in any other way than a «predator». Shushi was a dead city in Mandelstam's poem, and among the Turks who remained in Artsakh, the poet saw the heirs of murderers, so he could not get rid of the thought that a there was a massacre in front of him. Interesting images of the artistic reflection of tragic consequences of the massacre of Armenian population in the city of Shushi can be found in the diary entries of the poet's wife, Nadezhda Mandelstam.

For over seven decades Shushi remained in the captivity of insidious enemy, and only the May sun in 1992 gave the ancient Armenian throne city a new life and a new breath. Spring came anew for Shushi, the dawn of a rebuilding and reviving city reopened, and they proclaimed about the victory of man's creative genius over evil.

So, 30 years passed. But on September 27, 2020, after an aggressive and terrorist war, the ancient Armenian city of Shushi, which was considered to be the "Caucasian Paris", was again occupied by the Azerbaijani and Turkish invaders. Azerbaijanis profane Armenian monuments and churches with impunity - this is a continuation of the genocidal policy of Azerbaijan, which emerged more than 100 years ago. As a result of the aggression, thousands of people were left homeless, without property that they acquired over the years. Thousands of dead, dozens of missing, hundreds of prisoners of war. All this comes to prove how bloodthirsty the enemy is. The genocide of the Armenian population of Artsakh, which has been going on for more than a hundred years, remains unpunished.

Nuremberg of Azerbaijani and Turkish war criminals and terrorists will finally put an end to the series of war crimes of Azerbaijan and Turkey.

Keywords: *Osip Mandelstam, Marietta Shahinyan, Nagorno Karabakh, Shushi, phaetonist, tragic fate, massacre, victims, genocide, fears, plague.*

ԹԵՀՄԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄԱՐՈՒԹՅԱՆ
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Գորիսի պետական համալսարանի պրոռեկտոր,
ք. Գորիս, Հայաստանի Հանրապետություն
tmarutyan@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 10.04.2021, գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 20.04.2021

ՇՈՒՇԻԻ ՀԱՅԵՐԻ 1920 Թ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ «ՄՇԱԿ» ԹԵՐԹՈՒՄ

Շուշիի հայ ազգաբնակչության 1920 թ. ջարդերի վերաբերյալ բազմաքանակ վավերագրերի շարքում մեծ նշանակություն ունեն այդ ժամանակաշրջանում հրատարակված հայ և օտարերկրյա պարբերական մամուլի նյութերը:

XX դարասկզբին արևելահայ իրականության մեջ առավել ազդեցիկ պարբերականներից էր «Մշակ»-ը, որ, հիմնադրվելով 1872-ին Թիֆլիսում, ժամանակի ամենահայտնի մտավորականներից մեկի՝ Գրիգոր Արծրունու կողմից, գործեց մինչև 1921թ.՝ ընդհուպ մինչև Վրաստանի խորհրդայնացման առաջին օրը՝ փետրվարի 25-ը՝ ուրույն հետագիծ թողնելով հայ պարբերական մամուլի պատմության մեջ: Ուսումնասիրողները լրագրի անցած ճանապարհը բաժանում են երեք փուլի՝ 1. 1872-1883 թթ., 2. 1884-1892 թթ., 3. 1893-1921 թթ.: Երրորդ փուլը «Մշակ»-ն անցնում է առանց հիմնադիր խմբագրի: 1892 թ. դեկտեմբերի 19-ին Արծրունին կնքում է մահկանացուն՝ լրագրի հրապարակման գործը թողնելով կնոջը՝ Մարիամ Մելիք-Աղամալյան Արծրունուն, և եղբորը՝ Անդրեասին: Արծրունու մահից հետո մոտ երեք տասնամյակ «Մշակ»-ը խմբագրեցին Ալեքսանդր Քալանթարը (1895-1913 թթ.), Համբարձում Առաքելյանը (1913-1918 թթ.), Տիգրան Հախումյանը (1918-1919 թթ.), Լևոն Քալանթարը և Լեոն (Առաքել Բաբախանյան, 1920-1921 թթ.): Նրանցից յուրաքանչյուրն իր գաղափարական կնիքն է թողել «Մշակ»-ի գործունեության վրա:

1918-1920-ական թվականներին «Մշակ»-ն աչքի է ընկնում համազգային մտահոգություններով, հայության պատմաքաղաքական դրության և դրա բազմակողմ զարգացումների լայնախոհ քննարկումներով: Թերթի էջերում, առավել քան արևելահայ որևէ պարբերականում, լայնորեն լուսաբանվել են XX դարասկզբի իրադարձությունները (Առաջին աշխարհամարտը, Թուրքիայի հայահալած

քաղաքականությունը, Արևմտյան Հայաստանի հայաթափումը, Եղեռնը, հայերի նկատմամբ մեծ տերությունների քաղաքականությունը, Արևելյան Հայաստանում տեղի ունեցող պատմաքաղաքական իրադարձությունները և այլն): Լրագիրը մշտապես ուշադրության կենտրոնում է պահել Արցախի պատմական ճակատագիրը՝ անդրադառնալով XX դարասկզբին Արցախում ու Սյունիքում տեղի ունեցող դրամատիկ իրադարձություններին, այդ թվում՝ Շուշիի 1920 թ. եղեռնագործությանը: Թերթի հաղորդած տեղեկություններն ունեն սկզբնաղբյուրային նշանակություն ու ճանաչողական արժեք՝ Արցախի պատմության այդ ծանրագույն շրջանի ուսումնասիրության համար:

Թերթը, թեև ոչ կանոնավոր, 1918-1919-ից արդեն անդրադառնում է նորաթուխ Ադրբեջանի մուսավաթական կառավարության՝ պատմական Հայաստանի մի շարք տարածքները, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղը բռնազավթելու հավակնություններին, որոնց բացահայտ կերպով օգնում էին Օսմանյան Թուրքիան, որոշ ժամանակ անց՝ Անգլիան, իսկ ավելի ուշ՝ Խորհրդային Ռուսաստանը: «Ահա ձեզ Ղարաբաղի հարցը, որին կամենում է տիրանալ Ադրբեյջանը և այդ ձգտումը չի խեղդվում դաշնակիցների կողմից: Ընդհակառակը, մեզ հասած տեղեկություններին նայած, Ադրբեջանը համառում է շնորհիվ այն բարյացակամության, որ ցույց է տալիս դեպի նրա նվաճողական ձգտումները Բագուի անգլիական հրամանատարությունը: Ինչո՞ւ է անգիտացվում մեր իրավունքը Ղարաբաղի նկատմամբ: Նրա համար, որ այժմ մենք թույլ ենք: Մենք սպառեցինք մեր ույժերը Ռուսաստանի համար, որը հեղափոխությունից առաջ տմարդի ու խարդախ էր հայության նկատմամբ, իսկ հեղափոխությունից հետո՝ շատ խոստացող, բայց թույլ և ապիկար: Եվ այժմ հնձում ենք մեր սխալ քաղաքականության պտուղները: Հայաստանի կառավարությունը թող չընկրկի անիրավության հանդեպ: Կա դեռևս դիմադրության կորով հայ ժողովրդի մեջ: Ղարաբաղի հարցում մենք զիջող չենք կարող լինել: Միմիայն բռնությունը կարող է կաշկանդել մեր ձեռքերը և փակել մեր բերանը»,- գրում է «Մշակ»-ը 1919 թվականի մարտի 11-ի համարում[1]:

Այդ շրջանում թերթը «Վերջին տեղեկություն» խորագրի ներքո պարբերաբար ընթերցողին տեղեկացնում է Արցախում տիրող խառնակ իրադրության մասին՝ անդրադառնալով Ադրբեջանի կառավարության 1919 թ. հունվարի 15-ի տխրահռչակ որոշումով Արցախ-Զանգեզուրի գեներալ-նահանգապետ նշանակված հայատյաց Խոսրով բեկ Սուլթանովի դիվանագիտական ճնշումներին, սպառնալիքներին, խաղաղ բնակչության վրա զինված ուժ գործադրելու՝ պարբերաբար կրկնվող դեպքերին, որոնց նպատակը արցախահայությունից Ադրբեջանին հպատակվելու համաձայնություն կորզելն էր: «Ադրբեջանական զորքերը, թուրք ասկերները և տեղական հրոսակախմբերը թվով մի քանի հազար մարդ, թուրք օֆիցերների առաջնորդությամբ գրավելով Զաբուղի կիրճը, ձեռնարկել են արշավանքի Ջեբրայիլի (Կարեագինի) գավառի հայկական գյուղերի վրա», - հաղորդում է թերթը 1919 թ. հունվարի 28-ի համարում: Ականատեսների վկայությունների հիմքով մանրամասներ են հաղորդվում Ասկերանի գյուղերում ադրբեջանական զորքերի ոչնչացրած ջրաղացների, հացի մթերքների հափշտակության,

[1] Մշակ 1919, թիվ 54:

հայ ազգաբնակչությանը ալյուրն աղալու հնարավորությունից զրկելու և այլ ոտնձգությունների մասին, որոնց հետևել էր Ջեբրայիլի հայ ազգաբնակչությանն ուղղված «հնազանդվելու և զենքները հանձնելու» վերջնագիրը: 1919 թվականի փետրվարի 15-ի համարում անդրադառնալով Խոսրով բեկ Սուլթանովին Ղարաբաղի գերենալ-նահանգապետ նշանակելու ցավալի փաստին՝ դրանից բխող դառնաղի հետևանքներով՝ «Մշակ»-ը մեջբերում է «Ադրբեջան» թերթում նրա մի հրապարակումը, որում «ռուս վարձկան գրչակը» փորձում է ապացուցել, որ «հայերի թիվը այդ երկրում անհամեմատ պակաս է թուրքերից, որ հայերը բնիկներ չեն, այլ գաղթած Պարսկաստանից ու Թուրքիայից, որ մելիքները ծագում են առել Չինգիզ խանից» և այլն: «Սակայն բառերն ու պատրանքները կորչում են, փաստերը մնում», -հակադարձում է «Մշակ»-ի թղթակիցը, - այդ կուռ փաստը Ղարաբաղի համառ հայ գեղջուկն է, որ մերժել է Ադրբեջանը և պիտի անսասան մնա իր որոշման մեջ: Պատմական կեղծիքներն անույժ են այս կուռ փաստի առաջ»[1]: «Ղարաբաղի ընդհանուր նահանգապետ Սուլթանովը սկսել է գործել: Թվով 2000 մարդ Խանքեդիի շուրջը փորում են խրամատներ և կառուցանում են ամրություններ: Հայերը այդ համարում են նշան թուրքերի ապագայ յարձակողական գործողությունների Ղարաբաղի դեմ»[2], - կարդում ենք «Մշակ»-ի 1919 թվականի մարտի 29-ի մեկ այլ հրապարակման մեջ:

Արցախում XX դարասկզբին տիրող իրավիճակի շուրջ լրագրի 1919 թվականի օրախնդիր հրապարակումներից ուշարժան են հատկապես «Ինչու է Ադրբեջանը աչք տնկել Ղարաբաղի վրա» խորագրով վերլուծականները[3], «Հայկական Ղարաբաղը»[4], «Ղարաբաղ»[5], «Շուշում»[6], «Կյանքը Շուշում»[7], «Լուրեր Շուշուց»[8], «Բռնության դեմ»[9], «Ղարաբաղի դրության մասին»[10] վերլուծականներն ու հաղորդագրությունները:

«Մշակ»-ը պարբերաբար հրապարակում է նաև Շուշիից ստացվող «Նոր կյանք» շաբաթաթերթի նյութերը: Թեմայի ուսումնասիրության ծիրում հատկապես հետաքրքրական են «Ղարաբաղ. ուղևորի դիտողությունները» շարքը, որը ստորագրել է թերթի թղթակից Դ. Անանունը՝ Թիֆլիսից Արցախ իր ուղևորության տպավորությունների փոխանցմամբ՝ որպես ականատեսի վկայություններ, որոնք հատկանշվում են ինքնատիպ դիտարկումներով և ունեն ճանաչողական զգալի արժեք: Թերթում տեղեկություններ կան նաև Արցախի հայության 2-րդ և 3-րդ համագումարների անցակցման և «տիրողի լեզու բանեցնող» թուրքերին զսպելու մի քանի կարևոր որոշումների մասին: «Ժողովներում» խորագրի ներքո մանրամասներ են հաղորդվում նաև այդ ծանր շրջանում Ղարաբաղի հայրենակցական միության ժողովների մասին՝ օրեցօր բարդացող իրավիճակի

[1] Մշակ 1919, թիվ 36:
[2] Մշակ 1919, թիվ 69:
[3] Մշակ 1919, թիվ 47:
[4] Մշակ 1919, թիվ 51:
[5] Մշակ 1919, թիվ 54:
[6] Մշակ 1919, թիվ 56:
[7] Մշակ 1919, թիվ 59:
[8] Մշակ 1919, թիվ 61:
[9] Մշակ 1919, թիվ 60:
[10] Մշակ 1919, թիվ 62:

շուրջ «Ղարաբաղի գործիչների մտքերի փոխանակության» և որոշումների քաղաքերումներով:

1920 թ. սկզբներին Արցախում իրավիճակը սրվում է: Սուլթանովը Արցախի Հայոց Ազգային խորհրդից պահանջում է վերջնականապես ենթարկվել մուսավաթական Ադրբեջանին: Միաժամանակ նա հրամայում է մուսավաթական բանակը տեղաշարժել ու կենտրոնացնել ռազմական նշանակություն ունեցող կետերում՝ Սյունիք ներխուժելու միտումով: «Մշակ»-ը տագնապով հետևում էր իրադարձությունների զարգացմանը Սյունիքում ու Արցախում և 1920 թվականի փետրվարի 10-ի համարում գրում է. «Մահմեդականների սարքած գազանային կոտորածները Ագուլիսում Ղարաբաղի հայության մեջ թողել են շատ ճնշիչ գրգռուած տրամադրություն: Շրջանի մի քանի տներում սկսվել են յուզմունքներ: Դրությունը հղի է վերջին աստիճանի բարդ հետևանքներով: Գլուխ է բարձրացնում յուզված ժողովրդի մեջ ավազակաբարոյ տարրին շրջանից ընդմիշտ արտաքսելու տրամադրություն: Յամենայն դեպս Ղարաբաղի խնդիրը մոտ է իր լուծման»[1]:

Ստեղծված իրավիճակը քննարկելու համար 1920 թ. փետրվարի 28-ից մինչև մարտի 5-ը Շոշ գյուղում հրավիրվում է արցախահայության ութերորդ համագումարը, որը մերժում է Սուլթանովի պահանջը և հավաստում, որ օգոստոսի 22-ի համաձայնագիրը Ադրբեջանի կողմից պարբերաբար խախտման հետևանքով կորցրել է իր ուժը: «Մշակ»-ը, ձեռքը պահելով իրադարձությունների զարկերակին, հաղորդում է, որ «Հայաստանի արտաքին գործերի մինիստր Խատիսյանը հեռագրով բողոքել է Ադրբեջանի կառավարության այդ տմարդի գործողությունների դեմ, որոնք չեն համապատասխանում անցեալ տարվա նոյեմբերի 23-ին երկու պետությունների միջև կապուած համաձայնության, որի համաձայն տերիտորիալ հարցերը վճռվելու են խաղաղ ճանապարհով»[2]: Որևէ զսպող միջոց չէր կարող կանխել Ադրբեջանի կողմից վաղօրոք կանխամտածված հայասպան ծրագրերը: «Մշակ»-ը միանգամայն իրավացի էր Ղարաբաղի իրավիճակը նկարագրելու հարցում՝ դրա նկատմամբ Ադրբեջանի քաղաքականությունը որակելով իբրև իմպերիալիստական, որ իրականացվում էր Անգլիայի ու Թուրքիայի օգնությամբ: 1920 թվականի փետրվարի 29-ին թերթը «Ղարաբաղը նոր աղէտի առջեւ» խորագրով փոխանցում է Հայաստանի կառավարության պաշտոնական հաղորդագրությունը, ըստ որի՝ Նուրի փաշան գնացել է Շուշի՝ Արցախն ու Զանգեզուրը սրով նվաճելու համար: Հոդվածագիրը ցավով հիշեցնում է, թե ով է Կովկասում հայտնի Նուրի փաշան. «Բագուի մեջ 30000 հայ կոտորողը, ապա Անգլիացիների ձեռքով Բաթումում կալանավորված իբրև ոճրագործ, ապա Անգլիացիների աչքի առջև բանտից փախած մի Ժեոն-Թիւրք, Էնվեր փաշայի եղբայրը և այլն, և այլն: … Մինչև Բագուն վերցնելը նա մի կոչ ուղղեց Ղարաբաղի հայերին, հպատակության հրավիրեց, յանձնարարելով, հակառակ դէպքում, յիշել Ադանան, այսինքն՝ 30000 հայերի ջարդը»: «Մշակ»-ի խմբագրության համար այլևս անկասկած է դառնում, որ Ղարաբաղը մի նոր աղետի առջև է կանգնած, որը լինելու է պատմության դառը փորձին առերեսվելու ևս մեկ իրողություն. «Աղետ է սպառնում նրա քաջարի

[1] Մշակ 1920, թիվ 1:
[2] Մշակ 1920, թիվ 3:

ժողովրդին, որ ունի իր գեղեցիկ պատմությունը, որ տարիների ընթացքում միակն է եղել, որ պահպանել է ազատության և անկախության գաղափարը հայութեան մեջ, բայց որ անցյալ տարի տրագիքական դրության մեջ ընկավ ոչ թե այն պատճառով, որ թուլացել էր և անարի դարձել, այլ որովհետև այդպես կամեցան Բագվում նստած անգլիական գեներալները: Բացի դրանից, օրհասական վտանգի միջոցին հրապարակ իջավ Ղարաբաղի պատմական դժբախտությունը»[1],-գրում է թերթը՝ հիշեցնելով, որ Ղարաբաղը, դժբախտաբար, ոչ միայն Մելիք Հաթումի, Մելիք Մեժլումի, Մելիք Յովսեփի և այլ ազնվագույն մարդկանց հայրենիքն է, այլ նաև Մելիք Շահնազարի, որի շառավիղները կան ու գործում են անգամ այդ չարաղետ ժամանակներում: Հոդվածագիրը մեղադրում է նաև Հայաստանի կառավարությանը, որ ապիկար գտնվեց իր ժողովրդի ու երկրի առաջնակարգ շահերը պաշտպանելու մեջ: «Սա այնպիսի աղետ է, որի առջև պիտի նսեմանան բոլոր նախընթաց սարսափները: Պիտի վերանայ այնուհետև դրացիության ամեն մի հասկացողություն, և մշտնջենական անեծքը պիտի ծանրանա Կովկասի բոլոր ազգերի վրա»: Քանի ուշ չէ, պետք է փրկել սկզբունքները, գաղափարը, հավատն ու վստահությունը, հորդորում է թերթը, պետք է փրկել Ղարաբաղը: Պետք է նկատել, որ ադրբեջանցիների ու թուրքերի ճնշման պայմաններում Ղարաբաղի առանձնահատուկ վիճակի գնահատման հարցում «Մշակ»-ը պաշտպանում էր Հայաստանի հանրապետության կառավարությանը, հորդորում նրան հիմնավորել Ղարաբաղի չեզոքությունը: Հետաքրիր է նաև, որ Հայաստանի կառավարության և Անդրանիկի հակադրությունների պարագայում «Մշակ»-ը պաշտպանում էր Անդրանիկին, բայց և քննադատեց նրա համակերպումը անգլիացիների ցանկությանը՝ Արցախ արշավելուց ձեռնպահ մնալու հարցում:

1920 թվականի մարտի սկզբից սկսած՝ «Մշակ»-ի էջերը ողողվում են Արցախում տեղի ունեցող ահազդեցիկ իրադարձությունների մասին հաղորդագրություններով: Մարտի 7-ին թերթը, ծանուցելով արցախահայերի օրհասական դրության մասին, նկարագրում է Ղայբալիշեն գյուղի կոտորածը: «Ղարաբաղի մարդակեր նահանգապետը դեն է դրել իր դիմակը և ձեռնարկել է Ղարաբաղի նվաճման: Նորերս նա Բագուի վոկզալում խրոխտանքով ասել է իր հայ բարեկամներին, թե մինչև որ ամբողջ Ղարաբաղը չչոքեցնե իր առջև, չպիտի հանգստանայ: Սուլթանովը, այո՛, հայ բարեկամներ էլ ունի, ինչու ծածկել մեր ամոթը,- ցավով արձանագրում է «Մշակ»-ի թղթակիցը, - դրանց մեջ կա մեկը, որ անորակելի դավաճան Մելիք-Շահնազարի սերունդից է և պաշտոնեայ է Սուլթանովի մոտ: Իր նման մի քանիսների հետ նա թուղթ է շինել, իբր թե Ղարաբաղի հայութեան անունից, որով պահանջում է, որ Հայոց կառավարությունը չմիջամտէ Ղարաբաղի գործերին: Կրկնվում է Հայ մելիքությունների պատմությունը ամենայն ճշտությամբ»[2],- դառնորեն եզրակացնում է «Մշակ»-ի թղթակիցը:

Գրեթե անսխալ ու դիպուկ ներկայացվում են այն նպատակները, որոնք իր առջև դրել էր Ադրբեջանի կառավարությունը՝ ունենալով համապատասխան փորձառություն և օգտվելով իր համար նպաստավոր պայմաններից ու անպատ-

[1] Մշակ 1920, թիվ 4:
[2] Մշակ 1920, մարտի 7:

ժելիության մթնոլորտից: «Թուրքերը, ոտնատակ տալով իրանց ստորագրած պայմանները, զորքեր են կենտրոնացնում Ղարաբաղում՝ հայկական մասերը գրավելու համար,- գրում է թերթը 1920 թվականի մարտի 7-ի համարում: - Ամենից նշանավորը իր ռազմագիտական դրությամբ հանդիսանում է Ջրաբերդի գաւառը, և այդտեղից էլ թուրքերը պիտի սկսեն նվաճումը՝ ոչնչացնելով այդտեղի հայությանը: .... Միաժամանակ Ադրբեջանի կառավարությունը միլիոններ է բաց թողել Ղարաբաղի հայութեանը զինաթափ անելու համար: Հայերին խաբում են և նրանց զենքերը գնում թանկ գնով»[1]: Մարտի սկզբին «Մշակ»-ը հաղորդում է, որ «Շուշիի հայկական մասը ենթարկուած է բլոկադայի, և հաղորդակցությունը դժվարացել է»: Մարտի 21-ի համարում «Վերջին ժամ» հատկանշական խորագրով թերթը հրապարակում է Շուշիից ուղարկված մասնավոր մի նամակ՝ հետևյալ բովանդակությամբ. «Շատ սարսափելի և ծանր դեպքեր են գալիս մեր գլուխը: Ոչ մի ապահովություն թե կեանքի և թէ գոյքի: Օր չէ լինում, որ քաղաքից դուրս, 5-10 ճամբորդ հայերի դիակ չընդունուին այստեղ ու այնտեղ ընկած: Վերջին երկու ամսուայ ընթացքում քանի-քանի հայ ընտանիքներ մնացին որբ ու անտիրական: Դիմումներն ու գանգատները խորամանկ Սուլթանովի կողմից մնում են անհետևանք: Տաճկական հայակեր եաթաղանը ամեն մի րոպե կանգնած է մեր աչքերի առաջ: Մտնում ենք անկողին՝ յոյս չունենալով, թէ հետևեալ առաւոտը կենդանի կըմնանք թէ ոչ: Չենք իմանում մեր այս կրիտիքական դրութեան մասին սկի այդտեղ մտածող, հոգ տանող կա՞յ, թէ չէ»[2]: «Մշակ»-ը հրապարակում է նաև թիֆլիսաբնակ ու երևանաբնակ ղարաբաղցի հայերի միությունների նախագահներ Լեոի և Գ.Բալայանի հուշագիրը՝ ուղղված դաշնակից պետությունների կովկասյան ներկայացուցիչներին ու Վրաստանի կառավարությանը, որում հիշեցնում է 1919 թվականի օգոստոսյան համաձայնագրի մասին, ըստ որի՝ «Ղարաբաղը ճանաչեց պ. նահանգապետի ժամանակավոր իշխանությունը, իսկ ադրբեջանյան կառավարությունը երաշխավորեց հայերին ժողովրդի կուլտուրական ու ֆիզիկական կյանքը, ինչպես նաև քաղաքական իրավունքները ապահովող սահմանադրություն», որը, սակայն, կոպիտ կերպով խախտվեց: Հուշագրում մեջբերվում են բոլոր այն կետերը, որոնք այդ ամբողջ ընթացքում խախտվել են ադրբեջանական կառավարության կողմից՝ ողբերգական հետևանքներով հանգեցնելով ներկայի՝ «խստորեն վատթարացած դրությանը»: «Ադրբեջանը պահանջում է Ղարաբաղից անպայման ճանաչել իր իշխանությունը, զինաթափ անել ազգաբնակչությանը և զորամասեր մտցնել հայկական գյուղերը: Այդ նպատակով Խալիլ-փաշան և Սուլթանովը նորից դիմում են ջարդերի ու ահաբեկման քաղաքականության՝ յուսալով ուժասպառ անելով ու երկիւղ ներշնչելով հասնել իրանց նպատակին»[3]:

Ադրբեջանական բանակին պատրաստվում էին դիմադրել Արցախի ինքնապաշտպանական շրջանները՝ Վարանդան, Խաչենը, Ջրաբերդն ու Դիզակը: Բայց թուրք-ադրբեջանական յաթաղանի սպառնալիքի դիմաց Շուշին մնացել էր անպաշտպան, որտեղ հայության դրությունը անտանելի էր: Բոլոր քայլերը վկայում

[1] Մշակ 1920, մարտի 7:
[2] Մշակ 1920, մարտի 7:
[3] Մշակ 1920, թիվ 9:

էին, որ Շուշիի հարաբերական խաղաղությունն ապրում է իր վերջին ժամերը: 1920 թվականի ապիլի 4-ի համարում արդեն «Մշակ»-ն արձագանքում է Շուշիի մարտի 22-ի զարհուրելի կոտորածին և հետագա դեպքերին. «Խեղճ Շուշի... Դժբախտ իր խաղաղասիրութեամբ, դժբախտ՝ որ մի կտոր կեանք վայելելու համար պատրաստ էր խնդրել ամենքին, նույնիսկ և Սուլթանովին: Այսօր նա վերածուած է մի հսկայական սպանդանոցի: Այսօր նա մի լուռ գերեզմանատուն է, ուր բորենիներն են խնդում դիակների հոտից»[1]: Ներկայացվում են այն քայլերը, որոնք ստեղծված իրավիճակում ձեռնարկեց Հայաստանի կառավարությունը՝ հույս ունենալով, որ «Ադրբեջանի կառավարությունը կդադարեցնի արշավանքը և վիճելի հարցերը կլուծի Հայաստանի կառավարության հետ ոչ զենքի ուժով»: «Մշակ»-ը լայնորեն լուսաբանում է Հայաստանի Արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանի պաշտոնագիրը՝ ուղղված դաշնակից մեծ պետությունների կովկասյան ներկայացուցիչներին և Վրաստանի կառավարության արտաքին գործերի նախարար Եվգենի Գեգեչկորիին, որում ներկայացնում է այն դավաճանական հարձակման ու կոտորածների մասին, որոնք ձեռնարկել է Ադրբեջանի կառավարությունը անպաշտպան Արցախի հայության դեմ: Պաշտոնագրում Խատիսյանը հայտնում է, որ սրի է քաշված Շուշիի ամբողջ հայությունը, և ավելացնում, որ Ղարաբաղի ու Զանգեզուրի դեմ սկսված արշավանքի նպատակն է բնաջնջել այդ երկու հայկական նահանգների հայ ազգաբնակչությունը և Նախիջևանի վրայով միանալ Թուրքիայի հետ՝ «շրջապատելով այդպիսով Հայաստանը թուրք-թաթարական թշնամի օղակով»[2]: Խատիսյանը Գեգեչկորիից խնդրում է ազդել Ադրբեջանի կառավարության վրա, որպեսզի արյունահեղությունը դադարի, և Անդրկովկասյան երեք հանրապետությունների ներկայացուցիչների ծրագրած խորհրդակցությունը Թիֆլիսում կայանա: «Մշակ»-ը երկրորդում է «Ադրբեջան» թերթի մարտի 31-ի մի հաղորդումը, ըստ որի՝ «հայերի հարձակումները Շուշու, Խանքենդի վրայ յետ են մղուած»[3]: «Ադրբեջանի կառավարության արտաքին գործերի մինիստր Խան-Խոյսկին Ղարաբաղի դեպքերին տալիս է բոլորովին այլ լուսաբանություն, մատնանշելով, թե իբր նախահարձակ հայերն են եղել»[4]: 1920 թվականի ապրիլի 11-ին «Մշակ»-ը «Վերջին ժամ» խորագրի ներքո դարձյալ անդրադառնում է Շուշիի կոտորածին. «Շուշուց Թիֆլիս եկած մի թուրք վաճառական հաղորդեց մեզ, թե Շուշում ցավոք սրտի տեղի է ունեցել հայկական կոտորած թուրք գազանացած խուժանի և զորքերի ձեռքով Ասկերանը գրավելուց յետոյ: Կոտորածին ենթարկվել են գլխավորապես անպաշտպան հայ կանայք, երեխաներ և ծերունիներ: Հրդեհուած են մի քանի հայ տներ: Ներկայումս Շուշում համարեա հայ չկայ»:

1920 թվականի ապրիլ-մայիս ամիսներին թերթը շարունակում է լուսաբանել ու սուր քննադատության ենթարկել մուսավաթականների անսանձ կամայականությունները Լեռնային Ղարաբաղում՝ իրավիճակը դիտելով տարբեր կողմերից: Ներկայացվում են այդ իրադարձություններին առնչվող մի շարք հուշա-

[1] Մշակ 1920, թիվ 9:
[2] Մշակ 1920, թիվ 9:
[3] Մշակ 1920, թիվ 9:
[4] Մշակ 1920, թիվ 9:

գրեր, հեռագրեր, պաշտոնագրեր: Շուշիի եղեռնագործության մասին ուշագրավ հրապարակումներ են հատկապես ականատեսների վկայությունները: Մեջբերենք հատվածներ 1920 թվականի ապրիլի 5-ին Հադրութից «Մշակ»-ին հասցեագրված մի նամակից. «.... Մի երկու ժամվայ ընթացքում քաղաքը այրվում էր կազարմի մոտ, Կանաչ ժամի մոտ և ներքևի հանգստարանում: ... Սրբազանին ու քահանային թուրքերը գլխատում են և տունը իսկույն այրում: Աթաբեգյանների ամբողջ ընտանիքին, Խալոնց Ալխենքի բոլոր ընտանիքներին թիքա-թիքա են անում և տան մեջ այրում: Մենք Սաքոյի (բժ. Համբարձումյան) խորհրդով այն տնից, որի մեջ ապաստանել էինք, անմիջապես երեխաների հետ դուրս եկանք, անկարող լինելով վերցնել նույնիսկ մի թաշկինակ: ... Շուշու հայ բնակիչների կեսը ոչնչացավ ամբողջ ընտանիքներով: Երեք ժանվա ընթացքում Շուշին կործանվեց: Ամբողջ քաղաքը այրված ու կողոպտված է, բացառությամբ թուրքական թաղամասի և Գեավուր-Ղալայի: ... Շատերին կենդանի այրել են, մոտ 12000 հոգի հրաշքով ազատվեցին և գտնվում են գավառում առանց դրամի ու շորի. 2500 հոգի գերի ընկան, նրանց վիճակը հայտնի չէ»[1]:

Թերթում տեղեկություններ կան նաև Շուշիի դեպքերից հետո Թիֆլիսում անցկացված բազմամարդ միտինգների մասին, որ կազմակերպել է ղարաբաղցիների հայրենակցական միությունը և օրախնդիր բանաձևեր ընդունել՝ «Անմիջապես դադարեցնել յանցավոր և անմիտ արիւնահեղությունը երկու դարավոր հարևան ժողովուրդների միջև», «Բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ ճանապարհով»[2], որոնք այդպես էլ ազատության դուռ չբացեցին Արցախի համար: Թերթում առանձին ուշագրավ նյութեր կան գաղթականների հետագա ճակատագրի մասին:

Այսպիսով՝ ամփոփելով արձանագրենք, որ Արցախում, մասնավորապես Շուշիում 1918-1920 թվականներին տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունները լայնորեն արտացոլված են «Մշակ»-ի էջերում: Սկզբնաղբյուրային արժեք ունեցող այդ հրապարակումներն առատ նյութ են տալիս Արցախի պատմության այդ ծանրագույն շրջանի ուսումնասիրության համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մշակ(Թիֆլիս), 1919, մարտի 11, թիվ 54:
2. Մշակ 1919, թիվ 36:
3. Մշակ 1919, թիվ 69:
4. Մշակ 1919, թիվ 47:
5. Մշակ 1919, թիվ 51:
6. Մշակ 1919, թիվ 54:
7. Մշակ 1919, թիվ 56:
8. Մշակ 1919, թիվ 59:
9. Մշակ 1919, թիվ 61:
10. Մշակ 1919, թիվ 60:
11. Մշակ 1919, թիվ 62:

[1] Մշակ 1920, թիվ 13:
[2] «Մշակ», 1920, թիվ 10:

12. Դրությունը Ղարաբաղում, Մշակ 1920, թիվ 1:
13. Մշակ 1920, թիվ 3:
14. Մշակ 1920, թիվ 4, էջ 3:
15. Մշակ 1920, մարտի 7, թիվ 5:
16. Մշակ 1920, թիվ 9:
17. Մշակ 1920, թիվ 13:
18. Մշակ 1920, թիվ 10:

Ամփոփում

Շուշիի հայերի 1920 թ. կոտորածների անդրադարձը «Մշակ» թերթում

Թեհմինա Մարության

Հոդվածի ուսումնասիրության առարկան Շուշիի հայ բնակչության 1920 թ. կոտորածներին «Մշակ» լրագրի անդրադարձի լուսաբանումն է: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել թերթի 1918-1920 թթ. այն հրապարակումները, որոնք շոշափում են Արցախի պատմական ճակատագիրը՝ ներկայացնելով XX դարասկզբին Արցախում ու Սյունիքում տեղի ունեցած դրամատիկ իրադարձությունները, այդ թվում՝ Շուշիի 1920 թ. եղեռնագործությունը: Մեր խնդիրն է՝ ի մի բերել ու վերլուծել Շուշիի պատմության այդ չարաղետ անկյունադարձի վերաբերյալ թերթի հաղորդած տեղեկությունները, որոնք սկզբնաղբյուրային նշանակություն ու ճանաչողական արժեք ունեն Արցախի պատմության այդ ծանրագույն շրջանի ուսումնասիրության համար: Վերոնշյալով էլ պայմանավորված է հոդվածի արդիականությունը՝ պատմության դառը փորձին առերեսվելու իրողությամբ:

Հոդվածում կիրառել ենք լրագրության ուսումնասիրության արդի մեթոդներ, պատմական, համադրման մեթոդներ, բովանդակային վերլուծություն, ընդհանրացում:

Հիմնահարցեր. *Լեռնային Ղարաբաղ, Սյունիք, Շուշի, «Մշակ», լրագիր, հրապարակախոսություն, կոտորած, ցեղասպանություն:*

Резюме

Отражение резни армян Шуши 1920 года в газете «Мшак»

Техмина Марутян

Предметом изучения статьи является освещение в газете «Мшак» погромов армянского населения Шуши в 1920 году. Целью статьи является изучение публикаций газеты 1918-1920 годов, затрагивающие историческую судьбу Арцаха, рассказывающие о драматических событиях, произошедших в Арцахе и Сюнике в начале XX века, в том числе и геноцид армян в Шуши 1920-ом году. Наша задача - обобщить и проанализировать предоставленную

газетой информацию об этом зловещем поворотном моменте в истории Шуши, имеющем первостепенное значение и познавательную ценность для изучения этого сложнейшего периода в истории Арцаха. Вышесказанное объясняется актуальностью статьи, отражающей горький опыт истории.

В статье мы использовали современные методы изучения журналистики, исторический, сравнительный методы, контент-анализ, обобщение.

Ключевые слова: *Нагорный Карабах, Сюник, Шуши, «Мшак», газета, гласность, резня, геноцид.*

Abstract

A reference to Shushi Armenian Massacres of 1920 in "Mshak" Newspaper

Tehmina Marutyan

The subject of the article is the coverage of "Mshak" newspaper's reference to the massacres of the Armenian population of Shushi in 1920. The purpose of the article is to study the newspaper's publications in 1918-1920, touching upon the historical fate of Artsakh, telling about the dramatic events that took place in Artsakh and Syunik at the beginning of the XX century, including the Armenian genocide in Shushi in 1920. Our task is to summarize and analyze the information provided by the newspaper about this ominous turning point in the history of Shushi, which is of primary importance and cognitive value for the study of this most difficult period in the history of Artsakh.

The above mentioned explains the relevance of the article, facing the bitter experience of history.

In the article we used modern methods of studying journalism, historical, comparative methods, content analysis and generalization.

Keywords: *Nagorno-Karabakh, Syunik, Shushi, "Mshak", newspaper, oration, massacre, genocide.*

ՄՀԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պ. գ. թ., դոցենտ,
Արցախի ժուռնալիստների միության
վարչության անդամ
«Կաճառ» գիտական կենտրոնի տնօրեն
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
հումանիտար ամբիոնի վարիչ
Արցախի Հանրապետություն, Շուշի, Մուրացան 2
Էլ. հասցե՝ kachar.gk.shushi@mail.ru
ՆԱՆԵ ՄՀԵՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱրՊՀ լրագրության բաժնի ուսանողուհի
Էլ. հասցե՝ naneharutyunyan04@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 10.12.2020, գրախոսվել է 08.02.2021,
ընդունվել է տպագրության 10.04.2021

ՇՈՒՇԻԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ԹԵՄԱՆ ԱՅՆՕՐՅԱ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՋԵՐՈՒՄ

Թեմայի արդիականությունը պայմանավորված է հարյուր տարի առաջ տեղի ունեցած դեպքերի և այնօրյա պարբերական մամուլում դրանց անդրադարձների ու հայեցակարգային մոտեցումների վերաիմաստավորման պահանջով, անցյալի լույսի տակ 2020 թ. աշնանը մեր պետականությանը պատուհասած աղետի պատճառահետևանքային կապը ճիշտ գնահատելու և հասկանալու անհրաժեշտությամբ:

1920 թ. դեպքերին անդրադարձած պատմաբաններն ու այլ հեղինակները թեև օգտագործել և ընդարձակ մեջբերումներ են կատարել Շուշիի կոտորածների վերաբերյալ ժամանակի պարբերական մամուլի հրապարակումներից, բայց, ինչպես ցույց են տվել մեր ուսումնասիրությունները, նրանց տեսադաշտից դուրս են մնացել ինչպես հղված պարբերականների առանձին համարներ, այնպես էլ այն ժամանակվա այլ հրատարակություններ: Մյուս կողմից՝ վերոհիշյալ մեջբերումները հիմնականում բանաքաղաքական ու գեղատեսիլ բնույթ են կրում, ընդամենն ընտրովի փաստերի արձանագրումներ են և վերլուծության կամ համադրման չեն ենթարկվել, մինչդեռ առանձին հրապարակումներ լույս են

սփռում այնպիսի հիմնահարցերի վրա, որոնք հայ պատմագրությունն ինչ-ինչ պատճառներով չի պարզաբանել կամ շրջանցել է: Մեր խնդիրն է վերլուծության ենթարկել և գիտական շրջանառության մեջ դնել 1920 թ. Շուշիի ողբերգության մասին այն ժամանակվա պարբերական հրատարակությունների՝ նախորդ ուսումնասիրողների ուշադրությունից վրիպած այն տեղեկությունները, որոնք կարող են բացահայտել հայ պատմագրության առաջ ծառացած մի շարք հիմնահարցեր և ամբողջացնել մասնավորապես Շուշիի կործանման իրական պատճառների, անցյալի ողբերգությունից բխող անհրաժեշտ դասերի մասին մեր պատկերացումները:

Այն ժամանակվա հայ պարբերական հրատարակությունների հրապարակումները տարբեր ծավալով ու հաճախադեպությամբ օգտագործել են ինչպես ականատես-հուշագրողներ Արսեն Միքայելյանը[1], Հարություն Թումյանը[2], Գրիգոր Հովհաննիսյանը[3], այնպես էլ Բագրատ Ուլուբաբյանը[4], Համլետ Հարությունյանը[5], Հրաչիկ Սիմոնյանը[6], Հրանտ Աբրահամյանը[7] և ուրիշ պատմաբաններ[8], որոնք, սակայն, սահմանափակվել են ոչ միայն արդեն իսկ շրջանառված նույն հրապարակումներով, այլև դրանց տեղեկությունների վրա խարսխված գրեթե նույնանման մեկնաբանություններով:

Արցախի 1918-1920 թվականների դեպքերին այն ժամանակվա պարբերական մամուլի նյութերի հիման վրա անդրադարձած հեղինակներից հատկանշելի է Արցախի պարբերական մամուլի հմուտ ուսումնասիրող, բանասիրական գիտությունների դոկտոր Սմբատ Ավագյանը[9]:

Շուրջ երեք տասնյակ[10] պարբերական հրատարակություններ ունեցած Շուշի քաղաքի կործանումը, որի ընթացքում հրկիզվեցին ու ավերվեցին նաև հինգ տպարանները, մինչև այդ մեծ աղետը գոյատևած պարբերականների խմբագրությունները (ըստ երևույթին, սպանվեցին կամ մազապուրծ փախան նաև դրանց աշխատակիցներից շատերը), ընդհատեց նաև քաղաքի հրատարակչական գործը, հրդեհի ճարակ դարձան մեր ժողովրդի մտավոր ժառանգության անգին գոհարները, ուստի մեզ չեն հասել տեղի պարբերական մամուլի 1920 թ. մարտով թվագրված նմուշներ: Մնում է մեզ հետաքրքրող տեղեկույթը որոնել Հայաստանի առաջին հանրապետությունում և Վրաստանում (հատկապես մայրաքաղաք Թիֆլիսում) խնդրո առարկա ժամանակամիջոցում լույս տեսած պարբերական հրատարակություններում*: Երևանում լույս տեսնող «Յառաջ», «Ռազմիկ» և Թիֆլիսում հրատարակվող «Աշխատավոր», «Նոր աշխատավոր», «Մշակ», «Արձագանք» և այլ թերթերից հնարավորինս քաղել ենք ուշագրավ տեղեկություններ

[1] Հայրենիք 1923, №№ 7-9, 11-12:
[2] Թումյան 2008:
[3] Հովհաննիսյան 1971:
[4] Ուլուբաբյան 1994:
[5] Հարությունյան 1996:
[6] Սիմոնյան 1996:
[7] Աբրահամյան 1996, Աբրահամյան 2003:
[8] Տեր-Գասպարյան 1993, Սևյան 1991, Կարապետյան 2000, Գևորգյան 2014, Բալայան 2017:
[9] Երեկոյան Երևան 1989, 4 դեկտեմբերի, № 278, Ավագյան 1991:
[10] Հարությունյան 2010, 42-53:
* «Մշակ» թերթին չենք անդրադարձել, քանի որ դրան նվիրված առանձին զեկուցում արդեն ներկայացվել է:

